

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2015

Ժողովածուն նվիրված է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին (1955-2015)

ԵՐԵՎԱՆ

**«ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2015**

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЭКОНОМИКИ ИМЕНИ М. КОТАНЯНА

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ - 2015

Сборник посвящен 60-летию со дня основания
Института экономики им. М.Котаняна НАН РА
(1955-2015)

Ереван

Национальная академия наук Республики Армения Издательство “ Гитутюн ”

2015

Рекомендовано к изданию решением
ученого совета Института экономики
НАН РА им. М. Котаняна

Редакционный совет:

академик НАН РА

доктор экономических наук, профессор
доктор экономических наук, профессор
доктор экономических наук, профессор
доктор экономических наук, профессор
доктор экономических наук, профессор
доктор экономических наук, профессор
доктор экономических наук, доцент
доктор экономических наук, доцент

Суварян Юрий Михайлович
Саринян Роберт Нерсесович
Баядян Ашот Акопович
Тавадян Ашот Агасиевич
Манасерян Татул Норайрович
Закарян Арарат Егишевич
Матевосян Ашот Вараздатович
Акопян Армен Ашматович

Ответственный редактор сборника
член-корреспондент НАН РА,
доктор экономических наук, профессор **ВЛАДИМИР АРУТЮНЯН**

Современные проблемы социально-экономического развития в Республике Армения.
Сборник научных статей -2015/Институт экономики НАН РА им.М.Котаняна.
Отв.редактор В. Л. Арутюнян. Ер., изд-во «Гитутюн» НАН РА, 2015, 376 с.

Сборник посвящен 60-летию (1955-2015) со дня основания
Института экономики им. М.Котаняна НАН РА.
В сборник включены научные статьи участников республиканской научной конференции,
проведенной в Институте экономики им. Котаняна НАН РА, на тему «Современные проблемы
социально-экономического развития в Республике Армения».

Национальная академия наук Республики Армения Институт экономики имени М. Х. Котаняна

Республика Армения
0015, Ереван, ул. Григора Лусаворича 15
Тел. (+3741) 58-19-71,
E-mail: nas_ie@sci.am, economicjournal@sci.am

Национальная академия наук Республики Армения Издательство “Гитутюн”

Республика Армения
0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24
Тел. (+3741) 58-18-23,
E-mail: hovakimyan@sci.am

M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS
NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA

**THE CONTEMPORARY ISSUES OF SOCIOECONOMIC
DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA**

SCIENTIFIC JOURNAL OF ARTICLES - 2015

The Volume is dedicated to the 60th anniversary of establishment of
M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of
the Republic of Armenia
(1955-2015)

Yerevan

“Gitutyun” Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia

2015

Approved for publishing by the decree of the
Scientific Council of M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences of the Republic of Armenia

Editorial Board:

Yuri Mikael Suvaryan	<i>Academician of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Doctor of Sciences (Economics), Professor</i>
Robert Nerses Sarinyan	<i>Doctor of Sciences (Economics), Professor</i>
Ashot Hakob Bayadyan	<i>Doctor of Sciences (Economics), Professor</i>
Ashot Aghasi Tavadyan	<i>Doctor of Sciences (Economics), Professor</i>
Tatul Norayr Manaseryan	<i>Doctor of Sciences (Economics), Professor</i>
Ararat Yeghish Zakaryan	<i>Doctor of Sciences (Economics), Professor</i>
Ashot Varazdat Matevosyan	<i>Doctor of Sciences (Economics), Associate Professor</i>
Armen Ashmat Hakobyan	<i>Doctor of Sciences (Economics), Associate Professor.</i>

Responsible Editor

VLADIMIR HARUTYUNYAN, Doctor of Sciences (Economics), Professor
Correspondent Member of the National Academy of Sciences
Republic of Armenia

The Contemporary Issues of Socioeconomic Development in the Republic of Armenia, Scientific journal of articles, 2015/ M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia; Responsible Editor: Vladimir L. Harutyunyan, Yerevan, “Gitutyun” Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 2015, 376 p.

The Volume is dedicated to the 60th anniversary (1955-2015) of establishment of M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

The Volume is the Proceedings Scientific Articles of the Republican Conference “Contemporary Socioeconomic Development Issues in the Republic of Armenia” held at the M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia

15 Grigor Lusavorich Street
Yerevan 0015, Republic of Armenia
Tel. (+3741) 58-19-71
E-mail: nas_ie@sci.am, economicjournal@sci.am

“Gitutyun” Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia

24 Marshal Baghramyan Ave.
Yerevan 0019, Republic of Armenia
Tel. (+3741) 58-18-23
E-mail: hovakimyan@sci.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Միջազգային կառույցների դերը համաշխարհային տնտեսական ճգնաժամերի հաղթահարման գործընթացում.....	16
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Ազգաբնակչության սոցիալական պաշտպանության միջոցառումների նշանակությունը հակաճգնաժամային քաղաքականության ոլորտում.....	22
Ա. ԱԴԱՆԱԼՅԱՆ	Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի կարգավորման և դուրսգրման գործընթացն ու դրա ազդեցությունը ջրային ոլորտի վրա.....	27
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ, Յ. ՄԱՐԿՈՍՅԱՆ	Պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ բարեփոխումները.....	32
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ	Արտարժույթի փոխարժեքային կուրսով պայմանավորված գործընթացների առանձնահատկությունները ՀՀ-ում.....	38
Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ	Ժամանակակից ածանցյալ գործիքների շուկան տարբեր երկրների օրինակով	43
Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ	Ածանցյալ գործիքների պատմական էվոլյուցիան.....	48
Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ	Կուտակային կենսաթոշակային համակարգի ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման վրա.....	54
Ն. ԴԵՐՁՅԱՆ	Դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի արդյունավետության գնահատումը ՀՀ-ում.....	61
Ա. ԶԱԽԱՐՅԱՆ	Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման օրենսդրական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում.....	68
Ա. ԶԱԽԱՐՅԱՆ	Կենսաթոշակառուների կենսամակարդակի բարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում.....	74
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Ներդրումների ելությունը և դրանց դերը տնտեսության զարգացման գործում....	80
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Ներդրումների ներգրավման և ներդրումային գործունեության միջազգային առաջավոր փորձի կիրառման հնարավորությունները ՀՀ-ում.....	86
Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ԵՏՄ անդամակցության հետևանքով հարկաբյուջետային ոլորտում հնարավոր փոփոխությունների ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա.....	90
Տ. ՄՈՒՐԱԴՅԱՆ	Կենսաթոշակային համակարգի բարեփոխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում.....	98
Շ. ՊՈՂՈՍՅԱՆ	Կուտակային կենսաթոշակային համակարգերի զարգացման հիմնախնդիրները.....	103
Շ. ՊՈՂՈՍՅԱՆ	Ազգաբնակչության տեղեկացվածության ապահովումը կենսաթոշակային բարեփոխումների գործընթացում.....	109
Ա. ՍԱԼԵԱԶԱՐՅԱՆ, Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ	Արժեթղթերի շուկայի զարգացման նախադրյալները ԼՂՀ-ում.....	116
Կ. ՍԱՐԳՍՅԱՆ	Հարկային քաղաքականության առանձնահատկությունները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում.....	121
Կ. ՍԱՐԳՍՅԱՆ	Բանկային համակարգերի հակաճգնաժամային աջակցման արդյունավետության գնահատումը.....	127
Ն. ՍՈՒՎԱՐՅԱՆ	Աշխատանքի շահադրդման արդյունավետության գնահատման հարցի շուրջ ..	135
Ի. ՀԱԿՈԲՅԱՆ	ՀՀ-ում ինովացիոն ուղղվածության ներդրումային քաղաքականության հիմնախնդիրները.....	141
Ա. ԶԱՏԻԿՅԱՆ	Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման որոշ հիմնախնդիրներ Հայաստանի Հանրապետությունում.....	147

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հ. ԱՎԱԳՅԱՆ	ՀՀ Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման հիմնախնդիրները	155
Հ. ԱՎԱԳՅԱՆ	Սոտքի և Մեղրաձորի հանքավայրերի շահագործման (ազնիվ մետաղների կորզման) արդյունքով առաջացած թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը.....	160
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ, Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Գյուղատնտեսության գործընթացների ֆինանսավորման բարելավման հիմնահարցերը ՀՀ-ում	169
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ, Ե. ՀԱԿՈԲՅԱՆ	Գյուղատնտեսության մեջ վարկի օգտագործման արդյունավետության գնահատման մեթոդաբանական մոտեցումներ	175
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ	Դատահաշվապահական փորձաքննության գործընթացի կազմակերպումն ու պլանավորումը.....	180
Ա. ԴՐԱՍԲՅԱՆ	Պետության և գործարարության առաքելությունների համեմատական բնութագիրը.....	185
Ա. ԹԱՎԱԴՅԱՆ	ԵՏՄ երկրների տնտեսական ներուժի մեծացմանը ուղղված առաջնահերթ քայլերը.....	189
Շ. ԿՈՍՏԱՆՅԱՆ, Լ. ԱԶԱՏՅԱՆ	Գյուղատնտեսական մթերքների վերամշակման և արտահանման զարգացման ուղղությունները.....	195
Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մ. ՂՈՒԲԱՍԱՐՅԱՆ	ԵՏՄ-ին ՀՀ անդամակցության հետևանքով էներգետիկ ոլորտում հնարավոր փոփոխությունների շուրջ.....	201
Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության զարգացման ռազմավարական հիմնական ուղղությունները	207
Ա. ՄԱՇԻՆՅԱՆ	Ջերմուկ քաղաքի ներուժը առողջարանային զբոսաշրջության շուկայում	213
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ՀՈՒՆԱՆՅԱՆ	Տեխնոլոգիական զարգացումը տնտեսության մրցունակության բարձրացման գործոնների համակարգում.....	218
Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ, Ք. ԲԱԴՂԱՍԱՐՅԱՆ	Ներքին և արտաքին ներդրումների օրենսդրական հիմքերն ու պետական կարգավորման մոտեցումները ՀՀ-ում	224
Տ. ՄԿՐՏՉՅԱՆ	Գյուղատնտեսության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում	230
Տ. ՇԱՀԻՆՅԱՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումների բազմագործոն ռեգրեսիոն վերլուծությունը ՀՀ-ում	237
Հ. ՋԱՆԵՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության հիմնախնդիրները	241
Լ. ՍԱՐԳՍՅԱՆ	ՀՀ արտահանման համեմատական առավելությունների իրացման հնարավորությունները ԵՏՄ շրջանակներում.....	246
Ս. ՓԱՅԱՍԼՅԱՆ	Տրանսպորտային միջոցների ապահովագրման և հատուցման վերլուծությունը ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում	250
Ա. ՔԵՐՈԲՅԱՆ	Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ ներգրավելու հնարավորությունները ԵՏՄ անդամակցության պարագայում.....	255
Է. ԲԱԲԱՅԱՆ, Բ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ	Մրցակցության դերը կազմակերպության մրցունակության բարձրացման գործում.....	260
Է. ԲԱԲԱՅԱՆ	Էկոլոգիական հիմնախնդիրների լուծման որոշ ուղղություններ ՀՀ-ում	265
Ա. ՋԱՏԻԿՅԱՆ, Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ	ՀՀ փոքր ու միջին ձեռնարկությունների արտաքին տնտեսական գործունեության զարգացման հեռանկարները	269
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ա. ՄԻՀՐԱՆՅԱՆ, Ա. ՍՎԵՐԼՈՎ	Հայաստանի Հանրապետության և Բելառուսի արդյունաբերական քաղաքականությունը եվրասիական տնտեսական միության շրջանակներում	275
Մ. ԱՖՐԱ	Մրցակցային և համեմատական առավելության տեսությունների դրսևորումները Իրանի Իսլամական Հանրապետությունում	284

**ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐ**

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՀՀ Լոռու մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները.....	288
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Լոռու մարզի տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի էկոլոգիական որակի փոփոխության արդի միտումները	294
Ռ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ	Սոցիալական աջակցության հիմնախնդիրները ԼՂՀ-ում	300
Ն. ՍԱՐԱՏԻԿՅԱՆ	Բարձրագույն կրթական համակարգի զարգացման միտումները ՀՀ-ում.....	307
Ռ. ՔԱՄԱԼՅԱՆ	Հայաստանի Հանրապետության միգրացիոն գործընթացների սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները	312

**ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Ռ. ՍԱՐԻՆՅԱՆ, Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	Բաշխի Իշխանյան. տնտեսական պատմության հանգույցներում	321
Ռ. ՍԱՐԻՆՅԱՆ	Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները	329
Ս. ԽԱԶԻԿՅԱՆ	Գիտակրթական կլաստերների ստեղծումը որպես անցումային կարգավիճակ ունեցող չճանաչված պետությունների ինտեգրացիայի և տնտեսական զարգացման միջոց	334
Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	Կրթության որակի կառավարման առանձնահատկությունները	338
Ա. ՄԱԿԱՐՅԱՆ	Մակրոտնտեսական խոցելիության գնահատման մոտեցումները արտերկրում և ՀՀ-ում	342
Ս. ՄԿՐՏՉՅԱՆ	Տնտեսագիտական դպրոցների հայացքները կայուն զարգացման և նրա ձևերի շուրջ	350
Բ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ	Կադրային ռազմավարության արդյունավետության հիմնախնդիրները կազմակերպություններում	354
Մ. ԱԼԻԱՇՐԱՖԻՓՕՈՒՐ	Մրցունակության և դրա բարձրացման հիմնախնդիրները՝ տեսական ակնարկ .	360
ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ	367

СОДЕРЖАНИЕ

МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ И ФИНАНСЫ

В. АРУТЮНЯН	Роль международных структур в процессе преодоления мирового экономического кризиса	16
В. АРУТЮНЯН	Значение мероприятий социальной защиты населения в сфере антикоррупционной политики	22
А. АДНАЛЯН	Процесс регулирования и списания дебиторской и кредиторской задолженности и его влияние на водную сферу	27
А. БАЯДЯН, А. МАРКОСЯН	Институциональные реформы повышения эффективности управления государственным долгом	32
А. БАЯДЯН	Особенности процессов, обусловленных обменным курсом валюты в РА	38
Э. ГЕВОРГЯН	Рынок современных производных инструментов на примере разных стран..	43
Э. ГЕВОРГЯН	Историческая эволюция производных инструментов	48
А. ДАНИЕЛЯН	Влияние накопительной пенсионной системы на развитие экономики РА	54
Н. ДЕРЦЯН	Оценка эффективности передаточного механизма денежно-кредитной политики в Республике Армения	61
А. ЗАХАРЯН	Правовые основы внедрения накопительной пенсионной системы в РА	68
А. ЗАХАРЯН	Проблемы повышения уровня жизни пенсионеров в Республике Армения ...	74
А. АРУТЮНЯН	Сущность инвестиций и их роль в развитии экономики	80
А. АРУТЮНЯН	Возможности применения передового мирового опыта привлечения инвестиций и инвестиционной деятельности в РА	86
Г. АРУТЮНЯН	Влияние возможных изменений в налогово-бюджетной сфере на экономику Армении вследствие присоединения к ЕАЭС	90
Т. МУРАДЯН	Проблемы реформирования пенсионной системы в РА	98
Ш. ПОГОСЯН	Проблемы развития накопительных пенсионных систем	103
Ш. ПОГОСЯН	Повышение информированности населения в процессе пенсионных реформ	109
А. САЛНАЗАРЯН, С. АВETИСЯН	Анализ предпосылок развития рынка ценных бумаг НКР	116
К. САРГСЯН	Особенности налоговой политики в условиях финансово-экономического кризиса	121
К. САРГСЯН	Оценка эффективности антикризисного содействия банковским системам ..	127
Н. СУВАРЯН	К вопросу оценки эффективности мотивации труда	135
И. АКОПЯН	Проблемы инновационной направленности инвестиционной политики в РА.	141
А. ЗАТИКЯН	Некоторые проблемы внедрения накопительной пенсионной системы в Республике Армения	147

ПРОБЛЕМЫ РЕАЛЬНОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ

Г. АВАКЯН	Проблемы эксплуатации Амулсарского месторождения золота РА	155
Г. АВАКЯН	Оценка отходов, полученных при разработке (извлечении благородных металлов) Сотского и Меградзорского месторождений, и их экологических последствий	160

А. БАЯДЯН, Л. ОГАНЕСЯН	Проблемы улучшения финансирования сельскохозяйственных процессов в РА.....	169
А. БАЯДЯН, Е. АКОПЯН	Методологические подходы к оценке эффективности использования кредита в сельском хозяйстве	175
А. БАЯДЯН	Организация и планирование процесса судебно-бухгалтерской экспертизы.	180
А. ДРАМБЯН	Сравнительная характеристика миссии государства и бизнеса	185
А. ТАВАДЯН	Первоочередные шаги по повышению экономического потенциала стран ЕАЭС	189
Ш. КОСТАНЯН, Л. АЗАТЯН	Пути развития переработки и экспорта сельскохозяйственной продукции	195
Г. АРУТЮНЯН, М. ГУБАСАРЯН	О возможных изменениях в энергетической сфере вследствие присоединения Армении к ЕАЭС	201
Л. ОГАНЕСЯН	Основные направления стратегии развития перерабатывающей промышленности сельскохозяйственной продукции	207
А. МАШИНЯН	Потенциал города Джермук на рынке оздоровительного (санаторного) туризма	213
А. МАРГАРЯН, А. АВЕТИСЯН, А. УНАНЯН	Технологическое развитие в системе факторов повышения конкурентоспособности экономики	218
А. МАРКОСЯН, К. БАГДАСАРЯН	Законодательные основы и подходы к государственному регулированию внешних и внутренних инвестиций в РА.....	224
Т. МКРТЧЯН	Проблемы развития сельского хозяйства в Республике Армения.....	230
Т. ШАГИНЯН	Множественный регрессионный анализ прямых иностранных инвестиций в РА.....	237
А. ДЖАНЕРЯН	Проблемы продовольственной обеспеченности Республики Армения	241
Л. САРГСЯН	Возможности реализации сравнительных преимуществ экспорта РА в рамках ЕАЭС	246
С. ПАЯСЛЯН	Анализ страхования автотранспортных средств и страховых возмещений в марзах РА и НКР	250
А. КЕРОБЯН	Возможности привлечения инвестиций в Республику Армения в условиях присоединения к ЕАЭС.....	255
Э. БАБАЯН, Б. ГАБРИЕЛЯН	Роль конкуренции в деле повышения конкурентоспособности организации.....	260
Э. БАБАЯН	Некоторые направления решения экологических проблем в РА	265
А. ЗАТИКЯН, А. ДАНИЕЛЯН	Перспективы развития внешнеэкономической деятельности малых и средних предприятий РА	269
А. МАРГАРЯН, А. МИГРАНЯН, А. СВЕРЛОВ	Промышленная политика Республики Армения и Республики Беларусь в рамках евразийского экономического союза.....	275
М. АФРА	Проявления теорий конкурентной и сравнительных преимуществ в Исламской Республике Иран	284

РАЗВИТИЕ СФЕРЫ УСЛУГ И СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

А. АРУТЮНЯН	Основные проблемы социально-экономического развития Лорийской области РА	288
А. АРУТЮНЯН	Современные тенденции экономического развития и изменения экологического качества окружающей среды Лорийской области.....	294
Р. МАНГАСАРЯН	Основные задачи социальной поддержки в НКР.....	300
Н. САРАТИКЯН	Тенденции развития системы высшего образования в РА.....	307
Р. КАМАЛЯН	Социально-экономические особенности миграционных процессов РА	312

ИСТОРИЯ ТЕОРЕТИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ И ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ

Р. САРИНЯН, А. ТАДЕВОСЯН	Бахши Ишханян: на перепутье экономической истории	321
Р. САРИНЯН	Экономические реформы и перспективы подъема в Армении	329
С. ХАЧИКЯН	Создание научно-исследовательских кластеров, как средство интеграции и экономического развития в непризнанных государствах, имеющих переходный статус.....	334
А. ОВАКИМЯН	Особенности управления качеством образования.....	338
А. МАКАРЯН	Подходы к оценке макроэкономической уязвимости за рубежом и в РА	342
С. МКРТЧЯН	Взгляды экономических школ на устойчивое развитие и его типы.....	350
Б. ГАБРИЕЛЯН	Проблемы эффективности кадровой стратегии в организациях	354
М. А. АШРАФИПОУР	Проблемы конкурентности и ее повышения: теоретический очерк.....	360
НАШИ АВТОРЫ		367

CONTENTS

MACROECONOMIC ISSUES AND FINANCES

V. HARUTYUNYAN	The Role of International Organizations in Fighting Global Financial Crises	16
V. HARUTYUNYAN	The Role of Social Protection Measures for the Population in Crisis Mitigation Policy	22
A. ADANALYAN	The Process of Regulation and Write-off of Debit and Credit Debts and Its Impact on the Water Sector	27
A. BAYADYAN, H. MARKOSYAN	Institutional Reforms to Increase the Efficiency of Public Debt Management.....	32
A. BAYADYAN	The Features of Processes Associated With the Exchange Rate in the Republic of Armenia	38
E. GEVORGYAN	Modern Derivatives Market on the Example of Various Nations	43
E. GEVORGYAN	Historical Overview of Derivative Instruments	48
A. DANIELYAN	The Impact of the Funded Pension System on the Economic Development of the Republic of Armenia	54
N. DERDZIAN	The Assessment of Efficiency of Channels of Transmission of Monetary Policy in the Republic of Armenia.....	61
A. ZAKHARYAN	Legal Framework for Introducing the Funded Pension System In the Republic of Armenia	68
A. ZAKHARYAN	Issues on Improving the Well-being of Pensioners in the Republic of Armenia.....	74
A. HARUTYUNYAN	The Essence of Investments and their Role in Developing the Economy.....	80
A. HARUTYUNYAN	The Possibilities of Adopting the International Best Practices in Attracting Investments And Investment Activity In The Republic Of Armenia	86
G. HARUTYUNYAN	The Impact of Possible Changes in the Fiscal Sector on the Economy of the Republic of Armenia as a Result of Accession to the Eurasian Economic Union..	90
T. MURADYAN	The Issues on Pension System Reforms in the Republic of Armenia	98
S. POGHOSYAN	On the Issues of Designing and Developing Funded Pension Systems	103
S. POGHOSYAN	Raising Public Awareness in Implementing Pension Reforms.....	109
A. SALNAZARYAN, S. AVETISYAN	Precondition for Developing the Securities Market in the Nagorno Karabakh Republic	116
K. SARGSYAN	Characteristics of Fiscal Policy In Times Of Financial And Economic Crisis	121
K. SARGSYAN	Assessment of the Efficiency of Crisis Responses Assistance to Banking Systems	127
N. SUVARYAN	On the Issues of Assessment of Efficiency of Employee Motivation.....	135
I. HAKOBYAN	The Issues of Innovation-oriented Investment Policy in the Republic of Armenia .	141
A. ZATIKYAN	Several Issues of Introducing the Funded Pension System In the Republic of Armenia	147

ISSUES ON THE REAL SECTOR OF THE ECONOMY

H. AVAGYAN	The Issues of Exploiting the Amulsar Gold Mine.....	155
H. AVAGYAN	Estimates of Scraps and Assessment of Environmental Damage Caused by Exploiting Sotq and Meghradzor Ore Mines (Extraction of Noble Metals)	160

A. BAYADYAN, L. HOVHANNISYAN	The Issues of Improving Access to Financing Available for Agricultural Activities in the Republic of Armenia.....	169
A. BAYADYAN, E. HAKOBYAN	Methodological Approaches to the Assessment of Efficiency of Use of Loans in the Agriculture.....	175
A. BAYADYAN	The Procedures of Organizing and Planning Forensic Accounting Examination...	180
A. DRAMBYAN	The Comparative Overview of the Mission of the Government and Business.....	185
A. TAVADYAN	Priority Steps to Increase the Economic Potential of EAEU Countries.....	189
S. KOSTANYAN, L. AZATYAN	Development Trends of Processing and Export of Agricultural Products.....	195
G. HARUTYUNYAN, M. GHUBASARYAN	On the Possible Energy Sector Changes as a Result of Accession of The Republic of Armenia to the Eurasian Economic Union.....	201
L. HOVHANNISYAN	The Main Directions of the Strategy on Developing the Manufacturing of Processed Agricultural Goods.....	207
A. MASHINYAN	The Potential of Jermuk Town In The Market of Resort Tourism.....	213
A. MARGARYAN, A. AVETISYAN, A. HUNAYAN	Technological Development as a Factor In the System to Improve Competitiveness.....	218
H. MARKOSYAN, K. BAGHDASARYAN	Legislative Framework and State Regulation Approaches to Foreign and Domestic Investments In the Republic of Armenia.....	224
T. MKRTCHYAN	Issues on Developing the Agriculture in the Republic of Armenia.....	230
T. SHAHINYAN	Multivariate Regression Analysis of the Foreign Direct Investments in the Republic of Armenia.....	237
H. JANERYAN	The Issues on Food Security in the Republic of Armenia.....	241
L. SARGSYAN	Benefiting From the Revealed Comparative Advantages of the Republic of Armenia Upon Accession to the Eurasian Economic Union.....	246
S. PAYASLYAN	The Analysis of Vehicle Insurance and Damage Compensation in the Republics of Armenia and Nagorno Karabakh.....	250
A. KEROBYAN	The Possibilities of Attracting Investments into the Republic of Armenia upon Accession to the Eurasian Economic Union.....	255
E. BABAYAN, B. GABRIELIAN	The Role of Competition In improving the Competitiveness of Enterprises.....	260
E. BABAYAN	On Some Approaches to Address Environmental Issues in the Republic of Armenia.....	265
A. ZATIKYAN, A. DANIELYAN	The Perspectives on Developing Overseas Economic Activities of the Small and Medium-Sized Enterprises of the Republic of Armenia.....	269
A. MARGARYAN, A. MIHRANYAN, A. SVERLOV	Industrial Policies of the Republic of Armenia and Belarus in the Framework of the Eurasian Economic Union.....	275
MAJID AFRA	Application of Theories of Competitive and Comparative Advantages in the Islamic Republic of Iran.....	284

ISSUES ON DEVELOPING SERVICES SECTOR AND SOCIO-DEMOGRAPHIC STANCE

H. HARUTYUNYAN	Socio-economic Development Issues of Lori Marz.....	288
H. HARUTYUNYAN	The Current Trends on Economic Development and Changes in Environmental Quality In Lori Marz.....	294
R. MANGASARYAN	The Issues on Social Assistance in the Nagorno Karabakh Republic.....	300

N. SARATIKYAN	Trends of the Higher Education System Development in the Republic of Armenia	307
R. KAMALYAN	Socio-economic Characteristics of Migration Processes of the Republic of Armenia	312

ECONOMIC RESEARCH AND THE HISTORY OF THE ECONOMIC THOUGHT

R. SARINYAN, A. TADEVOSYAN	Bakshi Ishkhanian: In the Knots of Economic History	321
R. SARINYAN	Transformation of the Armenian Economy and Growth Perspectives	329
S. KHACHIKYAN	Building Science and Education Clusters as an Approach to Integration and Economic Development among Unrecognized States with Transitional Status ...	334
A. HOVAKIMYAN	Features of Quality Management in Education	338
A. MAKARYAN	Approaches to the Assessment of Macroeconomic Vulnerability in other Countries and the Republic of Armenia.....	342
S. MKRTCHYAN	The Views of Economic Schools on the Sustainable Development and its Forms.....	350
B. GABRIELYAN,	Issues on Effectiveness of HR Strategy in Enterprises	354
M. ALIASHRAFIPOUR	Competitiveness and its Development Problems: A Theoretical Review.....	360
OUR AUTHORS		367

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՎԱՌԴԻՍԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*

ՄԿԿԿ թղթակից անդամ

ՄԿԿԿ Մ. Լոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԴԵՐՈՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Անդրադառնալով միջազգային կազմակերպությունների հակաճգնաժամային միջոցառումներին՝ անհրաժեշտ ենք համարում նշել ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում իրացվելիության հիմնախնդիրներին Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից հատուկ ուշադրության արժանացումը: ԱՄՀ-ն 2007թ. վերջին ֆինանսական շուկաների կարգավորման և հսկողության մարմիններին խորհուրդ էր տալիս մեծ ուշադրությամբ վերաբերվել իրացվելիության ռիսկերի գնահատմանը: Հարկ է նշել, որ դեռևս 2008թ. սկզբին ֆինանսական շուկաներում իրացվելիության հետ կապված իրավիճակը էականորեն չփոխվեց, ուստի ԱՄՀ-ն կոչով դիմեց անդամ-երկրներին՝ վերականգնել գործընկերների միջև վստահությունն ու միաժամանակ մեղմել իրացվելիության առկա խնդիրները ֆինանսական շուկաներում:

2008թ. սկզբին ԱՄՀ-ի կողմից պատրաստված համընդհանուր ֆինանսական կայունացման մասին զեկույցում հատուկ նշվեց, որ երկրների կենտրոնական բանկերը պետք է շարունակեն աջակցել, ֆինանսական շուկաներում իրացվելիության կառավարմանը, այնքան ժամանակ, քանի դեռ դա անհրաժեշտ է այդ շուկաների անխափան գործունեության ապահովման համար, որպեսզի տնտեսության իրական հատվածի վրա նվազագույնի հասցվի ճգնաժամի ազդեցությունը¹: Արժույթի միջազգային հիմնադրամը համոզված էր, որ իրացվելիության կառավարման ոլորտում կենտրոնական բանկերի միջոցառումները կարող էին զգալիորեն մեղմացնել այն դժվարությունները, որոնց հետ վերջիններս բախվում էին ֆինանսական կայունացման հասնելու ուղղությամբ:

Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների կարծիքով կարգավորող համապատասխան մարմինները պետք է ընդլայնեն իրենց լիազորված պարտականությունները: Պարզաբանման համար նշենք, որ երբ այդ մարմինները բավարարված չեն ռիսկի կառավարման համակարգով, կամ չնախատեսված դեպքերի համար համապատասխան ծրագրերը բացակայում են, ապա վերջիններս պետք է հնարավորություն ունենան պայքարելու ֆինանսական հիմնարկությունների (կազմակերպությունների) կապիտալի ընդլայնման և իրացվելիության համար: Արժույթի միջազգային հիմնադրամի կարծիքով ֆինանսական հիմնարկությունների հաշվեկշռում առավել մեծ ծավալների բարձրորակ ակտիվների առկայությունը՝ որպես համարժեք ապահովում, լարվածության շրջանում կարող էր հեշտացնել կազմակերպությունների հասանելիությունը ֆինանսավորման աղբյուրներին:

Մեկ այլ կարևոր ոլորտ է միջազգային առևտուրը, որը կարևորվել է միջազգային կառույցների կողմից որպես հակաճգնաժամային կարգավորման ուղղություն:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի սկզբնական փուլում միջազգային կազմակերպություններից շատերը պաշտոնապես հայտարարում էին ազատ առևտրի խոչընդոտման միջոցառումների կիրառման անթույլատրելիության մասին՝ որպես ազգային արտադրողների աջակցման հակաճգնաժամային միջոց: Հատկապես ակտիվ դիրքորոշում ուներ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, սակայն ուսումնասիրությունները վկայեցին,

¹ www.imf.org/external/pubs/ft/gfsr/2008/02/ – IMF Global Financial Stability Report 2008

որ ստեղծված իրավիճակը բուլորովին այլ կերպ դասավորվեց: Առանձին երկրների ղեկավարներ չկարողացան դիմադրել ազգային արդյունաբերության ներկայացուցիչների լոբբինգին: Արդյունքում իրականացվեցին մի շարք առևտրային սահմանափակումներ արտերկրից ապրանքների ներմուծման վրա (օրինակ չինական պողպատի արտահանման սահմանափակումը ԱՄՆ-ում): Պետք է փաստել, որ տարբեր երկրների կառավարությունների կողմից իրականացվող նմանատիպ միջոցառումներին ի պատասխան՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը բերում էր ծանրակշիռ փաստարկներ հոգուտ այն բանի, որ ազատ առևտրի չափանիշները նպաստում են ճգնաժամի արագ հաղթահարմանը և տնտեսության արագ վերականգնմանը:

Եւեք, որ համաշխարհային առևտրի ոլորտում իրականացվող միջոցառումների շրջանակներում միջազգային կազմակերպությունների կողմից հայտարարվեց վարկային շուկաների արագ վերականգնման անհրաժեշտության մասին՝ մատչելի տոկոսադրույքներով առևտրային ծրագրերի ֆինանսավորման համար: Բացառությամբ դեկլարատիվ միջոցառումների՝ ազատ առևտրի վերաբերյալ նշված միջոցառումները շատ դեպքերում հաջողությամբ անցան անդամ-երկրների միջև համաձայնեցման փուլը և հաստատվեցին վերջիններիս կողմից:

Մեկ այլ միջազգային կազմակերպություն՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը նույնպես ընդգծում էր ներդրումների ոլորտում հովանավորչության անթույլատրելիության մասին, քանի որ երկրների միջև մրցակցությունը ոչ միայն ապրանքային, այլև ապագայում ներդրումային շուկայում տանում է մեծ կորուստների և ազգային տնտեսության արդյունավետության նվազեցման:

Ինչպես հայտնի է, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տևական փուլում բանկային համակարգը կտրուկ նվազեցրեց տնտեսության իրական հատվածի վարկավորման ծավալները, իսկ ժամանակակից աշխարհում համաշխարհային առևտուրը մեծամասամբ կախված է միջազգային վարկերից և միջբանկային հաշվարկային համակարգից: Արդյունքում տարբեր երկրների բանկերի՝ միմյանց նկատմամբ վստահության կորստի պայմաններում առևտրի վարկավորումն աստիճանաբար դառնում է խնդրահարույց: Որպեսզի տվյալ ոլորտում իրադրությունն էականորեն փոփոխվի, միջազգային կազմակերպությունները, գործելով իրենց անդամ-երկրների շահերից, ձեռնարկեցին միջոցառումների շարք, որոնք կնպաստեին միջազգային առևտրի կարգավորմանը:

2008թ. նոյեմբերին Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնող Միջազգային ֆինանսական կորպորացիան ընդլայնեց Համաշխարհային առևտրի աջակցման ծրագրի ֆինանսավորումը 1,5 մլրդ դոլար չափով, և ծրագրվում էր մոտ ապագայում այդ թիվը հասցնել 3 մլրդ դոլարի: Ծրագիրն աղքատ երկրների բանկերին հատկացնելու էր առևտրային գործարքների համար լրիվ կամ մասնավոր չվճարումների փոխհատուցման համապատասխան երաշխիքներ¹:

2009թ. ապրիլին Համաշխարհային բանկի գլխավորությամբ առևտրի ոլորտում սկսվեց լայնածավալ նախաձեռնության իրականացում կառավարությունների և կազմակերպությունների, ինչպես նաև առևտրի ֆինանսավորմանն աջակցող բանկերի մասնակցությամբ: Նախատեսվում էր կատարել 5 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում միջազգային առևտրի հակաճգնաժամային ֆինանսավորման համար՝ զարգացող երկրների բանկերին դրամաշնորհների հատկացման տեսքով, և որը նախատեսում էր համաշխարհային առևտրի ծավալների աճ՝ շուրջ 50 մլրդ դոլարով²: Միաժամանակ լոնդոնյան G20 գագաթաժողովում որոշում կայացվեց, որ այն անդամ-երկրները, որոնք Արժույթի միջազգային հիմնադրամում ունեն 50%-ից ավելի ձայներ, պետք է հատկացնեն 250 մլրդ դոլար՝ ճգնաժամի ընթացքում առևտրաֆինանսական ոլորտի զարգացման համար:

Աֆրիկյան զարգացման բանկը 2009թ. գարնանը հիմնեց Առևտրի ֆինանսավորման ծրագիրը (TFI)՝ 1 մլրդ դոլար ընդհանուր գումարով, նպատակ ունենալով վարկեր տրամադրել աֆրիկյան բանկերին՝ առևտրային ծրագրերի ֆինանսավորմանն աջակցելու համար³: Իսկ 2009թ. սեպտեմբերին Ասիական զարգացման բանկը նույնպես ձեռնամուխ եղավ առևտրի ֆինանսավորման

¹ <http://www.worldbank.org/projects>

² <http://www.worldbank.org/projects>

³ <http://www.afdb.org/en/projects-and-operations/>

աջակցման ծրագրի իրականացմանը, որն ապահովելու էր երաշխիքների հատկացում զարգացող անդամ-երկրների բանկերին՝ արտահանման և ներմուծման ֆինանսավորման ծրագրերի ուղղությամբ:

Նշենք, որ համաշխարհային առևտրի ֆինանսավորման աջակցման ցուցաբերումը թույլ է տալիս մեղմացնել ճգնաժամի հետևանքները, բայց չի վերացնում դրանք: Միջազգային տնտեսական կազմակերպությունները ճգնաժամի հաղթահարումը տեսնում էին 21-րդ դարի իրականությանը համապատասխան՝ ֆինանսական շուկաների հսկողության նոր նորմերի ստեղծման ճանապարհով, որոնք կկարողանան ապահովել նրանց անխափան գործունեությունը և բարձրացնել շուկայի մասնակիցների՝ միմյանց նկատմամբ վստահության մակարդակը:

Պետք է փաստել, որ կապված ճգնաժամային երևույթների սրընթաց աճի հետ, 2008թ. առավել պարզ դարձան հնարավոր վտանգի չափերը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների տնտեսությունների համար: Ֆինանսական ճգնաժամի անմիջական պատճառներն առաջատար միջազգային կազմակերպությունների վերլուծաբանները սկսեցին կապել ֆինանսական շուկաներում ոչ բավարար կարգավորման և հսկողության հետ: Այսպես, ֆինանսական գործիքների աճին ի պատասխան, տեղի ունեցավ ֆինանսական գործառնությունների վերահսկողության որոշակի ազատականացում: Չնայած ամենասկզբում տվյալ անհամապատասխանությունն ի հայտ եկավ ԱՄՆ-ի շուկայում, սակայն վերահսկողության և նորամուծության խզումը բնորոշ էր բոլոր առաջավոր տնտեսություններին, այդ թվում՝ նաև եվրոպականին:

Վերջինիս ի պատասխան՝ մի շարք միջազգային կազմակերպությունների խորհրդատվական բնույթի վերլուծական եզրակացությունները դարձան դեկլարատիվ միջոցառումներ՝ հայտարարելով ներդրողների կողմից ռիսկերին համարժեք որոշումների ընդունման համար պայմանների ստեղծման անհրաժեշտության մասին: Այդպիսի պայմանների թվին են պատկանում ֆինանսական շուկաներում հեղինակավոր կազմակերպությունների նկատմամբ պատշաճ վերահսկողության ապահովումը, ինչպես նաև ընկերությունների մենեջերների բոնուսային պարգևատրման համակարգի կատարելագործումը:

Ճգնաժամի կարևոր դասերից մեկն այն է, որ վերջինիս պայմաններում տնտեսագետները գիտակցեցին ֆինանսական գործառնությունների հսկողության, կարգավորման և վերահսկողության ուժեղացման անհրաժեշտությունը: Այստեղ կարևորվում էր, որ տարբեր երկրների հսկողության մարմինները և կենտրոնական բանկերը հետագայում ևս ուժեղացնեն համագործակցությունն ու տեղեկատվության փոխանակումը՝ ներառյալ ֆինանսական կայունության ռիսկի գնահատումը: Նրանք պետք է համատեղ քննարկեն և պատժեն ինչպես խարդախությունը, այնպես էլ շուկայական չարաշահումները: Սակայն պետք է զգուշությամբ գնալ դեպի կարգավորման ուժեղացման կիրառում, քանի որ «գոյություն ունի կարգավորման չնտածված և չափազանց թանկ նորմերի ներմուծման վտանգ»: Չափից դուրս կարգավորումը չպետք է կանխի ֆինանսական շուկաների զարգացումը, իսկ «դիրեկտիվ մարմինները պետք է խուսափեն շուտափույթ կարգավորումից, որը կճնշի նորամուծությունները ֆինանսական համակարգում» (Արժույթի միջազգային հիմնադրամ):

Այսպիսով, «...ֆինանսական շուկաների կարգավորման անցկացվելիք քաղաքականությունը պետք է ի վիճակի լինի արագ արձագանքելու ֆինանսական նորամուծություններին և ֆինանսական շուկաների աստիճանական զարգացմանը» (G20): Գործնականում վարկային կազմակերպությունների հսկողության ստանդարտներով զբաղվում է Բազելյան կոմիտեն:

Հաջորդ կարևոր հանգամանքը ֆինանսական շուկաների հսկողության ոլորտում ֆինանսական ծառայություններից օգտվողների իրազեկվածության մակարդակի բարձրացումն էր: Տեղեկատվության բացահայտումն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են օրինակ՝ վարկերի իրական արժեքը, նախապայման է սպառողների կողմից ծանրակշիռ որոշումներ կայացնելիս: Արդյունավետ ուսուցումը և ֆինանսական գրագիտության միջոցառումների անցկացումը կօգնեն մարդկանց կողմնորոշվել ֆինանսական ակտիվների ու դրանց հետ կապված ռիսկերի ոլորտում: Տվյալ միջոցառումը կնպաստի արդյունավետ հսկողությանը, քանի որ լավ կրթված քաղաքացիներին դժվար է ապակողմնորոշել և մոլորեցնել: Տնտեսական համագործակցության և զար-

գացման կազմակերպությունը նախատեսում էր անմիջական մասնակցություն ունենալ տվյալ կրթական ծրագրերին:

Անդրադառնալով կարգավորման նորմերի և սկզբունքների մշակման գործընթացին՝ նշենք, որ առաջին քայլը տվյալ գործընթացում դարձավ 2007թ. վերջին ԱՄՅ «Ֆինանսական կայունության ցուցիչների կազմման ուղեցույց»-ի ներկայացումը՝ ազգային կարգավորման մարմիններին օժանդակելու՝ ճգնաժամի հետ կապված նոր տեղեկատվության ստացման համար¹: Դրա անհրաժեշտությունը բխում էր համաշխարհային ֆինանսական շուկայում անկայունության դեպքերի աճից: Ուղեցույցում մշակված է ֆինանսական կայունության ցուցանիշների համակարգը, որի հիման վրա կարելի էր գնահատել ֆինանսական ճգնաժամի ի հայտ գալու հավանականությունը:

2008թ. աշնանը Բազելյան կոմիտեն թողարկեց «Բանկային հսկողության և իրացվելիության ռիսկի հուսալի կառավարման սկզբունքներ»-ի նոր տարբերակը, որը որոշակի կանոնների հավաքածու է բանկերի գործունեության կարգավորման մարմինների համար: Նոր կանոններին համապատասխան՝ բանկերը պարտավոր են հաստատել իրացվելիության ռիսկի սահմանային չափը և ապահովել դրա անշեղ պահպանումը: Անհրաժեշտ է նաև անցկացնել իրացվելիության ռիսկերի ամբողջական համակարգի չափում և նույնականացում՝ ներառելով նաև չնախատեսված ծախսերի ռիսկը, ինչպես նաև մշակել և օգտագործել մանրակրկիտ ծրագրված սթրես-թեսթեր: Բացի այդ, կարևոր է բանկում չնախատեսված ծախսերի ֆինանսավորման օպերատիվ պլանի առկայությունը:

Եվրոպական միությունն ակտիվ մասնակցություն է ունեցել իր անդամ-պետությունների համար կարգավորման հակաճգնաժամային նորմերի մշակման և ներդրման գործում: Այսպես, 2009թ. հուլիսին Եվրոպական հանձնաժողովի կողմից Եվրախորհրդարանի հաստատմանը ներկայացվեցին կապիտալի համարժեքության, ակտիվների վերաարժեքավորման, ինչպես նաև ֆինանսական կառույցների ղեկավարների պարզապարզության վերահսկման նոր պահանջների վերաբերյալ համապատասխան որոշումներ²: Վերջիններս դարձան 2008թ. ԵՄ-ում հնչած դեկլարատիվ միջոցառումների և վերլուծական եզրակացությունների արդյունք:

2009թ. սեպտեմբերի 6-ին կայացած հանդիպման ընթացքում կենտրոնական բանկերի ղեկավարները և 27 առավել զարգացած երկրների (որոնք բանկային հսկողության գծով ձևավորում են Բազելյան կոմիտեի մարմինը) վերահսկողության մարմինների տնօրենները եկան համաձայնության՝ իրենց երկրներում բանկային հատվածի կարգավորման ներքոիշյալ միջոցառումների կիրառման վերաբերյալ.

- առաջին մակարդակի կապիտալի վերաբերյալ տեղեկատվության որակի և թափանցիկության մակարդակի բարձրացում, որտեղ գլխավորը պետք է լինեն սովորական բաժնետոմսերը և չբաշխված շահույթը, որոնց համահունչ համապատասխան սկզբունքները մշակվելու էին նաև ոչ բաժնետիրական ընկերությունների համար,
- լներեջի գործակցի ներմուծում՝ որպես ռիսկի գնահատման լրացուցիչ չափորոշիչ Բազել–II համաձայնագրի շրջանակներում: Վերջինս մշակվել է Բազելյան կոմիտեի կողմից 2004թ.՝ բանկային համակարգում ռիսկերի կարգավորման որակի բարձրացման նպատակով, ինչը պետք է նպաստեր ֆինանսական համակարգի կայունացման ամրապնդմանը,
- իրացվելիության պահուստավորման նվազագույն չափանիշի սահմանում, որը ներառում է անբարենպաստ պայմաններում իրացվելիության ցուցանիշի սահմաններին վերաբերող պահանջները, ինչպես նաև երկարաժամկետ իրացվելիության գործոնի կիրառման ընդլայնումը,
- նոր միջոցառումներն ուղղված են, բացի նվազագույն պահուստավորման պահանջներից, նաև հակացիկլիկ պահուստավորման համակարգի ստեղծմանը: Տվյալ համակարգը ենթադրում է կապիտալի կոնսերվացման այնպիսի միջոցառում, ինչպիսին է դրա տարածման

¹ www.imf.org/external/pubs/ft/wp/.../wp13263.pdf

² ec.europa.eu/environment/.../recovery_plan.htm

վրա սահմանափակումների սահմանումը: Բազելյան կոմիտեն ծրագրում էր անցկացնել համապատասխան ցուցիչների հավաքածուի կրիտիկական ուսումնասիրություն (մասնավորապես վարկի կամ եկամտի վրա հիմնված փոփոխականների) կապիտալի պահուստի ստեղծման կամ դրա նվազեցման պահի որոշման համար: Կոմիտեն նաև նախատեսում էր խթանել առավել երկարաժամկետ պահուստների ստեղծումը՝ հիմնված ենթադրյալ վնասների վրա,

- ծրագրվում էր թողարկել համակարգային ռիսկի նվազման գծով հանձնարարականներ՝ կապված միջսահմանային բանկերի կողմից իրականացվող գործառնությունների հետ:

Մեկ այլ կարևոր հիմնախնդիր էր համարվում վարկանիշային ընկերությունների նկատմամբ արդյունավետ հսկողության սահմանման հիմնախնդիրը: Ճգնաժամի պայմաններում ակնհայտ դարձավ, որ վարկանիշային ընկերությունների գործունեությունն արդիականացման կարիք ունի: Հատկապես ակտուալ դարձավ ֆինանսական գործիքների վարկանիշների և համեմատական ներկայացման մեթոդների թափանցիկության հարցը:

2008թ. ապրիլին կայացած G8-ի զագաթաժողովի ընթացքում ուշադրություն դարձվեց նաև վարկանիշային ընկերությունների գնահատման որակի բարձրացման հարցին: Ընդհանուր առմամբ հանդիպման ժամանակ սահմանված միջոցառումները խիստ համահունչ էին Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումներին: Հայտարարվեց, որ «վարկանիշային ընկերությունները պետք է ընդունեն արդյունավետ միջոցառումներ՝ իրենց գործունեության մեջ պոտենցիալ հակասությունների վերացման համար և անցկացնեն ռիսկերի հստակ դասակարգում կառուցվածքային գործիքների գնահատման դեպքում, բարելավեն գնահատման մեթոդները, ինչպես նաև գնահատման համար ստուգեն տարբեր փոխառուների վերաբերյալ տեղեկատվության որակը»: Դրա հետ մեկտեղ ներդրողները պետք է ուշադիր լինեն վարկանիշների օգտագործման նկատմամբ և անցկացնեն դրանց հուսալիության վերաբերյալ ինքնուրույն հետազոտություն՝ հիմնվելով գնահատման մեթոդաբանության վրա:

Ամփոփելով վերոգրյալը նշենք, որ միջազգային կազմակերպությունները զգալի ներդրում ունեցան ճգնաժամի հաղթահարման գործում՝ ինչպես իրենց վերլուծական եզրակացությունների, այնպես էլ դեկլարատիվ միջոցառումների արդյունքում, որոնք նաև ուղղորդեցին դրանց անդամպետություններին ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ մշակել իրենց հակաճգնաժամային ծրագրերը և կորրոկցացնել վերջիններս միմյանց միջև:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒԹՅՆԵՐԻ ԴԵՐՆ ԶԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՁՆԱԺԱՍԵՐԻ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

ՎԱՍԿԻՍԻ ԶԱՌՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Կ.Գ.Պ., պրոֆեսոր

Մ Գ Ա Ա թղթակից ակադեմիա

Մ Գ Ա Ա Մ. Քոտանյանի ակադեմիա

Կրթության գիտությունների և մշակույթի նախարարության հետազոտությունների կենտրոն

Համառոտագիր

Միջազգային հեղինակավոր կառույցների ընդունած միջոցառումները հնարավորություն ընձեռեցին երկրների կառավարություններին մեղմացնելու ճգնաժամի ազդեցությունները և ստեղծված իրավիճակից դուրս գալու համապատասխան ուղիներ գտնելու: Միջազգային կազմակերպությունների միջոցառումներն էական ազդեցություն թողեցին՝ ինչպես առանձին երկրների ներքին տնտեսական քաղաքականության ոլորտում որոշումների ընդունման, այնպես էլ ամբողջությամբ վերցրած համաշխարհային տնտեսական համակարգի կարգավորման վրա: Վերջիններս զգալի ներդրում ունեցան ճգնաժամի հաղթահարման գործում՝ ինչպես իրենց վերլուծական եզրակացությունների, այնպես էլ դեկլարատիվ միջոցառումների արդյունքում, որոնք նաև ուղղորդեցին դրանց անդամ-պետություններին ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ մշակել իրենց հակաճգնաժամային ծրագրերը և կոորդինացնել վերջիններս միմյանց միջև:

Բանալի բառեր. ճգնաժամ, համաշխարհային, կրթության, ֆինանսական, միջազգային, կազմակերպություններ, քաղաքականություն, միջոցառումներ, Արժույթի միջազգային հիմնադրամ, վարկանիշ:

РОЛЬ МЕЖДУНАРОДНЫХ СТРУКТУР В ПРОЦЕССЕ ПРЕОДОЛЕНИЯ МИРОВОГО ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА

ВЛАДИМИР АРУТЮНЯН, д.э.н., профессор

директор Института экономики

им. М.Котаняна НАН РА

член-корр. НАН РА

Аннотация

Проведенные авторитетными международными структурами мероприятия предоставили возможность правительствам стран смягчить воздействия кризиса и найти соответствующие пути выхода из сложившейся ситуации. Мероприятия международных организаций оказали существенное влияние как на принятие решений в сфере внутренней экономической политики отдельных стран, так и на регулирование мировой экономической системы в целом. Указанные организации внесли заметный вклад в деле преодоления кризиса как своими аналитическими заключениями, так и в результате декларативных мероприятий, которые ориентировали также их членов – государств на разработку своих антикризисных программ по преодолению кризиса и их координацию.

Ключевые слова: кризис, мировой, экономический, финансовый, международный, организации, политика, мероприятия, международный валютный фонд, рейтинг.

THE ROLE OF INTERNATIONAL ORGANIZATIONS IN FIGHTING GLOBAL FINANCIAL CRISES

VLADIMIR HARUTYUNYAN, Doctor of Sciences (Economics), Professor

Academician, National Academy of Sciences

Director, M. Kotanyan Institute of Economics,

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Crisis response measures designed by the world leading international institutions and/or donor organizations empowered national governments to cope with the crisis by adopting various strategies and mechanisms. International organizations played a crucial role both in decision making of domestic policy by individual states, and in regulating the global economic system, overall. These institutions significantly contributed to fighting the negative impact of the crisis both by providing analytical and practical recommendations and proposing declarative measures that served as guidelines for the member-state governments to cope with the crisis by designing national crisis response (anti-crisis) programs and coordinate their implementation with each other.

Keywords: Crisis, global, economic, financial, international, organization, policy, measures, the International Monetary Fund, ranking.

**ԱԶԳԱՔՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԶԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Տնտեսական հարաբերությունների զարգացման ընթացքում դրանք մշտապես ենթարկվել են տարբեր ճգնաժամերի ազդեցությունների, ինչի արդյունքում տնտեսության վերելքի փուլին հաջորդել են տնտեսական անկումը և ճգնաժամը: Տնտեսական ճգնաժամի պայմաններում խաթարվում են տնտեսական բնականոն հարաբերությունները՝ իրենց բացասական ազդեցությունը թողնելով ինչպես տնտեսության իրական և ֆինանսական հատվածների վրա, այնպես էլ վատթարացնելով ազգաբնակչության սոցիալական վիճակը՝ բերելով եկամուտների կրճատման և գործազրկության ծավալների կտրուկ մեծացման:

Ակնհայտ է, որ ցանկացած պետության գլխավոր նպատակներից են կայուն տնտեսական աճի ապահովումը և տվյալ պետության քաղաքացիների բարեկեցիկ կյանքի համար համարժեք պայմանների ստեղծումը: Նշված նպատակների իրագործման համար պետական իշխանությունները, ստեղծելով տնտեսական գործունեության բավարար պայմաններ ու սահմանելով ընդհանուր խաղի կանոններ, ապահովում են նաև ազգային եկամտի հնարավորինս արդարացի վերաբաշխումը՝ հոգուտ տնտեսական հարաբերությունների անմիջական մասնակից չհանդիսացող հասարակության այլ անդամների: Սակայն, հարկ է նշել, որ նշված կարևոր միջոցառումները ժամանակ առ ժամանակ խաթարվում են տնտեսական տարաբնույթ ճգնաժամերի հետևանքով:

Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում, երբ տնտեսական ճգնաժամերն ավելի հաճախակի են դարձել ու նորանոր բարդ հիմնախնդիրներ են առաջացնում ազգային պետությունների և ազգաբնակչության համար, պետական հակաճգնաժամային քաղաքականությունը պետք է համապատասխանեցվի այդ հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը: Վերջիններիցս առանձնացնենք ազգաբնակչության սոցիալական պաշտպանվածության հետ կապված հիմնախնդիրը:

Հարկ է նշել, որ տնտեսական ճգնաժամի ընթացքում պետության կողմից ցուցաբերվող ազգաբնակչության աջակցությունը լուծում է միանգամից երկու կարևոր խնդիր: Առաջինը՝ հասարակության մեջ նվազում է սոցիալական ճնշվածությունը, և ընդլայնվում է կառավարության կողմից հակաճգնաժամային միջոցառումների վերաբերյալ բնակչության իրազեկվածությունը: Երկրորդը՝ սոցիալական աջակցությունը նպաստում է սպառողական պահանջարկի ընդլայնմանը, այսինքն՝ բերում է տնտեսության մեջ համախառն պահանջարկի մեծացման:

Նշենք, որ հակաճգնաժամային սոցիալական բնույթի միջոցառումների կարևորությունն ընդգծվել է դեռևս 2009թ. G8-ի գագաթաժողովի ժամանակ անդամ-պետությունների ֆինանսների նախարարների կողմից, որտեղ նախապատվությունը տրվեց զբաղվածության խթանմանը, աշխատունակ անձանց որակավորման բարձրացմանը, ինչպես նաև ազգաբնակչության աղքատ խավի աջակցմանը: Հանդիպման ժամանակ ընդգծվեց նաև, որ տնտեսական աճին նպաստող ֆինանսական նոր աղբյուրները կդառնան ենթակառուցվածքների, նորամուծությունների և կրթության ոլորտում իրականացվելիք ներդրումները՝ արտադրողական աշխատանքի աճը խթանելու նպատակ ունենալով:

Անդրադառնալով Եվրոպական միությանը՝ հարկ է նշել, որ այս կառույցի կողմից մեծ ուշադրություն էր դարձվում արտադրության կրճատման արդյունքում աշխատանքից ազատված աշխատողների աջակցությանը: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) փորձագետները նշում էին, որ «...կառավարությունները պետք է մեծ ուշադրություն դարձնեն այն անձանց թվաքանակի աճին, որոնք ճգնաժամի ընթացքում որոշել են ստանալ նոր մասնագիտություն կամ շարունակել իրենց կրթությունը գործազրկության պատ-

ճառով: Այս դեպքում վերջիններիս ուսում ստանալու գործում պետության օժանդակությունը կհանդիսանա արդյունավետ հակաճգնաժամային միջոցառում»:

Շատ միջազգային կազմակերպություններ ճգնաժամի արդյունքում ընդլայնեցին համապատասխան միջոցների հատկացումը՝ զարգացող երկրների աղքատ բնակչությանն աջակցելու համար: Նպատակ ունենալով կանխել հումանիտար ճգնաժամի ի հայտ գալը՝ այդպիսի օգնությունը մեծապես կարևորվում էր Համաշխարհային բանկի հակաճգնաժամային միջոցառումների համալիրում:

Հարկ է նշել, որ մինչև ճգնաժամը միջազգային կազմակերպությունների և դոնոր երկրների ջանքերով՝ աղքատ բնակչության թվաքանակն աշխարհում մշտապես նվազում էր Միացյալ ազգերի կազմակերպության «Հազարամյակի զարգացման նպատակները» ծրագրին համահունչ: Սակայն ֆինանսատնտեսական ճգնաժամը լուրջ սպառնալիքներ ներկայացրեց աղքատ երկրներին՝ վերջիններիս ազգաբնակչության աղքատության մակարդակը տասնամյակներ հետ տանելով:

Այս համատեքստում Ասիական զարգացման բանկը անդամ-երկրներին կոչ էր անում աջակցել բնակչության առավել խոցելի խավին և պահպանել աղքատության դեմ պայքարի ձեռքբերումները սոցիալական օգնության համակարգի ստեղծման ճանապարհով: Մեկ այլ միջազգային կառույց՝ Աֆրիկյան զարգացման բանկը հայտարարեց զարգացած երկրների հակաճգնաժամային միջոցառումներին ուղղվող ծախսերի 0,7%-ը աղքատ երկրներին որպես օգնություն տրամադրելու անհրաժեշտության մասին:

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը նույնպես հայտարարեց, որ միջազգային հանրությունը պետք է միավորվի և օգնի աղքատ երկրներին, որպեսզի մեղմացնի համաշխարհային ճգնաժամի բացասական դրսևորումները: G20-ի առաջնորդներն առաջարկեցին զարգացող երկրներին՝ ճգնաժամի անկման փուլը հաղթահարելուն օգնելու համար օգտագործել բանկային համակարգի ռեսուրսները: Սակայն, դրա համար անհրաժեշտ էր մշակել բանկերի կողմից տրամադրվող աջակցության համապատասխան իրավական հիմքեր, և այս քայլը մեծապես կնպաստեր աղքատության կրճատմանը, տնտեսության կայուն զարգացման և տնտեսական աճի ապահովմանը:

Ճգնաժամի ընթացքում վերջինիս սոցիալական հետևանքների դեմ պայքարի արդյունավետ միջոց էր առաջարկվում նաև գործազուրկներին վարկերի և դրամաշնորհների տրամադրումը՝ սեփական բիզնեսի կազմակերպման համար: Փոքր և միջին բիզնեսի զարգացման համար բարենպաստ պայմանների ապահովումը միշտ համարվել է տնտեսական ակտիվությունը խթանող կարևորագույն միջոցառում, որի դրական հետևանքները կհամարվեն գործազրկության կրճատումը և հարկային մուտքերի ընդլայնումը: Այդ պատճառով էլ վերջինիս կիրառումն առանձնակի նշանակություն է ձեռք բերում տնտեսական ճգնաժամի ընթացքում:

Այսպես, Համաշխարհային բանկը 2008 թվականի նոյեմբերին հայտարարեց, որ անհրաժեշտ է զարգացող երկրներում ապահովել «փոքր և միջին ձեռնարկությունների համար վարկերի հասանելիությունը միկրոֆինանսավորման համակարգի միջոցով՝ աշխատատեղերի ավելացման համար»: Իսկ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը ճգնաժամի ընթացքում հայտարարեց նաև իր կողմից տրամադրվող օգնության մասին՝ փոքր և միջին ձեռնարկություններին ֆինանսական հասանելիության ապահովման համար:

Անդրադառնալով ոչ պակաս կարևորություն ունեցող կորպորատիվ կառավարման հիմնախնդրին՝ պետք է փաստել, որ նշված ոլորտում առաջատար միջազգային կազմակերպությունների կողմից որդեգրվեց հետևյալ սկզբունքը՝ «...կառուցել վարձու կառավարիչների պարզևատրման համակարգը՝ զարգացման երկարաժամկետ նպատակներին և հետաքրքրություններին համապատասխան» (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն՝ ՏՀԶԿ): Առավել որոշակի միջոցառումներ առաջարկեցին G20 անդամ-պետությունների ղեկավարները Պիտսբուրգյան գագաթաժողովի ժամանակ: Մասնավորապես, ծրագրվում էր անցկացնել բանկերի և ֆինանսական այլ ընկերությունների կառավարիչների պարզևավճարների կրճատման քաղաքականություն վերջիններիս կողմից ղեկավարվող կառույցների ֆինանսական ցուցանիշների վատթարացման դեպքում:

Աշխարհի տարբեր երկրների կողմից մշակված հակաճգնաժամային ծրագրերը, որոնք ուղղված էին ազգաբնակչության սոցիալական պաշտպանության բարձրացմանը, ներառում էին, առաջին հերթին, գործազրկության աճի կանխարգելման և աշխատանքը կորցրած քաղաքացիների նյութական աջակցության միջոցառումներ (ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Չինաստան, Ֆինլանդիա, Լեհաստան, Ճապոնիա, Հարավային Կորեա): Մասնավորապես, Ֆրանսիայում ազգաբնակչության աջակցման ծրագիրը ներառում էր մինչև 2,65 մլրդ եվրո չափով գումարի հատկացում գործազուրկներին և անապահով խավին: Մեծ Բրիտանիայում գործազուրկ որակյալ մասնագետների աջակցության համար հատկացվել էր 40 մլն ֆունտ սթեռլինգ (մոտ 56 մլն դոլար): Նշենք, որ բազմաթիվ երկրներում էականորեն բարձրացվեցին գործազրկության նպաստները, իսկ ազգաբնակչության զբաղվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ միջոցառումների մեծամասնությունն իրականացվեց հետևյալ ուղղություններով.

- նոր աշխատատեղերի ստեղծում և աշխատունակ բնակչության ներգրավում գործունեության նոր տեսակների մեջ (նոր արտադրությունների ֆինանսավորում պետական ներդրումների հաշվին, մասնավորապես, ձեռնարկատիրությունների գործունեության խթանում),
- ցածր որակավորում ունեցող աշխատակիցների մասնագիտական վերապատրաստում, որի ֆինանսավորման համար ստեղծվել էին հատուկ պետական հիմնադրամներ: Որպես օրինակ կարող ենք բերել Ֆրանսիայում նմանօրինակ հիմնադրամի ստեղծումը, որի կապիտալը կազմեց 1,5 մլրդ եվրո: Հիմնադրամը համատեղ կառավարվում էր երկրի խոշորագույն արհմիությունների կողմից, իսկ նրա ղեկավարներին նշանակում էր կառավարությունը: Հիմնադրամի պարտականությունների մեջ էր մտնում ոչ միայն մասնագետների վերապատրաստման ֆինանսավորումը, այլև դրամական նպաստների հատկացումն այն քաղաքացիներին, որոնք ինչ-ինչ պատճառներով չէին կարող ամբողջական ծավալով ստանալ գործազրկության նպաստները,
- ձեռնարկություններին արտոնյալ վարկերի և սուբսիդիաների հատկացում, որպեսզի փոխհատուցեն գործատուների՝ ֆինանսական ճգնաժամի պայմաններում աշխատատեղերի պահպանության ծախսերը (օրինակ՝ Սինգապուրում նմանօրինակ ծրագրի արժեքը կազմել է շուրջ 3 մլրդ դոլար),
- ճգնաժամից տուժած ընկերություններում աշխատանքային շաբաթի կրճատում՝ պետության կողմից աշխատավարձի վճարների փոխհատուցմամբ (օրինակ՝ Գերմանիայում ճգնաժամից տուժած ձեռնարկություններում 2009 թվականի հունվարի 1-ից աշխատանքային շաբաթը կրճատվեց մինչև 3-4 օր, որոնց դիմաց աշխատողներին գործատուներն էին վճարում, իսկ մնացած չաշխատած օրերի համար վճարում էր պետությունը):

Բացի վերոգրյալից, նշենք, որ մի շարք երկրներում կատարելագործվեց գործազրկության գծով ապահովագրության համակարգը (ԱՄՆ, Կանադա, Ճապոնիա), իսկ Շվեդիայում բնակարանային օրենսդրության ոլորտում իրականացվեցին որոշակի բարելավումներ: Այսպես, 2009 թվականի մայիսի 1-ից այս երկրում գործողության մեջ մտավ նոր օրենք, որը թույլ էր տալիս երկրի ռեզիդենտներին ձեռք բերելու բնակարաններ՝ լիարժեք սեփականության իրավունքով: Նշենք, որ մինչ այդ, հնարավոր էր ձեռք բերել միայն իրենց միջոցներով և համատեղ օգտագործման նպատակով մի խումբ մարդկանց կողմից ստեղծված բնակելի կոոպերատիվի որոշակի մասնաբաժիններ: Նշված օրենքը, ինչպես կարծում էին իշխանության ներկայացուցիչները, կարող էր ակտիվորեն կիրառվել ներգաղթյալների շնորհիվ: Դրա հետ մեկտեղ նոր կարգը տարածվում էր միայն նորակառույց բնակարանների վրա:

Բացի վերը նշվածից, միջազգային մակարդակով ստեղծվեց նաև Եվրոպական սոցիալական հիմնադրամ, որի միջոցներն ուղղվում են գործազուրկ քաղաքացիների վերապատրաստմանը և ճգնաժամից տուժած բիզնեսի աջակցմանը:

Շատ երկրների բյուջեների ծախսային մասում 2009 թվականին էականորեն ավելացվեց կրթության (Գերմանիա, Ֆրանսիա, Ֆինլանդիա, Չինաստան), առողջապահության, մշակույթի, շրջակա միջավայրի պահպանության (Չինաստան) գծով պետական ֆինանսավորումը:

Սոցիալական միջոցառումների խմբում կարող ենք նաև դասել ֆիզիկական անձանց ավանդների ապահովագրության ընդլայնումը՝ ընդհուպ մինչև 100% փոխհատուցում: Տվյալ միջոցառումը շատ երկրներում կիրառվում էր ժամանակավոր՝ ճգնաժամային երևույթների երևան գալուն համընթաց՝ որպես կանոն 1-2 տարուց ոչ ավել գործողության ժամկետով: Տվյալ քայլի նպատակն էր՝ մի կողմից քաղաքացիների խնայողությունների կորստի ռիսկի նվազեցումը (հետևաբար և հասարակության մեջ սոցիալական լարվածության նվազեցումը), իսկ մյուս կողմից՝ բանկերի համար կապիտալի լրացուցիչ ներհոսքը:

Սոցիալական բնույթի կարևոր միջոցառումներից էին նաև ազգաբնակչությանը կատարվող միանվագ վճարումները: Օրինակ, Ճապոնիայում նմանատիպ միջոցառումը վերաբերում էր երկրի բոլոր քաղաքացիներին, առանց բացառության (երկրի յուրաքանչյուր քաղաքացի ստանալու էր շուրջ 120 դոլար, դրա հետ մեկտեղ մինչև 18 տարեկան երեխաները և 65 տարեկանից բարձր տարիք ունեցող անձինք՝ 200-ական դոլար, իսկ նախագծի ծրագրի ընդհանուր մեծությամբ կազմելու էր մոտ 200 մլրդ դոլար), Ֆրանսիայում միանվագ վճարներ հատկացվեցին միայն ցածր աշխատավարձ ունեցող անձանց (յուրաքանչյուրին՝ 200-ական եվրո) և գործազուրկներին (400-500-ական եվրո յուրաքանչյուրին): Լեհաստանում 2009 թվականի մայիսի 29-ին ուժի մեջ մտավ նոր օրենք, որով նախատեսվում էր օգնության տրամադրում գործազուրկ անձանց՝ հիփոթեքային վարկերի վճարման հետ կապված (հիփոթեքային վարկերի գծով պարտքեր ունեցող յուրաքանչյուր քաղաքացու վճարվում էր ամսական մոտ 320 դոլար): Ընդհանուր 401,5 մլն դոլար արժողությամբ տվյալ ծրագիրը ենթադրում էր օգնության տրամադրում՝ 12-ամսյա ժամկետով, սակայն երկու տարի անց միջոցները պետք է սկսեն վերադարձվել 8 տարվա ընթացքում, առանց լրացուցիչ վճարների և տոկոսների:

Որպես ազգաբնակչության սոցիալական պաշտպանության բարձրացման ուղղությամբ միջոցառումների առանձին ուղղություններ՝ կարող ենք առանձնացնել նաև հետևյալները.

- տնտեսական ճգնաժամից տուժած մասնավոր դպրոցների պետականացում (Մեծ Բրիտանիա): Ենթադրվում է, որ պետականացված դպրոցներն արդեն կդառնան պետական ակադեմիաներ, և որպեսզի վերջիններս էլ ստանան պետության կողմից դոտացիաներ, պետք է նվազեցնեն ուսման վարձերը, ինչպես նաև համաձայնեցնեն ընդունելության կանոններն ու ուսումնական ծրագրերը ազգային չափորոշիչներին,
- առևտրային բանկերի կողմից քաղաքացիներից հիփոթեքային վարկով ձեռք բերված բնակարանների բռնագրավման գործընթացի ժամանակավոր կասեցում (սառեցում)՝ այդ նպատակով սկիզբ դնելով մինչև 75 մլրդ դոլար արժողությամբ հիփոթեքային հատվածի աջակցման ծրագրի մեկնարկի (ԱՄՆ): Այսպիսի կասեցում անցկացվել էր երկրի երեք խոշոր բանկերի՝ «Citigroup Inc.», «JPMorgan Chase & Co» և «Morgan Stanley» նկատմամբ, որը գործել է մինչև 2009 թվականի մարտ ամիսը: Այդ ընթացքում ենթադրվում էր վերաֆինանսավորել շուրջ 5 մլն վարկառուների հիփոթեքային վճարները, որոնց սպառնում էր պարտքերի դիմաց անշարժ գույքի օտարումը, ինչպես նաև իրականացվել են հիփոթեքային ընկերություններին համապատասխան փոխհատուցումներ:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ տարբեր երկրների և միջազգային կառույցների հակա-ճգնաժամային միջոցառումները պարունակել են ազգաբնակչության սոցիալական աջակցության ուղղությամբ բազմաթիվ միջոցառումներ, ինչը շատ դրական է գնահատվում: Սակայն դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ եթե այդ միջոցառումներն ընդունվեին ավելի վաղ՝ 2008 թվականի սկզբին, երբ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը նոր էր թափ առնում, ապա դրանք ավելի արդյունավետ կգտնվեին և էապես կկանխեին համախառն պահանջարկի կտրուկ անկումը:

ԱԶԳԱՔՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՎԱԿՈՒՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *դ.գ.դ., պրոֆեսոր*

ՄԳԱԿ Թղթակից անդամ

ՄԳԱԿ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության հնարհիտության անօրենի

Համառոտագիր

Տնտեսական ճգնաժամի պայմաններում խաթարվում են տնտեսական բնականոն հարաբերությունները՝ իրենց բացասական ազդեցությունը թողնելով ինչպես տնտեսության իրական և ֆինանսական հատվածների վրա, այնպես էլ վատթարացնելով ազգաբնակչության սոցիալական վիճակը՝ բերելով եկամուտների կրճատման և զործազրկության ծավալների կտրուկ մեծացման: Տնտեսական ճգնաժամի ընթացքում պետության կողմից ցուցաբերվող ազգաբնակչության աջակցությունը լուծում է միանգամից երկու խնդիր: Առաջինը՝ հասարակության մեջ նվազում է սոցիալական ճնշվածությունը, և ընդլայնվում է կառավարության կողմից հակաճգնաժամային միջոցառումների վերաբերյալ բնակչության իրազեկվածությունը: Երկրորդ՝ սոցիալական աջակցությունը նպաստում է սպառողական պահանջարկի ընդլայնմանը, այսինքն՝ տանում է տնտեսության մեջ համախառն պահանջարկի մեծացման:

Բանալի բառեր. *սոցիալական, պաշտպանություն, պետություն, ճգնաժամ, տնտեսություն, հակաճգնաժամային, քաղաքականություն, միջոցառում, օգնություն, ոլորտ:*

ЗНАЧЕНИЕ МЕРОПРИЯТИЙ СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ НАСЕЛЕНИЯ В СФЕРЕ АНТИКОРРУПЦИОННОЙ ПОЛИТИКИ

ВЛАДИМИР АРУТЮНЯН, *д.э.н., профессор*

директор Института экономики

им. М.Котаняна НАН РА

член-корр. НАН РА

Аннотация

В условиях экономического кризиса нарушается естественный ход экономических отношений, что оказывает отрицательное воздействие как на реальный и финансовый сектора экономики, так и на социальное положение населения, вызвав сокращение доходов и резкое увеличение объемов безработицы. В период экономического кризиса оказываемое со стороны государства содействие населению нацелено на решение двух задач: во-первых, в обществе снижается социальное напряжение и расширяется информированность населения относительно проводимых правительством антикризисных мероприятий, во-вторых, социальная помощь содействует расширению потребительского спроса, то есть ведет к росту совокупного спроса в экономике.

Ключевые слова: *кризис, мировой, экономический, финансовый, международный, организации, политика, мероприятия, международный валютный фонд, рейтинг.*

THE ROLE OF SOCIAL PROTECTION MEASURES FOR THE POPULATION IN CRISIS MITIGATION POLICY

VLADIMIR HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*

Academician, National Academy of Sciences

Director, M. Kotanyan Institute of Economics,

National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

During an economic crisis normal, regular economic interactions (relations) are distracted, thus negatively affecting both the real and financial sectors of economy, and worsening social conditions of the population resulting in decrease of income and sharp increase of unemployment rate. Assistance to population by the government in times of crisis simultaneously addresses two issues. First, it addresses social vulnerability and raises public awareness on crisis response measures implemented by the government. Second, the social assistance boosts consumer demand, i.e. causing aggregate demand to increase.

Keywords: *Social, protection, state, crisis, economy, anti-crisis, policy, measure, assistance, sector.*

**ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՈՒ ԴՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԶՐԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ԿՐԱ**

Հետխորհրդային տարիներից սկսված տնտեսական ճգնաժամի արդյունքում ՀՀ ջրային տնտեսությունը հայտնվել էր ֆինանսատնտեսական անելանելի վիճակում: 1992-2002 թվականների ընթացքում բնակավայրերի մեծ մասում ջուրը բնակչությանը մատակարարվում էր օրական միջին հաշվով 2-6 ժամով, իսկ որոշ տարածաշրջաններում ընդհանրապես ջրամատակարարում օրերով չէր իրականացվում: Խողովակում ջրի անբավարար ճնշման պատճառով բազմաբնակարան շենքերի բարձր հարկերի բնակիչներն ընդհանրապես զրկված էին խմելու ջրից, մաքրման կայանների մեծ մասը չէր աշխատում, ստեղծված վտանգավոր սանիտարահիգիենիկ վիճակից հանրապետությունում ավելի հաճախակի էին դարձել համաճարակների բռնկումները:

Հանրապետության ֆինանսական ճգնաժամի պատճառով կապիտալ նորոգումների բացակայությունը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը հասցրել էր ծայրահեղ վթարավտանգ վիճակի (օրինակ՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ցանցի գրեթե 55 տոկոսը շահագործման մեջ էր արդեն 30 տարի. հիմնական միջոցների մաշվածությունը հասել էր 81 տոկոսի): Գյուղական վայրերի մեծ մասում ընդհանրապես բնակչությունը զուրկ էր ջրահեռացման ծառայություններից:

Կապիտալ ներդրումների երկարատև բացակայության հետևանքով ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի, մեքենաների և սարքավորումների մաշվածության ծայրահեղ աստիճանը, ջրի կորուստների մեծ քանակը, ջրամատակարարման ցանցերի գոտիավորման աշխատանքների բացակայությունը, օրվա կարգավորիչ ջրամբարների ոչ բավարար ծավալները, վթարների քանակի օրեցօր ավելացումը հիմնական պատճառներն էին հասարակության լայն զանգվածների դժգոհության ու թերհավատության և ընդհանրապես ջրամատակարար կազմակերպությունների աշխատունակ լինելուն: Ազգաբնակչության կողմից, չնայած անբավարար ջրամատակարարման արդյունքում ապրելակերպի օրեցօր վատթարացմանը, այնուամենայնիվ ձևավորվել էր կարծիք, որ «ջուրը բնության կողմից տրված պարգև է և դրա համար վճարելու կարիք չկա»:

Այս, ինչպես նաև բնակչության ցածր եկամուտները հիմնավոր պատճառ էին զանձումների մակարդակը 30-10 տոկոսի իջնելու համար:

90-ական թվականների էներգետիկ ճգնաժամը և դրան հետևող սակագների բարձրացումն էլ ավելի բարդացրին առանց այդ էլ ծանր իրավիճակը:

Ջրամատակարար կազմակերպությունները հայտնվել էին խոր ճգնաժամի մեջ. եկամուտները բավարար չէին ծածկելու նույնիսկ ընթացիկ ծախսերը: Կազմակերպությունների ֆինանսական անկայունության գործոններից էին կուտակված մեծ չափերի դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունները: Արդյունքում 2002 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի դեբիտորական պարտքը 18.9 մլրդ դրամից աճել էր՝ կազմելով 31.1 մլրդ դրամ, իսկ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի պարտքը 9.8 մլրդ դրամից հասել էր 15.6 մլրդ դրամի:

Ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների տվյալներով մինչև 2002թ. դեկտեմբերի 9-ը մատուցված ծառայությունների գծով դեբիտորական պարտքի մնացորդը կազմում էր 7 201 517.7 հազար դրամ, ընդ որում բնակչությանը մատուցված ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների գծով 50 181 բաժանորդների դեբիտորական պարտքը կազմում էր 7 068 298.3 հազար դրամ, իսկ այլ ջրօգտագործողներինը՝ 133 219.4 հազար դրամ: Այսինքն, բնակչության դեբիտորական պարտքի մնացորդը կազմում էր ընդհանուր դեբիտորական պարտքերի 98.1 տոկոսը:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար հարկավոր էր բարեփոխումների իրականացում, ընդ որում քայլերի այնպիսի խելամիտ հաջորդականությամբ, որը միաժամանակ լուծեր ջրամատակարար կազմակերպության հետագա գործունեության իրատեսությունը և ազգաբնակչության կենցաղը դուրս բերեր անկման ընթացքից:

Կազմակերպությունների գործունեության ապահովումն իրականացնելու համար անհրաժեշտ էր աստիճանաբար մարել դեբիտորական և կրեդիտորական պարտքի բեռը, ներդրվել սպառվող ջրի և բաժանորդական բազայի նոր հաշվառման համակարգեր, կատարվել բաժանորդների և համակարգի անհատականացված գույքագրում, բաժանորդների հետ ստեղծվել հստակ իրավահարաբերությունների դաշտ, հաշվի առնելով սոցիալական մի շարք գործոններ՝ հնարավորինս լուծվել մատակարարվող ջրի գերաժախսի և կորուստների հարցը:

Բնակչության տեսանկյունից ևս հարկավոր էր ազատվել կուտակված պարտքերից և մեկընդմիջտ ձևակերպվել, որ «այո՛, ջուրը Աստօն և բնության կողմից պարզևկած մեծագույն բարիքներից է, սակայն ջրամատակարարումը ծառայություն է, իսկ մատուցված ծառայության համար պետք է վճարել», և արդյունքում ստեղծվելին հստակ իրավահարաբերություններ՝ անթույլատրելի համարելով պարտքերի կուտակումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունեց ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման խնդիրը՝ որպես առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից մեկը:

Առանց պետական աջակցության և հոգածության անհնար է պատկերացնել ջրային ոլորտի գոյատևումն ու զարգացումը:

Սոցիալական աջակցության միջոցառումները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ միջոցառումներ, որոնք ուղղված են քիչ վճարունակ տնային տնտեսությունների համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց վճարների նվազեցմանը և միջոցառումներ, որոնք ուղղված են քիչ վճարունակ տնային տնտեսությունների եկամուտների ավելացմանը: Նախկինում Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրները հիմնականում օգտագործել են առաջին խմբի մեխանիզմները ջրամատակարար ընկերություններին պետական դոտացիաների, սուբսիդիաների և խաչաձև սուբսիդիաների տրամադրում, բնակչության որոշակի խմբերի համար ցածր սակագների սահմանում: Ծառայությունների դիմաց չվճարման (կամ թերվճարման) առկա գործընթացը նույնպես կարող է դիտարկվել որպես անուղղակի սուբսիդավորում¹:

Ջրային ոլորտի ընկերությունների ֆինանսական առողջացման և արդյունավետ ֆինանսական կառավարում իրականացնելու տեսանկյունից խիստ կարևորվում են առաջին հերթին նրանց պարտքերի վերակառուցումը և նախորդ տարիների բեռից ազատումը, ինչի լույսի ներքո նաև կուտակված դեբիտորական և կրեդիտորական պարտքերի խնդրի լուծումը: Դրան նպաստեց «Խմելու ջրի մատակարարման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը², որի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունվեց Հայաստանի Հանրապետության կառավարության 13.12.2002թ. «Խմելու ջրի մատակարարման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող առաջնահերթ միջոցառումների մասին» N 1950-Ն որոշումը³, և որի համաձայն բնակչությանը տրվեցին զգալի արտոնություններ՝ ջրամատակարարման դիմաց պարտքերի մարման և դրանց մասնակի վճարման համար՝ համապատասխան պայման:

Որոշման իրականացման արդյունքում դուրս գրվեց ջրամատակարար կազմակերպությունների դեբիտորական պարտավորությունների 60 տոկոսը. բնակչության պարտքերի մարման դիմաց կառավարությունը ջրամատակարար կազմակերպություններին փոխհատուցում էր անուղղակի՝ նպատակային դոտացիաների/սուբսիդիաների միջոցով՝ էլ. էներգիայի դիմաց:

Կրեդիտորական պարտքերը նվազում էին գանձումների մակարդակի բարձրացման միջոցով. բնակչությունը մարում էր տարիների ընթացքում կուտակված պարտքերը: Կրեդիտորական պարտքերի նվազեցման մեջ մեծ դեր էր խաղում նաև դոտացիաների տրամադրումը:

¹ Доступность услуг, социальная защита и участие общественности в процессе реформирования сектора водоснабжения и канализации в странах Восточной Европы, Кавказа и Центральной Азии. Ключевые аспекты и рекомендации, OECD, 2003, стр. 14.

² ՀՀ օրենքը «Խմելու ջրի մատակարարման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին», ՀՕ-441-Ն, ՀՀԴՏ 2002/52(227), 29.11.02:

³ Հայաստանի Հանրապետության կառավարության 13.12.2002թ. «Խմելու ջրի մատակարարման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող առաջնահերթ միջոցառումների մասին» N 1950-Ն որոշում, ՀՀԴՏ 2003/4(239), 15.01.03, հոդ. 27:

Բացի դրանից՝ ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշման կիրարկման արդյունքում բարձրացվեց գանձման մակարդակը. այստեղ կարևոր է նաև այն, որ բաժանորդների մեջ հավատ առաջացավ հաշիվների գումարների չափերի նկատմամբ, այսինքն՝ բաժանորդը վճարում է այնքան գումար, ինչքան ջուր է սպառել. արդյունքում բաժանորդների վճարման ենթակա ընթացիկ գումարների չափը նվազել է:

Այսինքն՝ այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը ջրաչափերի տեղադրումը դարձրեց որոշմամբ նախատեսված արտոնություններից օգտվելու նախապայման (որդեգրվեց հստակ հաշվառելիության սկզբունքը), բերեց նրան, որ ոչ միայն ջրամատակարարման կազմակերպությունների ֆինանսական վիճակը բարելավվեց, այլև հարաբերությունները ջրային ոլորտում դարձան ավելի թափանցիկ:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում արտոնությունների տրամադրման և պարտքերի դուրսգրման գործընթացները զուգորդվեցին նաև սակագների բարձրացումով. սակագնի բարձրացման հաշվին փաստորեն փոխհատուցվեց բաժանորդների կողմից սպառված ջրի փաստացի ծավալի նվազումը հաշվարկային ծավալի նկատմամբ (հոսքը մինչև ջրաչափի ցուցմունքի հիման վրա հաշվարկի մասին է):

Արտոնությունների տրամադրման գործընթացի արդյունքում ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների մասով բնակչության առկա 7068298.3 հազար դրամ պարտքից վճարվել է 119667.6 հազար դրամ կամ բնակչության գծով պարտքերի 1.7 տոկոսը, դուրս է գրվել 2167413.5 հազար դրամ կամ 30.6 տոկոսը: Գործընթացի ավարտից հետո ընկերությունների հաշվեկշիռներում առկա արտոնությունների տրամադրման ժամանակահատվածին բնակչության գծով պարտքը կազմել է 4745712.9 հազար դրամ:

Աղյուսակ 1

Խմելու ջրի գծով դեբիտորական պարտքերի կառուցվածքն ըստ ընկերությունների¹

Ջրամատակարար ընկերության անվանումը	Բնակչությանը մատուցված ծառայությունների գծով դեբիտորական պարտքն առ 09.12.2002թ., հազ. դրամ	Ընդհանուրի մեջ տեսակարար կշիռը (%)	Բաժանորդների քանակը (հատ)	Բաժանորդների ընդհանուրի մեջ տեսակարար կշիռը (%)
Երևանի Ջրմուղ-կոյուղի ՓԲԸ	24206170.0	60.8	302328	45.3
Հայջրմուղկոյուղի	15609623.4	39.2	364892	54.7
Ընդամենը	39815793.4	100	667220	100

Այսպիսով, արտոնությունների տրամադրման գործընթացի արդյունքում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մասով բնակչության առկա 39815793.4 հազար դրամ պարտքից վճարվել է 2860966.1 հազար դրամ կամ բնակչության գծով պարտքերի մոտ 7.2 տոկոսը, դուրս է գրվել 22187115.9 հազար դրամ, կամ պարտքի մոտ 55.7 տոկոսը, և ճշգրտումների արդյունքում պարտքը նվազել է մոտ 1.2 տոկոսով, դուրս գրված իրավահաջորդ չունեցող բաժանորդների դեբիտորական պարտքը կազմել է 1659900.0 հազ. դրամ կամ ընդհանուր պարտքի մոտ 4.2 տոկոսը: Հուլիսի 1-ի դրությամբ արտոնությունների տրամադրման ժամանակահատվածին վերաբերող բնակչության գծով ընկերությունների հաշվեկշիռներում առկա պարտքը կազմում է 12632616.8 հազար դրամ (շուրջ 31.7 %):

Աղյուսակ 2

Արտոնությունների տրամադրման օրենքի կիրարկման գործընթացի արդյունքում խմելու ջրի մատակարարող ընկերությունների վնասները

(հազ.դրամ)

Ընկերություններ	Դուրս գրված գումարներ	Չևակերպված կանխավճարներ	Դուրս գրված հարկային պարտավորությունների գծով եկամուտ	Պարտքերի վճարման գումարներ	Ընդամենը վնաս 5=1+2-3-4
	1	2	3	4	5
Երևանի Ջրմուղ-կոյուղի	14504615.9	609085.5	2717937.0	2514609.1	9881155.3
Հայջրմուղկոյուղի	7682500.0	549822.0	915541.4	346357.0	6970423.6
Ընդամենը	22187115.9	1158907.5	3633478.4	2860966.1	16851578.9

¹ Մկրտումյան Մ., Կարապետյան Ա., Ադամայան Ա. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտում պետական ֆինանսական աջակցությունը: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտաժողովի նյութեր).-Եր., «Էդիթ Պրինտ», 2007, էջ 310-316:

Կրեդիտորական պարտավորությունների վերաբերյալ նշենք, որ «ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 20-րդ կետով ՀՀ կառավարությանը թույլատրվել է ջրային ոլորտի ընկերությունների պարտավորությունների մարման նպատակով ձեռք բերել Երևանի «Ջրմուղ-կոյուղի», «Հայջրմուղկոյուղի» և «Ոռոգում-ջրառ» ՓԲԸ-ների լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի պետական բաժնեմասը՝ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի գծով 10312000 հազ.դրամ, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գծով՝ 4609000 հազ. դրամ և «Ոռոգում-ջրառ» ՓԲԸ-ի գծով՝ 2630000 հազ.դրամ: Նշված գործողությունների իրականացման նպատակով «ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով ՀՀ կենտրոնական բանկին թույլատրվել է 2003 թվականի բյուջետային տարվա ընթացքում ՀՀ կառավարությանը մեկ օրով տրամադրել անտոկոս վարկեր: Հետագայում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ջրտնտեսությունների, Երևանի քաղաքապետի և մի շարք պետական ընկերությունների միջև կնքվել է կանոնադրական կապիտալները 18703.0 մլն դրամ գումարով ավելացման և ընկերությունների կողմից նույն գումարի չափով ՀՀ պետբյուջեի նկատմամբ պարտավորությունների մարման վերաբերյալ» համաձայնագիրը:

Պարտավորությունների և թերվճարումների խնդիրը պետք է լուծվի քաղաքական մակարդակով՝ բոլոր սպառողների համար հավասար պայմաններ ստեղծելու նախադրյալներով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 81-րդ հոդվածի՝ ջրային հարաբերություններում կարող է տրամադրվել ֆինանսական օգնություն՝ սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունների տրամադրման տեսքով՝ կախված ջրի ազգային ծրագրում ամրագրված ֆինանսական օգնության տրամադրման որոշակի ձևից:

Վերջին տարիներին իրականացված միջոցառումների արդյունքում (այդ թվում՝ ցուցանիշների իրատեսական պլանավորման) ՀՀ պետական բյուջեից հատկացվող սուբսիդիաների չափաքանակներն ըստ կազմակերպությունների նվազել են, իսկ որոշ կազմակերպությունների մոտ՝ իսպառ վերացել:

Ընդհանուր առմամբ կազմակերպությունների ֆինանսական կենսունակության և բնակչության վճարունակության բարձրացմանը զուգընթաց պետությունը պետք է աստիճանաբար հրաժարվի սուբսիդավորման քաղաքականությունից կամ էլ սուբսիդավորման մեխանիզմներն իրականացնի հասցեականության բարձրացման հաշվին՝ տարբեր սոցիալական ծրագրերի միջոցով:

Ամփոփելով անցած ճանապարհը՝ կարելի է եզրակացնել, որ «Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում բնակչության պարտքերի վերակառուցումը և դուրսգրումը մեծ ազդեցություն թողեցին ջրային կազմակերպությունների ֆինանսական վիճակի առողջացման և կայունացման գործընթացի վրա. ընկերություններն ազատվեցին նախկինում կուտակված պարտքերից, բարձրացավ գանձումների մակարդակը (դա կապված է նրա հետ, որ բաժանորդները պարտքի մի մասի մուծման արդյունքում ազատվում էին պարտքի մյուս մասից, հակառակ դեպքում բաժանորդից դատական կարգով գանձվում էր նախկինում կուտակված պարտքն ամբողջությամբ), և ամենակարևորը՝ իրականացվեց հաշվիչ սարքերի զանգվածային տեղադրման գործընթացը, ինչը բխում էր ինչպես ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող ընկերությունների, այնպես էլ բաժանորդների շահերից:

ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՈՒ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԶՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿՐԱ

ԱՆԱՅԻՏ ԱՐԱՆԱԼՅԱՆ, *դ. գ. թ.*

ՆՊՏՆ «Բնօգտագործման տնտեսագիտություն» ամբիոնի ասիստենտ

Համառոտագիր

Հետխորհրդային տարիներից սկսված տնտեսական ճգնաժամի արդյունքում ՀՀ ջրային տնտեսությունը հայտնվել էր ֆինանսատնտեսական անելանելի վիճակում: Ջրամատակարար կազմակերպությունները հայտնվել էին խորը ճգնաժամի մեջ. եկամուտները բավարար չէին ծածկելու նույնիսկ ընթացիկ ծախսերը: Կազմակերպությունների ֆինանսական անկայունության գործոններից էին կուտակված մեծ չափերի դեբիտորական և կրեդիտորական պարտավորումները:

Ընդհանուր առմամբ կազմակերպությունների ֆինանսական կենսունակության և բնակչության վճարունակության բարձրացմանը զուգընթաց պետությունը պետք է աստիճանաբար հրաժարվի սուբսիդավորման քաղաքականությունից կամ էլ սուբսիդավորման մեխանիզմներն իրականացնի հասցեականության բարձրացման հաշվին՝ տարբեր սոցիալական ծրագրերի միջոցով:

Բանալի բառեր. դեբիտորական պարտք, կրեդիտորական պարտք, ջրային ոլորտ, ջուր մատակարարող կազմակերպություն, պարտքերի վերակառուցում և դուրսգրում, սուբսիդավորման քաղաքականություն:

ПРОЦЕСС РЕГУЛИРОВАНИЯ И СПИСАНИЯ ДЕБИТОРСКОЙ И КРЕДИТОРСКОЙ ЗАДОЛЖЕННОСТИ И ЕГО ВЛИЯНИЕ НА ВОДНУЮ СФЕРУ

АНАИТ АДНАЛЯН, *к.э.н*

Ассистент кафедры «Экономики природопользования» ЕГЭИ

Аннотация

С постсоветских лет, в результате экономического кризиса водное хозяйство РА оказалось в безвыходном финансово-экономическом состоянии. Водоснабжающие организации оказались в глубоком кризисе, доходы не покрывали даже текущие расходы. Факторами финансовой нестабильности организаций являлись большие размеры накопленных дебиторских и кредиторских задолженностей.

Параллельно с повышением финансовой устойчивости организаций и платежеспособности населения, государство должно постепенно отказываться от политики субсидирования или осуществлять механизмы субсидирования за счет повышения адресности с помощью разных социальных программ.

Ключевые слова: дебиторская задолженность, кредиторская задолженность, водная сфера, водоснабжающая организация, отрасль, реструктуризация и списание долгов, политика субсидирования.

THE PROCESS OF REGULATION AND WRITE-OFF OF DEBIT AND CREDIT DEBTS AND ITS IMPACT ON THE WATER SECTOR

ANAHIT ADANALYAN, *Ph.D. in Economics*

Assistant Professor, Faculty of Environmental Economics, Armenian State University of Economics

Abstract

Since the post-soviet times and as a result of the economic crisis the water economy of the Republic of Armenia has started experiencing severe difficulties. Water supply companies have undergone severe crisis: the revenues couldn't even cover the costs. The cause roots of the financial instability of those companies were the accumulated and huge credit and debit debts.

In general, along with the financial stability and increase in solvency of the population, the government needs to gradually suspend the subsidization policy, or subsidizing needs to be targeted by implementing various social assistance programs.

Keywords: Debit debt, credit debt, water sector, water supply company, debt restructuring and write-off, subsidization policy

ԱՇՈՏ ԲԱՅԱԴՅԱՆ, *դ.գ.դ., պրոֆեսոր*
 ՄԿԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
 ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ, *դ.գ.թ.*
 ՄԿԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
 ինստիտուտի ավագ գիտաշխատող

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ**

Ճգնաժամային երևույթներին հակազդելու պետության հնարավորություններն ուղղակիորեն փոխկապակցված են պետական պարտքի կառավարման համակարգի հետ, այնպես որ այդ համակարգի թերությունները հաճախ ճգնաժամերի խորացման պատճառ են դառնում: Պետական պարտքի կառավարման ոլորտում առկա թերությունների հետևանքների սրությունը պայմանավորվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ կապիտալի ներքին շուկայի զարգացվածության մակարդակը, արտաքին ֆինանսական շուկաների հասանելիությունն ու մատչելիությունը, արտարժույթային և մակրոտնտեսական քաղաքականության առանձնահատկությունները, պետական կարգավորման օրենսդրական և իրավական հիմքերը, տեխնոլոգիական, մարդկային և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունն ու առկայությունը և այլն: Այդ պատճառով յուրաքանչյուր երկրի կառավարություն ստիպված է մշակել պետական պարտքի կառավարման իր ուրույն ռազմավարությունը, նպատակները, խնդիրները, ռիսկայնության ընդունելի մակարդակը, կառավարման կազմակերպական մոդելն ու մեթոդները:

Հայաստանի Հանրապետությունում 2002-2008թթ. պետական պարտքի բեռը բնութագրող ցուցանիշներն անընդհատ անկում էին ապրում, ինչը հարաբերական հանգստության պատճառ էր դառնում: Սակայն 2008թ.-ից սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամով սկիզբ է առնում պետական պարտքի կտրուկ աճի ժամանակաշրջանը, ինչը ստիպում է դրա կառավարումը հասցնել գերարդյունավետ մակարդակի:

Հայաստանի պետական պարտքի ժամանակագրական փոփոխությունների վերաբերյալ ավելի պարզ և հստակ պատկերացում ունենալու համար ներկայացնենք աղյուսակ ու դրանում զետեղված տվյալներին համահունչ գծապատկեր 1-ը և 2-ը՝ ըստ 2002-2013թթ.:


Աղյուսակ

Հայաստանի պետական պարտքի փոփոխության միտումները 2002-2013թթ., մլրդ դրամ

	<i>ՏԱՐԻՆԵՐԸ</i>											
	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ընդամենը համախառն չմարված պետական պարտք, այդ թվում՝	623.7	658.1	618.6	544.8	496.2	507.1	584.6	1,270.7	1,379.3	1,592.7	1,764.4	1,861.3
Ներքին պարտք	35.3	41.0	46.4	51.4	58.0	66.3	100.9	149.6	180.3	216.2	255.4	279.6
Արտաքին պարտք	588.4	617.1	572.2	493.4	438.2	440.8	483.7	1,121.1	1,199.0	1,376.5	1,508.6	1581.7


Գծապատկեր 1

Հայաստանի պետական պարտքի կառուցվածքը 2002-2013թթ., մլրդ դրամ



Գծապատկեր 2

Հայաստանի պետական պարտքի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշի փոփոխության միտումները, 2002-2013թթ., %



Ինչպես վկայում են աղյուսակի և գծապատկերների տվյալները, ակնհայտ է դառնում, որ տարեցտարի աճման միտում է տեղի ունեցել պարտքի գծով: Այսպես, 2013թ. համեմատած 2002թ. հետ ընդամենը չմարված պետական պարտքն ավելացել է 1237.6 մլրդ դրամով կամ 198.2%-ով, ներքին պարտքը՝ 244.3 մլրդ դրամով կամ 6.9 անգամ, իսկ արտաքին պարտքը՝ 993.3 մլրդ դրամով կամ 168.8%-ով: Սակայն պետական պարտք/ՅՆԱ հարաբերությունն ըստ տարիների ունեցել է ոչ գծային տատանողական փոփոխություն՝ կախված ավելի շատ համախառն ներքին արդյունքի մեծությունից: Ամենամեծ հարաբերակցությունը գրանցվել է 2002թ.՝ 45.8%-ի չափով, նվազագույնը՝ 2007թ.՝ 16.1%-ի չափով, իսկ 2013թ. այն կազմել է 44.0%:

Պետք է նշել այն իրողությունը, որ պետական պարտքի կառավարման հիմքում միջազգային տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր մասնագետների կողմից դրվող մոտեցումները վկայում են, որ պետական պարտքի կառավարման գործում առանցքային նշանակություն ունի վերջինիս կառավարման կազմակերպա-իրավական կառուցվածքը: Ընդհանուր առմամբ պետական պարտքի կառավարումը կարող է իրականացվել ֆինանսների նախարարության, կենտրոնական բանկի, ինչպես նաև առանձին մասնագիտացված ինստիտուտի միջոցով: Ընդ որում, նշված պետական կառույցներից յուրաքանչյուրի միջոցով պետական պարտքի կառավարումն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական նրբերանգներ, որոնք հիմնավորվել են պատմական իրողություններով:

Հարկ է նշել, որ պատմական առավել հին ժամանակաշրջաններում պետական պարտքի կառավարումն իրականացվում էր առավելապես կենտրոնական բանկերի կողմից, կամ դրանց անմիջական վերահսկողությամբ, և միայն վերջին տասնամյակներում տեղի է ունեցել շրջադարձը դեպի այլ ինստիտուցիոնալ կառույցներ: Ընդհանուր առմամբ, պետական պարտքի կառավարման և դրամավարկային քաղաքականության համակցման դեպքում կարող են առաջանալ հետաքրքրությունների բախում: Մասնավորապես կենտրոնական բանկը կարող է՝

- հրաժարվել ինֆլացիայի դեմ պայքարելու նպատակով տոկոսադրույքների բարձրացումից, քանի որ դա կարող է բացասական ազդեցություն ունենալ պետական պարտատոմսերի սեփական պորտֆելի վրա,
- չարաչափել ֆինանսական շուկայի կարգավորման գործառույթները՝ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը կամ ինֆլացիայի միջոցով պարտքի անվանական մեծությունը նվազեցնելու նպատակով,
- փոփոխել պետական պարտատոմսերի իր պորտֆելի ժամկետային և արտարժույթային կառուցվածքը՝ համապատասխանեցնելով իր դրամավարկային քաղաքականության հետ:

Ինչպիսին էլ լինի պետական պարտքի կառավարման համակարգը դրանում առաջնային նշանակություն ունի այն կառավարող մարմնի անկախության որոշակի մակարդակի առկայությունը, հակառակ դեպքում այն գերատեսչությունները, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներազդել պետական պարտքի կառավարման գործող համակարգի վրա և միաժամանակ վերջինիս պարտադրել սեփական շահերին համապատասխանող գործառույթների իրականացում՝ առանց հաշվի առնելու պետական պարտքի հետ կապված պետության այլ շահերը: Նման գործելաճ համաշխարհային տնտեսության պատմության մեջ մեկ անգամ չէ, որ իրականացվել է: Մասնավորապես ԱՄՆ-ում, որտեղ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, հսկայական բյուջետային դեֆիցիտի էժան ֆինանսավորման անհրաժեշտության հետ կապված, մինչև 1951թ. ֆինանսների նախարարությունը ֆեդերալ պահուստային համակարգից պահանջում էր նվազեցնել պետական պարտատոմսերի եկամտաբերությունը¹ Մեծ Բրիտանիայում, որտեղ սկզբունքային խնդիր է դրվել փոխկապակցել պետական պարտքի կառավարումը դրամավարկային քաղաքականության հետ², կամ Շվեդիայում, որտեղ մինչև 1980-ականների կեսերը պետական պարտքի կառավարումը հանդես է եկել որպես պետական բանկի դրամավարկային քաղաքականության և կառավարության բյուջետային քաղաքականության մաս: Դրա արդյունքում բանկերին և ապահովագրական ընկերություններին ստիպում էին խոշոր

¹ Hetzel R., Ralph L., "The Treasury-Fed Accord: A New Narrative Account", Federal Reserve Bank of Richmond, Economic Quarterly, Winter 2001, p. 51.

² Leong D., "Debt Management – Theory and Practice", Treasury Occasional Paper N 10, April 1999, p. 9.

ներդրումներ կատարել պետական պարտատոմսերում, որոնց տոկոսադրույքը շուկայականից ցածր մակարդակով սահմանվել էր պետական բանկի կողմից¹:

Այսպիսով, միաժամանակ մի շարք երկրներում սկսեցին գիտակցել, որ պետական պարտքի կառավարման ոլորտում անհրաժեշտ է վերանայել կենտրոնական բանկի և ֆինանսների նախարարության պատասխանատվության շրջանակները, քանի որ այդ գերատեսչությունները տարբեր կերպ են ընկալում պարտքի կառավարման նպատակները: Ավելին, 1990-ականներից որոշ տնտեսագետներ պետական պարտքի կառավարման գործընթացում առաջացող խնդիրների լավագույն լուծումը տեսնում էին պարտքային գործակալության ստեղծման մեջ, որոնց հիմնումն առավել հաճախ հիմնավորվում էր արդյունավետությամբ, պրոֆեսիոնալիզմի, թափանցիկության և հաշվետվողականության կենտրոնացման սկզբունքների միջոցով²:

Ֆինանսների նախարարությունից պետական պարտքի կառավարման գործառույթների փոխանցումը գործակալությանը հիմնավորվում էր հետևյալ առավելություններով.

- պետական պարտքի կառավարումը հանրային քաղաքականության մաս է, որը պետք է ունենա սեփական կառուցվածք:
- Գործակալությունը պետք է ունենա հստակ սահմանված նպատակ՝ հիմնված տնտեսական և շուկայական սկզբունքների վրա: Գործակալության կառուցվածքը պետք է ուղղված լինի այդ նպատակներին հասնելուն, իսկ աշխատակազմի վարձատրությունը և կարիերայի աճը պետք է լինեն ճկուն, այնպիսին, ինչպիսին առկա է մասնավոր հատվածում:
- Ներդրողների կողմից գործակալությունն ընկալվում է որպես պետական քաղաքականությունից անկախ մարմին: Նման գործակալության հետ գործարքի քաղաքական ռիսկն ավելի փոքր է, հետևաբար փոքր է նաև ռիսկի դիմաց ներդրողների կողմից պահանջվող փոխհատուցումը:
- Պետական պարտքի կառավարման և քաղաքականության տարանջատումը նվազեցնում է պարտքը կառավարողների վրա կարճաժամկետ պարտավորությունների ավելացմանն ուղղված արտաքին ճնշումը:
- Պետական պարտքի կառավարման առանձնացումը վերացնում է նաև այնպիսի խնդիրների առաջացումը, ինչպիսիք են պարտքի կառավարումն ու բյուջետային կամ դրամավարկային քաղաքականությունների փոխհամաձայնեցումը:
- Առանձնացված մարմնի ստեղծումը հնարավորություն է տալիս ապահովելու աշխատակիցների մասնագիտական աճը, այն դեպքում, երբ ֆինանսների նախարարությունում կամ կենտրոնական բանկում նման գործառույթների կենտրոնացումը հանգեցնում է նման բաժանմունքների երկրորդային դերի:

Այսպիսով, ձևավորված նոր սկզբունքների համաձայն պետական պարտքով նախկինում զբաղվող մարմինները պետք է ունենային պարտավորությունների հետևյալ շրջանակները.

Ֆինանսների նախարարությունը պետք է իրականացնի բյուջետային քաղաքականություն, կառավարության մակրոտնտեսական կարգավորման աջակցություն, մի շարք մակրոտնտեսական խնդիրների լուծում և այլն:

Կենտրոնական բանկը՝ դրամավարկային քաղաքականություն, գների կայունության ապահովում՝ արտահայտված ինֆլյացիայի ցածր և կայուն աստիճանով:

Պարտքային գործակալությունը՝ պետական պարտքի կառավարում, պարտքային պորտֆելի ռիսկայնության նվազեցում և պետական պարտքի սպասարկման ծախսերի կրճատում:

Պետական պարտքի կառավարման նպատակով անկախ գործակալության հիմնումը միանշանակորեն չընդունվեց բոլոր զարգացած երկրների կառավարությունների կողմից: Որոշ տնտեսագետներ գտնում են, որ պետական պարտքի կառավարմանը նման մեծ դեր և անկախություն հատկացնելը կարող է հանգեցնել նրան, որ պետական պարտքի կառավարումն իր

¹ Crona S., "Sweden: Separating Public Debt Management from Monetary Policy", Coordinating public debt and monetary management: institutional and operational arrangements / editors, V. Sundararajan, Peter Dattels, and Hans J. Blominestein. Washington DC, International Monetary Fund, 1997, p. 318-326.

² Cassard M., Folkerts-Landau D., "Risk Management of Sovereign Assets and Liabilities", International Monetary Fund. Working Paper 166, 1997, p. 14.
www.imf.org/external/pubs/ft/wp/wp97166.pdf.

կարևորությամբ դիտարկվի, օրինակ, ինֆլյացիայի դեմ պայքարին մոտ, քանի որ կենտրոնական բանկը դրանով էլ է զբաղվում՝ պետական քաղաքականությունից անկախ: Մի շարք երկրներում կասկածի տակ դրեցին պետական պարտքի կառավարման գործառույթների և հանրային քաղաքականության տարանջատման հիմնավորվածությունը: Նման երկրները, դրա կառավարումը թողնելով ֆինանսների նախարարությունում, փորձեցին որոշ փոփոխություններ մտցնել այդ ստորաբաժանումների աշխատանքի կազմակերպման բնագավառում՝ սահմանելով դրանց նպատակները, սկզբունքները և պատասխանատվությունը: Բացի այդ, որոշ մասնագետներ գտնում են, որ զարգացած շուկա ունեցող երկրներում պետական պարտքի կառավարման գործառույթները ֆինանսների նախարարությունից առանձնացնելու դեպքում կարող են առաջանալ էլ ավելի լուրջ խնդիրներ¹: Այդպիսի երկրներում ֆինանսների նախարարությունը պարտքի կառավարման գործառույթներն իրականացնում է կենտրոնական բանկի հետ սերտ համագործակցությամբ: Իսկ պարտքային գործակալության ստեղծումը ոչ միայն բարդացնում է նման համագործակցությունը, այլև կարող է արգելակել պետական պարտատոմսերի ներքին շուկայի զարգացումը²:

Բացի նշված թերություններից՝ որոշ կառավարություններ գտնում են, որ պետական պարտքի կառավարումը ֆինանսների նախարարությունից առանձնացնելը և անկախ գործակալությանը պատվիրակելը չի համապատասխանում դեմոկրատական պետության այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են ժողովրդի առջև պատասխանատու լինելը և հաշվետվողական կառավարությունը: Պետական պարտքի կառավարումը հանրային քաղաքականության այլ բաղկացուցիչներից տարանջատելը նույնպես անբնական է, քանի որ դրանով անուղղակիորեն կարևորվում է դրա գերակայությունն այդ բաղադրիչների նկատմամբ:

Այդ իսկ պատճառով էլ մի շարք երկրներում խուսափեցին պարտքային գործակալություններին լայն անկախություն շնորհելուց, և վերջիններիս ձևավորեցին ֆինանսների նախարարության կազմում: Այդ երկրների շարքում են դասվում Ավստրալիան, Նիդեռլանդները, Նոր Զելանդիան, Ֆրանսիան և այլն: Այս երկրներում պետական պարտքի նպատակները դիտվում են հասարակական-քաղաքական նպատակների ենթատեքստում, ինչը նշանակում է, որ պետական պարտքի կառավարմամբ նպատակ էր դրվում հասնել նաև այլ խնդիրների լուծմանը, ինչպիսին է, օրինակ, պետական արժեթղթերի շուկայի զարգացումը:

Պետական պարտքի առանձնացված գործակալության ստեղծման «գինը» պետական պարտքի ռազմավարության շեղումն է դեպի պորտֆելի կառավարիչների աշխատանքի արդյունավետության գնահատումը: Այսինքն՝ պարտքային պորտֆելը ոչ թե պետք է ներկայացնի գործակալության կառավարիչների աշխատանքի արդյունավետությունը, այլ այն, թե որքանով է համապատասխանում ռազմավարությամբ սահմանված ուղեցույցին:

Քննարկվող խնդիրների պարզաբանման գործում հանգուցային նշանակություն ունի այն հարցը, թե ով է մշակում պետության պարտքերի գծով ռազմավարությունը՝ պարտքային գործակալությունը, թե՞ ֆինանսների նախարարությունը: Որպեսզի պնդենք, թե գործակալությունն իրոք անկախ մարմին է, ինչպիսին է, օրինակ, կենտրոնական բանկը, ապա պետք է ապահովել գործակալության կողմից ռազմավարության մշակման հնարավորությունը: Հակառակ դեպքում, եթե գործակալությունը պարզապես պետական պարտքի գործառնական կառավարման ծառայություններ է մատուցում, իսկ քաղաքական և ռազմավարական որոշումները կայացնում է ֆինանսների նախարարությունը, ապա նման դեպքում գործակալությունը, ըստ էության, որևէ կերպ չի տարբերվում ֆինանսների նախարարության կազմում գործող պետական պարտքի կառավարման ստորաբաժանումից:

Կարևոր է արձանագրել, որ այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են՝ ԱՄՅ-ն և ՀԲ-ն, որևէ կերպ նախապատվություն չեն տալիս պետական պարտքի կառավարման

¹ Kalderen L., "Debt Management Functions and Their Location", Coordinating public debt and monetary management: institutional and operational arrangements / editors, V. Sundararajan, Peter Dattels, and Hans J. Blominestein. Washington DC, International Monetary Fund, 1997, p. 79-95.

² Blejer I.M., "Public Debt Management and Monetary Policy: Macroeconomic and Institutional Interactions", European Union Accession. The Challenge for Public Liability Management in Central Europe. Edited by the European Borrowers Network (A European Commission and World Bank Initiative), Washington DC, 1999, p. 62-69.

այս կամ այն մոդելին: Այս կազմակերպությունները կարևորում են ոչ թե պետական պարտքի կառավարման ինստիտուցիոնալ մեխանիզմը, այլ կառավարման գործընթացի պատասխանատվությունների տարբեր գերատեսչությունների միջև ճիշտ բաշխումը¹:

Մի շարք զարգացած երկրներում պետական պարտքի կառավարման փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ըստ էության, կազմակերպչական այս կամ այն մոդելի բացահայտ նախընտրություն չկա: Այսինքն՝ պետական պարտքի կառավարման գործառույթներն իրականացվում են թե՛ կենտրոնական բանկերի, թե՛ ֆինանսների նախարարությունների և թե՛ առանձին գործակալությունների միջոցով: Այսպես, պետական պարտքի կառավարման գործառույթները գործակալության միջոցով են իրականացվում Ավստրիայում, Մեծ Բրիտանիայում, Հունգարիայում, Գերմանիայում, Իռլանդիայում, Պորտուգալիայում, Շվեդիայում, Ավստրալիայում, Բելգիայում, Իսլանդիայում, Հունգարիայում, Նոր Զելանդիայում, Սլովակիայում, Ֆրանսիայում և այլն, իսկ ֆինանսների նախարարության միջոցով՝ Լեհաստանում, Ֆինլանդիայում, Հունաստանում, Իսպանիայում, Իտալիայում, Կանադայում, Կորեայում, Լյուքսեմբուրգում, Մեքսիկայում, Նորվեգիայում, ԱՄՆ-ում, Թուրքիայում, Չեխիայում, Շվեյցարիայում և այլ երկրներում:

Հայաստանի Հանրապետությունում պետական պարտքի կառավարումը նույնպես իրականացվում է ֆինանսների նախարարության կազմում ընդգրկված պետական պարտքի կառավարման վարչության միջոցով: Հարկ է նշել, որ ժամանակ առ ժամանակ մասնագիտական գրականության մեջ փորձ է արվում հիմնավորելու պետական պարտքի կառավարման առանձնացված գործակալության հիմնման անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ պետական պարտքի կառավարման ներկայիս մեխանիզմների պարագայում նման գործակալություն ստեղծելու նպատակահարմարությունը հիմնավոր չէ: Միաժամանակ պետական կառավարման համակարգի զարգացման ներկայիս փուլում առավել արդիական են այնպիսի խնդիրների լուծումը, ինչպիսիք են ներգրավված փոխառու միջոցների օգտագործման նպատակայնության ապահովումը, նոր պարտք ներգրավելու և օգտագործման «բիզնես պլանների» ներդրման անհրաժեշտությունը, ինչպես նաև արժութային և այլ ռիսկերի հեջավորման մեխանիզմների ներդրումը, ինչը հնարավորություն կտա խուսափելու պետական պարտքի՝ կրիտիկական սահմանաչափերը գերազանցելու և իրական վտանգի վերածվելու հիմնախնդիրներից:

¹ Guidelines for Public Debt Management. Prepared by the Staffs of the International Monetary Fund and the World Bank, Washington, D.C., 2003, p. 17.

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒԹՅՈՒՆԱԼ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ

ԱՇՈՏ ԲԱՅԱԴՅԱՆ, *դ.գ.դ., պրոֆեսոր*
Մ Գ Ա Ա Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ, *դ.գ.թ.*
Մ Գ Ա Ա Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Պետական պարտքի կառավարման համակարգի թերությունները հաճախ ճգնաժամերի խորացման պատճառ են դառնում: Հայաստանում 2008թ. սկիզբ է առնում պետական պարտքի կտրուկ աճի ժամանակաշրջանը, ինչը ստիպում է դրա կառավարումը հասցնել գերարդյունավետ մակարդակի: Հաճախ փորձ է արվում հիմնավորելու պետական պարտքի կառավարման առանձնացված գործակալության հիմնման անհրաժեշտությունը, սակայն միջազգային փորձի և մասնագիտական հիմնավորումներով ցույց է տրվել, որ պետական պարտքի կառավարման ներկայիս մեխանիզմների պարագայում նման գործակալություն ստեղծելու նպատակահարմարությունը հիմնավոր չէ: Ձարգացման ներկայիս փուլում առավել արդիական են այնպիսի խնդիրների լուծումը, ինչպիսիք են ներգրավված փոխառու միջոցների օգտագործման նպատակայնության ապահովումը, նոր պարտք ներգրավելու և օգտագործման «քիզնես պլանների» ներդրման անհրաժեշտությունը, ինչպես նաև արժուքային և այլ ռիսկերի հեջավորման մեխանիզմների ներդրումը:

Բանալի բառեր. պետական ներքին և արտաքին պարտքեր, պարտքի կառավարում, կենտրոնական բանկ, ֆինանսների նախարարություն, արդյունավետության բարձրացում, ինստիտուցիոնալ բարեփոխումներ:

ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ РЕФОРМЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОЛГОМ

АШОТ БАЯДЯН, *д.э.н., профессор*
главный научный сотрудник, зав. отделением
Института экономики им. М. Котаяна НАН РА

АЙК МАРКОСЯН, *к.э.н.*
старший научный сотрудник Института
экономики им. М. Котаяна НАН РА

Аннотация

Недостатки системы управления государственным долгом часто выступают причинами углубления экономических кризисов. Начиная с 2008 года, в Армении наблюдается резкий рост государственного долга, что требует внедрения высокоэффективной системы управления. Довольно часто в специализированной литературе пытаются обосновать необходимость создания отдельного агентства по управлению государственным долгом, однако на основе исследования международного опыта и профессиональных обоснований показано, что создание такого государственного агентства в условиях действующих механизмов управления государственным долгом нецелесообразно и не обосновано. На современном этапе развития наиболее актуальными проблемами, требующими решения, являются такие, как обеспечение целевого использования заемных средств, необходимость внедрения «бизнес-планов» привлечения и использования новых долговых обязательств, а также механизмов хеджирования валютных и других рисков.

Ключевые слова: внутренний и внешний государственный долг, управление долгом, Центральный банк, Министерство финансов, повышение эффективности, институциональные реформы.

INSTITUTIONAL REFORMS TO INCREASE THE EFFICIENCY OF PUBLIC DEBT MANAGEMENT

ASHOT BAYADYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Department Head, Chief Research Associate, M. Kotanyan Institute
of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia

HAYK MARKOSYAN, *Ph.D. in Economics*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics,
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The problems in public debt management often result in prolonged crises. Since 2008, Armenia has experienced a sharp rise in public debt that urges to make its management extremely effective to greater extent. Quite often efforts are made to justify the need for independent public debt management office, however the authors prove, based on review of the best practices worldwide and other methods, that it is not reasonable to establish such an office or agency, taking into account the current mechanisms of public debt management. At the current stage of development of those most urgent issues to be addressed are the ensuring the rational use of borrowed funds, the need for introducing "business plans" for the borrowing and use of loans, and the introduction of the hedging mechanisms for foreign-currency and other types of risks.

Keywords: Domestic and external public debt, debt management, Central Bank, Ministry of Finance, efficiency, institutional reforms.

**ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՒՐՍՈՎ ՊԱՅՄԱՆԱԿՈՐԿԱԾ
 ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՅ-ՈՒՄ**

Ցանկացած երկրում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ իրականացվում է արտաքին առևտուր՝ կապված ներմուծման և արտահանման գործառնությունների հետ, արտարժույթի փոխարժեքը ՀՀ դրամով կարևորագույն դերակատարում ունի մակրոտնտեսական հավասարակշռության ձևավորման գործընթացում և իր էական ազդեցությունն է թողնում տնտեսական հիմնական ցուցանիշների վարքագծի վրա: Կամ այլ առումով, փոխարժեքի փոփոխությունն իր ազդեցությունն է ունենում երկրի տնտեսական ակտիվության և զնաճի վրա ներքին ու արտաքին պահանջարկի փոփոխման միջոցով: Միաժամանակ ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ փոխարժեքի տատանումները տեղի են ունենում նաև արտարժույթի նկատմամբ պահանջարկի և առաջարկի փոփոխությունների միջոցով: Վերջիններս էլ ձևավորում են վճարային հաշվեկշռի ընթացիկ և ֆինանսական հաշիվներում ելակետային տվյալների տատանումներ¹:

Բացի վերոնշյալից, փոխարժեքի վարքագծի վրա զգալիորեն իր ազդեցությունն է բերում նաև ՀՀ կենտրոնական բանկը՝ ներքին արժույթով կամ դրամով արտարժույթը գնելու և վաճառելու միջոցով: Միաժամանակ ՀՀ կենտրոնական բանկը կարող է նաև տոկոսադրույքների փոփոխությունների միջոցով, կապված արտարժույթային միջոցների ներհոսքի և արտահոսքի հետ, ազդեցություն ունենալ փոխարժեքի վարքագծի վրա: Հատկապես համաշխարհային փորձը վկայում է, որ արտարժույթի փոխարժեքային կուրսի տատանումներն էլ իրենց հերթին էական ազդեցություն են ունենում տնտեսական աճի գործընթացի վրա՝ պայմանավորված մակրո և միկրո մակարդակներով:

Աղյուսակ 1

Ռուսական ռուբլու, ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքները՝ ըստ 2000-2014 թթ.²

	ՌԴ ռուբլով միջին փոխարժեքը, դրամ	Շեղումը (+,-) նախորդ տարվա նկատմամբ		ԱՄՆ դոլարով միջին փոխարժեքը, դրամ	Շեղումը (+,-) նախորդ տարվա նկատմամբ		Եվրոյի միջին փոխարժեքը, դրամ	Շեղումը (+,-) նախորդ տարվա նկատմամբ	
		բացարձ., դրամ	հարաբ. %		բացարձ., դրամ	հարաբ., %		բացարձ., դրամ	հարաբ., %
1	2	3	4	5	6	7	8	9	10
2000թ.	19,1	-1,8	-10,6	539,5	4,3	0,8	498,7	-73,2	-12,8
2001թ.	19,0	-0,1	-0,5	555,1	15,6	2,9	497,2	-1,5	-0,3
2002թ.	18,2	-0,8	-4,2	573,4	18,3	3,3	541,6	44,4	8,9
2003թ.	18,8	0,6	3,3	578,8	5,4	0,9	653,8	112,2	20,7
2004թ.	18,5	-0,3	-1,6	533,5	-45,3	-7,8	662,3	8,5	1,3
2005թ.	16,2	-2,3	-12,4	457,7	-75,8	-14,2	570,4	-19,9	-13,9
2006թ.	15,3	-0,9	-5,9	416,0	-41,7	-9,1	521,2	-49,2	-8,6
2007թ.	13,4	-1,9	-12,4	342,1	-73,9	-17,8	467,8	-53,4	-10,2
2008թ.	12,3	-1,1	-8,2	306,0	-36,1	-10,6	450,2	-17,6	-3,8
2009թ.	11,1	-1,2	-9,8	363,3	57,3	18,7	507,4	57,2	12,7
2010թ.	12,3	1,2	10,8	373,7	10,4	2,9	496,0	-11,4	-2,2
2011թ.	12,7	0,4	3,3	372,5	-1,2	-0,3	518,7	22,7	4,6
2012թ.	12,9	0,2	1,6	401,8	29,3	7,9	516,4	-2,3	0,4
2013թ.	12,9	0,0	0,0	409,6	7,8	1,9	544,1	27,7	5,4
2014թ.	11,0	-1,9	-14,7	415,9	6,3	1,5	552,1	8,0	1,5
Միջինը	14,9			442,6			533,2		

¹ Սարգսյան Տ., Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ, Եր., «Ֆեմոնեն», 2008, էջ 69:


² Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության էլ. կայք, www.armstat.am

Ուստի հիմք ընդունելով վերոնշյալների կարևորությունը, աղյուսակ 1-ում ներկայացնենք տարբեր տարիների կտրվածքով առանձին արտարժույթների (ՌԴ ռուբլի, ԱՄՆ դոլար և եվրո) փոխարժեքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը:

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են այն մասին, որ 15 տարվա (2000-2014թթ.) կտրվածքով արտարժույթի փոխարժեքները դրանով ունեցել են ոչ գծային տատանողական բնույթ: Այսպես, ՌԴ ռուբլու հետ կապված 15 տարվա միջինի նկատմամբ հաշվարկված բացարձակ շեղումն՝ առավելագույն փոխարժեքի համեմատ (2000թ.) աճել է 4.2 ռուբլով, իսկ ըստ նվազագույն փոխարժեքի (2014թ.) նվազել է 4.9 ռուբլով: Դրանց վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ունենալու համար ամփոփ ներկայացնենք գծապատկեր յուրաքանչյուրի գծով:

Գծապատկեր 1

Դրանով ռուսական ռուբլու, ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքները՝ ըստ 2000-2014թթ. և դրանց փոփոխությունը միջինի նկատմամբ



Միաժամանակ աղյուսակ 1-ի տվյալները, այնպես էլ դրանց համահունչ շրթայական եղանակներով հաշվարկված բացարձակ շեղումները (3-րդ, 6-րդ և 9-րդ սյունակներ) բնութագրում են (դրանով արտահայտված) արտարժույթի փոփոխությունները նախորդ տարվա համեմատ:

Ընդհանուր առմամբ ՀՀ արժեթղթերի շուկայում ավելի է կարևորվում ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի ձևավորումը, որի վրա իր ազդեցությունն են գործում ֆոնդային բորսայում՝ ՆԱՍԴԱԶ-ՕԷՄԵՔՍ-ԱՐՄԵՆԻԱ-ի արտարժույթային միջավայրում իրականացվող առք ու վաճառքի գործարքներից միջին փոխարժեքները և գործարքների քանակը՝ ըստ 2005-2014թթ. (տե՛ս աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են այն մասին, որ յուրաքանչյուր տարվա առումով կատարվող գործարքներն ավելի շատ տեղի են ունեցել 2008 թվականին՝ 8981 հատ, և արդյունքում իրացումից ձևավորվել է 1105,7 մլն դրամի չափով հասույթ: Միաժամանակ ուսումնասիրվող 10 տարիների ընթացքում տեղի է ունեցել միջին հաշվով 5194 գործարք՝ ապահովելով 708,2 մլն դրամի հասույթ: Հաշվի առնելով վերոնշյալի կարևորությունը՝ պետք է նշել նաև այն իրողությունը, որ բորսայում յուրաքանչյուր օրվա առումով իրականացվող գործարքներն իրենց էությանը կանխորոշում են հաջորդ օրվա փոխարժեքը՝ պայմանավորված գործարքի պահանջարկով ու առաջարկով: Պարզաբանման համար նշենք, որ եթե ֆոնդային շուկան փակվել է առաջարկով, ապա կնշանակի, որ այդ շուկան արդեն հագեցած է ԱՄՆ դոլարով և գալիք օրվա փոխարժեքը կձևավորվի այդ փոխարժեքից ավելի ցածր: Իսկ եթե բորսան փակվել է պահանջարկով, ապա դա կնշանակի, որ հաջորդ օրվա բոլոր այն մասնակիցները, որոնք կցանկանան բորսայում վաճառել ԱՄՆ դոլար, արդյունքում կվաճառվեն այդ փոխարժեքից ավելի բարձր գնով, քանի որ

նախորդ օրն այդ փոխարժեքով արդեն պահանջարկ էր ձևավորվել: Չպետք է անտեսել նաև այն, որ արտարժույթային գործընթացից բխող արդյունքները մեր կարծիքով արտարժույթի առք ու վաճառքից և դրա վերագնահատումից ստացված եկամուտներն են (տե՛ս աղյուսակ 3-ը):

Աղյուսակ 2

Արտարժույթի փոխարժեքային կուրսով իրականացված գործարքներն ըստ 2005-2014 թթ.¹

	Տարվա կտրվածքով, դրամ			Գործարքների քանակը, հատ	Իրացման հասույթը, հազ. դրամ
	նվազագույն փոխարժեքը	առավելագույն փոխարժեքը	միջին փոխարժեքը		
2005թ.	440,0	466,0	550,3	349	21.694,0
2006թ.	460,0	362,5	390,1	3399	384.005,0
2007թ.	300,0	369,5	332,1	6219	763.688,0
2008թ.	300,3	310,7	306,1	8981	1.105.672,0
2009թ.	305,0	388,8	345,6	6235	1.079.004,0
2010թ.	357,5	405,0	373,7	6464	754.433,0
2011թ.	361,8	387,5	372,9	5680	760.443,0
2012թ.	386,8	419,5	402,7	5232	753.710,0
2013թ.	404,0	419,8	409,4	4681	714.474,0
2014թ.	405,7	500,0	413,6	4696	744.488,0
Միջինը	331,6	408,9	379,7	5194	708.161,0

Աղյուսակ 3

ՀՀ առևտրային բանկերի կողմից արտարժույթի առք ու վաճառքից եկամուտները (վնասները) առ 01.01.2015թ. դրությամբ²

(մլն դրամ)

h/h		Արտարժույթի առք ու վաճառքից եկամուտ (վնաս)	Արտարժույթի վերագնահատումից եկամուտ (վնաս)	Ընդամենը արտարժույթից զուտ եկամուտ (վնաս)
Ա	1	2	3	4 (սյ.2+սյ.3)
1.	«Ամերիաբանկ» ՓԲԸ	2.344,808	5.251,722	7.596,530
2.	«Արդշինբանկ» ՓԲԸ	2.194,955	348,402	2.543,357
3.	«Ակբա-Կրեդիտ-Ազրիկոլ բանկ» ՓԲԸ	1.335,559	549,829	1.885,428
4.	«Արարատբանկ» ՓԲԸ	919,652	(0,921)	918,731
5.	«Անելիքբանկ» ՓԲԸ	434,574	(79,378)	355,196
6.	«Առեքսիմբանկ» ՓԲԸ	774,501	(536,047)	238,454
7.	«Արմսվիսբանկ» ՓԲԸ	(37,945)	240,886	202,941
8.	«Արցախբանկ» ՓԲԸ	224,917	(260,875)	(35,958)
9.	«Բիբլոս բանկ Հայաստան» ՓԲԸ	(64,532)	549,700	485,168
10.	«ԲՏԱ Բանկ» ՓԲԸ	109,980	(124,259)	(14,279)
11.	«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ	135,804	40,174	175,978
12.	«Ինտերբանկ» ՓԲԸ	910,086	(19,219)	890,867
13.	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	958,728	(211,607)	747,121
14.	«Կոնվերսբանկ» ՓԲԸ	1.128,306	846,425	1.974,731
15.	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	889,210	(660,302)	228,908
16.	«Սելլաթբանկ» ՓԲԸ	39,221	(26,669)	12,552
17.	«ՎՏԲ Բանկ Հայաստան» ՓԲԸ	3.001,749	(1,078,182)	1.923,567
18.	«Յունիբանկ» ՓԲԸ	1.152,637	(23,171)	1.129,466
19.	«Պրոմեթեյբանկ» ՍՊԸ	468,954	166,381	635,335
20.	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ	1.772,880	(1.132,682)	640,198
21.	«Պրոմեթեյբանկ» ՓԲԸ	137,111	227,228	364,339
Ընդամենը		18.831,435	4.067,435	22.898,630

¹ ՀՀ ֆոնդային բորսայի «Նասդաք ՕԷՄԷՍ Արմենիա» ԲԲԸ-ի պաշտոնական կայք www.nasdaqomx.am

² ՀՀ առևտրային բանկերի պաշտոնական կայքերում 2014թ. վերջի դրությամբ հրապարակված տարեկան հաշվետվությունների տվյալները:

Աղյուսակ 3-ի տվյալները վկայում են, որ ՀՀ առևտրային բանկերի կողմից իրականացված արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է ընդամենը 22,9 մլրդ դրամ, որում ամենամեծ բաժինն ընկնում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին՝ 7,6 մլրդ դրամ, «Արդշինբանկ» ՓԲԸ-ին՝ 2,5 մլրդ դրամ, «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ին՝ 1,97 մլրդ դրամ, «ՎՏԲ բանկ Հայաստան» ՓԲԸ-ին՝ 1,92 մլրդ դրամ և «Ակբա-Կրեդիտ-Ազրիկոլ բանկ» ՓԲԸ՝ 1,89 մլրդ դրամ: Արդյունքում վերը նշված բանկերի մասնաբաժինը 21 առևտրային բանկերում կազմում է 69,4%, որը բավականաչափ բարձր ցուցանիշ է, ի տարբերություն մնացած 16 բանկերի: Այդ ցուցանիշներով հիմնականում իրենց վատ են դրսևորել «ԲՏԱ բանկ» և «Արցախբանկ» ՓԲԸ-երը:

Միաժամանակ, ըստ աղյուսակ 3-ի, կարևորվում են 4,067 մլրդ դրամի չափով արտարժույթի վերագնահատումից ստացված եկամուտները փոխադարձ արտարժույթային դիրքի կառավարման ժամանակ, իսկ երբ փոխարժեքն ունենում է բարձրացման միտում, ապա ՀՀ առևտրային բանկերն, ըստ էության, ձգտում են ունենալ բաց երկար դիրք՝ եկամտաբեր արտարժույթի վերագնահատումից:

Ըստ վերոնշյալի՝ ամփոփելով կարող ենք զալ այն հետևության, որ յուրաքանչյուր բանկ կարող է խուսափել ռիսկերից՝ ունենալով արտարժույթի փակ դիրք: Սակայն տվյալ բանկն այս պարագայում կսահմանափակի իր համար ակնկալվող եկամուտները, քանի որ ռիսկն ու ստացվող եկամուտներն իրար նկատմամբ հակադարձ ցուցանիշներ են: Այստեղից էլ բխում է հետևյալ իրողությունը, որ բանկը, ապահովելով ակտիվների և պասիվների հավասարակշռություն, արդյունքում կենթարկվի փոխարժեքի տատանման ռիսկին, հատկապես ՀՀ դրամի դեպքում, քանի որ այն չունի կայուն փոխարժեք արտարժույթի նկատմամբ:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈՒՍԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՒՐՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՐՇԱԿ ԲԱՅԱԴՅԱՆ, *կայցորդ*
Մ Գ Ա Ա Մ. Կոտանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Համառոտագիր

Անցումային տնտեսություն վարող յուրաքանչյուր երկրում, այդ թվում՝ նաև Հայաստանում, տնտեսական գործընթացներում իրենց ուրույն տեղն ունեն փոխարժեքային կուրսով իրականացվող արտահանման ու ներմուծման հետ կապված գործառնությունները: Հեղինակի կողմից վերջին 15 տարիների կտրվածքով ներկայացվել և վերլուծվել են ռուսական ռուբլու, ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքներն ու դրանց փոփոխությունները, դրանցով պայմանավորված և իրականացված գործարքների, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտները: Այնուհետև վերոնշյալների հիման վրա ներկայացվել են համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ:

Բանալի բառեր. *արտարժույթ, փոխարժեքային կուրս, իրականացված գործարքներ, առք ու վաճառքից եկամուտներ, արտարժույթի վերագնահատումից եկամուտ, առևտրային բանկեր:*

ОСОБЕННОСТИ ПРОЦЕССОВ, ОБУСЛОВЛЕННЫХ ОБМЕННЫМ КУРСОМ ВАЛЮТЫ В РА

АРШАК БАЯДЯН, *соискатель*
Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

Любая страна с переходной экономикой, в том числе и Армения, имеет свое особое место в экономических процессах, относящихся к валютным операциям, связанным с экспортом и импортом. Автором в разрезе последних 15 лет представлены и проанализированы валютные курсы рубля, долларов США, и евро и их изменения, доходы от операций, обусловленных и осуществленных при их использовании, а также доходы, полученные от купли и продажи валюты коммерческими банками РА. Далее, на основе вышеуказанного анализа, автором представлены соответствующие выводы и предложения.

Ключевые слова: *инвалюта, обменный курс, реализованные сделки, доходы от купли и продажи, доход от переоценки валюты, коммерческие банки.*

THE FEATURES OF PROCESSES ASSOCIATED WITH THE EXCHANGE RATE IN THE REPUBLIC OF ARMENIA

ARSHAK BAYADYAN, *Ph.D. student*
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

In any transition economy such as Armenia is the transactions made in foreign exchange (at a specific rate) such as export and import play a crucial role economic processes. Therefore, the author presents and analyzes the dynamics of exchange rates of the Russian rubble, US dollar, and Euro over the last 15 years; revenues received from transactions associated with and made in these currencies; and income of the commercial banks of the Republic of Armenia from purchase and sale of these currencies. Then, based on the results of the analysis the author makes respective conclusions and proposes specific recommendations.

Keywords: *Foreign currency, foreign exchange rate, transactions made, revenue from purchase and sale, income from foreign exchange revaluation commercial bank*

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԾԱՆՅՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Ուսումնասիրությունները վկայում են, որ ածանցյալ գործիքներով շուկան ծագել է դեռևս վաղ ժամանակաշրջաններում, և այն տարբեր երկրներում ունի իր առանձնահատկությունները: Այսպես, ԱՄՆ-ում ածանցյալ գործիքներով առևտրի սկիզբը դրվել է 19-րդ դարի կեսերից՝ 1848թ.-ից սկսած, Չիկագոյում ապրանքային բորսայի՝ «Չիկագոյի առևտրային պալատի» (Chicago Board of Trade), ներկայիս «ՍիԲիՕԻ հոլդինգի» (CBOE Holding) հիմնադրմամբ՝ գյուղատնտեսական հումքի և կիսաֆաբրիկատների շուկայական գների սեզոնային տատանումների հետ կապված անորոշությունը նվազեցնելու նպատակով: Քիչ ավելի ուշ վաճառականների միջև ծագող վեճերը, ֆորվարդային պայմանագրով պայմանավորված կողմերի պարտավորությունների չկատարման ռիսկը նվազեցնելու նպատակով, ԱՄՆ-ի առաջին ապրանքային բորսայում՝ «Չիկագոյի առևտրային պալատում», սկսած 1865թ.-ից, սկսեցին կնքվել ֆյուչերսային պայմանագրեր¹: Ի տարբերություն ֆորվարդների՝ ֆյուչերսային պայմանագրով առաջացող պարտավորությունների կատարումը մինչ օրս էլ երաշխավորվում է բորսաների կողմից՝ դեպոզիտային կամ մարժային մուծումների իրականացման ճանապարհով:

Օպցիոնային շուկաներն ածանցյալ գործիքներից համարվում են ամենաերիտասարդը և մյուսների համեմատ ունեն ավելի կարճ պատմություն: Ժամանակակից ապրանքային օպցիոններին էությանը շատ մոտ պայմանագրեր սկսել են շրջանառվել Յուլանդիայում դեռևս 1630-ական թվականներին (կակաչամոլության ժամանակաշրջան), սակայն բորսայական օպցիոններով առևտրի հիմքերը դրվել են 1973թ. «Չիկագոյի օպցիոնային բորսայի» (Chicago Board Options Exchange-CBOE) հիմնադրմամբ²: 19-րդ դարի վերջերից և 20-րդ դարի սկզբներից ֆինանսական ֆյուչերսների և օպցիոնների առևտուրը մինչ օրս նկատելիորեն աճել է:

Ներկայումս ԱՄՆ-ի ածանցյալ գործիքների խոշորագույն բորսայական միավորումներից մեկը «ՍիԲիՕԻ հոլդինգն» (CBOE Holding) է, որը ձևավորվել է ԱՄՆ-ի Դելավեր նահանգում 2006թ: Վերջինիս կազմի մեջ են մտնում «Չիկագոյի օպցիոնային բորսան» (Chicago Board Options Exchange-CBOE), 2004թ. հիմնադրված «Չիկագոյի ֆյուչերսային բորսան» (CBOE Futures Exchange-CFE) և 2010թ. հոկտեմբերի 29-ին «CBOE Holding»-ի կողմից առաջարկված օպցիոնների լիովին նոր էլեկտրոնային բորսան՝ «Սի 2»-ը (C2): «ՍիԲիՕԻ հոլդինգին» (CBOE Holding) բաժին է ընկնում ԱՄՆ-ի օպցիոնային առևտրի ավելի քան մեկ քառորդը: Այստեղ 2003թ.-ից գործում է առևտրի կազմակերպման հիբրիդային համակարգը: Այսինքն՝ առևտուրը տեղի է ունենում ինչպես «ձայնային աճուրդների», այնպես էլ էլեկտրոնային հարթակների միջոցով, որը թույլ է տալիս առևտուր իրականացնել դեպի համացանց մուտք ապահովող համապատասխան սարքավորումներով կահավորված ցանկացած վայրից՝ նպատակ ունենալով ներգրավել մասնավոր ներդրողների լայն շրջանակներ:

«Չիկագոյի օպցիոնային բորսայում» (CBOE), «Չիկագոյի ֆյուչերսային բորսայում (CFE)» և «Սի 2»-ում (C2) շրջանառվում են հետևյալ գործիքները.

- ավելի քան 2600 կորպորատիվ ընկերությունների բաժնետոմսերի հիման վրա կնքված օպցիոններ (Equity options),
- տարբեր ինդեքսների հիման վրա կնքված օպցիոններ և ֆյուչերսներ (Index options, Index futures)՝ S&P 500, NASDAQ 100, S&P 100, DJIA, VIX և RUSSELL 200³:

Մեծ Բրիտանիա: Լոնդոնը՝ որպես ֆինանսական խոշորագույն կենտրոն, մեծ դերակատարություն ունի նաև ածանցյալ գործիքների՝ ֆյուչերսների և օպցիոնների Համաշխարհային շու-

¹ Лорен Жак “Опасные игры с деривативами”, Полувековая история провалов от Citibank до Barings, Societe Generale и AIG, Альпина Паблицер-Москва 2012г., стр. 19.

² <http://ru.wikipedia.org/wiki/%D0%9E%D0%BF%D1%86%D0%B8%D0%BE%D0%BD>

³ <http://www.cboe.com/AboutCBOE/AnnualReport2010/>

կայում: Ֆինանսական ածանցյալներով առևտուրը հիմնականում տեղի է ունենում երկու բորսաներում՝ «Ֆինանսական ֆյուչերսների և օպցիոնների Լոնդոնի միջազգային բորսայում - ԼՄՖՖ» (London International Financial Futures and Options Exchange-LIFFE), որը 2002թ.-ից կոչվում է «Յուրոնեքստ ԼՄՖՖ» (Euronext LIFFE) և «Ի դի էքս Լոնդոն» (EDX London): Լոնդոնում են գտնվում նաև երկու կարևորագույն ապրանքային բորսաներ՝ «Լոնդոնի մետաղային բորսան - ԼՄԲ» (London Metal Exchange-LME) և «Միջազգային նավթային բորսան-ՄՆԲ» (International Petroleum Exchange-IPE): Վերջինս Եվրոպայի խոշորագույն էներգետիկ ֆյուչերսաօպցիոնային բորսան է: «ԼՄՖՖ»-ն (LIFFE), որը հիմնադրվել է 1982թ., առաջին ոչ ամերիկյան բորսան է, որտեղ առևտուր է իրականացվում ֆինանսական ֆյուչերսներով: 1992թ., միավորվելով «Լոնդոնի ֆոնդային բորսայի» օպցիոնների շուկայի հետ, այն դարձավ խոշորագույն մասնագիտացված ածանցյալների բորսան: Իսկ 1996թ. Լոնդոնի ապրանքային բորսայի հետ միաձուլումից հետո այնտեղ սկսեցին առևտուր իրականացնել նաև սուրճի, կակաոյի և շաքարավազի հիման վրա կնքվող ածանցյալներով:

1999թ. բորսայի անդամները որոշում ընդունեցին «ԼՄՖՖ»-ն (LIFFE) վերակազմավորելու բաժնետիրական ընկերության: 2001թ. «ԼՄՖՖ»-ն (LIFFE) գնվեց «Յուրոնեքստ»-ի (Euronext) (փարիզյան, ամստերդամյան և բրյուսելյան ֆոնդային բորսաների միավորում) կողմից: Այս բորսայում առևտուր է իրականացվում ֆինանսական գործիքների, ապրանքների, ինչպես նաև էկզոտիկ բազիսային ակտիվների վրա կնքվող ածանցյալներով: Մեծ տարածում ունեն կարճաժամկետ տոկոսային ֆյուչերսները և օպցիոնները, պարտատոմսերի վրա կնքվող ֆյուչերսներն ու օպցիոնները: «ԼՄՖՖ»-ում (LIFFE) օպցիոններ և ֆյուչերսներ են կնքվում նաև բաժնետոմսերի և ֆոնդային ինդեքսների հիման վրա: Նման բաժնետոմսեր են անգլիական, ամերիկյան և եվրոպական խոշորագույն ընկերությունների բաժնետոմսերը: Որպես ինդեքսներ ծառայում են FTSE-100, FTSE-250, Eurotop 300, MSCI Euro Index, CAC 40, AEX, BEL 20, PSI 20 ինդեքսները: Ապրանքային ֆյուչերսները հիմնականում կնքվում են «ռոբուստա» սուրճի, շաքարավազի, ցորենի, կարտոֆիլի, եգիպտացորենի և այլ գյուղատնտեսական ապրանքների հիման վրա: «ԼՄՖՖ»-ի (LIFFE) անդամները բաժանվում են երեք խմբի՝ դիլերներ, բրոքերներ և մարքեթմեյքերներ:

Ճապոնիա: Ճապոնիայում ածանցյալներով առաջին գործարքներ՝ ֆյուչերսների նախատիպեր, կնքվել են դեռևս 17-րդ դարում: Համաձայն մեզ հասած տեղեկությունների՝ առաջին ֆյուչերսների բազիսային ակտիվ է հանդիսացել բրինձը¹: Անդրադառնալով ժամանակակից ածանցյալների առևտրին՝ փորձենք ներկայացնել ածանցյալների բորսայական առևտրի զերակշիռ մասն ապահովող «Օսակայի ֆոնդային բորսայի» (Osaka Stock Exchange-OSE) համառոտ նկարագիրը: «Օսակայի ֆոնդային բորսան» հիմնադրվել է 1878թ., իսկ 1943թ. հունիսին դարձել «Ճապոնիայի ֆոնդային բորսայի» ստորաբաժանումը: Այնուհետև «Ճապոնիայի ֆոնդային բորսան» Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով 1945թ. դադարեցնում է իր գործունեությունը, իսկ 1947թ. ամբողջովին լուծարվում:

«Օսակայի ֆոնդային բորսայի» վերաստեղծման հիմքը 1948թ. «Արժեթղթերի և արժեթղթերի շուկայի մասին» նոր օրենքի մշակումն ու ընդունումն է: Արդյունքում 1949թ. վերաստեղծվում է «Օսակայի ֆոնդային բորսան-ՕՖԲ» (Osaka Securities Exchange-OSE): «ՕՖԲ»-ում (OSE) ածանցյալ գործիքներով առևտուրը մեկնարկել է 1898թ.-ից: Վերջինս, հանդիսանալով Ճապոնիայի երկրորդ խոշորագույն առևտրային բորսան², իրականացրել և իրականացնում է իր առջև դրված առաքելությունը (աջակցել արժեթղթերի առևտրի կազմակերպմանն անհրաժեշտ առևտրային հրապարակների ստեղծմանը)՝ միևնույն ժամանակ նպաստելով.

1. արժեթղթերի իրացվելիության բարձրացմանը,
2. շուկայում առաջարկի և պահանջարկի ծավալների մեծացմանը,
3. սակարկվող ակտիվների արդարացի գների ձևավորմանը,
4. ներդրողների կողմից ռիսկերի արդյունավետ կառավարմանը:

¹ "The Origins of Derivative Instruments" գեկույց, էջ 3:
(<http://highered.mcgraw-hill.com/sites/dl/free/0073523097/238719/TheOriginsOfDerivatives.pdf>)
² <http://www.ose.or.jp/e/profile/5467>

«ՕՖԲ»-ում (OSE) ներկայումս շրջանառվում են ինդեքսների, տարբեր արժեթղթերի, ինչպես նաև արտարժույթի հիման վրա կնքված ֆյուչերսներ և օպցիոններ:

Իր մեծությամբ բորսայական համակարգում ածանցյալների առևտրի գծով չի զիջում նաև «Տոկիոյի ֆոնդային բորսան - ՏՖԲ» (Tokyo Security Exchange-TSE), որն ստեղծվել է 1878թ. և ակտիվորեն գործում է մինչև այժմ: Պետք է նշել, որ վերջինս 1997թ. ներդրել է ֆյուչերսների և օպցիոնների առևտրի կազմակերպման նոր համակարգ, ինչի շնորհիվ էլ առևտրի կազմակերպման տեսանկյունից համապատասխանում է այսպես ասած միջազգային ստանդարտներին: «Տոկիոյի ֆոնդային բորսան - ՏՖԲ»-ում (Tokyo Security Exchange-TSE) ներկայումս շրջանառվում են ճապոնական փոխարկելի պարտատոմսերի, բորսայական ֆոնդերի, ինդեքսների հիման վրա կնքված ֆյուչերսներ և օպցիոններ¹:

Յնդկաստան: Յնդկաստանի ֆինանսական համակարգում ածանցյալ գործիքների շուկաները գոյություն ունեն բավականին երկար ժամանակ: Ապրանքային ածանցյալների ոլորտում «Բոմբեյի բամբակի առևտրային ասոցիացիա» (The Bombay Cotton Trade Association) ընկերությունը սկսել է ֆյուչերսներով առևտուրը 1875թ.-ից: Ինչի արդյունքում Յնդկաստանը մինչև 1900-ական թվականների սկիզբը դարձավ աշխարհի խոշորագույն ապրանքային ֆյուչերսների շուկաներ ունեցող պետություններից մեկը: 1952թ. Յնդկաստանի կառավարությունը դադարեց իրականացնել այդ շուկաների կարգավորումը, ինչի արդյունքում օպցիոնների և մնացած այլ ածանցյալների առևտուրն արգելվեց: Վերջին տարիներին՝ 2000թ. կառավարության քաղաքականության փոփոխության արդյունքում, ապրանքային ֆյուչերսների առևտրի նկատմամբ արգելքը հանվեց, ինչը նպաստեց ազգային էլեկտրոնային ապրանքային բորսաների ստեղծմանը²:

Յնդկաստանում առևտրի կազմակերպման նախկին համակարգը, որն անվանվում էր «badla», արդեն գործում է մի քանի տասնամյակ: Վերջինս իր թերությունների պատճառով 2001թ. չընդունվեց «Յնդկաստանի ֆոնդային բորսայի - ՅՖԲ»-ի (Securities and Exchange Board of India-SEBI) կողմից: 1993-1996 թվականների ընթացքում ֆինանսատնտեսական համակարգում կատարված բարեփոխումները նպաստեցին Յնդկաստանում ածանցյալ գործիքների բորսայական շուկաների զարգացմանը: 1993թ. Յնդկաստանի կառավարությունը կառավարությանն առընթեր պետական ֆինանսական ինստիտուտների հետ համատեղ ստեղծեց «Յնդկաստանի ազգային արժեթղթերի ֆոնդային բորսան - ՅԱԱՖ» (National Stock Exchange of India-NSE): «ՅԱԱՖ»-ն (NSE) նպաստեց բորսայական հատվածում կնքվող գործարքների ծավալների ընդլայնմանը՝ առևտուրն էլեկտրոնային հարթակի միջոցով կազմակերպելով: 1995թ. օպցիոններով առևտրի նկատմամբ արգելքը հանվեց: 1996թ. «ՅԱԱՖ»-ն (NSE) առաջարկ ուղարկեց «ՅՖԲ»-ին (SEBI) իր էլեկտրոնային առևտրային հարթակում բորսայական ածանցյալների լիստինգ անցկացնելու վերաբերյալ: 1999թ. «Արժեթղթերի կարգավորման մասին» (The Securities Regulation) օրենքում (ընդունված 1956թ.) կատարվեցին փոփոխություններ, ինչի արդյունքում ածանցյալ գործիքները ճանաչվեցին արժեթղթեր, ինչպես նաև ածանցյալներով գործարքները՝ օրինական, եթե վերջիններս կնքվում էին միմիայն բորսաներում: Վերջնականապես ֆորվարդներով առևտրի նկատմամբ 30 տարվա արգելքը 1999թ. ևս հանվեց³:

Բորսայական առևտուրն ամենից առաջ ընդգրկեց բաժնետոմսերի հիման վրա կնքվող ածանցյալները: Այնուհետև 2000 թվականի հուլիսից շրջանառության մեջ դրվեցին ինդեքսային ֆյուչերսները, 2001 թվականից՝ ինդեքսային օպցիոնները, իսկ 2001 թվականի հուլիսից մինչև նոյեմբեր՝ տարբեր տեսակի արժեթղթերի հիման վրա կնքված ֆյուչերսները և օպցիոնները:

2005թ. տվյալներով «ՅԱԱՖ»-ում (NSE) կնքվում էին ֆյուչերսներ և օպցիոններ 118 բաժնետոմսերի և ինդեքսների հիման վրա: 2003 թվականից սկսած՝ «ՅԱԱՖ»-ում (NSE) շրջանառության մեջ դրվեցին տոկոսային ֆյուչերսներ, որոնց թվաքանակը, ի տարբերություն բաժնետոմսերի հիման վրա կնքված ածանցյալների, բավականին քիչ էին:

¹ www.tse.or.jp

² Աշուտոշ Վաշիշտա (Ashutosh Vashishtha), Սատիշ Կումար (Satish Kumar), "Development of Financial Derivatives Market in India" գեկույց, International Research Journal of Finance and Economics, EuroJournals Publishing, Inc. 2010, (<http://www.eurojournals.com/finance.htm>)

³ Ասանի Սարկար (Asani Sarkar) "Indian Derivatives Markets" գեկույց, The Oxford Companion to Economics in India, edited by Kaushik Basu, to be published in 2006 by Oxford University Press, New Delhi (http://www.newyorkfed.org/research/economists/sarkar/derivatives_in_india.pdf)

Չնդկաստանում արժույթային ածանցյալներով գործարքները, համեմատած ինդեքսային ածանցյալների հետ, ավելի քիչ ծավալներ արձանագրեցին, չնայած վերջիններս ավելի շուտ էին դրվել շրջանառության մեջ (արտաբորսայական արտարժույթային ֆորվարդները և սվոպները համեմատական կարգով ավելի մեծ հեղինակություն էին վայելում):

Բորսայական ապրանքային ածանցյալները սկսեցին շրջանառվել սկսած միայն 2000թ.-ից, և դրանց թիվն աճեց 8-ից մինչև 80՝ ըստ 2004թ. տվյալների¹:

Մինչև եզրակացությանն անդրադառնալը, հարկավոր է նշել, որ ուսումնասիրության ենթակա ընտրված երկրների որոշակիությունը պայմանավորված է ածանցյալների Չամաշխարհային շուկայում՝ ըստ տարածաշրջանային բաժանման՝ կնքվող ածանցյալների գերակշիռ ծավալներ ունենալու պայմանով:

Այսպիսով, ամփոփելով համեմատական կարգով տնտեսապես զարգացած երկրներից մի քանիսի ածանցյալ գործիքների շուկայի ուսումնասիրությունները, գալիս ենք այն եզրակացության, որ նշված երկրների ածանցյալ շուկաներից յուրաքանչյուրն անցել է իր պատմական զարգացման երկարատև ուղին, ինչին մեծապես նպաստել են.

- յուրաքանչյուր երկրի կառավարության կողմից տվյալ շուկայի գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրական դաշտի սահմանումը,
- կնքվող գործարքներով ի հայտ եկող պարտավորությունների կատարման երաշխիքն ապահովող համակարգի մշակումը և կիրառումը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց՝ վերջիններիս ներդրման և էլեկտրոնային առևտրային հարթակների միջոցով առևտրի լիովին նոր մոդելի կազմակերպումը,
- բորսաների, ինչպես նաև էլեկտրոնային առևտրային հարթակների ունիվերսալացումը,
- բորսաների փոխադարձ համագործակցությամբ ռազմավարական դաշինքների ձևավորումը:

¹ SEBI Advisory Committee on Derivatives, "Development and Regulation of Derivative Markets in India" գեկույց, September 2002 (<http://www.sebi.gov.in/commreport/derivates.pdf>).

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՃԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ԷՄԻԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ, *հայցորդ*
ՆՆԳԱԱՄ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Համառոտագիր

Աշխատանքն ամբողջապես նվիրված է ժամանակակից ածանցյալ գործիքների շուկաների ամփոփ հետազոտությանը: Ներկայացվում է առանձին երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ճապոնիա և Հնդկաստան) ածանցյալ գործիքների ինչպես ներդրման, այնպես էլ վերջիններիս առևտրի կազմակերպման համար պատասխանատու կազմակերպված շուկաներում կարևոր իրադարձությունների ժամանակագրային համառոտ պատկերը: Հոդվածի նպատակն է տնտեսապես զարգացած երկրների ածանցյալ գործիքների շուկաներն ուսումնասիրելով, վերջիններիս ներկա արդյունքներն ապահովող տնտեսության ֆինանսական հատվածում կատարված բարեփոխումների բացահայտումը:

Բանալի բառեր. *ֆորվարդներ, ֆյուչերսներ, օպցիոններ, հիմնադրամներ, ածանցյալ գործիքներ, բորսաներ, բորսայական շուկաներ, արդարբորսայական շուկաներ, բարեփոխումներ:*

РЫНОК СОВРЕМЕННЫХ ПРОИЗВОДНЫХ ИНСТРУМЕНТОВ НА ПРИМЕРЕ РАЗНЫХ СТРАН

ЭМИЛЬ ГЕВОРГЯН, *соискатель*
Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Статья посвящена обобщенному исследованию рынка современных производных инструментов. В ней описана краткая картина как внедрения производных инструментов в отдельных странах (США, Великобритания, Япония, Индия), так и хронология важных событий на рынках этих стран, для организации торговли ответственными организаторами. Цель работы – на основе изучения рынка производных инструментов развитых стран выявить те проведенные в финансовой сфере реформы, которые способствовали достижению успехов в этих странах.

Ключевые слова: *форварды, фьючерсы, опционные, фонды, производные инструменты, биржа, внебиржевые рынки, реформы.*

MODERN DERIVATIVES MARKET ON THE EXAMPLE OF VARIOUS NATIONS

EMIL GEVORGYAN, *Ph.D. student*
M. Kotanyan Institute of Economics,
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article presents a brief study of modern derivatives markets. The author presents how the market for derivative products emerged in several nations (the United States, United Kingdom, Japan, and India), and briefly describes how the derivatives trade evolved over time. By studying the evolution and development of derivatives markets in advanced nations, the author attempts to identify the reforms in the financial sector required to ensure such progress.

Keywords: *forwards, futures, options, SBI Holdings, stock exchange derivatives market, off-exchange derivatives market, Osaka Securities Exchange, annual turnover of exchange-traded derivatives, average daily turnover of exchange-traded derivatives, the world's largest derivatives exchanges.*

ԱԾԱՆՅՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՎՈԼՅՈՒՅԻՆ

Ածանցյալ գործիքները, հանդիսանալով ժամանակակից համաշխարհային ֆինանսական համակարգի առանցքային ինովացիոն նվաճումներից մեկը, ունեն բավականին հարուստ պատմական անցյալ: Չնայած համաշխարհային ֆինանսական շուկաներում ածանցյալ գործիքների առաջին կիրառությունը վերագրվում է 19-րդ դարին (ինչը և վերջիններիս դարձնում է առկա ֆինանսական համակարգի ամենաերիտասարդ ֆինանսական գործիքներից մեկը), այնուհանդերձ մարդկությանը հայտնի պատմության բոլոր ժամանակաշրջաններն ընդգրկող հիշատակումները փաստում են ածանցյալ գործիքների, իսկ ավելի հստակ՝ վերջիններիս նախատիպերի՝ անգամ մեր թվարկությունից առաջ ունեցած կիրառության մասին: Այս աշխատանքի նպատակն է ներկայիս «ածանցյալ գործիքներ» տնտեսական կատեգորիայի էությանը մոտ, նախկինում շրջանառվող գործիքների տնտեսական բովանդակության և վերջիններիս պատմական էվոլյուցիոն ուղու համառոտ, բայց միևնույն ժամանակ համազանալից ներկայացումը: Պետք է նշել այն իրողությունը, որ ածանցյալ գործիքների պատմությունն ունեցել է աստիճանական զարգացում: Այսպես օրինակ, այդ երկրներից Հին Հունաստանում ածանցյալ գործիքների նախատիպերով գործարքների մասին առաջին հիշատակումներից արձանագրված է Արիստոտելի «Քաղաքականություն» աշխատության մեջ¹: Համաձայն տվյալ աշխատության՝ Հին Հունաստանում փիլիսոփաներից մեկը՝ Թեյլ անունով (մ.թ.ա. 625-550 թթ.), որը հայտնի էր նաև որպես աստղագետ և մաթեմատիկոս, աստղերի միջոցով կանխատեսում է մոտ ապագայում սպասվելիք ձիթապտղի առատ բերքի մասին: Չունենալով ինչպես համապատասխան սարքավորում ձիթապտղից ձիթայուղ ստանալու, այնպես էլ բավականաչափ դրամական միջոցներ՝ վերջինս գնելու համար աստղագետը պայմանագիր է կնքում տվյալ սարքավորման սեփականատերերի հետ: Համաձայն որի՝ Թեյլը որոշակի գումարի դիմաց ձեռք է բերում պայմանագրով սահմանված ժամկետներում ձիթապտղից ձիթայուղը զատող սարքավորումը տնօրինելու իրավունք²: Սա Թեյլի համար ապահովում է մեծ եկամուտ, իսկ նրա կողմից մտածված այսպես ասած ժամանակավոր տնօրինման իրավունք ապահովող գործիքը ներկայումս ժամանակակիցների կողմից բնորոշվում է, որպես քոլ օպցիոնի նախատիպ:

Իր հերթին Հռոմեական կայսրությունում, որքան էլ զարմանալի հնչի, ժամանակակից ածանցյալ գործիքներով առևտրի ինչպես կազմակերպման, այնպես էլ շարունակական զարգացման իրավական կարգավորման առաջին հիմքերը դրվել են Հռոմեական կայսրությունում:

Մ.թ.ա. 30-ական թվականներից Հռոմում տարեցտարի աճող բնակչության պահանջները բավարարելու նպատակով ապրանքների առաջարկի երկարաժամկետ հատվածում համապատասխան ծավալների ապահովման պայմանով Հռոմեական կայսրությունում իրավաբանական կրթություն ունեցող ռազմական և քաղաքական առաջնորդի՝ Սեքստուս Պոմպեյուսի կողմից մշակված և Հռոմի Սենատում հաստատված օրենսդրական նախագիծը սահմանեց առևտրականների որոշակի խմբին ածանցյալ գործիքներով, իսկ ավելի ճիշտ, ինչպես նշված էր օրենսդրական ակտի մեջ, «ապագայում առաքման պայմանագրերով» գործարքներ կնքելու հնարավորության մասին:

Համաձայն վերը նատմանշված օրենսդրական ակտի՝ տարբերում էին ժամկետային պայմանագրերի երկու տեսակ, որոնց իրավական տարբերությունն այն էր, որ եթե առաջինն անվավեր էր ճանաչվում պայմանագրում կողմերի միջև համաձայնեցրած ժամկետը լրանալուն պես վաճառող կողմի մոտ առաքման առարկայի օբյեկտիվ պայմաններով (տվյալ ապրանքները

¹ http://www.bull-n-bear.ru/history/history.php?history=derevat_1
² http://forexaw.com/TERMs/Seo/l411_%D0%9E%D0%BF%D1%86%D0%B8%D0%BE%D0%BD_%D0%9E%D1%8D%D1%82%D0%BE

տեղափոխող նավի նավաբեկության կամ ծովահենային հարձակման հետևանքով) այսպես ասած կորստի կամ բացակայության պատճառով գործարքի չկատարման դեպքում, ապա ժամկետային պայմանագրերի երկրորդ տեսակն անվավեր չէր ճանաչվում. այլ կերպ ասած՝ համաձայնագրերով ամրագրված պարտավորությունների չիրականացումը ենթակա էր փոխհատուցման օրենքով սահմանված կարգով: Այստեղ պետք է նշել մի շատ կարևոր հանգամանք. վերջիններս ամրագրված պարտավորությունների կատարումը երաշխավորված էր հռոմեական օրենսդրությամբ, նույնիսկ այդ պայմանագրերը սպեկուլյատիվ նպատակներով օգտագործելու դեպքում¹:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ վերը նկարագրված երկու գործիքներն էլ ոչ այլ ինչ են, եթե ոչ ժամանակակից ֆորվարդների նախատիպեր: Միայն այն տարբերությամբ, որ առաջին տեսակի ժամկետային պայմանագրերի չիրականացումը (վերը նշված օբյեկտիվ պատճառների դեպքում) չէր պարունակում իրավական հետևանքներ, մինչդեռ երկրորդը պարունակում էր:

Քանի որ կայսրության օրենսդրությունը թույլատրում էր ժամանակակից ածանցյալների նախատիպերով գործարքներ կնքել միայն մի խումբ առևտրականների, ուստի ավելորդ է խոսել դրանց՝ երկրորդային շուկայում վաճառվելու կամ այլ կերպ վերջիններիս շրջանառելիության մասին: Հռոմեական կայսրությունում առևտրային հարաբերությունների մասսայականացմանը նպաստող մյուս կարևորագույն նորարարությունը, որը, սակայն, կյանքի կոչվեց կայսրության գոյատևման միայն վերջին տարիներին՝ ապագայում առաքման պայմանագրերով ամրագրված իրավունքների և պարտավորությունների փոխանցելիության (հենց այդ նպատակով մշակված իրավական նորմերին համապատասխան) կազմակերպումներ: Մինչ այդ ժամկետային պայմանագրերի շրջանառելիությունն իրավական կարգավորում չունեին, այսինքն՝ կամ ապագայում առաքման պայմանագրերը չէին շրջանառվում, կամ էլ դրանց շրջանառելիությունը կրում էր ապօրինի բնույթ²:

Անփոփելի վերը գրվածը և միևնույն ժամանակ զուգահեռներ անցկացնելով ածանցյալ գործիքների ինչպես ժամանակակից, այնպես էլ Հռոմեական կայսրության դարաշրջանի օրենսդրական դաշտերի միջև՝ կարելի է եզրակացնել, որ հին հռոմեական իրավունքի ազդեցությունն այսպես ասած ածանցյալներով առևտրի կազմակերպման խաղի կանոնների սահմանման գործում թեև չնչին է, այնուհանդերձ առանցքային է:

Ածանցյալ գործիքները միջին դարերում դրսևորվել են այլ առանձնահատկություններով: Հիշյալ գործիքների միջնադարյան առաջին պատմական նմուշներից են համարվում 10-րդ դարում Իտալիայի առևտրականների կողմից մշակված «պատվերներ» (commanda) անունը կրող առևտրային գործիքները, այլ կերպ՝ առևտրային համագործակցության պայմանագրերը (համաձայնագրերը): Վերջիններիս տնտեսագիտական բովանդակությունն արտահայտվում էր նրանում, որ համաձայնագրի կողմերից մեկն իրեն անհրաժեշտ ապրանքները ձեռք բերելու համար վճարում էր նախօրոք, իսկ մյուս կողմը, իր վրա վերցնելով բոլոր տեսակի առևտրային ռիսկերը, պարտավորվում էր ապահովել այսպես ասած պատվիրատուի «պատվերը» համաձայնագրում նշված ժամկետներում³: Թերևս, վերջիններս, որոշակի վերապահումներով, կարելի է դասել ապրանքային ֆորվարդների շարքում՝ մասնավորապես անտեսելով կողմերի միջև գումարային պարտավորությունների կատարման ժամանակացուցային վավերապայմանը:

Սկսած 12-րդ դարից՝ Իտալիայում «պատվերներից» բացի լայնորեն տարածում ստացան իտալական քաղաքների կառավարական մարմինների կողմից թողարկվող ածանցյալ գործիքների էությունը մոտ «պարտավորությունների մարման մասնակցությունները», որոնք քաղաք-

¹ By Ernst Juerg Weber, "A Short History of Derivative Security Markets", University of Western Australia, August 2008, pp. 9,10 http://www.uwa.edu.au/_data/assets/pdf_file/0003/94260/08_10_Weber.pdf

² By Ernst Juerg Weber, "A Short History of Derivative Security Markets", University of Western Australia, August 2008, pp. 9,10 http://www.uwa.edu.au/_data/assets/pdf_file/0003/94260/08_10_Weber.pdf

³ By Steve Kummer and Christian Pauletto, "The History of Derivatives: A Few Milestones", EFTA Seminar on Regulation of Derivatives Markets, Zurich, 3 May 2012, pages 4-6, https://www.google.ru/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=1&ved=0CCEQFjAA&url=http%3A%2F%2Fwww.seco.admin.ch%2Fthemen%2F00513%2F00586%2F02150%2Findex.html%3Flang%3Dfr%26download%3DNLpZeg7t%2Clnp6l0NTU042l2Z6ln1ae2lZn4Z2qZpnO2Y_uq2Z6qpJCFX9_fmym162epYbq2c_JlKbNoKSn6A--&ei=8CM-VfHwEYboUoOrgqM&usq=AFQjCNGckXY7KRusSaogCJHIE16sWSNNIQ&bvm=bv.91665533.d.bGg&cad=rjt

ների կառավարական մարմինների կողմից վերջիններիս տիրապետողի դրամական պարտավորությունների՝ ապագայում մարման խոստումներ էին: Չնայած ավելի ուշ՝ 13-րդ դարում, այս գործիքները սկսեցին շրջանառվել երկրորդային շուկայում, անգամ փոխարինելով ապրանքների և ծառայությունների ձեռքբերման դիմաց վճարվող կանխիկ վճարամիջոցներին, այնուհանդերձ դրանց շրջանառելիությունը սահմանափակվում էր միայն Իտալիայի սահմաններով (նշված գործիքների գներն անընդհատ տատանվում էին կախված քաղաքների բյուջետային եկամուտների ծավալների փոփոխությունից)¹:

Ամփոփելով միջին դարերը՝ կարելի է եզրակացնել, որ եթե Հռոմեական կայսրությունում ածանցյալներն օգտագործվում էին ապրանքների սակավության պատճառով վերջիններիս առաջարկի ապահովման խնդիրը նախօրոք լուծելու համար, ապա այդ ժամանակաշրջանում (միջին դարերում) դրանց առաքելությունը առևտրականների միջև ծագող հարաբերությունները կազմակերպչական տեսանկյունից առավել համակարգված դարձնելու մեջ էր: Թեև «պատվերները» և «պարտավորությունների մարման մասնակցությունները» գործարքների կնքման և կատարման տեսանկյունից (ժամանակակիցների կողմից) բնութագրվում են որպես ժամանակակից ածանցյալների պատմական նմուշներ, սակայն առևտրականների միջև ծագող վճարային հարաբերությունները կարգավորելու տեսանկյունից, վերջիններս, իսկ ավելի հստակ՝ «պատվերներն» ու «պարտավորությունների մարման մասնակցությունները» մինչև 13-րդ դարը (մինչև դրանց երկրորդային շուկայում շրջանառվելը) և «պարտավորությունների մարման մասնակցությունները» սկսած 13-րդ դարից ավելի մոտ են համապատասխանաբար մուրհակների և փոխանցելի մուրհակների նախատիպեր համարվելուն:

Չոլանդիայում (15-17-րդ դարեր) առևտրային հարաբերությունների ժամանակակից զարգացման արդի միտումներ պարունակող ակնկալիքներով պայմանավորված տարբեր ազդություններին պատկանող առաքման պայմանագրերի գծով առևտրականների մտահոգությունները հիմքեր ստեղծեցին Անտվերպենում ներկայիս շուկայական համակարգում առևտուրը համակարգող կարևորագույն ինստիտուցիոնալ կառույցներից մեկի՝ բորսաների առաջին նախատիպերի երևան գալու համար²: Չնայած Անտվերպենում պատմությանը հայտնի առաջին բորսան հեռու էր ժամանակակիցների հետ համեմատվելուց, իսկ իր գործունեության սկզբում՝ անգամ բորսա կոչվելուց (սկզբում այն տարբեր ապրանքային կրպակներով լի հրապարակ էր, իսկ ավելի ուշ՝ 1531թ.-ից սկսած, առևտրային սակարկությունների կազմակերպման համար հարմարեցված առևտրային մասնաշենք), այնուհանդերձ առևտրի կոորդինացումը նպաստեց թե՛ բովանդակային և թե՛ քանակային տեսանկյունից կնքվող գործարքների ծավալների մեծացմանը³:

Բորսայական կառույցի գործունեության սկզբնական շրջանում լայնորեն տարածում ստացան ապրանքների տիպային նմուշի հիման վրա կնքվող սփոթ գործիքները, որտեղ բորսան, առևտրի կազմակերպիչ հանդիսացող մարմին լինելու հետ մեկտեղ, ներկայանում էր գնորդներին առաքվող ապրանքների և վերջիններիս՝ բորսայական սակարկություններին թույլատրելու, այսինքն՝ «լիստինգային» պայմաններին ամբողջությամբ բավարարելու նպատակով, բորսա ներկայացվելիք համարժեք նմուշների որակային հատկանիշների համապատասխանելիությունը երաշխավորողի դերում⁴:

Քիչ ավելի ուշ Անտվերպենում փորձարկվեցին ապագայում առաքման պայմանագրերը (պայմանագրեր, որոնք էությանմբ մոտ են ներկայիս ածանցյալ գործիքներից ֆորվարդների բովանդակությանը): Մի կողմից ժամկետային պայմանագրերով առևտրի կազմակերպման համար ապագայում առաքվող ապրանքների բորսայական պահեստներ նախօրոք տեղափոխելու և պահպանելու պարտադիր պայմանների անհրաժեշտության բացակայությունն ու 1537-1539թթ. կարգավորման մեխանիզմի ներդրմամբ վերջիններիս շրջանառելիության իրավական ճանաչումը, մյուս կողմից էլ վերը նշված պայմանագրերի բազիսային ակտիվ հանդիսացող ապ-

¹ By Steve Kummer and Christian Pauletto, "The History of Derivatives: A Few Milestones", EFTA Seminar on Regulation of Derivatives Markets, Zurich, 3 May 2012, pp. 4-6.

² Борис Шилов и Сергей Семенов, "Биржевая история", Издательство "Smart Book", Москва 2009, стр. 14, 15.

³ Борис Шилов и Сергей Семенов, "Биржевая история", Издательство "Smart Book" Москва 2009 стр. 16, 17.

⁴ Борис Шилов и Сергей Семенов, "Биржевая история", Издательство "Smart Book", Москва 2009 стр. 17, 18.

րանքների կազմակերպված և բարձր իրացվելիություն ունեցող սփոթ շուկաները լրացուցիչ հետաքրքրասիրություն առաջացրին առևտրականների շրջանակներում ժամկետային շուկաների նկատմամբ՝ միևնույն ժամանակ աշխուժացնելով նրանց (առևտրականների) արտահոսքը սփոթից դեպի ժամկետային շուկաներ՝ համեմատական կարգով ավելի հեշտությամբ եկամուտներ ստեղծելու ակնկալիքով: «Յեշտ եկամուտներ» ասելով ակնարկվում է ածանցյալների նախատիպերով սպեկուլյացիաների մասին, որոնց դեպքում անգամ չէր էլ ակնկալվում պայմանագրային պարտավորությունների կատարմամբ այն լուծելու մասին: Ապագայում առաքման պայմանագրերի ընձեռած հզոր սպեկուլյացիոն հնարավորությունների պատճառով 1541թ.-ից Անտվերպենում կտրականապես արգելվում է վերջիններիս առևտուրը¹:

Հոլանդիայի անկախացման նպատակով բարձրացված ռազմաքաղաքական ընդվզման՝ Իսպանիայի կողմից ճնշման պատճառով ավերվեց և թալանվեց թե՛ Անտվերպեն քաղաքը և թե՛ բորսան, ինչի հետևանքով էլ առևտրի կենտրոնը տեղափոխվեց Ամստերդամ:

1602թ. «Ամստերդամի բորսայի» (գործում է մինչ օրս) և «Հոլանդական Օստ-Հնդկական» ընկերության հիմնադրումը լիովին նոր խոսք էր, իսկ ավելի ճիշտ անգնահատելի ժառանգություն ապագա սերունդներին, որպես արդյունք՝ ներկայիս առևտրատնտեսական համակարգը կայուն հիմքերի վրա ձևավորելու համար: Նշված ժառանգության անբաժանելի մասն էին կազմում տարբեր տեսակի ապրանքների և հատկապես կակաչի սոխուկների, վերոնշյալ ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանում շրջանառվող այլ արժեթղթերի (մասնավորապես պետական պարտատոմսերի) հիման վրա կնքվող այսպես ասած՝ ժամանակակից ածանցյալ գործիքների կառուցվածքաբովանդակային էությամբ ամենամոտ առաջին օպցիոնները, ֆորվարդները, ֆյուչերսները և ռեպո գործարքները²:

Ամփոփելով կարելի է ասել, որ ներկայիս համաշխարհային ֆինանսական համակարգում որոշակի ինստիտուցիոնալ կառույցներ (ի դեմս ապրանքային և ֆոնդային բորսաների) և ֆինանսական գործիքներ (ներառյալ բաժնետոմսերի հիման վրա կնքվող ժամկետային պայմանագրերը) իրենց գոյության համար որոշ չափով «պարտական» են Հոլանդիայում XV-XVII դարերի առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը:

Ժամանակակից ստանդարտացված ածանցյալ գործիքների պատմական փորձի հարստացման գործում իր ուրույն տեղն է գրավում ճապոնիան 17-րդ դարի 50-ական թվականներից սկսած:

Հայտնի է, որ ածանցյալ գործիքների ստանդարտացման վերաբերյալ առաջին նշագրումները կապված են ճապոնական Օսակա քաղաքում կազմակերպվող, երկրի գյուղատնտեսության և ազգային եկամտի ձևավորման առանցքային բարիք հանդիսացող ապրանքի՝ բրնձի առք ու վաճառքի հետ:

Եվ այսպես, բրնձի աճուրդային առևտրի կազմակերպման հնարավոր անհարմարությունները նվազագույնի հասցնելու, այսինքն՝ երկրի ողջ շրջաններից Օսակա ներմուծված բրնձի վաճառքի և առաքման հարաբերությունները հստակեցնելու նպատակով թողարկվում են բրնձի ստացականներ (այսուհետ՝ կուպոններ), որոնք հավաստում էին գործարքի շրջանակներում կանխիկ վճարված և շատ սեղմ ժամկետներում (ընդունված է համարել գործարքի կնքումից անմիջապես հետո) առաքվող բրնձի ստացման և տնօրինման սեփականության իրավունքը:

Ֆեոդալական ճապոնիայում բրնձի կուպոնային առևտրին մասնակցությունը նախօրոք պարտավորեցնում էր առևտրականներին առևտրի կազմակերպիչ մարմնում, այսինքն՝ բորսայի գործառույթներ կատարող մարմնում) սահմանված նվազագույն շենով ավանդային հաշիվների բացում, որոնք աճուրդների ավարտից անմիջապես հետո ապրանքների առաքման հետ մեկտեղ ամբողջությամբ վերադարձվում³ էին (համեմատած ածանցյալ գործիքների ժամանակակից առևտրային մոդելի հետ կարելի է ասել, որ վերջիններս բնութագրվում են որպես բորսաների

¹ By Steve Kummer and Christian Pauletto, "The History of Derivatives: A Few Milestones", EFTA Seminar on Regulation of Derivatives Markets, Zurich, 3 May 2012, pp. 6, 7.

² The University of North Carolina at Pembroke, "Amsterdam in the Seventeenth Century" http://www2.uncp.edu/home/rwb/Amsterdam_1.html.

³ By Steve Kummer and Christian Pauletto, "The History of Derivatives: A Few Milestones", EFTA Seminar on Regulation of Derivatives Markets, Zurich, 3 May 2012, pp. 7.

կողմից համաձայնագրերի կողմերի պարտավորությունների կատարումը երաշխավորող հաշվարկային պալատում բացվող մարժինալ հաշիվների նախատիպեր):

Ժամանակի ընթացքում, կնքվող գործարքների ծավալների մեծացման շնորհիվ, ընդլայնվեցին կուպոններով ամրագրված բրնձի առաքման ժամկետները, և իջավ «երաշխիքային ավանդների» պարտադիր նվազագույն շեմը, ինչը վերջիններիս փոքր-ինչ ավելի մոտեցրեց ժամանակակից ֆորվարդների բովանդակային եությանը:

Մինչև 17-րդ դարի առաջին կեսը, ֆեոդալների դրամական միջոցների նկատմամբ պահանջարկը բավարարելու, միևնույն ժամանակ առևտրային հարաբերություններն էլ ավելի պարզեցնելու համար շրջանառության մեջ դրվեցին «դատարկ», բայց ստանդարտացված կուպոնները (ֆյուչերսների նախատիպերը): Ինչու՞ «դատարկ», որովհետև սամուրայները, ինչպես նաև այլ դասակարգերին պատկանող ազնվականները, իրենց ծախսերի ծածկման համար դրամական միջոցներ հայթայթելու նպատակով, հաճախ էին ստիպված լինում վաճառել գալիք տարվա դեռևս չհավաքված բերքը, այլ կերպ ասած սպասումները¹:

Նշված գործիքների սպեկուլյացիոն հնարավորությունների չարաշահմամբ պայմանավորված երկրի տնտեսության կայունությանը սպառնացող բրնձի գների անհիմն կտրուկ տատանումների շուրջ առաջացած ֆեոդալական ճապոնիայի ռազմաքաղաքական առաջնորդ Սյոգունի մտահոգություններն ուղղակիորեն նպաստեցին շուկայի մասնակիցների գործունեությունը կարգավորող խաղի նոր կանոնների սահմանմանը, դրանց կատարմանը հետևող վերահսկողական մեխանիզմի ձևավորմանը և առևտրային հարաբերությունների կորդինացմանը²: Արդյունքում՝ սկսած 1697թ.-ից, ֆինանսական համակարգի 33 տարվա էվոլյուցիոն զարգացումների ընթացքում ճապոնիայի Օսակա քաղաքում վերջնականապես հաստատվեց ժամանակակից ածանցյալ գործիքներով առևտրի կազմակերպման գրեթե բոլոր պահանջները բավարարող՝ քիչ թե շատ միայն տեղեկատվական տեխնոլոգիաների հագեցվածությամբ զիջող, կուպոններով (իսկ փոքր-ինչ ավելի ուշ ֆյուչերսներով) գործարքների կատարման երաշխիքային համակարգ ներառող հաշվարկային պալատ ունեցող, բրնձի առևտրի կազմակերպիչ հանդիսացող «Դոջինայի» ապրանքային բորսան:

Ամփոփելով պարզապես կարելի է նշել, որ ցանկացած աշխատանքային գործընթացի նկատմամբ, թերևս, առավելապես ճապոնացիների մոտ արտահայտված յուրահատուկ աշխատասիրության և ներքին պատասխանատվության մարդկային բարձրագույն որակական հատկանիշների դրսևորման արդյունքի բացառություններ չէին թե՛ ընդհանուր ֆինանսական համակարգի և թե՛ ապրանքային ածանցյալների պատմական զարգացման գործընթացում ճապոնացիների ունեցած կարևորագույն ձեռքբերումները:

Անդրադառնալով ժամանակակից Անգլիային՝ պետք է նշել, որ ուշագրավ է այն հանգամանքը, որ սովյալ երկրի այժմյան ֆինանսական համակարգում շրջանառվող բոլոր տեսակի՝ ներառյալ դասական և էկզոտիկ, ածանցյալ գործիքների առևտրի ակունքները պայմանավորված են միայն 18-րդ դարից, այն էլ Զոլանդիայում 16-17-րդ դարերում ածանցյալների մասով առևտրատնտեսական հարաբերությունների շնորհիվ կուտակված մեզ արդեն ծանոթ փորձի ուղղակի օգտագործմամբ:

Այսպիսով, ամփոփելով հոդվածը, կարելի է եզրակացնել, որ ներկայիս համաշխարհային ֆինանսական համակարգում գործող ածանցյալ գործիքների սեզմենտն առևտրի սպասարկման իր ինստիտուցիոնալ մարմիններով և խաղի կանոններն ապահովող օրենսդրական դաշտով ոչ այլ ինչ է, եթե ոչ հարուստ «պատմաժառանգության» արդյունավետ օգտագործման արդյունք:

¹ By Steve Kummer and Christian Pauletto, "The History of Derivatives: A Few Milestones!" EFTA Seminar on Regulation of Derivatives Markets, Zurich, 3 May 2012, pp. 8.

² Harvard Business School, "The Dojima Rice Market and the Origins of Futures Trading" November 10, 2010. http://disciplinas.stoa.usp.br/pluginfile.php/151297/mod_resource/content/2/Dojima_Rice_Market_Case.pdf

ԱՅԱՆՅՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱԸ

ԷՄԻԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ, *հայցորդ*
Մ Գ Ա Ա Մ. Քոտանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Համառոտագիր

Հոդվածն ամբողջապես նվիրված է ժամանակակից ածանցյալ գործիքների պատմության հետազոտությանը: Աշխատանքում պատմական էքսկուրս է կազմակերպվում մարդկության պատմությանը հայտնի խոշորագույն առևտրային կենտրոններով (Հին Հունաստան, Հռոմեական կայսրություն, Իտալիա, Հոլանդիա, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա)՝ փորձելով բացահայտել ժամանակակից ածանցյալ գործիքների հնարավոր կիրառության առաջին նմուշները: Աշխատության նպատակն է ներկայիս «ածանցյալ գործիքներ» տնտեսական կատեգորիայի էությանը մոտ, նախկինում շրջանառվող գործիքների բովանդակության և վերջիններիս պատմական էվոլյուցիոն ուղու համառոտ, բայց միևնույն ժամանակ հանգամանակից ներկայացումը:

Բանալի բառեր. *հիմնադրամներ, ածանցյալ գործիքներ, պարմական նախարիպեր, շրջանառելիություն, երաշխիքային ավանդներ, պարմական ժառանգություն, էվոլյուցիա:*

ИСТОРИЧЕСКАЯ ЭВОЛЮЦИЯ ПРОИЗВОДНЫХ ИНСТРУМЕНТОВ

ЭМИЛЬ ГЕВОРГЯН, *соискатель*
Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Статья посвящена исследованию истории современных производных инструментов. В ней сделан исторический экскурс по известным истории человечества современным крупнейшим торговым центрам (Древняя Греция, Римская империя, Голландия, Япония, Великобритания) с целью выявления возможности применения первых образцов инструментов в современных производных инструментах. Цель работы – выявить сущность современной экономической категории “производные инструменты”, близких по содержанию и являющихся результатами эволюции прошлых инструментов.

Ключевые слова: *фонды, производные инструменты, исторические прототипы, оборачиваемость, гарантированные вклады, историческое наследие, эволюция.*

HISTORICAL OVERVIEW OF DERIVATIVE INSTRUMENTS

EMIL GEVORGYAN, *Ph.D. student*
M. Kotanyan Institute of Economics,
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article presents a brief study of contemporary derivatives markets. The author provides a historical overview of the largest trading centers (Old Greece, Roman Empire, Italy, the Netherlands, Japan, the United Kingdom) known to the human history by attempting to identify the first possible examples of contemporary derivative products. The article provides a brief and at the same time comprehensive historical overview of exchange-traded instruments the meaning and essence of which are close to the essence of contemporary economic category of “derivative instruments”.

Keywords: *derivative instruments, historical prototype, trading, circulation, rice coupon, insured bank deposit, historical heritage.*

**ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿՐԱ**

Անցումային տնտեսությամբ բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում մեծապես կարևորվում են ներդրումային գործունեության խթանումը և իրականացվող ներդրումների ծավալների մշտական աճի ապահովումը: Այս պարագայում հատկապես կարևորվում է տնտեսության մեջ «երկար փողերի» առկայությունը, ինչը լուրջ նախադրյալներ է ստեղծում ամբողջ տնտեսության զարգացման համար: Որպես կանոն, «երկար փողերի» միջոցով ֆինանսավորվում են երկարաժամկետ (մեկ տարուց ավելի) զարգացման ծրագրերը, և իրականացվում են դրամական միջոցների երկարաժամկետ կուտակումներ: Բացի այդ, «երկար փողերը» տնտեսության կայուն զարգացման ցուցանիշ են: «Երկար փողերի» հիմնական աղբյուրներն են պետական ծրագրերը, բանկային վարկերը, արտասահմանյան ներդրումները, արժեթղթերի շուկան, կուտակային կենսաթոշակային միջոցները և այլն:

«Երկար փողերի» վերոհիշյալ աղբյուրներից յուրաքանչյուրն արժանի է առանձին ուսումնասիրության, դիտարկենք միայն կուտակային կենսաթոշակային միջոցների ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման վրա:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները կարող են ներդրվել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում: Հայաստանի Հանրապետության տարածքում պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել¹


1. բանկային հաշիվներում և ավանդներում, եթե տվյալ բանկը անվճարունակության (սնանկության) գործընթացում չէ,
2. Հայաստանի Հանրապետության կամ Կենտրոնական բանկի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,
3. ՀՀ-ում գործող կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերում,
4. այն ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում, որոնք վերահսկվում են Կենտրոնական բանկի կողմից,
5. ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով:

Անշուշտ, ցանկալի է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները ներդնել սեփական երկրում, ինչը տնտեսությանը հետագայում կարող է ապահովել «երկար փողերով»:

Վերջին տարիներին ՀՀ-ում գրանցված ՀՆԱ-ի իրական աճի ցուցանիշները, արտահանման և ներմուծման ծավալները, իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ծավալները, համախառն կուտակման և ՀՆԱ-ի հարաբերակցությունը նույնպես վկայում են իրականացվող ներդրումների ծավալների ավելացման անհրաժեշտության մասին: Դիտարկենք ՀՆԱ-ի իրական աճի ցուցանիշները ստորև բերված գծապատկերի միջոցով:

¹ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1


ՀՀ-ում համախառն ներքին արդյունքի իրական աճը 2007-2014թթ.¹



Գծապատկեր 1-ի տվյալները վկայում են, որ համախառն ներքին արդյունքի իրական աճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2007թ.՝ 13.7%, իսկ ամենացածրը 2009թ.՝ -14.1%: Այնուհետև, 2010թ. նկատվում է որոշակի աճ՝ 2011թ. 2010թ. համեմատությամբ համախառն ներքին արդյունքի իրական աճի ցուցանիշն ավելացել է 2.5 տոկոսային կետով, 2012թ. 2011թ. համեմատությամբ՝ 2.5 տոկոսային կետով: 2013թ.-ից սկսած՝ նորից նկատվում է համախառն ներքին արդյունքի իրական աճի ցուցանիշի նվազեցում: 2013թ. 2012թ. համեմատությամբ համախառն ներքին արդյունքի իրական աճի ցուցանիշը նվազել է 3.7 տոկոսային կետով, իսկ 2014թ. 2013թ. համեմատությամբ՝ 0.1 տոկոսային կետով: Այս ամենը վկայում է տնտեսության զարգացման տեմպերի դանդաղեցման մասին: Ստեղծված իրավիճակի հաղթահարման համար պահանջվում են ինչպես լայնածավալ ֆինանսական ներդրումներ, այնպես էլ կարգավորիչ մի շարք միջոցառումների իրականացում: ՀՀ-ում իրական հատվածի զարգացման անհրաժեշտության մասին են վկայում նաև ստորև բերված արտահանման և ներմուծման ծավալների վերաբերյալ տվյալները:

Գծապատկեր 2

Ապրանքների արտահանման և ներմուծման ծավալները 2007-2014թթ.²
(մլն ԱՄՆ դոլար)



Գծապատկեր 2-ի տվյալները վկայում են, որ 2014թ. 2007թ. համեմատությամբ ապրանքների արտահանման ծավալներն ավելացել են 367 մլն ԱՄՆ դոլարով (կամ 31.8 %-ով): Ինչպես


¹ <http://www.mineconomy.am/arm/index.html>
² <http://www.mineconomy.am/arm/index.html>

տեսնում ենք, 2010թ.-ից սկսած նկատվում է արտահանման ծավալների աստիճանական աճ: Այսպես, 2011թ. 2010թ. համեմատությամբ արտահանումն ավելացել է 293.2 մլն ԱՄՆ դոլարով, 2012թ. 2011թ.՝ 45.9 մլն ԱՄՆ դոլարով, 2013թ. 2012թ.՝ 98.5 մլն ԱՄՆ դոլարով և 2014թ. 2013թ. համեմատությամբ՝ 40.6 մլն ԱՄՆ դոլարով: Սակայն, չնայած այս դրական տեղաշարժերին, այնուամենայնիվ, ներմուծման ծավալները զգալիորեն գերազանցում են արտահանման ծավալները: 2014թ. 2007թ. համեմատությամբ ապրանքների ներմուծման ծավալներն ավելացել են 1133.8 մլն ԱՄՆ դոլարով (կամ 34.7%-ով): 2014թ. ներմուծումը գերազանցել է արտահանմանը 2882.3 մլն ԱՄՆ դոլարով (կամ մոտ 2.9 անգամ): Հասկանալի է, որ այս իրավիճակում նույնպես պահանջվում է լայնածավալ ֆինանսական ներդրումների իրականացում:

Ներկայացնենք նաև ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ծավալը ստորև բերված գծապատկերի միջոցով:

Գծապատկեր 3

ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ծավալը 2007-2013թթ.¹




Գծապատկեր 3-ի տվյալները վկայում են, որ 2013թ. 2007թ. համեմատությամբ օտարերկրյա ներդրումների ծավալները նվազել են 248 մլն ԱՄՆ դոլարով (կամ 29.3%-ով): Միաժամանակ նվազել են նաև ուղղակի օտարերկրյա ներդրումների ծավալները՝ 311.1 մլն ԱՄՆ դոլարով (կամ 53.4%-ով): Նշված նվազեցումները հիմնականում պայմանավորված են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքներով: ՀՀ իրական հատվածում իրականացվող օտարերկրյա ներդրումների ծավալների կրճատումը, անշուշտ, բացասական երևույթ է, և այս իրավիճակում հատկապես հրատապ խնդիր է հանդիսանում ներքին ներդրումների խթանումը: Որպես ներքին ներդրումների ֆինանսավորման աղբյուր կարող են ծառայել նաև խնայողությունները (համախառն կուտակումները), ինչպես նաև կուտակային կենսաթոշակային ֆոնդերին ուղղվող ֆինանսական ռեսուրսները:

Անդրադառնանք նաև համախառն կուտակման և ՀՆԱ-ի հարաբերակցությանը ստորև բերված գծապատկերի միջոցով:

¹ <http://www.mineconomy.am/arm/index.html>

ՀՀ-ում համախառն կուտակման հարաբերակցությունը ՀՆԱ-ին 2007-2013թթ.¹



Գծապատկեր 4-ի տվյալները վկայում են, որ 2013թ. 2007թ. համեմատությամբ համախառն կուտակում/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է 16 տոկոսային կետով, ինչը, կարծում ենք, նույնպես պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, ինչպես նաև արտասահմանից դրամական փոխանցումների ծավալների կտրուկ նվազեցմամբ:

Ինչպես նկատում ենք, ՀՀ-ում միաժամանակ կրճատվել են համախառն ներքին արդյունքի իրական աճը, օտարերկրյա ներդրումների ծավալները և խնայողությունները: Վերջինս պահանջում է գտնել որոշակի լուծումներ՝ ստեղծված իրավիճակի աստիճանական հաղթահարման համար: Այս պարագայում մեծապես կարևորվում է նաև կուտակային կենսաթոշակային ֆոնդերին ուղղվող ֆինանսական ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխումը ՀՀ-ում:

Դիտարկենք 2014թ. կենսաթոշակային ֆոնդերի կողմից տեղաբաշխված ակտիվների ծավալները ստորև բերված աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 1

Amundi-ACBA Asset Management, C-QUADRAT Ampega Asset Management Armenia և Capital Asett Management ընկերությունների ներդրումային ռեսուրսները 2014թ.²

N	Անվանումը	Ներդրումային ռեսուրսները (դրամ)	Տեսակարար կշիռը (%)
1.	Amundi-ACBA Asset Management ³	6 276 685 717	51.74
2.	C-QUADRAT Ampega Asset Management Armenia ⁴	5 839 058 644	48.13
3.	Capital Asett Management ⁵	13 962 000	0.11
ԸՆԴՀԱՆՆՈՒՄ		12 129 706 361	100

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ 2014թ. Amundi-ACBA Asset Management, C-QUADRAT Ampega Asset Management Armenia և Capital Asett Management ընկերությունների ներդրումային ռեսուրսները կազմել են 12 129 706 361 դրամ: ՀՀ տնտեսության մեջ իրականացվող օտարերկրյա ներդրումների ծավալների կրճատման պայմաններում ցանկալի կլինի կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային ռեսուրսները հնարավորինս տեղաբաշխել ՀՀ-ում՝ ստեղծելով «երկար փողերի» առաջարկ, որը կխթանի ներդրումային գործունեությունը և կապիտալի շուկայի զարգացումը: Վերջինս էլ, իր հերթին, կնպաստի տոկոսադրույքների նվազեցմանը, ինչն անչափ կարևորվում է մեր երկրի մակրոտնտեսական զարգացման համար⁶:

¹ <http://www.mineconomy.am/arm/index.html>

² <http://www.epension.am/am/funds>

³ http://www.amundi-acba.am/ar_ar_retail/node_14941

⁴ https://www.c-quadrat-ampega.am/index.php?option=com_content&view=article&id=534&Itemid=260&lang=am

⁵ <http://capitalfunds.am/services-2/services/#1334>


⁶ <http://www.lragir.am/print/arm/0/interview/print/101413>

Հասկանալի է, որ ՀՀ-ում կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային ռեսուրսների տեղաբաշխումը կապված է նաև որոշակի ռիսկերի հետ, որոնք անհրաժեշտ է մշտապես վերահսկել և կառավարել: «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ներդնել ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որը հնարավորություն կտա ցանկացած ժամանակ որոշելու, գնահատելու և հսկելու բոլոր էական ռիսկերը, ինչպես նաև այդ ռիսկերի փոխադարձ կախվածությունը¹: Ռիսկերի կառավարման համակարգը պետք է համաչափ լինի կառավարչի գործունեությանը և կառավարվող ֆոնդերի բնույթին, ծավալներին և բարդությանը՝ արտացոլելով կառավարչի գործունեության շրջանակները:

Տնտեսագիտական գրականության մեջ հայտնի են ֆինանսական ռիսկերի կառավարման որոշակի փուլեր և մեթոդներ: Ֆինանսական ռիսկերի կառավարման հիմնական փուլերը ներկայացված են ստորև բերված գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5

Ֆինանսական ռիսկերի կառավարման գործընթացի հիմնական փուլերը²



Ստորև տրվում են ֆինանսական ռիսկերի կառավարման հիմնական մեթոդները³:

- **Ղիվերսիֆիկացիա**, որի դեպքում ռիսկերը բաշխվում են ըստ ակտիվների տարբեր տեսակների: Կապիտալը բաշխելով գործունեության տարաբնույթ տեսակների միջև՝ Ղիվերսիֆիկացիան թույլ է տալիս խուսափել ռիսկի մի մասից: Ավելի հաճախ Ղիվերսիֆիկացիան Ղիտարկում են որպես արժեթղթերի պորտֆելի կառավարման գործընթացում ռիսկերի նվազեցման արդյունավետ միջոց:
- **Ապահովագրություն**, որի արդյունքում ռիսկը որոշակի վարձատրության դիմաց փոխանցվում է մեկ ուրիշին՝ ապահովագրական ընկերությանը: Այն դրամական միջոցների կուտակման համակարգ է, որը թույլ է տալիս փոխհատուցել առաջացած կորուստները: Տարբերվում են ապահովագրության երեք տեսակներ՝ անձնական, գույքային և պատասխանատվության:
- **Լիմիտավորում**, որը ենթադրում է ռիսկերի մեծությունների հանդեպ որոշակի սահմանափակումների սահմանում և դրանց պահպանման հետագա վերահսկողություն: Այն ծառայում է որպես ռիսկի մեծության նվազեցման միջոց:

¹ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1
² <http://www.irbis.vegu.ru/repos/11730/HTML/49.htm>
³ <http://risk-mtfm.ru/risman/rmmets.php>

- **Ռիսկի բաժանում**, որի դեպքում ֆոնդի մասնակիցների միջև ռիսկը բաժանվում է այնպես, որ հնարավոր լինի նվազեցնել յուրաքանչյուր մասնակցի կորուստները:
- **Յեջավորում**, որը ենթադրում է ֆյուչերսային շուկաներում ակտիվների ֆորվարդային վաճառքների կամ գնումների իրականացում: Յեջավորման դեպքում որպես ֆինանսական գործիքներ կարող են օգտագործվել օպցիոնները, ֆյուչերսները, սվոպները և այլն:
- **Պահուստավորում**, որի դեպքում ստեղծվում են պահուստային ֆոնդեր, որոնց միջոցները կարող են օգտագործվել տարբեր անկանխատեսելի իրավիճակների հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման համար:

Այսպիսով, ՀՀ-ում կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ֆինանսական ռեսուրսների ներդրումը կնպաստի ընկերությունների գործունեության աշխուժացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, աշխատավարձերի մակարդակի բարձրացմանը, ազգաբնակչության կենսամակարդակի բարելավմանը, արտահանման ծավալների աստիճանական ավելացմանը, պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, ազգային մրցունակության բարձրացմանը և ՀՀ տնտեսության ներդրումային գրավչության մեծացմանը: Քանի որ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը կարևոր նշանակություն ունի ինչպես ազգաբնակչության կենսամակարդակի բարելավման, այնպես էլ տնտեսության զարգացման համար, ուստի վերջինս պետք է գտնվի հասարակության և պետության մշտական ուշադրության ներքո:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՅ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

ԱՐՄԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ, *պ. գ. թ.*

ՄԱԳԱՍՏ Մ. Քոտանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ տնտեսության վրա կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ազդեցության հիմնախնդրին: Հաշվի առնելով ներդրումային ռեսուրսների սակավության հիմնախնդիրը՝ հոդվածում փորձ է արվել բացահայտել ու ՀՀ-ում կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ֆինանսական ռեսուրսների ներդրման հնարավորությունները: Հատուկ ուշադրություն է դարձվել ֆինանսական ռիսկերի կառավարման հիմնախնդրին, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործընթացում կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների պարտավորություններին: Քանի որ կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ներդրումն ունի կարևոր նշանակություն ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման համար, այն պետք է գտնվի պետության և հասարակության մշտական ուշադրության ներքո:

Բանալի բառեր. կուտակային կենսաթոշակային համակարգ, ֆինանսական ռեսուրսներ, ներդրումներ, երկար փողեր, ռիսկերի կառավարում, տնտեսություն, զարգացում, զբաղվածություն, կենսամակարդակ, պետություն, հասարակություն:

ВЛИЯНИЕ НАКОПИТЕЛЬНОЙ ПЕНСИОННОЙ СИСТЕМЫ НА РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ РА

АРМАН ДАНИЕЛЯН, *к.э.н.*

научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Настоящая статья посвящена проблеме влияния накопительной пенсионной системы на развитие экономики РА. Учитывая наличие проблемы нехватки инвестиционных ресурсов, в статье сделана попытка выявления возможностей инвестирования финансовых ресурсов пенсионных фондов в РА. Особое внимание уделено проблеме управления финансовыми рисками, а также обязательствам управляющих пенсионными фондами в процессе управления рисками. Поскольку эффективное инвестирование финансовых ресурсов накопительных пенсионных фондов имеет важное значение для социально-экономического развития РА, то им должны быть озабочены как члены общества, так и государство.

Ключевые слова: накопительная пенсионная система, финансовые ресурсы, инвестиции, длинные деньги, управление рисками, экономика, развитие, занятость, уровень жизни, государство, общество.

THE IMPACT OF THE FUNDED PENSION SYSTEM ON THE ECONOMIC DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

ARMAN DANIELYAN, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article presents the issue of the impact of introducing the funded pension system in the Republic of Armenia. By taking into account the scarcity of investment funds (resources) the article attempts to identify the possibilities of investing options of the assets of mandatory pension funds of the Republic of Armenia. The author highly stresses the issues of financial risk management, and the responsibilities of the pension fund managers in the risk management process. Since the efficiency of investment options of financial resources of the mandatory pension funds is of high importance to the socio-economic development in the Republic of Armenia, it needs to be constantly monitored and supervised by both the government and general public.

Keywords: Funded pension system, financial resources, investment, long-term capital, risk management, economy, development, employment, standard of living, government, the general public.

**ԴՐԱՍԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԶՅ-ՈՒՄ**

ԶՅ-ում դրամավարկային քաղաքականության (ԴՎՔ) արդյունավետությունը և ընդհանրապես ԴՎՔ ազդեցության մեխանիզմը հնարավոր չէ հասկանալ և գնահատել առանց ԴՎՔ փոխանցումային մեխանիզմի մակրոմոդելի վերլուծության: Այս մակրոմոդելը գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո ոչ միայն թույլ է տալիս իրականացնել միջնաժամկետ հատվածում հիմնական մակրոտնտեսական փոփոխականների կանխատեսումներ, այլ նաև ապահովում է դրամավարկային քաղաքականության գործառնական նպատակի՝ կարճաժամկետ ռեպո գործառնությունների տոկոսադրույքի որոշման հնարավորություն: Ուղիները, որոնց միջոցով դրամավարկային քաղաքականությունն ազդում է իրական տնտեսական ակտիվության և գնաճի վրա, բազմազան են, մասնավորապես տոկոսադրույքի, բանկերի վարկավորման, հաշվեկշռի, ակտիվների գների, փոխարժեքի և սպասումների:

Տեսական գրականության մեջ մեխանիզմի ուսումնասիրության հիմնարար մոտեցումը քեյնսյան տոկոսադրույքի ուղու ուսումնասիրությունն է դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության - ԴՍԸԶ (DSGE - Dynamic Stochastic General Equilibrium) մոդելների միջոցով¹, այդուհանդերձ էմպիրիկ գրականությունը հիմնված է VAR մոդելի վրա:

Տարբեր երկրների համար կատարված բազմաթիվ հետազոտությունների արդյունքները վկայում են, որ զարգացած երկրներում առավել արդյունավետ փոխանցումային մեխանիզմում գործում է տոկոսադրույքի ուղին, մինչդեռ զարգացող և անցումային շրջանում գտնվող երկրների համար իրական տոկոսադրույքն ունի սահմանափակ ուղղակի ազդեցություն իրական տնտեսական ակտիվության և գնաճի վրա գլխավորապես թույլ բանկային համակարգի պատճառով²: Հայաստանի համար Դաբլա-Նորրիս և Ֆլորկենայեր (2006) աշխատանքը նույնպես հաստատում է զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների էմպիրիկ հետազոտությունների արդյունքները: Ինչպես այլ զարգացող և անցումային փուլում գտնվող երկրներում, այնպես էլ Հայաստանում, որը բնութագրվում է ներմուծման նկատմամբ բարձր պահանջարկով և կանխիկ դրամական միջոցների մեծ պահուստներով, բնակչությունն արագ է արձագանքում փոխարժեքի տատանումներին՝ ուժեղացնելով փոխարժեքի փոխանցումային մեխանիզմը՝ զուգորդվելով նաև կենտրոնական բանկի ակտիվ փոխարժեքային միջամտություններով: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ աշխատության մեջ դիտարկվող ժամանակաշրջանի համեմատ տեղի են ունեցել մի շարք էական փոփոխություններ տնտեսական քաղաքականության, ինչպես նաև ԶՅ տնտեսական զարգացման առումով:

Հետազոտության շրջանակներում Հայաստանի տնտեսության համար դրամավարկային փոխանցումային մեխանիզմի վերլուծության կարևորությունը հանգում է հետևյալ երկու հիմնախնդիրների ուսումնասիրությանը.

1. գործող ռեպո տոկոսադրույքի փոխանցման ուղու արդյունավետության վերլուծություն, ինչը հնարավորություն կտա գնահատելու գնաճի նպատակադրման որդեգրված ռազմավարության արդյունավետությունը ԶՅ-ում:
2. Գնաճ - փոխարժեք կապի ուժգնության գնահատումը մինչև 2009թ. և դրանից հետո, երբ ԶՅ կենտրոնական բանկը պաշտոնապես հայտարարեց լողացող փոխարժեքի ռեժիմին անցնելու համար: Սա հնարավորություն կտա գնահատելու նոր որդեգրված ռազմավարության արդյունավետությունը ԶՅ-ում առկա փոխարժեքի ռեժիմի պայմաններում և կազմելու ներքին

¹ Clarida R., Gali J., Gertler M., "Monetary Policy Rules and Macroeconomic Stability: Evidence and Some Theory", Quarterly Journal of Economics, vol.105, no.1, 2000, p. 150.
² Mishra P., Montiel P.J., A.Spilimbergo, "Monetary Transmission in Low Income Countries", IMF working paper, WP/10/223, 2010, p. 4.

գների վրա փոխարժեքի տատանումների ազդեցության վերաբերյալ ամբողջական պատկերացում և՛ տևողության, և՛ ուժգնության տեսանկյունից: Սա կարևոր է արժուքային քաղաքականության որոշման համար գնաճի նպատակադրման ռազմավարության շրջանակներում:

ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի վերլուծությունն ու գնաճի վրա ԴՎՔ գործիքների ազդեցության գնահատումն իրականացվել են սխալների ուղղման վեկտորային մոդելների (VECM - Vector error correction model) մեթոդաբանությամբ 2004թ.-ից մինչև 2014թ. հունիս ամիսն ընկած ժամանակային շարքերի հիման վրա: Վերլուծության համար օգտագործվել են ամսական տվյալներ վերջին տասը տարիների կտրվածքով, ինչը բավականաչափ երկար ժամանակահատված է ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալի և վստահելի համարելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ համեմատաբար թարմ տվյալների կիրառումը վերլուծությունը դարձնում է ավելի կիրառական ապագա քաղաքականության մշակման տեսանկյունից: Տվյալները ստացվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կենտրոնական բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի խմբի, Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական խմբի և այլ հրապարակային տեղեկատվական աղբյուրներից: Փոխանցման էֆեկտի ուսումնասիրման նպատակով օգտագործվել են ՀՀ-ում ընդհանուր սպառողական գների, պարենային, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գների ինդեքսները: Առանձին տարանջատում ներմուծման գների ինդեքսների համար չի իրականացվել:

Սպառողական գների մակարդակի վրա փոխարժեքի փոխանցման էֆեկտի ուսումնասիրության նպատակով արժույթի փոխարժեքի դերում դիտարկվել է ԱՄՆ դոլար – ՀՀ դրամ միջին ամսական փոխարժեքը: Այս ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ԱՊՀ երկրները հիմնականում իրականացնում են փոխարժեքի կառավարում ԱՄՆ դոլարի նկատմամբ: Բացի այդ, Հայաստանի տնտեսությունը, ինչպես և ԱՊՀ մյուս երկրներինը, դեռևս մնում են բարձր դոլարացվածության մակարդակում՝ դարձնելով ԱՄՆ դոլարի փոխարժեքը տնտեսության մեջ կարևոր հարաբերական գներից մեկը:

Բոլոր փոփոխականները վեր են ածվել լոգարիթմական հիմքի, բացառությամբ ռեպո տոկոսադրույքի և դաշնային պահուստային համակարգի տոկոսադրույքի, որոնք ներկայացված են մակարդակներով: ՍԳԻ տվյալները ճշգրտվել են՝ համաձայն Census X-13 գործընթացի սեզոնայնության՝ հնարավոր ազդեցությունը չեզոքացնելու նպատակով: Փողի զանգվածը ևս ներկայացված է սեզոնային ճշգրտված տվյալներով: Սեզոնայնության ճշգրտում չի իրականացվել տոկոսադրույքների և նավթի համաշխարհային գների փոփոխականներում:

Վեկտորային ավտոռեգրեսիվ մոդելների (VAR), իսկ շարքերի կոինտեգրացվածության դեպքում նաև VECM մոդելների, ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ԴՎՔ վերլուծության համար անցումային փուլում գտնվող տնտեսությունների համար, որոնց բնորոշ են կարճ ժամանակային շարքերը, ոչ վաղ անցյալում ունեցած մակրոտնտեսական անկայունությունը և էական կառուցվածքային փոփոխությունները, դրանք առավել արդյունավետ գործիք են: Այս մոտեցումը նվազագույն սահմանափակումներ է դնում տնտեսության վրա դրամավարկային շուկերի ազդեցության ձևերի վրա, բացի այդ, բացահայտորեն ճանաչում է ԴՎՔ և մակրոտնտեսական զարգացումների միջև միաժամանակ գործելու՝ ռեակցիայի ֆունկցիայի հնարավորությունը և տնտեսական փոփոխականների կախվածությունը ԴՎՔ-ից¹:

Հետազոտության համար հիմք են ծառայել Դաբլա-Նորրիս, Ֆլորկեմայեր (2006), Բորդոն, Վեբեր (2010) և Կատարանովա (2010) մոդելները:


Տեսական և էմպիրիկ հետազոտությունների համաձայն՝ գնաճի վրա այլ փոփոխականների հնարավոր ազդեցությունը հաշվի առնելու նպատակով մոդել են ներառվել քաղաքականության երեք գործիքները՝ փողի առաջարկը փողի զանգվածի տեսքով, փոխարժեքը և քաղաքականության կարճաժամկետ տոկոսադրույքը՝ ռեպո տոկոսադրույքի տեսքով: Փողի նեղ կամ լայն զանգվածի օգտագործումն էապես չի ազդում արդյունքների վրա, ուստի վերլուծության համար օգտագործվել է փողի M_{2x} լայն զանգվածը:

¹ Dabla-Norris E., Floerke-meier H., "Transmission Mechanisms of Monetary Policy in Armenia: Evidence from VAR Analysis", IMF working paper, WP/06/248, 2006, p. 4.

Էնդոգեն փոփոխականների վեկտորը բաղկացած է անվանական ՀՆԱ-ի (gdp_t), սպառողական գների ինդեքսի (cpi_t), ռեպո տոկոսադրույթի (r_t), փողի լայն զանգվածի ($m2x_t$) և անվանական փոխարժեքի (ner_t) փոփոխականներից: Ստորև ներկայացված են էնդոգեն փոփոխականների դինամիկան ներկայացնող գրաֆիկները հետևյալ հաջորդականությամբ՝ ընդհանուր ՍԳԻ, պարենային ապրանքների ՍԳԻ, ոչ պարենային ապրանքների ՍԳԻ, ծառայությունների ՍԳԻ, ՀՆԱ, փողի լայն զանգված, անվանական փոխարժեք և ռեպո տոկոսադրույթ:

Գծապատկեր 1

VECM մոդելի էնդոգեն փոփոխականների դինամիկան



Էկզոգեն փոփոխականների վեկտորը բաղկացած է եվրոպական Brent տեսակի չվերամշակված նավթի սփոթ գների ($oilpt$) և ԱՄՆ պահուստային տոկոսադրույթի ($rtUS$) փոփոխականներից: Վերջինը ներառված է՝ տոկոսադրույթի պարիտետը հաշվի առնելու համար, իսկ առաջինը դրամական փոխանցումները մոտարկող փոփոխականն է, քանի որ դրանք արտարժույթի ներհոսքի կարևոր աղբյուր են: Նավթի համաշխարհային գների հետ դրամական փոխանցումների կապը պայմանավորված է նրանով, որ Հայաստանում դրանց մեծ մասը գալիս է Ռուսաստանի Դաշնությունից, իսկ համաձայն մի շարք հետազոտությունների՝ նմանատիպ փոխանցումների ծավալն ուղղակի կապի մեջ է գտնվում Ռուսաստանում էներգակիրների գներով պայմանավորված տնտեսական վերելքների հետ¹:

Սողելն ունի հետևյալ տեսքը.

$$\Delta \log cpi_{it} = \beta_0 + \sum_{i=0}^2 \beta_{1i} \Delta \log ner_{t-i} + \sum_{i=0}^2 \beta_{2i} \Delta \log gdp_{t-i} + \sum_{i=0}^2 \beta_{3i} \Delta \log repo_{t-i} + \sum_{i=0}^2 \beta_{4i} \Delta \log m2x_{t-i} + \sum_{i=0}^2 \beta_{5i} \Delta \log cpi_{t-i} + \beta_6 ect_{-1} + e_{it}$$

որտեղ՝ cpi -ն ՍԳԻ-ն է, ner -ը՝ անվանական փոխարժեքը, gdp -ն ՀՆԱ-ն է, $repo$ -ն՝ քաղաքականության ռեպո տոկոսադրույթը, $m2x$ -ը՝ փողի լայն զանգվածը, և ect -ը՝ սխալի ուղղման գործակիցն է:

¹ Dabla-Norris E., Floerkemeier H., "Transmission Mechanisms of Monetary Policy in Armenia: Evidence from VAR Analysis", IMF working paper, WP/06/248, 2006, p. 13.

Բոլոր փոփոխականներն արտահայտված են լոգարիթմներով և առաջին տարբերությամբ: Մոդելում cpi -ն օգտագործվում է որպես ներքին գների ցուցանիշ, ner -ը փոխարժեքի ցուցանիշն է, gdp -ն օգտագործվում է արտացոլելու թողարկման ճեղքվածքը և տնտեսության մեջ գնաճային ճնշումները, $repo$ -ն քաղաքականության տոկոսադրույքն է: Անկախ փոփոխականների և սպառողական գների միջև կարճաժամկետ էլաստիկությունն արտահայտվում է β_{1i} գործակցի միջոցով:

Լագերի երկարությունը որոշվել է Շվարցի տեղեկատվական կրիտերիայի (SIC – Schwartz Information Criteria) և R^2 վիճակագրի միջոցով, համաձայն որոնց երկրորդ կարգի լագի ընտրությունն առավել համապատասխան է մոդելին:

Փոխանցման էֆեկտի գնահատումն ազդեցացված կամ ընդհանուր սպառողական գների ինդեքսի վրա:

Համաձայն ընդհանուր ՍԳԻ-ի համար VECM մոդելի արդյունքների՝ երկարաժամկետ կոինտեգրացիոն մոդելի արդյունքները հետևյալն են.

Աղյուսակ 1

Ընդհանուր ՍԳԻ-ի համար VECM մոդելի հավասարման գործակիցներ

D_AGGR_CPI_D11	D_GDP	D_M2X	D_NER	D_REPO_
Գործակից	1.592244	0.112540	1.736909	0.511848
Ստանդարտ շեղում	(0.18770)	(1.58189)	(1.60077)	(9.70034)

ՀՆԱ-ի ավելացումը մեկ միավորով հանգեցնում է 1.59 միավորով սպառողական գների ինդեքսի բարձրացման, փողի զանգվածի ավելացումը նպաստում է 0.11 միավորով ՍԳԻ ավելացման, փոխարժեքի մեկ միավորով փոփոխությունը՝ 1.73 միավորով սպառողական գների ինդեքսի փոփոխության, և վերջապես քաղաքականության տոկոսադրույքի մեկ միավորով փոփոխությունը բերում է ՍԳԻ-ի 0.51 միավորով փոփոխության: Մոդելի արդյունքների համաձայն՝ բոլոր գործակիցները դրական են: Այսպիսով, երկարաժամկետում ընդհանուր ՍԳԻ-ի վրա առավելագույն ազդեցություն ունի փոխարժեքի և ՀՆԱ-ի փոփոխությունը, մինչդեռ առավել ցածր ազդեցությամբ են օժտված փողի զանգվածի և ռեպո տոկոսադրույքի փոփոխությունները:

Կարճաժամկետ կախվածության վերլուծությունն իրականացվել է Ուոլդի թեսթի (Wald test) միջոցով: Հավանականության P արժեքների համաձայն՝ կարճաժամկետ փոխկապվածություն ընդհանուր ՍԳԻ և մոդելի անկախ փոփոխականների միջև գոյություն ունի փողի զանգվածի և էկզոգեն փոփոխականներից ԱՄՆ պահուստային համակարգի տոկոսադրույքի միջև:

Աղյուսակ 2

Ընդհանուր ՍԳԻ անկախ փոփոխականների կարճաժամկետ փոխկապվածության թեսթ

D_AGGR_CPI_D11	D_M2X	D_FEDRATE
Գործակից	0.139613	-0.399506
Ստանդարտ շեղում	(0.092757)	(0.150534)

Այսպիսով, մոդելի եզրակացությունն այն է, որ անկախ փոփոխականների և ընդհանուր ՍԳԻ-ի միջև գոյություն ունի երկարաժամկետ և կարճաժամկետ պատճառահետևանքային կապ: Ընդ որում, երկարաժամկետում ընդհանուր ՍԳԻ-ի վրա առավելագույն ազդեցություն ունի փոխարժեքի և ՀՆԱ-ի փոփոխությունը, մինչդեռ կարճաժամկետում՝ փողի զանգվածը և էկզոգեն փոփոխականներից ԱՄՆ-ի պահուստային համակարգի տոկոսադրույքը:


Համաձայն վերլուծության արդյունքների՝ դրամավարկային փոխանցումային մեխանիզմի առավել գործուն ուղին փողի ազդեցատների ($m2x$) ուղին է: Քաղաքականության մնացած բոլոր գործիքների՝ անվանական ՀՆԱ (gdp), ռեպո տոկոսադրույք ($repo$), փոխարժեք (ner), գործակիցները վիճակագրորեն նշանակալի չեն: ՀՆԱ-ի վրա ընտրված փոփոխականներից որևէ մեկը էական ազդեցություն չունի, մինչդեռ փոխարժեքի վրա առավել էական ազդեցություն ունեն ՀՆԱ-ն և փողի զանգվածը: Անվանական փոխարժեքը, թեև ոչ ուղղակիորեն փողի լայն զանգվածի

միջոցով, սակայն եական ազդեցություն ունի գների մակարդակի վրա: Քաղաքականության մյուս գործիքները տոկոսադրույքի միջոցով որևէ ազդեցություն չունեն ՍԳԻ-ի վրա, մինչդեռ ՍԳԻ-ն ինքն ազդում է տոկոսադրույքի մակարդակի ձևավորման վրա սպասումների միջոցով:

Փոխանցման արագության և մասշտաբները գնահատելու համար հաջորդ քայլով գնահատվել են իմպուլս-պատասխան ֆունկցիաները (IRF): Ստորև, ըստ հաջորդականության, ներկայացված են ՍԳԻ-ի, փողի զանգվածի, ՀՆԱ-ի, անվանական փոխարժեքի և ռեպո տոկոսադրույքի իմպուլս-պատասխան ֆունկցիաները էնդոգեն փոփոխականների մեկ ստանդարտ շեղմանը: Փոփոխականների հաջորդականությունը ներկայացված է Խոլեսկու ճշգրտման (Cholesky dof adjustment) մոտեցման համաձայն:

Գծապատկեր 2

Իմպուլս-պատասխան ֆունկցիաների գրաֆիկները



Համաձայն IRF գրաֆիկների՝ ՍԳԻ փոփոխությունը ՀՆԱ մեկ ստանդարտ շեղում շոկին սկսվում է երկրորդ ամսից, ռեպո տոկոսադրույքի փոփոխությանը ՍԳԻ արձագանքը տեղի է ունենում առաջին ամսում, փոխարժեքի ազդեցությունը ՍԳԻ վրա դիտվում է շուրջ տեղի ունենալուց հետո երկու ամիս անց, և փողի զանգվածի փոփոխության ազդեցությունը ՍԳԻ վրա դրսևորվում է երկրորդ ամսում:

Վերլուծության ամփոփ արդյունքները ներկայացված են հետևյալ աղյուսակում (տե՛ս աղյուսակ 3).

Աղյուսակ 3

ՍԳԻ տնտեսաչափական մոդելավորումը

N	Ժամանակային միջակայք	M2X	GDP	NER	REPO	Դիագնոստիկ վիճակագրեր
1	Մոդել (2004-2008)	-/+	-	-	-	$R^2=38,2\%$, $DW=2,1$
2	Մոդել (2009-2014)	+	-	+	-	$R^2=63,4\%$, $DW= 1,4$
3	Մոդել (2004-2014)	+	-	-/+	-	$R^2=25,9\%$, $DW= 2,0$

Այսպիսով, ընդհանուր ՍԳԻ համար ԴՎՔ փոխանցումային մեխանիզմի վերլուծության արդյունքները վկայում են երկարաժամկետ և կարճաժամկետ կտրվածքում փողի ազդեցատների ուղու գործողության արդյունավետության մասին: Ողջ դիտարկվող ժամանակահատվածի համար երկարաժամկետում գործում է նաև փոխարժեքի ուղին, իսկ 2009-2014թթ. ընտրանքի համար փոխարժեքի փոխանցման ուղին արդյունավետ է նաև կարճաժամկետում: ՀՆԱ և ռեպո տոկոսադրույքի ուղին լիովին բացակայում է երկարաժամկետ կտրվածքում բոլոր մոդելների դեպքում:

**ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ
ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ**

ՆԱԻՐԱ ԴԵՐԶՅԱՆ, *ասպիրանտ*

*Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան*

Համառոտագիր

Դրամավարկային քաղաքականության արդյունավետության և փոխանցման մեխանիզմի ազդեցության գնահատումը Հայաստանում մակրոտնտեսական և ֆինանսական կայունության վրա անհնար է առանց փոխանցումային մեխանիզմի մակրոտնտեսական մոդելի վերլուծության: Հոդվածի արդյունքները վեկտորային սխալների ուղղման մոդելի (VECM) հիման վրա 2004-2014թթ. ժամանակային շարքերի համար երկարաժամկետ և կարճաժամկետ կտրվածքում վկայում են փողի ազդեցատների, իսկ երկարաժամկետում նաև փոխարժեքի ուղիների արդյունավետության մասին: ՀՆԱ և ռեպո տոկոսադրույքի ուղին լիովին բացակայում է երկարաժամկետ կտրվածքում բոլոր մոդելների համար:

Բանալի բառեր. *դրամական քաղաքականություն, արդյունավետություն, փոխանցումային մեխանիզմ, գնաճ, փողի ազդեցատներ, փոխարժեք:*

**ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ПЕРЕДАТОЧНОГО МЕХАНИЗМА ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ
ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

НАИРА ДЕРЦЯН, *аспирант*

*Армянский государственный
экономический университет*

Аннотация

Эффективность денежно-кредитной политики и оценка воздействия передаточного механизма на макроэкономическую и финансовую стабильность в Армении невозможны без оценки макроэкономической модели трансмиссионного механизма. Результаты данного исследования, основанного на методологии модели векторной коррекции ошибок (VECM) анализа временных рядов с 2004 до 2014 года, показывают, что наиболее эффективным является канал денежных агрегатов в долгосрочной и краткосрочной перспективе, а также канал валютного курса в долгосрочной перспективе. Каналы ВВП и процентной ставки неэффективны для всех моделей в долгосрочной перспективе.

Ключевые слова: *денежно-кредитная политика, эффективность, передаточный механизм, инфляция, денежные агрегаты, валютный курс.*

**THE ASSESSMENT OF EFFICIENCY OF CHANNELS OF TRANSMISSION OF MONETARY POLICY
IN THE REPUBLIC OF ARMENIA**

NAIRA DERDZYAN, *Ph.D. student*

Armenian State University of Economics

Abstract

The assessment of the impact of effectiveness and channels of transmission of monetary policy on the macroeconomic and financial stability in Armenia is impossible without the analysis of transmission channels in the macroeconomic model. Based on the analysis of vector error correction model (VECM) results for the period 2004-2014 prove the efficiency of money aggregates channel over the long- and short-run, and exchange rate channel over the long-run. GDP and repo rates channel prove to be inefficient over the long-run for all models.

Keywords: *Monetary policy, effectiveness, transmission mechanism, inflation, money aggregates, exchange rate*

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներն են տնտեսության զարգացման խթանումը, զբաղվածության ապահովումը, ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացումը, կենսաթոշակառուների սոցիալական ապահովության վիճակի բարելավումը և այլն: Նշված խնդիրների լուծման հաջողությունը հիմնականում պայմանավորված է պետության կողմից իրականացվող տնտեսական և սոցիալական քաղաքականության արդյունավետությամբ:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը¹: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Սեփականության իրավունքը խթանում է մասնավոր բիզնեսի զարգացումը, ինչը նպաստում է տնտեսության աշխուժացմանը և զբաղվածության ապահովմանը: Վերջինս էլ իր հերթին պայմանավորում է հասարակության անդամների արժանապատիվ կյանքի ապահովումը: ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք²: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրացման համար:

Հասարակության խոցելի մասը կազմող անձանց սոցիալական ապահովության վիճակի բարելավումը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդանության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք³: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

Ազգաբնակչության սոցիալական ապահովության հարցում մեծ դերակատարում ունեն կենսաթոշակները: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կենսաթոշակների վճարման հարցում ֆինանսական անկայունության իրավիճակում հայտնված երկրներն առաջացած խնդիրները լուծում են երեք պարտադիր անցումներ (տրանսֆորմացիաներ) կատարելու միջոցով⁴.

1. սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային բաշխողական համակարգից անցում դեպի «ինքնաֆինանսավորվող» կուտակային համակարգ:
2. Բանաձևերի հիման վրա հաշվարկվող և քաղաքական որոշումներով «սահմանվող կենսաթոշակի» (ՍԿ) մոդելից անցում դեպի իրական եկամուտների հիման վրա «սահմանված վճարների» (ՍՎ) մոդել:
3. Պետության կողմից ուղղակիորեն կառավարվող կենսաթոշակային համակարգից անցում դեպի պետության կողմից կարգավորվող և վերահսկվող մասնավոր կենսաթոշակային համակարգ:

Ինչպես հայտնի է, սոցիալական աջակցության կարիք ունեն հատկապես մեծահասակները (կենսաթոշակառուները), քանի որ այդ տարիքում զգալիորեն սահմանափակվում է եկամուտների ավելացման հնարավորությունը: Հայաստանում կենսաթոշակառուները (63 և ավելի տարիք ունեցողները) կազմում են բնակչության մոտ 11,2 տոկոսը: 80 և ավելի տարիք ունեցող անձանց թիվը կազմում է հանրապետության բնակչության ընդհանուր թվի մոտ 1,6%-ը կամ մոտ 52,0 հազ.մարդ: 65 տարեկան և բարձր տարիքային խմբում կանայք կազմում են 60,7%, իսկ տղամարդիկ՝ 39,3%: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանխատեսման հա-

¹ <http://www.concourt.am/armenian/constitutions/>
² <http://www.concourt.am/armenian/constitutions/>
³ <http://www.concourt.am/armenian/constitutions/>
⁴ <http://www.gov.am/files/library/75.pdf>

մածայն՝ 2018թ. կենսաթոշակառուների թվաքանակը կգերազանցի 12 տոկոսը և կկազմի 13,3 տոկոս, իսկ 2050 թ.՝ 25,7 տոկոս¹: Մինչդեռ, եթե կենսաթոշակառուների թիվն ընդհանուր բնակչության կազմում գերազանցում է 12 տոկոսը, տվյալ հասարակությունը համարվում է ծերացող:

Այս պարագայում մեծ դերակատարում ունի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը², համաձայն որի Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգը ներառում է.

1) **Պետական կենսաթոշակային ապահովությանը**, պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին և կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին առնչվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենքներով: Պետական կենսաթոշակային ապահովությունը (պետական կենսաթոշակային համակարգը) պետական բյուջեի միջոցների հաշվին օրենքով սահմանված դեպքերում և կարգով անձանց ապահովում է պետական կենսաթոշակով:

2) **Կուտակային բաղադրիչը** օրենքով սահմանված կուտակային հատկացումների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին անձանց տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու դեպքում ապահովում է կուտակային կենսաթոշակով:

3) **Կամավոր կենսաթոշակային բաղադրիչը** օրենքով սահմանված կամավոր կենսաթոշակային վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների կամ ապահովագրական վճարների հաշվին անձանց տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու դեպքում ապահովում է լրացուցիչ կենսաթոշակով (եկամտով):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է պետական կենսաթոշակային ապահովության կառավարմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը: Քաղաքացիների առանձին խմբերի համար Հայաստանի Հանրապետության օրենքով կարող են սահմանվել պետական կենսաթոշակային ապահովության այլ պայմաններ:

Ազգաբնակչության սոցիալական ապահովության համակարգում իր ուրույն տեղն ունի «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը³, որի նպատակը Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեության ընթացքում սոցիալական վճար կատարած անձանց կենսաթոշակային տարիքում, պետական կենսաթոշակից բացի, կենսաթոշակային լրացուցիչ եկամուտների ստացման հնարավորության ստեղծումն է՝ ապահովելով կատարված սոցիալական վճարների և ստացվող կենսաթոշակի չափի միջև ուղղակի կապը, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով սոցիալական վճար կատարողին ազդելու կուտակային կենսաթոշակների չափի վրա՝ օրենքով սահմանված կարգով ընտրելով իր կուտակած միջոցները կառավարող անձին և այդ միջոցների կառավարման քաղաքականությունը: «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է կուտակային բաղադրիչի և կամավոր կենսաթոշակային բաղադրիչի կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները, սահմանում է սոցիալական վճար հասկացությունը, սոցիալական վճարներ կատարողների շրջանակը, սոցիալական վճարներ կատարելու կարգը, Հայաստանի Հանրապետության կողմից սոցիալական վճարներ կատարած անձանց անվանք բացված կենսաթոշակային հաշիվներին կուտակային հատկացումներ փոխանցելու պայմաններն ու կարգը, մասնակիցների ռեեստրը վարողի, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների, կենսաթոշակային ֆոնդի պահառուի ու հաշվի օպերատորների գործառույթները, կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների իրավունքները և պարտականությունները, կենսաթոշակային հաշիվների վարումը, կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրումը, կուտակային կենսաթոշակների տեսակները և դրանց վճարումը, սոցիալական վճարներ կատարած անձանց կուտակային կենսաթոշակի վճարման երաշխավորման կառուցակարգերը, պատասխանատվությունը օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և այլ իրավական ակտերի պահանջների խախտման համար, ինչպես նաև կարգավորում է կուտակային կենսաթոշակների հետ կապված այլ հարաբերություններ:

¹ <http://www.mlsa.am/up/strategy.doc>

² «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1:

³ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սոցիալական վճարներ են կատարում¹.

- 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, նոտարները, անհատ ձեռնարկատերերը:
- Մինչև 1974 թվականը ծնված վարձու աշխատողները, նոտարները, անհատ ձեռնարկատերերը, եթե օրենքով սահմանված կարգով ներկայացրել են կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմում:
- Ինքնազբաղված անձինք՝ անկախ տարիքից, ովքեր օրենքով սահմանված կարգով ներկայացրել են կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմում կամ երբևիցե կատարել են սոցիալական վճար:

Անձը չի կարող վերանայել կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա սոցիալական վճար կատարելու պարտավորություն ստանձնելու որոշումը: Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք սոցիալական վճարները կատարում են ընդհանուր հիմունքներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Անձը դադարում է սոցիալական վճար կատարել, եթե.

- լրացել է նրա կենսաթոշակային տարիքը, և նա հարկային մարմին է ներկայացրել դիմում սոցիալական վճար կատարելը դադարեցնելու վերաբերյալ:
- Անձը օրենքով նախատեսված դեպքերում մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնում է դիմում կուտակային կենսաթոշակ ստանալու վերաբերյալ:

Անձը, որպես ինքնազբաղված անձ, ստացված եկամուտներից սոցիալական վճար կատարում է կամավորության սկզբունքով, օրենքով սահմանված կարգով:

Սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտներն են.

1. աշխատավարձը,
2. ձեռնարկատիրական եկամուտը,
3. որպես ինքնազբաղված անձ՝ ստացված եկամուտները:

Օրենքով սահմանված անձինք մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը սոցիալական վճարը կատարում են հետևյալ չափերով².

1. աշխատավարձի՝

- 5 տոկոսի չափով, եթե աշխատավարձի ամսական չափը չի գերազանցում 500 000 դրամը,
- 10 տոկոսի և 25 000 դրամի տարբերության չափով, եթե աշխատավարձի ամսական չափը գերազանցում է 500 000 դրամը:

2. ձեռնարկատիրական եկամտի (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքի)՝

- 5 տոկոսի չափով, եթե այդ եկամտի տարեկան չափը չի գերազանցում 6 000 000 դրամը,
- 10 տոկոսի և 300 000 դրամի տարբերության չափով, եթե այդ եկամտի տարեկան չափը գերազանցում է 6 000 000 դրամը:

3. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով ստացված եկամուտներից՝ ամսական 5000 դրամի չափով.

4. որպես ինքնազբաղված անձ՝ ստացված եկամուտների 5 տոկոսի չափով, անկախ եկամտի չափից:

Վարձու աշխատողի սոցիալական վճարները հաշվարկելու և փոխանցելու (գանձելու) պարտականությունը կրում են գործատուները՝ որպես հարկային գործակալ³:

Ինչպես հայտնի է, ՀՀ-ում ներդրվել է բազմաստիճան կենսաթոշակային համակարգ, որը գործող բաշխողական բաղադրիչից բացի, ներառում է ևս երկու կենսաթոշակային բաղա-

¹ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1:

² «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1:

³ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1:

դրիչներ՝ պարտադիր կուտակային և կամավոր կուտակային: Հայաստանի Հանրապետությունում պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն իրականացվում է Amundi-ACBA Asset Management և C-QUADRAT Ampega Asset Management Armenia կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից, որոնք կենսաթոշակային կուտակային ռեսուրսները տեղաբաշխում են կայուն եկամտային, պահպանողական և հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդերում: Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումը ՀՀ-ում իրականացվում է Capital Asett Management ընկերության կողմից, որը կենսաթոշակային կուտակային ռեսուրսները տեղաբաշխում է կամավոր 1) և կամավոր 2) կենսաթոշակային ֆոնդերում¹:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունները պետք է մատչելի լինեն յուրաքանչյուրի համար: Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է մշտապես ունենալ գործող ինտերնետային կայք և այդ կայքում առնվազն հայերենով հրապարակել իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի վերաբերյալ տեղեկությունները:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները կարող են ներդրվել բացառապես «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև տվյալ ֆոնդի կանոնների պահանջներին համապատասխան: Նպատակ ունենալով առավելագույնի հասցնել ներդրումների արդյունավետությունը՝ հոգուտ կուտակային բաղադրիչի մասնակիցների, պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումները պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա².

1. ակտիվների ապահովություն և եկամտաբերություն,
2. ռիսկերի դիվերսիֆիկացիա,
3. համարժեք իրացվելիության ապահովում:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ներդնել ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որը հնարավորություն կտա ցանկացած ժամանակ որոշելու, գնահատելու և հսկելու բոլոր էական ռիսկերը, ինչպես նաև այդ ռիսկերի փոխադարձ կախվածությունը: Ռիսկերի կառավարման համակարգը պետք է համաչափ լինի կառավարչի գործունեությանը և կառավարվող ֆոնդերի բնույթին, ծավալներին և բարդությանը՝ արտացոլելով կառավարչի գործունեության շրջանակները:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում: Արտասահմանում պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝

1. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կամ Եվրոպական միության (ԵՄ) անդամ-պետությունների բանկային համակարգը վերահսկող լիազորված մարմնի կողմից արտոնագրված և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ավանդներում և բանկային հաշիվներում,
2. ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ-պետությունների, ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ-պետությունների Կենտրոնական բանկերի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,
3. ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ-պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթերում,
4. ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ-պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող ներդրումային ֆոնդերի փայերում (բաժնետոմսերում),
5. ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով:

Հայաստանի Հանրապետության տարածքում պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝

1. բանկային հաշիվներում և ավանդներում, եթե տվյալ բանկը անվճարունակության (սնանկության) գործընթացում չէ,
2. Հայաստանի Հանրապետության կամ Կենտրոնական բանկի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,
3. Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերում,

¹ <http://www.epension.am/am/funds>

² «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1:

4. այն ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում, որոնք վերահսկվում են Կենտրոնական բանկի կողմից,

5. ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով:

Հասկանալի է, որ ցանկալի կլիմի պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները ներդնել սեփական երկրում, ինչը տնտեսությանը հետագայում կարող է ապահովել «երկար փողերով»: Այս տեսակետն են հայտնել նաև Ռուսաստանի Դաշնության վարչապետ Դ. Մեդվեդևը և մի շարք այլ մասնագետներ՝ նշելով, որ տնտեսությունն իսկապես ֆինանսական ներարկումների կարիք ունի, ինչը կարող է ապահովվել կենսաթոշակային ֆոնդերի կողմից հավաքագրված միջոցների հաշվին, ուստի կենսաթոշակների կուտակային տարրը պետք է պահպանվի¹:

ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 28-ի [1059-Ն](#) որոշմամբ ստեղծվել է **«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն»** հիմնադրամը, որի խնդիրներն են²:

1. կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում խորհրդատվական և մասնագիտական աջակցության տրամադրումը:
2. Կենսաթոշակային բարեփոխումների հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը, կենսաթոշակային բարեփոխումների և բազմաստիճան կենսաթոշակային համակարգի վերաբերյալ տեղեկատվական և ուսուցողական նյութերի մշակումը, հրատարակումը և տարածումը:
3. Կենսաթոշակային բարեփոխումների և բազմաստիճան կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրային ուսուցման ծրագրերի մշակումն ու իրականացումը:
4. Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրային քննարկումներ կազմակերպելը:
5. Փոքր և միջին ձեռնարկությունների (գործատուների) կողմից անձնավորված հաշվետվությունները ներկայացնելու գործընթացին աջակցությունը:
6. Կուտակային բաղադրիչի մասնակիցների կողմից ակտիվների կառավարիչների և կենսաթոշակային ֆոնդերի ընտրությանն աջակցությունը:
7. Պետություն-մասնավոր հատված համագործակցության ներքո ներդրումային ծրագրերի իրականացմանն աջակցությունը:
8. Հետազոտությունների և գիտահետազոտական ծրագրերի իրականացումը:
9. «Թեժ գծի» ծառայության վարումը:
10. Բնակչության շրջանում համապատասխան հարցումների անցկացումը:
11. Իրականացվող ծրագրերի, միջոցառումների արդյունավետության գնահատման ուղղությամբ աշխատանքների իրականացումը և այլն:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումները և այդ ոլորտը կարգավորող օրենսդրությունը լուրջ հիմքեր են ապահովում պարտադիր և կամավոր կենսաթոշակային կուտակային ֆոնդերի միջոցների արդյունավետ կառավարման համար: Միաժամանակ պետք է նշել, որ աշխատող ազգաբնակչության մի մասը օբյեկտիվ պատճառներով դեռ պատրաստ չէ վճարումներ իրականացնելու կենսաթոշակային կուտակային ֆոնդերին, քանի որ ի վիճակի չէ հրաժարվելու ընթացիկ սպառումից՝ ապագայում ավելի մեծ չափով եկամուտներ ունենալու նպատակով: Հիշենք նաև, որ Ռուսաստանի Դաշնությունը, գիտակցելով նոր կենսաթոշակային համակարգի ներդրման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, սառեցրել է այս գործընթացը մինչև 2016թ.: Այս պարագայում, կարծում ենք, ցանկալի կլիմի ազգաբնակչության նշված հատվածի համար մշակել այնպիսի կուտակային մեխանիզմներ, որոնք միաժամանակ կբավարարեն ընդունելի կենսամակարդակի ապահովման և կենսաթոշակային համակարգի զարգացման պահանջները: Ընդհանուր առմամբ, իրականացվող բարեփոխումները համապատասխանում են ֆինանսական աշխարհի ժամանակակից մարտահրավերներին, և նրանց ճիշտ ժամանակին և ճիշտ ձևով իրականացման դեպքում հնարավոր է հասնել ցանկալի արդյունքների:

¹ <https://news.mail.ru/politics/21818983/?frommail=1>

² <http://www.ssss.am/arm/pension-reforms/>

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՂՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՍԷԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ, *դ. գ. թ.*

Մ Գ Ա Ա Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ-ում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հիմնախնդրին: Հաշվի առնելով ՀՀ-ում կենսաթոշակառուների թվաքանակի աստիճանական ավելացման միտումը՝ հոդվածում փորձ է արվել բացահայտելու կուտակային կենսաթոշակային համակարգի օրենսդրական կարգավորման միջոցով սոցիալական ապահովության վիճակի բարելավման հնարավորությունները: Հատուկ ուշադրություն է դարձվել կուտակային կենսաթոշակային համակարգի ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Քանի որ կենսաթոշակային համակարգի բարեփոխումն ունի կարևոր սոցիալական նշանակություն, ապա վերջինս պետք է գտնվի հասարակության անդամների և պետության մշտական ուշադրության կենտրոնում:

Բանալի բառեր. կենսաթոշակառուներ, կենսաթոշակային տարիք, բարեփոխում, օրենք, կենսաթոշակային համակարգ, կենսամակարդակ, բարեկեցություն, ազգաբնակչություն, պետություն, իրավունք, հասարակություն:

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ВНЕДРЕНИЯ НАКОПИТЕЛЬНОЙ ПЕНСИОННОЙ СИСТЕМЫ В РА

АРМИНЕ ЗАХАРЯН, *к.э.н.*

научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Настоящая статья посвящена проблеме внедрения накопительной пенсионной системы в РА. Учитывая тенденцию постепенного увеличения численности пенсионеров в РА, в статье сделана попытка выявления возможностей улучшения качества социального обеспечения посредством законодательного регулирования накопительной пенсионной системы. Особое внимание уделено повышению эффективности управления рисками накопительной пенсионной системы. Поскольку реформирование пенсионной системы имеет важное социальное значение, то им должны быть озабочены как члены общества, так и государство.

Ключевые слова: пенсионеры, реформа, закон, пенсионная система, уровень жизни, благосостояние, население, государство, право, общество.

LEGAL FRAMEWORK FOR INTRODUCING THE FUNDED PENSION SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA

ARMINE ZAKHARYAN, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article presents the issues related with the introduction of the funded pension systems in the Republic of Armenia. By taking into account the trend pattern of aging population (growing number of pensioners) in the Republic of Armenia, the article attempts to identify the possibilities of improving the state of social security by regulating the funded pension system (legal aspect). A special attention is paid to the social security issues of pensioners, raising efficiency and improving the management of risks of the funded pension system, and disclosure of relevant information on pensions fund managers. Since pension system reforms are of social importance, they need to be constantly monitored by the government and the general public.

Keywords: Pensioners, retirement age, reform, law, pension system, standard of living, well-being, the general public, state, right, population

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հասարակության սոցիալական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշը բնակչության կենսամակարդակն է՝ բնակչության ապահովվածությունն անհրաժեշտ նյութական բարիքների և ծառայությունների, դրանց սպառման ձեռք բերված մակարդակը, ինչպես նաև պահանջները (ողջամիտ) բավարարման մակարդակը:

Ժամանակակից աշխարհում բնակչության կենսամակարդակը ներառում է երեք հիմնական տարրեր՝ բնակչության բարեկեցություն, մարդկային կապիտալի կուտակում և մարդկային զարգացման մակարդակ: Այս առումով երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպատակաուղղված ծրագրերի մշակման համար կարևորագույն նշանակություն ունի հասարակության կենսագործունեության տարբեր կողմերը բնութագրող այնպիսի հասկացությունների բովանդակային և արժեքային վերլուծությունը, ինչպիսիք են մարդկանց «կենսակերպը», «բնակչության կենսամակարդակը», «կյանքի որակը», «բարեկեցությունը» և այլն:

Կենսակերպը հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող, մարդկանց կենսագործունեության որոշակի ձևերի ամբողջությունն է և ընկած է կենսամակարդակի և կյանքի որակի հիմքում: Կյանքի որակի բարելավման ու կենսամակարդակի բարձրացումը հասարակության զարգացման սոցիալական գերակա նպատակ է և պետության կողմից վարվող եկամուտների և աշխատավարձի քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Այդ նպատակին հասնելու կարևորագույն միջոցներն են ՀՆԱ աճը և վերջինիս մակրո և միկրոհարթություններում բաշխման մեխանիզմների կատարելագործումը: Անցումային շրջանում Հայաստանում կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացման հիմնախնդիրներից են զբաղվածության ապահովումը, բնակչության սոցիալական պաշտպանվածությունը և պայքարն աղքատության դեմ:

Կենսամակարդակը բնութագրում է մարդու պահանջները կառուցվածքը և դրանք բավարարելու հնարավորությունը: Կենսամակարդակի աճը պայմաններ է ստեղծում կյանքի որակը բարելավելու համար, որը չի սահմանափակվում ապրանքների և ծառայությունների սպառմամբ, այլ հանդես է գալիս որպես հասարակության զարգացման սոցիալ-տնտեսական արդյունքներն ընդհանրացնող բնութագրիչ՝ ներառելով բազմաթիվ ցուցանիշներ, ինչպես կյանքի սպասվելիք տևողությունը, հիվանդացության մակարդակը, աշխատանքի պայմանները, մարդու իրավունքների պաշտպանվածությունը և այլն: Կենսամակարդակի ուսումնասիրությունն իրականացվում է ողջ բնակչության, սոցիալական առանձին խմբերի և տնային տնտեսությունների կտրվածքով:

Պահանջները բավարարման աստիճանով պայմանավորված մարդկանց կենսամակարդակները կարող են տարբեր լինել: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է տարբերակել կենսամակարդակի հետևյալ չորս մակարդակները¹.

1. **բարեկեցություն** (համակողմանի զարգացումն ապահովող բարիքներից օգտվելու բավարար մակարդակ):
2. **Նորմալ մակարդակ** (ֆիզիկական և մտավոր ներուժի վերականգնումն ապահովող բարիքների գիտականորեն հիմնավորված նորմերով ռացիոնալ սպառման բնական մակարդակ):
3. **Աղքատության** (բարիքների սպառումը գտնվում է աշխատունակությունը պահպանելու մակարդակի վրա՝ որպես աշխատուժի վերականգնման նվազագույն սահման):
4. **Չբավորություն** (առկա է միայն բարիքների և ծառայությունների կենսաբանական չափանիշներով նվազագույն թույլատրելի գամբյուղը, որոնց սպառումը հնարավորություն է ընձեռում միայն պահպանելու կենսունակությունը):

¹ <http://www.sociologyzone.ru/sogos-967-1.html>

Բնակչության բարեկեցությունը նյութական և ոչ նյութական բարիքներով ապահովվածության մակարդակն է այն ստանդարտների կամ նորմերի համեմատությամբ, որոնք ընդունված են տվյալ հասարակությունում կամ սոցիալական խմբում: Հաշվի առնելով սոցիալական տարբերակվածությունը՝ բնակչության բարեկեցության ընդհանուր գնահատականը տալու համար օգտագործվում են մի շարք հիմնական ցուցանիշներ, ինչպես օրինակ՝ մեկ շնչի հաշվով եկամուտները, կապիտալ բարիքներով ապահովվածության և սպառման մակարդակները, ըստ եկամուտների և ծախսերի բնակչության բեռնաջվածության աստիճանը, կենսաապահովման նվազագույն մակարդակը և այլն:

Ինչպես հայտնի է, ընդհանուր բարեկեցությունը կախված է ոչ միայն սպառվող ապրանքների և ծառայությունների քանակից և գներից, այլ նաև քաղաքական գործոններից՝ ազատությունը և անվտանգությունը, քաղաքական իրավիճակի կայունության աստիճանը, հասարակության մեջ առկա տրամադրվածության բովանդակությունը, բնակչության ակնկալիքները և այլն: Ընդհանուր առմամբ, բնակչության կենսամակարդակի կարևորագույն կառուցակազմի բաղադրատարրերն են դրամական եկամուտները և սոցիալական ապահովությունը, նյութական բարիքների և ծառայությունների սպառումը, կյանքի պայմանները, ազատ ժամանակը:

Ներկայումս զարգացած երկրներում նկատվում է հարստության աճ, իսկ զարգացող (համեմատաբար հետամնաց) երկրներում՝ աղքատության աճ: Ընդ որում, աշխարհում ավելանում է աղքատ բնակչության մասը, և աճում է հարուստ երկրների միջև եկամուտների մակարդակների տարբերությունը: Աշխարհի 50 աղքատ երկրներում բնակչության մոտ 70 տոկոսն ապրում է աղքատության գծից ներքև՝ ունենալով մեկ օրում երկու դոլարից պակաս եկամուտ, այն դեպքում, երբ զարգացած երկրներում նման բնակչություն գոյություն չունի: Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի 10 տոկոս ամենաաղքատ բնակչության մեկ շնչի հաշվով միջին եկամուտը կազմում է 350-500 դոլար: Ձարգացած երկրների ամենաաղքատը նվաճումն այն է, որ նրանց հաջողվեց ավելացնել բնակչության միջին խավը մոտ 70 տոկոսով և կրճատել հարուստ և աղքատ բնակչության եկամուտների տարբերությունը 10 անգամ¹: Դա վկայում է զարգացած երկրների սոցիալական կողմնորոշվածության մասին: Միաժամանակ կազմավորվում են աճող կենսամակարդակով մի խումբ զարգացող երկրներ, որոնցից են՝ Չինաստանը, Հնդկաստանը, Սինգապուրը, Բրազիլիան, Արգենտինան և մի շարք այլ երկրներ:

Աշխարհի երկրների աղքատության և հարստության մակարդակը գնահատելու համար ՄԱԿ-ը օգտագործում է համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ) ցուցանիշը 1 շնչի հաշվով: Այս դասակարգումով առանձնացնում ենք հետևյալ խմբի երկրներ².

1. բարձր ՀԱԱ-ով (20-30 հազ. դոլար - 900 մլն մարդուն),
2. Միջին ՀԱԱ-ով (1-5 հազ. դոլար - 2700 մլն մարդուն),
3. Ցածր ՀԱԱ-ով (350-450 դոլար - 2400 մլն մարդուն):

Վերոբերյալ ցուցանիշներից երևում է, որ աշխարհի ժողովուրդների բարեկեցության միջև կա մեծ տարբերություն: Երկրագնդի 40% բնակչությունը գտնվում է աղքատության շեմին, քանի որ նույնիսկ ամբողջ ազգային արդյունքի հաշվով մեկ շնչին մեկ օրում ընկնում է մեկ դոլար: Ժողովրդագրության տեսակետից դա նշանակում է մարդկանց մեծ մասի ծայրահեղ գոյատևում, առանց դեղորայքի, բարեկեցիկ կյանքի, կրթության և մասնագիտական որակավորման: Այս ամենը վերաբերում է այն երկրներին, որոնք ապահովում են երկրագնդի բնակչության հիմնական աճը:

Անշուշտ, ազգաբնակչության կենսամակարդակի բարելավումը և աղքատության հաղթահարումը լուրջ խնդիրներ են նաև Հայաստանի Հանրապետության համար: Այս պարագայում բավականին անելիքներ ունեն ինչպես պետական կառավարման մարմինները, այնպես էլ ողջ հասարակությունը: ՀՀ ազգաբնակչության ներկայիս կենսամակարդակի մասին պատկերացում կարող ենք կազմել աղյուսակ 1-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ 2014թ. 2008թ. համեմատությամբ միջին ամսական անվանական աշխատավարձն ավելացել է 83714 դրամով (կամ 95.8%-ով), նվազագույն աշխա-

¹ http://www.iep.ru/files/text/policy/2012_5/akaev.pdf

² <http://www.ereport.ru/articles/mirecon/classif.htm>

տավարձը՝ 30000 դրամով (կամ 1.2 անգամ), նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը՝ 14442 դրամով (կամ 67.6%-ով), զբաղված բնակչության թվաքանակը՝ 35.7 հազար մարդով (կամ 3.2%-ով), ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով՝ 3.9 դոլարով (կամ 0.1%-ով), նվազագույն սպառողական զանբյուրի ամսական արժեքը մեկ շնչի հաշվով՝ 22865.6 դրամով (կամ 63%-ով) և աշխատավարձի բաժինը ՀՆԱ-ում՝ 19.4 տոկոսային կետով: Միաժամանակ համախառն ներքին արդյունքի իրական աճը նվազել է 3 տոկոսային կետով, գործազրկության մակարդակն աճել է 0.7 տոկոսային կետով, սպառողական գների ինդեքսը նվազել է 6 տոկոսային կետով, և բնակչության սոցիալական ապահովության մարմիններում հաշվառված կենսաթոշակառուների թվաքանակը նվազել է 60.7 հազար մարդով (կամ 11.6%-ով): Հուսանք, որ ապագայում այս ցուցանիշները կբարելավվեն, ինչը կնպաստի 2008թ.-ից սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը և ազգաբնակչության կենսամակարդակի որոշակի բարձրացմանը:

Աղյուսակ 1

ՀՀ-ում կենսամակարդակի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները (2008-2014թթ.)¹

N	Անվանումը	2008	2009	2010	2011	2012	2013	2014
1.	Միջին ամսական անվանական աշխատավարձը (դրամ)	87406	96019	102652	108092	140739	146524	171120
2.	Նվազագույն աշխատավարձի չափը (դրամ)	25000	30000	30000	32500	32 500	45 000	55000
3.	Նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը (դրամ)	21370	24520	27107	27062	29696	29 122	35812
4.	Սպառողական գների ինդեքս (%)	109.0	103.4	108.2	107.7	102.6	105.8	103.0
5.	Զբաղվածներ (հազար մարդ)	1117.6	1089.4	1188.0	1120.8	1166.5	1182.7	1153.3
6.	Գործազրկության մակարդակը %	16.4	18.7	19	18.4	16.0	15.4	17.1
7.	Համախառն ներքին արդյունքի իրական աճը %	6.9	-14.1	2.2	4.7	7.2	3.5	3.9
8.	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (դոլար)	3606.1	2666.1	2844.0	3363.2	3293.0	3452.0	3610.0
9.	Նվազագույն սպառողական զանբյուրի ամսական արժեքը մեկ շնչի հաշվով (դրամ)	36262.1	36262.1	35756.5	45736.8	41816.6	52038.5	59127.7
10	Աշխատավարձի բաժինը ՀՆԱ-ում %	32.9	40.0	42.3	38.5	49.2	48.7	52.3
11.	Բնակչության սոցիալական ապահովության մարմիններում հաշվառված կենսաթոշակառուների թվաքանակը (հազար մարդ)	523.8	522.8	520.3	509.3	508.1	517.7	463.1

Անշուշտ, ազգաբնակչության կենսամակարդակի բարելավումը յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից է: Հատկապես կարևոր է տարեցների կենսամակարդակի բարելավումը, քանի որ նրանց տարիքը և առողջությունը զգալիորեն սահմանափակում են եկամուտների ստացման հնարավորությունը: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում է պետության դերը կենսաթոշակառուների սոցիալական ապահովության գործում: Այժմ դիտարկենք ՀՀ կենսաթոշակառուներին վերաբերող վիճակագրական ընդհանուր տվյալները ստորև բերված աղյուսակ 2-ի միջոցով:

Ստորև բերված աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ 2014թ. կենսաթոշակառուների ընդհանուր թիվը կազմել է 512.505 հազար մարդ, որոնցից 59.9 տոկոսը կանայք են, իսկ 40.1 տոկոսը՝ տղամարդիկ: Այդ թվում աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակներ են ստացել կենսաթոշակառուների 88.6 տոկոսը, իսկ սոցիալական կենսաթոշակներ՝ 11.4 տոկոսը: Սոցիալական կենսաթոշակներ ստացողների գերակշիռ մասը կազմում են տղամարդիկ: 2014թ. զինվորական կենսաթոշակ են ստացել 5.185 հազար մարդ, որոնցից 43 տոկոսը կանայք են, իսկ 57 տոկոսը՝ տղամարդիկ: 2014թ. 2013թ. համեմատությամբ կենսաթոշակառուների թվաքանակը նվազել է 54.6 հազարով:

¹ www.armstat.am

ՀՀ կենսաթոշակային համակարգի հիմնական ցուցանիշները¹
(2014թ. առ 01.01)

N	Անվանումը	Կենսաթոշակառուների թիվը (հազ.մարդ)	Այդ թվում՝		Կենսաթոշակի չափը (ՀՀ դրամ)
			կանայք	տղամարդիկ	
1	Ընդամենը կենսաթոշակներ (առանց գինվորական կենսաթոշակների)	512.505	306.856	205.649	29.114
	<i>որից՝</i>				
2	Աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակներ	453.917	278.788	175.129	30.962
3	Սոցիալական կենսաթոշակներ	58.588	28.068	30.520	14.799
4.	Զինվորական կենսաթոշակներ	5.185	2.227	2.958	16.517

Ստորև բերված աղյուսակ 3-ի միջոցով փորձենք անդրադառնալ ազգաբնակչության թվաքանակին և սեռատարիքային կազմին՝ հետագա տարիների կենսաթոշակառուների մոտավոր թվաքանակը կանխատեսելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությունում առկա և մշտական բնակչության (քաղաքային, գյուղական) թվաքանակը և սեռատարիքային կազմը²

Տարիքը (քաղաք, գյուղ)	Առկա բնակչություն			Մշտական բնակչություն		
	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին
ՀՀ	2 871 771	1 346 729	1 525 042	3 018 854	1 448 052	1 570 802
0-4	202 927	108 050	94 877	207 572	110 565	97 007
5-9	176 344	94 431	81 913	179 929	96 429	83 500
10-14	175 109	93 554	81 555	178 637	95 458	83 179
15-19	226 357	114 412	111 945	233 075	117 938	115 137
20-24	272 527	130 413	142 114	292 234	143 897	148 337
25-29	250 649	116 887	133 762	271 929	132 109	139 820
30-34	206 619	96 125	110 494	223 005	108 114	114 891
35-39	174 645	79 741	94 904	187 421	89 073	98 348
40-44	164 666	73 338	91 328	176 964	82 502	94 462
45-49	196 677	87 022	109 655	211 060	98 064	112 996
50-54	220 349	98 537	121 812	234 532	109 294	125 238
55-59	169 462	75 240	94 222	177 758	80 989	96 769
60-64	123 758	53 847	69 911	127 599	56 189	71 410
65-69	64 068	27 364	36 704	65 373	28 020	37 353
70-74	105 994	43 307	62 687	107 678	44 041	63 637
75-79	74 205	30 271	43 934	75 377	30 734	44 643
80-84	48 045	18 355	29 690	48 906	18 662	30 244
85+	19 370	5 835	13 535	19 805	5 974	13 831

Աղյուսակ 3-ում բերված են 2011թ. մարդահամարի արդյունքները, որոնց համաձայն ՀՀ առկա բնակչությունը 2 871 771 մարդ է, որոնցից 46.9 տոկոսը՝ տղամարդիկ, իսկ 53.1 տոկոսը՝ կանայք: Մշտական բնակչությունը կազմել է 3 018 854 մարդ, որոնցից 48 տոկոսը տղամարդիկ են, իսկ 52 տոկոսը՝ կանայք: Հաշվի առնելով վերջին տարիների արտագաղթը՝ կարծում ենք՝ ճիշտ կլինի անցկացնել նոր մարդահամար, որպեսզի ունենանք ազգաբնակչության թվաքանակի և սեռատարիքային կազմի ավելի հստակ պատկեր, որի հիման վրա կարող ենք ավելի ճշգրիտ հաշվարկներ և կանխատեսումներ իրականացնել: Այնուամենայնիվ, ինչպես տեսնում ենք, մոտակա տարիներին կենսաթոշակի անցնող՝ 60-64, 55-59 և 50-54 տարիքային միջակայքում գտնվող մարդկանց շարքում կանանց թվաքանակը գերազանցում է տղամարդկանց


¹ http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=119&code_id=608
² <http://armstat.am/file/doc/99478228.pdf>

թվաքանակին: Մասնավորապես, 60-64, 55-59 և 50-54 տարիքային միջակայքում տղամարդկանց թվաքանակը կազմել է համապատասխանաբար 43.5, 44.4 և 44.7 տոկոս, իսկ կանանցը՝ 56.5, 55.6 և 55.3 տոկոս: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ կանանց կյանքի միջին տևողությունն ավելի երկար է, քան տղամարդկանցը, կարող ենք նշել, որ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այս գործոնի ազդեցությունը կենսաթոշակառուների սոցիալական ապահովության վրա:

Ստորև բերվող գծապատկերի միջոցով ներկայացնենք նաև տվյալներ ազգաբնակչության կյանքի միջին տևողության վերաբերյալ:

Գծապատկեր 1

ՀՀ ազգաբնակչության կյանքի միջին տևողությունը¹ (2000-2014թթ.)



Ինչպես վկայում են վերևում բերված աղյուսակ 3-ի և գծապատկեր 1-ի տվյալները տարեց-տարի ավելանում է մարդկանց կյանքի միջին տևողությունը, և 2014թ. այն կազմել է 75: Կանանց կյանքի միջին տևողությունը կազմել է 77.9, իսկ տղամարդկանցը՝ 71.5 տարի: ԱՊՀ երկրների շարքում Հայաստանի բնակչության կյանքի միջին տևողության ցուցանիշը լավագույններից մեկն է²: Կարծում ենք, որ ապագայում մարդկանց կյանքի միջին տևողության աճը նույնպես կապահպանվի:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք նշել, որ ՀՀ կենսաթոշակառուների կենսամակարդակն իսկապես բարելավման կարիք ունի, և հասարակությունն ու պետությունը լուրջ անելիքներ ունեն այս գործում: Ասվածը հիմնավորելու համար նշենք, որ 2014թ. նվազագույն սպառողական զանբյուրի ամսական արժեքը մեկ շնչի հաշվով կազմել է 59127.7 դրամ, իսկ նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը՝ 35812 դրամ: Ինչպես տեսնում ենք, առկա է 23315.7 դրամի կամ 60.6 տոկոսի տարբերություն, ինչը բացասաբար է ազդում կենսաթոշակառուների կենսամակարդակի վրա: Այս հիմնախնդրի լուծումը սերտորեն կապված է ինչպես կենսաթոշակային համակարգի բարեփոխումների, տնտեսության զարգացման խթանման, այնպես էլ ստվերային տնտեսության ծավալների կրճատման միջոցով պետական բյուջեի եկամուտների ավելացման հետ:

¹ <http://www.armstat.am/am/?nid=126&id=11012>
² <http://www.panorama.am/am/health/2014/12/25/armen-muradyan2/?sw>

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ, *դ. գ. թ.*

ՄԳԱԱ Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ-ում կենսաթոշակառուների կենսամակարդակի բարելավման հիմնախնդրին: Հաշվի առնելով ՀՀ-ում կենսաթոշակառուների թվաքանակի աստիճանական ավելացման միտումը՝ հոդվածում փորձ է արվել բացահայտելու հետագա տարիներին կենսաթոշակի անցնողների մոտավոր թվաքանակը: Հատուկ ուշադրություն է դարձվել կենսամակարդակի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշներին, ազգաբնակչության սեռատարիքային կազմին և կյանքի միջին տևողությանը: Քանի որ կենսաթոշակառուների կենսամակարդակի բարելավումն ունի կարևոր սոցիալական նշանակություն, ապա վերջինս պետք է գտնվի հասարակության անդամների և պետության մշտական ուշադրության կենտրոնում:

Բանալի բառեր. կենսաթոշակառուներ, կենսաթոշակային տարիք, կյանքի միջին տևողություն, կենսաթոշակային համակարգ, կենսամակարդակ, կենսամակարդակի բարելավում, աղքատություն, բարեկեցություն, ազգաբնակչություն, պետություն, հասարակություն:

ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ УРОВНЯ ЖИЗНИ ПЕНСИОНЕРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АРМИНЕ ЗАХАРЯН, *к.э.н.*

научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА

Аннотация

Настоящая статья посвящена проблеме повышения уровня жизни пенсионеров в РА. Учитывая тенденцию постепенного увеличения численности пенсионеров в РА, в статье сделана попытка выявления приблизительной численности пенсионеров в последующие годы. Особое внимание уделено основным социально-экономическим показателям уровня жизни, возрастно-половой структуре и средней продолжительности жизни населения. Поскольку повышение уровня жизни пенсионеров имеет важное социальное значение, то им должны быть озабочены как члены общества, так и государство.

Ключевые слова: пенсионеры, пенсионный возраст, средняя продолжительность жизни, пенсионная система, уровень жизни, повышение уровня жизни, бедность, благосостояние, население, государство, общество.

ISSUES ON IMPROVING THE WELL-BEING OF PENSIONERS IN THE REPUBLIC OF ARMENIA

ARMINE ZAKHARYAN, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article presents the issues of improving standards of living of pensioners in the Republic of Armenia. By taking into account the trend pattern of aging population (growing number of pensioners), the article attempts to identify the approximate number of people to be eligible to receive pension (social pensioners and retirees). Specifically, socio-economic indicators of pensioners, distribution of the population by age and gender, and life expectancy are discussed by the author. Since improving the living standards of pensioners is of social importance, this process needs to be constantly monitored by the government and the general public.

Keywords: Pensioners, retirement age, life expectancy, pension system, standard of living, improvement of standards of living, poverty, well-being, the general public, state, population.

ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տնտեսական աճի ապահովման գործընթացում իր էությունը կարևորվում է ներդրումային գործունեությունը, որի վերաբերյալ կան տարբեր հեղինակների առանձին տեսակետներ: Այսպես օրինակ, զբաղվածության մակարդակի, տնտեսական ազատության, եկամուտների արդարացի բաշխման, վճարային հաշվեկշռի բարելավման և խնդիրներ կարևորել են հայտնի տնտեսագետներ Կ.Մակկոնելլին, Ս.Բրյուն¹:

Հայրենական գրականության մեջ ներդրումները բնորոշվում են որպես շահույթ կամ սոցիալական արդյունք ստանալու նպատակով ձեռնարկատիրության ոլորտում կատարվող երկարաժամկետ ծախսեր, որոնք կարող են իրագործվել ֆինանսական (փող, արժեթղթեր), գույքային (շինություններ, սարքավորումներ, մեքենաներ) և մտավոր (արտոնագիր, լիցենզիա) եղանակներով²: Այսպիսի մոտեցումները տիրապետող են մասնագիտական գրականության մեջ՝ անկախ հեղինակի տնտեսագիտական դպրոցի պատկանելությունից:

Շատ տնտեսագետներ են փորձել բացահայտել ներդրում հասկացության էությունը, սակայն այն բավականին լայն հասկացություն է և հնարավոր չէ միանշանակ սահմանել: Ըստ Ջ.Բոդիի. «Ներդրումները ներկա ժամանակում փողի և այլ միջոցների ծախսում են՝ ապագայում ակնկալելով եկամուտների ստացում»³: Մինչդեռ, ըստ Ա.Մարկոսյանի. «Ներդրումները լայն իմաստով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող դրամական, գույքային, մտավոր արժեքներն են, որոնք ուղղվում են նոր տնտեսավարող սուբյեկտների ստեղծմանը, գոյություն ունեցողների վերակառուցմանն ու տեխնիկական վերազինմանը, անշարժ գույքի, բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերմանը՝ շահույթի կամ այլ դրամական արդյունքի ստացման նպատակով»⁴: Իսկ ֆինանսների տեսության մեջ ներդրումներ ասելով հասկանում են իրական կամ ֆինանսական ակտիվների ձեռքբերումը, այսինքն՝ կատարել ծախսեր այսօր, ապագայում եկամուտ ստանալու ակնկալիք⁵: Այս ամենը ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ «Ներդրումները ֆինանսավորման կարևոր աղբյուր են հանդիսանում տնտեսության կայուն զարգացման ու բարձր տեմպերով աճ ապահովելու համար»: Ահա այս սահմանումից էլ բխում են ներդրումների կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Ընդ որում, ներդրումների ակտիվության բարձրացման և տնտեսական աճի ապահովման գործընթացում առաջնային դեր են խաղում բանկերը: Ֆինանսական շուկաների քվին են պատկանում պարտատոմսերի, բաժնետոմսերի և այլ շուկաներ, որոնց յուրահատկությունն այն է, որ այստեղ առաջարկն ու պահանջարկը միշտ գտնվում են հավասարակշռված վիճակում⁶:

Ներդրումների կառուցվածքն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է վերլուծել նրա մաս կազմող հետևյալ երեք բաղադրատարրերի կազմը.

- ըստ կիրառման ուղղվածության,
- ըստ տեսակների,
- ըստ ֆինանսավորման աղբյուրների:

Ըստ կիրառման ուղղվածության կամ տեղակայման ոլորտի՝ տարբերում են արտադրական և ոչ արտադրական ոլորտում կատարված ներդրումներ: Արտադրական ոլորտում ներդրումների

¹ Макконнелл К., Брю С. Экономикс, Москва, Изд-во 1999, стр. 25.

² «Մենթրենթ», Յու.Մ.Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, «Տնտեսագետ», 2009, էջ 487:

³ Боди Э., Маркус Дж., «Принципы инвестиций», Москва-Петербург-Киев, Изд. Дом «Вильямс», 2008, стр. 25.

⁴ Մարկոսյան Ա.Խ., Տնտեսական անվտանգության հիմնահարցեր, «Նորավանդ», 2005, էջ 26:

⁵ Зубченко Л.А. Иностранные инвестиции, Москва, Изд-во «Книгодел», 2006, стр. 12.

⁶ Лоренс Дж. Гитман, Майкл Д. Джонк, Основы инвестирования, Москва, Изд-во «Дело», 1997, стр. 324.

մեծ մասը պատկանում է մասնավոր հատվածին, իսկ ոչ արտադրական ոլորտում մեծապես իշխում են պետության կողմից կատարված ներդրումները, որի ամենաբնութագրիչ հատկանիշը եկամտաբերությունն է: Այդ է պատճառը, որ պետության կողմից ներդրումները հիմնականում կատարվում են արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության և ոչ թե կրթության, գիտության, առողջապահության մեջ: Որպես կանոն ներդրումների մեծ քանակությունը բերում է ինֆլյացիայի, իսկ անբավարարությունը՝ դեֆլյացիայի: Հենց այստեղ էլ առաջ է գալիս պետության առաջնային խնդիրներից մեկը, այսինքն՝ ճշգրտորեն օգտվելով դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության լծակներից՝ նպաստել տնտեսության հավասարակշռված և բազմակողմանի զարգացմանը:

Ըստ տեսակների ներդրումների՝ դասակարգումն ավելի բարդ խնդիր է: Ըստ Ու.Շարպի՝ ներդրումները կարելի է դասակարգել երկու խոշոր խմբերում՝ իրական և ֆինանսական: Իրական են հիմնական և շրջանառու կապիտալում իրականացվող ներդրումները, կապիտալ շինարարության վրա կատարվող ծախսերը, հողային տարածքներ ձեռք բերելը, ինչպես նաև ոչ նյութական ակտիվներում կատարվող ներդրումները:

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետության եկամուտներն են, ինչպես նաև կազմակերպությունների եկամուտը և անորտիզացիոն հիմնադրամը¹:

Արևմտյան երկրների փորձը վկայում է, որ տնտեսական աճ ապահովելու համար ներդրումները համախառն ներքին արդյունքի նկատմամբ պետք է կազմեն շուրջ 20-25%, իսկ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում այդ ցուցանիշը հասնում է 15-20%-ի, Ֆրանսիայում՝ 20-25%-ի, ճապոնիայում՝ 30%-ի, իսկ ՀՀ-ում ներկայումս ներդրումները 5%-ի չեն հասնում:

Ըստ ամերիկացի տնտեսագետ Ու.Շարպի՝ շուկայական տնտեսության պայմաններում կատարել ներդրումներ նշանակում է այսօր հրաժարվել փողի որոշակի քանակությունից՝ ապագայում առավել մեծ գումար ստանալու ակնկալիքով², իսկ Լ.Գիտմանը ներդրում է համարում փողի տեղաբաշխումը հատուկ ընտրված ֆինանսական գործիքներում՝ դրանց արժեքի ավելացման կամ դրական եկամուտ ստանալու նպատակով³: Իսկ մի այլ բնորոշման համաձայն՝ ներդրումն ունեցվածքային և ինտելեկտուալ արժեքների օգտագործումն է՝ կապիտալի մեծացման, այսինքն՝ եկամուտ ստանալու նպատակով⁴: Ինչ վերաբերում է բանկային ներդրումների բնորոշումներին, ապա դրանք տնտեսագիտական գրականության մեջ մեկնաբանվում են հիմնականում երկու մոտեցմամբ՝ ընդհանրական և օրենսդրական: Առաջին մոտեցմամբ բանկային ներդրումները որոշակի արդյունք ստանալու նպատակով կատարված բանկային ներդրումներն են: Այսպես, օրինակ, Չեչենովը բանկային ներդրումները ներկայացնում է որպես ավանսավորում, որոնք նյութական արժեքի աճի նպատակով կարող են ուղղվել տնտեսության տարբեր ոլորտներ՝ արտադրության, շրջանառության, ֆինանսական ոլորտ և այլն, ներառյալ այնպիսիները, որոնցում տեղի է ունենում արժեքի վերաբաշխում կամ արժեքի վերաբաշխումը չի ուղեկցվում նյութական աճով⁵: Բանկային ներդրումները ներառում են առևտրային բանկի ռեսուրսների տեղաբաշխման բոլոր ուղղությունները:

Օրենսդրական մոտեցման հիմնական առանձնահատկությունն այն է, որ սահմանները ձևակերպելիս ներդրման վերաբերյալ օրենքներից գրեթե չեն շեղվել: Ըստ ռուս տնտեսագետ Վ.Մոսկվինի՝ բանկային ներդրումներ են համարվում դրամական միջոցները, արժեթղթերը, այլ գույք, այդ թվում՝ գույքային և այլ իրավունքներ, որոնք ունեն դրամական գնահատական և ներդրվում են ձեռնարկատիրական և/կամ այլ տիպի գործունեության մեջ՝ եկամտի ստացման և/կամ այլ դրական արդյունքի հասնելու նպատակով⁶: Մեկ այլ բնորոշմամբ, որն առավել ամփոփ է, բանկային ներդրումը բանկի ռեսուրսների երկարաժամկետ տեղաբաշխման գործընթացն է

¹ Нешиной А., С., Инвестиции, Москва, 2007, стр. 41.

² Шарп У.Ф., Александер Г.Дж., Бейли Дж. Инвестиции, Москва, 2001, стр. 1.

³ Гитман Л., Джонк М., Основы инвестирования, Москва, Изд-во "Дело", 1998, стр. 18.

⁴ Ասրյան Գ., Բանկի կառավարման հիմունքներ, Երևան, 2003, էջ 84:

⁵ Чеченов А. Энсев К., Коммерческие банки как фактор реализации инвестиционной политики, Нальчик, 2001, стр.7.

⁶ Москвин В.А. Управление качеством в бизнесе, 2006, стр. 8.

արժեթղթերում, անշարժ գույքի մեջ, ձեռնարկության կանոնադրական կապիտալում և այլ ներդրումային օբյեկտներում¹:

Ընդհանրացնելով ներդրումների վերաբերյալ վերը բերված սահմանումները, ինչպես նաև բանկային ներդրումների ընդհանուր և օրենսդրական ձևակերպումները՝ կարելի է տալ ներդրման հետևյալ ընդհանրական ամփոփ ձևակերպումը. ներդրումները ֆինանսական և այլ ակտիվներ են, որոնք ներդրվում են տարբեր ոլորտների ներդրումային օբյեկտներ՝ շահույթի ստեղծման, շուկայում դիրքի ամրապնդման կամ սոցիալական բնագավառում որևէ դրական արդյունքի հասնելու նպատակով:

Առևտրային բանկերն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում երկրի ֆինանսական համակարգում: Որպես ֆինանսական միջնորդ՝ բանկերը ֆինանսական շուկայում իրենց յուրահատուկ դերակատարությամբ դրական ազդեցություն են ունենում երկրի տնտեսական աճի և տնտեսության կայուն զարգացման վրա թե՛ որպես ներդրող և թե՛ որպես ներգրավող:

Հարկ է փաստել, որ ՀՀ բանկային համակարգը տնտեսության դինամիկ ոլորտներից է, որը մշտապես զարգանում ու կատարելագործվում է: Ուստի միջազգային լավագույն փորձի կիրառումը, անշուշտ, կնպաստի բանկային համակարգի զարգացմանը, հատկապես ներդրումային գործունեության տեսանկյունից, երբ աշխարհում ընդգծվում են բանկային համակարգերի կառուցման 2 հիմնական մոդելներ՝ սեզմենտավորված (ամերիկյան) և ունիվերսալ (գերմանական)², որոնք հիմնականում տարբերվում են վարկային ինստիտուտների ունիվերսալացման և մասնագիտացման աստիճանով, իրական ոլորտի ֆինանսավորման ձևերով և աղբյուրներով, ինչպես նաև արժեթղթերի շուկայում գործունեության համադրման խնդիրը: Ամերիկյան մոդելում ռիսկերն առավելագույն չափով բաժանված են առևտրային ու ներդրումային և բազմազանեցված են ապահովագրության մի շարք մակարդակներով՝ գերմանական մոդելում ռիսկերի վերահսկումն ապահովված է ունիվերսալ առևտրային բանկերի կողմից, որոնք միաժամանակ իրական ոլորտի հիմնական վարկատուներն են և ֆինանսական շուկայի գլխավոր սուբյեկտները:

Բացի վերոհիշյալ 2 մոդելներից, գործում է նաև խառը մոդելը, այն է՝ շուկաների կազմակերպման երրորդ տիպի երկրներում (Կանադա, Մեծ Բրիտանիա) արժեթղթերով գործառնություններն օրենքով դիտարկվում են բանկային գործառնություններից անջատ, սակայն դրանց միջև ինստիտուցիոնալ սահմանազատում գոյություն չունի: Այս երկրներում բանկերը, որպես կանոն, ներդրումների զգալի մասն իրականացնում են մասնագիտացված դուստր ընկերությունների միջոցով: Այսինքն՝ այս դեպքում նշված բանկերն իրենք են իրենց տարբեր բաժանմունքներում և դուստր ընկերություններում ներդնում բանկային տարբեր գործառնությունների տարբերակման ու բաժանման հայեցակարգը:

Հայաստանն ավելի մոտ է ունիվերսալ առևտրային բանկի գերմանական մոդելին, բայց առավել մոտ է խառը մոդելին:

Արժեթղթերի զարգացած շուկա ունեցող ավելի քան 30 երկրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրների մոտ 40-45%-ը առևտրային բանկերին արգելում է անմիջական գործառնություններ կատարել արժեթղթերի շուկայում, 10-15%-ը, ընդհակառակը, ունի ազատ մասնակցություն, և 40-45%-ը կիրառում է խառը մոդելը:

Կապիտալ ներդրումների տեսակներն ըստ նպատակի կարելի է ներկայացնել ստորև բերված աղյուսակի տեսքով³:

¹ Ендовицкий Д.А. Анализ и оценка эффективности инвестиционной политики коммерческой организаций, Воронеж, ВГУ 2008 стр. 43.

² Игоница Л.Л. Инвестиции. уч. пос., 2005, стр. 267.

³ Миркин Я.М., Ценные бумаги и фондовый рынок, Москва. Изд-во "Перспектива", 1995, стр. 339.

Կապիտալ ներդրումների դասակարգումը

Կապիտալ ներդրումների տեսակները	Նպատակը
Պաշտպանողական ներդրումներ	Հունքի ձեռքբերման ռիսկի նվազեցումը, գների մակարդակի պահպանումը, շուկայում մրցունակ լինելը
Ռիսկային ներդրումներ	Փնտրել արտադրության նոր տեխնոլոգիաներ, մեթոդներ՝ արտադրության բարձր գիտատեխնիկական մակարդակ ապահովելու համար
Սոցիալական ներդրումներ	Աշխատանքային ռեսուրսների համար աշխատանքային բարենպաստ պայմանների ապահովումը
Պարտադիր ներդրումներ	Պետության պահանջների բավարարումը՝ կապված էկոլոգիական խնդիրների, թափոնների, արտանետումների, ինչպես նաև արտադրանքի անվտանգության և այլ խնդիրների հետ
Ներկայացուցչական ներդրումներ	Կազմակերպության բարձր համբավի ապահովումը


Ֆինանսական ներդրումների թվին են պատկանում՝

- բաժնետոմսերում, ինչպես նաև թե՛ պետության և թե՛ մասնավոր տնտեսվարողների կողմից թողարկված այլ արժեթղթերում կատարված ներդրումները:

Ներդրումների դասակարգումն ավելի ամբողջական կարող է դարձնել ստորև բերված գծապատկերը:

Գծապատկեր 1

Ներդրումների դասակարգումն ըստ տարբեր չափանիշների



Ըստ վերոնշյալ գծապատկերի՝ տարածաշրջանային առումով ներդրումները բաժանվում են **ներքին** (տվյալ երկրի քաղաքացիների կողմից երկրի ներսում կատարված ներդրումներ) և **արտաքին** (տվյալ երկրի տնտեսական տարածքից դուրս գտնվող ներդրում պահանջող օբյեկտներում կատարված ներդրումներ) ներդրումների:

Ըստ գործունեության ուղղվածության՝ տարբերում են *մետտո* (մաքուր) ներդրումներ, որոնք իրականացնում են կազմակերպությունների հիմնադրման կամ ձեռքբերման ժամանակ, *էքստենսիվ* ներդրումներ, որոնց միջոցով ընդլայնվում են կազմակերպության արտադրական հնարավորությունները, *վերաներդրումներ*՝ ներդրումներ նոր արտադրական միջոցների ձեռքբերման համար, *բրուտտո* (ոչ մաքուր) ներդրումներ, որոնք ներառում են մետտո և վերաներդրումները:

Ըստ ներդրումային ռեսուրսների հանդեպ ունեցած սեփականության իրավունքի՝ օտարերկրյա ներդրումները լինում են *մասնավոր* (անհատների և ոչ պետական կազմակերպությունների կողմից կատարված), *պետական* (պետական մարմինների և կառավարության կողմից կատարված), *օտարերկրյա* (օտարերկրյա քաղաքացիների, կազմակերպությունների և ընկերությունների, ինչպես նաև այլ պետությունների կողմից կատարված) և *խառը* կամ *համատեղ* (ազգային և օտարերկրյա տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարված) ներդրումներ: Օտարերկրյա ներդրումներ են համարվում նաև բոլոր տեսակի իրային և բարձր գաղափարական արժեքները, որոնք ներդրվում են օտարերկրյա ներդրողների կողմից՝ ձեռնարկատիրական և այլ տեսակի գործունեության օբյեկտներում եկամուտ ստանալու նպատակով:

Իհարկե, ներդրումների այս դասակարգմանը կարելի է ավելացնել նաև այլ չափանիշներ, մասնավորապես կապված նախագծային ֆինանսավորման հետ, սակայն գործնականում նպատակահարմար չէ, քանի որ յուրաքանչյուր համապատասխան մասնագետ ներկայացնում է այդ հարցի շուրջ սեփական կարծիքը:

Այստեղ թերևս մի փոքր մեկնաբանենք «Նախագծային ֆինանսավորում» գաղափարը, որը հետզհետե ավելի լայն տարածում է գտնում ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ: Ներդրումը, որն ունի հստակ նպատակային ուղղվածություն և կողմնորոշում, անվանում ենք ներդրում նախագծում կամ նախագծային ներդրում: Նախագծային ներդրումների ֆինանսավորումը կարելի է մեկնաբանել նեղ և լայն իմաստներով.

- լայն իմաստով նախագծային ֆինանսավորում ասելով հասկանում ենք ներդրումային նախագծերի ֆինանսական ապահովման ձևերի և մեթոդների ամբողջությունը: Նախագծային ֆինանսավորումը դիտարկվում է որպես ֆինանսավորման տարբեր աղբյուրների ֆինանսավորում և որոշակի ներդրումային ծրագրերի համար տարբեր ֆինանսավորման ձևերի համակարգային կիրառում, որպես ֆինանսավորում, որն ունի հստակ նպատակային բնույթ՝ միջոցներն օգտագործելու ներդրումային ծրագրերի իրագործման կարիքների համար:
- Նեղ իմաստով նախագծային ֆինանսավորումը ներդրումային ծրագրերի ֆինանսավորման եղանակ է, որը բնութագրվում է ներդրված գումարի հատուկ ձևով վերադարձվելիությամբ, որի հիմքում ընկած են հիմնականում կամ բացառապես դրամական եկամուտները, որոնք էլ առաջանում են ներդրումային նախագծից, ինչպես նաև այդ նախագիծն իրականացնող կողմերի միջև նախագծի հետ կապված ռիսկի օպտիմալ վերաբաշխմամբ:

ՆԵՐՂՈՒՄՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *ասպիրանտ*

*Մ Գ Ա Ա Մ. Զոթյանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրթական գիտաշխատող*

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվել են ներդրումների էության բազմաթիվ ու բազմապիսի բնորոշումներ:

Ընդհանրացնելով ներդրումների վերաբերյալ քննարկված սահմանումները՝ տրվել է ներդրման հետևյալ ամփոփ ձևակերպումը. «Ներդրումները ֆինանսական և այլ ակտիվներ են, որոնք ներդրվում են տարբեր ոլորտների ներդրումային օբյեկտներ՝ շահույթի ստեղծման, ամրապնդման կամ սոցիալական բնագավառում որևէ դրական արդյունքի հասնելու նպատակով»:

Այնուհետև ներդրումները դասակարգվել են ըստ տարբեր չափանիշների, որից հետո դրանք ներկայացվել են գծապատկերի տեսքով՝ համառոտ ներկայացնելով նաև դրանցից յուրաքանչյուրի էությունը:

Բանալի բառեր. ներդրումներ, ֆինանսական, բանկային ներդրումներ, ծախսեր, կապիտալ, եկամուտներ, եկամտաբերություն, բանկեր, դասակարգել, չափանիշներ:

СУЩНОСТЬ ИНВЕСТИЦИЙ И ИХ РОЛЬ В РАЗВИТИИ ЭКОНОМИКИ

АННА АРУТЮНЯН, *аспирант*

*младший научный сотрудник Института
экономики им. М.Котаняна НАН РА*

Аннотация

В статье представлены многочисленные и многообразные определения “инвестиций”. На основе обобщения рассматриваемых определений дано следующее лаконичное определение сущности инвестиций: “инвестиции - это финансовые и разные активы, которые внедряются в инвестиционные объекты различных сфер с целью создания прибыли или достижения какого-либо положительного результата в социальной сфере”.

В статье дана классификация инвестиций по различным критериям, а также приведено графическое изображение инвестиций с раскрытием в краткой форме сущности каждого из типов.

Ключевые слова: инвестиции, финансовый, банковские инвестиции, расходы, капитал, доходы, рентабельность, банки, классификация, критерии.

THE ESSENCE OF INVESTMENTS AND THEIR ROLE IN DEVELOPING THE ECONOMY

ANNA HARUTYUNYAN, *Ph.D. Student*

*Junior scientist of the M. Kotanyan institute of
Economics of the NAS of RA*

Abstract

The article presents various and numerous specifications on the essence and meaning of investments.

By summarizing the definitions of investments discussed in the article the author proposes to use the following concise definition of investments: “investments are financial and other types of activities that are invested in investment objects of various sectors to generate profit and strengthen it or to achieve some positive results in the social sector.”

Then, the investments have been classified based on various criteria and presented, and the meaning and essence of each one is briefly described as well.

Keywords: Investments, financial, bank investments, expenditure, capital, income, profitability, banks, classify, criteria.

**ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՈԱԶՎՈՐ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ցանկացած երկրում զարգացած և հզոր տնտեսությունն ձևավորելու համար կարևորվում է բարենպաստ ներդրումային միջավայրը, որի ստեղծման, օրենսդրական դաշտ ունենալու և այդ համակարգը ճիշտ կառավարելու ու զարգացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխությունները: Մասնավորապես, գլոբալացման այն գործընթացները, որոնք արմատապես փոխում են տնտեսության զարգացման չափանիշները և նպատակները, ինչպես առանձին երկրների ու տարածաշրջանների, այնպես էլ ողջ աշխարհի վրա:

Գլոբալացման պայմաններում փոխվում են նաև ներդրումների հասանելիության ու ձեռքբերման պայմանները, և այստեղ առաջին հերթին պետք է նշել ֆինանսական շուկաների միջազգայնացումն ու կապիտալի ազատ տեղաշարժը պետությունների սահմաններով և հաստատվում է այնտեղ, որտեղ ավելի մեծ է ստացվող եկամուտը, և որն էլ երաշխավորվում է առավել ապահով ապագա:

Հայտնի է, որ համաշխարհային ներդրումային միջոցների մեծ մասը ներհոսում է կապիտալի շուկայի միջոցով, որն ունի բարդ կառուցվածք և ներառում է տարբեր ֆինանսական գործիքների շուկաներ, մասնավորապես.

- ձեռնարկատիրական ներդրումների (ուղղակի և պորտֆելային),
- ածանցյալ գործիքների (ֆյուչերսներ, ֆորվարդներ, օպցիոններ, սվոպեր),
- եվրապարտատոմսերի և եվրաբաժնետոմսերի,
- վարկերի և այլ տեսակի ներդրումների (բանկային դեպոզիտներ, կարծաժամկետ արժեթղթեր):

Կապիտալի շուկան լուրջ շարժիչ ուժ է ներդրողների (այդ թվում՝ ներդրումային և կենսաթոշակային ֆոնդեր) և մասնավոր սեփականատերերի համար:

Գլոբալացման պայմաններում ավելի է մեծանում վերազգային կորպորացիաների, համատեղ ձեռնարկությունների դերը համաշխարհային շուկայում և հետզհետե ավելի են կարևորվում ներդրողների պաշտպանության ծրագրերը, որոնք լայն կիրառություն են գտել ինչպես զարգացած (Ֆրանսիա, ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Հոնկոնգ, Ճապոնիա, Սինգապուր, Ավստրալիա և այլն), այնպես էլ զարգացող (Արգենտինա, Բրազիլիա, Կորեա, ՀԱՀ, Մալազիա, Մեքսիկա, Բուլղարիա և այլն) ֆոնդային շուկաներ ունեցող երկրներում:

Զարգացած ֆոնդային շուկաներ ունեցող երկրներում լայն տարածում են գտել նաև ներդրողների պաշտպանության հետևյալ մեթոդները.

1. **Փոխհատուցման հիմնադրամները** որպես կանոն հիմնականում ձևավորվում են ֆիրմաների անդամավճարներից, իսկ դրանք օգտագործվում են անվճարունակ բրոքերների հաճախորդներին պաշտպանելու համար: Այս հիմնադրամի առավելությունն այն է, որ սնանկացած բրոքերներին փոխհատուցում է վճարվում նույնիսկ ակտիվների լրիվ բացակայության դեպքում: Ընդ որում, բավականին կարճ ժամանակահատվածում այդ ծախսերը վերաբաշխվում են բազմաթիվ բրոքերների միջև և, բացի այդ, փոխհատուցման հիմնադրամը լրացուցիչ վերահսկում է բոլոր բրոքերների գործունեությունը: Մեթոդի թերությունն այն է, որ գործում է փոխհատուցվող գումարների հստակ սահման, և այս հիմնադրամները չեն կանխարգելում սնանկացման դեպքում ակտիվների սառեցումը:
2. **Մասնավոր ապահովագրման** մեթոդ, որի շրջանակներում բրոքերներն իրենց հաճախորդներին ապահովագրում են խաբեությունից, անփութությունից, փաստաթղթերի կորստից և նմանատիպ հանգամանքներից: Այս մեթոդի հիմնական առավելությունը նրա պարզունակ լինելն է:

է և ապահովագրական ընկերության կողմից հավելյալ վերահսկողությունը, իսկ հիմնական թերությունը՝ ծախսատարությունը:

3. **Պաշտպանության անհատական** մեթոդ, որից կարող է օգտվել ցանկացած հաճախորդ (գրավ, ակտիվների պահպանում): Այստեղ հաշվի են առնվում հաճախորդի անհատական ցանկությունները, սակայն այս մեթոդը բավականին թանկ է, և անհատական պայմանավորվածությունները ոչ միշտ են արդյունավետ լինում:

Արտերկրում կիրառվող պաշտպանության մեթոդները, ըստ իրենց հիմնական առավելության և թերության, կարելի է ներկայացնել ստորև բերված աղյուսակի տեսքով.

Աղյուսակ

Ներդրողների պաշտպանության մեթոդները, առավելություններն ու թերությունները

Պաշտպանության մեթոդներ	Առավելությունը	Թերությունը
Փոխհատուցման հիմնադրամները	Փոխհատուցման վճարում նույնիսկ սնանկացման դեպքում	Փոխհատուցվող գումարների հստակ սահմանը և սնանկացման դեպքում ակտիվների սառեցումը
Մասնավոր ապահովագրում	Պարզությունը և ապահովագրական ընկերության կողմից հավելյալ վերահսկողությունը	Ծախսատարությունը
Պաշտպանության անհատական մեթոդ	Հաճախորդի անհատական ցանկությունների հաշվի առնելը	Թանկ է և ոչ միշտ արդյունավետ

Ջարգացած ֆոնդային շուկա ունեցող երկրներում ներդրողների պաշտպանության ծրագրերին մասնակցում են ֆոնդային բորսաների անդամները, մասնավորապես ԱՄՆ-ում և Հոնկոնգում նաև բրոքեր-դիլերները, որոնք ֆոնդային բորսաների անդամ չեն, Մեծ Բրիտանիայում և Կանադայում՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների ինքնակարգավորվող կազմակերպությունները: Բոլոր ծրագրերում այս կամ այն ձևով գանձվում են անդամավճարներ կամ այլ տեսակի հավաքագրումներ, բացի այդ տրամադրվում են նաև վարկային գծեր, փոխատվություններ և իրականացած ապահովագրություն:

Որպես կանոն՝ այս ծրագրերը ծածկում են հիմնադրամի անդամների հաճախորդների ծախսերը, որոնք ի վիճակի չեն վերադարձնելու իրենց վստահված գումարները և արժեթղթերը: Օրինակ՝ Ավստրալիայում գործող ծրագիրը ներդրողին պաշտպանում է նույնիսկ պայմանագիրը չիրականացնելու դեպքում, Մեծ Բրիտանիայում՝ որոշակի խաբեություններից: Պետք է փաստել, որ ոչ մի ծրագիր չի ապահովագրում ներդրողներին կամ ներդրումները սովորական շուկայական ռիսկերից, ինչպիսին է օրինակ արժեթղթերի շուկայական գնի անկումը: Այսպես, օրինակ, Գերմանիայում արժեթղթերում ներդրում կատարողների համար գոյություն չունի հատուկ ծրագիր, սակայն գոյություն ունի ավանդների պաշտպանության հիմնադրամ, որն ընդգրկում է առևտրային բոլոր բանկերը: Սա թերևս պայմանավորված է գերմանական ֆոնդային շուկայի առանձնահատկություններով, որտեղ միայն բանկերն իրավունք ունեն արժեթղթերի հետ իրականացնելու գործարքներ, այսինքն՝ այս ֆոնդը պաշտպանում է նաև բանկերի միջոցով արժեթղթերում ներդրում կատարողների շահերը:

Միաժամանակ կարևորվում են նաև խնայողություններն ու ներդրումները, որոնք իրենց էությանը ավելի արդյունավետ են տեղաբաշխվում: Որպես հետևանք՝ աղքատ պետությունները, որոնք ունեն ներդրումների խիստ կարիք, այլևս չեն գտնվում անհույս վիճակում, քանի որ ներդրողները չեն սահմանափակվում միայն իրենց ազգային պետության սահմաններով և փնտրում են ներդրումների իրականացման բարենպաստ միջավայր: Որպես հավելում՝ ներդրողները մեծ հնարավորություն են ստանում իրենց ուղղակի և պորտֆելային ներդրումները դիվերսիֆիկացնելու համար:

Ներդրումների պաշտպանության համար իր ուրույն տեղն ունի տնտեսական գլոբալացումը, որը տեղի է ունենում տեխնոլոգիական գործընթացների բուռն զարգացմանը համընթաց: Պետությունների դիրքը ժամանակակից աշխարհում ավելի շատ որոշվում է մարդկային կապիտալի որակով, կրթական մակարդակով արտադրության տեխնիկական զինվածությամբ,

գիտական նվաճումների օգտագործման մակարդակով: Մեծ քանակի աշխատուժը և հունքն այլևս առաջնային մրցակցային առավելություն չեն, քանի որ արտադրված ապրանքների ինքնարժեքում աստիճանաբար նվազում է վերջիններիս վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռը:

Քանի որ ՀՀ-ում ներդրումային գործընթացում ֆինանսական ինստիտուտների դերում առաջին հերթին հանդես են գալիս բանկերը, ուստի հենց այստեղ էլ կարելի է կյանքի կոչել ներդրողների պաշտպանության ծրագրեր, որոնք փոխշահավետ կլինեն երկու կողմերի համար՝ ավելացնելով բանկերի միջոցով ներդրումներ կատարողների քանակը և հետևաբար շրջանառվող գումարների ծավալները, իսկ ներդրողներն ավելի հեշտությամբ կհաղթահարեն անկանխատեսելի դժվարությունները և հակված կլինեն նոր ներդրումներ կատարելու: Թերևս ամենակարևորը, ինչը կարող է անել պետությունն այս ոլորտում բանկերին «մենաշնորհից» զրկելու ուղղությամբ, ավելի լուրջ քայլեր ձեռնարկել ֆինանսական գործիքների շուկան զարգացնելու համար՝ սկզբնական շրջանում ավելի ինտենսիվորեն ներգրավվելով այդ ոլորտ:

Քանի որ ՀՀ-ում հիմնականում ներդրումներ իրականացվում են իրական հատվածում, ուստի առաջնային դերում հանդես է գալիս մարդկային կապիտալը: Նշանակում է՝ անհրաժեշտ է ներգրավել բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնց միջոցով էլ հնարավոր կլինի մրցունակ լինել ցանկացած շուկայում, համընթաց քայլեր շուկայի նորարարություններին և ճիշտ կադրային քաղաքականության շնորհիվ փնտրել ծախսերի նվազեցման այլընտրանքային մեթոդներ՝ ժամանակակից հաղորդակցական միջոցների կիսում, բարձր տեխնոլոգիաների ներդրում և այլն:

Հաշվի առնելով բազմաթիվ տնտեսապես զարգացած երկրների փորձը՝ պետք է նշել, որ ներդրումային բարենպաստ միջավայրի հիմքում ընկած են պետությունը և նրա վարած քաղաքականությունը, որը հատկապես նկատելի է Ասիայի առաջավոր երկրների զարգացման մոդելներում: Այստեղ առաջին հերթին կարևորվում է հենց պետության ներքաշումն այս գործընթացին՝ ստեղծելով ներդրումների համար բարենպաստ քաղաքական, տնտեսական և օրենսդրաիրավական դաշտ:

Վերոնշյալը մասնավորապես ենթադրում է.

- օրենսդրաիրավական խիստ պատժամիջոցների ներդրման միջոցով նվազեցնել պայմանագրերի կատարումից խուսափումը, իսկ հակառակ դեպքում որպես պայմանագրերի կատարման երաշխիք հանդես պետք է գա հենց պետությունը:
- Արտոնություններ տրամադրել Հայաստանի մարզերում ներդրումներ կատարողներին, որը փոխշահավետ է երկու կողմերի համար: Այս համակարգը թույլ կտա տնտեսությունը զարգացնել համամասնորեն, իսկ ներդրողի համար ձեռնտու է այն պարզ պատճառով, որ աշխատուժը մարզերում մի քանի անգամ էժան է, իսկ մրցակցության մակարդակը՝ ցածր:
- Ստեղծել կայուն քաղաքական դաշտ՝ խուսափելով ներքաղաքական ապակայունացնող պայքարից, լարված իրավիճակներից և անկանխատեսելի շրջադարձերից, որը հատկապես կարևոր է օտարերկրյա ներդրողների ներգրավման համար:
- Որոշ դեպքերում նախաձեռնողի դերում կարող է հանդես գալ հենց պետությունը՝ տվյալ ոլորտ ներքաշելով նորանոր ներդրողների:

ՀՀ-ում պետք է ներդրվեն ներդրողների պաշտպանության այնպիսի ծրագրեր ու մեթոդներ, որոնք առավել արդյունավետ հաշվի կառնեն ներքին տնտեսական, քաղաքական, օրենսդրաիրավական ու սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, որպեսզի ծրագրի առանձին մասնակիցների համար դա չհանգեցնի անցանկալի հետևանքների:

ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՈՒՋԱՎՈՐ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *ասպիրանտ*

*ՄԳԱԱ Մ.Թոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Համառոտագիր

Ներդրումային գործունեության իրականացման նպատակով կարևորվել է պետության կողմից բարենպաստ քաղաքական, տնտեսական և օրենսդրա-իրավական դաշտի ստեղծումը՝ հաշվի առնելով բազմաթիվ զարգացած պետությունների փորձը, որոնք մասնավորապես ընկած են Ասիայի առաջավոր պետությունների զարգացման մոդելներում:

ՀՀ-ում պետք է ներդրվեն ներդրողների պաշտպանության այնպիսի ծրագրեր ու մեթոդներ, որոնք առավել արդյունավետ հաշվի կառնեն ներքին տնտեսական, քաղաքական, օրենսդրաիրավական ու սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, որպեսզի ծրագրի առանձին մասնակիցների համար դա չհանգեցնի անցանկալի հետևանքների:

Բանալի բառեր. կապիտալի շուկա, կառուցվածք, ներդրողների պաշտպանություն, մեթոդներ, առավելություններ, թերություններ, քաղաքական դաշտ, տնտեսական դաշտ:

ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ ПЕРЕДОВОГО МИРОВОГО ОПЫТА ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИЙ И ИНВЕСТИЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В РА

АННА АРУТЮНЯН, *аспирант*

*младший научный сотрудник Института
экономики им. М.Котаняна НАН РА*

Аннотация

Для осуществления инвестиционной деятельности важное значение имеет создание государством благоприятного политического, экономического и законодательного поля с учетом опыта ряда развитых стран, в частности, моделей развития ведущих стран Азии.

В РА должны быть внедрены программы и методы защиты прав инвесторов, оптимально учитывающие внутренние экономические, политические, законодательные и социально-психологические особенности, с тем, чтобы у отдельных участников программы это не привело к нежелательным последствиям.

Ключевые слова: рынок капитала, структура, защита инвесторов, преимущества, недостатки, политическое поле, экономическое поле.

THE POSSIBILITIES OF ADOPTING THE INTERNATIONAL BEST PRACTICES IN ATTRACTING INVESTMENTS AND INVESTMENT ACTIVITY IN THE REPUBLIC OF ARMENIA

ANNA HARUTYUNYAN, *Ph.D. Student*

*Junior scientist of the M. Kotanjyan institute of
Economics of the NAS of RA*

Abstract

In order to carry out investment activity the role of the government in creating favorable political and economic environments, and legal framework by taking into account the best practices of many developed nations, namely the development models of the leading Asian nations is stressed.

Investor protection programs and methods need to be designed and introduced in the Republic of Armenia that would take into consideration the peculiarities of domestic economy, legal framework, political and social-psychological developments, protecting an investor from experiencing negative practices.

Keywords: Capital market, structure, protection of investors, methods, advantages, shortcomings, political environment, macroeconomic environment.

ԵՏՍ ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Թեև եվրասիական տնտեսական ինտեգրացիայի ներկա փուլում առաջնահերթ նպատակն ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ընդհանուր շուկայի ստեղծումն է, որը վերջնաարդյունքում հանգեցնելու է անդամ՝ պետությունների տնտեսությունների ներդաշնակ զարգացմանը և Համաշխարհային շուկայում դիրքերի ամրապնդմանը, այնուամենայնիվ միասնական տնտեսական տարածքի գաղափարը շատ ավելի հեռահար նպատակներ էլ է առաջադրում, ընդհուպ մինչև տնտեսության կարգավորման միասնական (ունիֆիկացված) մեխանիզմի կիրառումը անդամ-պետություններում:

Ինչ խոսք, առաջիկայում դեռևս հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների միասնականացման որոշակի պահանջը ԵՏՍ օրակարգում չկա, բայց ակնկալելի է, որ մոտ ապագայում (իսկ որոշ կանխատեսումներով՝ արդեն 2017թ.) կքննարկվեն նաև այդ հնարավորությունները: Մինչ այդ պետք է նկատել, որ անգամ ինտեգրացիայի նախնական փուլում հարկաբյուջետային համակարգում փոփոխություններն անխուսափելի են, առաջին հերթին այն պատճառով, որ բյուջեի եկամուտները խիստ զգայուն են մաքսային քաղաքականության փոփոխության նկատմամբ: Խոսքը մասնավորապես վերաբերում է այն հանգամանքին, որ Հայաստանը պարտավորվում է հավաքագրած մաքսատուրքերը փոխանցել ԵՏՍ համընդհանուր բյուջե, որտեղից այնուհետև պետք է ստանա, իր համար նախատեսված ամրակայված մասնաբաժինը, որը կազմում է 1,13 % (փորձագիտական գնահատականներով դա կարող է կազմել տարեկան մոտ 250 մլն դոլար): Բացի այդ, ԵՏՍ-ին Հայաստանի անդամակցությունը պարտավորեցնում է տնտեսական քաղաքականությունն իրականացնել մակրոտնտեսական ցուցանիշների որոշակի քանակական արժեքների սահմաններում (օրինակ համախմբված (կոնսոլիդացված) բյուջեի տարեկան դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3 %-ը, պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50 %-ը, իսկ գնաճի մակարդակը չպետք է գերազանցի ամենացածր գնաճ ունեցող անդամ-պետության ցուցանիշը ավելի քան 5%-ով¹): Միաժամանակ ԵՏՍ հիմնադիր պայմանագրի 14-րդ հավելվածն արձանագրում է անդամ-երկրների կողմից համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության անցկացման կարգը, ըստ որի, համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության իրականացման ժամանակ պետք է հաշվի առնեն Միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները և անդամ-պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները: Հետևաբար, ԵՏՍ-ին Հայաստանի անդամակցության հնարավոր հետևանքների գնահատման ժամանակ չպետք է անտեսել հարկաբյուջետային ոլորտում փոփոխությունների ուղղակի և անուղղակի տնտեսական էֆեկտները: Վերջիններիս դիտարկումն իրականացնելու ենք երեք հիմնական ուղղություններով.

- բյուջեի եկամուտների ուղղակի փոփոխությունների ազդեցության գնահատում,
- մաքսային քաղաքականության վերանայման արդյունքում բյուջետային մուտքերի հնարավոր փոփոխություններ,
- հարկաբյուջետային քաղաքականության ունիֆիկացման արդյունքում հնարավոր փոփոխություններ:

Նշված ուղղություններով ուսումնասիրությունները նախ ենթադրում են Հայաստանի հարկաբյուջետային համակարգի վերլուծություն: 2014 թվականի համար ՀՀ պետական բյուջեի

¹ Հիմնադիր պայմանագրի 63-րդ հոդված. Տնտեսական զարգացման կայունությունը որոշող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները:

հիմնական ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում: ՀՀ բյուջետային համակարգի գլխավոր առանձնահատկությունը նրա մշտական դեֆիցիտային բնույթն է: Վերջին տարիներին (2008-2014թթ.) ամենափոքր պակասուրդը գրանցվել է 2008 թվականին՝ ՀՆԱ 0,7%, իսկ արդեն հաջորդ՝ 2009 թվականին գրանցվել է պակասուրդի ամենաբարձր ցուցանիշը՝ ՀՆԱ 7.5%, պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությամբ:

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեի կատարման հիմնական ցուցանիշները 2014 թվականին¹

	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար ²	%-ով նախորդ տարվա նկատմամբ	%-ՀՆԱ-ի նկատմամբ
Ընդհանուր եկամուտներ	1137.0	2738.4	106,6	25.1
Հարկեր և տուրքեր <i>այդ թվում՝</i>	1064.1	2562.8	106,3	23.5
• ԱԱՀ	440.3	1060,4	109,6	9.7
• Շահութահարկ	103.5	249,2	83.1	2,3
• Եկամտահարկ և եկամտային հարկ ³	289.3	696.7	115.2	6,3
• Մաքսատուրք	48.3	116.3	104.5	1.1
Ընդհանուր ծախսեր	1228.8	2959.5	114.0	27.1
<i>այդ թվում՝</i>				
• Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	207.6	500.0	116.2	4.6
• Պաշտպանություն	190.4	458.5	104.5	4.2
• Առողջապահություն	74.5	179.4	121.1	1.6
• Կրթություն	113.3	272.8	111.2	2.5
• Սոցիալական պաշտպանություն	343.0	826.1	115.8	7.5
Պետական բյուջեի դեֆիցիտ	-91.7	-221.1	120.5	-2.0

Բյուջեի եկամուտների մոտ 83%-ը ձևավորվում է հարկերից, որոնց մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն անուղղակի հարկերը, մասնավորապես ԱԱՀ-ն (ավելի քան 35%): Վերջինս կարելի է համարել զգայուն հարկային բաղադրիչ՝ ԵՏՄ-ին անդամակցության տեսանկյունից: Իհարկե, այս հարկատեսակի վճարման սկզբունքների գծով որևէ փոփոխություն ԵՏՄ պայմանագիրը չի նախատեսում, բացառությամբ այն հանգամանքի, որ այսուհետ ԱԱՀ-ն վճարվելու է ոչ թե մաքսային, այլ հարկային մարմիններին: Սակայն եթե համարենք, որ ԱԱՀ-ի մեծ տեսակարար կշիռը հարկային եկամուտներում պայմանավորված է հսկայածավալ ներմուծման առկայությամբ, իսկ ներմուծման ոլորտում հնարավոր են էական փոփոխություններ՝ պայմանավորված երրորդ երկրների հետ արտաքին առևտրի սակագնային և ոչ սակագնային կարգավորման որոշակի նոր գործիքների կիրառմամբ⁴, ապա կարելի է ակնկալել այս հարկատեսակի տեսակարար կշռի որոշակի նվազեցում, ինչը չի կարելի դիտել որպես միակողմանի բացասական էֆեկտ: Քանի որ ներմուծման ոլորտում անխուսափելի գնագոյացման նոր մեխանիզմը կարող է ներքին արտադրությամբ ներմուծման փոխարինման դրական էֆեկտ ունենալ: Վերջին հանգամանքն ավելի իրատեսական է ներկայանում, եթե հաշվի ենք առնում, որ «ներքին շուկա» հասկացությունն այսուհետ ավելի մեծ ընդգրկում է ենթադրում՝ ներառելով ԵՏՄ ընդհանուր շուկան, ինչը գործարարության և ներդրումների համար լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ: Արդյունքում, եթե նույնիսկ ԱԱՀ գծով բյուջեի եկամուտներում որոշակի նվազում արձանագրվի,

¹ Աղյուսակը կազմվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության իրապարակած տվյալների հիման վրա: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014թ. հունվար-դեկտեմբերին:
² Ամերիկյան դոլարով ներկայացված տվյալները հաշվարկվել են հեղինակի կողմից, որպես հաշվարկային փոխարժեք հիմք ընդունելով 1 դոլարը 415.2 հայկական դրամ փոխարժեքը (2014թվականի հունվար-դեկտեմբեր միջին փոխարժեքը):
³ «Եկամտային հարկի մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 1-ից, սակայն 2013 թվականի ընթացքում կան մինչ այդ առաջացած եկամտահարկի կամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները 2013թ.-ի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվել, իսկ դրանց իրականացումը հիմնվել է «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» օրենքներով սահմանված կարգի վրա:
⁴ ԵՏՄ պայմանագրով անդամ-երկրները պարտավորվում են ներդաշնակեցնել արտաքին (ԵՏՄ սահմաններից դուրս) մաքսային կարգավորումը կիրառելով միասնական մաքսատուրքեր և կարգավորման այլ միջոցներ: Ընդ որում, նման կարգավորման համար առավելապես հիմք է հանդիսանում Ռուսաստանի Դաշնությունում ընդունված օրենսդրությունը:

ապա այն կարող է փոխհատուցվել շահութահարկի գծով եկամուտների աճով՝ ապահովելով պետբյուջեի առավել արդյունավետ եկամտային կառուցվածք:

Սակայն ԵՏՄ-ին անդամակցության տեսանկյունից ամենազգայուն հողվածը մաքսատուրքերն են, որոնց տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր եկամուտներում 4.2% է՝ 116 մլն դոլար ցուցանիշով: Եթե հիմնավորված համարենք այն կանխատեսումները, որ ԵՏՄ ընդհանուր մաքսային բյուջեից Հայաստանին հասանելիք 1.13% մասնաբաժինը կարող է կազմել մոտ 250 մլն դոլար¹, բյուջեի եկամուտների ուղղակի աճը 2015 թվականին կարող է կազմել մոտ 135 մլն դոլար: Սակայն մաքսային քաղաքականության փոփոխության արդյունքում հնարավոր են նաև փոփոխություններ ներմուծման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքում: Ըստ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի հաշվարկների²՝ մաքսային փոփոխությունների արդյունքում մաքսատուրքի դրույթաչափը կնվազի ներմուծվող ապրանքների 14%-ի դեպքում, 21%-ի դեպքում կմնա անփոփոխ, 32%-ի դեպքում կաճի 0-5%, 17%-ի դեպքում՝ 5-10%, 15%-ի դեպքում՝ 10-25%, իսկ 1%-ի դեպքում՝ 25-ից բարձր տոկոսով: Նման փոփոխությունները, անշուշտ, մաքսային մուտքերի որոշակի նվազում են ենթադրում, և եթե կանխատեսված 250 մլն դոլար ցուցանիշում այդ հանգամանքը հաշվի է առնված, ապա ԵՏՄ-ին անդամակցության դրական էֆեկտն այս ուղղությամբ ակներև է: Իհարկե, մաքսային քաղաքականության նշված փոփոխությունները որոշակի վտանգ են պարունակում ապրանքների գների բարձրացման, փոխարինելիության անհնարինության, ինչպես նաև արտադրանքի դիվերսիֆիկացիայի և որակի վատացման տեսանկյունից, սակայն այդ խնդիրները կարելի է կարճաժամկետ համարել և հաղթահարել:

Ինչ վերաբերում է հարկաբյուջետային ոլորտում միասնականացված քաղաքականության իրականացմանը, ապա մոտ ապագայում իրականացման տեսանկյունից առկա են որոշակի դժվարություններ՝ պայմանավորված առաջին հերթին այն հանգամանքով, որ գոյություն ունեն տարբերություններ ներկայում ԵՏՄ-ին անդամակցող չորս պետությունների հարկաբյուջետային համակարգերի միջև: Համեմատության համար անհրաժեշտ հիմնական ցուցանիշները բերված են աղյուսակներ 2-ում³ և 3-ում:

Նշված երկրների միջև առկա հիմնական տարբերությունը հարկային մուտքերի եական տարբերություններն են: Ռուսաստանը և Ղազախստանը նավթարդյունահանող երկրներ են, և նրանց պետբյուջեի եկամուտներում գերակշռում են էներգակիրների արտահանումից հարկային մուտքերը: 2014 թվականին Ռուսաստանի ֆեդերալ բյուջեի եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 21%-ը, որից ուղիղ կեսը նավթագազային սեկտորից ստացված միջոցներն են, իսկ Ղազախստանում նավթային ոլորտն ապահովում է բյուջեի եկամուտների 44%⁴-ը: Որպես կանոն, այս երկրներում բյուջեի դեֆիցիտը բավական փոքր է լինում, իսկ միջազգային շուկայում նավթի բարենպաստ գների դեպքում նույնիսկ պրոֆիցիտ է արձանագրվում, թեև 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո Ռուսաստանում այդ միտումը գրեթե չի պահպանվել: Այնտեղ խոշոր դեֆիցիտներ են արձանագրվել ինչպես 2010, այնպես էլ 2013 թվականին: Այս երկրներում ավանդաբար փոքր է նաև պետական պարտքի ցուցանիշը:

¹ ԵՏՄ-ի «գինը»՝ 250-270 մլն դոլար: <http://www.yerkir.am/am/news/76564.htm>

² Հայաստանի տնտեսական զեկույց-2014: Եվրասիական ինտեգրացիան և Հայաստանի առևտուրը: Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն: Հոկտեմբեր, 2014:

³ 2010-2013թթ. տվյալները ներկայացված են ըստ Եվրասիական տնտեսական համաձայնագրի հրապարակած վիճակագրական տեղեկագրի (Финансовая статистика таможенного союза и единого экономического пространства. Оперативные данные за 2013 год. Статистический сборник. Москва 2014), 2014 թվականի Բելառուսի տվյալները՝ Беларусь в цифрах-2015 վիճակագրական տեղեկագրի համաձայն, Ղազախստանի տվյալները՝ Ղազախստանի ֆինանսների նախարարության կայքում հրապարակված համախմբված բյուջեի կատարման մասին հաշվետվության տվյալների հիման վրա՝ որպես դոլարի փոխարժեք ընդունելով 182.3 տեղեկ 1 դոլարի դիմաց (2014 թվականի միջին փոխարժեքը), Ռուսաստանի համար՝ <http://ria.ru/economy/20150213/1047503099.html> կայքի տվյալները՝ որպես հաշվարկային փոխարժեք ընտրելով 38,2 ռուսական ռուբլին 1 դոլարի դիմաց:

⁴ Содружество при низкой цене на нефть. <http://newskaz.ru/comment/20141208/7307794.html>

Համախմբված բյուջեի և պետական պարտքի ցուցանիշները 2010-2014թթ.

(մլրդ դոլար)

	2010	2011	2012	2013	2014	2014թ %-ով ՀՆԱ-ի նկատմամբ
Եկամուտներ						
Հայաստան	2.0	2.2	2.4	2.7	2.7	25.8
Բելառուս	16.3	16.8	18,9	21,3	21.3	28.2
Ղազախստան	44.6	59,6	62,2	64,5	44.5	15.2
Ռուսաստան	527,6	710,5	754,0	755,8	690,3	21.0
Ծախսեր						
Հայաստան	2.4	2.5	2.6	2.9	2.9	27.4
Բելառուս	17,7	15,6	18.5	21,1	20.5	27.1
Ղազախստան	32,8	40,5	44,9	46,5	37.7	17.3
Ռուսաստան	579,0	676,1	745,5	781,2	712,4	21.5
Պետբյուջեի դեֆիցիտ (պրոֆիցիտ)						
Հայաստան	-0.4	-0.3	-0.2	-0.2	-0.2	
Բելառուս	-1.4	1,2	0.3	0.2	0,8	
Ղազախստան	11,9	19,2	17,3	18,0	6.8	
Ռուսաստան	-51.4	34,3	8,5	-25,3	22,1	
Պետբյուջեի դեֆիցիտը (պրոֆիցիտը) ՀՆԱ-ի նկատմամբ %-ով						
Հայաստան	-5,0	-2,8	-1.5	-1.6	-2.0	
Բելառուս	-2.6	2,1	0.5	0.2	1.0	
Ղազախստան	8,0	10,2	8,5	8,1	2.0	
Ռուսաստան	-3.4	1.5	0.4	-1.3	-0,5	
Պետական պարտքը (ՀՆԱ-ի նկատմամբ %-ով)						
Հայաստան	40.0	42.2	44.1	43.6	40.4 ¹	
Բելառուս	18,6	39,1	24,3	24,2	25.4 ²	
Ղազախստան	14,3	11,9	12,6	13.1	14,7 ³	
Ռուսաստան	7.8	8.3	8.4	8.7	9,1	

Բելառուսն աչքի է ընկնում պետական ֆինանսների հաշվեկշռվածությամբ, արտահանման մեջ զգալի բաժինը հումքային արտադրանքին է (մոտ 30%-ը), թեև մեծ մասնաբաժին ունի նաև էական ավելացված արժեք պարունակող արտադրանքը: Հայաստանը թեև արտահանման կառուցվածքով բավական նման է Բելառուսին (արտահանման 31%-ը հումքային արտադրանքն է, 17%-ը՝ սննդարդյունաբերության արտադրանքը), սակայն այստեղ ցածր են արտահանման բացարձակ ցուցանիշները, ինչը հնարավորություն չի տալիս արտահանումը դիտարկելու որպես Հայաստանի տնտեսության դինամիկ զարգացման գործոն⁴: Երկրում տնտեսական ակտիվության ցածր աստիճանի հետևանքով փոքր է նաև հարկման բազան և հետևաբար նաև՝ բյուջեի մուտքերը: Այդ իսկ պատճառով էլ Հայաստանում պետական բյուջեի հիմնական բնութագրիչը խրոնիկական դեֆիցիտն է, ինչի արդյունքում պետական պարտքի ցուցանիշը հասել է ՀՆԱ-ի 40,4%-ի (2014թ.), թեև 2012թ. (ՀՆԱ 44,1%) համեմատ այն որոշակի նվազում է արձանագրել: Այս առումով պետք է նկատել, որ մակրոտնտեսական այն ցուցանիշները, որոնք ԵՏՄ պայմանագրով համարվում են սահմանային անդամ-պետությունների տնտեսական զարգացումը խոչընդոտելու տեսանկյունից (այն է՝ բյուջեի տարեկան դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3 %-ը, պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50 %-ը), բավական մեղմ են: Իհարկե, ԵՄ երկրների համար այդ սահմանը ՀՆԱ-ի 60%-ն է, նման սահման նշում է նաև Արժույթի միջազգային հիմնադրամը, սակայն հաշվի առնելով ԵՏՄ անդամ-պետություններում

¹ Հաշվարկվել է հեղինակի կողմից՝ որպես պետական պարտքի ցուցանիշ ընդունելով 4,4մլրդ դոլարը, իսկ ՀՆԱ ցուցանիշ՝ 10,9մլրդ դոլարը (4,5 տրլն դրամ):
² Աղբյուրը՝ <http://www.imperiya.by/news.html?id=157366>.
³ Հաշվարկվել է <http://www.finmarket.ru/news/3947728> և http://kapital.kz/finance/36412_gosdolgkazakhstanaza-2014-god-vyros-na-27-6.html կայքերի տվյալների համադրությամբ:
⁴ Риски для государственных финансов государств-участников СНГ в свете текущей мировой нестабильности. Евразийский банк развития. Санкт-Петербург. 2012, стр. 16.

ռիսկայնության բարձր աստիճանը՝ ավելի ցածր կրիտիկական շեմի սահմանումը ավելի նպատակահարմար կարող էր լինել կայուն տնտեսահարաբերությունների զարգացման տեսանկյունից: Եվ եթե միասնական տնտեսական տարածքի շրջանակներում մակրոտնտեսական քաղաքականության ունիֆիկացիան ենթադրում է զոնե ինչ-որ առումով դիտարկված ցուցանիշների համահարթեցում, ապա հուսադրող կարելի է համարել այն կանխատեսումը, որ ապագայում (թեկուզ՝ ոչ շատ մոտ) Հայաստանը կկարողանա կրճատել պետական պարտքի մի մասը:

Աղյուսակ 3

Անդամ-պետությունների բյուջեների կառուցվածքը 2014թ.

	ՀՀ ¹	ԲՀ ²	ՂՀ ³	Ու ⁴
Եկամուտներ	100	100	100	100
• շահութահարկ	9.1	8.4	15.3	9.0
• եկամտահարկ	26.8 ⁵	17.7	7.3	10.2
• ավելացված արժեքի հարկ	38.7	37.3	19.6	14.9 ⁵
• ակցիզային հարկ	4.4	11.9	0.7	3.6
• մաքսատուրք	4.3	10.1	12.0	20.7
• այլ եկամուտներ	16.7	14.6	45.1 ⁷	41.6 ⁵
Ծախսեր	100	100	100	100
• ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	17.8	24,0	6.0	6.0
• պաշտպանություն	16.3	3,3	5.2	9.6
• հասարակական կարգ և անվտանգություն	9.0	6,1	7,6	8.7
• տնտեսական հարցեր և շրջակա միջավայրի պաշտպանություն	4.6	16.8	13.5	12,3
• առողջապահություն	6,4	13,5	10,8	9,7
• կրթություն	9,7	17,2	17,7	12
• սոցիալական ապահովություն	29,3	8,4	20,8	33,2
Այլ ծախսեր	6,9	16,7	18,4	9,3

Այժմ դարձյալ անդրադառնանք ավելացված արժեքի հարկին. վերջինիս մասնաբաժինը բյուջեի եկամուտներում ամենամեծը Հայաստանում է, թեև ԱԱՀ դրույքաչափը գրեթե նույնն է Հայաստանում և Բելառուսում (20%), ՌԴ-ում տարբերակված է 18% և 10%, իսկ Ղազախստանում այն 12% է: Ինտեգրացիոն գործընթացների համատեքստում կարելի է ակնկալել Հայաստանում այս հարկատեսակի դրույքաչափի հետագա նվազում, ինչը կարող է փոքր-ինչ մեղմել երրորդ երկրների նկատմամբ կիրառվող առևտրային սահմանափակումների⁹ արդյունքում հնարավոր ներմուծվող ապրանքների զների աճը: Բայց այդ դեպքում կունենանք նաև բյուջեի եկամուտների զգալի կորուստ, օրինակ, եթե ԱԱՀ-ն Հայաստանում նվազեցվի մինչև 15%, ապա

¹ Հայաստանի տվյալները ներկայացված են ըստ «Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը 2014թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական հրապարակման:

² Բելառուսի տվյալները ներկայացված են 2014թ. հունվար-սեպտեմբերի դրությամբ: Աղբյուրը՝ О состоянии государственных финансов Республики Беларусь. (Январь-сентябрь 2014 года). www.minfin.gov.by.

³ Ղազախստանի բյուջեի եկամուտների տվյալները ներկայացված են 2014թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ, աղբյուրը՝ ԴՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակված տվյալներ (Исполнение государственного бюджета по доходам на 05.09.2014 года в сравнении с аналогичным периодом прошлого года), իսկ բյուջեի ծախսերի տվյալները ներկայացված են ըստ նույն կայքի մեկ այլ տեղեկագրի՝ Отчет об исполнении консолидированного бюджета РК на 01 декабря 2014 года.

⁴ Ռուսաստանի համար ներկայացվել են համախմբված բյուջեի ցուցանիշները, ՌԴ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում տեղադրված վիճակագրական տվյալների հիման վրա http://info.minfin.ru/kons_doh_isp.php.

⁵ Հայաստանի համար այս ցուցանիշը ներառում է նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

⁶ Ներառում է ՌԴ տարածքում ապրանքներից ԱԱՀ-ն (8,3%) և ՌԴ ներմուծվող ապրանքներից ԱԱՀ-ն (6,6%):

⁷ Ղազախստանի բյուջեի եկամուտներում մեծ տեսակարար կշիռ են կազմում նաև արտաքին առևտրի և արտաքին գործառնությունների համար գանձվող հարկը (14%) և սոցիալական հարկը (7%):

⁸ ՌԴ պետական բյուջեի եկամուտներում մեծ տեսակարար կշիռ են կազմում նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարները (18%), ինչպես նաև բնական ռեսուրսների օգտագործման դիմաց գանձվող վճարները (12,1%):

⁹ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով նախատեսվում են որոշակի սահմանափակումներ և արգելքներ՝ երրորդ երկրներից դեպի ԵՏՍ երկրներ որոշ ապրանքներ ներմուծելու (ԵՏՍ երկրներից դեպի երրորդ երկրներ արտահանելու) համար: Իսկ սահմանափակման ենթակա ապրանքների արտաքին առևտուրը պետք է իրականացվի լիցենզիաների կամ թույլտվությունների հիման վրա, որոնք պետք է տրամադրեն տվյալ երկրի համապատասխան լիցենզավորող մարմինները:

տարեկան բյուջեի մուտքերը կկրճատվեն մոտ 250 մլն դոլարով, հետևաբար հարկային քաղաքականության վերանայումն այս ուղղությամբ պետք է խիստ հիմնավորված լինի, մասնավորապես ԱԱՀ դրույքաչափի նվազեցումը պետք է աստիճանաբար տեղի ունենա և ուղեկցվի ներքին արտադրության զարգացման համար տնտեսական խթաններով, ինչը հնարավորություն կտա չափավոր ԱԱՀ գանձելու նաև տեղական արտադրողներից, այլ ոչ միայն ներմուծվող արտադրանքից:

Ինչ վերաբերում է շահութահարկին, ապա վերջինիս արդյունավետությունն ամենաբարձրը Ղազախստանում է, որտեղ գործում է շահութահարկի ամենացածր դրույքաչափը՝ 15%, Բելառուսում այն 18% է (թեև նախատեսվում է 2015թ. այն նվազեցնել մինչև 15%՝ բյուջեի եկամուտների կառուցվածքի բարելավման նկատառումներով¹), իսկ Ռուսաստանում և Հայաստանում՝ 20%: Շահութահարկի դրույքաչափի համահարթեցումը նույնպես հավակնում է մոտ ապագայում հայտնվել անդամ-պետությունների օրենսդրական փոփոխությունների օրակարգում, քանի որ կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի պայմաններում հատկապես կապիտալը միտում ունի հոսել հենց այն երկիր, որտեղ շահութահարկի գծով պայմանները առավել բարենպաստ են, և եթե Հայաստանը ԵՏՄ անդամակցությունից ակնկալում է նաև ուղղակի ներդրումների աճ, ապա շահութահարկի դրույքաչափի նվազեցումն անխուսափելի միջոցառում է: Վերջինս կարող է եռակի դրական հետևանք ունենալ՝ խթանելով ոչ միայն ստվերային տնտեսության կրճատումը, օտարերկրյա ներդրումների ներգրավումը, այլ նաև տեղական գործարարության աշխուժացումը:

Անդրադառնանք նաև եկամտահարկի գծով բյուջետային մուտքերին, որոնց տեսակարար կշիռն ամենամեծը Հայաստանում է, այն դեպքում, երբ ամսական միջին աշխատավարձի ցուցանիշով Հայաստանը էապես զիջում է մյուս երեք պետություններին. եթե Հայաստանում այն կազմում է ընդամենը 357 դոլար, ապա Բելառուսում 572 դոլար է, Ղազախստանում՝ 714 դոլար, իսկ Ռուսաստանում՝ 941 դոլար: Տարբերություններն էական են նաև եկամտահարկի դրույքաչափերում. ամենացածրը Ղազախստանում է՝ 10%, իսկ շահաբաժինների տեսքով եկամուտների համար՝ 5%, այնուհետև Բելառուսում՝ 13%, իսկ բարձր տեխնոլոգիական ոլորտում զբաղվածների համար՝ 9%, ոչ ռեզիդենտների, մասնավոր ձեռնարկատիրությամբ և նոտարական գործունեությամբ զբաղվողների համար՝ 16%, Ռուսաստանում նույնպես հիմնական դրույքաչափը 13% է, թեև հատուկ դեպքերի համար գործում են 9, 15, 30, 35 դրույքաչափեր, մինչդեռ Հայաստանում մինչև 120000 դրամ եկամուտները հարկվում են 24,4 դրույքաչափով, 120000 դրամը գերազանցելու դեպքում գերազանցող մասը՝ 26% դրույքաչափով. իսկ 2000000 դրամից ավելի դեպքում՝ 36% դրույքաչափով: Հարկային քաղաքականության միասնականացման համատեքստում եկամտահարկի դրույքաչափերի նվազեցումը Հայաստանում նույնպես կարող է զգալի դրական հետևանքներ արձանագրել՝ ստվերային զբաղվածության նվազեցման, երկրից աշխատուժի արտահոսքի կրճատման և սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավման և այլ առումներով:

Բյուջեի մուտքերի փոփոխությունները քիչ հավանականությամբ կարող են բյուջեի ծախսերի կառուցվածքի վերանայման որոշակի անհրաժեշտություն առաջացնել, ուստի կարևորվում է ԵՏՄ անդամ-պետությունների բյուջեների ծախսերի վերլուծությունը: Զգալիորեն կարևորվում է հատկապես պետական եկամուտների համադրումը բյուջեի ծախսերի կառուցվածքի, մասնավորապես սոցիալական բնույթի (առողջապահություն, կրթություն, սոցիալական ապահովություն) ծախսերի հետ: Սոցիալական բնույթի ծախսերն ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ՌԴ բյուջեում՝ ավելի քան 54% (միայն 33,2-ը սոցիալական ապահովության ծախսերն են), այնուհետև՝ Ղազախստանում՝ 49,5% (որտեղ սակայն ծախսերի բաշխումը համեմատաբար հավասարաչափ է) և Հայաստանում՝ 40,6%: Հատկանշական է, որ Բելառուսում սոցիալական ապահովությանն ուղղված ծախսերն ընդամենը 8,4% են, իսկ կրթության ու առողջապահության վրա կատարվող ծախսերը համեմատաբար ավելի բարձր՝ 13,5% և 17,2% համապատասխանաբար: Ակնառու

¹ Повышение в Беларуси ставки НДС обсуждается, а понижение экономически необоснованно - Минфин. Новости Беларуси. http://www.belta.by/ru/all_news/economics/Povyshenie-v-Belarusi-stavki-NDS-obsuzhdaetsja-a-ponizhenie-ekonomicheskineobosnovanno-Minfin_i_677663.html

հանգամանք է նաև այն, որ Հայաստանում բավական մեծ բաժին են կազմում պաշտպանության վրա կատարվող ծախսերը, հանգամանք, որն անհնար է անտեսել հարկաբյուջետային քաղաքականության վերաձևման բոլոր տարբերակների քննության ժամանակ, քանի որ Հայաստանը փաստացի պատերազմական հակամարտության մեջ գտնվող երկիր է, և ծախսային այս հոդվածում կրճատումները գոնե աշխարհաքաղաքական ներկա զարգացումների պայմաններում անթույլատրելի են:

Այսպիսով, ընդհանրացնելով ԵՏՄ անդամակցության հետևանքով ՀՀ հարկաբյուջետային ոլորտում հնարավոր փոփոխությունները, կարելի է եզրակացնել, որ եթե նույնիսկ բյուջեի բացարձակ ցուցանիշներով մոտ ապագայում դրական տեղաշարժերը տեսանելի չլինեն, ապա կառուցվածքային (որակական) առումով բյուջետային գործընթացների (մասնավորապես հարկային համակարգում) կատարելագործումն ավելի ուշ հնարավորություն կտա ունենալու ավելի մեծ բյուջետային մուտքեր՝ առավել արդյունավետ կառուցվածքով և պետականորեն անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման ավելի մեծ հնարավորություններով:

ԵՏՍ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *պ. գ. թ., դոցենտ*

*ՄԳԱԱ Մ. Զոհրաբյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, գիտաշխատող*

Համառոտագիր

Թեև եվրասիական տնտեսական ինտեգրացիայի ներկա փուլում անդամ-պետությունների հարկաբյուջետային քաղաքականության միասնականացման որոշակի պահանջ չկա, այնուամենայնիվ միասնական տնտեսական տարածքի զաղափարը ենթադրում է, որ այս ոլորտում փոփոխություններն անխուսափելի են: Հոդվածում համեմատական վերլուծություն է իրականացվել ԵՏՍ անդամ-պետությունների հարկաբյուջետային համակարգերի միջև, մատնանշվել են ԵՏՍ անդամակցության հետևանքով հնարավոր փոփոխությունները, դրանց ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա:

Բանալի բառեր. *եվրասիական տնտեսական միություն, ինտեգրացիա, հարկաբյուջետային համակարգ, բյուջեի դեֆիցիտ, շահութահարկ, եկամտահարկ, մաքսափոխ, ավելացված արժեքի հարկ, պետական ծախսեր, պետական պարտք:*

**ВЛИЯНИЕ ВОЗМОЖНЫХ ИЗМЕНЕНИЙ В НАЛОГОВО-БЮДЖЕТНОЙ СФЕРЕ НА ЭКОНОМИКУ АРМЕНИИ
ВСЛЕДСТВИЕ ПРИСОЕДИНЕНИЯ К ЕАЭС**

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *կ. ճ. ն., դոցենտ*

*научный сотрудник, завотделением Института
экономики им. М. Котаяна НАН РА*

Аннотация

Хотя на нынешнем этапе евразийской экономической интеграции нет никаких конкретных требований к унификации налогово-бюджетной политики государств-членов, однако идея единого экономического пространства предполагает, что изменения в этой сфере неизбежны. В статье проведен сравнительный анализ налогово-бюджетной системы государств-членов ЕАЭС, а также указаны возможные изменения и их влияние на экономику Армении в результате присоединения к ЕАЭС.

Ключевые слова: *Евразийский экономический союз, интеграция, налогово-бюджетная система, дефицит бюджета, налог на прибыль, подоходный налог, таможенная пошлина, налог на добавленную стоимость, государственные расходы, государственный долг.*

**THE IMPACT OF POSSIBLE CHANGES IN THE FISCAL SECTOR ON THE ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA
AS A RESULT OF ACCESSION TO THE EURASIAN ECONOMIC UNION**

GAYANE HARUTYUNYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

Although the current stage of the Eurasian economic integration doesn't specifically require fiscal harmonization by the member-states, however, the concept of common economic space suggests that those changes would be inevitable. The article provides a comparative analysis of fiscal systems of member-states of the Eurasian Economic Union (EAEU), illustrates the possible changes to anticipate in the Republic of Armenia and their impact on the economy as a result of Armenia's accession to the EAEU.

Keywords: *Eurasian economic union, integration, fiscal system, budget deficit, profits tax, income tax, customs duty, value-added tax, government expenditures, public debt*

ԿԵՆՍԱՅՈՒՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության բնակչության նկատմամբ կենսաթոշակային պարտավորությունները չեն տարբերվում պետության պաշտպանության, առողջապահության, կրթության և այլ ռազմավարական ոլորտների նկատմամբ բյուջետային պարտավորություններից: Կենսաթոշակային պարտավորությունների արդյունավետ իրականացումը պահանջում է կենսաթոշակային համակարգի որոշակի բարեփոխումներ, որոնք Հայաստանի Հանրապետությունում մեկնարկել են 2008թ.-ից:

Հայաստանի Հանրապետությունում բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրման նպատակով ՀՀ կառավարության՝ 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրում նախատեսվել էր կենսաթոշակային բարեփոխումների իրականացում, որի արդյունքում 2008թ. ընդունվել է «ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1487-Ն որոշումը¹: 2010թ. դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն է արժանացել կենսաթոշակային բարեփոխումների օրենսդրական փաթեթը, որի մեջ ներառված էր նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը²: Կենսաթոշակային կուտակային ընդհանուր համակարգի գործունեության ապահովման համար մշակվել է նշված օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկ, որը հաստատվել է ՀՀ վարչապետի՝ 2013թ. փետրվարի 16-ի թիվ 113-Ա որոշմամբ:

ՀՀ կառավարության թիվ 1487-Ն որոշմամբ հիմնավորվում է կենսաթոշակային բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, քանի որ կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակներում կյանքի միջին տևողության ավելացումը համարվում է անբարենպաստ միտում: Նշված որոշմամբ արձանագրված մտահոգություններից է նաև կենսաթոշակային վճարների չափը ՀՆԱ-ի կազմում՝ 4.3%, որը 3 անգամ գերազանցում է առողջապահական և 1.6 անգամ կրթական ծախսերը, սակայն հաշվի չի առնվում, որ կենսաթոշակային վճարները 1 ամսվա ընթացքում վերադառնում են տնտեսությունն առաջացնելով հարկային պարտավորություններ: Թիվ 1487-Ն որոշմամբ արձանագրված մտահոգություններից գլխավորը վիթխարի ստվերային տնտեսության առկայությունն է, որն ընդհուպ մինչև 2065թ. կարող է մնալ անփոփոխ³:

Անշուշտ, ստվերային տնտեսության ծավալների կրճատումը լուրջ խնդիր է ցանկացած պետության համար, քանի որ պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացումը լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում պետության ռազմավարական խնդիրների լուծման համար: ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարների հավաքագրումը դիտարկել որպես բացառիկ գերակա հանրային շահ⁴: Նշված մոտեցումն անրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»⁵:

Ելնելով վերոգրյալից՝ նպատակահարմար է, որպեսզի պետական լիազոր մարմինը, հանդիսանալով հարկ վճարողների շահույթի 20%-ի սեփականատեր, պետական եկամուտների հավաքագրումը և ստվերային տնտեսության դեմ պայքարն իրականացնի բացառիկ գերակա հանրային շահից բխող հանգամանքներով, այն է՝ օրենքի խախտումներով աշխատող հարկ վճարողներից, ըստ խախտման ծանրության աստիճանի, հոգուտ պետության կամ բարեխիղճ ներդրողի օտարել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված սեփականության իրավունքի օբյեկտները (անշարժ կամ շարժական

¹ <http://www.gov.am/files/docs/994.pdf>

² «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1

³ ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1487-Ն որոշումը:

⁴ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2006.12.20/64 (519):

⁵ ՀՀ Սահմանադրություն, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր N 19(254), 12 ապրիլի 2003թ.:

գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն)¹: Վերջինս, կարծում ենք, կնպաստի ստվերային տնտեսության ծավալների որոշակի կրճատմանը:

Կենսաթոշակային համակարգի բարեփոխումները պայմանավորված են նաև պետության ֆինանսական ռեսուրսների սակավությամբ (պետական բյուջեի պակասուրդով): Այս պարագայում նպատակահարմար ենք համարում պետական բյուջեի մասին օրենքն ընդունելիս եկամտային մասուն ընդգրկել հետևյալ երեք ցուցանիշները.

- **Նվազագույն պետական բյուջեի ցուցանիշը** պետք է բաղկացած լինի նախորդ տարվա ցուցանիշից գումարած կանխատեսվող ՀՆԱ-ի աճը:

- **Միջին պետական բյուջեի ցուցանիշը** պետք է օրենքով սահմանված կարգով հնարավորություն տա յուրաքանչյուր եռամսյակը մեկ կատարելու հավաքագրման ենթակա գումարների ճշգրտում՝ բացառությամբ նվազեցման, ելնելով հաճախ հանդիպող այնպիսի դեպքերից, ինչպիսիք են՝ տարվա ընթացքում մեծ գումարներով վարկի ստացումը, մեծածավալ ներդրումների իրականացումը, բյուջեի հանդեպ նախկին պարտավորությունների կատարումը և նմանատիպ, նախապես չծրագրված գործողությունները:

- **Իրական պետական բյուջեի ցուցանիշը** պետք է բավարարի այնպիսի պահանջների կատարմանը, որոնք կբարելավեն Հայաստանի Հանրապետության միջազգային տարատեսակ վարկանիշային դիրքերը, ստանալով պետական պարտքի զիջում, կրճատում, մարման բարենպաստ պայմաններ, ինչպես նաև նվազագույնի կհասցնեն ստվերային տնտեսությունը:

Կարծում ենք՝ պետական բյուջեի եկամուտների ավելացումը և հատկապես ստվերային տնտեսության ծավալների կրճատումը զգալի դրական տեղաշարժեր կառաջացնեն նաև կենսաթոշակային համակարգում:

Անշուշտ, պետության կողմից իրականացվող ցանկացած բարեփոխման նպատակն է ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացումը: Բացառություն չեն կազմում նաև կենսաթոշակային համակարգի բարեփոխումները, որոնց արդյունքում կենսաթոշակը թվից պետք է վերածվի կառուցվածքի՝ ունենալով առնվազն հետևյալ բաղադրիչները՝ նվազագույն զանբյուլ, առողջության պահպանման միջին ծախսեր, խնայողությանն ուղղվող միջոցներ: Ցանկալի է նաև, որ բոլոր մեխանիզմները, համակարգերը, ռիսկերը ծավալվեն պետական վերահսկողության և ապահովագրության ներքո, անաշխատունակ մարդկանց զերծ պահելով տարատեսակ ֆոնդերի եկամտաբերության, վարկանիշային դիրքերի և այլ մասնագիտական եզրերի իմացությունից, նվազագույնի հասցնելով կենսաթոշակ ստանալու նպատակով անհատի հարաբերությունը «ներդրումային ֆոնդերի» հետ (ինչպես օրինակ՝ աշխատողներն աշխատավարձ ստանալու նպատակով չեն առնչվում ակցիզային հարկին, հարկատուներին կամ հարկային մարմիններին):

Հայաստանի Հանրապետության կուտակային կենսաթոշակային համակարգը ներդնելիս ուսումնասիրվել է 16 երկրների փորձը (Չիլի, Բոլիվիա, Ուրուգվայ, Մեքսիկա, Պերու, Արգենտինա, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Լեհաստան, Հունգարիա, Ռումինիա, Բուլղարիա, Էստոնիա, Խորվաթիա, Մակեդոնիա, Շվեդիա) և ընտրվել է Էստոնիայի փորձը, սակայն Էստոնիայում վարձու աշխատողը կենսաթոշակային հաշվեհամարին փոխանցում է 2%, պետությունը՝ 4%, Հայաստանի Հանրապետությունում վարձու աշխատողը կենսաթոշակային հաշվեհամարին փոխանցում է 5%, պետությունը՝ 5%, անցումը համակարգին Էստոնիայում 1983թ. հետո ծնվածների համար է, Հայաստանի Հանրապետությունում՝ 1974թ. հետո ծնվածների համար. առկա է երեք առանցքային տարբերություն: Բացի այդ, կենսաթոշակային համակարգերի համաշխարհային գործակիցներում (Global Pension index) Էստոնական կենսաթոշակային համակարգի վերաբերյալ տվյալները բացակայում են: Միաժամանակ Էստոնիայի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական ցուցանիշներն էականորեն տարբերվում են Հայաստանի Հանրապետության ցուցանիշներից:

Ինչպես հայտնի է, գոյություն ունեցող «Սերունդների համերաշխության սկզբունքը» ենթադրում է մասնավորապես երեք վարձու աշխատող մեկ կենսաթոշակառու համամասնությունը, Հայաստանի Հանրապետությունում այն համարվել է 1/1, որը, ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների, 2,2-ի սահմաններում է. առկա է շեղում 650.0 հազ. վարձու աշխատողի գոյության վերաբերյալ :

¹ «Հասարակության և պետական կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք:

Այժմ դիտարկենք արտասահմանյան 16 երկրների և ՀՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները ստորև ներկայացված աղյուսակ 1-ի միջոցով:

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ ՀՆԱ-ի մեծությամբ Հայաստանի Հանրապետությունը համեմատաբար մոտ է գտնվում Մակեդոնիային և Էստոնիային, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությամբ՝ Բուլղարիային և Մակեդոնիային, և կյանքի միջին տևողությամբ՝ Էստոնիային, Պերուին, Կոլումբիային, Հունգարիային, Ռումինիային, Բուլղարիային և Մակեդոնիային:

Աղյուսակ 1

Արտասահմանյան 16 երկրների և ՀՀ սոցիալ-տնտեսական ցուցանիշները

h/h		ՀՆԱ, մլրդ ԱՄՆ դոլար	Գրաված տեղը աշխարհում	ՀՆԱ 1 շնչի հաշվով, հազ.ԱՄՆ դոլար	Գրաված տեղը աշխարհում	Կյանքի միջին տևողությունը
1.	Էստոնիա	34.4	109	18.1	42	72.5
2.	Չիլի	396.0	42	16.0	45	77.1
3.	Բուլղարիա	65.4	91	2.7	122	66.3
4.	Ուրուգվայ	66.8	90	16.8	44	76.0
5.	Մեքսիկա	2059.0	11	11.2	55	75.9
6.	Պերու	358.0	48	6.8	77	70.2
7.	Արգենտինա	928.0	23	11.7	54	76.4
8.	Կոլումբիա	602.0	31	7.8	69	72.3
9.	Կոստա Ռիկա	67.6	89	10.2	62	77.3
10.	Լեհաստան	897.0	25	13.4	59	76.7
11.	Հունգարիա	230.0	58	12.6	61	73.1
12.	Ռումինիա	371.0	47	8.6	66	72.0
13.	Բուլղարիա	120.0	77	7.4	72	73.2
14.	Խորվաթիա	86.6	82	13.5	58	75.1
15.	Մակեդոնիա	26.1	124	5.0	92	74.3
16.	Շվեդիա	411.0	41	57.3	7	80.7
17.	Հայաստանի Հանրապետություն	23.1	131	3.2	116	72.4

Կուտակային կենսաթոշակային համակարգի նախընտրելի մոդելի ընտրության հետ կապված առաջարկում ենք ուսումնասիրության առարկա դարձնել Չիլիի օրինակը՝ Էլնեկով հետևյալ հանգամանքներից.

1. արտահանման և ներմուծման կառուցվածքով զգալի նմանություն Հայաստանի Հանրապետության հետ.

- արտահանումը՝ պղինձ, մոլիբդեն, նրբեր, գինի, քիմիական արտադրանք, ձկնեղեն և այլն,
- ներմուծումը՝ նավթ-նավթամթերք, գազ, էլեկտրատեխնիկա, քիմիկատներ, ավտոմեքենաներ և այլն,

2. ԵՏՄ անդամ Ղազախստանն ամբողջությամբ ընդօրինակել է Չիլիի կենսաթոշակային համակարգը (Ռուսաստանի Դաշնությունում բարեփոխումները դադարեցվել են մինչև 2016թ.):

Անշուշտ, կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը պարունակում է նաև որոշակի ռիսկեր, որոնք անհրաժեշտ է դասակարգել, վերահսկել և կառավարել: Այդ ռիսկերից են.

1. լիազոր մարմնի պլանային առաջադրանքի (պետական բյուջեի եկամտային մասի) գերակատարման ռիսկը, երբ հարկ վճարողը ստիպված թերհայտարարագրում է աշխատավարձի վճարմանն ուղղված միջոցների մակարդակը կամ օրենքով սահմանված կարգով չի ձևակերպում վարձու աշխատողին:

2. Կոռուպցիոն ռիսկ, երբ հարկ վճարողը փոխշահավետ պայմաններով թերհայտարարագրում է աշխատավարձի վճարմանն ուղղված միջոցների մակարդակը կամ օրենքով սահմանված կարգով չի ձևակերպում վարձու աշխատողին:

3. Ինֆլյացիոն ռիսկ, երբ ներդրումային ֆոնդերի եկամտաբերությունը չի գերազանցում արժեզրկման մակարդակը:

4. Քաղաքական ռիսկ, երբ կառավարությունը կամ Ազգային ժողովը որոշում են ընդունում փոփոխության ենթարկել գործող օրենքը:

5. Այլ ռիսկեր, որոնք տեսանելի են Ֆինանսների նախարարության, Կենտրոնական բանկի և այլ լիազոր մարմինների կողմից:

Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ռիսկերի կառավարման հիմնախնդիրների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ հարցը վերաբերում է 63-ից բարձր տարիքի մարդկանց, որոնք հիմնականում լինում են վատառողջ, միայնակ, անօգնական և չեն կարող լիարժեք պաշտպանել իրենց իրավունքները:

Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային համակարգի ներդրման ռիսկերի կառավարման մեխանիզմների մշակումը և ենթաօրենսդրական կարգավորումը հիմնականում իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Կենսաթոշակային ֆոնդերի ռիսկերի կառավարման գործում մեծ դերակատարում ունեն նաև կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչները, ովքեր պարտավոր են գործարկել ռիսկերի կառավարման համակարգը:

Հասկանալի է, որ ոչ մի երկրի կենսաթոշակային համակարգ անթերի չէ, և յուրաքանչյուր պետության խնդիրն է հնարավորինս կատարելագործել այն՝ նպատակ ունենալով բարձրացնելու կենսաթոշակառուների կենսամակարդակը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք առաջարկել ՀՀ կենսաթոշակային համակարգի արդյունավետության բարձրացման և կենսաթոշակառուների կյանքի պայմանների բարելավման հետևյալ ուղիները.

1. ձևավորել կենսաթոշակային համակարգի հայկական մոդել՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, 63 տարեկանից հետո աշխատել ցանկանալու և կարողանալու հանգամանքը (կիրառել նախադեպերը, օրինակ՝ դատավորների), հարկադիր կենսաթոշակի անցնելու բացասական ազդեցությունն առողջության վրա:

2. Սոցիալական մարմինների միջոցով ուսումնասիրել կենսաթոշակառուների գերակա խնդիրները և հավաքագրված միջոցներով ստեղծել այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ դրանցում ներառելով 63 տարեկանից բարձր անձանց համար նախատեսված հանգստի և առողջապահական հաստատություններ, աշխատատեղեր: Անհրաժեշտության դեպքում կենսաթոշակառուների համար կազմակերպել համապատասխան մասնագիտական վերապատրաստումներ:

3. Ինքնահայտարարագրման միջոցով աշխատունակությունը բնորոշել ոչ թե տարիքից, այլ ֆիզիկական հատկություններից ելնելով, որի արդյունքում կենսաթոշակային տարիքային շեմը կարող է բարձրանալ, իսկ հետագայում կենսաթոշակային տարիքը կարող է անհատականացվել:

4. Ձևավորել ՀՀ «Ազգային առողջության ծրագիր», որի գերակա նպատակը կլինի կյանքի միջին տևողության զգալի բարձրացումը և կենսաթոշակային տարիքի օպտիմալ շեմի որոշումը:

5. Կիրառել խստագույն պատասխանատվության միջոցներ այն պետական և մասնավոր հաստատությունների նկատմամբ, որոնք որպես աշխատանքի ընդունման չափանիշ հայտարարում են տարիքը և բարեստության հանգամանքը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում կա 1 միլիոն չաշխատող բնակչություն (գործազուրկներ՝ աշխատանք փնտրող, նյութապես ապահովվածներ՝ աշխատելու անհրաժեշտություն չունեցողներ, այլ օբյեկտիվ պատճառներով չաշխատողներ) և 1 միլիոն 150 հազար աշխատող բնակչություն, սակայն բոլոր դեպքերում հաշվետու ժամանակաշրջանում կենսաթոշակառու է լինում 500 հազար քաղաքացի, որից մոտ 250 հազարը կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակներից դուրս, հետևաբար, հիմք ընդունելով սահմանադրությամբ ամրագրված քաղաքացիների իրավունքների հավասարության դրույթը, անհրաժեշտ է ձևավորել համակարգից օբյեկտիվ պատճառներով օգտվել չկարողացողների համար ևս որևէ արդյունավետ համակարգ:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՍՎԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ, *դ.գ.թ.*,

ՄԳԱԱ Մ.Կոտանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Հիմնախնդրի արդյունավետ լուծում կարող է հանդիսանալ կենսաթոշակային համակարգին կարգավիճակ շնորհելը՝ մասնավորապես հավասարեցնելով պետական կարևորագույն պարտավորություններին, ինչպիսիք պաշտպանության, առողջապահության, կրթության ֆինանսավորումն է: Փորձը ցույց է տվել, որ լիազոր մարմինն ընդունակ է կատարելու ցանկացած պլանային առաջադրանք ի հաշիվ չօգտագործված ռեսուրսների: Նշվածի ապացույցն այն հանգամանքն է, որ կենսաթոշակները 60% բարձրացնելու քաղաքական որոշումն անմիջապես կատարվեց՝ ապահովելով հավաքագրումների համապատասխան աճ, առանց հաշվի առնելու տնտեսական ճգնաժամերը, տարատեսակ ՀՆԱ կանխատեսումները և այլ բացատրություններ:

Բանալի բառեր. *ոլս, կուրսակային, կենսաթոշակ, համակարգ, բյուջե, օրենք, տնտեսություն, ֆինանսավորում, բարեփոխում, թոշակատու, մոդել:*

ПРОБЛЕМЫ РЕФОРМИРОВАНИЯ ПЕНСИОННОЙ СИСТЕМЫ В РА

ТИГРАН МУРАДЯН, *к.э.н.*

*научный сотрудник Института
экономики им. М. Котаняна НАН РА*

Аннотация

Эффективным решением проблемы является присвоение особого статуса пенсионной системе, в частности, приравнивание ее к таким важнейшим государственным обязательствам, как финансирование обороны, здравоохранения и образования. Опыт показывает, что уполномоченный орган в состоянии выполнить любое плановое задание за счет неиспользованных ресурсов. Доказательством сказанному служит тот факт, что политическое решение о повышении пенсий на 60% было сразу выполнено с обеспечением соответствующего роста сборов без учета экономических кризисов, многовариантных прогнозов роста ВВП и прочих пояснений.

Ключевые слова: *риски, накопительная пенсия, система, бюджет, закон, экономика, финансирование, реформа, пенсионеры, модель.*

THE ISSUES ON PENSION SYSTEM REFORMS IN THE REPUBLIC OF ARMENIA

TIGRAN MURADYAN, *Doctor of Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

One of the approaches to the issue could be a special status granted to the pension system, particularly being considered as one of the most important commitments of the government, such as the spending on defense, healthcare, and education is. The lessons of the past prove that each responsible agency or institution is able to carry out any planned task using resources that haven't been allocated or haven't been available. The proof of this statement is the political decision to raise pensions by 60% that was made possible by ensuring the respective increase in revenues collected without taking into account economic crises, various GDP forecasts or other explanations.

Keywords: *Risk, defined-contributions, pension, system, budget, law, economy, financing, reform, pensioner, model.*

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխարհի շատ երկրներում 20-րդ դարի վերջում ակտիվորեն սկսեցին իրականացնել կենսաթոշակային բարեփոխումներ: Այս գործընթացի հիմնական նպատակը կուտակային կենսաթոշակային համակարգին անցնելն է: Կենսաթոշակային բարեփոխումների կոնկրետ էությունն այս կամ այն երկրում կախված է այդ երկրի յուրահատուկ պատմական, քաղաքական և ֆինանսական պայմաններից:

Կենսաթոշակային համակարգերը լուրջ ազդեցություն ունեն տնտեսության և առհասարակ հասարակության զարգացման վրա: Տեղի ունեցող ժողովրդագրական տեղաշարժերը ստեղծում են մի իրավիճակ, երբ գործնականում անցումը կուտակային կենսաթոշակային համակարգի չունի այլընտրանքներ: Այդ տեղաշարժերը դարձնում են բաշխողական կենսաթոշակային համակարգի պահպանումը ոչ հեռանկարային: Չնայած ժողովրդագրական խնդիրներին՝ տարբեր երկրներում գոյություն ունեն ֆինանսական, կազմակերպչական և այլ խնդիրներ, որոնք ավելի են կարևորում կենսաթոշակային բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը: Բայց պետք է նկատի ունենալ, որ ցանկացած համակարգ, իր դրական կողմերով հանդերձ, ունի նաև բացասական կողմեր: Այն երկրները, որոնք անցկացրել են կենսաթոշակային բարեփոխումներ, բախվում են մի շարք հիմնախնդիրների՝ կապված կուտակային համակարգի ներդրման և գործարկման արդյունավետության, ինչպես նաև բնակչության լայն զանգվածների կողմից այդ համակարգի ընկալման հետ:

Պետության կողմից կազմակերպված կենսաթոշակային համակարգը, ըստ զբաղվածների տարիքի, մասնավոր հատվածում առաջինը ներդրվել է Գերմանիայում 1889թ.: Գերմանական մոտեցման բնորոշ գծերից մեկն այն էր, որ սոցիալական ապահովագրությունը պարտադիր էր և հիմնված էր վճարումների վրա: Ե՛վ գործատուները, և՛ աշխատողները պետք է միջոցներ ուղղեին դրա ֆինանսավորման համար: Նախկինում ներդրված Գերմանիայի համակարգը հիմնվում էր կամավոր ֆոնդերի փոխօգնության վրա, որը ստեղծվում էր վաճառականների և բանվորական միավորումների միջոցով: Դանիայում (1891) և Նոր Զելանդիայում (1988) ներմուծեցին կենսաթոշակների համակարգ, որի նպատակն էր աղքատներին օգնության ցուցաբերումը: Համակարգը ֆինանսավորվում էր ընդհանուր հարկային եկամուտներից, ենթադրում էր աղքատության մակարդակի նվազեցում և երաշխավորում էր վճարումների մակարդակը: Այդ կենսաթոշակային համակարգը մեծ մասամբ բխում էր աղքատների վերաբերյալ ավանդական օրենսդրությունից: Հետագա տարիներին Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում ձևավորվեցին կենսաթոշակային ապահովագրության համակարգեր, որը կողմնորոշված էր դեպի գերմանական մոդելը: Իսկ անգլո-սաքսոնական (բացառությամբ ԱՄՆ-ի) և Հյուսիսային Եվրոպայի երկրները հետևեցին դանիական և նորզելանդական մոդելին: Այդ համակարգերը լուծում էին տարբեր խնդիրներ: Գերմանիան կողմնորոշված էր թոշակի անցնելուց հետո աշխատողի սոցիալական կարգավիճակի պահպանմանը, իսկ դանիականը, որը հետագայում ներդրվեց Մեծ Բրիտանիայում, հիմնված էր աղքատության սահմանափակման վրա: 20-րդ դարում զարգացած երկրներում տեղի է ունենում կենսաթոշակային համակարգերի աստիճանական մոտեցում: Այնտեղ, որտեղ դրանք հիմնված էին ապահովագրավճարների վրա (Գերմանիա), ներմուծվում են նվազագույն կենսաթոշակների երաշխիքներ՝ հաշվի չառնելով նախկին վճարները: Այն երկրներում, որոնք միտված են հավասար կենսաթոշակի ստացմանը, ֆինանսավորումը կատարվում է ընդհանուր եկամուտների և բյուջեների հաշվին, ինչը բերում է աղքատության վերահսկողության և կասեցման: Նվազագույն կենսաթոշակների ապահովման հետ մեկտեղ ներդրվում է սոցիալական պարտադիր ապահովագրական համակարգը (Մեծ Բրիտանիա):

Չիլիում անհատական հաշիվների վրա հիմնված պարտադիր մասնավոր կենսաթոշակային համակարգը ներդրվել է 1981 թվականին՝ փոխարինելով հին բաշխողական համակարգին:

Պետական կենսաթոշակային համակարգը ներառում է առնվազն երեք տեսակի ծրագիր: Նախ, հին համակարգում մնացած անդամների համար նախատեսվող կենսաթոշակային ծրագրեր, որոնք կառավարվում են Սոցիալական ապահովության ստանդարտացման ինստիտուտի կողմից (ներկայումս լուծարվել է): Երկրորդ, պետությունը խոստանում է նվազագույն տարիքային կենսաթոշակի վճարում մասնավոր կենսաթոշակային համակարգի բոլոր այն մասնակիցներին, ովքեր կենսաթոշակի անցնելու պահին իրենց անհատական հաշիվներում չեն կուտակել բավարար միջոցներ՝ նվազագույն կենսաթոշակին հավասար կամ դրանից բարձր կենսաթոշակ ստանալու համար, և ովքեր համապատասխանում են օրենքով նախատեսվող որոշակի պահանջներին: Տվյալ պահանջներից է առնվազն 20 տարվա ապահովագրական ստաժի առկայությունը: Երրորդ, սոցիալական (կամ կարիքավորության վրա հիմնվող) կենսաթոշակային ծրագիրը կենսաթոշակներ է վճարում 65 տարեկանից բարձր անձանց և հաշմանդամներին, եթե նրանց եկամուտը նվազագույն կենսաթոշակի 50 տոկոսից ցածր է:

Մասնավոր կենսաթոշակային համակարգերը հետագայում տարածում գտան Լատինական Ամերիկայի երկրներում, որից հետո այն վերածվեց կենսաթոշակային բարեփոխումների լաբորատորիայի. երկրների մեծ մասը մասնավորեցրին կենսաթոշակային համակարգը:

Կուտակային համակարգի բարեհաջող զարգացումը խոչընդոտում է բնակչության աղքատության մակարդակը: Գործազրկության, աղքատության բարձր մակարդակի ժամանակ աշխատողների թվաքանակը, որոնք հակված չեն մուծելու կենսաթոշակային վճար, համեմատաբար ավելի շատ է, քան նրանք, որոնք իրականում կատարում են այդ մուծումները: Ակնհայտ է, որ աղքատ բնակչությունն ի զորու չէ պահպանելու կենսաթոշակային համակարգի կայունությունը (Զիլիում կենսաթոշակային ֆոնդի ամեն երրորդ հաճախորդի եկամուտները ցածր են աղքատության գծից): Զանգվածային հրաժարումը կենսաթոշակային վճարներից վկայում է այն մասին, որ մարդիկ լիովին չեն վստահում կենսաթոշակային ֆոնդերին: Հաշվի առնելով այդ ամենը՝ լատինամերիկյան երկրները կենսաթոշակային բարեփոխումների երկրորդ փուլ անցան՝ պահպանելով և բարեփոխելով իրենց բաշխողական համակարգը, ներդնելով համեստ պարտադիր կուտակային մեխանիզմ, որպես երկրորդ մակարդակ, այսինքն՝ ստեղծելով խառը, բազմաստիճան համակարգ: Կենսաթոշակային վճարների չափը, որն ուղղվում է կուտակային համակարգին, այդ երկրներում տատանվում է աշխատողի ամսական եկամտի 8%-ից (Պերու) մինչև 15%-ը (Ուրուգվայ): Աշխատողին ընձեռված է լիիրավ իրավունք՝ ընտրելու բաշխողական կամ կուտակային համակարգ, ինչպես նաև իրավունք՝ փոփոխելու դրանք (Կոլումբիա)՝ անցում կատարելով մի համակարգից մյուսը և հակառակը:

Լատինամերիկյան երկրները (Մեքսիկա, Բոլիվիա, Սալվադոր) կենսաթոշակային բարեփոխումների երրորդ փուլում որոշ փոփոխություններով ընդունեցին մասնավոր կենսաթոշակային ֆոնդերը (աշխատողների անհատական միջոցներով կառավարվող, չիլիական մոդելով): Փորձը ցույց է տալիս, որ կուտակային կենսաթոշակային համակարգի դեպքում անհատական հաշիվների կառավարման ժամանակ վարչական ծախսերն ընդհանուր առմամբ 20 անգամ ավելի են, քան բաշխողական համակարգում: Ամերիկյան համակարգում վարչական ծախսերը կազմում են վճարների տարեկան գումարի 0.5%-ից քիչ, իսկ լատինամերիկյան համակարգում 15%-ից ավելի են, որոշ դեպքերում անցնում են նույնիսկ 20%-ից¹:

Լատինական Ամերիկայի երկրների փորձն օգտագործվեց նաև Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի որոշ երկրներում համանման բարեփոխումներ իրականացնելիս: Այդ երկրներից շատերն այսօր ունեն պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգ, սակայն 2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո վերանայեցին կամ ընդհանրապես վերացրեցին պարտադիր կուտակային համակարգը, երկրների մի մասում էլ պարտադիր կուտակային համակարգի որդեգրումից հետո խնայողության ծավալները մասնակի նվազել են, ինչը վկայում է համակարգի խոցելիության մասին: Հարավային Ամերիկայի (Կոստա Ռիկա, Զիլի) հայտնի տնտեսագետ-հետազոտող, ՄԱԿ-ի քարտուղարության աշխատակից Լ.Վիլմորի կարծիքով զարգացող երկրների կենսաթոշակային համակարգի զարգացման համար կարող է

¹ <http://www.ecfor.ru/pdf.php?id=2012/2/08>

օգտակար լինել Նոր Ջեւանդիայի մոդելը, որտեղ բացակայում է պարտադիր բաղադրիչը, այնինչ հանրության ուշադրությունը սեռեցվել է Չիլիի օրինակին¹:

Հյուսիսային Ամերիկայում կենսաթոշակային ապահովության պետական համակարգը համեմատաբար ավելի ուշ է տարածում ստացել:

Կանադան ներմուծել է համակարգ, որը հիմնված էր աղքատության աստիճանի վերահսկման վրա և հաշվի չէր առնում ապահովագրավճարները (1927): ԱՄՆ-ում 1920թ. նահանգային իշխանությունները սկսեցին ներմուծել կենսաթոշակային համակարգ, որը հիմնված էր աղքատության մակարդակի վրա: 1935թ. ԱՄՆ-ում ներդրվեց կենսաթոշակային ապահովագրության ֆեդերալ համակարգը²:

Համաշխարհային բանկի «Խուսափելով ծերունական ճգնաժամից» հայտնի աշխատության հրապարակումը 1994թ. շրջադարձային եղավ մասնավոր կենսաթոշակային համակարգերին անցման գործում³: Կենսաթոշակային համակարգերի գործունեության կարևորագույն խնդիրը ֆինանսական կայունության և կենսաթոշակի համարժեքության միաժամանակյա ապահովումն է: Ֆինանսական կայունությունը նշանակում է, որ համակարգը պետք է միշտ վճարունակ լինի, այսինքն՝ ունենա բավարար դրամական միջոցներ՝ չաշխատող տարեցներին կամ անաշխատունակ մարդկանց կենսաթոշակով ցմահ ապահովելու համար: Կենսաթոշակային համարժեքության ապահովումը նշանակում է, որ կենսաթոշակի չափը պետք է համարժեք լինի այն վճարումներին, որոնք մարդիկ պարտադիր կատարել են իրենց աշխատանքային գործունեության ընթացքում:

Նոր կուտակային կենսաթոշակային համակարգին անցնելու հետ կապված (հատկապես դրա փոխկապվածությունը նախկին բաշխողական համակարգի հետ) խնդիրները շատ սուր են դրված այն երկրների առջև, որոնք նոր են սկսում իրականացնել կուտակային կենսաթոշակային բարեփոխումներ:

Անցումը կուտակային համակարգին էականորեն փոխում է հարաբերությունները և՛ աշխատողների, և՛ գործատուների կողմից կուտակային կենսաթոշակային համակարգ ուղղվող վճարումների հետ կապված, հատկապես այն դեպքում, երբ կուտակային կենսաթոշակային համակարգում աշխատողին տրված է միջոցների ներդրման և պահպանման, ինչպես նաև իր խնայողության սահմաններում կուտակված միջոցների ժառանգման երաշխավորված իրավունք: Այդ պահումները մեծ մասամբ չեն ընկալվում որպես հարկ և դառնում են աշխատավարձի լրացուցիչ տարր:

Ժամանակակից կենսաթոշակային համակարգը միտված է հավաքագրվող ֆինանսական միջոցների ծավալների ավելացմանը, ինչը պայմանավորված է թոշակառուների թվաքանակի և կենսաթոշակի չափի ավելացմամբ: Ժողովրդագրական փոփոխությունների արդյունքում աճում են բնակչության տարեց խմբերը, անկում է ապրում ծնելիությունը, աճում է կյանքի տևողությունը: Ֆինանսական միջոցների համեմատաբար փոքր հավաքագրումներով համակարգերը հանդիպում են զգալի բարդությունների՝ ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով: Աշխատողների և գործատուների կողմից իրականացվող մուծումների ծավալների ավելացմանը զուգընթաց փոխվում են ընդհանուր տնտեսական պայմանները և ժողովրդագրական պատկերը: Իր հերթին աշխատավարձերից պահումների մեծացումը նպաստում է սովերային զբաղվածության մակարդակի բարձրացմանը և գործազրկության աճին: Արդյունքում կրճատվում է կենսաթոշակային ապահովագրության համակարգին վճարումներ կատարող գրանցված աշխատողների թվաքանակը:

Ըստ ժողովրդագրական կանխատեսումների՝ աշխարհում մինչև 2030թ. կենսաթոշակառուների ծանրաբեռնվածությունն աշխատող բնակչության վրա կավելանա գրեթե երկու անգամ, իսկ կենսաթոշակի ծախսը կկազմի ՀՆԱ-ի 10.7%-ը⁴:

ՀՀ-ում 2014թ. զբաղվածների թվաքանակը մեկ կենսաթոշակառուի հաշվով կազմում է մոտ 2 մարդ, իսկ կենսաթոշակառուների ընդհանուր թվաքանակը 515300 մարդ է⁵: Այլ է պատկերը

¹ Ազգային ժողովի մոնիթորինգ, սեպտեմբեր-դեկտեմբեր 2012, 5-րդ գումարում, էջ 69:

² Сорокина Е.Г. Зарубежный опыт моделирования пенсионной системы. В мире прав.-2000, 4 с.8-10

³ World Bank "Averting the Old-Age Crisis: Policies to Protect the Old and Promote Growth". Washington DC (1994):


⁴ Ерощенков С.Г. Мировой опыт пенсионных реформ: Проблемы реформирования. 2002г., www.net.ru

⁵ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014», էջ 94:

երիտասարդ (15-29 տարեկան) գործազուրկների շրջանում: Այս ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 5-րդ տեղն աշխարհում և 1-ին տեղը ԱՊՀ երկրների շարքում: Սա հենց այն հատվածն է, որը պետք է վճարումներ իրականացնի կուտակային կենսաթոշակային ֆոնդին: Մյուս կողմից երիտասարդության շրջանում մեծ են միգրացիոն տեղաշարժերը, որոնք նպաստում են ծերացող բնակչության ավելացմանը: Այդ մասին է վկայում ստորև ներկայացված գծապատկեր 1-ը:

Գծապատկեր 1

Երիտասարդ (15-29 տարեկան) գործազուրկների մակարդակը աշխարհում ¹



ՏՀԶԿ կանխատեսմամբ սոցիալական աջակցության ծախսերը 2050թ կավելանան մինչև ՀՆԱ-ի 25.5% բազային սցենարի իրականացման դեպքում: Ավելի արագ աճի դեպքում դրանք կմեծանան մինչև 23.7%, ավելի դանդաղ աճի դեպքում՝ մինչև 30,4%: Մինչև 2050թ. սոցիալական աջակցության ծախսերն ամեն տարի կավելանան միջինը 1.9% իրական արտահայտությամբ²:

Ինչպես հայտնի է, ամենամեծ սոցիալական տրանսֆերտները կենսաթոշակներն են: Նշենք, որ սոցիալական նպաստների և կենսաթոշակների համար ՀՀ պետբյուջեից 2013թ. հատկացվել

¹ Молодежь в содружестве независимых государств, статистический портрет, Москва 2014г., стр 125.
² Ерошенко С.Г. Мировой опыт пенсионных реформ. Проблемы реформирования. 2002г., www.net.ru

է 294.9 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 6.9%-ը նախորդ՝ 2012-ի 288.5 մլրդ դրամ կամ 7.2%-ի համեմատ: Ըստ ՏՏԿԱՀ արդյունքների՝ 2013թ. կենսաթոշակները որպես եկամտի աղբյուր նշել են բնակչության 53.7, իսկ գործազրկության նպաստը 0.4%-ը¹:

Թեև սոցիալական տրանսֆերտներին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը տարեց-տարի ավելանում են, դրանք շարունակում են ՀՆԱ-ի նկատմամբ մնալ բավական սահմանափակ մակարդակում (2013թ.՝ 7%): Այդուհանդերձ սոցիալական տրանսֆերտները զգալիորեն նպաստում են աղքատության մակարդակի կրճատմանը: Եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների վճարումը, իսկ տնային տնտեսությունները բավարար ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված, չկարողանան փոխհատուցել այդ կորուստը, ամբողջ բնակչության հաշվով աղքատության մակարդակը զգալիորեն կաճի, աղքատության ընդհանուր մակարդակը կավելանա 43%-ով (32%-ից՝ 45.9%), և աղքատությունը էապես կխորանա և կսրվի: Իրավիճակն ավելի կսրվի հատկապես սոցիալական տրանսֆերտներ ստացող բնակչության համար²:

Առանձնացնենք պետական և մասնավոր կենսաթոշակային համակարգերի հիմնական տարբերությունները ստորև ներկայացված աղյուսակ 1-ի միջոցով:

Աղյուսակ 1

Պետական և մասնավոր կենսաթոշակային համակարգերի հիմնական տարբերությունները

Անվանումը	Պետական կենսաթոշակային համակարգ	Մասնավոր կենսաթոշակային համակարգ
Կառավարում	պետական	մասնավոր
Մասնակցություն	պարտադիր	կամավոր
Կառուցվածքային սկզբունք	սահմանված կենսաթոշակներ	սահմանված վճարումներ
Ֆինանսավորման սկզբունք	բաշխողական (կարճաժամկետ)	երկարաժամկետ
Ֆինանսավորման աղբյուր	աշխատավարձային հարկեր	անհատական խնայողություններ
Ժողովրդագրական ազդեցություն	անկայուն	կայուն
Մակրոտնտեսական ազդեցություն	դեֆիցիտ	աճ
Ռիսկի տեսակ	պետական	շուկայական

Ինչպես տեսնում ենք, պետական և մասնավոր կենսաթոշակային համակարգերի հիմնական տարբերությունները կառավարման, մասնակցության, կառուցվածքային և ֆինանսավորման սկզբունքների, ֆինանսավորման աղբյուրների, ժողովրդագրական և մակրոտնտեսական ազդեցությունների և ռիսկերի տեսակների մեջ են: Որ համակարգն է առավել գերադասելի՝ դժվար է ասել, դրանցից յուրաքանչյուրն էլ ունի և՛ առավելություններ, և՛ թերություններ, սակայն մի բան պարզ է, որ նոր համակարգին անցումն էապես կախված է երկրի տնտեսական իրավիճակից:

Այսպիսով, կուտակային կենսաթոշակային համակարգը ներառում է շատ մեծ ռիսկեր, և այդ համակարգի մասնակիցները մեծ պատասխանատվություն են կրում համակարգի բնականոն գործունեության ապահովման համար: Պետությունը երաշխավորում է տուժողի համար նվազագույն կենսաթոշակի չափը: Այդ համակարգն անթերի է բարձր վարձատրվող աշխատողների համար, որոնք կարող են կենսաթոշակային հաշիվների վրա կուտակել մեծ գումարներ: Մեծ մասամբ կուտակային սխեման ընդունելի է հարուստ երկրներում, որտեղ միջին խավն ունի բարձր եկամուտ: Կուտակային սխեմայի արդյունավետությունը հիմնականում կախված է սուբյեկտիվ և ընդհանուր տնտեսական գործոններից: Համակարգի եկամտաբերությունը կարող է տատանվել՝ կախված տնտեսական իրավիճակային փոփոխություններից և կառավարման որակից: Հասկանալի է, որ մշտապես գոյություն ունի խնայողությունների կորստի կամ ներդրումային եկամուտների մակարդակի նվազեցման ռիսկ, ինչը կարող է տեղի ունենալ ինչպես զարգացող անկայուն շուկաներում, այնպես էլ կապիտալի զարգացած շուկաներում:

¹ ՀՀ ԱԿԾ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2014, էջ 162:
² Նույն տեղում, էջ 160:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՇՈՂԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ, *դ. գ. թ.*

Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում դիտարկվում են կուտակային կենսաթոշակային համակարգի զարգացման հիմնահարցերը՝ կիրառելով օտարերկրյա փորձը: Մասնավորապես դիտարկվում են կենսաթոշակային ֆոնդերի համակարգերը Լատինական Ամերիկայի երկրներում, Գերմանիայում, Դանիայում, Նոր Զելանդիայում և այլն:

Հոդվածում նշված են կուտակային համակարգի մի քանի մոտեցումներ, ինչպես նաև բերված են մասնավոր և պետական կենսաթոշակային համակարգերի հիմնական տարբերությունները: Բարեհաջող կուտակային համակարգի զարգացումը խոչընդոտում է բնակչության աղքատության բարձր մակարդակը:

Բանալի բառեր. կենսաթոշակ, կուտակային համակարգ, կենսաթոշակային ֆոնդ, ռիսկ, խնայողություններ, սոցիալական արևմտաֆերյաններ, աղքատության մակարդակ, գործազրկություն, մասնավոր կենսաթոշակային համակարգ:

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ НАКОПИТЕЛЬНЫХ ПЕНСИОННЫХ СИСТЕМ

ШОГЕР ПОГОСЯН, *к. э. н.*

научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА

Аннотация

В статье рассматриваются основные вопросы развития накопительной пенсионной системы на основе использования зарубежного опыта. В частности, рассматривается система пенсионных фондов в латиноамериканских странах, в Германии, Дании, Новой Зеландии и т.д.

В статье указаны некоторые подходы для перехода к накопительной системе в РА. Приведена схема, показывающая разницу между государственной и частной пенсионной системами. Отмечено также, что успешному развитию данной системы в настоящее время в республике препятствует высокий уровень бедности населения.

Ключевые слова: пенсия, накопительная система, пенсионный фонд, риск, сбережения, социальные трансферы, уровень бедности, безработица, частная пенсионная система.

ON THE ISSUES OF DESIGNING AND DEVELOPING FUNDED PENSION SYSTEMS

SHOGER POGHOSYAN, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article discusses the development issues of the funded pension system by applying the practices of other nations. In particular, the system of pensions funds in Latin American nations, Germany, Denmark and New Zealand are discussed.

The article states several approaches to the funded pension system, and provides main differences between state-owned and private systems of pension funds. High poverty rates hinder the development process of a funded pension system.

Keywords: Pension, funded pension system, pension fund, risk, savings, social transfers, poverty rate, unemployment, private pension system.

**ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ
ԿԵՆՍԱՔՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ՀՀ կենսաթոշակային համակարգը բարեփոխման իր «պայմանական» մեկնարկը սկսեց 2014թ. հունվարի 1-ից, ինչը պայմանավորված է կենսաթոշակի չափի բարձրացման, ինչպես նաև աշխատավարձի և կատարված սոցիալական վճարների միջև անմիջական կապ ստեղծելու անհրաժեշտությամբ, համակարգի ֆինանսական կայունության ապահովմամբ, ինչպես նաև ապագայում «բարեկեցիկ ծերության» երաշխավորմամբ: ՀՀ ներկայիս կենսաթոշակային համակարգը համահունչ չէ ինչպես միջազգային լավագույն փորձին, այնպես էլ երկրի տնտեսության իրական հնարավորություններին: Կենսաթոշակային համակարգը շուկայական տնտեսության մեջ նախ և առաջ պետք է ինտեգրվի մասնավոր տնտեսական գործընթացներին, ճիշտ փոխառնչվի ֆինանսական համակարգի հետ և լինի ֆինանսապես կայուն:

Հանրության մեծ մասը մինչև կենսաթոշակային տարիքը կենսաթոշակային համակարգի հետ չունի ակտիվ և կանոնավոր շփում: Վարձու աշխատողների կողմից սոցիալական վճարների կատարման պարտավորությունն օրենքով դրված է նրանց գործատուների վրա: Արդյունքում անգամ սոցվճարներ կատարող վարձու աշխատողներն են անմասն մնում կենսաթոշակային համակարգի հետ որոշակի շփումներ կամ հարաբերություններ ունենալու հնարավորությունից: Գործող կենսաթոշակային համակարգին իրենց ծանոթ են համարում հարցման ենթարկվածների 46%-ը, իսկ այն, որ գործող կենսաթոշակային համակարգը բաշխողական է, գիտի հարցվածների 27%-ը: Թույլ են բնակչության պատկերացումները հատկապես կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ: Այն, որ կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուր են գործատուների և վարձու աշխատողների սոցիալական վճարները, գիտի հարցվածների 39%-ը, իսկ այն, որ կենսաթոշակը բաղկացած է բազային կենսաթոշակի չափից և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքից, գիտի հարցվածների 41%-ը¹:

Ինտեգրացիայի և ժողովրդավարության հայկական կենտրոնի ուսումնասիրությունները փաստում են, որ մարդու իրավունքների վերաբերյալ բնակչության տեղեկացվածությունը միջին մակարդակի է, ինչը նշանակում է տեղեկացված բնակչության մոտավոր տոկոսային հարաբերությունը և իրենց տիրապետած տեղեկատվության խորությունը, ինչպես նաև այն օգտագործելու կարողությունը՝ սեփական իրավունքները պաշտպանելու առումով: Այսօր բնակչությունը որոշ չափով տեղեկացված է իր իրավունքների մասին և քիչ թե շատ տեղյակ է, թե ինչպիսի հասարակական կազմակերպություններ են գործում և զբաղվում մարդու իրավունքների պաշտպանությամբ: Հասարակական կազմակերպությունները և մարդու իրավունքները պաշտպանող այլ կառույցներ հաղթահարել են բազմաթիվ արգելքներ, որոնց թվում կարելի է նշել մարդկանց անվստահությունը, կարծրատիպերը: Վերջին տարիներին մեծացել է համագործակցությունը տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների միջև, ինչը նաև կապված է քաղաքացիների խնդիրները ճիշտ հասցեագրելու անհրաժեշտության հետ: Հասարակական իրավապաշտպան կազմակերպությունները մեծ դեր ունեն հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացման և ընդհանրապես իրավունքների վերաբերյալ իրազեկման առումով: Մարդու իրավունքների պաշտպանության վրա բացասական ազդեցություն ունեն սոցիալական ծանր վիճակը, կոռուպցիան, աշխատատեղերի խիստ սակավությունը, արտագաղթը:

Ինչ վերաբերում է տեղեկատվության աղբյուրներին, ապա համացանցից իրավունքների մասին տեղեկանալու միտումը մեծացում է կապի հասանելիության և օգտվողների քանակի աճի հետ միասին, իսկ որպես այլընտրանքային աղբյուր՝ մեծահասակների և նրանց համար, ովքեր

¹ «Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկվածության ելակետային հետազոտություն», Երևան 20, հունիս, 2011, էջ 22:

չունեն համացանցից օգտվելու հնարավորություն, մնում է հեռուստատեսությունը: Հարցման մասնակիցների 36%-ը հաստատել է, որ իրենք տանն ունեն համակարգիչներ, 32%-ը օգտվում է համացանցից, սակայն ընդամենը 13-14%-ն է համացանցը օգտագործում որպես տեղեկատվության ստացման միջոց, իսկ մնացած 18-19%-ի համար համացանցը լուծում է սոցիալական ցանցերում շփման խնդիրը¹: Սոցիալական ցանցերը, հատկապես Ֆեյսբուք, շատ ակտիվ օգտագործում են երիտասարդները հասարակական շարժումների մեկնարկի, մասնակիցներ և համախոհներ հավաքելու համար: Այսօր այն շատ կարևոր և հասանելի գործիք է, որը հնարավորություն է տալիս ներգրավելու մարդկանց առցանց՝ իրազեկելով և քարոզչություն տարածելով, անգամ համախմբելով առցանց ստորագրահավաքների միջոցով: Կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման առումով կարևոր դեր խաղաց նաև «ԴԵՄ ԵՄ» շարժումը: Հասարակական շարժումները որպես երևույթ ունեն և՛ բացասական, և՛ դրական կողմ, երբ նույն մարդկանց կարելի է տեսնել տարբեր ակցիաներում, տարբեր բողոքի երթերի ժամանակ: Կարող է տպավորություն ստեղծվել, որ նրանք այնքան էլ հստակ չեն պատկերացնում, թե ինչի համար են պայքարում: Շատ հաճախ հեռուստատեսությամբ տարվող գովազդը՝ կապված կենսաթոշակային համակարգի իրազեկման հետ, այնքան էլ հասու տեղեկատվություն չէ. առաջին հայացքից թվում է, թե կուտակային կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ իրազեկում է բնակչությանը հասկանալի պատկերների ձևով, սակայն այնքան երկար շարունակությամբ, որ ականայից մոռացության է մատնվում քիչ առաջ զեկուցածը: Գովազդի կարճ տևողությունը զուգակցված է շատ տեղեկատվությամբ, ինչն էլ խեղաթյուրում է հասանելիությունը: Հարցման արդյունքում տեղեկատվության աղբյուրների նախընտրելի ձևաչափեր են՝ բանավեճեր և թոք շոուներ 51%, հարցազրույցներ՝ 42%, կրթական ծրագրեր՝ 10%, իրենց ոչինչ չի հետաքրքրում՝ 8%, հեռուստառադիոգովազդ՝ 6%, տեղեկատվական ֆիլմեր 6%, տպագիր նյութեր՝ 4%, ռեպորտաժներ լուրերի թողարկման ժամանակ՝ 4%, համացանց՝ 1%, դժվարացել են պատասխանել 2%-ը²: Համագործակցությունը մասնավոր հատվածի հետ անհրաժեշտ է, ինչպես նաև կարևոր է աջակցությունը «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամին, Կենտրոնական բանկին, որպեսզի հնարավորինս սպառիչ տեղեկատվություն տրամադրվի աշխատող քաղաքացիներին և գործատու կազմակերպություններին: Նոր բարեփոխումները հնարավորություն են ընձեռում քաղաքացիներին վերահսկելու իրենց կենսաթոշակային հաշիվները նաև առցանց, և այս առումով Կենտրոնական բանկը մեզակարգավորիչ է: Վերջինիս հսկողությամբ էլ մշակվել և ներդրվել է Հայաստանի կենսաթոշակային տեղեկատվական համակարգը: Այս համակարգի միջոցով քաղաքացիներն առցանց կարող են ընտրել իրենց կենսաթոշակային ֆոնդերն ու ակտիվների կառավարիչներին, ստուգել իրենց հաշիվը, ցանկության դեպքում փոխել ակտիվների կառավարչին: Համակարգի արդյունավետությունը գնահատելիս շատ կարևոր է քաղաքացիների տեղեկացվածության և ֆինանսական գրագիտության աստիճանը: Նոր համակարգի առավելություններից մեկն այն է, որ այն բերում է կառավարման և խնայողությունների նոր մշակույթ, որտեղ մենք բախվում ենք իրազեկման ցածր մակարդակին:

Անհրաժեշտ է՝

- շարունակել իրազեկման առաքելությունը՝ ճիշտ մարքեթինգային միջոցառումներ իրականացնելով,
- օգտագործել լրատվամիջոցները, հատկապես հեռուստաքննարկումները՝ իրազեկում իրականացնելու համար,
- նպաստել բնակչության ակտիվ դիրքորոշման ձևավորմանը,
- վստահության դաշտ ապահովել բնակչության հետ աշխատելու համար,
- ներգրավել սոցիալական ոլորտի հասարակական կազմակերպություններ, արհմիություններ՝ առավել թափանցիկ դարձնելով մասնավոր կենսաթոշակային համակարգի գործունեությունը,

¹ Նույն տեղում, էջ 22:


² Նույն տեղում, էջ 23:

- ընդլայնել համապատասխան կառույցների կողմից կազմակերպվող հանդիպումներին ու սեմինարներին մասնակցող բնակիչների շրջանակը,
- ուժեղացնել բնակչության համագործակցությունը պետական և համապատասխան կառույցների հետ:

Պետք է նկատի ունենալ, որ առողջ կենսաթոշակային համակարգն առաջին հերթին շուկայական ինստիտուտ է և էապես զգայուն է տնտեսության մի շարք ցուցանիշների նկատմամբ: Պետությունը՝ որպես սոցիալական կայունության ապահովման գործառույթ կրող, պետք է կենսաթոշակառուների շրջանում հնարավորինս ապահովագրի տարերային բնույթի սոցիալական ճգնաժամերը: Սյուս կողմից պետության խնդիրը մասնավոր կենսաթոշակային ինստիտուտի անկման հնարավորինս կանխումն է, որը պետք է իրականացվի կարգավորման և վերահսկման գործառույթներով: Համաշխարհային բանկի վերլուծաբանների կարծիքով¹ բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրումը թուլատրելի է համարվում տնտեսության մեջ երեք նախապայմանների առկայության դեպքում, դրանք են՝ առողջ մակրոտնտեսական քաղաքականությունը, համահունչ ֆինանսական համակարգը և իրագործելիության ներուժի առկայությունը: Վերլուծաբանները գտնում են, որ այն երկրները, որոնք կախում ունեն արտաքին աջակցությունից, չեն կարող համարվել բազմաստիճան համակարգի ներդրման հաջողված թեկնածուներ: Այս երևույթները մտահոգիչ են նաև մեր երկրի համար:

Գծապատկեր 1

Համաշխարհային առաջատարների 10-նյակը դրամական փոխանցումների ծավալով, % ՀՆԱ (2012թ.)²



Ինչպես երևում է գծապատկերից, Հայաստանի ցուցանիշը դրամական փոխանցումների ծավալով մոտ է այնպիսի ցածր զարգացած երկրների ցուցանիշին, ինչպիսիք են Մոլդովան, Հայիթին, Սամոան: 2012թ. դրությամբ ՀՀ-ն աշխարհում դրամական փոխանցումների ծավալով զբաղեցնում է 6-րդ տեղը, որը բավականին բարձր ցուցանիշ է: Սա պայմանավորված է, նախ և առաջ, միգրացիոն հոսքերի մեծացմամբ, ինչը առաջ է բերում ժողովրդագրական պատկերի փոփոխություն, արդյունքում նաև ծերացող բնակչության ավելացում:

Աշխարհի տարբեր երկրներ՝ տարեցներին կենսաթոշակով ապահովման համընդհանուր պահանջումները բավարարում են տարբեր կերպ: Միջին և ցածր եկամուտ ունեցող երկրների կենսաթոշակային ծրագրերը կողմնորոշված են դեպի տնտեսության ֆորմալ ոլորտի աշխատողներին: Պաշտոնական կենսաթոշակային համակարգերում չընդգրկված մարդիկ ստիպված են հենվել ընտանիքների օգնության վրա, սակայն պաշտպանության այդ ոչ ֆորմալ ձևերը աստիճանաբար քանդվում են ժողովրդագրական փոփոխությունների, միգրացիայի, ուրբանիզացման և զանգվածային աղքատության հետևանքով: Արդյունքում բազմաթիվ տարեց և աղքատ մարդկանց թիվն աճում է: Այսօր կենսաթոշակառուների մեծ մասն աշխարհում ապրում են օրական 1 ԱՄՆ դոլարից պակաս եկամտով³, ավելին՝ շատ կենսաթոշակառուների եկամուտ-

¹ Pension Reform and Development of Pension Systems, An Evolution of World Bank Assistance, Independent evaluation group, The International Bank for Reconstruction and Development/ The World Bank 2006 p. 19.

² World Bank, Remittances and Development Brief, October 2, 2013.

³ OECD. Growing unequal? Income distribution and poverty in OECD countries, part III, Paris 2008, p. 174.

ները ցածր են կենսաապահովման նվազագույն զանբյուրից, իսկ Հայաստանում, Ղրղզստանում, Մոլդովայում և Տաջիկստանում միջին կենսաթոշակով կարելի է գոյատևել ոչ ավելի քան 12-15 օր¹:


ՄԱԿ-ի փորձագետների կարծիքով խոշոր քաղաքներում միգրացիան և մարգինալացումը նպաստում են աշխարհի բնակչության աճին, սակայն քաղաքներում մարգինալացման երևույթն ավելացնում է աղքատ բնակչության թիվը, ինչը բնականաբար ծախսեր է պարտադրում կառավարությանը և հանգեցնում տնտեսական սղաճին, որի հետևանքով հաջորդ սերունդներն էլ կհայտնվեն աղքատության մեջ:

Կուտակային կենսաթոշակային համակարգը կարող է հանգեցնել աղքատության մակարդակի աճին շնորհիվ սպառման կրճատման: 2013թ. դրությամբ վարձու աշխատողների 24.4%-ը համարվում է աղքատ, իսկ 1.5%-ը՝ ծայրահեղ աղքատ: Աղքատների թվում վարձու աշխատողների թվաքանակը կազմում է 24.7%², որոնց մոտ պարտադիր կուտակային վճարի գանձման գումարը լինելու է սպառման կրճատման հաշվին, արդյունքում սպառումը կարող է իջնել պարենային գծից (աղքատության պարենային գիծը 2013թ. դրությամբ կազմում է 22993 դրամ/ամիս³), ինչը կբերի աղքատության խորացման: 2013թ. եկամտի ցուցանիշով ծայրահեղ աղքատների միայն 10%-ը և աղքատների 51%-ն է սպառման ցուցանիշներով գնահատվել նույնպես ծայրահեղ աղքատ և աղքատ: Սպառման ցուցանիշներով աղքատներին դիտարկելիս նրանց 54%-ն աղքատ է գնահատվել նաև եկամտի ցուցանիշներով: Սպառման ցուցանիշով ծայրահեղ աղքատների մոտ կեսը՝ 48%-ը, եկամտի ցուցանիշով նույնպես ծայրահեղ աղքատ է⁴:

Ինչ վերաբերում է ժողովրդագրական ցուցանիշներին, ապա Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաշվարկումների համաձայն՝ 2050թ. կյանքի միջին տևողությունը աշխարհում կլինի 77 տարի, իսկ 60-ից բարձր տարիք ունեցող բնակչությունը կկազմի աշխարհի բնակչության 20%-ը: Թեև կյանքի տևողության ցուցանիշը մեծ նշանակություն ունի հասարակություններում, բայց ապրելակերպն առավել մեծ նշանակություն ունի ծերության շրջանում⁵: Աշխարհում ընդհանուր բնակչության մեջ մինչև 15 տարեկան բնակչության տեսակարար կշիռը կորը նվազում է, որը ծնելիության գործակցի նվազմամբ է պայմանավորված, իսկ ընդհանուր բնակչության մեջ 65 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռն ավելանում է, որը պայմանավորված է երկարակեցությամբ:

Կորերի մոտեցումը միմյանց հանգեցնում է ժողովրդագրության մեջ հայտնի «խողովակի էֆեկտ»-ի, իսկ նման փոփոխությունները նշանակում են բնակչության ծերացում, ինչն առաջացնում է սոցիալական և հատկապես կենսաթոշակների վճարման խնդիրներ ամբողջ աշխարհում (տես գծապատկեր 2):

Գծապատկեր 2



¹ “Проблемы модернизации пенсионных систем в странах СНГ” В. Д. Поик ст. 3.

² ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», Եր., 2014, էջ 55:

³ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք». Եր., 2014, էջ 113:

⁴ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», Եր., 2014, էջ 44:

⁵ <http://armenia.irib.ir/rangarang/15868>

⁶ International Patterns of Pension Provision II, A Worldwide Overview of Facts and Figures, The World Bank.

Երկրների մեծնասում մասնավոր կենսաթոշակային համակարգին անցնելու հիմնական պատճառն այն է, որ պետական կենսաթոշակային համակարգն ի վիճակի չէ հաղթահարելու ժողովրդագրական փոփոխությունները, այն դեպքում, երբ ֆինանսավորվող մոդելը կենսաթոշակային համակարգն ազատում է ժողովրդագրական շոկից: Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի ներկայացուցիչ Նիկոլաս Բարն այս փաստարկն առասպել է անվանում, որը, ինչպես և ցանկացած այլ առասպել, կարող է ճշմարտության տարր պարունակել. «...սակայն ուշադիր դիտարկման պարագայում այդ տարրը կամ թույլ է, կամ հիմնված է սահմանափակող թույլտվությունների վրա և, հետևաբար, դեպի մոլորություն տանող ուղեցույց է քաղաքականության համար»¹:

Ներկայիս Ռուսաստանի «սառեցված» կուտակային կենսաթոշակային համակարգը ժամանակավորապես փոխարինվում է բաշխողական համակարգով, որը հեռանկարում իր հետևից առաջ կբերի երկու հիմնական ռիսկերի առաջացում: Առաջին հերթին էականորեն կավելանա պետության սոցիալական պատասխանատվությունը բնակչության նկատմամբ: Գործազրկության ռեկորդային ցածր մակարդակը էական ճնշում կգործադրի աշխատավարձի վրա, և հետևաբար կենսաթոշակներն առաջիկա տարիներին կարող են «թանկ» արժեքով բյուջեի համար: Բյուջեի վրա դրական ազդեցությունը լրացուցիչ եկամուտների կենտրոնացման պարագայում կլինի տեսանելի միայն կարճաժամկետ ապագայում, իսկ երկարաժամկետում՝ ծախսային մասի ծանրաբեռնվածությունն էականորեն կավելանա: Երկրորդ, կենսաթոշակների խնայողության ազդանցումը կնպաստի արժեզրկման սպասումների վատթարացմանը: Ի տարբերություն համարժեք երկրների, որոնք հասցրել են առաջիկա 5-10 տարիներին սկզբնական կենսաթոշակային բարեփոխումներից հետո զսպել արժեզրկումը, Ռուսաստանում արժեզրկման ինդիկատորները շարունակում են մնալ բարձր մակարդակի վրա: Կենսաթոշակային բարեփոխումների հետդարձ ճանապարհը կխախտի սոցիալական պայմանագիրը, համաձայն որի բնակչությունը ձևավորում է մասնավոր խնայողությունները՝ այդ թվում կենսաթոշակային, իսկ պետությունը կենտրոնացված է արժեզրկման թիրախավորման քաղաքականության վրա: Կուտակային կենսաթոշակային համակարգի ժամանակավորապես դադարեցումը կամ դրանից լրիվ հրաժարվելը հոգուտ բաշխողական համակարգի մոտ հեռանկարում էական ճնշում կգործադրի արժեզրկման վրա:

Աղյուսակ 2

Կենսաթոշակային բարեփոխումները 2010-2013թթ. ըստ երկրների

	մինչև 2010թ.			2010թ.-ից հետո		
	կենսաթոշակային տարիք տ/կ	կուտակային դրույթաչափ	մասնակցություն կուտակային համակարգին	կենսաթոշակային տարիք տ/կ	կուտակային դրույթաչափ	մասնակցություն կուտակային համակարգին
Բուլղարիա	63/60	5.0%	պարտադիր	65/63	5.0%	կամավոր
Էստոնիա	63/60	4.0%	պարտադիր	65/65	4.0%	պարտադիր
Հունգարիա	62/62	8.0%	պարտադիր	65/65	0.0%	չեղյալ
Ղազախստան	63/58	10.0%	պարտադիր	63/63	15.0%	պարտադիր
Լատվիա	62/62	8.0%	պարտադիր	65/65	2.0%	պարտադիր
Լիտվա	62/60	10.0%	պարտադիր	65/65	2.0%	պարտադիր
Լեհաստան	65/60	7.3%	պարտադիր	67/67	2.3%	կամավոր
Ռումինիա	64/59	6.0%	պարտադիր	65/63	3.5%	պարտադիր
Ռուսաստան	60/55	6.0%	պարտադիր	60/55	6.0%	կամավոր
Սլովակիա	62/62	9.0%	պարտադիր	62/62	4.0%	կամավոր
Չայաստան	62/57*	0.0%	-	63/63	5.0%	պարտադիր

* 1990թ. գործող օրենսդրությամբ կենսաթոշակային տարիքը տղամարդկանց համար սահմանված է եղել 60, կանանց համար՝ 55 տարեկանը, 2000թ. տղամարդկանցը՝ 62, կանանցը՝ 57, իսկ 2003թ. ապրիլի 10-ից ուժի մեջ մտած համապատասխան օրենքով տղամարդկանց համար սահմանվել է 63, իսկ կանանց համար այն ավելանում է աստիճանաբար, 2007-2008թթ. համար սահմանվել է 61 տարին, 2009-2011թթ. համար՝ 62 տարին, 2012թ.-ից արդեն տարիքները հավասարվել են՝ 63 տարեկան²:

¹ www.noravank.am/arm/articles
² ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», Եր., 2014, էջ 27:

Կուտակային կենսաթոշակային համակարգում էական դեր ունեն վճարման չափերը, որոնց հաշվին գոյանալու են համապատասխան ֆոնդերը: Արդյո՞ք մեր երկրում ճիշտ են սահմանված անհատական կենսաթոշակային հաշվին կուտակվող սեփական և պետության վճարման չափերը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների 56%-ն է միայն կարծում, որ միանգամայն ճիշտ է սահմանված սեփական վճարման չափը, իսկ 39%-ը՝ պետության վճարման չափը և առհասարակ 81%-ը գտնում է, որ Հայաստանում կենսաթոշակային տարիքը բարձր է սահմանված¹: Եթե համադրենք մի շարք երկրների տղամարդկանց և կանանց կենսաթոշակային տարիքները, ապա կտեսնենք, որ մեր երկրում դրանք այնքան էլ բարձր չեն սահմանված: Փոխարենը մեր երկրում համեմատաբար բարձր է սահմանված կուտակային դրույքաչափը ի տարբերություն այն երկրների, որոնք վաղուց են անցել կուտակային կենսաթոշակային համակարգի:

Ինչպես գիտենք, այս համակարգի ներդրման հիմնական նպատակը ֆինանսական շուկայի զարգացման համար երկար փողերի առաջացումն է, որոնց առկայությունը տնտեսության մեջ կունենա մուլտիպլիկատիվ էֆեկտ՝ ներառելով տարբեր ներդրումային ծրագրեր՝ որպես փոխառություն: Այս համակարգում ակնհայտն այն է, որ մասնավոր կենսաթոշակային համակարգերը պահանջում են, որպեսզի կառավարությունները կարողանան պահպանել մակրոտնտեսական կայունությունը և արդյունավետորեն կարգավորեն ու վերահսկեն ֆինանսական շուկաները: Փորձը ցույց է տվել, որ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումն առավել հաջողված է եղել տնտեսապես զարգացած երկրներում, որտեղ բնակչության կենսամակարդակը բարձր է, իսկ մեր երկրում ինչպիսի զարգացումներ կունենա, ցույց կտա ժամանակը:

Այսպիսով, ազգաբնակչության ներկայիս թույլ տեղեկացվածությունը և իրավագիտակցության մակարդակը ճիշտ պատկերացում չեն ստեղծում կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ, ավելին՝ մարգերում բնակչության մեծ մասն ընդհանրապես տեղյակ չէ կուտակային կենսաթոշակներից: Մարդիկ, ովքեր անտեղյակ են կուտակային կենսաթոշակային համակարգից, անտարբեր են բարեփոխումների նկատմամբ, սա դեռ չի խոսում այն մասին, որ նրանք դեմ են կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ ազգաբնակչության տեղեկացվածության մակարդակի բարձրացումն ունի կարևոր նշանակություն նոր կենսաթոշակային համակարգի ներդրման գործում: Կարծում ենք՝ նվազագույնի հասցնել, ապա իսպառ բացառել աղքատությունը և աղքատության ռիսկը կենսաթոշակառուների շրջանում (շնորհիվ որդեգրած քաղաքականության) այս բարեփոխման միջոցով, մոտ ապագայում հնարավոր չէ, ավելին՝ Հայաստանը դեռևս պատրաստ չէ այս համակարգի գործարկմանը:

¹ «Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկվածության ելակետային հետազոտություն», Երևան, 20 հունիս, 2011, էջ 11:

**ԱԶԳԱՔՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ**

ՇՈՂԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ, *դ. գ. թ.*

Մ Գ Ա Ա Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Աշխարհի մի շարք երկրներում այսօր տեղի են ունենում կենսաթոշակային բարեփոխումներ, որից անմասն չէ նաև ՀՀ-ն: Բոլորովին վերջերս ներդրված կուտակային կենսաթոշակային համակարգը դեռևս բնակչության լայն զանգվածների համար անընդունելի է: Հիմնական պատճառներից մեկը իրազեկվածության ցածր աստիճանն է:

Հոդվածում ներկայացված են առաջարկություններ իրազեկվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև ներկայացվել են ժողովրդագրական պատկերը, ինչպես նաև աղքատությունը ըստ սպառման և եկամտի ցուցանիշների և դրանց ազդեցությունները կուտակային կենսաթոշակային համակարգի վրա:

***Բանալի բառեր.** ազգաբնակչություն, տեղեկացվածության մակարդակ, իրավունք, կենսաթոշակային բարեփոխումներ, համացանց, ժողովրդագրություն, ծերացող բնակչություն, կենսապահովման նվազագույն զանրյուղ, սպառում, կենսամակարդակ:*

ПОВЫШЕНИЕ ИНФОРМИРОВАННОСТИ НАСЕЛЕНИЯ В ПРОЦЕССЕ ПЕНСИОННЫХ РЕФОРМ

ШОГЕР ПОГОСЯН, *к. э. н.*

научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В последние годы во многих странах мира, в том числе и в РА, проводятся пенсионные реформы. Однако, недавно внедренная в республике накопительная пенсионная система не воспринимается со стороны большинства населения. Одной из основных причин этого является низкая степень осведомленности населения.

В статье даны предложения по поднятию уровня осведомленности населения, рассмотрены факторы демографического изменения, а также представлена степень нищеты по показателям потребления и дохода. Дана также оценка влияния этих показателей на накопительную пенсионную систему.

***Ключевые слова:** население, степень осведомленности, права, пенсионная реформа, интернет, демография, стареющее население, прожиточный минимум, потребление, уровень развития населения.*

RAISING PUBLIC AWARENESS IN IMPLEMENTING PENSION REFORMS

SHOGER POGHOSYAN, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

Many countries are currently implementing pension reforms, and Armenia is among those implementers. The defined-contributions pension scheme introduced recently is not warmly welcomed by the majority of population. One of the explanations is the insufficient public awareness.

The article proposes some measures to raise the public awareness, and presents demographic trends and various poverty rates by consumption and income indicators and their possible impact on the funded pension system.

***Keywords:** Population, level of public awareness, right, pension reforms, internet, demographics, aging population, minimum livelihood basket, consumption, standard of living.*

ԱՐԺԵՔՂԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԼՂՅ-ՈՒՄ


Տնտեսության զարգացման գործում արժեքների շուկայի դերն ու արդիականությունը առավելապես պայմանավորված են դրա կողմից իրականացվող գործառույթներով: Ներկայումս արժեքների զարգացած շուկա ունեցող երկրներում այն կատարվում են բազմաթիվ և տարաբնույթ գործառույթներ, որոնցից, մեր կարծիքով, անհրաժեշտ է կարևորել այնպիսիները, որոնք նպաստում են տնտեսության առջև ծառայած գերխնդիրների լուծմանը, մասնավորապես տնտեսական աճին ու մարդկանց կյանքի որակի բարձրացմանը: Առաջին հերթին արժեքների շուկայի նշանակությունը և գլխավոր գործառույթը ֆինանսական ներդրումների վերածված խնայողությունների վերափոխումն է իրական ներդրումներին, արդյունքում՝ տնտեսության, այդ թվում՝ իրական հատվածի, ֆինանսավորումն է, հետևաբար նաև տնտեսական աճի ապահովումը:

Սակայն դրա հետ միասին, հատկապես զարգացող երկրների համար, անհրաժեշտ է կարևորել արժեքների շուկայի երկու շատ կարևոր գործառույթ նույնպես՝ ա) կորպորատիվ կառավարման և բ) ընկերությունների թափանցիկության ապահովման: Նշված այս գործառույթների իրականացումն ապահովում է որոշակի արդյունքներ, որոնք ընդհանուր առմամբ հանգեցնում են կայուն տնտեսական աճի: Այդ կարևոր գործառույթների իրականացումը և դրանց միջոցով գերակա նպատակների արդյունքային ապահովումը կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով (տե՛ս գծապատկեր 1):

Ինչպես ՀՀ -ում, այնպես էլ ԼՂՅ-ում ներկայումս իրական հատվածի ֆինանսավորման գործում գրեթե աննշան է արժեքների և հատկապես կապիտալի շուկայի բաժինը: Մասնավորապես այդ են վկայում ՀՀ-ում շուկայական կապիտալացման ցածր ցուցանիշները: Արդյունքում, ուսումնասիրությունները վկայում են, որ բաժնետոմսերի բորսայական կապիտալացումը 2005թ. կազմել է 18.9, 2010-ին՝ 52.6, 2014-ին՝ 73.0 մլրդ դրամ, իսկ կապիտալացման և ՀՆԱ-ի հարաբերակցությունը նշված տարիներին համապատասխանաբար կազմել է 0.84, 1.52 և 1.51 տոկոս¹: Պատկերացում կազմելու համար նկատենք, որ վերջին ցուցանիշը ինչպես զարգացող, առավել ևս զարգացած բազմաթիվ երկրներում անհամեմատ բարձր է՝ առանձին երկրներում (Հոն-Կոնգ, Չինաստան) հասնելով ավելի քան 300 տոկոսի²:

Գծապատկեր 1

Արժեքների շուկայի գործառույթների արդյունքային ապահովումը



¹ Տվյալները բերվել են «ՆԱՍԴԱ ՕԷՄԷՔԱ Արմենիա» ԲԲԸ ֆոնդային բորսայի համապատասխան հաշվետվություններից:
² <http://data.worldbank.org/indicator/CM.MKT.LCAP.GD.ZS/countries>

Արժեթղթերի շուկան տնտեսության մեջ իրականացնում է ներդրումների կարգավորիչի դեր, քանի որ արժեթղթերի միջոցով հավաքագրվում են ազատ դրամական միջոցները և տեղաբաշխվում տնտեսության համար կարևորագույն ճյուղերի ու ոլորտների միջև: Այսպիսով՝ այն մի կողմից արտահայտում է տնտեսության վիճակը, իսկ մյուս կողմից՝ գործարար ակտիվության դինամիկան:


Արժեթղթերի շուկայի զարգացման նախադրյալների բացահայտման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարբեր ոլորտների 1000-ից ավելի աշխատողների շրջանակներում անցկացվել է հարցում, և որի հիմնական նպատակն է եղել բացահայտել ԼՂՀ-ում արժեթղթերի շուկայի վրա ազդող գործոնները:

ԼՂՀ տնտեսության զարգացման համար որպես ներդրումների ֆինանսավորման աղբյուր նպատակահարմար է օգտագործել նաև արժեթղթերի թողարկման ճանապարհով ֆինանսական ռեսուրսների հավաքագրումը: Այսպիսով՝ ԼՂՀ-ում առաջնահերթ խնդիր պետք է դառնա ֆինանսավորման աղբյուրների «դիվերսիֆիկացիան», այսինքն դրա առավել ճկուն և շուկայական մեխանիզմի ձևավորումը, որը կնպաստի ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման արդյունավետության բարձրացմանն ու տնտեսության իրական հատված ուղղվող միջոցների ավելացմանը: Այդ առումով առանձնակի հրատապություն է ձեռք բերում արժեթղթերի շուկայի՝ որպես ներդրումային ռեսուրսների ձևավորման և տնտեսության ճյուղերի ու ոլորտների միջև դրանց օպտիմալ վերաբաշխման գործառույթն իրականացնող մեխանիզմի զարգացումը:

Տնտեսական ցանկացած երևույթի, այդ թվում՝ արժեթղթերի շուկայի կայացումն ու արդյունավետ գործողությունը, էապես կախված են դրանց վրա ազդող գործոններից, հետևաբար այն հարցադրումը, թե ըստ Ձեզ, «Որ գործոններն են նպաստում արժեթղթերի շուկայի կայացմանը ԼՂՀ-ում», հարցվածների 62.2%-ը, որպես արժեթղթերի շուկայի կայացման նպաստող գործոն, համարում է բնակչության եկամուտների ավելացումը (տե՛ս գծապատկեր 2-ը):

Գծապատկեր 2

«Որ գործոններն են նպաստում արժեթղթերի շուկայի կայացմանը ԼՂՀ-ում» հարցման արդյունքները



ԼՂՀ-ում վերջին տարիներին նկատվում է աշխատավարձի բարձրացում, որի միջին մակարդակը ներկայումս կազմում է 123,2.հազ. դրամ (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

ԼՂՀ-ում աշխատողների աշխատավարձի մակարդակը 31.12.2014թ.¹

Աշխատավարձի չափը (հազար) դրամ	Տնտեսվարող սուբյեկտների Քանակը	Աշխատողների թվաքանակը, մարդ
Մինչև 100	2423	25048
100-150	192	9425
150-250	76	5010
250-ից բարձր	19	875

¹ Աղբյուրը՝ 2014թ. Հարկային հաշվետվ. տվյալներ, www.tax-nkr.am:

ԼՂՀ արժեթղթերի շուկայի զարգացման նախադրյալների վերլուծությունը վկայում է, որ արժեթղթերի շուկայի կայացման հիմնական խոչընդոտներն են՝

- ֆինանսական գրագիտության պակասը և տեղեկատվական ասիմետրիան՝ 24,7%,
- ներդրողների իրավունքների պաշտպանված չլինելը՝ 28,1%,
- պետության ոչ պատշաճ աջակցությունը՝ 28,1%:

Կատարված վերլուծության հաջորդ հարցին՝ «Եթե ունենայիք խնայողություններ, որտեղ կստեղծաբաշխեիք» հարցվածները տալիս են հետևյալ պատասխանը.

- բանկում ավանդի տեսքով՝ 52%-ը,
- «Արցախ ՅԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի ձեռք բերում՝ 11.9%-ը,
- արտարժույթի գնում՝ 15.8%-ը:

Բնակչությունը կատարում է ներդրումներ բանկերում ոչ թե այն պատճառով, որ տոկոսադրույքը երաշխավորված է (չնայած դա մեծ նշանակություն ունի) այլ մեր կարծիքով, այստեղ կարևորն իրացվելիությունն է, քանի որ բանկում ներդրողը ցանկացած պահի կարող է հետ վերցնել իր գումարը՝ մինչդեռ ակնհայտ է, որ բաժնետոմսերը քիչ իրացվելի են: Այդ իսկ առումով էլ, շատ կարևոր է ունենալ բաժնետոմսերի իրացվելի երկրորդային շուկա:

Կարևոր հարցադրումներից է նաև այն, որ «ԼՂՀ-ում գործող խոշոր արդյունաբերական ՓԲԸ-ների վերածումը ԲԲԸ-ների: Կիսբանի արդյոք արժեթղթերի շուկայի կայացմանը: Հարցվածների միայն 33%-ն է վստահ, որ գրեթե չի փոխվի, ինչը վկայում է ոլորտին ոչ լիարժեք տեղեկացված լինելը, իսկ 18.7%-ը լավատես են:

Արժեթղթերի շուկայի զարգացման նպատակով պետք է ձեռնարկել տարբեր միջոցառումներ՝ կապված կապիտալի շուկայի ենթակառուցվածքների զարգացման, օրենսդրության համարժեք փոփոխությունների հետ:

Խնդիրն այն է, որ կապիտալի շուկան չի կարող կտրված լինել տնտեսության իրական հատվածից, այսինքն՝ այն կարգավորելու համար պետք է քայլեր կատարել նաև տնտեսության իրական հատվածի զարգացման համար, որը պահանջում է լուծել

- կապիտալի շուկա մտնելու սահմանափակ հնարավորությունները,
- տեղեկատվության բարձր ասիմետրիան,
- տնտեսական անկայունությունը,
- ցածր իրավական պաշտպանությունը,
- կապիտալի կառուցվածքի ցածր մակարդակը և սեփականության կենտրոնացվածությունը,
- կորպորատիվ կառավարման թույլ համալրվածությունը,
- հարկային անհամապատասխանությունները:

Ըստ վերոնշյալների՝ կատարված վերլուծություններով դեռևս հնարավոր չէ սահմանափակվել, սակայն ակնհայտ է դառնում, որ հարցման արդյունքները բավականին ուղեցույց են համարվում ԼՂՀ-ում արժեթղթերի շուկայի զարգացման առկա նախադրյալների և գոյություն ունեցող հնարավոր խնդիրների մասին:

Լեռնային Ղարաբաղի տնտեսության ներկա մակարդակը թույլ է տալիս զարգացնել արժեթղթերի շուկան, որի վկայությունն են հանդիսանում վերջին տարիների մակրոտնտեսական ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 2-ը):

Շատ կարևոր է նաև գիտակցել, որ արժեթղթերի շուկայի զարգացումը կարող է նպաստել ինչպես տնտեսությանը, այնպես էլ այդ շուկայի միջոցով ֆինանսական միջոցների ձեռքբերմանը, և ի տարբերություն բանկային համակարգի սահմանափակ հնարավորություններին, այն ավելի էժան ու արդյունավետ կլինի:

Այսպիսով, ԼՂՀ արժեթղթերի շուկայի նախադրյալների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները, որ արժեթղթերի շուկայի կայացման համար անհրաժեշտ է.

- բարձրացնել մարդկանց ֆինանսական որոտի գծով գրագիտությունը,
- ավելացնել ԲԲԸ-ների քանակը, և հատկապես այն ընկերությունների, որոնք ունեն բազմաթիվ բաժնետերեր՝ առանց բաժնետոմսերի խոշոր կենտրոնացումների,

- հասարակության ուշադրությունը հրավիրել կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառման վրա,
- բարձրացնել հասարակության տեղեկացվածության գործում ՁԼՄ-ների դերը:

Աղյուսակ 2

ԼՂՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2014թ.¹

	2014թ. %-ով 2013թ. նկատմամբ
Համախառն ներքին արդյունք	108.9
ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը (ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունը նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի նկատմամբ)	102.9
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	116.1
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	95.7
Շինարարության ծավալը	111.7
Միջին ամսական անվանական աշխատավարձը	104.4
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը	97.6
Բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների ծավալը	103.0
Բնակչության դրամական եկամուտները	110.6
Բնակչության իրական տնօրինած դրամական եկամուտները	106.5
Բնակչության դրամական ծախսերը	110.9
Սպառողական գների ինդեքսը	104.5

Ամփոփելով, կարելի է նշել այն, որ հետևելով միջազգային լավագույն փորձին և տանելով ֆինանսական ոլորտի գծով գրագիտության բարձրացման ուղղությամբ շարունակական աշխատանքներ՝ կունենանք ֆինանսապես կրթված բնակչություն: Արդյունքում հետզհետե կավելանա ֆինանսական տարաբնույթ և բարդ գործիքների լայնածավալ օգտագործումը, կբարձրանա փոխառությունների վերադարձելիությունը՝ ապահովելով դրանց նկատմամբ վստահություն, և միաժամանակ կձևավորվեն «երկար փողեր», ինչն էլ իր հեթին կխթանի պետության ֆինանսական համակարգի կայունությանը և տնտեսական աճի ապահովմանը:

¹ «ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2014թ. հունվար-դեկտեմբերին» եռամսյակային տեղեկատվական զեկույց, ԼՂՀ ԱԿԾ:

ԱՐԺԵՐՊԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՐԻՅԱԼՆԵՐԸ ԼՂՅ-ՈՒՄ

ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ, *տ. գ. դ., պրոֆեսոր*
ՆՊՏՏ ամբիոնի վարիչ

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ, *հայցորդ*
Արցախի պետական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս

Համառոտագիր

ԼՂՅ արժեթղթերի շուկայի զարգացման հեռանկարների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արժեթղթերի շուկայի կայացման համար անհրաժեշտ է բարձրացնել ազգաբնակչության ֆինանսական գրագիտության մակարդակը, ավելացնել ԲԲԸ-ների թիվը, կասեցնել արժեթղթերի շուկայի զարգացմանը խոչընդոտող գործոնների բացասական ազդեցությունը, ինչպես նաև ԶԼՍ-ների միջոցով բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը:

Բանալի բառեր. *արժեթղթերի շուկա, կապիտալի շուկա, կապիտալիզում, ֆինանսական գրագիտություն, տնտեսական աճ:*

АНАЛИЗ ПРЕДПОСЫЛОК РАЗВИТИЯ РЫНКА ЦЕННЫХ БУМАГ НКР

АШОТ САЛНАЗАРЯН, *д.э.н., профессор*
Заведующий кафедры АГЭУ

СУСАННА АВЕТИСЯН, *соискатель*
Преподаватель финансово-учетной кафедры
экономического факультета Арцахского
государственного университета

Аннотация

Анализ предпосылок развития рынка ценных бумаг НКР позволяет сделать вывод, что для становления рынка ценных бумаг НКР необходимо повысить уровень финансовой грамотности населения, увеличить количество ОАО, устранить отрицательное воздействие факторов, препятствующих развитию рынка ценных бумаг, а также посредством СМИ повысить уровень осведомленности населения.

Ключевые слова: *рынок ценных бумаг, рынок капитала, капитализация, финансовая грамотность, экономический рост.*

PRECONDITION FOR DEVELOPING THE SECURITIES MARKET IN THE NAGORNO KARABAKH REPUBLIC

ASHOT SALNAZARYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Head of Department Armenian State University of Economics

SUSANNA AVETISYAN, *Ph.D. Student*
Lecturer Faculty of Finance and Accounting,
Economic Department Artsakh State University

Abstract

The analysis of development perspectives of the securities market in the Nagorno Karabakh Republic (NKR) allows the authors to conclude that in order to build a strong securities market it is required to raise the financial literacy level of the population, to increase the number of open joint stock companies, to eliminate and/or minimize the negative impact of the factors impeding the development of the securities market, and to increase the public awareness via the mass media.

Keywords: *Securities market, capital market, capitalization, financial literacy, economic growth*

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Թեև հարկային քաղաքականության տեսամեթոդական հիմքերը բավականաչափ ուսումնասիրված են, սակայն առկա են մակրոտնտեսական այս կարևոր լծակի կիրառման այնպիսի ոլորտներ, որոնք դեռ լուրջ ու մանրակրկիտ հետազոտությունների կարիք ունեն։ Հատկապես կարևորվում է ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում հարկային քաղաքականության ուղղությունների վերլուծությունը՝ դրանց արդյունավետությունը գնահատելու և հետագայում այն կատարելագործելու համար։

Կախված տնտեսական համակարգում տիրող իրավիճակից՝ պետությունն իրականացնում է խթանող կամ զսպող հարկային քաղաքականություն։ Սոցիալ-տնտեսական անբարենպաստ իրավիճակներում պետությունը կիրառում է հարկային խթանող միջոցառումները՝ արտադրության հետագա ավելի խոր անկումը կանխելու, գործազրկության մակարդակը նվազեցնելու, սոցիալական լարվածությունը թուլացնելու նպատակով։ Մասնավորապես, տնտեսվարողների և ազգաբնակչության եկամուտների կտրուկ նվազումը կանխելու համար պետության կողմից նվազեցվում են ուղղակի և անուղղակի հարկերի դրույքաչափերը, կիրառվում են հարկային զանազան արտոնություններ։

Տնտեսական վերելքի ժամանակաշրջանում պետությունն, ընդհակառակը, հիմնականում վարում է զսպողական հարկային քաղաքականություն՝ տնտեսության «գերտաքացում» թույլ չտալու համար։ Այդ նպատակով հիմնական հարկերի դրույքաչափերը բարձրացվում են, վերացվում են կամ հնարավորինս կրճատվում հարկային արտոնությունները, երբեմն սահմանվում են նաև նոր հարկատեսակներ։

Այժմ անդրադառնանք ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում աշխարհի տարբեր պետությունների կողմից կիրառված հարկային քաղաքականության միջոցառումներին՝ բացահայտելու դրանց հիմնական ուղղությունները, առանձնահատկությունները և ընդհանրությունները։

Տնտեսական անկման ժամանակաշրջանում, ճգնաժամի հետագա տարածումը կանխելու համար, շատ երկրներ գիտակցեցին գործարար ակտիվության խթանման անհրաժեշտությունը։ Վերջիններիս կողմից իրականացված միջոցառումները հիմնականում, ուղղված էին ճգնաժամի ընթացքում կրճատվող համախառն պահանջարկի վերականգնմանը, քանի որ պահանջարկի ընդլայնումը հանգեցնում է պատրաստի ապրանքների պահուստների նվազեցմանը, դրանց թողարկման ավելացմանը, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը և ներդրումային պահանջարկի բարձրացմանը, իսկ դա էլ, իր հերթին, նշանակում է տնտեսության անցում դեպի վերելքի փուլ։

Շատ հակաճգնաժամային ծրագրեր պարունակում էին 2009 թվականի հարկերի նվազեցման միջոցառումների պլաններ և վերաբերում էին ինչպես ազգաբնակչությանը, այնպես էլ իրավաբանական անձանց։

Հարկերի նվազեցման և իրավաբանական անձանց պարտադիր վճարների, իսկ որոշ դեպքերում՝ նաև հարկերի վճարումից լիակատար ազատվելու ծրագրեր (հիմնականում փոքր բիզնեսին վերաբերող) կիրառեցին ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Կանադան, Գերմանիան, Ֆրանսիան, Շվեյցարիան, Հունգարիան, Նորվեգիան, Դանիան, Չինաստանը, Հնդկաստանը, Թայվանը, Ղազախստանը։ Տվյալ միջոցառումներն, առաջին հերթին, վերաբերում էին եկամտահարկին, ավելացված արժեքի հարկին, սոցիալական ապահովագրության վճարներին, ակցիզային հարկին, ինչպես նաև հարկային կանխավճարներին։

Ավելացված արժեքի հարկի բարեփոխումների գծով կարող ենք առանձնացնել տարբեր երկրների կառավարությունների կողմից կիրառված հիմնական երկու մոտեցումներ.

1. ԱԱՀ-ի փոխարինում սպառման հարկով (Չինաստան, Հնդկաստան),

2. ԱԱՀ դրույքաչափի նվազեցում (Չինաստան, Եվրամիության անդամ-երկրներ, Մեծ Բրիտանիա):

Մասնավորապես Մեծ Բրիտանիայում մինչև 2010 թվականն ընկած ժամանակաշրջանը ԱԱՀ-ի դրույքաչափը ժամանակավորապես նվազեցվեց 17,5%-ից մինչև 15%: Հնդկաստանում ԱԱՀ-ի դրույքաչափը սկզբում նվազեցվեց 4%-ով, իսկ 2009 թվականի երկրորդ կեսին կառավարությունը որոշում կայացրեց վերջինս փոխարինել մատուցվող ծառայությունների և ապրանքների դիմաց վճարվող սպառման հարկերով:

Անդրադառնալով Չինաստանին նշենք, որ այս երկրում ԱԱՀ-ի բարեփոխումը նախատեսում էր այդ հարկատեսակի՝ արտադրանքի միավորի հաշվով հաշվեգրման սխեմայից անցում դեպի սպառման միավորի հաշվով սխեմայի, ինչի արդյունքում ընկերությունները հնարավորություն կունենային հարկվող բազայից նվազեցնելու կապիտալ սարքավորումների համար կատարված ծախսերը: Տվյալ պարագայում Չինաստան ներմուծված սարքավորումներն այլևս չէին ազատվելու ԱԱՀ-ից, իսկ արտասահմանից ֆինանսավորվող ընկերություններն էլ երկրի ներսում արդեն գնված սարքավորումների գնման ժամանակ վճարված ԱԱՀ-ի գումարների վերադարձի իրավունք չէին ունենա: Ինչ վերաբերում է Ֆրանսիային և Մեծ Բրիտանիային, ապա այս երկրներում տրամադրվում էին արտոնություններ ու հարկային նվազեցումներ՝ նպատակային ներդրումներ իրականացնող և եկամտի միայն որոշակի տեսակներ ստացող ընկերություններին: Մասնավորապես Մեծ Բրիտանիայի խոշոր և միջին ձեռնարկություններն ազատվեցին 2009 թվականի արտասահմանյան շահաբաժինների համար իրականացվելիք հարկերի վճարներից¹:

Մեկ այլ երկրի՝ Ղազախստանի կառավարությունը 2009 թվականին որոշում կայացրեց ընդհանրապես չգանձել ածխաջրածինների արտահանման տուրքերը, ինչպես նաև գրոյական դրույքներ սահմանվեցին նավթի և գազակոնդենսատորների արտահանման համար, ինչը տարածվեց երկրում գործող բոլոր նավթային ընկերությունների վրա: Բացի այդ, կառավարությունը նվազեցրեց ԱՊՀ տարածքում երկաթուղային բեռնափոխադրումների սակագները:

Ինչ վերաբերում է Կանադային, ապա այստեղ գործող արտադրական կազմակերպությունների համար երեք տարով երկարաձգվեց 2007թ. ընդունված արագացված գծային ամորտիզացիայի կիրառման համար սահմանված կարգը:

Անդրադառնալով քաղաքացիներին տրամադրվող հարկային արտոնություններին՝ ապա այդպիսիք տրամադրվեցին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Դանիայի, Ճապոնիայի, Չինաստանի, Հարավային Կորեայի կառավարությունների կողմից: Մասնավորապես ԱՄՆ-ում հարկային արտոնություններ տրամադրվեցին ամերիկյան ընտանիքների 95%-ին, Ֆրանսիայում հարկային մեղմացումները տարածվել են մոտ 4 մլն ընտանիքների վրա: Այդ ծրագրերով կրճատվել էին հիմնականում եկամտահարկը, տրանսպորտային հարկը և անշարժ գույքի հարկը: Ինչ վերաբերում է եկամտահարկին, ապա դրա փոփոխությունն իրականացվում էր հետևյալ երկու ուղղություններից մեկով. նվազեցվում էր կամ հենց հարկի դրույքաչափը (հակաճգնաժամային ծրագրերի մեծ մասում), կամ հարկման շենը (օրինակ՝ Դանիայում): Որոշ երկրներում այդպիսի արտոնություններ տրամադրվում էին միայն քաղաքացիների որոշակի խմբերի: Օրինակ, ԱՄՆ-ում ֆիզիկական անձանց հարկման կրճատման ծրագրում խոսքը հիմնականում միջին խավին պատկանող քաղաքացիների մասին էր, որոնց հարկային վճարների գումարը ենթադրվում էր կրճատել 736 մլրդ դոլարով:

Հավելենք նաև, որ ԱՄՆ-ում և Կանադայում ավելացվել էր հարկային վճարումներից ազատ խնայողական հաշիվների քանակը. նվազեցվել կամ հետաձգվել էին անձնական կենսաթոշակային խնայողական հաշիվներից ֆինանսական միջոցների վաղաժամկետ կանխիկացման համար օրենսդրությամբ սահմանված տուգանքները:

Արգենտինայում ազգային տնտեսության մեջ կապիտալի ներհոսքի ապահովման նպատակով երկրի նախագահը հայտարարեց հարկային արտոնությունների տրամադրման մասին այն քաղաքացիներին, ովքեր կորոշեին Արգենտինա վերադարձնել արտասահման տեղափոխած կապիտալները, իսկ այն քաղաքացիները, ովքեր դրանք ուղղակի կհայտարարագրեին, պարտավոր էին վճարել 8%-ի չափով հարկ, սակայն Արգենտինա վերադարձնելու դեպքում՝ այդ

¹ С.М. Дробышевский, Е.В. Синельникова, А.В. Сорокина, П.В. Трунин, Е.В. Худько. Международный опыт антикризисной политики -М.: издательство "Дело" РАНХ, 2010, стр.24.

դրույքը կազմելու էր 6%: Բացի այդ, ավելի վաղ արտահանած կապիտալները տնտեսության իրական հատվածում ներդնելու դեպքում՝ հարկի դրույքաչափը կազմելու էր ընդամենը 1%:

Ինչ վերաբերում է ճապոնիային, ապա այստեղ անշարժ գույքի դիմաց հարկերի նվազեցումը վերաբերում էր ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց:

Հաշվի առնելով, որ ճգնաժամի պայմաններում աճեցին հարկային պարտավորությունները, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Նոր Զելանդիայի կառավարությունները զննցին չվճարված հարկային պարտավորությունների նկատմամբ սահմանված նորմերի մեղմացման ճանապարհով, հատկապես կոնկրետ տուգանքների նվազեցման (երբեմն մինչև զրոյական մակարդակ), հարկային կանխավճարների վերացման, հարկային պարտավորությունների գումարի վրա հաշվեգրված տույժերի նվազեցման կամ վերացման ձևերով: Հարկային օրենքների նմանատիպ փոփոխությունները հիմնականում վերաբերում էին փոքր և միջին բիզնեսին, քանի որ խոշոր ընկերությունները հարկերի վճարման համար ունեին համապատասխան պահուստներ: Մասնավորապես ԱՄՆ-ում փոքր բիզնեսի համար հարկման նվազեցման ծրագիրը և դրա վճարման կանոնների փոփոխությունը, ըստ նախնական հաշվարկի, պետք է տնտեսության այդ հատվածի համար խնայեին մինչև 100 մլրդ դոլար: Առանձին հարկային արտոնություններ, այդ թվում՝ ԱԱՀ-ի գծով և ուղղված հատկապես փոքր ու միջին բիզնեսին, կիրառվել են նաև բազմաթիվ այլ երկրներում:

Սակայն, դրա հետ մեկտեղ, կարող ենք բերել նաև հակառակ օրինակներ՝ հարկերի և տուրքերի բարձրացում և մինչ այդ գոյություն ունեցող հարկային արտոնությունների չեղյալ համարում առանձին հարկ վճարողների խմբերի համար: Մասնավորապես ԱՄՆ-ում չեղյալ համարվեցին նավթարդյունահանող ընկերությունների հարկային արտոնությունները, միջազգային ներդրումների իրականացման համար հարկային արտոնությունները, ինչպես նաև արգելք դրվեց արտասահմանում ստացած եկամուտներն օֆշորային տարածքներ տեղափոխելու վրա: Ինչ վերաբերում է Չինաստանին և Հունգարիային, ապա վերջիններս հայտարարեցին ԱԱՀ-ի դրույքաչափի բարձրացման մասին, չնայած Չինաստանում դա վերաբերվում էր միայն օգտակար հանածոների արդյունահանման ոլորտին (հանքային արտադրատեսակների համար հարկի դրույքաչափը բարձրացվել էր 13%-ից մինչև 17%):

Հարկ է նշել, որ մի շարք երկրներում ժամանակավոր բարձրացվել էին նաև պետական աջակցություն ստացած ընկերությունների կառավարիչների պարզևավճարների նկատմամբ հարկային դրույքաչափերը: Օրինակ, Սլովենիայում 2009 թվականի երրորդ եռամսյակում ընդունվեց պետական աջակցություն ստացող 90% ընկերությունների թոփ-մեներջերների եկամտահարկի բարձրացման մասին նոր օրենք: Հարկային նոր դրույքաչափը սկսել էր գործել 2009 թվականի հունվարի 1-ից և ուժի մեջ էր մնալու մինչև այն ժամանակ, քանի դեռ ընկերությունը ստանալու էր պետական աջակցություն:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ստիպեց Եվրամիության անդամ-երկրներին 2009 թվականի սկզբից ակտիվացնել օֆշորային գոտիների և հարկերի վճարման դեմ պայքարի միասնական դիրքորոշման ձևավորման գործընթացը: Արդյունքում Ավստրիան, Լյուքսեմբուրգը և նույնիսկ Շվեյցարիան, որը ԵՄ անդամ չէ, ընդունեցին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) սահմանած չափանիշները, այդ իսկ պատճառով չներառվեցին օֆշորային տարածքների ցանկում: Ֆրանսիայում 2009 թվականի հոկտեմբերին կառավարությունը երկրի բանկերին պարտադրեց իրենց տարեկան հաշվետվությունների հավելվածներում հրապարակել այսպես կոչված «հարկային ապաստան» համարվող գոտիներում իրենց կատարած կապիտալ ներդրումների մանրամասնեցված ցանկը՝ այդտեղ իրականացրած գործունեության նկարագրով, ինչպես նաև իրենց «ուղղակի և անուղղակի» գործառնությունների ցանկն այն տարածքներում և երկրներում, որոնք Ֆրանսիայի հետ չէին ստորագրել հարկերից խուսափելու դեմ պայքարում փոխադարձ աջակցության մասին համաձայնագիրը: Բացի այդ, նույն տարվա հոկտեմբերից բոլոր ֆրանսիական բանկերը պարտավորվեցին փակել իրենց բաժանմունքները և մասնաճյուղերը նմանատիպ տարածքներում:

Ենթև, որ ճգնաժամի ընթացքում կիրառվել են նաև հարկման ոլորտում երկկողմ համագործակցության մի շարք միջոցառումներ: Այսպես, 2009թ. հուլիսին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի կառավարությունները ստորագրեցին նոր հարկային համաձայնագիր, որը նախա-

տեսում էր լրացուցիչ հարկային արտոնություններ առևտրային հարաբերությունների զարգացման համար: Շահաբաժինների վճարման դեպքում հարկի դրույքաչափը զրոյանում էր, եթե ներդրողը ընկերության ոչ պակաս, քան 80%-ի բաժնետեր էր: Դրույքաչափը նվազում էր 15%-ից մինչև 5%՝ ոչ պակաս, քան 10% բաժնեմասի դեպքում: Նշենք նաև, որ մինչև 5% նվազեցվեց հարկի դրույքը ռոյալթիների նկատմամբ: Ավելին, տվյալ համաձայնագիրը հեշտացնելու էր ստացված եկամտի վերադարձը նոր ներդրումների իրականացման դեպքում: Բերենք երկկողմ համաձայնագրի ևս մեկ օրինակ. 2009 թվականի հոկտեմբերին Եվրամիությունը և Հարավային Կորեան կնքեցին երկու երկրների միջև ազատ առևտրի մասին համաձայնագիր, համաձայն որի՝ արտահանման համար սահմանված գրեթե բոլոր սակագները հանվելու էին: Ճգնաժամի սկզբնական հատվածում կրկնակի հարկումից խուսափելու մասին պայմանագրեր ստորագրեցին նաև Շվեյցարիան ու Դանիան, ԱՄՆ-ը և Լյուքսեմբուրգը, Շվեյցարիան ու ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, Նիդեռլանդներն ու Սաուդյան Արաբիան, Հոնկոնգը և Չինաստանը, Նոր Զելանդիան ու Չեխիան:

Հարկ է նշել, որ բազմաթիվ միջազգային տնտեսական կազմակերպությունների կողմից ընդգծվում էր համախառն պահանջարկի խթանման անհրաժեշտությունը ճգնաժամի ընթացքում հարկային խթանների ստեղծման միջոցով: Մասնավորապես Համաշխարհային բանկի և Ասիական զարգացման բանկի կարծիքով՝ տվյալ միջոցառումն առանձնապես արդիական էր համարվում զարգացող երկրների համար: Ընդ որում, հարկային աջակցումից անհրաժեշտ է օգտվել ոչ միայն արտադրության, այլև սոցիալական հատվածի և ենթակառուցվածքների խթանման համար: Այսպես, Համաշխարհային բանկը կարծում էր, որ «սոցիալական հատվածի և ենթակառուցվածքների զարգացմանն աջակցելու համար հարկային խթանող գործիքակազմի կիրառումը կօգնի ստեղծել անհրաժեշտ հիմքեր ապագա տնտեսական աճի համար»¹: Իսկապես, ճգնաժամի պայմաններում սոցիալական ոլորտի և ենթակառուցվածքների ոչ բավարար բյուջետային ֆինանսավորումը կարելի է փոխհատուցել ընկերությունների համար՝ այդ ոլորտներում գործածվող տարաբնույթ հարկային արտոնություններով: Տվյալ որոշումները նպատակ ունեին նպաստելու գործարար ակտիվության խթանմանը և ունենալու էին դրական ազդեցություն ողջ տնտեսության համար:

Պետք է փաստել, որ ԵՄ-ը նույնպես ճգնաժամի ընթացքում մեծապես աջակցում էր անդամ-երկրների կողմից փոքր և միջին ձեռնարկությունների հարկային բեռի կրճատման նախաձեռնությանը: Մասնավորապես, 2009 թվականի սկզբին ԵՄ կողմից ֆինանսական աջակցություն էր հատկացվել Լատվիային՝ հարկային քաղաքականության խթանող միջոցառումների անցկացման համար: Սակայն ԵՄ-ն խորհուրդ չէր տալիս տվյալ միջոցառմամբ շատ հրապուրվել, քանի որ հարկերի չափից դուրս նվազեցումը կարող է խախտել բյուջետային համակարգի կայունությունը, ինչպես նաև խորհուրդ չէր տրվում կուրորեն կրկնել այլ երկրների փորձը հարկային բեռի նվազեցման ոլորտում: Հարկային քաղաքականության անընդհատ փոփոխվելու հնարավորությունները տարբեր երկրներում պետք է հիմնվեն ուժեղ, վստահության արժանի ազգային բյուջետային հիմնարկությունների և միջնաժամկետ բյուջետավորման ծրագրերի վրա: Մասնավորապես, բյուջեի եկամուտների լրացման համար G8-ի զագաթաժողովին առաջարկվեց պայքարել հարկերից խուսափելու երևույթների դեմ՝ համագործակցված և համատեղ գործողությունների միջոցով: Տվյալ ծրագրի հաջող իրականացման համար պահանջվում էր «տեղեկատվության փոխանակում և դրա բացահայտում»²:

Վերոնշյալ միջոցառումները, բնականաբար, իրենց դրական ազդեցությունն ունեցան ազգային տնտեսությունների և ընդհանուր առմամբ համաշխարհային տնտեսության վրա՝ թույլ տալով հաղթահարել ճգնաժամի ազդեցությունները: Այժմ ներկայացնենք այն հիմնական կարևոր ուղղությունները, որոնց վրա անհրաժեշտ է սևեռել կառավարությունների ուշադրությունը՝ ապագայում ֆինանսատնտեսական ճգնաժամերի ազդեցությունների առավելագույն մեղմման և վերջիններիս արագ հաղթահարման համար: Դրանցից հատկանշական են ֆինանսական շուկա-

¹ <http://web.worldbank.org>

² С.М. Дробышевский, Е.В. Синельникова, А.В. Сорокина, П.В. Трунин, Е.В. Худько. Международный опыт антикризисной политики. М. издательство “Дело” РАНХ, 2010, стр 73.

ների գործունեության արդյունավետության բարձրացման, ազգային տնտեսությունների դիվերսիֆիկացման, նորարարությունների խթանման ուղղությամբ հարկային միջոցառումների մշակումը, ինչպես նաև հարկային քաղաքականության իրականացման ոլորտում միջազգային համագործակցությունը:

Անդրադառնալով ֆինանսական շուկաների գործունեության բարելավմանը պետք է փաստել, որ դեռևս 2009 թվականին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) դիրքորոշում էր հայտնել, որ կարճ ժամանակահատվածում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել հարկային այն արգելքների վերացմանը, որոնք խոչընդոտում են ֆինանսական շուկաների արդյունավետ գործունեությունը¹: Դա, հիմնականում, վերաբերում էր այնպիսի հարկերին, որոնք աղավաղում են ներդրողի ընտրությունը, երբ վերջինիս մոտ առկա է այլընտրանք՝ ինքնուրույն կամ կուլեկտիվ ներդրումների մեխանիզմի միջոցով ներդրում կատարելու հետ կապված: Բացի այդ, հարկերը կարող են նաև որոշակի խոչընդոտներ ստեղծել տարբեր ֆինանսական գործիքների արդյունավետ կիրառման համար: Ֆինանսական շուկաներում ֆինանսական գործառնությունների հարկման նմանատիպ անհամապատասխանությունների վերացումը մեծապես կնպաստի ֆինանսական շուկաների գործունեության արդյունավետության բարձրացմանը և ճգնաժամի հետևանքների արագ հաղթահարմանը:

Տնտեսության դիվերսիֆիկացման նպատակով անհրաժեշտ է թիրախային հարկային արդյունավետ քաղաքականության մշակում, որը կնպաստի բարձր մրցունակություն ունեցող արտադրությունների արագ զարգացմանը: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ժամանակակից աշխարհում առաջնահերթ նշանակություն ունեն ներկայումս ոչ այնքան ապրանքների արտադրությունը, որքան ծառայությունների և հատկապես բիզնես-ծառայությունների, հետևաբար անհրաժեշտ է խթանել նաև այդ ոլորտը: Միաժամանակ, պետք է փաստել այն իրողությունը, որ բիզնես-ծառայությունները մեր երկրում թույլ են զարգացած, և այդ նպատակով անհրաժեշտ է լուրջ քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ:

Ինչ վերաբերում է նորանուծական (ինովացիոն) քաղաքականությանը, ապա վերջինս անմիջականորեն կապված է տնտեսության դիվերսիֆիկացման հիմնախնդիրների հետ, իսկ դրա մշակումը պահանջում է գործող հարկային օրենսդրության փոփոխություններ, առաջին հերթին, ինովացիոն զարգացման ճանապարհին խոչընդոտների վերհանման ու վերացման, և երկրորդ՝ այդպիսի զարգացման համար հարկային խթանիչների ստեղծման համար :

Բավական վստահ կարող ենք ասել, որ ճգնաժամի հետևանքների հաջող հաղթահարման համար մեծ կարևորություն ունեն պետությունների միջև հակաճգնաժամային միջոցառումների համաձայնեցումը և համակարգումը: Միջազգային մակարդակով համագործակցությունը համարվում է համաաշխարհային տնտեսության ճգնաժամների ազդեցությունների մեղմման և դրանցից դուրս գալու համար անհրաժեշտ նախապայման: Հակառակ դեպքում առանձին երկրների ճգնաժամից դուրս գալու միջոցառումները կարող են իրականացվել հարևան պետությանը «վնասել տալու» քաղաքականության անցկացման ճանապարհով, ինչը կհանգեցնի առևտրային ու տնտեսական լուրջ բախումների:

¹ www.oecd.org

ՀԱՐԿԱՅԻՆ ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՅԱՆ, *դ. գ. թ.*

Մ Գ Ա Ա Մ. Բոլորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Ներկայումս մեծապես կարևորվում է ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում հարկային քաղաքականության ուղղությունների վերլուծությունը՝ դրանց արդյունավետությունը գնահատելու և հետագայում կատարելագործելու համար: Տնտեսական անկման ժամանակաշրջանում, ճգնաժամի հետագա տարածումը կանխելու համար, շատ երկրներ գիտակցեցին գործարար ակտիվության խթանման անհրաժեշտությունը: Վերջիններիս կողմից իրականացված միջոցառումները հիմնականում ուղղված էին ճգնաժամի ընթացքում կրճատվող համախառն պահանջարկի վերականգնմանը, քանի որ պահանջարկի ընդլայնումը հանգեցնում է պատրաստի ապրանքների պահուստների նվազեցմանը, դրանց թողարկման ավելացմանը, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը և ներդրումային պահանջարկի բարձրացմանը, իսկ դա էլ, իր հերթին, նշանակում է՝ տնտեսության անցում դեպի վերելքի փուլ:

Բանալի բառեր. *հարկային, քաղաքականություն, ճգնաժամ, արդյունավետություն, տնտեսություն, ծրագիր, հարկ, արդյունություն, դրույրաչափ, եկամուտներ:*

ОСОБЕННОСТИ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ В УСЛОВИЯХ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА

КАРЕН САРГСЯН, *к. э. н.*

старший научный сотрудник Института экономики им. М.Котаяна НАН РА

Аннотация

В настоящее время важную роль приобретает анализ направлений налоговой политики в условиях финансово-экономического кризиса с целью оценки их эффективности и дальнейшего совершенствования. Многие страны в период экономического спада осознали необходимость стимулирования предпринимательской активности для предотвращения дальнейшего распространения кризиса. Проводимые последними мероприятия в основном были направлены на восстановление пониженного в процессе кризиса совокупного спроса, поскольку расширение спроса приводит к снижению запасов готовой продукции, увеличению их выпуска, созданию дополнительных рабочих мест и повышению инвестиционного спроса, а это, в свою очередь, означает переход экономики в стадию подъема.

Ключевые слова: *налоговая политика, кризис, эффективность, экономика, программа, налог, льгота, ставка, доходы.*

CHARACTERISTICS OF FISCAL POLICY IN TIMES OF FINANCIAL AND ECONOMIC CRISIS

KAREN SARGSYAN, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

Currently, the analysis of tax policy directions in times of financial and economic crisis to assess their efficiency and improve them in the future is highly stressed. During economic downturns, in order to prevent the further spread of the crisis, many nations realized the need for promoting the business activity. The measures implemented by these nations were mainly designed for recovery of declining aggregate demand, since increasing demand causes decline in inventories (of final goods) and increase in production that translates into new employment opportunities, which means that the economy moves to an expansion phase of the business cycle.

Keywords: *Tax, policy, crisis, efficiency, economy, program, incentive, rate, income.*

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Բանկային ոլորտում հակաճգնաժամային քաղաքականության միջոցառումները, որոնց ճգնաժամի ընթացքում դիմեցին տարբեր երկրների կառավարություններ, կարող ենք պայմանականորեն բաժանել հետևյալ խմբերի.

- տոկոսային դրույքների իջեցում,
- իրացվելիության ապահովում,
- վերակապիտալացում,
- բանկային պարտավորությունների համար երաշխիքների տրամադրում,
- պետության կողմից ակտիվների գնում և համապատասխան երաշխիքների տրամադրում¹:

Ներկայացնենք վերը նշված հակաճգնաժամային միջոցառումներն ավելի մանրամասն՝ վերլուծելով վերջիններիս արդյունավետությունը:

Ամերիկյան հայտնի տնտեսագետ Ստեֆեն Չեկկետտի աշխատություններից մեկը նվիրված էր ԱՄՆ-ի 2007-2008թթ. հակաճգնաժամային քաղաքականության հետազոտմանը: Հեղինակը նշում է, որ հակաճգնաժամային քաղաքականության միջոցառումները, որոնք անցկացվել են Դաշնային պահուստավորման համակարգի (ԴՊՀ) կողմից՝ 2007թ. օգոստոսից մինչև 2008թ. ապրիլը ընկած ժամանակահատվածում, կարող են բաժանվել երկու խմբի՝ ագրեսիվ մոնետար (ավանդական) քաղաքականություն և «միջոցառումներ, որոնք չեն մտնում այդ ձևակերպման մեջ» (ոչ ավանդական քաղաքականություն): Առաջին խմբին Չեկկետտին վերագրում էր դաշնային պահուստավորման միջոցների գծով նպատակային դրույքների 3.25 տոկոսային կետով իջեցումները: Դաշնային պահուստավորման միջոցների գծով դրույքի իջեցումը բերեց փոխառությունների գծով առաջնային դրույքի (դիսկոնտի) նվազեցման: Եվս մեկ ավանդական միջոցառում էր համարվում 2007թ. աշնանը ԴՊՀ-ի կողմից բանկերին կարճաժամկետ ֆինանսավորման հատկացումը՝ նպատակ ունենալով աջակցել վերջիններիս իրացվելիության ապահովմանը: ԴՊՀ-ն բանկերին թույլատրեց իրենց մոտ առկա գանձապետական արժեթղթերը փոխարինել կանխիկ փողով, և այս միջոցառումն, իր հերթին, օգնեց բանկերին՝ մարելու ընթացիկ պարտավորությունները: Այս ամենը, չնայած որոշակիորեն աջակցեց ԱՄՆ-ի բանկային համակարգին, բայց վերջինիս գործունեությունը չբերեց բնականոն վիճակի: Ավելին, բարձր ռիսկայնության խնդիրներն ու վարկային ռեսուրսների անբավարարությունը սրվեցին 2007թ. աշնան վերջում և 2008թ. վաղ ձմռանը²:

Չեկկետտին իր աշխատության մեջ նշում է նաև, որ արդեն 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ակնհայտ էր, որ կենտրոնական բանկերի ավանդական միջոցառումները կորցրել էին զգալի ազդեցությունները, և այդ պատճառով էլ ԴՊՀ-ն հակաճգնաժամային քաղաքականությունը տեղափոխեց դեպի «ոչ ավանդական» միջոցառումների ոլորտ և մշակեց բանկային համակարգի վարկավորման նոր սխեմաներ՝ TAF անվանմամբ (Term Auction Facility)³, որոնք սկսեցին կիրառվել 2007 թվականի դեկտեմբերից: Մինչև 2008 թվականի մայիսը բանկային համակարգն այս ծրագրի ներքո ստացավ 150 մլրդ դոլար գումարով վարկավորում: Գոյություն ունեն մի շարք ապացույցներ այն բանի օգտին, որ TAF միջոցառումներն օգնեցին նվազեցնել LIBOR-ի եռամսյա դրույքի և դաշնային պահուստավորման միջոցների գծով եռամսյա սպաս-

¹ IMF Global Financial Stability Report, 2009

² Նշվածի ապացույցն է ԱՄՆ-ի դաշնային ընկերությունների պարտատոմսերի (օրինակ, Fannie Mae և Փոքր ձեռնարկատերերի գործերով գերատեսչության) և գանձապետական արժեթղթերի միջև աճող սպրեդը:

³ Խոսքը նշանակալի գումարների մասին է (մինչև 75 մլրդ դոլար մեկ աճուրդի ընթացքում), որոնք տրվում էին 28-ից մինչև 35 օր ժամկետով:

վելիք դրույքի միջև սպրեդը: Նշենք, որ նմանատիպ աճուրդների ժամանակ փաստացի տեղի է ունենում միայն դաշնային պահուստավորման համակարգի ակտիվների վերաբաշխում՝ հաշվեկշռային չփոփոխված տարադրամով: Աճուրդների այս համակարգը ոչ միայն թույլ է տվել տրամադրել անհրաժեշտ վարկային ռեսուրսներ դրա կարիքն ունեցող բանկերին, այլև օգտագործել զգալի ցածր շուկայական արժեք ունեցող ակտիվները՝ որպես գրավ: Վերջինս ունեցավ երկակի հետևանքներ, այն է՝ մի կողմից իրացվելի ռեսուրսներն ուղղվեցին դեպի բանկեր, որոնք, հավանական է, որ չէին կարող դրանք ստանալ ավանդական միջոցներով, իսկ մյուս կողմից՝ բանկերն այս դեպքում ժամանակ շահեցին՝ օբյեկտիվորեն գնահատելու իրենց տրամադրության տակ գտնվող ակտիվները: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի իշխանությունները չկարողացան կազմակերպված միջոցառումների միջոցով հասնել բոլոր դրված նպատակներին: LIBOR-ի եռամսյա դրույքի և դաշնային պահուստավորման գծով եռամսյա սպասվելիք դրույքների միջև սպրեդի նվազումից հետո, որի մասին արդեն վերևում նշվեց, վերջինս 2008թ. մարտին կրկին զգալիորեն աճեց՝ ընդհուպ մինչև 70 բազիսային կետով: Դրան ի պատասխան՝ ԴՊՀ-ն ավելացրեց աճուրդներով տրամադրվող միջոցների ծավալը, ինչը սակայն չբերեց սպրեդի ցանկալի կրճատման:

Նշենք, որ ԱՉեկեյտտին ուշադրություն է դարձրել նաև 2008թ. «Bear Stearns» ներդրումային բանկի շուրջ ծավալված վտանգավոր իրադրությանը: Հեղինակի կարծիքով այդպիսի կառույցի սնանկացումն անխուսափելիորեն բացասաբար կազդեր ողջ ֆինանսական համակարգի վրա: Չհանդիսանալով առևտրային բանկ՝ «Bear Stearns»-ը չէր կարող հավակնել ԴՊՀ-ի աջակցմանը, սակայն վերջինս, ելնելով ֆինանսական համակարգի կայունության նպատակներից, որոշում կայացրեց օգնել նշված կազմակերպությանը: 2008 թ. մարտի 14-ին Նյու Յորքի դաշնային պահուստավորման բանկը փոխառություն հատկացրեց «Bear Stearns»-ին՝ 12,9 մլրդ դոլարի չափով: Այնուհետև «JP Morgan Chase» բանկը դաշնային պահուստավորման համակարգի կողմից վարկավորվեց՝ «Bear Stearns» ընկերությունը գնելու համար (բանկի արժեքը գնահատվել էր 3 մլրդ դոլար): Չեկեյտտիի կարծիքով «Bear Stearns»-ի այդօրինակ փրկությունը բերեց նրան, որ վարկատուներն առավել հանգիստ սկսեցին փոխառություններ տրամադրել ներդրումային բանկերին: Սակայն, մյուս կողմից, նշվածի արդյունքում վարկատուները սկսեցին իրենց վրա ավելորդ ռիսկեր վերցնել¹:

Իր հետազոտության արդյունքում Չեկեյտտին հանգում է այն հետևության, որ ստեղծված իրադրությունում ԱՄՆ-ի ԴՊՀ-ի արձագանքը՝ ուղղված բանկային համակարգի խնդիրներին, լիովին համարժեք էր: Այն բանից հետո, երբ պարզվեց, որ իրացվելիության ապահովման ավանդական մեթոդն անարդյունավետ է, ԴՊՀ-ն անցում կատարեց այլ գործողությունների: Սրա հետ մեկտեղ, հարկ ենք համարում հիշեցնել, որ վերջինս միակ պաշտոնական մարմինն է, որը կարողացավ արագ և արդյունավետ բեկում մտցնել ճգնաժամի արդյունքում բանկային համակարգում տիրող իրադրության մեջ:

Ֆրանսիացի տնտեսագետ Օլիվյե Բլանշարը [Blanchard, 2009] նույնպես իր աշխատություններից մեկը նվիրել է ճգնաժամի ընթացքում երկրների կենտրոնական բանկերի վարած քաղաքականության հետազոտմանը: Նրա կարծիքով այդպիսի քաղաքականության դրսևորումներից մեկը բանկերի համար որակյալ ակտիվների գրավի դիմաց իրացվելի միջոցների տրամադրումն է: Իրացվելի ռեսուրսներ ստանալու հնարավորության առկայության դեպքում ֆինանսական հաստատությունները (մասնավորապես բանկերը) չեն վաճառի իրենց ակտիվները ցածր գներով՝ դրանով էլ ավելի չխորացնելով ճգնաժամային երևույթները: Բլանշարը նշում է, որ հենց այդպես էլ վարվում էին կենտրոնական բանկերը ճգնաժամի սկզբում՝ կատարելով «վերջին ատյանի վարկատուի» իրենց բնորոշ գործառույթները: Հարկ է նշել, որ այս հարցում դրական դեր խաղաց նաև այն փաստը, որ վերջիններս ընդարձակեցին որպես գրավ ընդունված ակտիվների ցանկը²: Հեղինակի կարծիքով 2008 թվականի կեսերից ԱՄՆ-ում դաշնային պահուստավորման համա-

¹ Cecchetti S. G. Crisis and Responses: the Federal Reserve and the financial Crisis of 2007–2008 // NBER Working Paper № 14134. June., 2008. JEL № E5.

² Blanchard O. The Crisis: Basic Mechanisms, and Appropriate Policies // IMF WP/09/80. April. 2009.

կարգի կողմից իրացվելիության աջակցման ոլորտում բավականին ազդեցիկ քաղաքականության անցկացումը հաջողվեց, եթե խոսքը ամերիկյան բանկերի վրա նրա ազդեցության մասին էր¹:

Սակայն մեկ այլ հետազոտող՝ Երլենդ Նեյերը (Nier, 2009) հակվում է այն բանին, որ իրացվելիության աջակցման քաղաքականության դրական կողմերից բացի՝ գոյություն ունեն կենտրոնական բանկերից աջակցություն ստացող բանկերի անբարեխիղճ պահվածքի հետ կապված խնդիրներ²:

2008թ. աշնանը պարզ դարձավ, որ բանկային համակարգի գլխավոր խնդիրը ոչ թե իրացվելիությունն է, այլ կապիտալի անբավարարության մեջ: Դրա հետ կապված 2008թ. հոկտեմբերին ԱՄՆ-ում գործարկվեց TARP (Troubled Asset Relief Program) ծրագիրը, որը թույլ տվեց զանազան տարանջան գնելու խնդրահարույց ակտիվները կամ իրականացնելու կապիտալի ներարկումներ՝ մինչև 700 մլրդ դոլար արժողությամբ: Մի քանի շաբաթ անց բազմաթիվ երկրներ որոշում կայացրին նմանատիպ ծրագրերի անցկացման մասին: Օրինակ, Ֆրանսիան իր վրա պարտավորություն վերցրեց այս ծրագրի համար մինչև 400 մլրդ եվրո հատկացնել, Գերմանիան՝ մինչև 80 մլրդ եվրո, իսկ Մեծ Բրիտանիան՝ մինչև 50 մլրդ ֆունտ սթեռլինգ: Բացի այդ, ֆինանսական կառույցների նկատմամբ ձևավորված ներդրողների անվստահությունը հաղթահարելու համար բազմաթիվ երկրների կառավարություններ լայնորեն կիրառեցին իրենց կողմից տրամադրվող երաշխիքները միջբանկային վարկավորման գործառնությունների գծով, սակայն որոշ տնտեսագետների կարծիքով էլ նշված ծրագրի արդյունավետության հարցի պատասխանը միանշանակ չէ:

Մի կողմից, չնայած այն բանին, որ միջբանկային շուկայի և զանազան տեսակի արժեթղթերի դրույքների միջև սպրեդը նվազել էր, այնուհանդերձ այն դեռևս մնացել էր բավականին բարձր: Այդ ուղղությամբ բավարար արդյունք չտվեցին ո՛չ միջբանկային վարկավորման գծով երաշխիքները և ո՛չ էլ որոշ բանկերի կապիտալի կառուցվածքի փոփոխությունները: Սակայն, մյուս կողմից էլ հարկ է նշել, որ շատ քիչ բան էր արվել նրա համար, որպեսզի ֆինանսական հաստատությունները ձերբազատվեին խնդրահարույց ակտիվներից այն դեպքում, երբ կապիտալի մասնակի ներհոսքերը սահմանափակ էին: Մասնավոր ներդրողների անտեղյակությունն իրականացվող քաղաքականության մանրամասների և ուղղվածության վերաբերյալ հանգեցրեց նրան, որ նրանք կրճատեցին իրենց ներդրումները: Դա, իր հերթին, արագացրեց փոխառու կապիտալը սեփականով փոխարինելու գործընթացը այն դեպքում, երբ բանկերը շարունակում էին նվազեցնել տրամադրվող վարկերի ծավալը: Բլանշարն ուշադրություն էր դարձնում նաև այն իրադարձության վրա, որ ակտիվների որոշակի խմբի համար երաշխիքների տրամադրումը կարող էր հանգեցնել ներդրողների՝ դեպի այդ ակտիվները շեղվելուն, ինչը կվատթարացներ ֆինանսական շուկայում իրադրությունը երաշխիքներով չապահովված ակտիվների գծով: Բացի այդ, մի երկրում երաշխիքներ տրամադրելով՝ կարող են համոզել ներդրողներին այդ երկիր փոխադրել իրենց կապիտալները՝ այդպիսով վատթարացնելով իրավիճակն այլ երկրներում: Հենց այդպես էլ տեղի ունեցավ Իռլանդիայի դեպքում, երբ վերջինս միակողմանիորեն ներդրողներին համապատասխան երաշխիքներ առաջարկեց: Միաժամանակ կապիտալի շրջանառման նկատմամբ հսկողության սահմանումը մի երկրում դրա արտահոսքի նվազեցման և հայրենական ներդրողների պաշտպանության նպատակով՝ ի հաշիվ արտասահմանյան ներդրողների, կարող է դրդել այլ երկրների՝ հետևելու նմանատիպ օրինակին: Իռլանդիայի այդպիսի փորձը հանգեցրեց նրան, որ Մեծ Բրիտանիան ընդունեց համապատասխան օրենք՝ նպատակ ունենալով ազդել այդ երկրի վրա: Վերջին հաշվով, ինչպես երաշխիքները, այդպես էլ զարգացած երկրների ցանկացած այլ միջոցառում՝ ուղղված միջազգային ներդրողների համար ազգային ֆինանսական շուկաների գրավչության բարձրացմանը, առաջացնում են հետագայում կապիտալի արտահոսք զարգացող շուկաներից, և արդյունքում զարգացող շուկաներում տոկոսադրույքների սպրեդները մնում են բավականաչափ բարձր:

¹ Արդյունքում դրամական բազան 2008թ. օգոստոսից մինչև այդ տարվա նոյեմբեր աճեց 841 մլրդ դոլարից 1 տրլն 433 մլրդ դոլարի:
² Erlend W. Nier. Financial Stability Frameworks and the Role of Central Banks: Lessons From the Crisis // IMF WP/09/70. April. 2009.

Նշենք, որ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՅ) փորձագետները դրականորեն են բնորոշում բանկային հատվածին իրացվելիության ապահովման գծով նոր ծրագրերի ազդեցության արդյունավետությունը՝ մասնավորապես 2008 թվականի ապրիլին գործարկված TSLF [Treasury Securities Lending Facility] և SLS (Special Liquidity Scheme) ծրագրերը, որոնց մասին դաշնային պահուստավորման համակարգը հայտարարել էր նույն տարվա մարտին: Հավելենք, որ շուկայի արձագանքն այդ նորամուծություններին շատ դրական էր¹:

ԱՄՅ-ի գլոբալ ֆինանսական կայունացման հարցերի շուրջ զեկույցը լուսաբանում է մի շարք հիմնահարցեր՝ կապված 2008թ. հունիսից մինչև 2009թ. հունիսն ընկած ժամանակաշրջանում 13 զարգացած երկրներում անցկացված հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության և ստացված արդյունքների հետ²:

Ձեկույցի հեղինակների կարծիքով իրացվելիության աջակցման մասին հայտարարությունները և բուն հակաճգնաժամային միջոցառումները ճգնաժամի վաղ փուլում զգալի դրական ազդեցություն ունեցան շուկայի վրա, երբ շուկայում անորոշությունը և կոնտրադենտի ռիսկը բավական բարձր էին, իսկ անվճարունակության հետ կապված խնդիրները՝ դեռևս ոչ ակնհայտ: Վիճակագրական վերլուծությունների հիման վրա նման եզրակացությունների են հանգում Նաթանիել Ֆրանկը և Յեյկո Յեսսեն³: Ըստ վերջիններիս, իրացվելիության ապահովմանն աջակցելու մասին հայտարարությունն արդյունավետ էր այն իմաստով, որ այն բերեց LIBOR-ի եռամսյա տոկոսադրույքի և օվերնայթ ինդեքսի գծով սվոպի միջև սպրեդի կրճատման: Հեղինակները նշում են, որ շատ բանկեր չէին ցանկանում միջբանկային շուկայում դիմել փոխառությունների, և այդ իրավիճակում կենտրոնական բանկերի դերը չափազանց մեծ էր: Իրացվելիության ապահովման մասին հայտարարությունը ճգնաժամին հաջորդած փուլերում չունեցավ լուրջ ազդեցություններ, բայց դա չի նշանակում, որ այդպիսի միջոցառումներն անարդյունավետ էին (անվճարունակության հետ կապված աճող խնդիրների պատճառով): Սա նշանակում էր ընդամենը այն, որ աջակցման այդպիսի միջոցառումները շուկայում սպասելի էին:

Անցկացված հետազոտության հիման վրա հեղինակները եզրակացություններ են անում այն մասին, որ կենտրոնական բանկերի կողմից տոկոսադրույքների այդպիսի իջեցումը ընդամենը մի քանի դեպքերում հանգեցրեց տնտեսական սթրեսի ցուցիչի զգալի նվազեցման: Այս փաստի հիմնական բացատրությունն այն է, որ շուկան սպասում էր դրույքների նվազեցման քաղաքականության անցկացմանը:

Վերակապիտալացման մասին հայտարարությունները հատկապես արդյունավետ եղան 2008թ. սեպտեմբերին, երբ ճգնաժամը գլոբալ բնույթ կրեց: Գրեթե բոլոր դեպքերում կապիտալի ներհոսքի մասին հայտարարությունները և հենց բուն միջոցառումները նպաստում էին վարկային ռիսկի նվազմանը, և դա այն ժամանակ, երբ բանկային պարտավորությունների գծով երաշխիքների մասին հայտարարություններն էլ ավելի քիչ արդյունավետություն ունեին: Ինչ վերաբերում է բանկերին տրամադրվող պետական աջակցության մասին հայտարարություններին (երաշխիքների տրամադրման և ամբողջական հետգնման ճանապարհով), ապա ուսումնասիրողների կարծիքով դրանք այդքան էլ արդյունավետ չէին: ԱՄՅ-ի զեկույցի մեջ նշված էր, որ վերակապիտալացման հիմնական պատճառներից մեկը հանդիսացավ վարկային սվոպների գծով սպրեդների նվազեցումը, իսկ այդ միջոցառման արդյունավետությունը փոփոխվում է տարբեր երկրներում: Այսպես, հեղինակները մատնանշում են այն, որ «Bear Stearns»-ի փրկությունը 2008թ. մարտին նվազեցրեց վարկային ռիսկի դիմաց հավելավճարը ոչ միայն ԱՄՆ-ում, այլ նաև այլ երկրներում, ինչն արտացոլում էր միջազգային փոխկապվածությունների մակարդակը և ԱՄՆ-ի ԴԴՅ-ի գործունեության կարևորությունը: Այդ «փրկությանը» իբրև հակադրություն՝ օրինակ են բերվում Գերմանիայում՝ «IKN», Մեծ Բրիտանիայում՝ «Nothorn Rock» և Իռլանդիայում՝ «Anglo Irish Bank» ֆինանսական հաստատությունները, որոնց տրամադրված օգնությունը,

¹ Chailloux A., Simon Gray, Ulrich Klüh, Seiichi Shimizu, and Peter Stella. Central Bank Response to the 2007–08 Financial Market Turbulence: Experiences and Lessons Drawn // IMF WP/08/210. September. 2008.
² Ավստրիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Իռլանդիա, Իտալիա, Ճապոնիա, Նիդեռլանդներ, Իսպանիա, Շվեյցարիա, Շվեդիա, Մեծ Բրիտանիա և ԱՄՆ
³ Global Financial Stability Report: Navigating the Financial Challenges Ahead. IMF. October. 2009.

չնայած ուներ դրական արդյունք սակայն դրանք բացառապես լոկալ բնույթ կրեցին: Իսկ «Lehman Brothers»-ի սնանկացման մասին, որը պատճառ հանդիսացավ բոլոր ուսումնասիրվող երկրներում ռիսկի հավելավճարների զգալի նվազեցման, հեղինակները խոսում են իբրև ճգնաժամի բեկումնային պահ:

Հիմնականում Մեծ Բրիտանիայի և ավելի քիչ Գերմանիայի և Իռլանդիայի(որն այդ ժամանակ արդեն գործարկել էր պարտավորությունների երաշխավորման լայնածավալ ծրագիր) վերաբերյալ տվյալները վկայում են այն մասին, որ Եվրամիության համաձայնեցված գործողությունների ծրագիրը (որի մասին հայտարարվել էր դեռևս 2008թ. հոկտեմբերի 7-ին) հանգեցրեց վարկային դեֆոլտի ռիսկի նվազման և առավել հաջողված էր, քան առանձին վերցրած երկրների գործողությունները: Սակայն վերը նշված բոլոր երկրներում, սկսած 2008թ. հոկտեմբերից մինչև 2009թ. մարտ ամիսը, վարկային ռիսկերը անշեղորեն աճում էին՝ չնայած պետությունների կողմից իրականացված գործողություններին: Այնուհետև ռիսկի համար պարզակազմարը սկսեց նվազել՝ ֆիսկալ միջոցառումների համաձայնեցմանն ի պատասխան: Չնայած այն բանին, որ կապիտալի ներհոսքերը դարձան արդյունավետ միջոցառում, այդուհանդերձ դրա ազդեցություններն էլ ավելի մեծ կլինեին, եթե ժամանակին համաձայնեցված լինեին այլ հակաճգնաժամային գործողությունների հետ (օրինակ, Մեծ Բրիտանիայում այն ներմուծվել երաշխիքների տրամադրումից հետո), կամ եթե ունենար կրկնվող բնույթ (օրինակ, եթե եվրոգոտում տեղի ունենար կապիտալի ներարկումների երկրորդ փուլ):

ԱՄՆ-ի զեկույցում խոսվում է նաև այն մասին, որ վերակապիտալացման հնարավոր բացասական հետևանքն այն է, որ պետության մասնակցությունը բանկային կապիտալում կարող է հանգեցնել որոշակի խեղաթյուրումների: Մասնավորապես հնարավոր է բանկի արժողության աճ քանի որ շուկան հանդգնած է, որ պետությունը պատասխանատու է իր պարտավորությունների համար: Նշենք, որ երաշխիքային պարտավորությունները՝ ներառյալ ավանդների գծով երաշխիքների ավելացումը, բերեցին Մեծ Բրիտանիայում և Եվրագոտում վարկային ռիսկի զգալի նվազման: Սակայն պետք է նշել այն, որ ԱՄՆ-ում այս միջոցառումները ցանկալի արդյունքների չհանգեցրին: Գուցե դա տեղի ունեցավ այն պատճառով, որ այնտեղ բանկի պարտավորությունների գծով երաշխիքները տարածվում էին վարկատուների միայն մի մասի վրա: Միևնույն ժամանակ պետական երաշխիքների քաղաքականությունը հանգեցնում է ներդրողների մոտ իրենց ներդրումների ռիսկի համարժեք գնահատման համար խթանների նվազեցման: Այնպիսի միջոցառումը, ինչպիսին մասնավոր ավանդների գծով երաշխիքային գումարների աճն է, պայմանավորված էր բանկային խուճապի առաջացման հնարավորությունը և հավանականությունը նվազեցնելու մտադրությամբ, սակայն հեղինակները չեն կարող եզրակացություններ անել այդ միջոցառման արդյունավետության մասին՝ հիմնվելով իրենց հաշվարկների վրա: Միևնույն ժամանակ Ջոն Բոյդը, Ջաննի դե Նիկոլոն և Ելենա Լուկյանովան արտահայտվեցին այն մասին, որ ավանդների գծով պետական երաշխիքներն էլ ավելի են խթանում անբարեխիղճ պահվածքի ռիսկը (moral hazard)՝ դրանով իսկ բարձրացնելով բանկային համակարգի ընդհանուր ռիսկայնության մակարդակը¹:

Պետության կողմից ակտիվների գնումը և համապատասխան երաշխիքների տրամադրումն առաջ բերեցին վարկային սվոպների գծով միջին բանկային սպրեդների զգալի նվազեցումների՝ Եվրագոտում, Շվեյցարիայում և Մեծ Բրիտանիայում: Ակտիվների պաշտպանության ծրագիրը, որը Մեծ Բրիտանիայում ընդունվել էր դեռևս 2009թ. հունվարին և ուղղված էր վարկային ռիսկերի նվազեցմանը, ըստ նշված հեղինակների նույնպես բավական հաջողված էր: Շվեյցարիայի բանկային հատվածի համար կարևոր իրադարձություն հանդիսացավ պետության կողմից «UBS»-ի ակտիվների գնումը: Ինչ վերաբերում է Գերմանիային և ԱՄՆ-ին, ապա որոշ բանկերի ակտիվների գնման միջոցառումների մասին հայտարարություններն ունեցան այնքան էլ ոչ դրական նշանակություն: Նիդեռլանդների կառավարության կողմից տրամադրված «ING Bank»-ի

¹ Boyd J., Gianni De Nicolò and Elena Loukoianova. Banking Crises and Crisis Dating: Theory and Evidence // IMF WP/09/141. July. 2009.

ակտիվների գծով երաշխիքները չազդեցին վարկային ռիսկի դիմաց միջին հավելավճարի վրա: Ըստ հեղինակների՝ պետության կողմից ոչ իրացվելի և ցածրորակ ակտիվների գնումը բանկերից՝ վերջիններիս հաշվեկշիռների մաքրման նպատակով (բացառությամբ պարտավորությունների երաշխավորումից), դժվար թե կարողանա բանկերի հետագա քաղաքականության մեջ որևէ աղ- ճատման հանգեցնել :

ԱՄՅ-ի ևս մեկ ներկայացուցիչ՝ Քսայոն(Xiao, 2009), դրական էր գնահատում Ֆրանսիայի հակաճգնաժամային միջոցառումները՝ հատկապես ընդգծելով համակողմանի վերահսկողությունը, ակտիվ գործունեությունը և ճիշտ ժամանակին տեղեկատվության փոխանակումը կարգավորող մարմինների միջև: Ըստ հեղինակի՝ վերակապիտալիզացումը և վերաֆինանսավորումն օգնեցին կայունացնել բանկային համակարգը, քանի որ բերեցին ռիսկերի և ֆինանսական ծախսերի զգալի նվազման¹:

ԱՄՅ-ի 2009 թվականի Ֆրանսիային նվիրված զեկույցի մեջ, առանձնացվում էին միջոցառում- ներ, որոնք թույլ էին տալիս այդ երկրին պայքարել բանկային ոլորտում տեղի ունեցող ճգնա- ժամի դեմ.

- անկախ միջնորդի ստեղծում բանկերի և փոխառուների միջև,
- բանկերի համար նպատակաուղղված կողմնորոշիչների սահմանում,
- բանկերի վերաֆինանսավորմամբ զբաղվող գործակալության ստեղծում՝ նպատակ ունե- նալով աջակցել բանկերին տնային տնտեսությունների և տեղական իշխանությունների մարմինների վարկավորման համար:
- վերակապիտալացման պահանջ ունեցող բանկերին աջակցող գործակալության ստեղծում (օրինակ, այդպիսի գործակալությունն օգնեց Groupe Caisse d'Epargne և Groupe Banque populaire միավորմանը),
- «Dexia» ֆինանսական խմբի աջակցում (Բելգիայի և Լյուքսեմբուրգի հետ համատեղ):

Մեծ Բրիտանիային նվիրված ԱՄՅ-ի 2009 թվականի զեկույցի մեջ նշվեց, որ ճգնաժամն առաջ բերեց բանկերի նորմատիվային կարգավորման և հսկողության խստացման անհրաժեշտություն: Այդ իմաստով բանկերի մասին նոր օրենքի ընդունումը, որը սահմանում էր խնդրահարույց բան- կերի գծով խնդիրների լուծման հատուկ ռեժիմ, ֆինանսական շուկայում դրական ընդունվեց:

Եվրագոտու վերաբերյալ ԱՄՅ-ի 2009 թվականի հետազոտության մեջ համակարգային ռիսկերի նվազեցմանն ուղղված կենտրոնական բանկերի գործողություններին տրվում է դրական գնահատական: Սակայն, չնայած այն բանին, որ հիմնական ջանքերն ուղղված էին բանկային համակարգի կայունացմանը և դրանում խուճապների կանխմանը, այնուհանդերձ հեղինակները նշում էին այդտեղ լուրջ վտանգների առկայության մասին: Անցկացվող հակաճգնաժամային մի- ջոցառումների կորրոկցիանցման աճին զուգընթաց (ավանդների գծով երաշխիքների նվազագույն մակարդակի սահմանում և այլն) Եվրոպայում աճեց անցկացվող հակաճգնաժամային քաղաքա- կանության արդյունավետությունը: Սակայն գոյություն ունեն նաև խնդիրներ կապված այն հանգամանքի հետ, որ Եվրամիության երկրներում ավանդների գծով երաշխիքների չափերը միանման չեն եղել, ինչը հանգեցրել է որոշակի տնտեսական խեղաթյուրումների:

ԱՄՅ-ի 2009թ. տարածաշրջանային տնտեսությանը նվիրված վերլուծության մեջ բարձր գնա- հատական է տրվում Եվրամիության կողմից անցկացված տնտեսական քաղաքականությանը: Ըստ հեղինակների՝ ճիշտ ժամանակին իրականացված հակաճգնաժամային միջոցառումները թույլ տվեցին զգալի կերպով նվազեցնել ճգնաժամի ազդեցությունները և դրանից հեշտությամբ դուրս գալու ելքեր ստեղծեցին: Նշենք, որ 2009թ. հունիսին Եվրոպական կենտրոնական բանկը շուկայում իրացվելիության ապահովման գծով լայնածավալ միջոցառումներ իրականացրեց: Յեղինակների կարծիքով այդ միջոցառումներն արժանի են հատուկ ուշադրության, քանի որ շուկայում տեղեկատվական ազդանշան են այն իրողության, որ տոկոսադրույքները դեռ երկար ժամանակ կմնան ցածր մակարդակի վրա:

¹ Xiao Y. French Banks Amid the Global Financial Crisis // IMF WP/09/201/ September. 2009.

Ամփոփելով նշենք, որ կառավարությունների կողմից անցկացրած հակաճգնաժամային միջոցառումները, որոնք ուղղված են բանկային համակարգի աջակցմանը, տնտեսագետների կողմից բավական դրական են գնահատվել: Ճգնաժամի սկզբնական փուլում հատկապես գործուն էին կենտրոնական բանկերի իրացվելիության աջակցման գծով ոչ ավանդական միջոցառումները (օրինակ, TAF ծրագիրը ԱՄՆ-ում) և դա այն ժամանակ, երբ տոկոսադրույքների իջեցումն ունեցավ ընդամենը կարճաժամկետ դրական արդյունք: Ճգնաժամի հետագա փուլերում, երբ սրվեցին ֆինանսական հաստատությունների վճարունակության խնդիրները, փորձագետների կողմից որպես առավել գործուն միջոցառում ճանաչվեց վերակապիտալացումը (օրինակ, ԱՄՆ-ում՝ «Bear Stearns»-ը, Գերմանիայում՝ «IKN»-ը, «Northern Rock»-ը՝ Մեծ Բրիտանիայում, «Anglo Irish Bank»-ը՝ Իռլանդիայում), որը հանգեցրեց բանկային սվոպերի գծով սպրեդի նվազման: Ոչ միանշանակ կարող ենք գնահատել բանկային հատվածին պետության աջակցությունը՝ բանկերի ենթակայության ակտիվների գնահատման և համապատասխան երաշխիքների տրամադրման միջոցով, քանի որ տվյալ քայլի բացասական հետևանքներից մեկը անբարեխիղճ պահվածքի ռիսկի սաստկացման խնդիրն է: Այդպիսի խնդրի հետ է կապված ևս մեկ հակաճգնաժամային միջոցառում՝ բանկային պարտավորությունների պետական երաշխավորումը:

Այսպիսով, աշխարհում անցկացվող բանկային համակարգի աջակցմանն ուղղված հակաճգնաժամային քաղաքականությունը կարող ենք արդյունավետ համարել: Միևնույն ժամանակ նշենք, որ առանձին երկրների մասով չի եղել գործողությունների համաձայնեցվածություն, ինչը թույլ կտար էլ ավելի բարձրացնել բանկային համակարգի վրա հակաճգնաժամային քաղաքականության դրական ազդեցության աստիճանը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՍՍՅԻՆ ԱԶԿՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ, *տ. գ. թ.*

Մ Գ Ա Ա Մ. Քոտանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ախագ գիտաշխատող

Համառոտագիր

Բանկային ոլորտում հակաճգնաժամային քաղաքականության միջոցառումները, որոնց ճգնաժամի ընթացքում դիմեցին տարբեր երկրների կառավարություններ, կարող ենք պայմանականորեն բաժանել հետևյալ խմբերի՝ տոկոսային դրույքների իջեցում, իրացվելիության ապահովում, վերակապիտալացում, բանկային պարտավորությունների համար երաշխիքների տրամադրում, պետության կողմից ակտիվների գնում և համապատասխան երաշխիքների տրամադրում: Տարբեր պետությունների կառավարությունների կողմից անցկացված հակաճգնաժամային միջոցառումները, որոնք ուղղված են բանկային համակարգի աջակցմանը, տնտեսագետների կողմից բավական դրական են գնահատվել, սակայն միևնույն ժամանակ առանձին երկրների մասով գործողությունների համաձայնեցվածություն չի եղել, ինչը թույլ կտար էլ ավելի բարձրացնել այդ միջոցառումների արդյունավետությունը:

Բանալի բառեր. բանկային համակարգ, ճգնաժամ, քաղաքականություն, արդյունավետություն, իրացվելիություն, ռիսկ, ֆինանսական, երաշխիք, ազդեցություն:

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ АНТИКРИЗИСНОГО СОДЕЙСТВИЯ БАНКОВСКИМ СИСТЕМАМ

КАРЕН САРГСЯН, *к. э. н.*

старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Мероприятия антикризисной политики в банковской сфере, к которым в процессе кризиса обратились правительства разных стран, можно условно разделить на следующие группы: снижение процентных ставок, обеспечение ликвидности, рекапитализация, предоставление гарантий для банковских обязательств, покупка государством активов и предоставление им соответствующих гарантий. Проводимые правительствами разных стран антикризисные мероприятия, которые направлены на содействие банковской системе, получили довольно положительную оценку экономистов, однако вместе с тем в разрезе отдельных стран не было согласованности в действиях, которые позволили бы больше повысить эффективность этих мероприятий.

Ключевые слова: банки, система, кризис, политика, эффективность, ликвидность, риск, финансовый, гарантия, воздействие.

ASSESSMENT OF THE EFFICIENCY OF CRISIS RESPONSES ASSISTANCE TO BANKING SYSTEMS

KAREN SARGSYAN, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic Armenia*

Abstract

Measures of crisis response policy designed for the banking sector and implemented by the governments of various nations can be conventionally (conditionally) divided into following groups: declining interest rates; ensuring liquidity; recapitalization; guarantees for bank liabilities; purchases of assets by the government; and respective government guarantees. Despite the fact that many economists highly commended crisis response measures implemented by the governments of various nations to assist the banking sector, in case of some countries these measures were poorly coordinated, since highly coordinated measures could have entailed increase in efficiency of measures being implemented.

Keywords: Banking, system, crisis, policy, efficiency, liquidity, risk, financial, guarantee, impact.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԱՋԱՂՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

1. Աշխատանքի շահադրդման կառուցակարգը

Կառավարման չորս հիմնական գործառույթներից մեկը շահադրդումն է, առանց որի հնարավոր չէ իրագործել կազմակերպության առաքելությունը և նպատակները: Յուրաքանչյուր կազմակերպություն մշակում է շահադրդման կառուցակարգ, որը հիմնվում է աշխատողների անհատական և կազմակերպության շահերի զուգակցման, նրանց նյութական և սոցիալիզացիայի պահանջները հաշվառման վրա: Ըստ Մասլոուի հանրահայտ տեսության պահանջները կարող են լինել կենսաբանական, անվտանգության և պաշտպանության, սոցիալական կամ պատկանելության, հարգանքի, ինքնաարտահայտման¹: Այդ պահանջներին առաջին երկուսը անմիջականորեն պայմանավորված են մարդկանց աշխատանքով ապահովվածության և կայուն նյութական եկամուտներ ունենալու խնդիրների հետ, իսկ մյուսներն ավելի շատ հոգեբանական բնույթի պահանջներ են, որոնք նույնպես հարկ է հաշվի առնել շահադրդման համակարգը մշակելու ընթացքում: Նյութական խթանման կառուցակարգը էականորեն պայմանավորված է նաև շահադրդման գործընթացային տեսությունների, մասնավորապես՝ սպասելիքների և արդարության տեսությունների դրույթների իրագործման աստիճանով: Հատկապես կարևոր է, թե որքանով արդարացի է աշխատանքի վարձատրությունը, ինչպիսին է աշխատանքի արդյունքների և դրանց համար վարձատրության հարաբերակցությունը և ստացված եկամուտների գնողունակությունը²: Իբրև շահադրդման ժամանակակից ձևեր են դիտարկվում աշխատավարձը, պարգևավճարը, սոցիալական արտոնությունները, հավելավճարները և շահաբաժինները:

Մարդկանց աշխատանքի ներգրավելու, նրանց բարձր արտադրողական աշխատանքի նպատակամղելու, կոլեկտիվի և անհատի շահերը զուգակցելու համար աշխատանքի վարձատրության և խթանման այլ ձևերի հիմքը պետք է կազմեն անհատական աշխատանքի քանակական ու որակական արդյունքները, ինչպես նաև կազմակերպության գործունեության վերջնական ցուցանիշները (վաճառքի ծավալը, շահույթը և այլն):

Կառավարման ժամանակակից գործընթացում մարդկային գործոնը դառնում է ձեռնարկության հաջող գործունեության համար առանցքային, ինչն արտացոլվում է 20 և 21-րդ դարերի սահմանագծում ձևավորված կառավարման հետևյալ սկզբունքներում, որոնք կոնկրետացնում և լրացնում են Ֆայոլյան հայտնի 14 դրույթները.

- կազմակերպության բարենպաստ մթնոլորտը, որը նպաստում է աշխատակիցների ընդունակությունների բացահայտմանը: Շարունակական կրթություն,
- ժամանակին արձագանք արտաքին միջավայրի փոփոխություններին,
- աշխատանքային կյանքի որակի բարձրացում, ինչը ապահովում է բավարարվածություն աշխատանքից,
- անցում ավտորիտար ղեկավարման ձևից առաջնորդությանը,
- մենեջերների անմիջական մասնակցությունը խմբերի աշխատանքների բոլոր փուլերում, որպես համաձայնեցման և ամբողջականության պայման,
- հաղորդակցությունների արդյունավետ համակարգ, որն ընդգրկում է կազմակերպությունը վերևից՝ ներքև, ներքևից՝ վերև և հորիզոնական ուղղություններով,
- գնորդների, մատակարարների, կատարողների, ղեկավարների և այլոց հետ հաղորդակցման փոխադարձ հնարավորությունը,
- գործարարության էթիկա, ազնվություն և վստահություն մարդկանց հանդեպ:

¹ Տե՛ս Մեսկոն Մ., Ալբերտ Մ., Էդուարդ Փ., *Основы менеджмента*, М., Дело, 2000, էջ 366-367:

² Տե՛ս նույն տեղում, էջ 376-382:

Աշխատանքի շահադրդման հիմնախնդիրները եղել և շարունակում են մնալ կազմակերպություններում որպես աշխատանքային հարաբերությունների զարգացման գլխավոր նախապայմաններից մեկը: Շահադրդման համակարգը յուրաքանչյուր տարի կատարելագործվում է, առաջարկվում են նոր մոտեցումներ, որոնք նպաստում են աշխատանքի շահադրդման արդյունավետության բարձրացմանը: Շահադրդման եղանակների անընդհատ զարգացումը պայմանավորվում է աշխատանքի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև արտադրանքի և ծառայությունների շուկայական մրցունակության ապահովման կարևորությամբ:

Միաժամանակ, արդի պայմաններում կազմակերպությունների անձնակազմը ձգտում է ունենալ առավելագույն ցուցանիշներ մասնագիտական որակավորման առումով՝ աշխատավարձի և պաշտոնական դիրքի բարձրացման նպատակներով, ինչը հիմնավոր կառուցված խթանման համակարգի արդյունավետության դրսևորումն է:

Ինչպես հայտնի է, աշխատավարձն ունի իրար հետ անքակտելիորեն կապված երկու կողմ: Նախ, այն հանդիսանում է աշխատողների բարեկեցության բարձրացման աղբյուր և երկրորդ՝ արտադրական աճի ու կատարելագործման և, հատկապես, հանրային աշխատանքի մեջ մարդկանց ընդգրկելու նյութական շահագրգռվածության հզոր միջոց:

Թեև ազատական շուկայական տնտեսության պայմաններում տնային տնտեսությունների և առանձին ֆիզիկական անձանց եկամուտները դառնում են բազմաղբյուր, այսինքն նրանք կարող են ստանալ աշխատավարձ, հավելավճարներ, պարգևներ, գործարարությունից եկամուտներ, զանազան տրանսֆերտներ և այլն, սակայն զուտ աշխատանքային եկամուտների նշանակությունը շարունակում է մնալ գերակշռող: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով վերջին տարիներին աշխատանքի վարձատրության բաժինը տնային տնտեսությունների դրամական եկամուտների ծավալում տատանվել է 60-63 տոկոսի միջակայքում, սոցիալական տրանսֆերտները կազմել են 18-20 տոկոս, բոլոր տեսակի վաճառքներից ստացվող եկամուտները՝ 4-7, այլ դրամական մուտքերը՝ 12-17 տոկոս: Այս երևույթը բացատրվում է նաև նրանով, որ բնակչության զբաղվածության կառուցվածքում գերակշռում են վարձու աշխատողները՝ 55-57 տոկոս, իսկ գործատուների և ինքնազբաղվածների տեսակարար կշիռը կազմում է համապատասխանաբար 0,6 և 28,4 տոկոս: Ուստի աշխատանքի շահադրդումը էական է ոչ միայն առանձին անհատների, աշխատանքային կոլեկտիվների, այլ նաև մակրոմակարդակում աշխատանքի արդյունավետության, տնտեսական զարգացման և աճի ապահովման համար:

Աշխատանքի շահադրդման կառուցակարգում կարևոր բաղադրիչներ են աշխատավարձի չափը, այն ձևավորող մյուս բաղադրիչները՝ տարիֆային համակարգը, աշխատանքի նորմաները, աշխատավարձի ձևերն ու համակարգերը, պարգևատրության, հավելավճարների և սոցիալական արտոնությունների տրամադրման կանոնակարգերը:

Աշխատանքի արդարացի վարձատրության և արդյունավետ շահամիտման ապահովման համար չափազանց էական է հաշվի առնել այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են աշխատանքի բարդությունը, սոցիալ-տնտեսական նշանակությունը, աշխատողի որակավորման մակարդակը, աշխատանքային պայմանները:

Ժամանակակից տնտեսության պայմաններում աշխատանքի վարձատրության կազմակերպման համար ելակետային նշանակություն ունի օրենսդրորեն սահմանվող նվազագույն աշխատավարձի չափը: Տնտեսավարող կազմակերպությունները, ելնելով դրանից, սահմանում են աշխատողների աշխատանքի վարձատրության կազմակերպման համար պաշտոնական դրույթաչափերը, որոնք արտացոլվում են տարիֆային համակարգում: Այսինքն, աշխատավարձի կարգավորումը, ի տարբերություն բյուջետային հաստատություններում կենտրոնացված կարգավորման, կազմակերպություններում իրագործվում է ապակենտրոնացված կարգով, իսկ դա նշանակում է, որ շահադրդման կառուցակարգի արդյունավետությունը պայմանավորվում է կազմակերպություններում դրա հիմնավոր մշակմամբ: Աշխատանքի նորմաների, պարգևատրման, հավելավճարների սահմանման, սոցիալական արտոնությունների տրամադրման կանոնակարգերը նույնպես սահմանվում են կազմակերպություններում և արտացոլվում գործատուների և աշխատանքային կոլեկտիվների ներկայացուցիչների (արհմիութենական կազմակերպության) միջև կնքված տարիֆային համաձայնագրերում: Այդպես է քաղաքակիրթ աշխարհում, այդպես

պետք է լինի նաև մեր հանրապետության կազմակերպություններում: Սակայն, ուսումնասիրություններից պարզվում է, որ այս խնդրում անցման փուլը դեռևս չենք հաղթահարել, ինչի դրսևորումներից է այն, որ միջին աշխատավարձի ձևավորված ճյուղային շերտավորումը չի համապատասխանում աշխատանքի բարդության և նշանակության չափանիշներին (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Միջին ամսական անվանական աշխատավարձի շերտավորումը ըստ տնտեսական գործունեության տեսակների, տոկոսներով¹

(ՀՀ տնտեսությունում միջին աշխատավարձ՝ 100 տոկոս)

№	Տնտեսական գործունեության տեսակները	2012	2013
1.	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն	74,0	62,8
2.	Հանքագործական արդյունաբերություն	228,0	216,4
3.	Մշակող արդյունաբերություն	98,0	92,8
4.	Էլեկտրականություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	136,0	132,0
5.	Շինարարություն	119,0	106,9
6.	Մեծածախ և մանրածախ առևտուր	72,0	71,9
7.	Տեղեկատվություն և կապ	219	200,4
8.	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	260,2	248,4
9.	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	103,0	101,2
10.	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	113,0	122,6
11.	Կրթություն	70,8	68,9
12.	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	76,8	78,7

Նման ձևախեղումները բնորոշ են նաև կազմակերպություններում ըստ տարբեր մասնագիտությունների և որակավորման մակարդակի աշխատողների աշխատավարձի շերտավորմանը:

Ի հարկե, աշխատավարձի կարգավորման համար էական է նաև աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը: Սակայն դեռևս պատշաճ նշանակություն չի հատկացվում շահադրժման համակարգի գիտական հիմունքներով մշակմանը, արդյունքում թուլանում է աշխատավարձի խթանիչ գործառույթը, շահամիտման կառուցակարգի գործունակությունը:

Ի դեպ, միջազգային պրակտիկայում ընդունված է որոնել, գտնել ուղիներ անձնակազմի կառավարման կատարելագործման, շահադրժման արդյունավետության բարձրացման համար: Ի թիվս հայտնի այլ գիտական մեթոդների՝ ստորև նկարագրված մեթոդը ևս կարող է կիրառվել կազմակերպություններում:

Մինչև աշխատանքի շահադրժման որևէ մոտեցման կիրառությունը, փորձառու կառավարիչն իրականացնում է կազմակերպության սոցիալ-հոգեբանական ախտորոշում: Այն հնարավորություն է տալիս բացահայտել ընկերության անձնակազմի կառավարման խնդրահարույց բնագավառները և գտնել դրանց լուծման կոնկրետ ուղիներ: Կազմակերպության ախտորոշման համար կիրառվում են տարբեր ընդունված և հանրահայտ մեթոդներ, որոնցից են՝

1. անհատական զրույցները,
2. աշխատանքի նկատմամբ վերահսկողությունը
3. աշխատանքային գործունեության վերլուծությունը,
4. անհատական քարտերի վարումը:

Կազմակերպության սոցիալ-հոգեբանական ախտորոշման համար անհատական քարտերն ունեն առանձնահատուկ նշանակություն: Դրանց հիման վրա մշակվում են յուրաքանչյուր աշխատողի համար առանձին քարտեր և կիրառվում է աշխատանքի շահադրժման կոնկրետ մեթոդը²:

Անհատական քարտերում նշվում են կոնկրետ հարցեր, որոնց պատասխանների միջոցով ամփոփվում են անձնակազմի գնահատականները և ընկերության կառավարիչն ընտրում է այն մեթոդը, որն առավել բնորոշ է աշխատանքի շահադրժման համար:

¹ Աղյուսակը կազմված է Հայաստանի վիճակագրական տարեգիրքե 2013 և 2014 թվականների ժողովածուների նյութերով:

² Чувикова В. Система управления и стратегический управленческий учет // Проблемы теории и практики управления. 2009. №8. С.46.

Անհատական քարտերի հարցերից են՝

- Ընկերությունն ինձ համար _____
- Ինձ համար Ընկերությունում գլխավորը _____
- Ես աշխատում եմ Ընկերությունում, որովհետև (նշեք 3 հիմնական պատճառները):
- Այստեղ, ես կարող եմ մեծ գումար աշխատել
- Այն ինձ համար ժամանակավոր աշխատանք է
- Կա հնարավորություն ինքնաարտահայտման համար
- Ես կարող եմ շատ բան սովորել
- Ես վստահում եմ Ընկերությանը
- Ես տեսնում եմ կայունություն Ընկերությունում
- Այստեղ ինձ ընդունում և հարգում են
- Բացի այս աշխատանքից, ես էլ ոչինչ չեմ կարող անել
- Ինձ դուր են գալիս աշխատողները
- Ես իմ ապագան տեսնում եմ այս մասնագիտության մեջ:

Այս հարցերի ամփոփման արդյունքում իրականացվում է անձնակազմի կառավարման արդյունավետության բարձրացում, և տրվում են աշխատանքի շահադրժման արդյունավետության բարձրացման գնահատականներ:

2. Աշխատանքի շահադրժման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը

Աշխատանքի շահադրժման համակարգը մարդկանց և կազմակերպությունների պահանջ-մուծքների ապահովման և շահերի իրացման բարդ գործընթաց է, որի արդյունքները դրսևորվում են տնտեսական ու սոցիալական ցուցանիշների փոփոխության միջոցով, իսկ ծախսերը կարող են դիտարկվել իբրև աշխատանքային ջանքերի փոխհատուցման համար կատարված վճարումներ: Դասական առումով արդյունավետության քանակական միանշանակ գնահատումը այս ոլորտում բարդ է, քանի որ թե՛ արդյունքներն են բազմաբնույթ, հաճախ դժվար չափելի (օրինակ՝ հոգեբանական կամ բարձր կարգի պահանջումների բավարարումը), թե՛ փոխհատուցման վճարներն են տարաբնույթ (օրինակ՝ շահաբաժիններ, սոցիալական արտոնություններ): Այս առումով շահադրժման համակարգի արդյունավետության քանակական (նաև՝ որակական) գնահատման համար կարող են կիրառվել հետևյալ ցուցանիշները.

- միկրոմակարդակում վաճառքի աճի տեմպերը, շուկայում կազմակերպության մասնաբաժնի կայուն պահպանումը և ընդլայնումը, մրցունակության չափորոշիչների (արտադրանքի, ծառայությունների որակ, գին) դրական փոփոխությունները, մակրոմակարդակում՝ տնտեսական աճի տեմպերը, զբաղվածության բարձր մակարդակը: Այս ցուցանիշները կարող են դիտարկվել որպես շահադրժման արդյունավետության անուղղակի ցուցանիշներ, թեև դրանցում էական է շահադրժման համակարգի նշանակությունը,
- աշխատանքի արտադրողականության աճը միկրո և մակրոմակարդակներում: Կարող է թվալ, թե այն շահադրժման արդյունավետության ուղղակի ցուցանիշ է, սակայն այդպես չէ, քանի որ աշխատանքի արտադրողականության բարձրացման գործոնների թվում առանցքային է գիտատեխնիկական առաջադիմությունը, որի շնորհիվ ապահովվում է այդ ցուցանիշի աճի ավելի քան 70 տոկոսը,
- միջին աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության աճի հարաբերակցությունը: Եթե վերջինս արագ է աճում, քան առաջինը, ապա դա վկայում է շահադրժման համակարգի և աշխատանքի արդյունավետության մասին: Դիտարկենք նշված ցուցանիշների դիմամիկան մեր հանրապետությունում (աղյուսակ 2):

**Աշխատանքի արտադրողականության և միջին աշխատավարձի աճի
հարաբերակցությունը Հայաստանի Հանրապետությունում**

(նախորդ տարվա նկատմամբ, %)

Ցուցանիշներ	Տարիներ					
	2008	2009	2010	2011	2012	2013
ՀՆԱ աճը (ֆիզձավալի ինդեքսը)	106,9	85,9	102,2	104,7	107,2	103,5
Չբաղվածների թվի փոփոխությունը	107,4	97,4	102,8	99,1	99,8	99,2
Աշխատանքի արտադրողականության փոփոխությունը	99,5	88,2	99,4	105,6	107,4	104,3
Միջին անվանական աշխատավարձի չափը	117,8	109,9	106,9	105,3	104,7	104,1

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ թեև 2011-2013 թթ. աշխատանքի արտադրողականությունը ավելի արագ է աճել, քան միջին աշխատավարձը, սակայն երկարաժամկետ կտրվածքով և ըստ էության դրանց դինամիկայի միջև հստակ կորելացիա չկա, ինչը նշանակում է, որ աշխատավարձի փոփոխությունը ոչ թե անմիջականորեն պայմանավորվում է արտադրության մեջ աշխատանքի արդյունքներով, այլ ավելի շատ շուկայական գործոններով և կենսամակարդակի փոփոխության սոցիալական խնդրով:

Սանավանդ եթե հաշվի առնենք նաև այն, որ հաճախ իրական աշխատավարձի փոփոխությունը շեղվում է անվանականից գնաճի պատճառով (տես աղյուսակ 3)¹:

Աղյուսակ 3

Անվանական և իրական աշխատավարձի փոփոխությունը ՀՀ-ում

(նախորդ տարվա նկատմամբ, %)

Ցուցանիշներ	Տարիներ					
	2008	2009	2010	2011	2012	2013
Անվանական աշխատավարձի աճը	117,8	109,9	106,9	105,3	104,7	104,1
Իրական աշխատավարձի աճը	108,0	106,2	98,8	97,8	102,0	98,4

Հարկ է նաև նկատել, որ 2011-2013 թթ. աշխատանքի արտադրողականության աճը պայմանավորվել է Չբաղվածների թվի նվազմամբ, ինչը հազիվ թե կարող է բացատրվել աշխատանքի տեխնիկական զինվածության բարձրացմամբ:

Ուստի՝ հաստատվում է վերը նշված դրույթը, որ աշխատանքի շահադրժան համակարգը արդյունավետության բարձրացման առումով դեռևս ունի էական կատարելագործման անհրաժեշտություն:

Այսպիսով, աշխատանքի շահադրժան արդյունավետության գնահատումը կարևոր նշանակություն ունի ընկերությունների գործունեության բարելավման համար, ուստի այն պետք է գտնվի ղեկավարության մշտական ուշադրության կենտրոնում:

¹ Հաշվարկվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրքե 2013 և 2014 թթ. ժողովածուների նյութերի հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԱՐՊՐԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՅՈՒ ՇՈՒՐՁ

ՆԱՐԻՆԵ ՍՈՒՎԱՐՅԱՆ, *հայցորդ*

ՆՊՏՄ աշխատանքի տնտեսագիտության ամբիոն

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է աշխատանքի շահադրժման արդյունավետության գնահատման հիմնախնդրին: Մարդկանց աշխատանքի ներգրավելու, նրանց բարձր արտադրողական աշխատանքի նպատակամղելու, կոլեկտիվի և անհատի շահերը զուգակցելու համար աշխատանքի վարձատրության հիմքը պետք է կազմեն անհատական աշխատանքի քանակական ու որակական արդյունքները, ինչպես նաև կազմակերպության գործունեության վերջնական ցուցանիշները: Այդ սկզբունքի հիման վրա կառուցվում է կառավարման գործառնություններից մեկի՝ շահադրժման իրագործման կառուցակարգը:

Հոդվածում հատուկ ուշադրություն է հատկացվել աշխատանքի շահադրժման հիմնական սկզբունքներին: Քանի որ աշխատողների արդյունավետ խթանումը նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, ապա այն պետք է գտնվի ընկերությունների ղեկավարության մշտական ուշադրության կենտրոնում: Առաջադրվել են շահադրժման համակարգի արդյունավետության գնահատման որոշակի սկզբունքներ:

Բանալի բառեր. *խթանում, համակարգ, աշխատողներ, աշխատավարձ, արդյունավետություն, արտադրողականություն, գործառնություն, տնտեսություն, պետություն, էթիկա:*

К ВОПРОСУ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ МОТИВАЦИИ ТРУДА

НАРИНЕ СУВАРЯН, *соискатель*

кафедры экономики труда АГЭУ

Аннотация

Настоящая статья посвящена проблеме оценки эффективности мотивации труда. Для привлечения работников, стимулирования их высокопродуктивного труда, согласования интересов коллектива и индивидов, основой оплаты труда должны служить количественные и качественные результаты труда индивида, а также конечные показатели деятельности организации. На этом принципе базируется одна из функций управления-мотивация и механизм ее осуществления.

В статье особое внимание уделено основным принципам управления персоналом. Поскольку эффективная мотивация работников способствует повышению производительности труда, то она должна находиться под пристальным вниманием руководителей компаний. Предложены принципы оценки эффективности системы мотивации.

Ключевые слова: *мотивация, система, работники, зарплата, эффективность, производительность, бизнес, экономика, государство, этика.*

ON THE ISSUES OF ASSESSMENT OF EFFICIENCY OF EMPLOYEE MOTIVATION

NARINE SUVARYAN, *Ph.D. Student*

Chair of Labor Economics, Armenian State University of Economics

Abstract

The article presents the issue of assessment of efficiency of employee motivation. In order to recruit people, motivate them to carry out more productive work, and combine collective and personal interests, employee remuneration needs to be based on qualitative and quantitative outcome produced by a person, indicators describing the performance of an enterprise. One of the functions of management, employee motivation is based on this principle. The article highlights the principles of human resource management. Since an effective employee motivation results in an increase in labor productivity, employee motivation needs to be constantly stressed and emphasized by executives of companies. The article proposes principles to be applied in assessment of efficiency of the system of motivation.

Keywords: *Motivation, system, employees, wage, efficiency, productivity, business, economy, state, ethics.*

ИРИНА АКОПЯН, к.э.н.

*старший научный сотрудник Института
экономики им. М.Котаняна НАН РА*

ПРОБЛЕМЫ ИННОВАЦИОННОЙ НАПРАВЛЕННОСТИ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ В РА

Одним из важнейших факторов, способствующих выводу экономики Армении из кризиса и обеспечивающих ее динамичное развитие, является формирование эффективной инвестиционной системы. В настоящее время на первый план выходят задачи по активизации инвестиционной деятельности, нахождение способа привлечения инвестиций, особенно с инновационной направленностью.

Важная роль инвестиций в РА состоит в том, что они корректируют процессы воспроизводства капитала и обеспечивают темпы их роста, содействуют развитию наиболее важных ключевых отраслей экономики, структурную перестройку экономики, ускорение технического прогресса и улучшение социальной ситуации в республике.

1. ուրանի հանքայնացման առկայությունը ոսկու հանքայնացման տարածքում,
2. ռադոն գազի առկայությունը Գնդեվազ գյուղի տարածքում:

Կատարված նկարագրությունների արդյունքով առաջանում է մի շատ բնական հարց՝ շահագործե՞լ Ամուլսարի հանքավայրը, թե՞ ոչ: Եվ, երկրորդ հարցը՝ ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ այդ հանքավայրի շահագործումը շրջակա միջավայրի վրա:

Ամուլսարի հանքավայրի հակիրճ նկարագրությունից տեսանելի է, որ չնայած պաշարների մեջ հաստատված են միայն ու միայն ազնիվ մետաղները՝ ոսկին և արծաթը (2006թ. հաստատված պաշարների մեջ տեղ չէր գտել նույնիսկ արծաթը), այնուամենայնիվ այդ հանքավայրի հանքաքարերում ազնիվ մետաղներից բացի հայտնաբերված են ևս 26 այլ հարակից տարրեր՝ ծանր մետաղներ (բիսմութ, կադմիում, կոբալտ, քրոմ, պղինձ, երկաթ, գալիում, մոլիբդեն, նիկել, կապար, ծարիր, սկանդիում, ստրոնցիում, տիտան, ուրան, վանադիում, վոլֆրամ, ցինկ) և թունահարույց տարրեր (մկնդեղ, բերիլիում, թալիում, սելեն, տելուր, սնդիկ, կադմիում), որոնք բոլորն էլ խիստ վտանգավոր են մարդու օրգանիզմի համար: Դրանք մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ քանակից ավելի մարդու օրգանիզմ թափանցելու պարագայում, կարող են

առաջացնել մուտացիաներ, թունավորումներ, սիրտ-անոթային հիվանդություններ և քաղցկեղ, որոնք էլ ոչ հազվադեպ կարող են բերել մահացության:

Այժմ նկարագրենք, թե դրանք ինչ ճանապարհով կարող են թափանցել մարդու օրգանիզմ:

Ինչպես արդեն գրվել է, Ամուլսարի հանքավայրը շահագործվելու է հսկայածավալ բացահանքի եղանակով, որտեղ (սարի գագաթային մասում) կատարվելու են զանգվածային պայթեցումներ՝ ինչպես մակաբացման ապարները հեռացնելու, այնպես էլ հանքաքարերն արդյունահանելու և տեղափոխելու նպատակով: Այդպիսի պայթեցումների հետևանքով մթնոլորտ են շարտվելու ներփակող ապարների և հանքաքարերի նրբահատիկ փոշիներ, որոնց մեջ էլ լինելու են վերը թվարկված տարրերի հանքանյութերի փոշիները: Բացահանքի տարածքում աշխատելու են մի քանի տասնյակի հասնող ծանրաքարշ ավտոմեքենաներ օրական յուրաքանչյուրը դրանցից 4-5 չվերթ կատարելով և ապար բարձող մեխանիզմներ, որոնց շարժման հետ էլ կապված դարձյալ մթնոլորտ են բարձրանալու ապարների և հանքանյութերի նրբահատիկ փոշիները: Վերջիններս՝ կապված օդի հոսանքների ուղղության հետ (որոնք չեն կարգավորվելու հանքշահագործող ձեռնարկության ղեկավարության կողմից), կարող են շարժվել ինչպես դեպի Ջերմուկ քաղաք, այնպես էլ դեպի արևելք՝ Սիսիանի շրջանի գյուղերն ու քաղաքները: Նստելով կերաբույսերի վրա, թափանցելով բնակարաններ ու նստելով սննդամթերքի ու ջրի վրա, ինչպես նաև շնչուղիներով անցնող օդի հետ ի վերջո թափանցում են մարդկանց օրգանիզմ: Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ Ամուլսարի գագաթային մասում քամիները մշտապես անպակաս են: Ջերմուկ քաղաքի բնակչությանը սպառնացող վտանգները կապված են այդ ծանր մետաղների ու թունահարույց տարրերի նրբահատիկ փոշիների հետ, որոնք օդի հոսանքների օգնությամբ հասնելու են Ջերմուկ քաղաք:

Ամուլսարի հանքավայրի շահագործման հետևանքով որոշակի վտանգ է սպառնում նաև Սևանա լճին: Նշված ծանր մետաղների ու թունահարույց տարրերի նրբահատիկ փոշիները, նստելով Արփա գետի Կեչուտի ջրամբարի՝ դեպի Սևանա լիճ հոսող ջրերի վրա, Կեչուտի թունելով կարող են հասնել մինչև Սևանա լիճ: Ի՞նչ կլինի Սևանի հետ, այժմ դժվար է գնահատել, բայց որ դրանից լավ բան չի սպասվում, հասկանալի է ամենքին:

Ազնիվ մետաղների կորզումը հանքաքարերից կատարվելու է կուտակային տարրալուծման եղանակով, որը ներառում է հետևյալ գործողությունները. Գնդեվազ գյուղին պատկանող հողատարածքներում կատարվելու են հանքաքարերի փշրման ու մանրացման աշխատանքներ, փշրված ու մանրացված ապարները կուտակվելու են Ամուլսարի արևմտյան մասի թեք լանջերի ինչ-որ տեղամասում, և դրանց վրա են լցվելու կալիումի կամ նատրիումի ցիանիդներ, որոնք էլ տարրալուծելով ազնիվ մետաղները դուրս են բերելու դրանք և հավաքվելու են ցիանիդների ազդեցության նկատմամբ չեզոք տարաների մեջ: Այդ լուծույթներից ազնիվ մետաղները կորզվում են ցինկով տեղակալելու օգնությամբ: Այդ գործողությունների հետևանքով Գնդեվազ գյուղին պատկանող ամբողջ հողատարածքները վարակված են լինելու ծանր մետաղների, թունահարույց տարրերի և ցիանիդների մնացորդներով: Հենց դա է պատճառը, ինչպես նաև աշխատատեղեր ունենալու համար, հանքշահագործող ձեռնարկությունը բարձր գներով գնել և գնում է Գնդեվազի բնակչությանը պատկանող հողատարածքները՝ այգիները, բանջարանոցները, խոտհարքներն ու արոտավայրերը, իսկ այդ բոլորի հետևանքով Գնդեվազ գյուղի բնակչությունը չի ունենալու գյուղատնտեսությամբ զբաղվելու որևէ տարածք. հողագործությունը բացառվում է, անասնապահությունը՝ բացառվում է, բանվորական աշխատատեղեր կլինեն մի քանի տասնյակ տղամարդկանց համար և վերջ: Գնդեվազ գյուղը ստիպված է տեղահանվել (այդ գյուղում մնացող բնակչության, հատկապես կանանց և երեխաների, կյանքը վտանգի տակ է լինելու կորգաթափոնների և մակաբացման ապարների մեջ առկա թունավոր տարրերի և ծանր մետաղների ազդեցության հետևանքով, ինչպես նաև օդի հոսանքներով՝ Ամուլսարի գագաթին գործող բացահանքի տարածքից Գնդեվազ հասնող ծանր մետաղների և թունահարույց տարրերի փոշիների ազդեցությամբ): Քիչ վտանգավոր չեն լինելու ցիանիդների մնացորդները, որոնք կարող են տարածվել շրջակայք և թունավորել միջավայրը: Եթե Գնդեվազ գյուղի բնակչության տեղահանությունը կատարվելու է արագ՝ մի քանի տարվա ընթացքում, ապա Ջերմուկ քաղաքի բնակչությունը նույն արագությամբ չի տեղահանվի: Այդ բնակչությունը ենթարկվելով ծանր մետաղ-

ների և թունահարույց տարրերի մահաբեր վտանգին, զգալով այդ վտանգը սեփական օրգանիզմի վրա, կարող է տեղահանվել դանդաղ՝ մաս-մաս և տարիների ընթացքում:

Ոչ պակաս վտանգների են ենթարկվելու Արփա գետի հոսանքով Գնդեվազ գյուղից ցած գտնվող գյուղերի ու բնակավայրերի բնակիչները, որոնք, ենթարկվելով մի քանի միլիոն տոննաներով կորզաթափոնների և մակաբացման ապարների մեջ առկա ծանր մետաղների և թունահարույց տարրերի մահաբեր վտանգի ազդեցությանը, տեղահանության կարող են ենթարկվել շատ ավելի դանդաղ:

Կորզաթափոնները (ավելի քան 122 մլն տ քանակով) և մակաբացման ապարները (ավելի քան 342 մլն տ քանակով) Ամուլսարի արևմտյան լանջերին ու ձորակներում մնալու են ընդմիշտ՝ հազարավոր տարիներ և իրենց մահաբեր վտանգի տակ են պահելու Վայոց Ձորի մարզի բնակչությանը, ովքեր սնվում են Արփա գետով ջրվող միրգ ու բանջարեղենով (բնական տեղումները, տարրալուծելով կորզաթափոնների ու մակաբացման ապարների մեջ պարունակվող ծանր մետաղներն ու թունահարույց տարրերը, դրանք բերելու են Արփա գետի ջրեր և այդ ջրերից էլ անցնելու են կերաբույսերի մեջ ու մարդկանց օրգանիզմ: Իսկ թե ինչ կլինի այդ մարդկանց հետ, կհայտնաբերվի տարիներ անց):

Ոչ մասնագետ մարդու համար անհասկանալի է այն, թե ինչ է նշանակում մի հանքավայրի ընդերքից տարեկան 10 մլն տ հանքաքարի արդյունահանումն ու մշակումը, և ինչ հետևանք կարող է ունենալ դա շրջակա միջավայրի բնակչության և բուն հանքավայրի համար: Բայց մասնագետի համար այդ ամենը պարզ ու հասկանալի է: Մենք շրջակա բնակավայրերի բնակչությանը սպառնացող վտանգների մասին արդեն իսկ խոսել ենք: Այժմ խոսենք հանքավայրի ճակատագրի մասին: Ինձ համար զարմանալի ու խիստ զայրացուցիչ է այն, որ այդ, այսպես կոչված, Ամուլսարի հանքավայրն ի վերջո շահագործվելու է, և առավել զարմանալի ու զայրացուցիչ է այն, որ ԳՀ կառավարությունը թույլատրել է դրա ընդերքից տարեկան արդյունահանել 10 մլն տ հանքաքար, որի պարագայում հանքավայրը շահագործվելու է 10 տարվա ընթացքում (մնան հանքավայրերը շահագործելու պարագայում պետք է շահագործվեն 200 և ավելի տարիներ): Ոսկին (միգուցե նաև արծաթը) տարվելու է դուրս (Անգլիա)՝ մեր ժողովրդին թողնելով պոչամբարներում կուտակված մահաբեր թույլը՝ ծանր մետաղներն ու թունահարույց տարրերը՝ ուրանով հանդերձ: Եվ այս հանգամանքն էլ վկայում է այն մասին, որ մեր ժողովրդին պատկանող հարստությունը շահագործվելու է թալանչիական եղանակով, բարբարոսաբար, շատ արագ, թունավորելով շրջակա միջավայրը՝ Վայոց Ձորի մարզի բնակչության մի պատկառելի մասին:

Ինչո՞ւ..., որո՞նք են այդպիսի հապճեպ շահագործման համար թույլտվություն տալու պատճառն ու հիմնավորումը: Սա ի՞նչ թշնամություն ու դավաճանություն է մեր ժողովրդի հանդեպ, ո՞վ է այս թշնամության հեղինակը, ի՞նչ հեռահար նպատակներ են հետապնդում այն անձինք, ովքեր ջուր են լցնում թուրքի ջրաղացին:

Ես այս հարցերին պատասխանել չեմ կարող: Դրանց պատասխանները թողնում են ԳՀ կառավարությանը:

ՀՀ ԱՍՈՒՍԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՐԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆ, երկր. հանք. գիտ. դոկտոր
Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

Համառոտագիր

Ամուլսարի հանքավայրը հետախուզվել է 2004թ. մինչև 2013թ.: Պաշարները հաստատվել են երկու անգամ՝ 2006թ. և 2013թ.: Առաջին անգամ հաստատվել են միայն ոսկու պաշարներ, իսկ երկրորդ անգամ՝ ոսկու և արծաթի:

Ազնիվ մետաղներից բացի, Ամուլսարի հանքավայրում (հավանաբար մակաբացման ապարներում) հայտնաբերված են նաև 24 այլ օգտակար տարրեր՝ թալիում, մկնդեղ, բերիլիում, բիսմութ, կադմիում, կոբալտ, քրոմ, պղինձ, երկաթ, գալիում, նիկել, կապար, ծարիր, սկանդիում, ստրոնցիում, տիտան, ուրան, վանադիում, ցինկ, սնդիկ, վոլֆրամ, սելեն, տելուր և այլն, սակայն դրանցից ոչ մեկը մանրազնին չի հետազոտվել և, բնականաբար, պաշարներ էլ չեն հաստատվել: Հանքավայրը պատրաստ է շահագործման: Հողվածում հիմնավորվում է, որ կկորզվեն միայն ազնիվ մետաղները, իսկ մյուսները կթափվեն բնական միջավայր և կվտանգեն ժողովրդի առողջությունը:

Բանալի բառեր. ունդիա, թալիում, բերիլիում, ստրոնցիում, գալիում, վանադիում, հանքաքար, հետախուզում, հետազոտում:

ПРОБЛЕМЫ ЭКСПЛУАТАЦИИ АМУЛСАРСКОГО МЕСТОРОЖДЕНИЯ ЗОЛОТА РА

ГРАЧИК АВАКЯН, доктор геолого-минералогических наук
главный научный сотрудник Института экономики
им. М. Котаняна НАН РА

Аннотация

Амулсарское месторождение разведано с 2004 по 2013 гг. Запасы по этому месторождению были утверждены дважды - в 2006г. и 2013 г. В первый раз были утверждены только запасы золота, а во второй раз - золота и серебра.

Кроме благородных металлов, на Амулсарском месторождении (по-видимому во вскрышных породах) выявлены также 26 других элементов: таллий, мышьяк, бериллий, висмут, кадмий, кобальт, хром, медь, железо, галлий, никель, свинец, висмут, скандий, стронций, титан, уран, ванадий, цинк, ртуть, вольфрам, селен, теллур и др. Однако ни один из этих элементов детально не исследован и, естественно, запасы по ним не утверждены.

Месторождение готово к эксплуатации. В статье обосновывается, что будут извлечены только лишь благородные металлы, а другие металлы будут выброшены в природную среду, тем самым создавая опасность для здоровья народа.

Ключевые слова: унция, таллий, бериллий, стронций, уран, галлий, ванадий, месторождение, разведка, исследование.

THE ISSUES OF EXPLOITING THE AMULSAR GOLD MINE

HRACHIK AVAGYAN, Doctor of Sciences (Geology and Mining)
Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The Amulsar mine was explored in 2004. Until 2013 the information about the stock had been confirmed twice, in 2006 and in 2013. The first time the information about the stock of gold was confirmed, and the second time the information about the stocks of gold and silver were confirmed.

Besides noble metals, 26 other useful elements were found in the Amulsar mine (possibly rock surface minerals): thallium, arsenic, beryllium, bismuth, cadmium, cobalt, chrome, copper, iron, gallium, nickel, lead, cerium, scandium, strontium, titanium, uranium, vanadium, zinc, mercury, wolfram, selenium, tellurium, and etc., however, none of the stated elements haven't been explored in details, and hence information about the respective stocks of these elements haven't been confirmed. The mine is ready to be exploited. The article justifies that only noble metals will be extracted, and the other metals will be thrown into the nature and will endanger the health of the people.

Keywords: Ounce, thallium, beryllium, strontium, gallium, vanadium, ore, investigation, exploration.

**ՍՈՏԵԻ ԵՎ ՄԵՂՐԱՁՈՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ
(ԱԶՆԻՎ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԿՈՐԶՄԱՆ) ԱՐԴՅՈՒՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ
ԵՎ ԴՐԱՆՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Հայաստանի Հանրապետության տարածքում կորզելի քանակներով ազնիվ մետաղներ են հայտնաբերվել բոլոր կազմավորումների հանքավայրերում՝ պղնձամոլիբդենային, պղնձ-հրաքարային, բազմամետաղային, ոսկի-բազմամետաղային, ծծումբ-հրաքարային, երկաթաքարային և բուն ոսկեբեր (ոսկի-սուլֆիդային կազմավորման), սակայն ազնիվ մետաղների պարունակության և պաշարների առումով առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում բուն ոսկեբեր՝ ոսկի-սուլֆիդային կազմավորման հանքավայրերը: Հետախուզված պաշարներով բուն ոսկեբեր 6 հանքավայրերի՝ Սոտքի, Մեղրաձորի, Լիճքվազ-Թեյի, Տերտերասարի, Մղարթի և Տանձուտի պաշարները 01.01.2007թ. դրությամբ կազմել են՝ ոսկունը՝ 199196,68կգ, արծաթինը՝ 337,06տ, իսկ դրանց կանխատեսումային ռեսուրսները՝ ոսկունը՝ 332801,2կգ, արծաթինը՝ 1209,33տ:

2010-2013թթ. դրանց ավելացան ևս երեք հանքավայրեր՝ Բարձրադիրի, Լուսաջրի և Ամուլսարի, որոնց պաշարները համատեղ կազմում են՝ ոսկունը՝ 98999,2կգ, արծաթինը՝ 476,13տ, իսկ կանխատեսումային ռեսուրսները՝ ոսկունը՝ 33854կգ, արծաթինը՝ 30,88տ: Ամուլսարի «Հանքավայրում» այլ օգտակար տարրեր չեն գնահատվել: Չեն գնահատվել նաև ազնիվ մետաղների ռեսուրսները: ՀՀ զուտ ոսկեբեր՝ ոսկի-սուլֆիդային կազմավորման 9 հանքավայրերի ընդհանուր պաշարները կազմել են՝ ոսկունը՝ 298195,88կգ, արծաթինը՝ 813,19տ, իսկ կանխատեսումային ռեսուրսները՝ ոսկունը՝ 363020,8կգ, արծաթինը՝ 1240,21տ:

Նշված հանքավայրերից 4-ը նախկինում, դեռևս ԽՍՀՄ-ի տարիներից ինչ-որ քանակներով շահագործվել են: Այժմ շահագործվում են Սոտքի, Լիճքվազ-Թեյի, Տերտերասարի և Մղարթի հանքավայրերը: Մեղրաձորի հանքավայրը շահագործվել է ԽՍՀՄ-ի տարիներին, իսկ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ կանադա-հնդկական «Արարատի ոսկու արդյունահանման ընկերության» կողմից: Վերջինիս կողմից էլ այդ հանքավայրն այնպես է ապականվել, որ Սոտքի և Մեղրաձորի հանքավայրերի շահագործման իրավունքը ստացած «Մարնեուլի» ռուսական ընկերությունը հրաժարվում է դրա հետագա շահագործումից՝ պատճառաբանելով, որ այդ հանքավայրի հետագա շահագործումը տնտեսական առումով ձեռնտու չի լինելու:

Սոտքի ոսկու հանքավայրը գտնվում է Վարդենիսի շրջանում՝ Մասրիկ գետի վերին հոսանքներում՝ Մասրիկ և Թերթեր գետերի ջրբաժանում:

01.01.2014թ. դրությամբ տարբեր կազմակերպությունների կողմից այս հանքավայրի բարբարոսական եղանակներով շահագործման հետևանքով, մնացած՝ ՊՊՀ-ի կողմից հաստատված, պաշարների քանակները կազմում են՝ հանքաքարինը՝ 17.856,7 հազ.տ, ոսկունը՝ 117936,34կգ, արծաթինը՝ 128,39տ, տելուրինը՝ 7,83տ:

Սուլֆիդային հանքաքարերում (պիրիտ արսենոպիրիտային կազմի) ոսկու պարունակությունը կազմում է 43,3գ/տ, բազմամետաղային հանքաքարերում՝ խալկոպիրիտ, գալենիտ, սֆալերիտային կազմի 19գ/տ, հազվադեպ մի քանի տասնյակ գ/տ, տելուրիդներում՝ 400-450գ/տ:

Սոտքի հանքավայրի հանքաքարերը բնութագրվում են ազնիվ մետաղների հետ համատեղ տարածված մի շարք այլ տարրերի բարձր պարունակությամբ: Դրանցից են՝ սելենը, տելուրը, բիսմուտը, կադմիումը և այլն: Խառը հանքաքարերում տելուրի պարունակությունը կազմում է 43-50գ/տ, միջին պարունակությունը՝ 44գ/տ: Սելենի միջին պարունակությունը կազմում է 36գ/տ: Սելենի պարունակությունը մկնդեղի հանքանյութերով առավել հարուստ հանքաքարերում կազմում է 50գ/տ, ծծմբի հրաքարային հանքաքարերում՝ 20-30գ/տ:

Բիսմուտի ամենաբարձր կուտակներ պարունակում են ոսկի-տելլուրային հանքաքարերը, որտեղ նրա (բիսմուտի) պարունակությունը կազմում է 0,01-ից մինչև 0,43%: Սուլֆիդային և խառը հանքաքարերում բիսմուտի պարունակությունը կազմում է 0,001-ից մինչև 0,006%:

Կադմիումի պարունակությունը խառը հանքաքարերում (Ի.Մաղաթյան և մյուսներ, 1972)¹ կազմում է 0,001-0,005%, բազմամետաղային հանքաքարերում՝ 0,01-0,02% (երբեմն 0,12%): Ցինկի սֆալերիտ հանքանյութում կադմիումի պարունակությունը կազմում է 1-3%, կապարի գալենիտ և պղնձի խալկոպիրիտ հանքանյութերում՝ 0,01-0,05%:

Սոտքի հանքաքարերում Մաղաթյանի և մյուսների (1972) կողմից հայտնաբերվել են նաև այլ հազվագյուտ տարրեր՝ ինդիում, գալիում, բերիլիում, ցիրկոնիում և տանտալ: Ինդիումի պարունակությունը տատանվում է 0,0001-ից մինչև 0,01%, իսկ գալիումինը՝ 0,0001-ից մինչև 0,0005%: Բերիլիումի պարունակությունը կազմում է 0,0003%, գրանիտոիդներում՝ 0,001%: Ցիրկոնիումի և տանտալի պարունակությունները գրանիտոիդներում կազմում են 0,01-0,03%, հանք ներփակող փոփոխված ապարներում՝ 0,001-ից մինչև 0,1%:

Այժմ գիտնական-երկրաբանների (Ի.Մաղաթյան և մյուսներ, 1972) կողմից բերված տվյալներով գնահատելով Սոտքի հանքավայրի հանքաքարերում տարածված հազվագյուտ և ցրված այն տարրերի քանակները, որոնք չեն գնահատվել հետախույզ-երկրաբանների կողմից: Քանի որ այդ տարրերը կան հանքավայրի ինչպես արդյունաբերական պաշարներում, այնպես էլ կան-խատեսումային ռեսուրսներում, ուստի վերջիններիս յուրաքանչյուրի սահմանագծում հաշվարկված տարրերի քանակները վերագրում ենք համապատասխան դասակարգումներին. արդյունաբերական պաշարներում առկա քանակները վերագրում ենք արդյունաբերական պաշարներին, իսկ կանխատեսումային ռեսուրսներում առկա քանակները՝ կանխատեսումային ռեսուրսներին: Հիմնական տարրերի հետ հարակից տարածված տարրերի գնահատման այս եղանակը հնարավորություն է ընձեռում հանքավայրի շահագործման ընթացքում գնահատելու անվերադարձ կորստի մատնված հարակից բաղադրիչների քանակներն ու արժեքները:

Ոսկի-տելլուրային կազմի հանքաքարերի քանակը կազմում է ամբողջ հանքաքարերի 62%-ը, ոսկի-սուլֆիդային հանքաքարերինը՝ 16%, իսկ խառը հանքաքարերինը՝ 5%: Դրանց մեջ բիսմուտի միջին պարունակությունները համապատասխանաբար կազմում են՝ 0,22, 0,0035 և 0,0035%, հետևապես բիսմուտի միջին հավասարակշռված պարունակությունն ամբողջ հանքավայրում կազմում է 0,165%: Նույնպիսի հաշվարկներով կադմիումի միջին պարունակությունը ամբողջ հանքավայրում կազմում է 0,0044%, ինդիումինը՝ 0,005%, գալիումինը և բերիլիումինը՝ 0,0003%, ցիրկոնիումինը և տանտալինը՝ 0,051%:

Սոտքի հանքավայրի պաշարները հանքավայրը ոչ այնքան տևական ժամանակահատված շահագործելուց հետո՝ 2006թ., վերագնահատվել են ՀՀ պաշարների պետական հանձնաժողովի կողմից: Վերագնահատված պաշարների քանակները՝ առ 1-ը հունվարի 2008թ., կազմում են՝ հանքաքարերինը (C₁ և C₂ կատեգորիաներով, ինչպես նաև արտահաշվեկշռային գնահատված)՝ 25326,7 հազ.տ, ոսկունը՝ 167272,7կգ (միջին պարունակությունը՝ 6,6 գ/տ), արծաթինը՝ 182,1տ, 21996,1 հազ. տ հանքաքարերում (արծաթի միջին պարունակությունը՝ 8,28 գ/տ), սելենինը՝ 39,7տ, 13432,6 հազ. տ հանքաքարերում (սելենի միջին պարունակությունը՝ 2,955 գ/տ), տելլուրինը՝ 11,1տ, 1068,4 հազ. տ հանքաքարերում (տելլուրի միջին պարունակությունը՝ 10,39 գ/տ):

01.01.2014թ. դրությամբ Սոտքի հանքավայրում մնացած պաշարների քանակները կազմում են՝ ոսկունը՝ 117936,34կգ, արծաթինը՝ 128,39տ, սելենինը՝ 27,99տ, տելլուրինը՝ 7,83տ, բիսմուտինը՝ 29487,1տ, կադմիումինը՝ 749,3տ, ինդիումինը՝ 893,55տ, գալիումինը՝ 53,61տ, բերիլիումինը՝ 53,61տ, ցիրկոնիումինը՝ 9114,22տ, տանտալինը՝ 9114,22տ:

Ծանոթություն. Սոտքի հանքավայրի երկրաբանական նկարագրությունից պարզորոշ երևում է, որ գերակշռող հանքայնացումները տելլուրիդային հանքանյութեր են, որոնք կազմում են ամբողջի 62%-ը, որոնց հետ էլ կապված է ոսկու գերակշռող մասը: Այս հանգամանքն ասում է այն մասին, որ հետախույզ-երկրաբանների կողմից սելեն և տելլուր (հատկապես տելլուր) տարրերի քանակներն արդյունաբերական պաշարներում հաշվարկված են շատ ու շատ քիչ (իրականությանը մոտ են գիտնական-երկրաբանների տվյալներով մեր կողմից հաշվարկված քանակները կանխատեսումային ռեսուրսներում):

¹ Магакьян И.Г., Пиджян Г.О. и др. Редкие и благородные элементы в рудных формациях Армянской ССР. Ереван: Изд. АН АрмССР, 1972, 394 с.

Յու.Մանինի¹ տվյալներով Բալխաշի լեռնամետալուրգիական կոմբինատը բազմամետաղային հանքաքարերից դեռևս անցյալ դարի 70-ականներին կորզում էր ամբողջ 12 անուն օգտակար տարրեր, Չինքենտի կապարի գործարանը 15 անուն օգտակար տարրերից կորզում էր 14-ը, իսկ Ուստ-Կամենոգորսկի կապար-ցինկային կոմբինատը, որտեղ օգտակար տարրերի վերջնական կորզումը կազմում էր 93 տոկոս, հիմնական հումքից թողարկում էր 28 տեսակ ապրանքային արտադրանք և շահույթի կեսը ստանում էր հիմնական հանքանյութի հետ հարակից տարածված տարրերից:

Լեհաստանի պետական հաշվեկշռում գրանցված կապար-ցինկային՝ 15, պղնձային՝ 18, նիկելային՝ 3, մկնդեղի՝ 1 և երկաթի՝ 3 հանքավայրերի շահագործման ժամանակ դեռևս անցյալ դարի 70-ականներին, հիմնական օգտակար տարրերի հետ համատեղ կորզվում էին նաև հարակից տարածված 14 այլ տարրեր՝ գալիում, գերմանիում, կադմիում, կոբալտ, մոլիբդեն, ռենիում, սելեն, տելուր, ոսկի, արծաթ, թալիում, տիտան, վանադիում և ծծումբ: Մշակվել և ներդրվել էր հիմնական հանքանյութի հետ հարակից տարածված, շատ փոքր պարունակություներ ունեցող պլատինի և պլատինի խմբի այլ մետաղների կորզման տեխնոլոգիա²:

Մեր բազմաթիվ հոդվածներում ու մենագրություններում բազմիցս նշել ենք, որ մենք մեր հանքավայրերը շահագործել և շահագործում ենք բարբարոսաբար, ոչ լիարժեք ու անխնա: Կորզել ու կորզում ենք մեկ-երկու, լավագույն դեպքում՝ ոչ լիարժեք երեք-չորս տարրեր, իսկ գետերն ու ձորերն ենք թափում տասնյակները, և թափված շատ ու շատ կարևոր հարակից տարրերի արժեքները համարյա միշտ գերազանցել ու գերազանցում են կորզված տարրերի արժեքները (հիմնավորումները կբերվեն ստորև):

Քանի որ արդյունաբերական պաշարների գնահատման ժամանակ՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում, չեն հայտնաբերվել հիմնական տարրերի հետ հարակից տարածված 9 տարրերից 7-ը, և դրանց պաշարները չեն հաշվարկվել (հայտնաբերված սելենի և տելուրի պաշարներն էլ գնահատվել են թերի), որոնց գումարային արժեքը մոտ 2 անգամ գերազանցում է հիմնական տարրերի արժեքը, այդ իսկ պատճառով համեմատենք հիմնական և հարակից տարածված տարրերից կորզվող արժեքները պաշարների և հատկապես կանխատեսումային ռեսուրսների համար, որոնցում առկա բոլոր տարրերը գնահատվել են համեմատաբար լիարժեք: Եվ այսպես, Սոտքի հանքավայրի ընդերքում առայժմ հայտնի երկու հիմնական (ոսկի և արծաթ) և 9 հարակից տարրերի կանխատեսումային ռեսուրսների ընդհանուր արժեքը 2007թ.² նախաճգնաժամային տարվա գներով, կազմում է 11.270.363.480 դոլար, որից հիմնական տարրերինը՝ 5.387.026.500 դոլար, իսկ հարակից տարածված տարրերինը՝ 5.883.336.980 դոլար: Հիմնական տարրերի 93 տոկոսով կորզման դեպքում դրանցից կորզվող արժեքը կարող է կազմել 5.009,93 մլն դոլար, իսկ հարակից տարրերի 90 տոկոսով կորզման դեպքում դրանցից կորզվող արժեքը կարող է կազմել 5.295,0 մլն դոլար, այսինքն՝ մոտ 1,06 անգամ ավել, քան հիմնական տարրերից կորզվող արժեքը: Այստեղ ավելացնենք նաև այն, որ հիմնական տարրերի օգտահանման (հանքաքարերի արդյունահանման, հարստացման և կորզման) գործընթացներում ունեցել ենք և ունենք մեծաքանակ կորուստներ:

ԽՍՀՄ-ի տարիներին շահագործվող (Սոտքի և Մեդրաձորի) ոսկու հանքավայրերի հանքաքարերից, անտեսելով դրանց մեջ առկա ոսկու և արծաթի հետ հարակից տարածված թվով 15 այլ տարրեր, Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում կորզվում էին միայն ոսկին ու արծաթը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այդ հանքավայրերի շահագործման իրավունքը տրվեց կանադական «First Dynasty Mines» (FDM) ընկերությանը, որն էլ տեր էր դարձել ինչպես Արարատի ոսկու կորզման ֆաբրիկային, այնպես էլ Սոտքի և Մեդրաձորի ոսկեհանքերի շահագործման իրավունքին և ոսկեբեր հանքաքարերից դարձյալ կորզում էր միայն և միայն ոսկի և արծաթ: Բայց չէ՞ որ այդ հանքաքարերը պարունակում են ոչ միայն ոսկի և արծաթ, այլև շատ ու շատ արժեքավոր, ռազմավարական նշանակության մի շարք այլ տարրեր՝ սելեն, տելուր, բիսմութ, կադմիում, ինդիում, գալիում, գերմանիում, բերիլիում, ցիրկոնիում, տանտալ և այլն, որոնց կորզումը կարող է

¹ Манин Ю.М. НТР и экологизация производства. Минск: «Наука и техника», 1979, 136 с.

² Реферативный журнал “Геология”, сводный том № 10. Москва. 1999.

կրկնապատկել ու բազմապատկել լեռնահանքային (լեռնամետալուրգիական) ձեռնարկության արդյունավետությունը:

Այստեղ հարցը ոչ այնքան ձեռնարկության արդյունավետության մեծացմանն է վերաբերում, չնայած դա շատ կարևոր է հանքավայրերը շահագործող ընկերությունների և հատկապես հայկական պետության և հայ ժողովրդի համար, որքան.

1. այդ շատ արժեքավոր, տեխնիկայի ու արդյունաբերության բազմազան ճյուղերում լայն կիրառություն ունեցող կարևորագույն տարրերի փոշիացմանն ու անտեղի կորստին,
2. բնական միջավայրի աղտոտմանը ծանր մետաղների (բիսմութի, կադմիումի, ինդիումի, տանտալի) և թունահարույց հատկություններով օժտված տարրերի (սելենի, տելուրի, մկնդեղի, կադմիումի, բերիլիումի) թափոններով:

Ոսկու և արծաթի հետ հարակից տարածված տարրերից շատերը (սելենը, տելուրը, գալիումը, գերմանիումը, ինդիումը ոսկու և արծաթի հետ միասին) կիրառվում են էլեկտրոնիկայի քիչ նյութատար, շատ աշխատատար, աշխատավորների բարձր որակավորում պահանջող, բնապահպանական առումով մաքուր և մեծ եկամտաբերություն ապահովող ճյուղում: Հետևապես դրանք բոլորը պետք է կորզվեն և ի սպաս դրվեն Հայաստանի համար խիստ հեռանկարային այդ ճյուղի՝ էլեկտրոնիկայի (այդ թվում՝ նաև միկրոէլեկտրոնիկայի) զարգացմանը:

Սոտքի և Մեղրաձորի հանքաքարերի մշակումը Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում ԽՍՀՄ-ի օրոք կատարվում էր համատեղ՝ բովախառնուրդի տեսքով:

Մեղրաձորի հանքավայրի հանքաքարերն ազնիվ մետաղներով (ոսկով և արծաթով) անհամեմատ ավելի հարուստ էին, քան Սոտքինը, և Մեղրաձորի հանքաքարերով կարգավորվում էին ոսկու և արծաթի պարունակությունները մշակման ենթակա «ապրանքային հանքաքարերում»:

Նշենք, որ Սոտքի հանքավայրից արդյունահանված «ապրանքային» հանքաքարերում (ստորերկրյա և բաց հանքերից հավասար քանակներով) ոսկու և արծաթի միջին պարունակությունը 2006թ. վերահաստատված պաշարներում՝ 6,6գ/տ և 8,28գ/տ, և հանքաքարերի 10 տոկոսով աղքատացման դեպքում (նախագծի համաձայն) իրականում պետք է կազմի՝ ոսկունը 6գ/տ, արծաթինը՝ 7,527գ/տ: Հետևապես ազնիվ մետաղները 95 տոկոսով կորզելու դեպքում (նախագծով նախատեսվածից 1,2%-ով պակաս) արդյունահանված և մշակման ուղարկված մեկ մլն տ հանքաքարերից կորզված մետաղների քանակը կարող է կազմել՝ ոսկունը՝ 5700կգ, արծաթինը՝ 7150,6կգ: Եվ քանի որ այժմ (2013թ. տվյալներով) Սոտքի ոսկեհանքի ընդերքից տարեկան արդյունահանվում և մշակվում է ոչ թե 1, այլ 1,8 մլն տ հանքաքար, ապա կորզված ոսկու քանակն էլ պետք է որ կազմի 10260կգ, իսկ արծաթինը՝ 12871կգ, բայց թե որքան՞ ազնիվ մետաղներ է ստացել ՌԴ նշված ընկերությունը, մեզ հայտնի չէ (այդ հարցը թող պարզի ՀՀ կառավարությունը):

Եթե Հայաստանի ոսկու հանքավայրերը շահագործվեն ոչ ընտրովի և համալիր՝ ԽՍՀՄ-ի տարիներին նախատեսված ծավալներով (չափանիշ ընդունելով տարեկան 2000կգ ոսկու կորզումը), և կիրառվեն օգտակար տարրերի կորզման առավել կատարյալ, զարգացած երկրների մակարդակին համապատասխանող տեխնոլոգիաներ, այդ դեպքում դրանք կարող են շահագործվել ավելի քան 330 տարի և աշխատատեղեր տալ տասնյակ սերունդների: Սակայն շահագործման այսօրվա եղանակներն ու թափը ի վերջո կբերեն նրան, որ մեր ոսկու հանքավայրերն ընտրովի և բարբարոսաբար կշահագործվեն ոչ ավելի, քան 10-20 տարի և «դեն կնետվեն» իսպառ որակազրկված տեսքով (այնպես, ինչպես դա արդեն իսկ տեղի է ունեցել Մեղրաձորի հանքավայրում):

Այժմ ընդունենք, որ ռուսական «Գեոպրոմայնինգ» ընկերությունը, չլսելով մեր հորդորները, Սոտքի հանքավայրը շահագործելու է բարբարոսաբար, այսինքն՝ դրա ընդերքից տարեկան արդյունահանելու և մշակելու է մեկ մլն տ, հավանաբար նաև շատ ավելի, հանքաքար: Տեսնենք, թե ի՞նչ կունենա այդ ընկերությունը, եթե հանքաքարից կորզի միայն ոսկին ու արծաթը, և ի՞նչ կունենա, եթե բարձր տոկոսներով (94-95) կորզվեն նաև ոսկու և արծաթի հետ հարակից տարածված, եթե ոչ բոլոր, ապա գոնե մեր կողմից թվարկված տարրերը ևս: Նշենք, որ Սոտքի հանքավայրում հայտնաբերված են նաև բավականին մեծաքանակ մկնդեղ՝ արսենոպիրիտ հանքանյութի տեսքով, ցինկ՝ սֆալերիտ հանքանյութի տեսքով, կապար՝ գալենիտ հանքանյութի տեսքով, և այլ տարրեր, որոնց պաշարները չեն գնահատվել: Ասենք ավելին. նշված տարրերի գծով

նույնիսկ եզակի անալիզներ չեն կատարվել դրանց պարունակությունները գոնե մոտավոր քանակներով որոշելու համար, հետևապես դրանց կորզման մասին առայժմ խոսք լինել չի կարող:

Արդեն իսկ նշվել է, որ մեկ մլն տոննա հանքաքարերից Սուտքի հանքավայրի շահագործման նախագծով նախատեսված կորզումից նույնիսկ 1,2%-ով պակաս կորզելու պարագայում հնարավոր է կորզել՝ ոսկի՝ 5700կգ, արծաթ՝ 7150,6կգ, որոնց վաճառքից լեռնահանքային ձեռնարկության տարեկան ստացած հասույթը լավագույն դեպքում կարող է կազմել 182 մլն 767,77 հազ. դոլար:

Նույն քանակի (մեկ մլն տոննա) հանքաքարերից ոսկու և արծաթի հետ հարակից տարածված տարրերը 94%-ով կորզելու պարագայում հնարավոր կլինի կորզել՝ սելեն՝ 2,78տ, տելուր՝ 9,77տ, բիսմուտ՝ 1552,2տ, կադմիում՝ 39,4տ, ինդիում՝ 47,04տ, գալիում՝ 2,82տ, բերիլիում՝ 2,82տ, ցիրկոնիում՝ 479,78տ, տանտալ՝ 479,78տ, երկաթ՝ 4655տ, ծծումբ՝ 5345տ (վերջին երկուսը պիրիտ հանքանյութից, որի քանակը Սուտքի հանքավայրի արդյունաբերական պաշարներում պայմանականորեն ընդունվել է 250 հազ.տ, որը դրա իրական քանակից քիչ կարող է լինել 3-4 անգամ): Թվարկված հարակից բաղադրիչների վաճառքից մետալուրգիական գործարանի ստացած հասույթը կարող է կազմել 345 մլն 747,25 հազ. դոլար, այսինքն՝ մոտ 1,9 անգամ ավել, քան ազնիվ մետաղներից ստացած հասույթն է (նկատի ունենանք, որ թվարկված բոլոր հարակից բաղադրիչները թափվել, թափվում և թափվելու են պոչամբարներ, կորչելու են անվերադարձ և թունավորելու ու ապականելու են միջավայրը՝ Արարատ քաղաքի հարավարևմտյան ծայրամասը):

Ինչպես արդեն նշվել է, Սուտքի հանքավայրի հանքաքարերում առկա (ստույգ հայտնի) 15 տարրերից՝ ոսկի, արծաթ, սելեն, տելուր, բիսմուտ, կադմիում, ինդիում, գալիում, բերիլիում, ցիրկոնիում, տանտալ, մկնդեղ, պղինձ, կապար, ցինկ, առնվազն 6-ը՝ սելենը, տելուրը, բերիլիումը, մկնդեղը, կադմիումը և կապարը, թունավոր են նույնիսկ միացությունների տեսքով, որոնք պոչամբարներ թափվելով կարող են և արդեն իսկ առաջացրել են էկոլոգիական աղետի օջախներ:

Սուտքի հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածում (1976 թվից մինչև 2013թ.) արդեն իսկ արդյունահանվել ու մշակվել է մոտավորապես 16,3 մլն տ հանքաքար, որի արդյունքով պոչամբար թափված թունավոր տարրերի՝ սելենի, տելուրի, մկնդեղի, բերիլիումի, կադմիումի և կապարի քանակը կազմել է մոտավորապես 4862տ: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ նշված թունավոր տարրերի հետ համատեղ պոչամբար են թափվել նաև մեծաքանակ ծանր մետաղներ, որոնցից սպասվող վտանգները ոչնչով չեն զիջում թունավոր տարրերից սպասվող վտանգներին:

Սուտքի հանքավայրի ընդերքից տարեկան 1,8 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում՝ հաշվի առնելով այդ հանքավայրի շահագործման և օգտակար տարրերի կորզման մինչ այժմ ունեցած առավելագույն տվյալները (90%), Սուտքի հանքավայրից տարեկան կարող են ստացվել 47250տ (արդյունահանված հանքաքարերի 2,625%-ը) սուլֆիդային, տելուրիդային և այլ հանքանյութերի ոսկեբեր խտանյութեր, որոնց մեջ կլինեն.

- ոսկի՝ 10692կգ, արծաթ՝ 13414կգ, սելեն՝ 4,7952տ, տելուր՝ 16,84տ, բիսմուտ՝ 2710տ, կադմիում՝ 68,87տ, ինդիում՝ 90,07տ, գալիում՝ 5,4տ, բերիլիում՝ 5,4տ, ցիրկոնիում՝ 930,74տ, տանտալ՝ 930,74տ, երկաթ՝ 8379տ, ծծումբ՝ 9621տ: Նշված խտանյութերը մետալուրգիական գործարանում վերամշակման ենթարկելով՝ օգտագործելով ՀՀ ՊԱԱ Կապանի մետալուրգիայի և հանքահարստացման լաբորատորիայի կողմից կատարված մշակումները, հնարավոր կլինի ստանալ՝ ոսկի՝ 10532կգ (կորզումը՝ 98,5%), արծաթ՝ 13,212տ (կորզումը՝ 98,5%), սելեն՝ 4,61տ (կորզումը՝ 96%), տելուր՝ 16,16տ (կորզումը՝ 96%), բիսմուտ՝ 2601,7տ (կորզումը՝ 96%), կադմիում՝ 66,11տ (կորզումը՝ 96%), ինդիում՝ 87,61տ (կորզումը՝ 96%), գալիում՝ 4,88տ (կորզումը՝ 96%), բերիլիում՝ 4,88տ (կորզումը՝ 96%), ցիրկոնիում՝ 930,74տ (կորզումը՝ 96%), տանտալ՝ 930,74տ (կորզումը՝ 96%): Կարծում ենք, անհրաժեշտ է (պետք է) ձգտել և հասնել այս՝ նշված ցուցանիշներին (սա բոլորովին էլ անհնարին չէ, կարելի է ասել, որ միանգամայն հնարավոր է, քանի որ արդեն իսկ կան մշակված տեխնոլոգիաներ, որոնք պետք է ներդրվեն արդյունաբերության մեջ):

- Ստորի հանքավայրում ոսկու և արծաթի հետ հարակից տարածված 15 տարրերից 11-ը՝ սելենը, տելուրը, բիսմուտը, կադմիումը, ինդիումը, գալիումը, բերիլիումը, ցիրկոնիումը, տանտալը, երկաթը և ծծումբը չկորզվելու և պոչամբարներ թափվելու պարագայում յուրաքանչյուր տարի իրենց հետ պոչամբար կտանեն և կորստի կմատեն 1.347,19 մլն դոլարի հարստությամբ:

Մեղրաձորի ոսկու հանքավայրը գտնվում է Հրազդանի շրջանում՝ Մեղրաձոր գյուղի անմիջական հարևանությամբ, նրա արևմտյան ծայրամասից դեպի արևմուտք ձգվում է մի քանի կմ:

Մեղրաձորի հանքավայրը համարվում էր ոսկու պարունակությամբ ամենահարուստ հանքավայրը Հայաստանի Հանրապետությունում: Հանքավայրի հետախուզված և արդյունաբերական՝ C_1+C_2 կատեգորիաներով գնահատված պաշարները, որոնք հաստատվել էին նախկին ԽՍՀՄ պաշարների պետական հանձնաժողովի կողմից 1983 թվին, կազմում էին՝ հանքաքարերինը՝ 1440 հազ.տ, արտահաշվեկշռային գնահատվածներինը՝ 26 հազ.տ, ոսկու հաշվեկշռային պաշարները՝ 21324կգ, արտահաշվեկշռայինը՝ 101կգ, արծաթի հաշվեկշռային պաշարները՝ 25,2տ, արտահաշվեկշռայինը՝ 0,2տ: 1397 հազ.տ հանքաքարերում արդյունաբերական կատեգորիաներով գնահատվել էին նաև տելուրի հաշվեկշռային պաշարները՝ 31,2տ, արտահաշվեկշռային 26տ հանքաքարերում՝ 0,4տ տելուր: Ոսկու միջին պարունակությունը հաշվեկշռային ողջ պաշարներում կազմել էր 15,98գ/տ, արծաթինը՝ 18,6գ/տ, իսկ տելուրինը՝ 21,4գ/տ: Ինչպես արդեն նշվել է, վերջին ժամանակներս (2006-2010թթ.) հետախուզվել է հանքավայրի հյուսիսարևմտյան թևը Լուսաջրի հանքավայր անվան տակ (իրականում դա Մեղրաձորի հանքավայրի տեղամասն է): Այդ տեղամասի պաշարները կազմում են՝ հանքաքարերինը՝ 1845,3 հազ.տ, ոսկունը՝ 18480,39կգ, արծաթինը՝ 33,32տ, տելուրինը՝ 23,336տ, բիսմուտինը՝ 15,984տ, միջին պարունակությունները՝ ոսկունը՝ 10,01 գ/տ, արծաթինը՝ 18,06 գ/տ, տելուրինը՝ 12,65 գ/տ, բիսմուտինը՝ 8,66 գ/տ: Ցավալի է, որ Մեղրաձորի հանքավայրի հանքաքարերում ոսկու և արծաթի հետ համատեղ տարածված՝ զուգակցվող շատ ու շատ այլ տարրեր հանքավայրի հետախուզման ընթացքում հետախույզ-երկրաբանների կողմից չէին հայտնաբերվել և չէին գնահատվել: Բայց դրա հետ մեկտեղ ոսկու և արծաթի հետ հարակից տարածված մեծաքանակ թվով տարրեր հայտնաբերվել էին գիտնական-երկրաբանների կողմից¹ :

Մեղրաձորի հանքավայրում Շ.Ամիրյանի և Ա.Կարապետյանի կողմից հայտնաբերվել են 24 հանքանյութեր, որոնց գերակշռող մեծամասնության հետ էլ այս կամ այն չափերով կապված էին ազնիվ մետաղները և դրանց հետ հարակից տարածված տարրերը՝ բիսմուտը, տելուրը, կադմիումը, մոլիբդենը, ցինկը, կապարը, պղինձը, մկնդեղը, ծարիրը, կալցիումը, մանգանը, ալյումինիումը, մագնեզիումը, տիտանը, վանադիումը, նիկելը, սելենը, սնդիկը, ինդիումը, գալիումը և գերմանիումը: Թվարկված տարրերից արդյունաբերական առումով առավել հետաքրքիրներն էին՝ սելենը, տելուրը, բիսմուտը, կադմիումը, ինդիումը, գալիումը, գերմանիումը, կապարը, ծարիրը, որոնք շատ ավելի կարևոր ու արժեքավոր էին և ունեին կորզելի պարունակություններ:

Վերը նշված տարրերի կանխատեսումային ռեսուրսները հաշվարկելու համար կարևոր նշանակություն ունի Մեղրաձորի հանքային մարմինների հանքանյութային կազմությունը: Նշենք, որ այդ հանքային մարմինները 90-95%-ով ներկայացված են ոչ հանքային՝ երակային հանքանյութերով, հիմնականում քվարցով, իսկ մնացած 5-10%-ը ներկայացված են սուլֆիդներով, տելուրիդներով, սուլֆոաղերով, օքսիդներով և այլն:

Ինչպես արդեն նշել ենք, Մեղրաձորի հանքավայրի պաշարները ԽՍՀՄ պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատվել են 1983թ., իսկ շահագործական աշխատանքները սկսվել են 1987թ. (1987թ. մինչև 1992թ. հանքավայրը շահագործվել է Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մի որոշակի ժամանակահատված շահագործական աշխատանքները դադարեցվել են: 20-րդ դարի վերջին Արարատի ոսկու կորզման ֆաբրիկան, որտեղ Ստորի ոսկեհանքերից արդյունահանված հանքաքա-

¹ Амирян Ш.О., Карапетян А.И. Минералого-геохимическая характеристика руд Меградзорского золоторудного месторождения. Изв. АН АрмССР. сер. геол-геогр. наук, т. XVII, 2, 1964, с. 37-46. Амирян Ш.О., Карапетян А.И. Минеральный состав руд Меградзорского золоторудного месторождения. В кн. "Экспериментально-методические исследования рудных минералов". М.: Наука, 1965, с. 214-222.

րերի հետ համատեղ մշակվում էին Մեղրաձորի ընդերքից արդյունահանված հանքաքարերը, վաճառվեց կանադական «FDM» ընկերությանը, որն էլ 2001թ. վերսկսեց հանքավայրի շահագործման աշխատանքները):

Թե որքան հանքաքար է արդյունահանվել Մեղրաձորի հանքավայրի ընդերքից նշված ընկերության կողմից, որքան ազնիվ մետաղներ են կորզվել, մեզ հայտնի չէ: Միայն մի բան ստույգ հայտնի է. 01.01.2008թ. դրությամբ այդ հանքավայրի հաշվեկշռային պաշարներից դուրս են գրվել՝ հանքաքարեր՝ 1048 հազ.տ C_1 կատեգորիայի գծով և 5,6 հազ. տ C_2 կատեգորիայի գծով, ոսկի դուրս է գրվել 17284,2 կգ C_1 կատեգորիայի գծով և հավելաճ է գրանցվել 709,9կգ C_2 կատեգորիայի գծով, արծաթ դուրս է գրվել 4,4885տ C_1 կատեգորիայի գծով և 12,88տ C_2 կատեգորիայի գծով: 01.01.2008թ. դրությամբ Մեղրաձորի հանքավայրի ընդերքի մնացած հանքաքարերի և ազնիվ մետաղների պաշարների քանակները կազմում են.

- հանքաքարերինը՝ 392 հազ.տ,
- ոսկունը՝ C_1 կատեգորիայի՝ 1767,8կգ, C_2 կատեգորիայի՝ 2967,5կգ, $C_1 + C_2$ կատեգորիաների՝ 4735,3կգ,
- արծաթինը՝ C_1 կատեգորիայի՝ 3,48տ, C_2 կատեգորիայի՝ 4,5815տ, $C_1 + C_2$ կատեգորիաների՝ 8,0615տ:

Մեղրաձորի ոսկեբեր հանքավայրի շահագործման նախագծով ԽՍՀՄ տարիներին նախատեսված էր տարեկան արդյունահանել 170 հազ. տ «ապրանքային» հանքաքար, որն էլ պետք է մշակվեր և մշակվում էր «Արարատի ոսկու կորզման» ֆաբրիկայում: Թե տարեկան որքան հանքաքար էր արդյունահանվում կանադա-հնդկական ընկերության կողմից, մեզ հայտնի չէ: Ասենք, որ դա այնքան էլ էական չէ ստորև բերվող հաշվարկի համար:

Եթե Մեղրաձորի հանքավայրի ընդերքից տարեկան կայուն արդյունահանվեր 143 հազ.տ «ապրանքային» հանքաքար, որի մեջ արդյունաբերական հանքաքարերի քանակը, հաշվի առնելով 40% աղքատացումը, պետք է կազմեր 102 հազ.տ, ապա հաստատված արդյունաբերական (հաշվեկշռային և արտահաշվեկշռային) 1466 հազ.տ պաշարները լեռնահանքային ձեռնարկությանը «կյանք» կտային 14,4 տարի, և այդ պարագայում, ոսկու և արծաթի կորզումներն ընդունելով նախագծով նախատեսված 92%-ի չափով, տարեկան կարող էին կորզվել՝ ոսկի՝ 1375,2կգ, արծաթ՝ 1630,2կգ: Հաստատված պաշարներում առկա տեղուր հարակից բաղադրիչը, որի քանակը հաշվեկշռային և արտահաշվեկշռային պաշարներում հաշվարկվել էր շատ քիչ քանակությամբ (չէր համապատասխանում տեղուրիդների իրական քանակությանը), ամբողջովին թափվում էր պոչամբարներ: Պոչամբար թափվող հարակից բաղադրիչների քանակները կարող էին կազմել՝ սելենինը՝ 0,48տ, տելուրինը՝ 154,8տ, բիսմութինը՝ 2,03տ, կադմիումինը՝ 14,68տ, ինդիումինը՝ 0,112տ, գալիումինը՝ 0,086տ, գերմանիումինը՝ 0,083տ, երկաթինը (պիրիտ հանքանյութի հետ կապված)՝ 792տ, ծծմբինը (դարձյալ պիրիտ հանքանյութի հետ կապված)՝ 909տ: Այստեղ թունավոր տարրերի քանակը կկազմեր 169,96տ:

Մետալուրգիական վերամշակող գործարան ունենալու հարցը նույնիսկ այս պարագայում քննարկման առարկա չէ, այն ծայր աստիճանի անհրաժեշտություն է, որտեղ ոչ միայն կարող են կորզվել, զտվել ու մաքրվել ազնիվ մետաղների հետ հարակից տարածված բաղադրիչները, այլև հենց դրանք՝ ազնիվ մետաղները՝ ոսկին ու արծաթը, որոնց զտման ու մաքրման համար դրանք ուղարկվում էին հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող երկրներ:

Բանն այն է, որ Մեղրաձորի հանքավայրի ընտրովի շահագործումից հետո ընդերքում մնացած ավելի ցածր պարունակություններով ոսկին ու արծաթը, նույնիսկ հարակից տարրերով հանդերձ, մոտ ապագայում հնարավոր չի լինելու արդյունահանել, քանի որ դա տնտեսապես ձեռնտու չի լինելու: Սակայն այդ «աղքատ» հանքաքարերի արդյունահանումն ու մշակումը շահավետ կդառնան, եթե.

1. հետախուզվեն ու «աղքատ» հանքաքարերի հետ համատեղ շահագործման տրվեն այդ հանքավայրի կանխատեսումային ռեսուրսները, որի մի մասն արդեն իսկ իրականացվել է, սակայն ոսկու կորզումը կատարվելու է այլ վայրում և այլ կազմակերպության կողմից,
2. հանքավայրի շահագործման ժամանակ կորզվեն ոչ միայն ազնիվ մետաղները, այլև հարակից բաղադրիչները:

Այսպիսով, Սոտքի և Մեղրաձորի ոսկու հանքավայրերից տարեկան նշված քանակներով (Սոտքի հանքավայրից՝ 1,8 մլն տ, իսկ Մեղրաձորի հանքավայրից՝ 102 հազ.տ) հանքաքար արդյունահանելու և մշակելու հետևանքով միջավայր (Արարատի պոչամբար) թափվող թունավոր տարրերի (սելենի, տելուրի, մկնդեղի, բերիլիումի, կադմիումի և կապարի) քանակը կարող է կազմել մոտավորապես 242տ, իսկ ծանր մետաղների (ոսկու, արծաթի, պղնձի և այլնի՝ առանց կադմիումի և կապարի) քանակը՝ 207տ, որոնք բավարար են (շատ ու շատ ավելին են)՝ բնապահպանական աղետ առաջացնելու համար:

Եվ վերջապես նշենք, որ Սոտքի և Մեղրաձորի ոսկեբեր հանքավայրերի շահագործման մինչ այժմ ընկած ժամանակահատվածում՝ Սոտքի 34 (1976-ից մինչև 2009թթ.) և Մեղրաձորի 21 (1987-ից մինչև 2007թթ.) տարիների ընթացքում Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի պոչամբարում կուտակված 17,3 մլն տ պոչանքների մեջ, բացառությամբ ոսկու և արծաթի թերկորզման հետևանքով պոչամբար թափված ազնիվ մետաղների, վերջիններիս հետ հարակից տարածված ցրված և հազվագյուտ տարրերի ընդհանուր քանակները կազմում են՝ սելենինը՝ 593,4տ, տելուրինը՝ 4055տ, բիսմութինը՝ 26774տ, կադմիումինը՝ 995,5տ, ինդիումինը՝ 812,4տ, բերիլիումինը՝ 48,6տ, տանտալինը՝ 8262տ, գալիումինը՝ 48,6տ, գերմանիումինը՝ 0,9տ, ցիրկոնիումինը՝ 8262տ, ծծմբինը՝ 62772տ, երկաթինը՝ 54670տ, որոնց արժեքը 2007թ. մարտ-ապրիլ ամիսների գներով, իսկ ծծմբինը 2014թ. գներով կազմում է 4363,4 մլն դոլար, այն պարագայում, երբ այդ նույն ժամանակահատվածում կորզված ոսկու (50000կգ) և արծաթի (56տ) (ոչ ստույգ տվյալներով) համար ստացած հասույթը, դարձյալ 2007թ. գներով, կազմել է 1.600,2 մլն դոլար:

Ամփոփելով կատարված հետազոտությունների արդյունքները՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սոտքի և Մեղրաձորի հանքավայրերի շահագործման արդյունքով Արարատի պոչամբար թափված 17,3 մլն տ պոչանքների մեջ, որից Սոտքի հանքաքարերի բաժինը կազմում է մոտավորապես 16,2 մլն տ, իսկ Մեղրաձորինը՝ 1,1 մլն տ, թունահարույց հատկություններով օժտված տարրերի (սելենի, տելուրի, բերիլիումի, մկնդեղի, կադմիումի և կապարի) քանակը կազմել է մոտավորապես 4155տ, որից Սոտքի հանքաքարի բաժինը կազմում է 2300տ, իսկ Մեղրաձորինը՝ 1855տ:

**ՍՈՏԵԻ ԵՎ ՄԵԳՐԱԶՈՐԻ ԶՆԱԶԱՎԱՅՐԵՐԻ ՇԱՅԱԳՈՐԾՄԱՆ (ԱԶՆԻՎ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԿՈՐԶՄԱՆ)
ԱՐԴՅՈՒՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ**

ՀՐԱՉԻԿ ԱՎԱԳՅԱՆ, երկր. հանք. գիտ. դոկտոր
ՄԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

Համառոտագիր

Հողվածում քննարկվում են Սոտքի և Մեղրաձորի ոսկեհանքերի շահագործման՝ հանքաքարերի արդյունահանման և առաջնային մշակման, հետևանքով բնական միջավայրին հասցվող վտանգներն ու վնասները:

Հաշվարկները ցույց են տվել, որ Սոտքի և Մեղրաձորի հանքավայրերի շահագործման ընթացքում՝ 1976-2013թթ., դրանց ընդերքից արդյունահանվել և մշակվել է 17,3 մլն տ հանքաքար, որից պոչամբար են թափվել 4155տ թունավոր տարրեր, այնպիսիք, ինչպիսիք են՝ սելենը, տելլուրը, մկնդեղը, բերիլիումը, կադմիումը և կապարը, չհաշված պիրիտ հանքանյութի հետ կապված թունավոր տարրերը: Սկսած 2013թ. և հետագա 15 տարիների ընթացքում «Արարատի»-ի պոչամբար թափված թունավոր տարրերի, ինչպես նաև ծանր մետաղների քանակը կլինի շատ ավելին, քանի որ Սոտքի ոսկեհանքի ընդերքից նախատեսված է (և արդեն իսկ իրագործվում է) արդյունահանել և վերամշակել երկու մլն տ հանքաքար (մի քանի անգամ ավելի, քան տեղի է ունեցել հնում):

Բանալի բառեր. հանքաքար, արդյունահանում, պիրիտ, սելեն, տելլուր, բերիլիում, կադմիում, կապար, ծանր մետաղներ, թունավոր տարրեր, ոսկի, արծաթ:

**ОЦЕНКА ОТХОДОВ, ПОЛУЧЕННЫХ ПРИ РАЗРАБОТКЕ (ИЗВЛЕЧЕНИИ БЛАГОРОДНЫХ МЕТАЛЛОВ)
СОТСКОГО И МЕГРАДЗОРСКОГО МЕСТОРОЖДЕНИЙ, И ИХ ЭКОЛОГИЧЕСКИХ ПОСЛЕДСТВИЙ**

ГРАЧИК АВАКЯН, доктор геолого-минералогических наук
главный научный сотрудник Института
экономики им. М. Котаяна НАН РА,

Аннотация

В статье рассматриваются вопросы, связанные с ущербом и угрозами, наносимыми окружающей среде, в результате эксплуатации (добычи и обработки) руд золотосодержащих месторождений Сотка и Меградзора. Расчеты показали, что в процессе эксплуатации Сотского и Меградзорского месторождений за период 1976-2013 гг. из их недр было добыто и переработано около 17,3 млн. тонн руды, из коих в хвостохранилище было сброшено 4155 тонн ядовитых элементов, таких как селен, теллур, мышьяк, бериллий, кадмий и свинец, не считая ядовитых элементов, связанных с минералом пирит. Начиная с 2013 года и в последующие 15 лет выбросов ядовитых элементов и, конечно, тяжелых металлов в хвостохранилище «Арагат» будет еще больше, поскольку из недр Сотского месторождения предусмотрена (и уже осуществляется) ежегодная добыча и переработка двух млн. тонн руды (в несколько раз больше, чем имело место раньше).

Ключевые слова: руда, добыча, пирит, селен, теллур, бериллий, кадмий, свинец, тяжелые металлы, ядовитые элементы, золото, серебро.

**ESTIMATES OF SCRAPS AND ASSESSMENT OF ENVIRONMENTAL DAMAGE CAUSED BY EXPLOITING SOTQ AND
MEGHRADZOR ORE MINES (EXTRACTION OF NOBLE METALS)**

HRACHIK AVAGYAN, Doctor of Sciences (Geology and Mining)
Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article discusses the damage caused and threats to the environment owing to extraction of ores and primary processing by exploiting Sotq and Meghradzor gold mines. The calculations show that while exploiting Sotq and Meghradzor gold mines in 1976-2013 17,3 million ores were extracted from the terrestrial bowels and 4155 tons of poisonous elements (selenium, tellurium, arsenic, beryllium, cadmium and lead without taking into account poisonous elements related with pyrite ore) out of that quantity were thrown into the tailing. From 2013 onwards and in the upcoming 15 years quantity of poisonous elements and heavy metals thrown into "Ararat" trailing would be much more, since it is expected to extract and process from the terrestrial bowels of Sotq gold mine (and is currently operated and exploited) 2 million tons of ores (a quantity "exceeding the previous one extracted in the past a couple of times).

Keywords: Ore, extraction, pyrite, selenium, tellurium, beryllium, cadmium, lead, heavy metals, poisonous elements, gold, silver.

ԱՇՈՏ ԲԱՅԱԴՅԱԼ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
Մ Գ Ա Ա Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱԼ, *տ.գ.թ.*
Մ Գ Ա Ա Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼՎՍԱՆ ԴԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԴՅՈՒՄ

Ցանկացած երկրի իրական հատվածում իր ուրույն տեղն ունի գյուղատնտեսությունը, որը տնտեսության զարգացման, զբաղվածության ապահովման և բնակչության ընդհանուր կենսամակարդակը պայմանավորող կարևորագույն ոլորտներից մեկն է: Այն կարևոր դերակատարում ունի նաև Հայաստանի տնտեսության զարգացման և կայունացման գործընթացում, որն ապահովելու է երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 20%-ը, զբաղվածության շուրջ 40%-ը, միաժամանակ ունենալով արտահանման մեջ գյուղատնտեսական ու դրանց վերամշակման արդյունքում ստացվող ապրանքների ավելի քան 20 %-ը: Զարգացած երկրներում գյուղատնտեսությունը դիտվում է որպես ռազմավարական ճյուղ և որի բարելավման համար օգտվում է պետական բյուջեի միջոցներից: Ուստի ելնելով տնտեսապես զարգացած երկրների տնտեսվարման փորձից և հաշվի առնելով Հայաստանի կենսագործունեության ու տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել այդ ոլորտի ֆինանսավորման ներկայիս մեխանիզմները և արտադրվող արտահանման խթանմանն ուղղված պետական քաղաքականությունը՝ կապված հիմնականում վարկավորման ու ներդրումային գործընթացների հետ: Գյուղատնտեսության ոլորտը պայմանավորված է փոքր գյուղացիական տնտեսություններով, որոնք խոցելի են ոչ միայն շուկայից եկող տնտեսական (ապրանքի գին, պահանջարկ) և բնակլիմայական պայմաններից այլ նաև պետական ֆինանսավորման և նպատակադրված սուբսիդավորման սխեմաների բացակայության ու մատչելի վարկային միջոցների անհասանելիության պատճառով:

Անհրաժեշտ է նշել, որ տնտեսության կարգավորման առումով մի շարք հիմնախնդիրների լուծման համար երկրում բացակայում է համակարգված և հետևողական քաղաքականության իրականացումը՝ ուղղված գյուղատնտեսության ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացման ապահովմանը, որի հիմքում ընկած է ֆինանսավորման հարցը: Վերջինս վերաբերում է ոչ միայն պետական սուբսիդավորմանը և պետության մասնակցությամբ տարբեր ֆինանսավորման ու վարկավորման ծրագրերի իրականացմանը, այլև մասնավոր կապիտալի ընդգրկմանը:

Պետք է նշել այն իրողությունը, որ Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների աշխարհագրությունը բավականին փոքր է, այն սահմանափակվում է մի քանի պետություններով՝ Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա, Բելառուս, իսկ Համաշխարհային շուկաները զարգացող են, որակի նկատմամբ զգայուն և ամենակարևորը՝ պահանջում են մեծ ծավալների կայուն մատակարարում: Իսկ քանի որ մեծածավալ արտահանումների ավելի քան 71%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, և միաժամանակ այն շուկան, որտեղ մեծապես ներկայացված են հայկական մրգերը, Վրաստանն է, որը միշտ բաց է հայկական գյուղատնտեսական մրգերի համար:

Հայաստանի տնտեսության առավել խոցելի ոլորտներից մեկը դեռևս գյուղատնտեսությունն է, որը կարիք ունի հետևողական պետական քաղաքականության իրականացման: Գյուղատնտեսության զարգացումը խոչընդոտող բնութագրական կողմը նաև այն է, որ գյուղացիական տնտեսությունները կրում են բնակլիմայական անբարենպաստ պայմաններով պայմանավորված զգալի ռիսկեր, որոնց կառավարման և զսպման համար մեծ է պետության կողմից վարվող ճիշտ քաղաքականության դերը՝ որպես ռիսկերի կառավարման համապատասխան մեխանիզմներ ձևավորող և ներդնող կառույց:

Նշված ռիսկերին դիմակայումը փոքր գյուղացիական տնտեսության պայմաններում ունի կենսական նշանակություն, քանի որ դրանք կարող են կործանարար լինել տնտեսությունների մեծամասնության համար, քանի որ նրանք չեն կարող սեփական միջոցներով նպաստել կամ խթանել իրենց զարգացմանը, և որ ամենակարևորն է՝ գոյություն ունեն բարձր շուկայական ռիսկեր՝ կապված գների և պահանջարկի տատանողականության հետ: Միաժամանակ պետք է նշել այն կարևոր հանգամանքը, որ ռիսկերի կառավարման ընթացքում պետության կողմից իրականացվող կարգավորման քաղաքականությունը զգալի դեր ու նշանակություն ունի գյուղատնտեսության զարգացման համար: Ուսումնասիրությունները վկայում են, որ հայաստանյան շուկաները, չունենալով ռիսկերի կառավարման նորովի մոտեցում, և արդյունքում դրանք կառավարվում են ինքնուրույն, որտեղ էլ չեն օգտագործվում բոլոր համատեղ հնարավորությունները: Ուստի այդ բացթողումներից զերծ մնալու համար կարգավորման նպատակով ներկայումս կարևորվում են գյուղացիական տնտեսությունների վարկավորման, տեխնոլոգիաների կատարելագործման, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, որակի ստանդարտների կիրառման և նմանատիպ այլ հիմնախնդիրներ, որոնք առավել արդյունավետ կարող են լուծվել ագրովերամշակող կազմակերպությունների հետ համագործակցության խորացման միջոցով:

Հիմք ընդունելով վերոհիշյալները՝ առանձնացնենք գյուղատնտեսական հունքի վերամշակման համակարգի պետական աջակցության ուղղությունները, այդ թվում՝

- խթանել վերամշակող ընկերությունների հատկապես գինիների, մուրաբաների, ջեմերի, կոնֆիտյուրների, օշարակների և այլնի արտադրության ուղղությամբ փոքր և միջին ձեռնարկության զարգացումը,
- բարձրացնել ներքին և արտաքին շուկաներում վերամշակումից ստացված արտադրություններից մրցունակությունը՝ ընդլայնելով փոխշահավետ առևտրային կապեր,
- ձեռնարկել արտաքին առևտրի ռազմավարության հստակեցման տրանսպորտային ուղիների շրջափակման վերացման հետևողական քայլեր,
- աջակցել հունք արտադրողների և վերամշակողների միջև ձևավորմանը,
- միջամտել շուկային արագ հարմարվող փոքր արտադրությունների ստեղծմանը,
- աջակցել վարկավորման մատչելիության բարձրացման, ռիսկերի նվազման և վճարային կազմակերպության ուղղություններին միտված գործողությունների մեխանիզմների մշակմանը,
- ձևավորել վերահսկող կազմակերպությունների և տեխնիկական տեսակների խաղող արտադրողների միջև պայմանագրային փոխհարաբերություններ,
- ընդլայնել բիզնես տեղեկատվության տարածման, մարքեթինգային և գիտական հետազոտություններ,
- աջակցել մասնագիտական կադրերի պատրաստման և առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման տեխնիկական պահանջներին:

Հաշվի առնելով շուկայական բավականին բարձր ռիսկերը՝ կապված գների և պահանջարկի տատանողականության հետ, շատ մանր տնտեսություններ չեն կարող սեփական միջոցներով նպաստել կամ խթանել իրենց զարգացումը և արդյունքում հենվում են առաջարկվող ֆինանսավորման հնարավորությունների վրա, ինչպես պետության կողմից բյուջեով նախատեսված ֆինանսավորման, այնպես էլ ֆինանսական շուկայում բանկերի կողմից գյուղատնտեսական վարկավորման:


Գյուղատնտեսության վարկավորումը դեռևս մնում է ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկը՝ կապված վարկավորման ոչ մատչելի պայմանների՝ գրավի առարկայի, ժամկետների և տոկոսադրույքի հետ, որոնք դժվարամատչելի են գյուղացիական տնտեսությունների հիմնական մասի համար: Ուստի կարևորելով պետական միջոցներով նպատակային օգտագործումն ու սուբսիդավորման իրականացումը՝ պետք է հստակ իմանալ, որ թերևս վարկավորմանը և սուբսիդավորմանն ուղղված միջոցները դեռևս չեն կարող բավարարել ոլորտի առջև դրված ֆինանսավորման հիմնախնդրի լուծումը: Այստեղ պահանջվում է իրականացնել այնպիսի բարե-

փոխումներ, որոնք իրենց էությանը կնպաստեն, որ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող մասնավոր կապիտալն օգտագործվի գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող սուբյեկտների նպատակների համար: Ուստի այս առումով պետք է գործեն այնպիսի վարկավորման շուկայական մեխանիզմներ, որտեղ գյուղատնտեսության վարկավորումը փոխշահավետ լինի ինչպես ֆինանսական կազմակերպությունների, այնպես էլ գյուղացիական տնտեսությունների համար՝ ապահովելով այնպիսի ծավալներ, որոնք կարող են զարգացնել գյուղատնտեսական մասնագիտացման ուղղությունները՝ միաժամանակ ակտիվացնելով ոլորտի հիմնական մաս կազմող գյուղացիական տնտեսությունների գործունեությունը:

Գյուղատնտեսության ֆինանսավորումը կատարվում է բանկային համակարգի միջոցով, որն իրականացվում է ինչպես սեփական, այնպես էլ տարբեր միջազգային ֆինանսական կազմակերպությունների ու պետության կողմից տրամադրվող ֆինանսական հնարավորությունների միջոցով: Վարկավորման ծավալները 2014թ. հասել են շուրջ 110 մլրդ ՀՀ դրամի, 2009թ.-ի համեմատ, որը կազմել է 43,665 մլրդ ՀՀ դրամ (տե՛ս գծապատկեր 1-ը):

Գծապատկեր 1

Առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալներն ըստ 2010-2014թթ.¹



Պետք է նշել նաև այն իրադրությունը, որ այժմյան պայմաններում խիստ կարևորված է հանրապետության գյուղատնտեսությունում տնտեսվարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը, որն իրականացվում է սկսած 2011 թվականից, և այն շարունակվելու է առաջիկա տարիներին: Մասնավորապես այդ նույն թվականի ապրիլից մինչև 2014 թվականի կեսերը տրամադրվել է 63,3 մլրդ դրամի շուրջ 71.5 հազ. վարկ, իսկ սուբսիդավորման գումարն էլ նշված ժամանակահատվածում կազմել է 2.2 մլրդ դրամ: Միաժամանակ 2011-2014թթ., ինչպես նաև ընթացիկ (2015թ.) տարում գյուղատնտեսության ոլորտում դրական տեղաշարժերն արդյունք են նաև մատչելի վարկային ներդրումների (տե՛ս աղյուսակը): ՀՀ կառավարության կողմից սահմանված որոշմամբ մի շարք բանկերի միջոցով («Ալբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ», «Կոնվերս բանկ», «ՎՏԲ Հայաստան բանկ», «Արդշինբանկ» և «Պրոկրեդիտ բանկ») հաստատվել է «Գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» կարգ գյուղատնտեսությունում՝ կապված տնտեսվարողներին մատչելի վարկերի տրամադրման հետևյալ պայմաններով.

- յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության տրամադրել 3 մլն դրամ, 2 տարվա մարման ժամկետով,
- 14% փաստացի տոկոսադրույքով, որի 4%-ը սուբսիդավորվում է, իսկ առավել կարիքավորներից մոտավորապես 225 համայնք սուբսիդավորվելու են 6%-ի չափով,
- վճարման համար սահմանվում է 6 ամիս՝ սկսած վարկի տրամադրման պահից:

¹ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք՝ www.cba.am:

Վարկերի բաշխվածությունը՝ ըստ տարիների
(2011-2013թթ., 2014, 1-ին կիսամյակի դրությամբ)¹


Անվանումներ	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ. հունվար- հունիս
Տրամադրված վարկերի թիվը	25217	17109	20655	7679
Տրված վարկերի հանրագումարը, հազ. դրամ	17425200	14759992	22488097	7449040
Սուբսիդավորված գումարը, հազ. դրամ	149615,6	568061,7	808294,5	362619,5

Աղյուսակի տվյալները վկայում են, որ, ի տարբերություն սուբսիդավորման, որ եթե տրամադրված վարկերի թիվն ունեցել է ոչ գծային բնույթ, այսինքն՝ նվազում (8108 հատով 2012թ. 2011թ. համեմատ) և աճման միտում (3546 հատով 2013թ. 2012թ. համեմատ), ապա տրված վարկերի սուբսիդավորման գումարներն ունեցել են միայն աճման միտում:

Գյուղատնտեսության վարկավորման ծավալների աճն իր ուղղակի ազդեցությունն է ունենում գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի աճի վրա (տես գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Գյուղատնտեսության վարկավորման ծավալները և համախառն արտադրանքն ըստ 2010-2013թթ.²



Ներկայացված գծապատկեր 2-ի տվյալները վկայում են, որ 2010թ. սկսած՝ նկատվում է ինչպես վարկավորման ծավալների աճ, այնպես էլ համախառն արտադրանքի: Այսինքն՝ գյուղատնտեսական համախառն արտադրանքը, ի թիվս այլ գործոնների, բավականին զգայուն է ֆինանսավորման նկատմամբ, և մատչելի պայմաններով ֆինանսավորման հասանելիությունը կարող է էապես նպաստել գյուղատնտեսական գործունեության հետագա աճին:

Բարելավման առումով պետք է նշել, որ ագրարային ոլորտի վարկավորման համար կարևորվում են գրավադրման մեխանիզմների վերանայումը, գրավի առարկայի ընդլայնումը, մատչելի տոկոսադրույքի և վարկավորման ժամկետների ապահովումն ու պետական երաշխիքների տրամադրումը: Բարելավման կարևոր ուղղություն է համարվում նաև գյուղատնտեսական հումքի վերամշակման գծով տնտեսվարող սուբյեկտների կարողությունների ուժեղացման և նոր սուբյեկտների ձևավորման նպատակով պետական աջակցության առավել հասցեագրված նպատակային վարկավորումը: Միաժամանակ վարկերի մատչելիության բարձրացման նպատակով պետք է իրականացվեն դրանց տոկոսադրույքների սուբսիդավորման գծով տարբեր ծրագրեր, որոնք կնպաստակառուղվեն ոլորտում նպատակային քաղաքականության իրականացմանը: Որպես կարևորագույն նախապայման՝ պետական բյուջետային միջոցների սահմանափակվածության պայմաններում պետք է իրականացվի ոչ միայն պետության կողմից տրվող վարկավորում զգալի

¹ Տվյալները՝ ՀՀ ԳՆ:

² ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք՝ www.cba.am:

զեղչերով, այլ նաև պետական երաշխիքներով տրվող զուտ կոմերցիոն վարկերով, որոնք կնպաստեն վարկավորման պայմանների արդիականացմանը և վարկային ռիսկերի կրճատմանը:

Այնուհանդերձ կարևորելով գյուղատնտեսական արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացման հարցը՝ ասենք, որ սահմանափակ ռեսուրսների պայմաններում առաջավոր տեխնոլոգիաների օգտագործումն անխուսափելի է արտադրանքի արտադրողունակության բարձրացման համար, իսկ ՀՀ-ում դեռևս, ըստ 2009-2014թթ. աճ չկա:

Կապված վերոհիշյալների հետ պետք է նշել, որ տեխնիկական վերազինման և գյուղացիական տնտեսությունների կողմից դրանց առավել ինտենսիվ օգտագործումը խոչընդոտող գործոններից մեկը, ինչ խոսք, դեռևս մանր գյուղացիական տնտեսություններին համապատասխան վարկային միջոցների անհասանելիությունն է: Ուստի այդ առումով ներկայիս առաջնահերթ խնդիրներից մեկը գյուղատնտեսական միջոցների համալրումն է, քանի որ գյուղատնտեսական տեխնիկայի անբավարարությունը, դրանց ֆիզիկական և բարոյական ծայրաստիճան մաշվածությունը և փոքր տնտեսությունների կողմից դրանց ոչ շահավետ օգտագործումն իրենց հերթին խոչընդոտում են ոլորտի ինտենսիվության մակարդակի բարձրացումը: Հետևաբար բարելավման առումով այստեղ կարևորվում է նպաստել լիզինգի զարգացմանը, որը հնարավորություն կտա գյուղացիական տնտեսություններին ձեռք բերելու գյուղատնտեսական տեխնիկա՝ իրականացնելով պարբերական վճարումներ երկարաժամկետ ժամանակահատվածում, աջակցելով գյուղացիական տնտեսություններին նշված ծառայություններից օգտվել տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցով:

ԳՅՈՒԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ ԻՅՈՒՄ

ԱՇՈՏ ԲԱՅԱԴՅԱՆ, *դ.գ.դ., պրոֆեսոր*
Մ Գ Ա Ա Մ. Քոտանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *դ.գ.թ.*
Մ Գ Ա Ա Մ. Քոտանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության զարգացման, զբաղվածության ապահովման և բնակչության ընդհանուր կենսամակարդակը պայմանավորող կարևորագույն ոլորտներից է:

Երկրում բացակայում է ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացման ապահովման համար համակարգված և հետևողական քաղաքականության իրականացումը, որի հիմքում ընկած է գյուղատնտեսության ֆինանսավորման հարցը:

Ոլորտի հիմնախնդիրներից մեկը գյուղատնտեսության վարկավորումն է, որը ներկայումս չի բավարարում տնտեսավարողների պահանջարկը և ստեղծում է վարկավորման ոչ մատչելի պայմաններ: Անհրաժեշտ է, որպեսզի գործեն այնպիսի վարկավորման շուկայական մեխանիզմներ, որտեղ վարկավորումը փոխշահավետ լինի և ֆինանսական կազմակերպությունների, և գյուղացիական տնտեսությունների համար:

Ոլորտի վարկավորման բարելավման համար անհրաժեշտ է կարևորել զրավադրման մեխանիզմների վերանայումը, գրավի առարկայի ընդլայնումը, վարկավորման ժամկետների և մատչելի տոկոսադրույքի ապահովումը, պետական երաշխիքների տրամադրումը:

Բանալի բառեր. համախառն ներքին արդյունք, ֆինանսավորում, սուբսիդավորում, ռիսկեր, սեփական միջոցներ, վարկերի բաշխվածություն, բարելավում, տնտեսավարողներ, տոկոսադրույք, երաշխիք:

ПРОБЛЕМЫ УЛУЧШЕНИЯ ФИНАНСИРОВАНИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ ПРОЦЕССОВ В РА

АШОТ БАЯДЯН, *д.э.н., профессор*
главный научный сотрудник, заведующим
Института экономики им. М. Котаяна НАН РА

ЛЕНА ОГАНЕСЯН, *к.э.н.,*
старший научный сотрудник Института
экономики им. М. Котаяна НАН РА

Аннотция

Сельское хозяйство является важнейшей отраслью развития экономики Армении, обеспечения занятости и повышения общего благосостояния населения.

В стране отсутствует систематизированная и последовательная политика обеспечения долгосрочного и стабильного развития аграрной сферы, в основе реализации которой лежит вопрос финансирования.

Одной из проблем сферы сельского хозяйства является его кредитование, которое на сегодняшний день не удовлетворяет потребности хозяйствующих субъектов и не создает условия получения доступных кредитов. Необходимо задействовать взаимовыгодные как для финансовых организаций, так и крестьянских хозяйств рыночные механизмы кредитования.

Для совершенствования сферы необходимо подчеркнуть важность пересмотра залоговых механизмов, расширения предмета залога, обеспечения принципа срочности и доступной процентной ставки кредитования, предоставления государственных гарантий.

Ключевые слова: внутренний валовой продукт, финансирование, субсидирование, риски, собственные средства, распределение кредитов, улучшение, хозяйствующие субъекты, процентная ставка, гарантия.

THE ISSUES OF IMPROVING ACCESS TO FINANCING AVAILABLE FOR AGRICULTURAL ACTIVITIES IN THE REPUBLIC OF ARMENIA

ASHOT BAYADYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Department Head, Chief Research Associate,
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

LENA HOVHANNISYAN, *Candidate of Sciences (Economics)*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The agriculture is one of the important industries of the economy that ensures economic development, provides employment opportunities, and raises the general standards of living in the Republic of Armenia.

The nation lacks an implementation of a systemized and consistent policy to ensure long-run and sustainable development of the sector of economy that is based on the need for funding for the agriculture.

One of the issues of the sector is the funding available to the agriculture that is not sufficient to meet the demand of farmers or other entities and not everyone can afford such loans. It is required to ensure such market mechanisms for access to loans that both framers and financial intermediaries will benefit from.

In order to improve the access to financing in the sector the requirements for the collateral (including items to be considered as collateral) need to be revised; maturity period of loans needs to be longer; interest rates need to be lower; and more government guarantees need to be provided.

Keywords: Gross domestic products, financing, subsidizing, risks, own capital, distribution of loans, improvement, farmers, interest rate, guarantee.

ԱՇՈՏ ԲԱՅԱԴՅԱՆ, տ. գ. դ., պրոֆեսոր
Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվ. փնտհետազոտության
ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող

ԵՎԳԵՆԻԱ ՅԱԿՈԲՅԱՆ, հայցորդ
Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվ. փնտհետազոտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԳՅՈՒԼԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությունը կարևորագույն ոլորտներից մեկն է, քանի որ նրա մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմում է շուրջ 22 տոկոս¹: Գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի երկրում պարենային անվտանգության ապահովման գործում, քանի որ դրանում ստեղծված արդյունքն է կարգավորում սննդամթերքի գները՝ դրանով իսկ ազդելով բնակչության կենսամակարդակի վրա:

Ներկայումս գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացման նպատակն է գյուղական համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը: Ծրագրի իրականացման հիմքն է ՀՀ կառավարության՝ 31.03.2011թ. թիվ 349-Ն որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» կարգը, որով նախատեսվել է սուբսիդավորել գյուղացիական տնտեսություններին տրամադրված վարկերի տոկոսադրույքները 4-6 տոկոսի չափով: Ծրագրի իրականացման արդյունքում պետք է ապահովվեն գյուղատնտեսությունում տնտեսվարողների կարողությունների ընդլայնումը, գարնանային գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը, բերքահավաքի, աշնանացանի, արտադրանքի պահպանման համար, գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի, հատկապես վարելահողերի օգտագործման մակարդակի բարձրացումը, ինչպես նաև բարենպաստ պայմանների ստեղծումը անասնապահության զարգացման համար: Ծրագրի իրականացման համար 2014 թվականին նախատեսվում է հատկացնել 872,5 մլն դրամ, իսկ 2015-2016 թվականներին յուրաքանչյուր տարի՝ 872,0 մլն դրամ:

Այժմ ներկայացնենք գյուղատնտեսության ոլորտում արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով իրականացվող ծրագրերը, այդ թվում՝

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիրը, որի տևողությունը մինչև 2016 թվականն է: Ծրագրի նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում: Ըստ բաղադրիչների՝ նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝ ա) համայնքների արոտավայրերի/ անասնապահության կառավարման համակարգ. նախատեսվում է նախնական ընտրված համայնքների դրամաշնորհային ծրագրերի իրականացում, բ) գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում-գյուղմթերքների արտադրողականության բարձրացում և կենդանիների առողջության ապահովման ծառայություններ, ուսուցումների կազմակերպում, ԳԱՄԿ-երի (գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոն) և ԳԱՀԿ-երի (գյուղատնտեսական աջակցության հանրապետական կենտրոն) տեխնիկական աջակցություն, գ) մրցակցային դրամաշնորհների ծրագիր-գյուղմթերքի որակի բարձրացում, իրացման խնդրի լուծում, կոոպերացիայի ստեղծում, ՀՀ մարզերում նոր արտադրանքների և նոր տեխնոլոգիաների ներդրում: Ծրագրով նախատեսված աշխատանք-

¹ www.minfin.am

ների իրականացման նպատակով 2015-2016թթ. ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 2015 թվականին՝ 1,365,817.2 հազ. դրամ և 2016 թվականին՝ 382,006.2 հազ. դրամ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սննդի անվտանգության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2013-2015թթ.): Ծրագրի նպատակն է ապահովել սննդի անվտանգության ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունների զարգացումը, այդ թվում՝ առկա փաստաթղթերի բազայի գույքագրումը, վերագնահատումը և նորերի մշակումը, տվյալների շտեմարանի ձևավորումը և արդյունավետ կառավարումը: Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2014-2015թթ ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 2014 թվականին՝ 78,426.7 հազ. դրամ, 2015 թվականին՝ 21,253.2 հազ. դրամ¹:

Պետք է նշել, որ շատ դեպքերում գյուղատնտեսության մեջ տրամադրված վարկերի օգտագործման տնտեսական արդյունավետության գնահատման առումով հաշվարկներ չեն կատարվում, և նմանատիպ հաշվարկները բանկերն իրականացնում են միայն այն ժամանակ, երբ տրված վարկերի դիմաց որպես գրավ դրված է լինում արագ իրացվելիություն ունեցող օբյեկտ: Ըստ էության այդ խնդիրը պետք է անհանգստացներ վարկ վերցնող տնտեսվարող սուբյեկտներին կամ ֆիզիկական անձանց: Սակայն նոր սեփականատերերը, շուկայավարության մեջ փորձ չունենալով, երկար տարիներ անուշադրության են մատնել այս կարևոր հիմնախնդիրը, մինչդեռ այժմ, երբ շուկայական հարաբերություններն արդեն ընդլայնվում են, և գյուղատնտեսության բնագավառի գործարանները ձեռք են բերում շուկայի կանոնների վերաբերյալ գիտելիքներ ու փորձ, արդեն այս ոլորտում առաջընթաց է տեղի ունենում, թեև բացթողումներն այդ գործընթացում տակավին հաղթահարված չեն: Գյուղատնտեսության մեջ վարկերի օգտագործման նպատակով նախատեսված միջոցառումներ անց են կացվում առանց նրանց արդյունավետության նախնական վերլուծման: Գյուղատնտեսության մեջ վարկերի կիրառումն անհրաժեշտ է մթերքների արտադրությունն ընդլայնելու համար, որը ձեռք է բերվում հիմնական միջոցների վերարտադրությամբ, և որը նպաստում է բանվորներին տեխնիկապես զինելուն ամենից ավելի կատարելագործված տեխնոլոգիաներով և արտադրության միջոցներով: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության մեջ վարկերի ներդրման ժամանակ հաճախակի օգտագործվում են արտադրության այնպիսի կատարելագործված միջոցներ, որոնց արմատավորումը բարձրացնում է աշխատանքի արտադրողականության մակարդակը և միաժամանակ առավելագույն չափով արմատավորում նոր, ավելի արտադրողական տեխնիկա: Այլ պարագաներում վարկառուն չի կարող վերադարձնել վարկը և «շուկայական խաղի» կանոնների համաձայն՝ կսնանկանա: Արտադրության տեխնիկայի և աշխատանքի ընթացիկ բարեփոխումները հաճախ չեն կարող ապահովել արդյունավետ տնտեսական գործունեություն: Այս ամենը որոշում է գյուղատնտեսության մեջ վարկերի կիրառման դերը աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում և այն մեթոդաբանության կարևոր նշանակությունը, որն ապահովում է վարկային միջոցների հաշվին տեխնիկական, տնտեսական և տեխնոլոգիական միջոցառումների արդյունավետության ճիշտ գնահատումը և արտադրության մեջ կոնկրետ առաջարկությունների արմատավորումը:

Այսօր միջազգային ծրագրերով տրամադրվող վարկային միջոցներում առանձնացվում է գերմանական KfW բանկից «Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման» (KfW–ՓՄՁ) ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկը ներգրավել է 16.8 մլն Եվրո ընդհանուր գումարի թվով 4 վարկ՝ 40 տարի մարման ժամկետով և 10 տարի արտոնյալ ժամկետով: Այս ծրագրի գործարկումից ի վեր, ընդհանուր առմամբ, ֆինանսավորվել է թվով 65.765 ՓՄՁ սուբյեկտ՝ 381.1 մլն Եվրո ընդհանուր գումարով, իսկ 30.06.2014թ. դրությամբ գործող վարկառուների քանակը կազմում է 6.929՝ 31.9 մլն Եվրո վարկային պորտֆելով (տե՛ս աղյուսակը), որի 40 տոկոսը առևտրի, 20 տոկոսը՝ գյուղատնտեսության, 13 տոկոսը՝ արտադրության, 9 տոկոսը՝ ծառայությունների, 3 տոկոսը՝ շինարարության և 15 տոկոսը՝ այլ ոլորտներին տրված վարկերն են: Վարկերի զգալի մասը՝ մոտ 35 տոկոսը, տրամադրվել են Երևանում գործող ՓՄՁ–ներին:

¹ Հայաստանի Հանրապետության 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 346-347:

Գերմանա-հայկական հիմնադրամի կողմից KfW-ՓՄՁ ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերը¹

Ընդամենը տրված վարկերի քանակ (սկսած 1999թ.-ից)	65.765
Ընդամենը տրված վարկերի ծավալ, եվրո (սկսած 1999թ.-ից)	381.092.900
Գործող վարկերի քանակ (առ 30.06.2014թ.)	6.929
Գործող վարկերի ծավալ, եվրո (առ 30.06.2014թ.)	31.897.592
Գործող վարկերի ծավալ, ՀՀ դրամ (առ 30.06.2014թ.)	17.740.596.110

Ուստի, այդ առումով ներկայացնենք վարկային միջոցների օգտագործման արդյունավետության որոշման մեթոդաբանությունը: Վարկառուի տեսակետից առաջին պլանի վրա է մղվում վարկի օգտագործման միջոցառումների ծախսերի և դրա ակնկալվող արդյունքների համեմատական գնահատումը: Այսինքն՝ վերլուծությունը հիմնականում կենտրոնացվում է նորամուծությունների ծախսային փոխհատուցման ուսումնասիրությունների վրա:

Տարբերության եղանակը, որպես վարկերի արդյունավետության գնահատման ցուցանիշ, սահմանափակ կիրառություն ունի վերլուծական աշխատանքներում, քանի որ այս դեպքում ոչ միշտ է ապահովվում ցուցանիշների համադրելիությունը, այլապես վարկերի օգտագործման արդյունավետությունը գնահատելիս միջոցառումների ներդրումից ստացվող տնտեսական արդյունքն անհմաստ է նվազեցնել վարկի գումարի չափով կամ միջոցառումից ստացված շահույթից հանել միջոցառումների վրա վարկի հաշվից կատարված կապիտալ ներդրումների գումարը: Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործ ունենք տնտեսագիտական բնույթի երկու տարբեր ծախսերի հետ, որոնցից մեկը ընթացիկ, իսկ մյուսը միանվագ ծախսերն են: Տնտեսագիտության տեսությունը վաղուց արդեն պարզաբանել է, որ միանվագ և ընթացիկ ծախսերը ոչ թե իրարից են հանվում կամ գումարվում, այլ միայն հարաբերվում են:

Եթե վարկի օգտագործումը կիրառվում է լրացուցիչ կապիտալ ներդրումներ կատարելու նպատակով, ապա նրա արդյունավետությունը պետք է որոշվի կապիտալ ներդրումների ծախսածածկման ժամկետով:

Այս դեպքում լրացուցիչ կապիտալ ծախսերի (\bar{D}_y) ծախսածածկման ժամկետը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\bar{D}_y = Y_G + V_G - R_w / U_G \quad (1)$$

որտեղ՝

Y_G -ն՝ վարկերի օգտագործման միջոցառումների ներդրման համար կապիտալ ներդրումների գումարն է,

V_G -ն՝ վարկերի օգտագործման միջոցառումների ներդրման դեպքում եղած օգտագործվող սարքավորման վերականգնման ծախսերը,

R_w -ն՝ վարկերի օգտագործման միջոցառումների ներդրման դեպքում ազատված սարքավորման հաշվեկշռային արժեքն է,

U_G -ն՝ վարկերի օգտագործման միջոցառումների ներդրումից ստացված տնտեսման գումարն է (շահույթը):

Վարկի օգտագործման ներդրումներից ստացվող եկամուտների (շահույթի) հաշվին սեփականատերերը նախատեսում են փոխհատուցել կատարած ծախսերը և ստանալ լրացուցիչ շահույթ: Այն ժամանակահատվածը, որը նախատեսվում է ներդրման ծախսերի փոխհատուցման և շահույթի ստացման համար, կարևոր դեր է խաղում վարկերի օգտագործման արդյունավետության գնահատման գործում: Այսպիսով, ժամանակի գործոնն անհրաժեշտ գնահատման է ենթարկում ներդրումներից ակնկալվող եկամուտների չափերը:

Սակայն շուկայական տնտեսվարման պայմաններում փոխատվական բնագավառում ձևավորվող շահույթի չափաբաժինը պարբերաբար փոխվում է, և անհրաժեշտություն է առաջանում,

¹ <http://gaf.am/images/reports/gaf-msme-kfw.pdf>

ելնելով նման տատանումներից, ճշգրտումներ մտցնել վարկերի օգտագործման արդյունավետության որոշման հաշվարկներում:

Վերջին տարիներին որոշ տնտեսագետներ ՌԴ-ում և Հայաստանի Հանրապետությունում առաջարկում են ներդրումային որոշումներ կայացնելիս օգտագործել զուտ ներկա արժեքի (ՋՆԱ) ցուցանիշը¹, որը դրամական արտահոսքի և զեղչված դրամական ներհոսքի տարբերությունն է.

$$\text{ՋՆԱ} = \text{դրամական արտահոսք} + \text{զեղչված ներհոսք} \quad (2)$$

Չուտ ներկա արժեքի բացասական լինելու դեպքում ներդրումը համարվում է ոչ շահավետ, քանի որ դրանով պայմանավորված դրամական արտահոսքը գերազանցում է ընդհանուր զեղչված ներհոսքը: Դրական զուտ ներկա արժեքը վկայում է ներդրման նպատակահարմարության մասին, քանի որ դրամական զեղչված ընդհանուր ներհոսքը գերազանցում է արտահոսքը:

ՋՆԱ-ն, դրամական արտահոսքը և զեղչված ներհոսքը հաշվարկվում են՝ ելնելով վարկի օգտագործման պահի ու ակնկալվող հետագա արդյունքների ստացման ժամկետների միջև եղած տևողությունից: Օրինակ, այդ ժամանակահատվածը սարքավորումների համար հավասար է նրա օգտակար ծառայության ժամկետին:

Չուտ ներկա արժեքի ցուցանիշը մշակված է համընդհանուր օգտագործման համար: Այդ պատճառով որպես այդպիսին լրիվ չափով չի արտացոլում գյուղատնտեսության մեջ օգտագործվող վարկային միջոցառումների առանձնահատկությունները: Այդ պատճառով առաջարկում ենք գյուղատնտեսության մեջ վարկերի օգտագործման միջոցառումների տնտեսական արդյունավետությունը գնահատել այնպիսի մի ընդհանրացնող ցուցանիշի օգնությամբ, որը կնպաստի գյուղատնտեսության մեջ օգտագործվող նյութատեխնիկական պաշարների, այդ թվում նաև հողի օգտագործման արդյունավետությանը: Դա հնարավոր է կատարել վարկերի օգտագործման միջոցառումների իրականացումից հետո, հետևյալ բանաձևով, համապատասխան հաշվարկների միջոցով.

$$S_w = \Delta U + V_h + U_w + (U_w + C_w + Q_h) - V_{in} + U_g \quad (3)$$

որտեղ՝

S_w -ն՝ արտադրամիջոցների, այդ թվում՝ հողի օգտագործման տնտեսական արդյունավետության գործակիցն է

ΔU -ն՝ իրացված արտադրանքից և մատուցված ծառայությունից ստացված զուտ եկամուտն է,

V_h -ն՝ վճարված հարկերի գումարն է,

ΔU -ն՝ վճարված աշխատավարձի մակարդակների տարբերությունն է մինչև ներդրումը և ներդրումից հետո,

U_w -ն՝ հիմնական արտադրական միջոցների մնացորդային արժեքն է,

C_w -ն՝ միջին տարեկան շրջանառու միջոցների արժեքն է,

Q_h -ն՝ հողի դրամական գնահատման տարբերությունն է մինչև միջոցառման ներդրումը և ներդրումից հետո,

V_{in} -ն՝ տրամադրված վարկի տոկոսադրույքի գործակիցն է,

U_g -ն՝ տարեկան ամորտիզացիոն մասհանումների գումարն է:

Եթե արտադրամիջոցների, այդ թվում՝ հողի օգտագործման տնտեսական արդյունավետության գործակիցը վարկերի օգտագործման միջոցառումների ներդրումից հետո մեծ է կամ նույնիսկ հավասար է 1-ի, ապա կնշանակի, որ վարկի օգտագործումը համարվում է արդյունավետ:

Այսպիսով, գյուղատնտեսության մեջ վարկերի օգտագործման միջոցառումների տնտեսական արդյունավետության գնահատման մեր կողմից առաջարկված ընդհանրացնող ցուցանիշի օգնությամբ հնարավոր է դառնում ընկալել արդյունավետությունը բնութագրող բոլոր գործոնների ազդեցությունը գյուղատնտեսական արտադրանքի ստացման արդյունքների վրա:

¹ Ճուղուրյան Ա.Գ., Ինովացիոն ծրագրերի ընտրությունը ագրոբիզնեսում, («Ագրոգիտություն», 11, 2000):

**ՉՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԵՐ**

ԱՇՈՏ ԲԱՅԱԴՅԱՆ, *դ.գ.դ., պրոֆեսոր*
*Մ Պ Ա Ա Մ. Բոթանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող*

ԵՎԳԵՆԻԱ ՀԱԿՈԲՅԱՆ, *հայցորդ*
*Մ Պ Ա Ա Մ. Բոթանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի կրթունք գիտաշխատող*

Համառոտագիր

Հոդվածի շրջանակներում փորձ ենք արել գնահատելու վարկային միջոցների արդյունավետ օգտագործումը գյուղատնտեսության ոլորտում: Նշենք, որ ներկայումս ՀՀ-ին միջազգային ծրագրերով բավականին վարկային միջոցներ են տրամադրվում: Սակայն դրանց օգտագործումը ոչ միշտ է համարվում արդյունավետ: Մեր կողմից մշակված մեթոդաբանությամբ արտադրամիջոցների տնտեսական արդյունավետության գործակիցը պետք է ներառի որոշակի ցուցանիշներ, այդ թվում՝ իրացված արտադրանքից ստացված զուտ եկամուտը, տարեկան ամորտիզացիոն մասհանումները, վճարված հարկերը, հիմնական արտադրամիջոցների մնացորդային արժեքը և այլն: Այսինքն՝ այն ընդհանրական կերպով ներկայացնում է վարկային միջոցների օգտագործման արդյունավետությունը: Կարծում ենք, որ սա կարող է հիմք հանդիսանալ առավել ճշգրիտ կողմնորոշվելու այս կամ այն ցուցանիշի կիրառման արդյունավետության որոշման գործում:

Բանալի բառեր. գյուղատնտեսություն, վարկային միջոցներ, արդյունավետություն, վարկային տնտեսություն, սուբսիդավորում, դրամական ներհոսք, ներդրումներ:

**МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОЦЕНКЕ ЭФФЕКТИВНОСТИ
ИСПОЛЬЗОВАНИЯ КРЕДИТА В СЕЛЬСКОМ ХОЗЯЙСТВЕ**

АШОТ БАЯДЯН, *д.э.н., профессор*,
*Главный научный сотрудник, зав.отделом Института
экономики им. Котаняна НАН РА*

ЕВГЕНИЯ АКОПЯН, *соискатель*
младший научный сотрудник
Института экономики им.Котаняна НАН РА

Аннотация

В рамках статьи сделана попытка оценить эффективность использования кредитных ресурсов в сфере сельского хозяйства. Отметим, что ныне в РА предоставляется достаточный объем кредитных ресурсов по международным программам, однако их использование не всегда признается эффективным. Согласно разработанной нами методологии, коэффициент экономической эффективности средств производства должен включать в себя определенные показатели, в том числе: чистый доход, полученный от реализации продукции, годовые амортизационные отчисления, и др. Иными словами, он в обобщенной форме выражает эффективность использования кредитных средств. Считаем, что это может быть основой для более точной ориентировки по принятию решения эффективности использования того или иного показателя.

Ключевые слова: сельское хозяйство, кредитные ресурсы, эффективность, ставка процента за кредит, субсидирование, приток денег, инвестиции.

METHODOLOGICAL APPROACHES TO THE ASSESSMENT OF EFFICIENCY OF USE OF LOANS IN THE AGRICULTURE

ASHOT BAYADYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Department Head, Chief Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

EVGENIA HAKOBYAN, *Ph.D. Student*
Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The authors attempt to assess the efficient use of loans in the sector of agriculture. It is worthy to note that currently Armenia is receiving substantial amounts of loans from the international organizations. However, the use of these resources is not always viewed or considered an efficient one. By relying on the methodology designed by the authors, the article states that the economic efficiency coefficient of production means (facilities) needs to incorporate several indicators including net income from selling final (produced) goods, annual depreciation amount, amount of taxes paid, book value of fixed assets, and etc. Overall, the coefficient needs to reflect the efficient use of loans received. The authors think that the proposed approach would enable them to identify the efficiency of use of separate indicators more accurately.


Keywords: Agriculture, loan resources, efficiency, loan interest rates, subsidizing, cash inflow, investments.

ՂԱՏԱԽԱՇՎԱԿԱԿԱՆ ՓՈՐԾԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Ղատախաշվապահական փորձաքննությունը տնտեսական իրավահարաբերություններում իրականության որոնման հետազոտական մի գործընթաց է, որի նպատակը իրավապահ մարմինների կողմից դրանց ճիշտ կողմնորոշումն է: Փորձաքննություն անցկացվում է կազմակերպչական, մեթոդաբանական և տեխնիկական հնարքների օգտագործմամբ՝ համախմբող փորձագիտական հետազոտությունը մեկ միասնական գործընթացում: Յուրաքանչյուր դրամախաշվապահական փորձաքննության գործընթացի զարգացում իրականացվում է աշխատանքային գործիքների, աշխատանքի առարկաների և հենց աշխատուժի մասնակցությամբ:¹ Փորձագիտական հետազոտման գործընթացը ներառում է փորձաքննության անկայունացման հետևյալ փուլերը՝ կազմակերպչական, հետազոտական, համախմբման և անփոփոխ, որոնց վերաբերյալ ավելի պարզ և հանգամանալից պատկերացում կազմելու համար ներկայացնենք գծապատկեր 1-ը: Այդ փուլերից կազմակերպչականը ներառում է փորձագիտական հիմնարկում կատարվող նախապատրաստական աշխատանքների և փորձաքննության կազմակերպչա-մեթոդաբանական նախապատրաստումը: Փորձագիտական հիմնարկում նախապատրաստական աշխատանքը ներառում է կազմակերպչական բնույթի մի շարք աշխատանքներ, որոնցից կարևորը նախ և առաջ ղատախաշվապահական փորձաքննության անցկացման խնդիրների կազմումն է՝ համաձայն իրավապահ մարմինների կողմից՝ ըստ կոնկրետ հետաքննվող գործի ղատախաշվապահական փորձաքննության նշանակման:

Գծապատկեր 1

Ղատախաշվապահական փորձաքննության գործընթացը և փուլերը



¹ В.В.Шадрин “Основы бухгалтерской учета и судебно-бухгалтерской экспертизы”, Москва 2000, с. 376.

Ընդհանուր առմամբ վերջին գործընթացում իր ուրույն տեղն ունի փորձագետ-հաշվապահը, որը ընտրությունն իրականացնում է՝ ելնելով փորձաքննության լուծման դրված հարցերի բովանդակությունից, քանի որ փորձագետն ուսումնասիրվող հարցերի գծով պետք է ունենա մասնագիտական հիմնավոր գիտելիքներ և հաշվապահական ու վերահսկողական աշխատանքների գործնական հմտություն, ինչպես նաև անհրաժեշտ իրավաբանական պատրաստվածություն:

Այն բանից հետո, երբ փորձագիտական հիմնարկը կոնկրետ փորձագետ-հաշվապահին դատահաշվապահական փորձաքննություն անցկացնելու համար տալիս է համապատասխան հանձնարարությունը, այդ ժամանակ միայն նա սկսում է ուսումնասիրել գործի բովանդակությունը: Մասնավորապես նա պարզաբանում է, թե երբ և որտեղ է պետք սկսել փորձաքննության անցկացումը, երբ այն ավարտել, ինչ ձևով ներկայացնել փորձաքննության արդյունքները և ուն: Այնուհետև փորձագետը մանրամասն ուսումնասիրում է իրավապահ մարմինների կողմից նշանակված փորձաքննության որոշման բովանդակությունը: Նա հստակեցնում է այն հանգամանքը, թե արդյո՞ք տիրապետում է բավարար գիտելիքների՝ գործում առաջադրված հարցերը լուծելու համար, արդյո՞ք անհրաժեշտ են այլ մասնագետների կցում գործին և միաժամանակ հատուկ փորձաքննությունների անցկացման: Ուսումնասիրելով իրավապահ մարմինների որոշումը՝ փորձագետ-հաշվապահը հետազոտում է այն հանգամանքը, թե գործում ներառված և քննարկվող հարցերը որքանով են համապատասխանում դատահաշվապահական փորձաքննություն մասնագիտությանը:

Փորձաքննության կազմակերպչամեթոդաբանական պատրաստվածությունը ենթադրում է փորձաքննության հետազոտմանը դրված նյութերի բովանդակության և ամբողջականության ուսումնասիրումը, ինչպես նաև փորձաքննության անցկացման մեթոդաբանության մշակումը և պլան-ժամանակացույցի կազմումը: Ընդ որում, ուսումնասիրվում են արտադրական և ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողության ակտը, գույքագրման տվյալները, կատարված ստուգումների գծով ակտերը, հաշվապահական հաշվառման գրանցամատյանները, նյութական պատասխանատու անձանց հաշվետվությունները և այլն: Այսինքն՝ բոլոր այն փաստաթղթերը, որոնք հիմք են քրեական և քաղաքացիական գործի հարուցման համար:

Փորձաքննության անցկացման մեթոդաբանության մշակումը, փորձագիտական հետազոտման նպատակին և պլանին համապատասխան կատարվող աշխատանքների, հնարքների և միջոցների որոշակիացումն է:

Միաժամանակ բացի մեթոդաբանության մշակումից կարևորվում է դատահաշվապահական փորձաքննության անցկացման պլան-ժամանակացույցի կազմումը,¹ որն ըստ էության կարող է լինել օրացուցային, արագացված՝ կախված աշխատանքների ծավալից և անձանց քանակից, որոնք ենթարկվել են պատասխանատվության քրեական կամ քաղաքացիական գործերով, ինչպես նաև պայմանավորված այն հանգամանքով, թե քանի փորձագետ-հաշվապահ է զբաղված փորձագիտական հետազոտման գործընթացով:

Դատահաշվապահական փորձաքննության անցկացման հետազոտական փուլը ենթադրում է հետազոտական աշխատանքների կատարում հենց փորձագետի կողմից, ինչպես նաև նրա աշխատանքը համակարգչի հետ, որն ընդգրկում է փորձագետ-հաշվապահի հարցման ձևավորումը տվյալների բազային, համակարգչի որոշման համար խնդիրների առաջադրումը, փորձագետ-հաշվապահի հարցման պահանջի բավարարումը և ստացված տվյալների հետազոտումը:

Դատահաշվապահական փորձաքննության արդյունքների համախմբման և ամփոփման փուլը ներառում է փորձագիտական հետազոտման 2 մակարդակ.

1. փորձաքննության արդյունքների համախմբումը ենթադրում է հետազոտման արդյունքների խմբավորում և համակարգում, փորձաքննության եզրակացության կազմում՝ փորձաքննությանը հայտնաբերված իրավախախտումների կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը համահունչ:
2. Փորձաքննության արդյունքների ամփոփումն իր էությամբ
 - իրավապահ մարմիններին փորձաքննության եզրակացության տրամադրումն է,

¹ Е. Р. Россинской, Н. Д. Эриашвили „ Судебно-бухгалтерская экспертиза” Москва 2000, с. 126-130.

- դատահաշվապահական փորձաքննությամբ արձանագրված իրավախախտումների կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների մշակումն է,
- նախաքննության, դատաքննության ընթացքում փորձագետին հարցաքննումն է:

Դատահաշվապահական փորձաքննությունը ներկայացնում է տնտեսական գործընթացների համակարգված հետազոտում, որի նպատակը իրավահարաբերություններում առաջացած վիճարկելի իրավիճակների իրական պատկերի վերականգնումն է դրանց օրինական կարգավորման համար:

Դատավարական նորմերով նախատեսված են իրավապահ մարմինների կողմից քննվող քրեական և քաղաքացիական գործերի ժամկետները,¹ ի թիվս այլ խնդիրների, փորձաքննության նշանակման վերաբերյալ որոշման ժամանակ նախատեսվում են նաև դրա անցկացման ժամկետները, այսինքն՝ փորձաքննության սկզբի և ավարտման ժամկետները և փորձագետ-հաշվապահի կողմից տրամադրվող եզրակացությունը:

Փորձագիտական հաստատությունները, հանձնարարություն տալով փորձագետին կամ փորձագիտական խմբին, պետք է պարտադիր պահպանեն իրավապահ մարմինների կողմից նշանակված փորձաքննության անցկացման ժամկետները: Ուստի, հաշվի առնելով տվյալ հանգամանքը, փորձագետը կամ փորձագիտական խմբի ղեկավարը կազմում է փորձաքննության անցկացման պլան-ժամանակացույց: Խմբի յուրաքանչյուր անդամ ղեկավարի կողմից իրեն հանձնարարված աշխատանքը բաժանում է բաղկացուցիչ մասերի և որոշում է իր աշխատանքի կատարման վերջնաժամկետը: Այսպես, օրենսդրական ակտերի, նորմատիվաիրավական փաստաթղթերի և հանձնարարված նյութերի գծով տեղեկատվության քննարկման համար փորձագետին անհրաժեշտ է կազմել աշխատանքային պլան և որոշել նշված փաստաթղթերի խմբավորման ժամկետները՝ ըստ բովանդակության, ժամանակագրության և այլ նշանների: Քանի որ հանձնարարված աշխատանքի կատարման ընթացքում (որոնք պարունակում են փորձաքննության անցկացման բոլոր փուլերը) ծախսվող ժամանակի համար մշակված նորմեր գոյություն չունեն, ուստի աշխատանքի կատարման տևողությունը որոշվում է փորձագետի աշխատանքային փորձի հիման վրա: Փորձագիտական հետազոտությունների անցկացման ընթացքում ժամանակի պլանավորման համար անհրաժեշտ է կիրառել այնպիսի գիտական մեթոդներ, որոնց վերաբերում են համակարգված ցանցային պլանավորումն ու կառավարումը, որը թույլ է տալիս ճիշտ կազմակերպել փորձագիտական աշխատանքների կատարումը օպտիմալ ժամկետներում՝ նպաստելով աշխատանքի կատարման նյութական և աշխատանքային ծախսերի նվազմանը: Ցանցային պլանավորումը փոխարինում է այն ժամանակացույցին, որոնք կայուն չեն, և իրավիճակի փոփոխման դեպքում անհրաժեշտ է լինում դրանք նորից կազմել:

Ի տարբերություն ցանցային՝ օրացուցային ժամանակացույցերը չեն օգտագործվում մոտ ժամանակահատվածում, ինչպես աշխատանքների կանխատեսման, այնպես էլ աշխատանքի կատարման ժամկետի հիմնավորման համար:

Դատահաշվապահական փորձաքննության անցկացման ցանցային ժամանակացույցերում ընդգրկված հաջորդական աշխատանքներն ավելի պարզ պատկերացնելու համար ներկայացված է հետևյալ գործողությունների անվանացանկը (տե՛ս աղյուսակ 1-ը):

Ցանցային պլանավորման և կառավարման հիմնական խնդիրներն են պլանավորումը, կանխատեսումը և փորձագիտական քննության անցկացման ժամանակ հնարավոր բարդությունների բացահայտումը մինչև դրանց առաջանալը:

Տեղեկատվական մոդելը, որի օգնությամբ ծրագրվում և վերահսկվում է աշխատանքների կատարումը, ցանցային է, որը հնարավորություն է տալիս կարգավորելու կառավարման գործընթացի հաջորդականությունը:

¹ А. А. Малышко, Л. Д. Соловьева “Судебная бухгалтерия”. Минск “Тетра Система” 2008, с. 206.

**Դատահաշվապահական փորձաքննության անցկացման ցանցային
ժամանակացույցում ընդգրկված աշխատանքները¹**

<i>h/h</i>	<i>Աշխատանքի կատարման բովանդակությունը կամ դեպքերի անվանումը</i>
1	2
1.	Փորձաքննության անցկացման հանձնարարության կազմում
2.	Փորձագետ-հաշվապահի ընտրում
3.	Փորձաքննության անցկացման համար փորձագետ-հաշվապահի կողմից հանձնարարման ուսումնասիրումը
4.	Իրավապահ մարմինների կողմից նշանակված փորձաքննության անցկացման ընդունումը փորձագետ-հաշվապահի կողմից
5.	Փորձաքննության հանձնված նյութերի ամբողջականության և բովանդակության ուսումնասիրում
6.	Փորձաքննության անցկացման մեթոդաբանության մշակում
7.	Փորձաքննության անցկացման պլան-ժամանակացույցի կազմում
8.	Օրենսդրական, նորմատիվաիրավական ակտերի և համապատասխան տեղեկատվության ընտրություն՝ ըստ փորձագիտական հետազոտության օբյեկտների
9.	Փորձագիտական հետազոտությունների կատարումը՝ ըստ ընտրված մեթոդաբանության
10.	Համակարգչային ծրագրավորման հարցման ձևավորում
11.	Համակարգչի որոշմանը դրված հարցերի կազմում
12.	Փորձագետի համակարգչի հարցման բավարարում
13.	Փորձաքննության արդյունքների խմբավորում ու համակարգում
14.	Արդյունքների ընդհանրացում ու փորձաքննության եզրակացության կազմում
15.	Փորձաքննությամբ կայացված իրավախախտումների նախազգուշացման վերաբերյալ առաջարկների մշակում
16.	Փորձաքննությամբ կայացրած եզրահանգումների տրամադրում իրավապահ մարմիններին
17.	Կառավարող մարմին իրավախախտումների նախազգուշացման վերաբերյալ առաջարկների տրամադրում
18.	Նախաքննության ընթացքում փորձագետի հարցաքննում
19.	Դատավարության ժամանակ փորձագետի հարցաքննում

¹ Ցանցային ժամանակացույցի կառուցման սկզբունքի համար հիմք է հանդիսացել փորձագետների խմբի կողմից դրամահաշվապահական փորձաքննության խոշոր քրեական գործի անցկացման օրինակը:

ՂԱՏԱՅԱԾՎԱՊԱՅԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

ԱՆՆԱ ԲԱՅԱԴՅԱՆ, *պ.գ.թ., ՄՊՏՏ դոցենտ*
*ՄՄ ԳԱԱ Մ.Կոտանյանի անվ. փնտրեսա-
գիտության ինստիտուտի գիտաշխատող*

Համառոտագիր

Ցանկացած երկրում, այդ թվում նաև Հայաստանում իր կարևորությամբ առանձնանում են հաշվապահական հաշվառման գործի բարելավմանը նպաստող դատահաշվապահական փորձաքննության կազմակերպումն ու դրա պլանավորումը: Հատկապես վերջիններիս գործընթացում իր ուրույն տեղն ունի փորձագետ-հաշվապահի ընտրությունը, պայմանավորված այն հանգամանքով, որ նա պետք է տիրապետի մասնագիտական հիմնարար գիտելիքների, հաշվապահական և վերահսկողական աշխատանքների գործնական հմտությունների, ինչպես նաև ունենա անհրաժեշտ չափով իրավաբանական պատրաստվածություն:

Աշխատանքում անդրադարձ է կատարված դատահաշվապահական փորձաքննության անցկացման փուլերին և դրանց պարզաբանմանը:

Բանալի բառեր. դատահաշվապահություն, փորձաքննություն, կազմակերպում, պլանավորում, փորձագետ-հաշվապահ, հաշվապահական և վերադասական աշխատանքներ:

ОРГАНИЗАЦИЯ И ПЛАНИРОВАНИЕ ПРОЦЕССА СУДЕБНО-БУХГАЛТЕРСКОЙ ЭКСПЕРТИЗЫ

АННА БАЯДЯН, *к.э.н., доцент АГЭУ*
научный сотрудник Института
экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В любой стране, в том числе в Армении, весьма важным представляется организация и планирование судебно-бухгалтерской экспертизы, содействующей улучшению ведения бухгалтерского учета.

Особое значение в процессе организации и планирования имеет выбор эксперта-бухгалтера, обусловленный тем обстоятельством, что он должен владеть фундаментальными и профессиональными знаниями, практическими навыками по осуществлению бухгалтерских и контрольных работ, а также иметь в необходимой мере юридическую подготовленность.

В работе освещены этапы проведения судебно-бухгалтерской экспертизы и предоставлена их характеристика.

Ключевые слова: судебная бухгалтерия, экспертиза, организация, планирование, эксперт-бухгалтер, бухгалтерские и аналитические работы.

THE PROCEDURES OF ORGANIZING AND PLANNING FORENSIC ACCOUNTING EXAMINATION

ANNA BAYADYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

In any country, including Armenia, organizing and planning forensic accounting examination plays a triggering role in the growth and development of accounting sector.

In this process the choice of a respective forensic accountant plays a key role, since the selected professional needs to be highly qualified with thorough knowledge of accounting, skilled in control of accounting processes, and with the required knowledge of laws and legislative acts.

The article refers to all the stages of forensic accounting and provides required clarifications regarding each stage.

Keywords: Forensic accounting, forensic examination, organization, planning, forensic accountant, accounting and analytical work.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պետական քաղաքականության նպատակներից մեկը գործարար միջավայրի բարելավումն է և այդ ուղղությամբ պետական երաշխիքների տրամադրումը: Այսինքն՝ գործարարության զարգացման համար պետությունը պետք է տրամադրի որոշակի արտոնություններ, որոնց կիրառումը նպաստում է նոր բիզնեսների բացմանը, աշխատատեղերի ավելացմանն ու բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Պետական քաղաքականության կառուցակարգը նպատակ է ունի կարգավորել տնտեսությունը և բացահայտել հնարավորություններ դրա զարգացման համար: Այդ իսկ առումով էլ, պետությունը կիրառվող պետական գործիքներ և լծակներ, որոնք կարգավորում են նաև գործարար միջավայրը: Դրանք են՝ սուբյեկտները, օբյեկտները, գործառույթները, սկզբունքները, մեթոդները և այլ գործիքներ:

Պետության կողմից կիրառվող գործիքները տարբեր նպատակներ են հետապնդում: Կոնկրետ գործարար միջավայրի զարգացման և հետագայում դրա վարկանիշի բարձրացման համար կիրառվում է «կառավարող օբյեկտի ներգործությունը կառավարվող օբյեկտի վրա» գործիքը¹: Վերջինիս կիրառման դեպքում պետությունը ձգտում է տնտեսվարող սուբյեկտից ստանալ առավելագույն եկամուտ՝ հարկերի և պարտադիր այլ վճարների գանձման միջոցով: Իր հերթին տնտեսվարող սուբյեկտը ձգտում է առավելագույն ձևով թաքցնել հարկերի և այլ վճարումների գծով: Հետևաբար, այս շղթայում կարծես թե առաջանում է հարատև պայքար, իսկ ամենակարևոր խնդիրը մնում է դեռևս չլուծված, որի կարգավորման գործում օպտիմալ տարբերակն այն է, որպեսզի պետությունն աջակցի գործարարներին պետական երաշխիքների և այլ արտոնությունների տրամադրման միջոցով՝ բիզնեսի համար հանդես գալով որպես գործընկեր²: Այս համատեքստում առաջանում են նոր ձևաչափի հարաբերություններ, ինչպիսիք են՝ արտադրողական գործարար միջավայր և պետական երաշխիքներ և արտոնություններ տրամադրող պետական մարմին³:

Ներկայացված ձևաչափը որոշակի առումով նման է Ի.Շումպետերի՝ հասարակության մեջ սոցիալական հավասարություն ապահովելու գաղափարին, համաձայն որի սոցիալիստական տնտեսության մեջ առավել բարձր է ապահովվածության զգացումը, ու հասարակության անդամների միջև տնտեսական բարիքներն առավել արդարացի են⁴:

Օրինակ, ռուս հեղինակներից Վ.Բոչարովը, Ի.Ռիսինը, Յու.Տրեչևսկին նույնպես համամիտ են այն գաղափարին, որ պետության կարևոր դերն ու գործառույթն ունեն սոցիալական ուղղվածություն՝ տնտեսության բոլոր մասնակիցների մոտ շահերի պահպանման և սոցիալ-տնտեսական զարգացման միջոցով⁵: Հետևաբար, գտնում ենք, որ գործարարությունը պետք է հանդես գա որպես պետության կողմից կարգավորվող և տնտեսական բարիք ստեղծող ենթահամակարգ: Այսինքն՝ գործարարությունը՝ որպես հասարակության ինստիտուցիոնալ ենթահամակարգ, մեծ դեր է խաղում պետական ռեսուրսների ապահովման գործում, որոնք հետագայում վերաբաշխվում են հասարակության անդամների միջև՝ տնտեսական և սոցիալական արդարության ապահովման համար:

Պետության գործարարության աջակցման և խթանման գործառույթը կարծես չունի հստակ

¹ Трещевский Ю.И., К проблеме определения миссии административно-территориальных образований. Трещевский Ю.И., Литвинов А.А., Регион: системы, экономика, управление. Воронеж, Научная книга. 2009. № 1. стр.36-44.

² Бочаров В.П. Экономическая и управленческая деятельность государства: сферы, уровни, инструментарий. В.П. Бочаров. И.Е. Рисин, Ю.И. Трещевский. – Воронеж: Изд-во Воронежского государственного университета, 2008. – 556 с.

³ Սեփական բնորոշում:

⁴ Шумпетер Й. Капитализм, социализм и демократия. Й. Шумпетер. М.: Экономика, 1995. – 540 с.

⁵ Бочаров В.П. Экономическая и управленческая деятельность государства: сферы, уровни, инструментарий. В.П. Бочаров. И.Е. Рисин, Ю.И. Трещевский. – Воронеж: Изд-во Воронежского государственного университета, 2008. – 556 с.

բնորոշում կամ սահմանում: Սակայն պետք է նկատել, որ վերջինիս նպատակը ձեռներեցության զարգացումն է: Օրինակ՝ Ուետրա դե Սոտո Խեսուսը լայն իմաստով գործարարությունը նույնացնում է մարդկային գործունեության հետ¹:

Ինչևէ, պետական շահերն ու բիզնես շահերը կարծես անհամատեղելի են, պարզապես շատ երկրներում այդ շահերի բախումները խիստ կարգավորվում են պետության ակտիվ միջամտությամբ՝ դատաիրավական, օրենսդրական ենթակառուցվածքների զարգացման միջոցով²: Օրինակ՝ Կ.Սոնինը գտնում է, որ պետական և մասնավոր շահերի բախման և վիճահարույց գործերի առաջացման գլխավոր պատճառը խոշոր բիզնեսն է, ուստի անհրաժեշտ է ապահովել այդ խնդրի կարգավորման գործում տնտեսվարող այլ սուբյեկտների անխափան գործունեությունը³:

Հետևաբար՝ շատ կարևոր է ուղիներ գտնել պետության և բիզնես միջավայրի համագործակցության համար: Իսկ դա տեղի է ունենում միայն պետական աջակցության միջոցով: Այդ առումով Ի.Շումպետերը⁴, Գ.Հայեկը և ուրիշներ⁵ այդ համագործակցությունը տեսնում են նորանուծական բիզնեսի մեջ: Այս տեսանկյունից պետությունն աջակցում է նորանուծություններին և տրամադրում է նպաստավոր պայմաններ դրանց զարգացման համար:

Այստեղ առաջնային խնդիր է դառնում պետության և բիզնեսի համագործակցության կառուցակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Իսկ դա նշանակում է, որ պետությունը պետք է ունենա ակտիվ դերակատարում պետական ձեռնարկատիրական գործունեության ստեղծման հարցում⁶: Այսինքն՝ պետական ակտիվ միջամտությունը տեղի է ունենում պետական աջակցության միջոցով այն դեպքում, երբ բիզնես իրականացնում է տնտեսվարող սուբյեկտների գործարար ակտիվության բարձրացման առաքելությունը, իսկ պետությունը վերականգնում և պահպանում է սոցիալական հաշվեկշռվածությունը:

ՀՀ գործարար միջավայրի վարկանիշի բարձրացման համար պետք է հաշվի առնել ոչ միայն արտաքին գործոնների ազդեցությունը, այլ նաև վերլուծել ներքին գործոնների ազդեցությունը բիզնես միջավայրի վրա, որոնք խոչընդոտում են վերջինիս զարգացումը: Դրանք են՝

- ՀՀ գործարարության և միջազգային հարաբերությունների հետ կապված թերությունները,
- անբավարար ռեսուրսային ապահովվածությունը,
- ենթակառուցվածքների բարձր գներն ու դրանց զարգացման հետ կապված թերությունները,
- օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխությունները,
- ռիսկային գործոնների առկայությունը,
- ֆինանսամիջնորդական աստիճանի ցածր մակարդակը ՀՀ տնտեսությունում,
- գործազրկության բարձր մակարդակն ու մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցածր մակարդակը՝ տարածաշրջանային երկրների հետ համեմատած,
- աղքատության բարձր մակարդակը և այլն:

ՀՀ բարենպաստ բիզնես միջավայր ձևավորելու գործում առկա են բավականին լուրջ հիմնախնդիրներ: Խոսքը վերաբերում է ենթակառուցվածքների թերզարգացմանը, որոնք, թերևս, ամենահիմնական խոչընդոտներն են գործարար ակտիվության աստիճանի բարձրացման գործում: Բացի այդ, ֆորմալ և ոչ ֆորմալ ենթակառուցվածքների բախումն առաջացնում է բազմաթիվ ռիսկեր, որոնք, այսպես ասած, «արտամղում» են ոչ միայն ներքին ներդրումները, այլ նաև՝ օտարերկրյա ներդրումները: Օրինակ, ենթակառուցվածքների միջոցով սահմանվում են «խաղի կանոններ», որոնցով հասարակության անդամները հարաբերվում են միմյանց և պետության հետ: Ֆորմալ ենթակառուցվածքները գրված և մասնակիցների համար համապարտադիր դրույթներն են, մասնավորապես օրենքները, պայմանագրերը, համաձայնագրերը և այլն: Ոչ ֆորմալ ենթակառուցվածքները չգրված օրենքներն են՝ ավանդույթները, բիզնես մշակույթը,

¹ Уэрта де Сото Хесус, Социализм, экономический расчет и предпринимательская функция. Хесус Уэрта де Сото. М., Челябинск, ИРИСЭН, Социум, 2008. – 488 с.

² Дорн Дж. Нормы права и свобода в новых демократических государствах: концепция Джеймса Мэдисона. Дж. Дорн, Вопросы экономики. 2003. № 6. стр.. 22-37.

³ Сонин К. Институциональная теория бесконечного передела. К. Сонин, Вопросы экономики. 2005. № 7. стр. 4-17.

⁴ Шумпетер Й. Теория экономического развития. Капитализм, социализм и демократия. Й. Шумпетер. М.: Эксмо, 2008. – 864 с.

⁵ Хайек Ф. Познание, конкуренция и свобода. СПб., Пневма, 2003. – 228с.

⁶ Шинкаренко П.В. Экономическая политика: стратегия и тактика. Модернизация экономики и государство. П. Шинкаренко, Проблемы теории и практики управления. 2006. № 5. стр. 31-37.

ընտանեկան, բարեկամական և ընկերական հարաբերությունները:

Ելնելով այդ հանգամանքից՝ անցումային շրջանի երկրները կարելի է բաժանել երեք խոշոր խմբերի.

1. երկրներ, որոնք այդ ընթացքում կարողացան չփլուզել տոտալիտար ռեժիմում առկա ֆորմալ ենթակառուցվածքների համակարգը՝ հարմարեցնելով այն շուկայական հարաբերություններին (Չինաստանը, Բելառուսը, Ղազախստանը):
2. Արևելյան Եվրոպայի և Բալթյան երկրներ, որոնք Եվրամիության օգնությամբ կարողացան շատ արագ վերափոխել իրենց ենթակառուցվածքները շուկայական տնտեսություններին համապատասխան:
3. Երկրներ, որոնք դեռ «տնտեսական վակուումի» մեջ են գտնվում (Ուկրաինա, Մոլդովա, Բուլղարիա, Ռումինիա, Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան): Մասնավորապես նախկին խորհրդային կառուցակարգը փլուզելով՝ անցում չկատարվեց նոր, ազատական հարաբերություններին, որտեղ կձևավորվեին մրցակցային հավասար պայմաններ, օրենսդրական, լեգիտիմ կառավարման մարմիններ, որոնք արդյունավետ կերպով նոր ընթացք կհաղորդեին տնտեսական հարաբերությունների ձևավորմանն ու հետագա զարգացմանը:

«Տնտեսական վակուումի» մեջ գտնվող երկրներում ենթակառուցվածքային համակարգերը փլուզվեցին, իսկ նորերը սկսեցին հաստատվել շատ քառսային: Արդյունքում գոյացել էր մի դատարկություն, որը լցվեց ոչ ֆորմալ՝ «չգրված օրենքներով»: Ընդ որում, դրանք հասարակության մեջ գերակշռում էին «գրված օրենքների» նկատմամբ, և պետությունը ոչինչ չէր կարողանում կամ չէր ուզում անել այդ ուղղությամբ:

Հետևաբար՝ հարց է առաջանում. «Արդյո՞ք ՀՀ տնտեսությունում կհաջողվի ձևավորել այնպիսի ֆորմալ ինստիտուտներ, այնպիսի խաղի կանոններ, որոնք հավասար կլինեն բոլորի համար»: Պետք է նշել, որ Հայաստանը, շնորհիվ խոշոր Սփյուռքի առկայության, ունի բավական լուրջ տրանսֆերտների հոսք: Եվ ի վերջո, Հայաստանում շուկան փոքր է, և հայ գործարարի վարկանիշը բարձրացնելու դեպքում պետք է ձգտի դուրս գալ ռուսական և եվրոպական շուկա: Ի տարբերություն ռուսական շուկայի՝ եվրոպական շուկան գործում է առավել ֆորմալ դաշտում և ցանկանում է տեսնել ՀՀ-ը՝ որպես կանխատեսելի երկրի գործընկեր: Իսկ դա նշանակում է, որ ֆորմալ ենթակառուցվածքների վրա ձևավորված քաղաքատնտեսական խմբերը կգերադասեն անցնել ֆորմալ հարաբերությունների դաշտ գոնե միայն նրա համար, որ կարողանան մուտք գործել նաև արտաքին շուկա: Չկա բարեփոխումների այլ տարբերակ, բացի նրանից, որ պետք է առաջանա այսօրվանից ավելի մեծ տնտեսական շահ:

Այսպիսով, նպաստավոր գործարար միջավայրի ձևավորումը ստեղծում է բոլոր անհրաժեշտ նախապայմանները պետության դերի բարձրացման և գործառնությունների կատարման համար: Դրանք խթանում են պետություն-գործարարություն համագործակցության խորացումը և յուրաքանչյուր տարրի վարկանիշի բարձրացումը: Հետևաբար՝ պետության հիմնական առանձնահատկություններից կարելի է նշել այն, որ վերջինս ունի ուղղակի և անմիջական ազդեցություն տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը կարգավորելու գործում¹, սուվերեն կարգով որոշումներ ընդունելու բացառիկ իրավունք ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրանից դուրս, օրենքների և իրավական ակտերի ընդունման և դրանց իրագործման արդյունքում: Ինչ վերաբերում է ՀՀ տնտեսության զարգացմանը, այն հնարավոր է իրականացնել այն դեպքում, եթե հաջողվի ձևավորել այնպիսի ֆորմալ ինստիտուտներ, այնպիսի խաղի կանոններ, որոնք հավասար կլինեն բոլոր տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ:

¹ Краткий политический словарь. Изд. шестое, дополненное. –М.: Политиздат, 1989. стр. 120.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ գործարարութեան ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՆԱՀԻՏ ԴՐԱՄԲՅԱՆ, *հայցորդ*

*ՄԳԱԱ Մ.Կոտանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ*

Համառոտագիր

Նպաստավոր գործարար միջավայրի ձևավորումը ստեղծում է բոլոր անհրաժեշտ նախապայմանները պետության դերի բարձրացման և գործառնությունների կատարման համար: Դրանք խթանում են պետություն-գործարարություն համագործակցության խորացումը: Հետևաբար՝ պետության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ վերջինս ունի ուղղակի և անմիջական ազդեցություն տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը կարգավորելու գործում: Ինչ վերաբերում է ՀՀ տնտեսության զարգացմանը, այն հնարավոր է իրականացնել այն դեպքում, եթե հաջողվի ձևավորել այնպիսի ֆորմալ ինստիտուտներ, այնպիսի խաղի կանոններ, որոնք հավասար կլինեն բոլոր տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ:

Բանալի բառեր. պետական քաղաքականություն, գործարար միջավայր, ենթակառուցվածք, ռեսուրսային ապահովվածություն, սուվերեն իրավունք, գործազրկություն, ֆինանսամիջնորդական աստիճան:

СРАВНИТЕЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА МИССИИ ГОСУДАРСТВА И БИЗНЕСА

АНАИТ ДРАМБЯН, *соискатель*

Институт экономики имени М. Котаяна НАН РА

Аннотация

Формирование благоприятной бизнес-среды создает все необходимые предпосылки для повышения роли государства и выполнения его основных функций. Они содействуют углублению сотрудничества между государством и бизнесом и повышению рейтинга каждого из них. Следовательно, одним из основных признаков государства является то, что оно оказывает прямое и непосредственное влияние на регулирование деятельности экономических агентов. Что касается развития экономики РА, то оно станет возможным только при формировании формальных институтов и правил игры, создающих равные условия для всех хозяйствующих субъектов.

Ключевые слова: государственная политика, бизнес-среда, инфраструктура, обеспеченность ресурсами, суверенное право, безработица, категории финансовых посредников.

THE COMPARATIVE OVERVIEW OF THE MISSION OF THE GOVERNMENT AND BUSINESS

ANAHIT DRAMBYAN, *Ph.D. Student*

*M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

Creating favorable business environment sets all the necessary preconditions in order to increase the role of the state and make the operations more sophisticated. This promotes and strengthens cooperation of the government with the private business. Hence, one of the specifications of the government that is has direct and immediate impact on the regulating activities of the private companies (legal entities). Regarding the development of economy of the Republic of Armenia, the author states that it could be only ensured if such formal institutions are established, and rules of the game are set that would be equal for all legal entities.

Keywords: Public policy, business climate, infrastructure, resource security, sovereign right, unemployment, level of financial-intermediary.

ԵՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՄԵԾԱՑՄԱՆԸ ՈՒՂՎԱԾ ԱՈԱՋՆԱՅԵՐԹ ԶԱՅՆԵՐԸ

Ինտեգրացիոն գործընթացները իրականացնելիս պետք է ձևավորել հստակ հայտանիշներ: Այս կամ այն ինտեգրացիոն միավորում մտնելու կամ համագործակցելու ժամանակ անհրաժեշտ է գնահատել ինչքանով է այդ քայլը մեծացնում երկրի անվտանգության աստիճանը, մասնավորապես նրա տնտեսական անվտանգության աստիճանը, ինչքանով է ինտեգրացիան նպաստում երկրի տնտեսական ներուժի մեծացմանը՝ ՀՆԱ-ի աճին, նրա կառուցվածքի բարելավմանը, արտահանման աճին, առևտրային հաշվեկշռի պակասուրդի հիմնախնդրի և, իհարկե, զբաղվածության կարևորագույն հիմնախնդրի լուծմանը:

ԵՏՄ երկրներում տնտեսության անորոշության միջակայքի կտրուկ աճի պայմաններում տնտեսության կայունության հավանականությունը կարող է էապես բարձրանալ հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետ իրականացվող համաձայնեցված քաղաքականությամբ: Եվրասիական տնտեսական միության կարևոր խնդիրը ԵՏՄ անդամ երկրների տնտեսությունների ներուժի ավելացումն է:

«ՌԴ արդյունաբերական քաղաքականության մասին»¹ օրենքը կարող է նպաստել այն բեկումնային ներուժի ստեղծմանը, որը թույլ կտա մոտ ապագայում հասնել արմատական փոփոխության երկարաժամկետ դիմամիկ տնտեսական աճի ապահովման հնարավորությունների հարցում՝ հիմք ունենալով մարդկային և ինովացիոն ներուժը, հինգերորդ տեխնոլոգիական կարգի վերականգնման և վեցերորդ տեխնոլոգիական կարգին անցնելու համար պայմանների ստեղծման նպատակով: Սա կարող է նաև հիմք ծառայել, որպեսզի Ռուսաստանը ներկայանա ոչ թե միայն որպես խոշոր տարածաշրջանային երկիր, այլ պետություն՝ մեծ ներուժով, առաջին հերթին՝ տնտեսության այն ոլորտներում, որոնք կապահովեն նոր ինդուստրիալացումը: Ռուսաստանը մի շարք նորարարական ոլորտների գծով զբաղեցնում է առաջատար դիրքեր աշխարհում, բայց առայժմ դա համընդհանուր բնույթ չունի: Ռուսաստանն, անկասկած, կարող է էականորեն հզորացնել ինովացիոն հատվածը տնտեսության շատ ոլորտներում և այս առումով միավորիչ դեր կարող է խաղալ նաև Եվրասիական տնտեսական միության երկրների համար: Դա անհրաժեշտ է Ռուսաստանին, ինչպես նաև ԵՏՄ բոլոր անդամներին, քանի որ փոքր տնտեսություն ունեցող երկրները, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, սովորաբար չեն կարող արժանի տեղ գրավել արդի ինդուստրիալացման ոլորտում՝ առանց տարողունակ շուկայի, համաձայնեցված տնտեսական քաղաքականության և ֆինանսական ու հումքային ներուժի համատեղման:

Նշենք, որ գոյություն ունի առասպել այն մասին, թե զարգացած երկրների հետ ինտեգրման պարագայում կարելի է շատ արագ դառնալ ինովացիոն երկիր, բայց եթե համագործակցության այս հետազոծող չի համապատասխանում երկրի տնտեսական զարգացման իրական հետազոծին, ապա ակնկալվող արդյունքը չի ստացվի: Տնտեսական զարգացման հետազոծն առաջին հերթին որոշում են պետության տնտեսական շահերը, այլ ոչ թե այս կամ այն համաձայնագրերը:

Հայաստանի Եվրասիական տնտեսական միությանը անդամակցությունը ապահովում է նոր իրական հնարավորություններ տնտեսության զարգացման և կառուցվածքային փոփոխությունների համար: Եվրասիական տնտեսական միությունում բոլոր չորս ազատությունների՝ ապրանքների, ծառայությունների, կապիտալի և հատկապես աշխատանքային ռեսուրսների տեղաշարժը պետք է գործի առանց սահմանափակումների: Այս դրույթը հիմնարար է և որոշակի սահմանափակումներ ունենալու են ժամանակավոր բնույթ: Բոլոր տարիֆային սահմանափակումները Եվրասիական տնտեսական միությունում պետք է չեղյալ հայտարարվեն:

Չնայած Ռուսաստան արտահանման հետ կապված որոշակի դժվարությունների, հիմնական

¹ <http://www.rg.ru/2015/01/12/promyshlennost-dok.html>

նուն պայմանավորված Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներով, ինչը նաև պայմանավորված է դեռևս չհամաձայնեցված դրամավարկային քաղաքականությամբ, Հայաստանի արտաքին տնտեսական կապերի իրական վիճակը և ուղղվածությունը ուղղակի ցույց են տալիս տնտեսության զարգացման հետագիծը՝

- պատրաստի արտադրանքի գերակշիռ մասը արտահանվում է Ռուսաստան,
- տրանսֆերտների մոտ 80%-ը ստացվում են Ռուսաստանից ,
- էներգակիրների գերակշիռ մասը ներ է մուծվում Հայաստան Ռուսաստանի Դաշնությունից (գազ 85%, ատոմային վառելիք 100%),
- արտասահմանյան ուղղակի ներդրումների մոտ 40%-ը իրականացրել են ռուսական կազմակերպությունները:

Բացի այդ, այստեղ կարևոր է ոչ միայն զուտ տնտեսական աճը, այլ նաև զարգացման սցենարը: Եթե ինտեգրացիան հանգեցնում է հիմնականում միայն ներքին շուկայի աշխուժացմանը՝ ի հաշիվ վարկերի, դրամաշնորհների և դրամական փոխանցումների, ապա հարկ կլինի երկար սպասել ՀՆԱ-ի էական աճի և արդի ինովացիոն կառուցվածքի, դրա հավանականությունը շատ փոքր է: Իսկ եթե ինտեգրացիայի միջոցով էապես զարգացվի արտահանումը, ընդ որում՝ հնարավորինս բարձր ավելացված արժեք ունեցող արտադրանքինը (այդ թվում՝ ինովացիոն), ապա դա, իհարկե, կայուն կերպով կնպաստի որակապես նոր տնտեսական աճի կայացմանը:

Անհարժեշտ է ճշտել հետևյալ առանցքային հիմնահարցը. ինչ սցենարով պետք է զարգանա ՀՀ տնտեսությունը: Առաջին տարբերակը ենթադրում է առևտրային հաշվեկշռի հետ կապված խնդիրների լուծում, տեղական արտադրության զարգացում, գործազրկության կրճատում և սոցիալական ոլորտի բարելավում: Երկրորդ սցենարը ուղղված է հիմնականում միայն ներքին շուկայի սահմանափակ թվով ոլորտների զարգացմանը՝ շինարարության, անշարժ գույքի շուկայի, մանրածախ առևտրի, հիմնականում վարկերի, գրանտների և տրանսֆերտների հաշվին: Հայաստանի ինտեգրացիան Եվրասիական տնտեսական միության երկրների հետ հնարավորություն է տալիս զարգանալ հենց առաջին սցենարով:

Հիմնականում ներքին շուկայի և ծառայությունների զարգացման պայմաններում Հայաստանին ուղղակի անհարժեշտ են արտահանման և տեղական արտադրության զարգացման հնարավորությունների էական ընդլայնում: Ինչքանով այդ հնարավորությունը կիրառործվի կախված է ինչպես ներքին խնդիրների լուծումից, այնպես էլ ԵՏՄ երկրներում համաձայնեցված տնտեսական քաղաքականություն վարելուց:

Մինչև այժմ Հայաստանը զարգանում էր այնպիսի սցենարով, որը հիմնականում ենթադրում է ներքին պահանջարկի աճ տրանսֆերտների, վարկերի և գրանտների աճի հաշվին: Ակնհայտ է տնտեսության ոլորտների անհավասարակշիռ վիճակը, որտեղ գերակշռում են ներքին շուկան սպասարկող ոլորտներ: Շինարարության, առևտրի, տրանսպորտի և ծառայության ոլորտը ՀՆԱ-ում ունեն գերակշիռ դեր: ՀՀ տնտեսության կառուցվածքը ուղղակի կախված է տրանսֆերտներից և վարկերից, որը մի կողմից խթանում է ներմուծվող ապրանքների սպառումը, մյուս կողմից ապահովում է գերազանցապես այնպիսի ոլորտների աճն, ինչպիսիք են ծառայությունների ոլորտը, տրանսպորտը, շինարարությունը և առևտուրը: Տրանսֆերտների և վարկերի կրճատման պարագայում, ինչպես նաև փոխարժեքի կտրուկ փոփոխության պարագայում առաջանում է այդ ոլորտների զգալի կրճատման վտանգ: Առանց Եվրասիական տնտեսական միության ներուժը արդյունավետ օգտագործելու Հայաստանը իրականում ստիպված է հետևել այս բավականին ռիսկային զարգացման սցենարին:

Զարգացած փոքր երկրներում արտահանման և ՀՆԱ հարաբերակցությունը ցածր չէ 30%-ից, քանի որ ակնհայտ է, որ շուկան այնտեղ մեծ չէ, և արտահանումը դառնում է զարգացման վճռական գործոն: Արտահանման զգալի աճն առաջին հերթին հնարավոր է զարգացմամբ և նպատակներով մոտ ԵՏՄ երկրներում, որտեղ ակնհայտ է դրա գերակայությունը որպես համապետական խնդիր: Այս գիտակցումն էլ, բնականաբար, ենթադրում է նրանց տնտեսությունների կոոպերացիա և տնտեսական ծրագրերի կոորդինացում:

Արտահանման աճը հավանական է այն ոլորտներում և այն երկրներում, որտեղ կա տվյալ ապրանքի պահանջարկը: Այն հնարավոր մակարդակի չի հասնում նաև այն պատճառով, որ

առայժմ բավարար չափով համաձայնեցված չէ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը, մասնավորապես՝ պայմանավորված ԵՏՄ-ում ազգային արժույթների փոխարժեքների չհամաձայնեցվածությամբ: Հայաստանի համար արտահանման ներուժ ունեն գյուղատնտեսական և գինու-կոնյակի արտադրանքները, դեղագործությունը, թեթև և քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետաղների խոր վերամշակումը, թանկարժեք քարերի և մետաղների մշակումը: Կարևոր է նաև պաշտպանության, նախնախնությունների արտադրությունում սեփական տեղը գտնելը: Մեծ նշանակություն ունի կոոպերացիան այն ձեռնարկությունների հետ, որոնց հետ համագործակցությունը ԵՏՄ շրջանակներում շահավետ է:

ԵՏՄ պայմանագրի 4-րդ հոդվածում՝ «Միության հիմնական նպատակները»¹, նշված է, որ միության հիմնական նպատակներից է միության անդամների համար տնտեսության կայուն զարգացման պայմանների ստեղծումը և ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացումը, կոոպերացիան ու մրցունակության բարձրացումը: Ելնելով նաև այդ հոդվածի պահանջներից՝ անհրաժեշտ է ճշգրտել և համաձայնեցնել ԵՏՄ երկրների տնտեսական քաղաքականության գերակայությունները, հստակ որոշել նրա նպատակները, ձևավորել տնտեսության զարգացման նոր մոդելը, կանխատեսել ակնկալվող արդյունքները: Չափազանց կարևոր է տնտեսական քաղաքականության, հատկապես դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը տնտեսական անվտանգության խախտման արձանագրվող ազդակներին՝ ՀՆԱ-ի անկմանը, առևտրային հաշվեկշռի պակասուրդի մեծացմանը, գնաճի և գործազրկության աճին: Արտաքին բացասական ազդեցություններին դիմակայելու ունակությունը տնտեսության զարգացման կարևոր պայման է:

ՌԴ հակաճգնաժամային ծրագիրը² մի շարք կարևոր ուղղություններ ունի, մասնավորապես՝ ոչ հունքային, հատկապես բարձր տեխնոլոգիական ապրանքների ներմուծման փոխարինմանը և արտահանմանն աջակցությունը, փոքր և միջին բիզնեսի, պաշտպանության պատվերների իրականացման խրախուսումը, քաղաքացիների խոցելի հատվածին փոխհատուցումը, բյուջետային ծախսերի օպտիմալացումը և բանկային համակարգի կայունության բարձրացումը: ԵՏՄ երկրները պետք է համաձայնեցնեն հակաճգնաժամային ծրագրերը և առաջնահերթ տնտեսական խնդիրների լուծման համատեղ միջոցներ մշակեն: Միասնական տնտեսական տարածքում կոոպերացիան պարզապես անհրաժեշտ է նաև հակաճգնաժամային միջոցառումների առումով, հատկապես բարձրտեխնոլոգիական ապրանքների, պաշտպանության արտադրության ոլորտներում, հունքի վերամշակման խնդիրները լուծելիս: Հայաստանում առայժմ մշակված չէ հատուկ հակաճգնաժամային ծրագիր, բայց ձեռնարկվում են որոշ հակաճգնաժամային միջոցառումներ: Դրանցից նշենք «Շահութահարկի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ մտցնելու մասին» օրենքը³: Լրացուցիչ հարկային խթաններ են տրամադրելու ռեզիդենտ հարկատուներին, որոնք զբաղվում են արտահանմամբ Հայաստանի տարածքից: Ծրագրվում է 10 անգամ (ներկայիս 20-ից մինչև 2%-ի) իջեցնել շահութահարկը տնտեսվարող այն սուբյեկտների համար, որոնք տարեկան 50 մլրդ դրամի (մոտ \$105 մլն) ապրանքներ են արտահանում, բացի լեռնահանքային ձեռնարկություններից և մինչև 5% այն արտահանողների համար, որոնք արտահանում են 40 մլրդ դրամ: Նպատակահարմար է իջեցնել նշված շեմերը՝ էապես ընդլայնելով արտոնություն ստացող արտահանման ոլորտները: Արդյունավետ է մշակել հատուկ հակաճգնաժամային ծրագիր՝ համաձայնեցված ՌԴ հակաճգնաժամային ծրագրի հետ, առավել ևս ԵՏՄ երկրների տնտեսությունները սերտորեն փոխկապակցված են և գտնվում են միասնական տնտեսական տարածքում:

Կարևոր է, որ Հայաստանը դառնում է Եվրասիական տնտեսական միության անդամ միության ձևավորման սկզբում: Տվյալ քայլը էապես մեծացնում է ՀՀ տնտեսության աճի հնարավորությունը: Այս քայլը իր մեջ ունի արտահանումը մեծացնելու ներուժ՝ դրույթների և քվոտաների վերացմամբ, էներգակիրների գների իջեցումով և ԵՏՄ-ում պետական պատվերների մրցույթների մասնակցությամբ: Սակայն անհրաժեշտ է օրենքների և կանոնակարգերի համաձայնեցումը տնտեսության առանցքային ոլորտներում, ինչն անշուշտ ուժեղացնում է ներդրողների վստահությունը: Հեռա-

¹ <http://economy.gov.ru/minec/about/structure/depSNG/agreement-eurasian-economic-union>

² <http://government.ru/media/files/7QoLbdOVNPc.pdf>

³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96152>

նկարում տնտեսական ինտեգրումն համաձայնեցված քայլերի իրականացման դեպքում կրեթի աշխատավարձի և զբաղվածության աճին, սոցիալական ստանդարտ-ների բարելավմանը: Առաջանում է նաև Եվրասիական տնտեսական միության տարածքում պետպատվերների մրցույթներին հայկական կազմակերպությունների մասնակցության հնարավորություն:

Ընդգծենք, որ Հայաստանի Հանրապետության ինտեգրացիան Եվրասիական տնտեսական միության հետ ունի կառուցվածքային առավելություններ, որոնք կարող են ամրացնել հանրապետության տնտեսական դիրքերը և մեծացնել նրա կայուն զարգացման հնարավորությունները: Ինչքանով հնարավոր կլինի իրականացնել այս ներուժը կախված է առանցքային հիմնախնդիրներից՝ հակաճգնաժամային ծրագրի մշակելուց, համաձայնեցված հարկաբյուջետային, դրամավարկային, հատկապես արժույթային քաղաքականություն ձևավորելու հետ: Մեծ նշանակություն ունի համաձայնեցված հակակոռուպցիան միջոցառումների ձևավորումը և իրականացումը:

Արտահանողներին և, առաջին հերթին՝ ներքին շուկայում ներմուծմանը փոխարինող արտադրությանը պետք է տրվեն պետական երաշխիքներ, որոնք, ի տարբերություն բյուջետային վարկերի, չեն ենթադրում առանց այդ էլ սահմանափակ պետական միջոցների ծախսում: Միևնույն ժամանակ, գերակայություն պետք է ունենա ոչ թե հումքային արդյունաբերությունն իր էքստենսիվ աճով, այլ այն ձեռնարկությունները, որոնք հենվում են հումքի վերամշակման խոր արդիականացման վրա՝ ավելացված արժեքի էական ավելացման նպատակով:

Նպատակահարմար է պետական երաշխիքներն առաջին հերթին տրամադրել արտադրության այն ոլորտներին, որոնցում՝ օգտագործվում են տեղական հումքը, վերամշակումը հնարավոր է տեղում, կա կայուն պահանջարկ տեղական կամ համաշխարհային շուկայում և, հետևաբար, բարձր է տվյալ արտադրանքի արտահանման հնարավորությունը: Երաշխիքներ տրամադրելիս պետք է խրախուսել ընկերությունների վերակազմավորումը բաց ընկերությունների: Հակառակ պարագայում փոքրանում է էական ներդրումների հավանականությունը:

Անհրաժեշտ է արագացնել հարկային բարեփոխումները ինչպես հարկերի տոկոսադրույքների ճշտորոման, այնպես էլ վարչարարության առումով, ինչը թույլ կտա աշխուժացնել տնտեսությունը և կխթանի արտահանման դիվերսիֆիկացիան: Ավելացված արժեքի հարկը Հայաստանում (20%) ավելի բարձր է, քան ՌԴ-ում (18 և 10%) և Ղազախստանում (12%), ընդ որում՝ ավելի ցածր տոկոսադրույք չի կիրառվում: Նպատակահարմար է ԱԱՀ-ն նվազեցնել առնվազն 20-ից մինչև 18%-ի, իսկ որոշ ապրանքների համար սահմանել նույնիսկ ավելի ցածր: Հաշվի առնելով, որ այս քայլերը պետք է խթանեն տնտեսությունը, բյուջետային կորուստներ (հատկապես երկարաժամկետ առումով) չեն սպասվում: Անուղղակի հարկի իջեցումը, զսպելով անկումը, խթանում է տնտեսությունը, ինչպես նաև հակազդում է գնաճին: Նպատակահարմար է նաև ԵՏՄ երկրների մյուս հարկային տոկոսադրույքների համաձայնեցումը: Հայաստանում չեն կիրառվում նաև հումքի արտահանման մաքսատուրքերը:

Բյուջետային ծախսերի օպտիմալացումը, հատկապես ճգնաժամային իրավիճակում, չափազանց կարևոր է: Պետական բյուջեի ծախսերի կրճատումը, օրինակ, օտարերկրյա սարքավորումների և մեքենաների ձեռքբերման վրա, և նվազագույն աշխատավարձի ու թոշակի բարձրացումը նպաստում են ոչ միայն սոցիալական խնդիրների լուծմանը: Խթանվում է նաև հայրենական արտադրանքի ներքին պահանջարկը՝ հավելյալ ազդակ հաղորդելով հայրենական արտադրության, հատկապես գյուղատնտեսության զարգացմանը:

Բնակչության անապահով խավերի եկամուտների աճը՝ ի հաշիվ պետական բյուջեում առաջարկվող փոփոխությունների, հանգեցնում է առաջին հերթին հանրապետությունում արտադրվող արտադրանքի պահանջարկի աճին և ներկրվող արտադրանքի հանդեպ պահանջարկի համապատասխան կրճատմանը: Այս խնդիրն առաջին անհրաժեշտության արտադրանքների սպառման բաժինը էապես բարձր է: Հետևաբար, թոշակների և նպաստների բարձրացումը, սոցիալական խնդիրներ լուծելուց բացի, նպաստավոր է նաև տեղական արտադրության համար:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրում մի շարք բաժիններ առանցքային նշանակություն ունեն, մասնավորապես XIII «Մակրոտնտեսական քաղաքականություն» և XIV «Արժույթային քաղաքականություն» բաժինները: Այդ բաժինները սահմանում են, որ՝ 1) բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը, 2) պետական պարտքը՝ ՀՆԱ-ի 50%-ը,

3) գնաճը չպետք է գերազանցի 5 տոկոսային կետով այն ԵՏՄ երկրի ցուցանիշը, որտեղ արձանագրվել է ամենացածր գնաճը և 4) անհրաժեշտ է արտարժույթային քաղաքականության համաձայնեցում և փուլային մոտեցում: Եվրամիության հայտանիշները այդ առումով հետևյալն են՝ 1) բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը, 2) պետական պարտքը՝ ՀՆԱ-ի 60%-ը, 3) գնաճը չպետք է գերազանցի 1.5 տոկոսային կետով ԵՄ այն երեք երկրների ցուցանիշը, որոնց մոտ այն լավագույնն է և 4) ազգային փոխարժեքը էապես չպետք է տարբերվի եվրոյից և անհրաժեշտ է, որ գտնվի եվրոյի նկատմամբ նվազագույն սահմաններում: Երկրորդ կետի ԵՏՄ պահանջը նույնիսկ ավելի խիստ է: Սակայն, եթե հաշվի առնենք, որ ԵՏՄ երկրներում ամենացածր գնաճը արձանագրվում է 5-7% սահմաններում, ապա մոտ 12% գնաճի թույլատրելիությունը փաստացի առ ոչինչ է դարձնում երրորդ կետի պահանջը, իսկ փոխարժեքի վերաբերյալ կոնկրետացումը բացակայում է: ԵՏՄ-ում երրորդ կետի ճշգրտումը և չորրորդի առաջնահերթ կոնկրետացումը առանցքային դեր ունի ճգնաժամային իրավիճակում:

Այլ երկրների արժույթներից կախվածության նվազեցնելը, ազգային արժույթի դերի և ոսկու պաշարների նշանակալիության բարձրացումը արտաքին տնտեսական հաշվարկներում արդարացված են: Բայց դա արդյունք չի տա, եթե չիրականացվի համաձայնեցված դրամավարկային քաղաքականություն: Անհրաժեշտ է փուլային քայլերով հասնել նրան, որպեսզի Եվրասիական տնտեսական միության երկրներում գնաճը 5%-ից բարձր չլինի: Իսկ ազգային արժույթների փոխարժեքների նվազումը ԱՄՆ-ի և Եվրամիության արժույթների համեմատ պետք է համապատասխանի գնաճին: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ապահովել փողայնացման աճը և ունենալ վերաֆինանսավորման համաձայնեցված տոկոսադրույք:

Ռուսաստանում փողայնացման մակարդակը մոտ 50% է, ԵՏՄ մյուս երկրներում նույնիսկ ցածր է 40%-ից, այն դեպքում, երբ Եվրամիության երկրներում այդ ցուցանիշը 100%-ի կարգի է: Չինաստանում և Ասիայի արագ զարգացող երկրներում դրամայնացումը զգալիորեն բարձր է 100%-ից: Փողայնացման մակարդակը փուլ առ փուլ պետք է մոտենա 70%-ի սահմանին, որը մեր կողմից գնահատվել է որպես կրիտիկական: Հակառակ դեպքում պարբերաբար առաջ կգան որոշակի դժվարություններ տնտեսության կայուն աճի և դրա դիվերսիֆիկացման հնարավորությունների հետ կապված:

Եթե հաջորդական քայլերի միջոցով ԵՏՄ երկրների միջև ապրանքաշրջանառությունը իրականացվի ազգային արժույթներով, ապա, մեր գնահատականներով, ԵՏՄ երկրներում փողայնացման մակարդակն էապես կբարձրանա: Հարկ է նախ անցնել ԵՏՄ ազգային արժույթների փոխադարձ կոնվերտացիային, այնուհետև փոխադարձ հաշվարկներում փուլ առ փուլ անցում կատարել ԵՏՄ երկրների արժույթներին:

Ճգնաժամային իրավիճակում կարևոր նշանակություն է ստանում նաև կոռուպցիայի մակարդակը ԵՏՄ երկրներում: Transparency International-ի դասակարգմամբ¹ կոռուպցիայի մակարդակը ԵՏՄ երկրներում չի կարելի բավարար համարել, վիճակը համեմատաբար բարվոք է գնահատվում Հայաստանում, թեև այստեղ էլ կոռուպցիայի ընկալման ինդեքսը դեռ բավարար չէ: Կոռուպցիայի ընկալման առավելագույն հնարավոր ինդեքսի 100 միավորի պարագայում Հայաստանում այդ ինդեքսի մեծությունը հավասար է 37-ի, ԵՏՄ մյուս երկրներում՝ 31 և ավելի ցածր: Այդ ինդեքսի կրիտիկական շեմին՝ 50 միավորին արագ հասնելը պետք է ուղեկցի դառնա ԵՏՄ երկրների համար:

Անհրաժեշտ է մշակել կոռուպցիայի հակազդման համաձայնեցված քայլեր, այստեղ մեծ դեր կարող են խաղալ նաև Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 69-րդ՝ «Թափանցիկություն» և 22-րդ՝ «Արտաքին աուդիտ» հոդվածները:

Անարդյունավետությունը, մանավանդ կոռուպցիոն դրսևորումները սկզբից ևեթ պետք է հանգեցվեն նվազագույնի: Դա շատ ավելի արդյունավետ է, քան կամա թե ակամա կոռուպցիոն ռիսկեր թույլ տալը և դրանից հետո միայն դրանք վերահսկելն ու չարաշահումները բացահայտելը: ԵՏՄ երկրներում վաղուց հասունացել է հակակոռուպցիոն փորձաքննության, հատկապես տնտեսական գործունեությունը կարգավորող օրենքների անհրաժեշտությունը:

¹ <http://www.transparency.org/cpi2014/results>

ԵՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԹԻ ՄԵԾԱՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ՔԱՅԼԵՐԸ

ԱՇՈՏ ԹԱՎԱԴՅԱՆ, *դ.գ.դ., պրոֆեսոր*

*ՄԳԱԱ Մ.Կոտանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

Համառոտագիր

Հոդվածում հիմնավորվում են ԵՏՄ երկրների տնտեսության ներուժի մեծացման տեսանկյունից հակաճգնաժամային քայլերի համաձայնեցման ուղիները: Հայաստանի Եվրասիական տնտեսական միության անդամակցությունը ստեղծում է նոր իրական հնարավորություններ տնտեսության զարգացման և կառուցվածքային փոփոխությունների համար: Նշվում է, որ Հայաստանի արտաքին տնտեսական կապերի իրական վիճակը և ուղղվածությունը ուղղակի ցույց են տալիս տնտեսության զարգացման հետագիծը: Ներկայացվում են ԵՏՄ նպատակների և գերակայությունների իրականացման համար ԵՏՄ պայմանագրի առանցքային դեր ունեցող հոդվածները և նրանց ճշգրտման հնարավորությունները:

Բանալի բառեր. ԵՏՄ սրայնանագիր, նպատակներ և զեղակայություններ, զարգացման հեղուկի, տնտեսության ներուժ, արտադրանք, գնաճ, փոխարժեք, առանցքային բաժիններ:

ПЕРВООЧЕРЕДНЫЕ ШАГИ ПО ПОВЫШЕНИЮ ЭКОНОМИЧЕСКОГО ПОТЕНЦИАЛА СТРАН ЕАЭС

АШОТ ТАВАДЯН, *д.э.н., профессор*

*главный научный сотрудник Института
экономики им. М. Котаяна НАН РА*

Аннотация

В статье обосновываются пути согласования антикризисных шагов с точки зрения повышения экономического потенциала стран ЕАЭС. Присоединение Армении к Евразийскому экономическому союзу создает новые реальные возможности для развития экономики и структурных изменений. Отмечается, что реальное состояние и направленность внешних экономических связей Армении прямо указывают на вектор развития экономики. Представлены ключевые статьи договора ЕАЭС и возможности их уточнения, необходимые для достижения целей и приоритетов ЕАЭС.

Ключевые слова: договор о ЕАЭС, цели и приоритеты, вектор развития, потенциал экономики, экспорт, инфляция, курс валюты, ключевые разделы.

PRIORITY STEPS TO INCREASE THE ECONOMIC POTENTIAL OF EAEU COUNTRIES

ASHOT TAVADYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*

*Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article shows the path of specification and coordination of anti-crisis measures from the perspective of increasing the growth of economic potential of the EAEU. The union of Armenia with Eurasian Economic Union creates new real opportunities for the development of the economy and structural changes. It is noted that the actual state and trends of foreign economic relations of Armenia indicate the vector of economic development. The article presents the key articles of the EAEU treaty and their possible clarification necessary for the implementation of the objectives and priorities of the EAEU.

Keywords: The Treaty on the EAEU, objectives and priorities, vector of development, potential of the economy, export, inflation, exchange rate, key sections.

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՄԳԱՄ Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԼԻԱՆ ԱԶԱՏՅԱՆ

ՄԳԱՄ Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԳՅՈՒԼԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը նպատակաուղղված է գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների վերամշակման ու իրացման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Գյուղատնտեսության ընդհանուր արդյունավետության աճը պետք է ապահովվի սպասարկող ոլորտների, մասնավորապես ինտեգրացնող կառույցների, առաջնային վերամշակման կազմակերպությունների, մատակարարող և իրացնող կոոպերատիվների ցանցի զարգացման խրախուսման միջոցով:

Գյուղատնտեսությունը և գյուղատնտեսական վերամշակման արտադրությունները միասին վերցրած պայմանավորում են ՀՆԱ-ի մոտավորապես 21%-ը և ապահովում ընդհանուր աշխատուժի մոտ 40%-ի զբաղվածությունը¹:

Հայտնի է, որ Հայաստանում աճող պտուղ-բանջարեղենը և դրանցից պատրաստված ապրանքներն էապես տարբերվում են այլ երկրներում աճեցրած ապրանքներից:

Դա առաջին հերթին պայմանավորված է Հայաստանի աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով, արևի լույսի և որակյալ լեռնային ջրերի առկայությամբ, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում ծիրանի, դեղձի, տանձի, խնձորի, սալորի և այլ մրգերի աճեցման համար (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

Գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացված հիմնական արտադրատեսակների արտադրության ծավալները՝ ըստ 2009-2014թթ.

Արտադրատեսակներ	2009	2010	2011	2012	2013	2014	2014թ. աճը %-ով	
							2012	2013
Միս 1000 տոննա	57.8	54.6	61.1	65.9	72.0	82.2	24.7	14.2
Սառնաբլիթ – երշիկեղեն , տ.	3320.8	3187	3577	3722	4757	5718.3	53.6	20.2
Պանիր 1000տ.	17.5	17.1	17.6	17.6	17.4	18317.3	4.0	5.0
Կաթ, մլն. լիտր	287	300	316	320	339.5	386.5	20.8	13.8
Պաղպաղակ 1000լ.	2853	3314	3481	3628	4122	6345	74.9	53.9
Պահածոներ տ.	7629	8029	11514	9551	9867	11714.7	22.6	18.7
Հաց 1000 տոննա	298	298	298	297	293	290	-2.4	-1.0
Հրուշակեղեն տ.	10030	11751	13253	14890	16415	18092.6	21.5	10.2
Մակարոնեղեն տ.	2474	2704	3274	3393	4111	4467.6	31.7	8.7
Շաքարավազ տ.	870	32508	72159	69267	69625	89189	28.8	28.1
Օղի 1000լ.	13278	11923	9136	10067	9936.8	9506.1	-5.5	-4.4
Խաղողի գինի 1000լ	4309	5865	6192	5804	6680.3	6130.9	5.6	-8.2
Կոնյակ 1000լ.	9869	19749	15385	18527	20284	18725.5	1.1	-7.7
Գարեջուր 1000լ	10834	15353	14744	13668	19848	23716.5	73.5	19.5
Շամպայն 1000լ.	456	607	623	479	536	634.4	32.4	18.3
Ոչ ալկոհոլային խմիչքներ 1000լ	37638	38232	45725	45216	63400	79972.6	76.9	25.0
Հանքային ջրեր 1000լ.	25459	30000	29668	32953	42215.3	58618.3	77.9	38.8
Բնական հյութեր 1000լ.	7508	11690	14591	16748	19542	21102.6	26.0	8.0
Միգրանտներ մլն. հատ	3310	4127	3361	6155	7729	12774.2	2.1 անգամ	65.2

Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք 2013թ. ՀՀ-ի սոցիալ- տնտեսական վիճակը 2009-2014թթ.

¹ ԱՎԾ սոցիալ տնտեսական վիճակը 2014թ.

Վերջին տարիներին ագրովերամշակման հզորությունները զգալիորեն ավելացել են, և անգամ որոշ բնագավառներում (գինի, պանիր) վերամշակման ոլորտի պահանջարկը գերազանցում է գյուղատնտեսական հումքի առաջարկին:

Այսպես, օրինակ, ըստ աղյուսակ 1-ի տվյալների 2014թ. մսամթերք-երշիկեղենի արտադրության ծավալները 2012թ. համեմատ աճել է 53.6%-ով, 2013թ. նկատմամբ 20.2%-ով, հրուշակեղենը՝ համապատասխանաբար՝ 21.5 և 10.2%-ով, մակարոնեղենը՝ 31.7 և 8.7%-ով:

Եթե խաղողի գինու արտադրությունը 2014թ. 2009թ. համեմատ ավելացել է 42.3%-ով, ապա կոնյակի արտադրությունը ավելացել է մոտ 90%-ով, սիգարետների արտադրությունը ավելացել է 3.9 անգամ:

2014 թվականին 2013 թվականի համեմատությամբ խաղողի օղու և կոնյակի արտադրությունը պակասել է բնական աղետների (կարկտահարություն) պատճառով:

Աղյուսակ 2

Սննդարդյունաբերության արտադրանքի ծավալների դինամիկան 2010-2014թթ.

(ընթացիկ գներով)

մլն.դրամ

Անվանումները	2010	2011	2012	2013	2014	2014թ. %-ով նկատմամբ	
						2012	2013
Սննդամթերքների արտադրություն	188224.0	238887.6	250416.2	275116.5	298201.3	119.1	108.4
Խմիչքների արտադրություն	69956.1	85185.5	101323.3	126540.3	123338.4	121.7	97.6
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	19888.6	16193.3	254203	38276.2	52264.1	2.1 անգամ	136.5

Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք 2013թ.

ՀՀ-ի սոցիալ- տնտեսական վիճակը 2010-2014թթ.

Վիճակագրական տվյալները վկայում են, որ վերամշակվող սննդարդյունաբերության ծավալները (տես աղյուսակ 2-ը), ըստ տարիների զգալիորեն աճել են: Այսպես, օրինակ, 2014թ. սննդամթերքների արտադրությունը կազմել է 298201.3 մլն դրամ, որը 2012թ. նկատմամբ աճել է 19.1%-ով, 2013թ. նկատմամբ 8.3%-ով: Հայաստանի ագրոբիզնեսում արդեն կան ենթաօլորտներ, որտեղ ընկերություններ, այդ ՓՄՁ-ները կարողացել են ճանապարհ հարթել դեպի համաշխարհային շուկաներ: Հիմնականում դա վերաբերում է ալկոհոլային խմիչքների, ծխախոտի և սիգարետի ավանդական զարգացած արտադրությունը: Ներկայումս այդ 2 ենթաօլորտներին բաժին է ընկնում Հայաստանից արտահանվող գյուղ. ապրանքների մոտ 80%-ը: Վերամշակվող արդյունաբերական ձեռնարկությունների արագ զարգացման կարևորությունը կայանում է նրանում, որ այն անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում գյուղացիական տնտեսությունների բարելավման համար:

Բուսական ծագում ունեցող հումքի հիմնական արտադրությունը կենտրոնացված է Արարատյան հարթավայրի գյուղացիական և կոոպերատիվ տնտեսություններում: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում բանջարեղենի, խաղողի և պտուղների տեսակարար կշիռը գերազանցում է 85%-ը:

Վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների արագ զարգացման կարևորությունը կայանում է նաև նրանում, որ այն անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում գյուղացիական տնտեսությունների զարգացման համար:

Գինեգործությունը Հայաստանում հաջողված ոլորտ է, քանի որ կատարվել են օտարերկրյա մեծ ներդրումներ, հատկապես նոր տեխնոլոգիաների գնման և արտադրական գործընթացի բարելավման մասով: Գինու արտադրողները հաջողությամբ մուտք են գործել ռուսական շուկա, որին բաժին է ընկնում արտահանման ծավալների մոտավորապես 70%-ը:

Պարենամթերքի արտադրության ոլորտում Հայաստանի գյուղատնտեսությունը ունի զգալի հեռանկարներ՝ ուղղված ներմուծվող ապրանքները տեղական համարժեք ապրանքներով փոխարինելուն, ինչը հնարավորություն է ստեղծում ընդլայնելու առանձին ապրանքների արտադրությունը՝ նվազեցնելով երկրի պարենամթերքի կախվածությունն արտաքին շուկաներից՝ միա-

Ժամանակ բարելավելով առևտրային հաշվեկշռի ցուցանիշները: Վերամշակող արդյունաբերության համակարգում կան մի շարք կազմակերպություններ, որոնք կարողացել են արդիականացնել իրենց արտադրությունը և թողարկել ժամանակակից պահանջներին բավարարող մրցունակ արտադրանքներ:

Ուսումնասիրությունները վկայում են, որ հանրապետության վերամշակող արդյունաբերության համակարգում վերջին տարիներին ավելի ու ավելի են նշմարելի դարձել տնտեսական ակտիվացման որոշակի հաջողությունները: Ակտիվացումը ակնառու է թե՛ արտադրական, և թե՛ ինվեստիցիոն բնագավառում, և որի արդյունքում մի շարք կազմակերպություններ ոչ միայն մեծացրել են արտադրության ծավալները, այլև թողարկվել է բարձրորակ, մրցունակ արտադրանք:

Հայաստանի ոգելից խմիչքներ արտադրող մի շարք ընկերություններ (Երևանի կոնյակի գործարան, Գրեյթ Վելլի, Երևանի Արարատ կոնյակի-գինու, օղու գործարան, ՄԱՊ, Գինեթաս, Վան 777 և այլն) արտահանման ասպարեզում հաջողությունների են հասել: Վերոնշյալ ընկերությունների արտադրանքը կարելի է հանդիպել Ռուսաստանի, Ուկրաինայի և ԱՊՀ այլ երկրներում: Առանձին ընկերություններ արտահանում են նաև Եվրոպա, ԱՄՆ, Կանադա, ինչպես նաև ասիական շատ երկրներ:

Հայաստանից արտահանման հիմնական դժվարություններից մեկն այն է, որ պետք է ներմուծող շուկայի կողմից պահանջող որակի ստանդարտներին համապատասխանող ապրանք ներկայացնել:

Այս խնդիրը հաջողությամբ լուծել է Երևանի կոնյակի գործարանը, որի ղեկավարությունը կարողացավ խաղող արտադրող գյուղացիական տնտեսությունների հետ կնքել երկարատև պայմանագրեր նախապես սահմանված գներով: Մարքեթինգի ճիշտ կազմակերպումը և մատակարարման շղթայի որակի կառավարումը հետզհետե նպաստում է նաև այլ վերամշակող կազմակերպությունների (Եվրոթերմ, Արտաշես, Մեղրու պահածոների գործարան, Սիս, Արտաշատի պահածոների գործարան, Արտֆուդ) կողմից կատարած ներդրումների շնորհիվ լուծելու ավանդական որակի հետ կապված խնդիրները:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալներով գինեգործության ոլորտում գործում են մոտ 50 ընկերություններ, որոնցից պտուղ-բանջարեղենի պահածոների և բնական հյութերի արտադրությամբ զբաղվում են մոտ 35-ը, իսկ չոր մրգերի արտադրության ոլորտում «Չորացված մթերք արտադրողների ասոցիացիաների» կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն Հայաստանում գործում են գրեթե 5400 չիր արտադրողներ: Շուկայում կան նաև 100 միջին արտադրողներ՝ տարեկան 1-5 տոննա արտադրողականությամբ և 21 խոշոր արտադրողներ, ովքեր արտադրում են տարեկան 5 տոննայից ավելի չիր:

Սննդամթերքի վերամշակման ոլորտը հանդիսանում է Հայաստանի կառավարության համար գերակա ոլորտներից մեկը: Այս ոլորտի ուժեղ կողմերն են տեղական գյուղատնտեսական ապրանքների բարձր որակը, որոշ չաշխատող արտադրական հզորությունները, որակյալ աշխատողների առկայությունը և համեմատաբար էժան աշխատուժը: Փորձագետները գտնում են, որ այն ունի զարգացման մեծ պոտենցիալ, մասնավորապես օտարերկրյա համագործակցության և ներդրումների միջոցով («Ամերիա» ընկերությունների խումբ 2013թ.): Հայաստանի համար որպես կարևորագույն պայման համարվում է նաև պարենամթերքների արտահանումը (տե՛ս աղյուսակ 3-ը)

Պարենամթերքի արտահանում՝ ըստ 2009-2013թթ.

Անվանումները	2009	2010	2011	2012	2013
Կոնյակ	16985.1	20563.2	35313.9	31633.7	33829.3
Գինի	909.9	1639.3	1285.4	2071.4	2418.8
Չանքային ջուր	7561.6	12771.1	13294.5	15614.1	16660.4
Միրգ (ներառյալ ընկուզապտուղներ) <i>որից՝</i>	17081.0	9046.2	15053.0	27323.8	34456.5
խաղող	3743.8	6262.9	6351.3	10109.6	7563.4
Պանիր	336.9	496.4	439.8	903.6	1541.1
Չուլ	239.8	154.9	0	1.7	0.0

ԱԿԾ Պարենային ապահովումը և աղբյուրը 2014թ., 2015թ.

Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է նշված մթերքների գծով տարեցտարի զգալիորեն ավելացել են արտահանման ծավալները: Այսպես, օրինակ՝ կոնյակի արտահանումը 2013թ. 2010թ. համեմատ ավելացել է 65%-ով, իսկ 2012թ. համեմատությամբ 6.9%-ով:

Գինիների արտահանումը համապատասխանաբար 47.5%-ով և 16.8%-ով, իսկ մրգերի և խաղողի արտահանումը կրկնապատկվել է:

Գյուղատնտեսությունը հանդիսանալով հանրապետության տնտեսության անքակտելի մասը, մեծապես պայմանավորված է վերջինիս զարգացման մակարդակով, ու որքան բարենպաստ է երկրի մակրոտնտեսական միջավայրը, այնքան նպաստավոր պայմաններ են ստեղծվում ագրարային ոլորտի համար, և ավելի է մեծանում պետության ներքո գտնվող տնտեսական կարգավորիչ լծակների ազդեցության արդյունավետությունը:

Չնայած գյուղատնտեսական մթերքների վերամշակման համակարգի գործունեության աշխուժացումն ու արտահանման ծավալների ավելացումը որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսական արտադրանքների իրացման հիմնախնդրի մեղմացմանը, այնուամենայնիվ այդ ոլորտում էլ դեռ լուծում պահանջող խնդիրներ կան: Դրանց լուծման ուղիներից մեկը, կարծում ենք, գյուղական փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացումն է: Մոտ ապագայում արտադրված գյուղատնտեսական մթերքների զգալի մասը պետք է վերամշակել գյուղական համայնքներում ստեղծված ու գործունեություն ծավալող ՓՄՁ սուբյեկտների միջոցով: Այդ ոլորտի զարգացումն ունի նաև սոցիալ-տնտեսական նշանակություն (կստեղծի նոր աշխատատեղեր, կնպաստի գյուղական բնակչության աղքատության նվազեցմանը):

Չզոր տնտեսությունը հատկանշական է միջին խավի առկայությամբ, հետևաբար պետք է խրախուսել փոքր ներդրումները, որոնք ուղղելով երկրի զարգացման կարիք ունեցող ոլորտները, որոնցից ամենակարևորը սննդի վերամշակման ոլորտն է:

Չայաստանն ունի փոքր ներքին շուկա և նրա արտահանման տարբերակները սահմանափակ են՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այն դեպի ծով ելք չունեցող երկիր է՝ ունենալով առևտուր իրականացնելու համար ընդամենը 2 բաց սահման: Չայաստանի ագրոբիզնեսի փոքրամասշտաբ վերամշակող կազմակերպությունները հաճախ ի գորու չեն մուտք գործելու շուկա՝ պայմանավորված արտահանմանն առնչվող ռիսկերի մասով երաշխիքների և անհրաժեշտ ֆինանսական միջոցների հասանելիությանը: Անհրաժեշտ է հետևողականորեն օգտագործել արտասահմանից եկող տարբեր բնույթի հիմնադրամների աջակցությունները:

Գյուղատնտեսության ոլորտի բարեփոխմանը նպաստող միջազգային հիմնադրամի աջակցությամբ նախատեսվող գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիրը իր դրական ազդեցությունը կբերի պահեստային և սառնարանային տնտեսությունների ձևավորմանը: Այն նպատակահարմար է կազմակերպել համատեղ օգտագործման (կամ այլ կերպ կոպերատիվ) սկզբունքով: Պահանջվող ֆինանսավորումը սկզբնական ժամանակահատվածում հնարավոր է

իրականացնել դրամաշնորհային ծրագրերով, այնուհետև նպատակային վարկերի և մասնավոր ներդրումների միջոցով:

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը մեծ նախադրյալներ է բացել վերականգնելու նախկին համագործակցությունն ու նոր կապերի ստեղծումը:

Սակայն 2014թ. վերջում դրամի նկատմամբ ռուսական ռուբլու փոխարժեքի կտրուկ անկումը խնդիրներ է ստեղծել դեպի ՌԴ գյուղմթերքներ արտահանող ձեռնարկատերերի համար: Վերջին մի քանի ամիսների ընթացքում ռուսական շուկան չկորցնելու համար նրանք շարունակում են արտահանել վնասով կամ չնչին եկամտաբերությամբ:

Անհրաժեշտ է բարելավել արտահանմանն առնչվող հիմնական ենթակառուցվածքները: Ագրոբիզնեսի ոլորտի արտահանման միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես կարող է արտահանումը խթանող համապարփակ գործակալությունը օգտակար լինել արտահանողների համար:

Պատշաճ գործելակերպ որդեգրած այս գործակալություններն ունեն հստակ նպատակներ, որոնք տրամադրում են գիտելիքներ, ինչպես նաև վերապատրաստում և նպատակաուղղում են իրենց ջանքերը դեպի երկրի բրենդը: Օրինակ, չեխական ընկերությունների արտահանմանն աջակցելու նպատակով ստեղծվել է Չեխիայի կառավարությանն առընթեր արտահանման խթանման գործակալություն: Միաժամանակ էստոնիայի և Իտալիայի պետական հովանավորությամբ գործող արտահանում վարկավորող կազմակերպությունները ցույց են տալիս, որ արտահանման վարկավորման հարցում աջակցությունը կարող է լինել արդյունավետ, եթե այն կատարվում է թափանցիկ՝ մասնավոր հատվածի հետ գործընկերային հարաբերություններով և ռիսկերի գնահատման համապատասխան գործիքներով:

Մեքսիկայի արտահանման խթանման BANCOMEXT-ը հաստատությունը ներկայացնում է մեկ «հովանոց» կազմակերպության ներքո, որպես բոլոր գործառույթների համատեղման իսկական գործնական օրինակ: Այն տրամադրում է արտահանումների ֆինանսական աջակցություն՝ որպես արտահանման խթանման այլ միջոցառումների մասով եկամտի ստացման եղանակներից մեկը: Կազմակերպության ֆինանսական միջոցների վերջնական երաշխավորը հանդիսանում է Մեքսիկայի կառավարությունը:

Նշված երկրների օրինակով անհրաժեշտ է ստեղծել արտահանման խթանման գործակալություն՝ Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտի արտահանման շուկաներ մուտք գործելու ցանկություն ունեցող վերամշակող ընկերություններին օգնելու համար:

Անհրաժեշտ է պետական հովանավորությամբ գործող կազմակերպություններին տալ արտահանման խթանման և պոտենցիալ թիրախային շուկաների մասով հետազոտությունների կատարման կարևոր դերը տեղական բիզնես համայնքի հետ դրանք համատեղ օգտագործելու նպատակով:

Արտահանման խթանմանը ցուցաբերվող աջակցությունն անհրաժեշտ է որպեսզի թե՛ արտահանման շուկայում, և թե՛ արտահանվող ապրանքներում լինի բազմազանություն: Դա անհրաժեշտ է նաև արտահանող կազմակերպությունների քանակը և ՓՄՁ-ների մասնաբաժինը մեծացնելու համար:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՅԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՍԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՇՈՒԷԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ

Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Հայաստանի Հանրապետությունում ագրոարդյունաբերական համալիրի նորմալ զարգացումը պայմանավորված է վերամշակման ընդլայնմամբ և գյուղմթերքների իրացմամբ:

Վիճվարչության ծառայության տվյալների հիման վրա հետազոտվել են կարևորագույն պարենային ապրանքների արտահանման տվյալները, որոնց արտադրության ավելացումը հնարավոր է պետական աջակցության շնորհիվ:

Գյուղատնտեսությունում արտադրության ավելացման խնդրի լուծման ուղղություններից մեկը ֆինանսական պայմանների ստեղծումն է, որը ապահովում է վարկային միջոցների հասանելիությունը ՓՄՁ-երին: Կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում դա դրականորեն կազդի գյուղատնտեսության զարգացման վրա: Վերամշակվող գյուղմթերքների հետագա իրացման և արտահանման համար առաջարկվում է ստեղծել մթերքների արտահանման խրախուսման ֆոնդ:

Բանալի բառեր. անևարդյունաբերություն, վերամշակում, ներմուծում, արտահանում, շուկա, շահառու, խթանում

ПУТИ РАЗВИТИЯ ПЕРЕРАБОТКИ И ЭКСПОРТА СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЙ ПРОДУКЦИИ

ШУШАНИК КОСТЯНЯН

научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА

ЛИАНА АЗАТЯН

научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА

Аннотация

В Республике Армения нормальное развитие агропромышленного комплекса обусловлено расширением переработки и реализацией сельскохозяйственной продукции.

На основе данных статистической службы РА проанализированы сведения об экспорте важнейших продовольственных товаров, расширение производства которых возможно с помощью государственной поддержки.

Одним из направлений решения проблемы увеличения объемов производства продукции сельского хозяйства видится создание финансовых условий, обеспечивающих доступность кредитных средств для МСП. В среднесрочной и долгосрочной перспективе это благотворно повлияет на развитие сельского хозяйства. С целью дальнейшей реализации и экспортирования перерабатываемой сельскохозяйственной продукции предлагается создать поощрительный фонд экспорта продуктов.

Ключевые слова: пищевая промышленность, переработка, импорт, экспорт, рынок, бенефициар, поощрение.

DEVELOPMENT TRENDS OF PROCESSING AND EXPORT OF AGRICULTURAL PRODUCTS

SHUSHANIK KOSTANYAN

Research Associate M. Kotanyan Institute of Economics National Academy of Sciences, Republic of Armenia

LIANA AZATYAN

Research Associate, M. Kotanyan Institute of Economics National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The natural development of the food and agribusiness industry in the Republic of Armenia is associated with the processing and wholesale distribution and retailing of agricultural products.

Based on the data published by the National Statistical Service of Armenia, the authors study export data of the key food products the increase in production volumes of which could only be ensured by the state support and assistance.

In order to address the issue of increase in agricultural production, one approach to it could be ensuring access to financing to provide credits to SMEs. Over the short- and long-run it would positively affect the development of agriculture. To increase production volumes and sales of processed agricultural products the authors propose to establish a fund promoting exports of goods of the food and agribusiness industry.

Keywords: Food processing industry, processing, imports, exports, market, beneficiary, promote.

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *յւ. գ. թ., դոցենտ*

Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՄԵՐԻ ՂՈՒԲԱՍԱՐՅԱՆ, *ՏՊՏՏ մագիստրանտ*

Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի կրթութեւր գիտաշխատող

ԵՏՄ-ԻՆ ՀԱՆՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՋ

Հասարակության տնտեսական զարգացման արդի միտումները բացահայտել են ակնհայտ հակասություններ ազգային տնտեսություններում էներգետիկ համակարգերի և տնտեսական զարգացման հասարակական պահանջների միջև: Այդ հակասությունների հաղթահարման ամենաարդյունավետ ուղիներից մեկը համաշխարհային տնտեսության զարգացման ներկայացված մոտեցումն է տնտեսական ինտեգրացիան վառելիքաէներգետիկ ռեսուրսներ արտահանող և ներմուծող երկրների միջև: Հետևաբար, այն հանգամանքը, որ ներկայումս ԵՏՄ անդամ-պետություններից երկուսը էներգակիրներ արտահանող, իսկ մյուս երկուսը՝ էներգակիրների ներկրումից կենսականորեն կախված պետություններ են, անխուսափելի է դարձնում այս ոլորտում համագործակցության պայմանների համակողմանի ներառումն ու առաջնահերթ քննարկումը եվրասիական ինտեգրացիայի շրջանակներում: Պատահական չէ, որ ԵՏՄ-ին ՀՀ անդամակցության հիմնավորումներում առավել հաճախ շեշտադրվում են հատկապես էներգետիկ ոլորտում համագործակցության հեռանկարներն ու առավելությունները՝ հաճախ նաև համեմատական դիտողություններ կատարելով այլ ինտեգրացիոն ուղղությունների առնչությամբ:

Այս առնչությամբ պետք է նկատել, որ ԵՏՄ հիմնադիր պայմանագիրը էներգետիկ ոլորտում անդամ պետությունների համագործակցության լայն հնարավորություններ է նախատեսում: Մասնավորապես, 20-րդ՝ «էներգետիկա» բաժնի 79-րդ հոդվածում հայտարարվում է համաձայնեցված էներգետիկ քաղաքականության և էներգետիկ ռեսուրսների ընդհանուր շուկայի աստիճանական ձևավորման մասին՝ ազգային տնտեսությունների էներգետիկ համալիրների արդյունավետ օգտագործման և էներգետիկ ռեսուրսներով (էլեկտրաէներգիա, գազ, նավթ, նավթամթերք) ապահովելու նպատակով: Այդ ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները նախատեսում են¹.

- էներգետիկ ռեսուրսների շուկայական գնագոյացման ապահովում,
- էներգետիկ ռեսուրսների ընդհանուր շուկաներում մրցակցային պայմանների զարգացում,
- տեխնիկական, վարչական և այլ խոչընդոտների վերացում էներգետիկ ռեսուրսներով արտաքին առևտրում,
- համապատասխան տրանսպորտային ենթակառուցվածքների ապահովում,
- այս ոլորտ ներդրումների ներգրավման համար պայմանների ապահովում,
- էներգակիրների (գազի, նավթի, նավթամթերքի) կանխատեսումային հաշվեկշիռների կազմում միութենական ընդգրկմամբ,
- էներգետիկ ռեսուրսների շուկաներում բնական մենաշնորհ ունեցող սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովում և այլն:

Նախատեսվող բոլոր միջոցառումների անհրաժեշտությունը հիմնավորված է անդամ-պետությունների էներգետիկ անվտանգության ապահովման սկզբունքով, ինչը ենթադրում է առկա հնարավորությունները ներքին պահանջումների բավարարմանն ուղղորդելու առաջնահերթության նախապայմանի առկայությունը:

Իհարկե, էներգետիկ ոլորտում համագործակցության մանրամասները (մասնավորապես գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքները, որոնք երեք հիմնադիր երկրների մասով ներկայացված են ԵՏՄ պայմանագրի 21, 22, և 23-րդ հավելվածներում) Հայաստանի

¹ Շարադրված են ըստ ԵՏՄ պայմանագրի 80, 81, 82, 83, 84 հոդվածների:

մասով դեռևս հստակեցված չեն, սակայն պետք է նկատել, որ այդ հարցը կարգավորվել է մինչև ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը, երբ նախատեսվում էր ՀՀ անդամակցություն Մաքսային միությանը (2013թ. դեկտեմբերին կնքված պայմանագրով): Խոսքը վերաբերում է «Բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի մասին» և «ՀՀ բնական գազի, նավթամթերքի, չմշակված բնական ալմաստի առաքման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրերին, որոնց համաձայն, օրինակ, ՀՀ ներկրվող բնական գազի վրա մաքսատուրք չի կիրառվում, իսկ գազի գնի որոշման բանաձևում հիմք է վերցվում ՌԴ Օրենսդրության մարզի համար գործող գինը՝ ավելացված փոխադրման ծախսերը¹: Այնուամենայնիվ, ԵՏՄ պայմանագրում ներկայացված դրույթներն, ընդհանուր առմամբ, համադրելի են ՀՀ էներգետիկ պետական քաղաքականության հիմնական սկզբունքների հետ.

- էներգետիկայի բնագավառում մրցակցության և արդյունավետ գործունեության խթանումն ու մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,
- սպառողների և էներգետիկայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովումն ու շահերի հավասարակշռում,
- տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործում,
- էներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսում,
- էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովում,
- հանրապետության էներգետիկական անկախության խթանումը, այդ թվում՝ ներկրվող և տեղական էներգետիկ պաշարների տարատեսականացման և արտադրական հզորությունների առավելագույն օգտագործման ապահովում,
- շրջակա միջավայրի պահպանման ապահովում,
- գիտատեխնիկական առաջընթացի և նոր՝ էներգաարդյունավետ ու էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման խրախուսում,
- էներգետիկական շուկաների ձևավորման և զարգացման խթանում և այլն²:

Թերևս, որոշ վերապահումներ կարող ենք կատարել միայն հանրապետության էներգետիկ անկախության վերաբերյալ, քանի որ այսօր Հայաստանի էներգետիկ ոլորտը կենսական «կախվածություն» ունի Ռուսաստանից: Այսպես, ներկրվող գազի ավելի քան 80%-ը գալիս է Ռուսաստանից, ընդ որում, գազի շուկայի բոլոր ենթակառուցվածքները պատկանում են ռուսական ընկերություններին, այնպես որ Իրանից գազի ներկրման աճի հնարավորությունները նույնպես պայմանավորված են ռուսական կողմի հավանության հանգամանքով: Ռուսաստանից ենք ներկրում նաև նավթի ու նավթամթերքի ավելի քան 60%-ը, բացի այդ ռուսական ընկերություններին են պատկանում Սևան-Հրազդան ՀԷԿ-ը, Հրազդանի ՋԷԿ-ը, բաշխիչ ցանցերը, նրանց կողմից է իրականացվում ատոմակայանի ֆինանսական կառավարումը, ռուսական մասնակցության ակնարկ կա Հայաստանի գրեթե բոլոր էներգետիկ նախագծերում: Հավելենք, նաև, որ 2007 թվականի հունվարին ստորագրված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մասին փաստաթղթում հայ-ռուսական հարաբերությունները դիտվում են որպես Հայաստանի էներգետիկ անկախությունը և անվտանգությունը երաշխավորող գործոն: Այս տեսանկյունից, ԵՏՄ-ին անդամակցության հետևանքների գնահատումը էներգետիկ ոլորտում հաճախ իրականացվում է ոչ այնքան հեռանկարային դրական զարգացումների համատեքստում, որքան ինտեգրացիոն այս ուղղությունից հրաժարվելու դեպքում հնարավոր բացասական հետևանքներից խուսափելու համատեքստում: Նման գնահատականի տրամաբանությունը կայանում է հետևյալում. Մաքսային միությանը ՀՀ անդամակցության պատրաստակամությունը հնարավորություն տվեց գազի գինը 1000 խմ համար իջեցնել 270 ԱՄՆ դոլարից մինչև 189 ԱՄՆ դոլար, որը 5 տարի անփոփոխ մնալու պարագայում Հայաստանին թույլ կտա շահել մոտ 1 մրդ ԱՄՆ դոլար, իսկ եթե Հայաստանը Մաքսային միությանը անդամակցելու որոշում չկայացներ, ապա

¹ Աղբյուրը՝ Տեղեկատվություն ԵՏՄ-ին միանալու վերաբերյալ տնտեսվարողների կողմից բարձրացվող առավել կարևոր հարցերի վերաբերյալ:
<http://www.mineconomy.am/uploads/20141612165541464.pdf>

² Շարադրված է ըստ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի՝ ընդունված 2001թ. մարտի 7-ին:

գազի գինն ամենայն հավանականությամբ կաճեր մինչև 400 դոլար, ինչը 1 մլրդ դոլարի կորստի պատճառ կդառնար: Արդյունքում, եվրասիական տնտեսական ինտեգրացիան մեզ հնարավորություն է տալիս 5 տարվա համար շահել մոտ 2 մլրդ դոլար¹:

Ինչ խոսք, ԵՏՄ-ին անդամակցության արդյունքում էներգետիկ ոլորտում հնարավոր փոփոխությունները չեն հանգում պարզապես էներգակիրների գնագոյացման գոյություն ունեցող մոտեցումների անփոփոխության երաշխավորմանը: Այստեղ առավել կարևոր են էներգետիկ ոլորտի գերակա ուղղությունների հետագա զարգացման հնարավորությունները: Խոսքը վերաբերում է մասնավորապես Հայաստանից էլեկտրաէներգիայի արտահանման ծավալների մեծացման հնարավորություններին, որոնք առավել իրատեսական են ներկայանում հատկապես ԵՏՄ անդամակցության համատեքստում, քանի որ ինտեգրացիոն այս կառույցը էներգետիկ ենթակառուցվածքները դիտում է որպես ինտեգրացիայի հիմք, հետևաբար ենթադրելով ԵՏՄ շրջանակներում ընդհանուր էներգետիկ ենթակառուցվածքից օգտվելու նպատակահարմարություն՝ բոլոր անդամ-պետությունների համար: Այս առնչությամբ նույնիսկ տեսակետ կա, ըստ որի Հայաստանը հավակնում է դառնալ տարածաշրջանային էներգետիկ կենտրոն²: Տեսակետի հեղինակը հղում է կատարում այն հանգամանքին, որ Հայաստանը տարիներ շարունակ եղել է և ներկայում էլ մնում է «էլեկտրաէներգիայի տարածաշրջանային արտահանող», որն ունի ներդաշնակ եռաբաղադրիչ (ատոմային, ջերմա- և հիդրոէներգետիկ) էներգետիկ ենթակառուցվածք, և ընդունակ է արտահանել տարեկան 1.5-2 մլրդ կվտ/ժամ էլեկտրաէներգիա, բավական մրցունակ գնով: Համատեղելով իր բարձրավոլտային էլեկտրացանցը Իրանի, Վրաստանի (իսկ ապագայում նաև՝ տարածաշրջանի այլ երկրների) հետ, Հայաստանը բացառիկ հնարավորություն կունենա հավասարակշռել ու վերահսկել տարածաշրջանի էներգետիկ հոսքերը՝ այդպիսով մեծ դերակատարում ունենալով Հյուսիսային Իրանի, Հարավային Կովկասի, Կրասնոդարի երկրամասի և Ռուսաստանի այլ հարավային մարզերի³ էներգետիկ դեֆիցիտը լրացնելու հարցում: Իհարկե, նշված հնարավորությունների իրացման համար կարևոր նախապայմանների (վրացական և իրանական կողմի պատրաստականություն, պահանջարկի առկայություն) խնդիրը նույնպես որոշակի մոտեցումներ ու պետական դիվանագիտական մակարդակով լուծումներ է պահանջում, այնուամենայնիվ նման հեռանկարն այնքան էլ անիրատեսական չէ:

ԵՏՄ-ին ՀՀ անդամակցության հետևանքները գնահատելիս չպետք է անտեսել նաև ներմուծման մեջ զգալի տեսակարար կշիռ ունեցող նավթի ու նավթամթերքի էժան ներկրման հնարավորությունը: 2013թ. տվյալներով, այս ապրանքախումբը կազմել է ընդհանուր ներմուծման 19.5%-ը, որի ավելի քան 60%-ը ներկրվել է Ռուսաստանից⁴: ԵՏՄ պայմանագրի համաձայն, դեպի անդամ-պետություններ նավթի ու նավթամթերքի արտահանման պարագայում հանվելու է արտահանման մաքսատուրքը, ինչը հնարավորություն կտա նախ երկրում զգալիորեն նվազեցնել ռազմավարական նշանակություն ունեցող այդ ապրանքատեսակի գները և նպաստել երկրի տնտեսական զարգացմանը, իսկ մյուս կողմից գոմե արժեքային առունով կրճատել ներմուծումը՝ փոքր-ինչ մեղմելով արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը: Միաժամանակ, էժան նավթի ու նավթամթերքի ներկրման հնարավորությունը կարող է առևտրային գործընկերների շարքում մեծացնել նաև Ղազախստանի դերը, որի հետ տնտեսական կապերը բավարար չափով զարգացած չեն, մինչդեռ առկա է զգալի պոտենցիալ:

ԵՏՄ անդամակցության շրջանակներում էներգետիկ համագործակցության մեկ այլ ուղղություն է Հայաստանում ատոմային էներգետիկայի ոլորտում հնարավոր զարգացումները: Ինչպես գիտենք, ատոմային էներգետիկական հանդիսանում է երկրում արտադրվող էներգիայի կարևորագույն աղբյուրը (արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի մոտ 40%-ը): Հայաստանի ատոմակայանի շահագործման ժամկետները վերանորոգումից հետո նախատեսվում է երկարացնել մինչև 2026 թվականը՝ այդ ժամանակահատվածում ատոմակայանի նոր էներգաբլոկի կառուցման աշխա-

¹ А. Тавадян. Комплексный подход к цене на газ. http://www.soyuzinfo.am/rus/analytics/detail.php?ELEMENT_ID=1008

² Энергетика Армении и Евразийская интеграция. <http://www.panorama.am/ru/press/2014/02/11/golos/>

³ Սկզբնաղբյուր հանդիսացող հոդվածում նշվում է նաև դեպի հյուսիսարևելյան Թուրքիա էլեկտրաէներգիայի արտահանման հնարավորության մասին, ինչը ներկայում անիրատեսական համարելով, բաց ենք թողել:

⁴ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2013 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-միջ դասակարգման): <http://www.armstat.am/am/?nid=82&id=1594>

տանքներ նախաձեռնելու ծրագրերով: Վերջինիս համար անհրաժեշտ հունքը Հայաստանը ներկրում է Ռուսաստանից, ատոմակայանի վերանորոգման ֆինանսավորումը (300 մլն դոլար) նույնպես ապահովել է ռուսական կողմը, որը միաժամանակ պատրաստակամություն է հայտնել մասնակցել նոր ատոմակայանի կառուցմանը՝ մոտ 35% մասնաբաժնով (այն դեպքում, երբ այդ ծրագիրը ընդհանուր գնահատվում է 4.5-5 մլրդ դոլար)¹: Բացի այդ, Ղազախստանը այսօր հանդիսանում է ուրանի հանքաքար արդյունահանող համաշխարհային առաջատարներից մեկը, որտեղ առաջիկայում նախատեսվում է ԱԵՄԳ-ի ծրագրով ստեղծել քիչ հարստացվող ուրանի (որից արտադրվում է միջուկային վառելիք) բանկ, հետևաբար Ղազախստանը կարող է դառնալ Հայաստանի համար ուրանի այլընտրանքային մատակարարներից մեկը²:

Անշուշտ թվարկված բոլոր ուղղություններով էներգետիկ համագործակցությունը ԵՏՄ շրջանակներում իր դրական արդյունքը կբերի երկրի տնտեսությանը, բայց նկատենք, որ Հայաստանի համար ինչպես ներկայում, այնպես էլ հեռանկարում խիստ կարևորվում է վերականգնվող էներգիայի արտադրության ենթակառուցվածքների զարգացման հիմնահարցը, ընդ որում, ասվածն ամենաքիչը վերաբերում է հիդրոէներգետիկ ոլորտին: Վերջինս Հայաստանում արդեն իսկ ապահովում է արտադրվող էներգիայի մոտ 30%-ը: Ընդ որում, ջրային ռեսուրսներով աղքատ Հայաստանում ՀԷԿ-երի առավել ինտենսիվ շահագործումը շաղկապված է լուրջ բնապահպանական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հետ: Վերականգնվող էներգետիկայի առավել հեռանկարային ուղղությունը արևի և քամու էներգիայի օգտագործման հնարավորությունների ստեղծումն է, որոնց գծով Հայաստանում առկա է մեծ ներուժ: Տարբեր գնահատումներով, Հայաստանում կա մոտ 6000-7000 ՄՎտ-ի ներուժ, թեև դրա օգտագործման համար կարող են զբաղեցվել գյուղատնտեսական նշանակության հողեր, իսկ գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողատարածքների վրա տարբեր գնահատումներով կարելի է կառուցել մինչև 1000 ՄՎտ հզորության կայաններ³:

Ինչ վերաբերում է հողմային կայաններին, ապա այստեղ ակնկալվող հզորությունները այնքան էլ մեծ չեն (մինչև 200 ՄՎտ), իսկ հիմնական խնդիրն այն է, որ էներգետիկ ռեսուրսները հասանելի են հիմնականում լեռնային տարածքներում, ինչը դժվարացնում է մեծ չափսերի հողմակների տեղափոխումն այդ վայրեր: Այլընտրանքային (վերականգնվող) էներգետիկայի զարգացման հիմնական խնդիրը Հայաստանում իրատեսական ներդրումային ծրագրերի բացակայությունն է (թեև ներդրումային նախագծեր փորձում են մշակել իրանցի, լեհ և չինացի ներդրողների հետ): ԵՏՄ շրջանակներում համատեղ էներգետիկ շուկայի և էներգետիկ ենթակառուցվածքի տրամաբանությունը, անշուշտ, կարող է նախադրյալ հանդիսանալ նաև այս ուղղությամբ հայաստանյան էներգետիկայի զարգացման համար, հատկապես, եթե հաշվի առնենք, որ ԵՏՄ պայմանագիրը նախատեսում է նաև կապիտալի հոսքերի ազատականացում անդամ-պետությունների միջև:

ԵՏՄ շրջանակներում միասնական էներգետիկ շուկայի ստեղծման գաղափարը դեռևս լրամշակման կարիք ունի: Նախատեսվում է, որ այդ շուկայի ձևավորման նախագիծը պետք հաստատվի մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը, որից հետո կստորագրվի միջպետական պայմանագիր, նախատեսելով ընդհանուր էներգետիկ շուկային վերջնական անցում 2019 թվականին: Սակայն, արդեն իսկ հիմա առկա են գնահատականներ դրանից անդամ-պետությունների հնարավոր օգուտների վերաբերյալ: Այսպես, Եվրասիական տնտեսական համաձայնագրի հաշվարկներով ԵՏՄ անդամ-պետությունները (առանց Հայաստանի) կունենան ՀՆԱ -ի լրացուցիչ աճ 7.2 մլրդ ամերիկյան դոլարի չափով, ԵՏՄ շրջանակներից դուրս էլեկտրաէներգիայի արտահանման ծավալները կկրկնապատկվեն, իսկ միության ներսում էլեկտրաէներգիայի փոխադարձ մատակարարումների ծավալները կմեծանան 5 անգամ: Բելառուսը կկարողանա տարեկան տնտեսել

¹ Հայկական ԱԷԿ-ի վերանորոգման համար 300 միլիոնի վարկ կտրամադրվի Հայաստանին: <http://www.azatutyun.am/content/article/26521211.html>

² Այս առնչությամբ նկատենք, որ ուրանի այլընտրանքային մատակարար կարող էր համարվել նաև Իրանը, ընդ որում, բավական էժան գնով, սակայն հաշվի անելով ԱԵՄԳ-ի Իրանի միջուկային ծրագրերին հավանություն չտալու հանգամանքը, այդ ուղղությամբ նախաձեռնություններն առայժմ չեն կարող արդարացված համարվել: Նմանապես բազմաթիվ օբյեկտիվ պատճառներով իրատեսական չեն նաև Հայաստանում ուրանի հնարավոր հանքերի շահագործման հեռանկարները:

³ Աղբյուրը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայք. <http://www.minenergy.am/article/400>

մինչև 250 մլն դոլար՝ էժան էլեկտրաէներգիա ներկրելով Ղազախստանից, իսկ Ռուսաստանը կտնտեսի տարեկան 150 մլն դոլար՝ սիբիրյան ՅԷԿ-երից Ղազախստանի տարածքով երկրի եվրոպական հատված էլեկտրաէներգիայի փոխանցումից: Նմանատիպ օգուտներ կստանան նաև անդամ պետությունները նաև նավթի և գազի համատեղ շուկայի ձևավորումից¹: Մնում է միայն հուսալ, որ Հայաստանն իսկապես անմասն չի մնա ակնկալվող դրական արդյունքներից: Համեմայնդեպս, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը ԵՏՄ-ին ՀՀ անդամակցությունից հնարավոր առավելությունները թվարկում է «ապրիորի», հեռանկարում հնարավոր համարելով².

- երկրում արտադրված էլեկտրաէներգիայի ավելցուկը միասնական շուկայի տարածք արտահանելու հնարավորությունը,
- հայկական էներգահամակարգի տեխնիկական հնարավորությունների օգտագործումը՝ միության անդամ-պետությունների արտադրած էլեկտրաէներգիան հարևան ոչ անդամ-պետություններ հաղորդելու համար,
- բնական գազը և նավթամթերքը ավելի ցածր և կայուն՝ միության արդյունահանող երկրների արտադրողների գներով ներմուծելու հնարավորությունը:

¹ Какие преимущества интеграции ждут нас в ЕАЭС. <http://www.gudok.ru/economy/?ID=1219550>

² Տեղեկատվություն Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) միանալու վերաբերյալ տնտեսվարողների կողմից բարձրացվող առավել կարևոր հարցերի վերաբերյալ: <http://mineconomy.am/arm/556/gortsaruyt.html>

**ԵՏՄ-ԻՆ ԴՅ ԱՆԴԱՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *դ.գ.թ., դոցենտ*
*ՏՏ ԳԱԱ Մ.Քոտանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող*

ՄԵՐԻ ԴՈՒԲԱՍԱՐՅԱՆ, *ՎՊՏ մագիստրանտ*
*ՏՏ ԳԱԱ Մ.Քոտանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի կրթակերպի գիտաշխատող*

Համառոտագիր

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության հիմնավորումներում հաճախ են շեշտադրվում հատկապես էներգետիկ ոլորտում համագործակցության հեռանկարներն ու առավելությունները: Եվրասիական տնտեսական միության հիմնադիր պայմանագիրը էներգետիկ ոլորտում համագործակցության լրացուցիչ հնարավորություններ է նախատեսում, որոնք պետք է ուղղված լինեն անդամ-պետությունների էներգետիկ անվտանգության ապահովմանը և նրանց էներգետիկ համալիրների արդյունավետ օգտագործմանը: Հոդվածում քննարկվում են ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցության հետևանքով այս ոլորտում հնարավոր փոփոխությունները, հեռանկարային զարգացման ուղղությունները:

Բանալի բառեր. Եվրասիական տնտեսական միություն, ինտեգրացիա, միասնական էներգետիկ շուկա, գնադրյալում, մաքսաարտրք, էլեկտրաէներգիա, գազ, նավթ, ատոմակայան:

О ВОЗМОЖНЫХ ИЗМЕНЕНИЯХ В ЭНЕРГЕТИЧЕСКОЙ СФЕРЕ ВСЛЕДСТВИЕ ПРИСОЕДИНЕНИЯ АРМЕНИИ К ЕАЭС

ГАЯНЕ АРУТЮНЯН, *к.э.н., доцент*
*ст. научный сотрудник Института
экономики им. М. Котаняна НАН РА*

МЕРИ ГУБАСАРЯН, *магистрант АГЭУ*
*мл. научный сотрудник Института
экономики им. М. Котаняна НАН РА*

Аннотация

В обоснованиях за вступление Армении в Евразийский экономический союз часто подчеркиваются перспективы и преимущества сотрудничества именно в энергетической сфере. Учредительный договор ЕАЭС предусматривает дополнительные возможности для сотрудничества в энергетической сфере, которые должны быть направлены на обеспечение энергетической безопасности государств-членов и эффективное использование потенциала их энергетических комплексов. В статье рассматриваются возможные изменения и перспективные направления развития сферы энергетики вследствие интеграции Армении в ЕАЭС.

Ключевые слова: Евразийский экономический союз, интеграция, единый энергетический рынок, ценообразование, таможенная пошлина, электроэнергия, газ, нефть, атомная станция.

**ON THE POSSIBLE ENERGY SECTOR CHANGES AS A RESULT OF ACCESSION OF THE REPUBLIC OF ARMENIA
TO THE EURASIAN ECONOMIC UNION**

GAYANE HARUTYUNYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

MERI GHUBASARYAN, *master in economics of ASUE*
*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

Based on the fact of Armenia's accession to the Eurasian Economic Union the perspectives and benefits from the future cooperation in the energy sector are often stressed, in particular. The founding Treaty on the Eurasian Economic Union provides additional opportunities for the cooperation in the energy sector to ensure energy security of the member-states and efficient utilization of the energy complexes. The article discusses the possible changes to anticipate in this sector, and perspective development directions that result from Armenia's accession to the Eurasian Economic Union.

Keywords: Eurasian Economic Union, integration, common energy market, pricing, customs duties, electricity, gas, oil, nuclear power station.

**ԳՅՈՒԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանում ագրարային ոլորտի զարգացման շարժիչ ուժը և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության ձևավորման հիմնական նախապայմանը գյուղատնտեսական մթերքների վերամշակման համակարգն է: Այն նպաստում է պարենային, տնտեսական անվտանգության և ագրոպարենային շուկայի ձևավորմանը՝ ապահովելով ազգաբնակչության անվտանգ, որակյալ մթերքների երաշխավորված ու կայուն մատակարարումը: Վերջին երեք տարիների (2011-2013թթ.) միջին տվյալներով այդ ոլորտի բաժինը երկրի համախառն ներքին արդյունքում կազմում է մոտ 6,0%, և բացառիկ է նրա նշանակությունը բնակչության պարենային ապահովության գործում:

Հանրապետության գյուղատնտեսական հունքի վերամշակման ոլորտին վերաբերող հիմնախնդիրների լուծման, տեղական արտադրողների մրցունակության բարձրացման, տեղական արտադրողների շահերի պաշտպանության, ստեղծված աշխատատեղերի պահպանման և նորերի ստեղծման, միջազգային շուկային ինտեգրման և արտահանման ծավալների ավելացման նպատակով անհրաժեշտ միջոցառումները կարող են իրականացվել պետության կողմից հատուկ ծրագրերի շրջանակներում՝ առաջնային համարելով սննդամթերքի անվտանգության, ենթակառուցվածքների կարողությունների հզորացման, գյուղական համայնքների արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների բարելավման, գիտական կադրերի պատրաստման և այլ հարցեր: Ռազմավարության նպատակն է՝ ՀՀ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության կազմակերպությունների կարողությունների հզորացման և մրցունակության բարձրացման միջոցով ապահովել հիմնական պարենամթերքի ներմուծման փոխարինում արտահանման ուղղվածություն ունեցող արտադրանքով և ինքնաբավության մակարդակի բարձրացում: Դրա համար պահանջվում է՝

1. ագրովերամշակող կազմակերպությունների տնտեսական գործունեությունը խթանող օրենսդրական բարեփոխումների իրականացում, ըստ որի կարևորվում է ագրովերամշակման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրության և արտադրանքի փորձարկման մեթոդները սահմանող Հայաստանի ստանդարտների միջազգային պահանջներին համապատասխանեցումը,
2. գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտում պետություն – մասնավոր հատված համագործակցության արդյունավետ մեխանիզմների ներդրում և դրա գործունեության ապահովում, որի համար պահանջվում է իրավաբանական անձերով ձևավորել միություններ՝ Հայաստանի «պահածոյագործների և հյութ արտադրողների», «միս և մսամթերք արտադրողների», «կաթ և կաթնամթերք արտադրողների» մասնագիտական ուղղվածությամբ,
3. գյուղատնտեսական հունք արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային փոխշահավետ հարաբերությունների հաստատում ու հունքային բազայի վերաբերյալ տեղեկատվության ստացման և հունքի գնումների կազմակերպման գործընթացի կատարելագործում, որի համար պահանջվում է կայուն ու որակյալ հունքային բազայի ապահովում և հունքի գնման պայմանագրային երկարաժամկետ փոխհարաբերությունների հաստատման ընդլայնում ու արմատավորում:

Վերոնշյալների գծով ավելի պարզ պատկերացում ունենալու համար ներկայացնենք աղյուսակ 1-ը ըստ 2012-2013թթ.:

ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի վերլուծության համաձայն, մի շարք անհրաժեշտ առաջնային պարենամթերքների ինքնաբավության մակարդակը զգալիորեն ցածր է: Այսպես, ցորենը՝ 38,1%, հատիկաընդեղեն մշակաբույսերը՝ 56,2%, բուսական յուղը՝ 4,3%, խոզի միսը՝ 52,5%, հավի միսը՝ 21,2% (տես աղյուսակ 2):

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական հունքի վերանշակումից ստացված հիմնական արտադրատեսակների արտադրության, արտահանման, ներմուծման, ինքնաբավության մակարդակը և իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2012-2013 թթ.-ին՝ հաշվարկված ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների*

Արտադրատեսակը	Չափի միավոր	Տեղական արտադրություն		Արտահանում		Ներմուծում		Ինքնաբավության մակարդակ%		Իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը %	
		2012	2013	2012	2013	2012	2013	2012	2013	2012	2013
Մսամթերք՝ ներառյալ երշիկ	տոննա	4688.0	4672.2	625.4	367.0	5344.9	5388.0	49.7	48.2	43.6	44.4
Պանիր	տոննա	17628.6	17375.4	903.6	1541.2	1056.2	1243.7	99.1	101.7	94.3	94.1
Պտուղբանջ. պահածոներ	տոննա	8536.6	8885.0	8043.3	6962.0	6660.2	11142.0	119.3	68.3	4.5	14.2
Հյութեր	հազ. լիտր	16747.4	19542.	2223.4	2350.8	5685.3	4431.7	82.9	90.4	71.9	79.5
Հրուշակեղեն	տոննա	14253.2	16415.1	792.8	550.1	15352.4	12490.3	49.8	57.9	46.8	56.0
Մակարոնեղեն	տոննա	3393.4	4111.0	153.5	155.6	4315.4	4825.4	44.9	46.3	44.1	45.0
Կոնյակ	հազ. լիտր	18481.4	20284.5	17517.5	18670.5	143.2	41.3	1669.4	1225.4	87.4	97.5
Գինի	հազ. լիտր	6192.2	6958.9	2200.0	2409.7	472.2	362.2	138.9	141.7	89.4	92.6
Գարեջուր	հազ. լիտր	13668.2	19847.8	2795.4	3879.1	2261.9	6262.7	104.1	89.3	82.8	71.8
Բուսական յուղ	տոննա	2656.1	4650.3	3.0	645.7	26573.1	26431.8	9.1	15.2	9.1	9.1
Շաքարավազ	տոննա	69267.0	69625.0	400.0	899.2	3829.9	4851.2	95.3	94.6	94.7	93.4

*ԱՎԾ տվյալներն ըստ 2012-2013թթ.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական մթերքների վերանշակումից ստացվող արտադրատեսակների 2009-2013 թվականների արտադրության ծավալները*

Արտադրատեսակներ	Չափի միավոր	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Միս՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերանշակումը (բացառությամբ ներքին սպառումը)	տոննա	58484.3	54497.1	60987.1	65895.7	72011.6
Մսամթերք՝ ներառյալ երշիկեղեն	տոննա	4128.0	3953.5	4488.8	4757.0	4672.3
Պանիր	տոննա	17459.3	17050.0	17525.0	17628.6	17375.0
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի)՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերանշակումը (բացառությամբ ներքին սպառումը)	տոննա	308105.8	273400.0	315800.0	319800.0	339512.0
Պաղպաղակ	հազ. լիտր	2852.9	3312.9	3480.8	3628.6	4122.9
Հրուշակեղեն	տոննա	9847.7	11589.4	13013.2	14249.2	16415.1
Մակարոնեղեն	տոննա	2433.3	2614.8	3247.9	3563.0.	4111.0
Բուսական յուղ	տոննա	954.2	1034.3	696.5	5656.1	4650.0
Կենդանական յուղ	տոննա	10072	950.4	812.8	645.5	51708
Պահածոներ՝ ընդամենը	տոննա	8436.0	8025.0	11772.6	9134.6	9867.3
Բնական հյութեր	հազ. լիտր	7474.8	11689.5	14615.2	16747.4	19542.6
Կոնյակ և օղի	հազ. լիտր	23015.0	24535.8	24568.0	28586.6	30222.6
Գինի և շամպայն	հազ. լիտր	48.28.5	6430.2	6814.6	6192.5	6958.7
Գարեջուր	հազ. լիտր	10825.3	15352.7	14744.3	13668.2	19847.8
Ոչ ալկոհոլային խմիչքներ	հազ.լիտր	37571.8	38232.1	45756.0	45320.0	64710.1
Հանքային ջուր	հազ.լիտր	25421.4	30000.0	29232.8	32742.7	43215.9
Շաքարավազ	տոննա	870.0	32508.4	72159.4	69267.0	69625.0

* ԱՎԾ տվյալները ըստ 2009-2013թթ.

Ըստ աղյուսակ 2-ի տվյալների 2013թ.-ին 2012թ. համեմատ որոշակի աճ է գրանցվել գյուղատնտեսական հունքի վերանշակումից ստացվող հետևյալ արտադրատեսակների ծավալներում:

Այսպես, կաթի և կաթնամթերքի ծավալներն ավելացել են 6,2%, կոնյակինը՝ 5,7%, պահածոներիինը՝ 8,0%, հրուշակեղենը՝ 15,2%, միսը՝ 9,3%, զարեջուրը 45,2% , բնական հյութերը՝ 17,7%:

Գյուղատնտեսական մթերքների վերամշակման համակարգում կա որոշակի առաջընթաց: Բարձրացել է թողարկվող արտադրանքի մրցունակությունն ի հաշիվ գործող և նոր ստեղծվող գործարաններում արդիական տեխնոլոգիաների կիրառման, արդյունավետ մեներջման և մարքեթինգային ծառայությունների զարգացման հաշվին: Կարևորվում է գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունները: Ներկա վիճակում գյուղացիական տնտեսությունների վարկավորման, տեխնոլոգիաների կատարելագործման, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, որակի ստանդարտների կիրառման հիմնախնդիրները կարող են լուծել հումք արտադրողների հետ այդ հարաբերությունները, որոնք նպաստում են փոխշահավետ համագործակցության զարգացմանը, որի հիմնական նպատակն է արտադրական հզորությունների և տեսականու ընդլայնումը, արտադրանքի մրցունակության բարձրացումը:

Հանրապետությունում մոտ 250,0 հազ. տոննա է կազմում պտուղբանջարեղեն վերամշակող ընկերությունների մթերման հզորությունները, որից բանջարեղենային պահածոների բաժինը կազմում է 154,5 հազ. տոննա, պտուղ-հատապտղային պահածոներիինը և հյութերինը՝ 94,5 հազ. տոննա: Հզորությունները օգտագործվում են ոչ ծանրաբեռնված, այսպես, օգտագործվել է ընդհանուր մթերման հզորությունների 23,9%-ը, որից բանջարեղենային պահածոներիինը՝ 21,2%-ը, իսկ պտուղ-հատապտղայինը և հյութերինը՝ 28,6%-ը:

Խաղողի վերամշակման հզորությունները կազմում են մոտ 265,0 հազ. տոննա, որը համարյա օգտագործվում է (տե՛ս աղյուսակ 3-ը):

Աղյուսակ 3

**ՀՀ վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից
2009-2013 թթ. պտղի, բանջարեղենի և խաղողի զնունների ծավալները***

Հունքի անվանումը	2009թ.		2010թ.		2011թ.		2012թ.		2013թ.	
	հազ. դրամ	տես կշիռ. %	հազ. դրամ	տես. կշիռ. %	հազ. դրամ	տես. կշիռ. %	հազ. դրամ	տես. կշիռ. %	հազ. դրամ	տես. կշիռ. %
1. Պտուղ	11291,9	6.5 100	3626,5	2.1 100	14285,7	7.2 100	25620,0	11.9 100	28791,5	12.9 100
այդ թվում՝ խնձոր	2107,0	18.6	614,1	16.9	2735,7	19.1	4767,0	18.6	5187,8	18.0
դեղձ	1928,2	17.2	193,3	5.3	1745,7	12.2	6163,4	24.1	1921,0	6.7
ծիրան	4641,1	41.2	557,4	15.4	2830,6	19.8	8854,1	34.6	13038,6	45.3
կեռաս, սալոր, բալ	1051,0	9.3	881,3	24.4	1203,8	8.4	1454,9	5.7	2079,6	7.2
ընկույզ	151,2	1.3	254,0	7.0	339,1	2.3	213,0	0.8	232,7	0.8
հատապտուղ	423,0	3.8	398,9	11.0	1093,0	7.6	752,0	2.9	1714,4	6.0
այլ պտուղներ	952,9	8.6	727,5	21.4	4337,1	30.6	3416,0	13.3	4617,4	16.0
2. Բանջարեղեն	32308,5	18.9 100	29681,8	17.6 100	50987,5	26.5 100	33645,8	15.6 100	27970,0	12.5 100
այդ թվում՝ լոլիկ	29749,0	92.0	24313,0	81.9	44209,0	86.7	26229,0	77.9	18970,1	67.7
վարունգ	526,3	1.6	1137,0	3.9	409,2	0.8	355,5	1.0	468,5	1.7
սմբուկ	745,3	2.4	1865,0	6.3	2431,0	4.8	2021,0	6.0	2324,0	8.5
պղպեղ	257,0	0.7	784,0	2.6	1097,0	2.1	2313,0	6.9	2455,0	8.8
լոբի, ոլոռ	338,0	1.1	209,0	0.7	189,0	0.3	851,0	2.5	1672,0	5.7
այլ բանջարեղեն	693,2	2.2	1374,6	4.6	2651,6	5.3	1896,8	5.7	2140,6	7.8
3. Խաղող	127740,0	74.6	134968,4	80.3	128927,4	66.3	156590,2	72.5	167184,7	74.7
Ընդամենը	171303,4	100	168276,7	100	194200,6	100	215856,0	100	223946,3	100

* ԱՎԾ-ի տվյալներն ըստ 2009-2013թթ.

Չնայած ավելացել և բազմազան է դարձել պտղի և հատապտղի տեսականին, սակայն մթերման գործընթացի կազմակերպումը պայմանավորված է հիմնականում լոլիկի, ծիրանի,

դեղձի և խնձորի մթերման ծավալներից՝ 88-2%-ը: Մթերվում է հանրապետությունում արտադրվող պտղի 3,8%-ը, բանջարեղենի՝ 19,9%-ը:

Ագրարային վերամշակման ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրներն են՝ հումքի վերամշակումից ստացվող արտադրատեսակների մրցունակության բարձրացումը, որակի բարելավումը, արտահանման ավելացումը և արտադրության մատչելի պայմանների ապահովումը, որովհետև ներկայումս տեղական շուկայի պահանջարկը կազմում է պտուղբանջարանոցային պահածոների ընդհանուր արտադրանքի ծավալի ընդամենը 20-45%-ը և խաղողի հումքով ոգեչից խմիչքներից՝ 12%-ը, իսկ մնացած մասը արտահանվում է: Սրանք հիմնահարցեր են, որոնք կարելի է լուծել գործարկվող ձեռնարկությունների վերազինման, ասպետիկ փաթեթավորման նոր հոսքագծերի ստեղծման, նոր արտադրատեսակների թողարկման հնարավորության պայմաններում:

Այլ է կաթի և մսի վերամշակումից ստացված արտադրատեսակների վիճակը, քանի որ նրանք հիմնականում իրացվում են տեղական շուկայում: 2013 թվականին արտադրվող կաթի ծավալը կազմել է 618,0 հազ. տոննա, որից կովինը՝ 575,0 տոննա: Վերամշակվում է կաթի մոտ 52,6%-ը, ներառյալ նաև գյուղացիական տնտեսությունները: Ըստ ԱՎԾ տվյալների 2012 թվականին, արտադրվել է կաթ-կաթնամթերք՝ 324,1 հազար տոննա, կաթի վերահաշվարկով, պանիր՝ 17628,6 տոննա: Օգտագործվում է կաթնամթերքի արտադրության արտադրական հզորությունների մոտ 30-40%-ը և կա ընդլայնման մեծ ներուժ: Կաթնամթերք արտադրող ընկերություններում տեղակայված են կաթի փոշու արտադրության տեխնոլոգիաներ, որոնց ճիշտ օգտագործման դեպքում կապահովվի ներքին շուկայի պահանջարկը: Այսպես, ըստ ԱՎԾ-ի, կաթի փոշու շուկայի տվյալները՝ աղյուսակ 4:

Աղյուսակ 4

Հայաստանի Հանրապետության կաթի փոշու շուկայի 2010-2013թթ. ցուցանիշները*

	Չափի միավոր	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Տեղական կաթի փոշու արտադրությունը	տոննա	410,0	177,3	596,9	520,3
Կաթի փոշու ներմուծումը	տոննա	1924,2	1828,0	1479,6	1543,2

* ԱՎԾ-ի տվյալները ըստ 2011-2013թթ.

Ըստ աղյուսակ 4-ի տվյալների, կազմակերպությունները սպառողական պահանջարկը ապահովում են ներմուծումների հաշվին, որի գործընթացն էլ տևում է մի քանի օր:

ՀՀ-ում մսի շուկայի պահանջարկը մասամբ բավարարվում է ներմուծումների հաշվին: Այսպես, 2012թ. ներմուծվել է միս խոշոր եղջերավոր կենդանու՝ 8,3 հազ. տոննա, խոզի՝ 8,3 հազ. տոննա, թռչնի՝ 33,6 հազ. տոննա: Տեղական արտադրության միսը, հատկապես թռչնի միսը, մրցունակության առումով զգալիորեն գիշում է ներմուծվողին:

Կաթի և մսի վերամշակման համակարգում խոչընդոտող հիմնական խնդիրներից են՝

- կաթի արտադրության աճի տեմպերի և վերամշակող ընկերությունների պահանջարկի սեզոնայնության անհամապատասխանությունը,
- սառնարանային տնտեսություններով կաթի մթերման ցանցի ապահովվածության ցածր մակարդակը,
- սպանդանոցների ցանցի անբավարարությունը,
- վերամշակվող տեղական մսի, հատկապես թռչնի մսի, ցածր մրցունակությունը ներկրվողի նկատմամբ:

Հայաստանի ռիսկային գյուղատնտեսության պայմաններում և ռազմավարության իրականացման գործընթացում կան խոչընդոտող մի շարք գործոններ, որոնք էական են, այն հարկավոր է հաշվի առնել և մեղմել դրանց բացասական ազդեցությունը: Այդ գործոնները կարելի է դասակարգել ըստ հետևյալ ռիսկային խմբերի՝

1. Ագրոէկոլոգիական ռիսկեր, որոնք անբարենպաստ կլիմայական պայմանների, տեխնածին արտակարգ իրավիճակների, հիվանդությունների և վարակների հետևանքով իրենց ազդեցությունն են **թողնում գյուղատնտեսական հումքի ծավալների ու որակի վրա**: Արդյունքում կրճատվում է արտադրության ծավալների և արտադրական հզորությունների օգտագործ-

ման մակարդակը, և առաջանում են պատրաստի արտադրանքին ներկայացվող անհրաժեշտ որակական ցուցանիշների ապահովման հետ կապված հարցեր, որի հետևանքով էլ տեղի է ունենում արտահանման պայմանագրային պարտավորությունների խախտում և պակասում են իրացման շուկաները: Այս բնագավառը պահանջում է բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերի զարգացման ինտենսիվության բարձրացման, հումքի իրացման, և հատկապես հումքը պահելու համար սառնարանային հզորությունների ստեղծման և հումքի պահուստային ծավալների ապահովման անհրաժեշտություն:

2. Սակրոտնտեսական ռիսկեր, որոնք կապված են հանրապետության տնտեսության և բնակչության եկամուտների աճի տեմպերի, արտաքին շուկայում մրցակցության պայմանների փոփոխման հետ: Նշված ռիսկերի նվազեցման արդյունքում տեղի կունենա հավասարակշռված արտաքին առևտրատնտեսական քաղաքականության, բնակչության եկամուտների ավելացման, զնոդունակության մակարդակի բարձրացման հնարավորություններ:
3. Առևտրատնտեսական ռիսկեր, որոնցից խուսափելու համար անհրաժեշտ է ներգրավել նոր տեխնոլոգիաներ, որակի, անվտանգության կառավարման համակարգեր, որոնք կօգնեն մրցունակ արտադրանք ունենալու ապահովման հիմնահարցին:

Հանրապետության գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության կայուն զարգացման համար, որն էլ կապահովի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքներում դրական արդյունքները, կարևորվում է կառավարման պետական մարմինների համագործակցության շրջանակների աջակցությունը, որը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ կազմակերպելու ռազմավարության դրույթների իրականացումը ապահովող միջոցառումները:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈւՋՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԵՆԱ ԴՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ, *յր. գ. թ.*

*Մ. Գ. Ա. Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Համառոտագիր

Հայաստանում ագրարային ոլորտի զարգացման շարժիչ ուժը գյուղատնտեսական մթերքների վերամշակման համակարգն է: Ռազմավարության նպատակն է ՀՀ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության կազմակերպությունների կարողությունների հզորացման և մրցունակության բարձրացման միջոցով ապահովել հիմնական պարենամթերքի ներմուծման փոխարինումն արտահանման ուղղվածություն ունեցող արտադրանքով: Ներկա վիճակում գյուղատնտեսական տնտեսությունների վարկավորման, տեխնոլոգիաների կատարելագործման, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, որակի ստանդարտի կիրառման հիմնախնդիրները կարող են լուծել հունք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունները, որոնք նպաստում են փոխշահավետ համագործակցության զարգացմանը:

Բանալի բառեր. ռազմավարություն, ռիսկային, ուղղվածություն, վերամշակում, ինքնաբավություն, իրացում, հզորություններ, մրցունակություն:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ СТРАТЕГИИ РАЗВИТИЯ ПЕРЕРАБАТЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЙ ПРОДУКЦИИ

ЛЕНА ОГАНЕСЯН, *к. э. н.*

*ст. научный сотрудник Института
экономики им. М. Котаяна НАН РА*

Аннотция

Движущей силой развития аграрной сферы Армении является система переработки сельскохозяйственной продукции. Целью стратегии является обеспечение импортозамещения основных продовольственных товаров экспортоориентированной продукцией путем усиления мощностей организаций перерабатывающей промышленности сельскохозяйственной продукции РА и повышения их конкурентоспособности. В нынешней ситуации проблемы кредитования крестьянских хозяйств, совершенствования технологий, обеспечения материально-техническими средствами, применения стандартов качества могут быть решены посредством установления договорных отношений с производителями сырья, способствующих развитию взаимовыгодного сотрудничества.

Ключевые слова: стратегия, рисковый, направленность, переработка, самодостаточность, реализация, мощности, конкурентоспособность.

THE MAIN DIRECTIONS OF THE STRATEGY ON DEVELOPING THE MANUFACTURING OF PROCESSED AGRICULTURAL GOODS

LENA HOVHANNISYAN, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The driver of the agriculture sector of the economy is the system of processing agricultural products. The objective of the strategy is to ensure import substitution of the main food products with export-oriented goods by enhancing the capacity of manufacturing companies processing agricultural products in the Republic of Armenia increasing their competitiveness. At the current state, the issues of loans to farmers, sophisticated technology utilized, supply of equipment and resources, assuring quality standards can be addressed through contractual relations with suppliers of the raw materials that support the development of mutually beneficial cooperation.

Keywords: Strategy, risky, orientation, processing, self-sufficiency, wholesale distribution and retailing, capacities, competitiveness.

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՈՒԺԸ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Ցանկացած երկրում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում տարածքային զարգացման քաղաքականությունը պետք է ապահովի առավել ցածր մակարդակ ունեցող տարածաշրջանների տնտեսական առաջանցիկ զարգացման տեմպեր: Այն պետք է ուղղված լինի երևան քաղաքից դուրս տարածքներում, մասնավորապես մարզերում և համայնքներում տնտեսական աճի խրախուսմանն ու սոցիալական զարգացմանը: Պետք է նշել, որ այսպիսի քաղաքականությունը պետք է ներառի մի շարք հիմնարար միջոցառումներ, որոնք կխրախուսեն տարածքներում տնտեսական ու ներդրումային ակտիվության աճը: Դրանց մեջ էական դեր կխաղա ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ներդրումների վերուղղումը երևանից դեպի ՀՀ տարածքներ ու՝ այլ գոյություն ունեցող քաղաքներ և գյուղական բնակավայրեր՝ նպատակ ունենալով խրախուսել ու նպաստել տարածքային «աճի բևեռների» ձևավորմանը¹: Տնտեսական աճի խրախուսումը ՀՀ տարածքներում կնպաստի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, տարածքային անհամաչափությունների հարթեցմանը և ՀՀ տարածքների համալիր զարգացմանը:

Այս նպատակով պետք է բազմակողմանի ուսումնասիրել մարզերի բնակլիմայական առանձնահատկությունները, աշխարհագրական դիրքը, արտադրության գործոնները, ներուժը և հնարավորություններ ստեղծել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բարձրացնելու համար: Բազմաթիվ ֆինանսական խնդիրների լուծման, տարածքային համաչափ զարգացման, Հայաստանը միջազգային շուկայում դրանց ներկայացման գործում մեծ դեր կխաղա զբոսաշրջության զարգացումը: Այս ուղղությամբ պետական քաղաքականության շնորհիվ, ինչպես նաև մասնավոր հատվածի կողմից իրականացվող նախաձեռնությունների, ներդրումային ծրագրերի արդյունքում մեր հանրապետությունը բավականին առաջընթաց է ունեցել: «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 17-ին, իսկ 2011 թվականին Ազգային մրցունակության հիմնադրամի կողմից կազմվել է Հայաստանի զբոսաշրջության հարավային միջանցքի ռազմավարական նախագիծը, որը հանդիսանում է առաջին խոշոր անկյունաքարը ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման գործում:

Առողջարանային զբոսաշրջությամբ հանրապետությունում առանձնահատուկ տեղ է գրավում Վայոց Ձորի «մարգարիտը»՝ Ջերմուկ քաղաքն իր լեռնային և հատկապես առողջարանային զբոսաշրջությամբ: Ջերմուկ քաղաքում միջազգային բարձր չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն ստեղծելու գաղափարը դեռևս քննարկվել է 2008 թվականի սեպտեմբերին՝ երկու երկրների ներկայացուցիչների միջև հանդիպման ժամանակ: Ջարգացման ծրագիրը մշակվել է հայ-չվեյցարական տնտեսական համագործակցության շրջանակում: Շվեյցարացի փորձագետները համոզվեցին, որ Ջերմուկը կարող է կարճ ժամանակահատվածում դառնալ լեռնային զբոսաշրջության խոշոր կենտրոն և արդյունքում ապահովել մեծ եկամուտների ստացում: Այսպես, 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՀ կառավարությանն արժանացած զբոսաշրջության զարգացման հայեցակարգով պետական քաղաքականության նպատակներին (նպաստել համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, ազգային եկամտի ավելացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը) և խնդիրների (զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, զբոսաշրջային սեզոնի երկարաձգում, երևանից դեպի մարզեր ապակենտրոնացում, համայնքներում աշխատատեղերի ստեղծում) լուծմանը հասնելու համար ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ին N1064-Ն որոշմամբ Ջերմուկ քաղաքը հայտարարվեց զբոսաշրջային կենտրոն: Քաղաքի զարգացման ռազմավարությունը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող ՀՄՄԳ ծրագրի փորձագետների ներգրավմամբ, ՀՀ շահագրգիռ նախարարու-

¹ ՀՀ կառավարության 2014թ.-ի մարտի 27-ի N442-Ն որոշման ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր:

թյունների և գերատեսչությունների, Ջերմուկ քաղաքի պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների, շվեյցարական «Թայգեր ԴեվՍուլիսս» և ֆիննական «Ֆիննհիդետա» ընկերությունների հետ մանրամասն քննարկման արդյունքում¹:

Աշխարհի տարբեր հանգստյան վայրեր, առողջարաններ մշտապես մրցում են զբոսաշրջիկներին գրավելու համար: Ուստի, այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է մշտապես ուսումնասիրել զբոսաշրջության շուկան և մատուցել բարձրորակ ծառայություններ: Հատկապես վերջին տարիների հետազոտությունները վկայում են այն մասին, որ Հայաստան են գալիս զբոսաշրջիկներ՝ հիմնականում Արևմտյան Եվրոպայից (Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա), Ռուսաստանից և ամերիկահայ սփյուռքից: Այսպես, 1997թ. սեպտեմբերի 27-ին կնքված պայմանագրի համաձայն Ջերմուկ և ֆրանսիական Սան-Ռաֆայել քաղաքները համարվում են քույր քաղաքներ: Այնուհետ 2013թ. Ջերմուկ և Չեխիայի Կառլովի Վարի քաղաքների միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր, իսկ նույն թվականին Ջերմուկ և Ղազախստանի Շուչինսկ քաղաքները ստորագրեցին համագործակցության հուշագիր:

Ջբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված քայլերից առանձնահատուկ կարևոր էր 2015 թվականի մարտի 21-ին կայացած հանդիպումը Ռուսաստանի տուրիզմի Միջազգային ակադեմիայի պրեզիդենտ Իգոր Ջորինի հետ: Նրա առաջարկությամբ Հայաստանը կրնդգրկվի ФИМТЕК-ի (Всемирной федерации водолечения и климатолечения) կազմում, որը հիմնադրվել է 1937թ. և որի կազմում այժմ ընդգրկված են աշխարհի ավելի քան 25 երկրների առողջարաններ: Այն միակ կազմակերպությունն է, որն ունի Առողջապահական համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից տրված հավատարմագիր: Հայաստանի ներկայացուցիչը վերոնշյալ կազմակերպությունում Իգոր Ջորինի առաջարկությամբ կլինի Ջերմուկը, քանի որ կան բոլոր նախադրյալները հենց նշված ուղղությամբ զարգանալու համար²:

Ջերմուկը լեռնային քաղաք է՝ ծովի մակերևույթից 2100մ միջին բարձրության վրա: Գտնվում է մայրաքաղաքից 175 կմ հարավ-արևելք: Ջերմուկն ունի շատ արժեքներ, մեղմ կլիմա: Քաղաքի անվանումը ծագել է «ջերմուկ» բառից, որը նշանակում է տաք աղբյուր: Տասնյակ տաք աղբյուրները և հանքային ջրերը հանդիսանում են նրա առավելությունները որպես առողջավայր: Ջերմուկի հանքային ջրերի մասին տեղեկություններն ըստ պատմաբան Ս.Օրբելյանի, վերաբերում են 13-րդ դարին, իսկ 12 գլխավոր աղբյուր ունեցող տաք աղբյուրների ջերմաստիճանը տատանվում է 34-54°C-ի միջև: Ջերմուկի առողջարանների հիմնական բուժիչ գործոնը հանքային ջուրն է՝ բարդ բաղադրությամբ, 4,5գ/լ հանքայնությամբ³: Ջերմուկի ջուրը պարունակում է հիդրոկարբոնատներ, սուլֆատներ, յոդ, բրոմ, պղինձ, ցինկ և այլ արժեքավոր քիմիական էլեմենտներ: Առաջին առողջարանը բացվել է 1940թ., և որին համահունչ 1945թ. խորհրդային իշխանությունները որոշեցին քաղաքը դարձնել պետական նշանակության առողջարան: 1900-ականներին եվրոպական առողջարանների մեծ մասը վերակազմավորվեց հիդրոթերապիայի և լոգանքների ծառայությունների շուրջ: Այդ տարիներին Ջերմուկը 2000 մահճակալով սպասարկում էր տարեկան 25000-30000 զբոսաշրջիկ, իսկ այժմ նրանում 6 գործող առողջարաններից յուրաքանչյուրն ամռան թեժ սեզոնին աշխատում է լրիվ զբաղվածությամբ 1400 մահճակալով, իսկ հանգիստ սեզոնին այդ ցուցանիշը նվազում է մինչև 20 տոկոս⁴: Ջերմուկը Հայաստանի ամենամեծ առողջարանային քաղաքն է և ճանաչված է աշխարհում: Ջերմուկի ջրերը համարվում են նույնքան բուժիչ, որքան հանրահայտ չեխական թերմալ ջրերը: Սակայն պետք է նշել, որ Հայաստան եկող օտարերկրացի զբոսաշրջիկների 8 տոկոսն այցելում է Ջերմուկ: Միայն առողջական խնդիրներով ժամանող զբոսաշրջիկների թիվը կազմում է մինչև 21 տոկոս, քանի որ հանքային ջրերն օգտակար են մի շարք հիվանդությունների բուժման համար. մարսողական համակարգի խանգարում, լեղապարկի հիվանդություն, շաքարախտ, մաշկաբանական հիվանդություն և այլն:

Ջերմուկ քաղաք-առողջարանն այսօր հանգստացողներին, զբոսաշրջիկներին է առաջարկում

¹ «Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012թթ. ռազմավարություն» ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 16-ի նիստի N 29-Ն արձանագրային որոշման հավելված, www.edrc.am

² www.jermukcity.am

³ Ասիական զարգացման բանկի Ջերմուկ քաղաքի զարգացման 2014թ. դեկտեմբերի 12-ի տեխնիկական ծրագիր:

⁴ «Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012թթ.ռազմավարություն» ՀՀ կառավարության 2009թ.հուլիսի 16-ի նիստի N 29-Ն արձանագրային որոշման հավելված, www.edrc.am

առողջարանների, հյուրանոցների, ընպելասրահի, մարզահրապարակների, սննդի օբյեկտների և այլ ծառայություններ: Ջերմուկում գործում են՝ «Արմենիա», «Օլիմպիա», «Ջերմուկ աշխարհ», «Գլաձոր», «Թուրիս», «Արարատ» և «Նարեկ» առողջարանները:

2012թ. շահագործման է հանձնվել «Ցենտրալ» հյուրանոցը, որի ներդրումների ծավալը կազմել է շուրջ 300մլն դրամ: Արդեն ավարտվել են 156 մեջատեղ ունեցող միջազգային հեղինակավոր «Չայաթ» ցանցի հյուրանոցի շինարարական աշխատանքները, ներդրումների ընդհանուր ծավալն իր հերթին կազմել է շուրջ 5մլրդ դրամ: «Թուրիս» առողջարանում բացվել է բուժական բաժանմունք (ներդրումների ծավալը՝ շուրջ 100մլն դրամ): «Արմենիա» առողջարանում գործում է նոր լողավազան և սպորտային դահլիճ: Բարեկարգվել են քաղաքի փողոցները, որոնք ամբողջությամբ լուսավորված են (300մլն դրամ՝ Ջերմուկի Ջարգացման հիմնադրամի կողմից)¹: Քաղաքի առողջարաններն ու հյուրանոցները ապահովված են ինտերնետ կապով, ներդրվել է միջազգային հեռուստատալիքների ընտրանի, բարելավվել է քաղաքի պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.jermukcity.am: Այս ամենը նպաստում է կայուն առողջարանային զբոսաշրջության զարգացմանը և համաձայն Բրունդտլանդի հանձնաժողովի (1987թ.) կայուն զարգացումը պետք է «բավարարի ներկայի պահանջները, չզոհաբերելով հետագա սերունդներին իրենց կարիքները հոգալու հնարավորությունը»: Որպես առողջարանային և ծմեռային զբոսաշրջության կենտրոն, Ջերմուկի զարգացումը պետք է իրականացվի հոգալով ներկա և ապագա բնակչության, զբոսաշրջիկների կարիքներն ու շահերը: Շուրջտարյա զբոսաշրջության համար ուժեղ կողմեր են հանդիսանում՝

- սանատոր-առողջարանային բուժումը,
- դահուկային սպորտը,
- պատմական տեսարժան վայրերը,
- տեղանքի տեղադրությունը, որը բարենպաստ է տարբեր մարզածների զարգացման համար,
- խաղատուն բացելու թույլտվությունը,
- Հայաստանում լեռնային կյանքի առաջին թանգարանի ստեղծման հնարավորությունը,
- հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի կառուցումը:

Քաղաքում անց են կացվում շախմատի մրցույթներ ՖԻԴԵ-ի Ջերմուկի Գրան ՊՐԻ (օգոստոս) և կանանց (հուլիս) մրցաշարեր: Ջերմուկի ջրվեժը, ընպելասրահը և 2007թ. արդեն կառուցված 1000մ երկարության ճոպանուղին նույնպես նպաստում են շուրջտարյա զբոսաշրջությանը: Ջերմուկի ջուրը մեծ համբավ ունի շալցված հանքային ջրի, բուժման նպատակով և տաք ջրով լողանքների համար: Խորհրդային իշխանության տարիներին Ջերմուկն ընդունում էր տարեկան 20000 զբոսաշրջիկ, սակայն անկախության հռչակումից հետո, հատկապես ֆինանսական ճգնաժամի պատճառով այս ցուցանիշն աստիճանաբար խիստ նվազեց: Վերջին տարիներին դարձյալ նկատվում է աճման միտում, և 2007-2008թթ. վրա հիմնված կանխատեսումները ցույց են տալիս, որ 2020թ. Հայաստանը կունենա 1,4-1,6մլն միջազգային ժամանումներ (2012թ. ունեցել է 843,000 միջազգային այցելու)²: Վերջիններիս հասնելու համար անհրաժեշտ է բարձրորակ սպասարկմամբ և մատչելի գներով պահել հիմնական այցելողներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ջերմուկ քաղաքի բնակչությունը 1990թ. կազմել է 10500 բնակիչ, 2001թ.՝ 5394, 2004թ.՝ 6400, այսինքն՝ տեղի է ունեցել նվազման միտում: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրության ծառայության տվյալների 2014թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Ջերմուկի մշտական բնակչությունը կազմել է 5,5հազ. մարդ: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչության թիվը համարյա չի փոխվել (5,5հազ.): Սակայն նույն ժամանակահատվածում նկատվել է գրանցված ազգաբնակչության թվի նվազեցում, կազմելով 2013թ.՝ 6602 բնակիչ, 2014թ.՝ 6389, իսկ 2015թ.՝ 6142 բնակիչ, 460-ով պակաս, քան 2013թ.: Գործազրկությունը և բնակչության շարունակական պակասը Ջերմուկի հիմնական խնդիրներից մեկն է: Զբոսաշրջության շուրջտարյա կայուն զարգացումը կնպաստի եկամտի աճին, աշխատատեղերի ավելացմանը և քաղաքի բնակչության աճին: Զբոսաշրջության կայուն զարգացման համար թույլ

¹ «Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012թթ.նազանավարություն » ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 16-ի նիստի N 29-Ն արձանագրային որոշման հավելված, www.edrc.am
² Ասիական զարգացման բանկի Ջերմուկ քաղաքի զարգացման 2014թ. դեկտեմբերի 12-ի տեխնիկական ծրագիր:

կողմեր կարող են հանդիսանալ.

- զբոսաշրջության շուկայի, զբոսաշրջիկների պահանջի և նախասիրությունների ոչ լիարժեք ուսումնասիրությունը,
- տեղի բնակչության դժգոհությունը՝ զբոսաշրջությանը առավելություն տալու համար,
- մրցակցությունը ՀՀ-ում և հանրապետությունից դուրս գտնվող առողջավայրերի ու հանգստյան վայրերի հետ,
- տուրիստական տեղեկատվական կենտրոնի բացակայությունը,
- աշխատանքի, ծառայությունների, ապրանքների, բուժման փաթեթների գների բարձրացումը
- զբոսաշրջության խթանումը միայն սեզոնին:

Տեղի բնակչությունը հիմնական եկամուտը ստանում է սեզոնին, երբ աշխուժանում է բիզնեսը, համեմատական կարգով բարձրանում են ապրանքների և ծառայությունների գները: Դա կարող է դժգոհություն առաջացնել զբոսաշրջիկների և գործազուրկ բնակչության շրջանում: Կարևոր է՝ բացատրական աշխատանքներ տանել բնակչության հետ և լսել նրանց կարծիքը: Այցելուների ծախսերը նվազեցնելով, առողջարանային բուժումը մատչելի դարձնելով բնակչության ավելի լայն խավերի համար, կապահովվի զբոսաշրջության կայուն զարգացում, իսկ առողջավայրն էլ իր բնակչությամբ միշտ պետք է լինի կառավարության և ՏԻՄ-երի ուշադրության կենտրոնում: ՀՀ Վայոց Ձորի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսվում են մի շարք միջոցառումներ Ձերմուկում առողջարանային զբոսաշրջությունը զարգացնելու ուղղությամբ, այդ թվում նախատեսվում է մթնոլորտային օդի աղտոտվածության մոնիթորինգի դիտակայանի տեղադրում և շահագործում:

Անհրաժեշտ է վերանորոգել զբոսաշրջության գրավչության վայրերը և էլ ավելի գրավիչ դարձնել ընպելասրահի տարածքը և փոքրիկ լիճը: Զարգացնել ու շատացնել ժամանցի վայրերը և վերականգնել Ձերմուկի մարզահամալիրը:

Կարևոր է, որ առողջարանների և հյուրանոցների աշխատողները տիրապետեն օտար լեզուների ու ունենան համապատասխան մասնագիտական կրթություն, մասնակցեն վերապատրաստման դասընթացների, իսկ խոհարարներն էլ հմտանան ազգային և օտարերկրյա ուտեստների պատրաստման գործում:

Հարկավոր է բարելավել Ձերմուկ-Երևան և քաղաքային տրանսպորտային համակարգը, կազմակերպել ծիակառքով քաղաքի տեսարժան վայրերը գնալու հնարավորություն:

Պետք է համապատասխան հարմարություններ և ծառայություններ ձևավորել նաև հաշմանդամների համար: Անհրաժեշտ է արդիականացնել առողջարանային բուժումների համար օգտագործվող սարքավորումները՝ հիմնվելով եվրոպական մի շարք երկրների լավագույն առողջարանների օրինակի վրա, մշակել բուժման գրավիչ փաթեթներ: Անհրաժեշտ է ընդլայնել եվրոպական չափանիշներին համապատասխանող հյուրանոցների ցանցը և տպագրել գովազդային ուղեցույցներ: Կարճաժամկետ ձեռքբերումները չպետք է գերակայեն երկարաժամկետ նպատակների նկատմամբ:

Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է՝ մեծացնել զբոսաշրջության ներդրումները ազգային եկամտի ավելացման, տարածաշրջանի համաչափ զարգացման, աղքատության նվազեցման գործում:

ՋԵՐՄՈՎ ԶԱՂԱՔԻ ՆԵՐՈՒԺԸ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԶԲՈՍԱԵՐՋՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

ԱՆԱՅԻՏ ՄԱՇԻՆՅԱՆ, *հայցորդ*

*ՆԿԱՄ Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ*

Համառոտագիր

Տարածաշրջանի սոցիալ-տնտեսական մակարդակի բարձրացման և առկա բազմաթիվ հիմնախնդիրների լուծման գործում մեծ դեր է խաղում զբոսաշրջության զարգացումը ՀՀ-ում: Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումները տարածաշրջանի համաչափ զարգացման, աղքատության մակարդակի նվազման գործում: ՀՀ-ում առողջարանային զբոսաշրջության զարգացման համար իր առանձնահատուկ տեղն ունի Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքը, որն ունի շատ արժեքներ, սակայն առողջարանի հիմնական բուժիչ գործոնը տաք աղբյուրներն են և հանքային ջուրը: Իրականացվում են զարգացման տարբեր ծրագրեր՝ քաղաքը համաշխարհային ժամանակակից առողջարան դարձնելու համար: Ուստի դրա համար անհրաժեշտ է բարձրացնել Ջերմուկ քաղաքի ներուժը համաշխարհային առողջարանային և լեռնային զբոսաշրջության շուկայում: Զբոսաշրջության շուրջտարյա կայուն զարգացումը կնպաստի եկամտի ավելացմանը, աշխատատեղերի ավելացմանը, քաղաքի բնակչության աճին, և համաշխարհային զբոսաշրջության շուկայում առողջավայրը կզբաղեցնի իր արժանի տեղը:

Բանալի բառեր. զարգացման տարածաշրջանային, դիվերսիֆիկացում, թերմալ ջրեր, առողջարանային զբոսաշրջություն, հիդրոթերապիա, զբոսաշրջության շուկա:

ПОТЕНЦИАЛ ГОРОДА ДЖЕРМУК НА РЫНКЕ ОЗДОРОВИТЕЛЬНОГО (САНАТОРНОГО) ТУРИЗМА

ԱՆԱԻՏ ՄԱՇԻՆՅԱՆ, *соискатель*

*Института экономики
им. М. Котаяна НАН РА*

Аннотация

В повышении уровня социально-экономического развития и в решении существующих многочисленных проблем региона большую роль играет развитие туризма в РА. Особое место в развитии оздоровительного (санаторного) туризма в РА занимает город Джермук Вайоцзорской области. Основной лечебный фактор здравницы – это теплые воды, минеральная вода. Осуществляются различные проекты, чтобы превратить город в современную мировую здравницу. Необходимо повысить потенциал города Джермук на мировом рынке оздоровительного и горного туризма. Постоянное стабильное развитие туризма будет способствовать увеличению населения, и здравница займет достойное место в мировом туризме.

Ключевые слова: стратегия развития, диверсификация, оздоровительный туризм, термальные воды, рынок туризма, гидро-терапия.

THE POTENTIAL OF JERMUK TOWN IN THE MARKET OF HEALTH RESORT TOURISM

ԱՆԱԻՏ ՄԱՇԻՆՅԱՆ, *Ph.D. Student*

*M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The development of tourism in the Republic of Armenia plays a key role in socio-economic development of the region and addresses many existing issues. The purpose of the state tourism development policy is to increase tourism investments to ensure equitable regional development and to reduce the level of poverty. In the Republic of Armenia, Jermuk town of Vayots Dzor marz plays a special role in developing health resort tourism, since Jermuk has many amenities, however but the main factors of health resort are warm sources, mineral waters. Many development programs are being implemented to make the town one of the modern health resorts of the world. Hence, it is required to increase the potential of Jermuk and turn it into one of the leading health and ski resorts of the world. This would enable Jermuk to become an all-year-round tourism destination, thus resulting in increase in income, creation of new jobs, population growth, and in this tourism market Jermuk would have its special place.

Keywords: Development strategy, diversification, thermal waters, health resort tourism, hydro-therapy, tourism market.

ԱՏՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ, *տ. գ. թ., դոցենտ*

ՎՊՏՎ ՏԿ և ՄՏՎ ֆակուլտետի դեկան

ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, *ՎՊՏՎ մագիստրանտ*

ԱՆԻ ՅՈՒՆԱՆՅԱՆ, *ՎՊՏՎ մագիստրանտ*

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գիտելիքների և բարձր տեխնոլոգիաների արտադրությունը զարգացած երկրների տնտեսության աճի գլխավոր նախապայմանն է: Նպաստելով մարդկային կապիտալի զարգացման այն դարձել է մրցունակ արտադրությունների ստեղծման ու զարգացման և դրանց արդյունավետության բարձրացման, մշակույթի, առողջապահության, անվտանգության, սոցիալական ոլորտի առաջընթացի ապահովման գլխավոր արտադրողական գործոնը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ գիտելիքների ու նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված մրցակցային առավելությունը գերադասելի է ավանդական ռեսուրսների առատության վրա հիմնված առավելություններից: Որպես կանոն, բարձր տեխնոլոգիաների զարգացումը հանգեցնում է սկզբունքորեն նոր մրցակցային առավելությունների, որոնց առկայությունը կարող է հանգեցնել համաշխարհային տնտեսության ուժի կենտրոնների փոփոխությունների: Այս պայմաններում զարգացման ցածր կամ միջին մակարդակ ունեցող որոշ երկրներ, զարգացնելով տեխնոլոգիական կարողությունները կարող են համաշխարհային տնտեսության արժեչափերի համակարգում զգալիորեն բարելավել իրենց դիրքերը:

Մրցունակ տնտեսության զարգացման գործում կարևոր նշանակություն ունի արդյունավետորեն գործող ազգային նորաստեղծական համակարգի (ԱՆՀ) ձևավորումը, որը երթադրում է և՛ առկա գիտատեխնոլոգիական ներուժի գնահատում, և՛ ռազմավարական զարգացման գերակա ուղղությունների հստակեցում: ԱՆՀ-ն կարելի է համարել պետական և մասնավոր հատվածներում գործող ու փոխադարձորեն պայմանավորված ինստիտուտների ցանց: Դրա շրջանակներում ստեղծվում, ներմուծվում, զարգանում և տարածվում են նոր տեխնոլոգիաները և մշակումները: Հայաստանի Հանրապետությունն այդ տեսակետից կարող է լուրջ հավակնություններ ու հաջողություններ ունենալ, քանի որ այդ ոլորտում տնօրինում է զարգացման նշանակալի ներուժի:

Մինչև Խորհրդային Միության փլուզումը, Հայաստանը եղել է էլեկտրոնիկայի, ճշգրիտ մեքենաշինության, սարքաշինության և տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի առաջատար կենտրոններից մեկը՝ իր ավելի քան երկու տասնյակ խոշոր գիտահետազոտական ինստիտուտներով ու արդյունաբերական ձեռնարկություններով: ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում ՏՏ ոլորտը լուրջ ճգնաժամ ապրեց, սակայն այն հաղթահարվեց 1990-ական թթ. սկզբին, մասնավոր ձեռնարկությունների ի հայտ գալուն զուգահեռ: Համաձայն տեղական և արտասահմանյան հետազոտությունների ու փորձագիտական վերլուծությունների՝ Հայաստանի Հանրապետությունը զգալի ներուժ ունի ապահովելու իր ներկայությունն աշխարհի ՏՀՏ ոլորտում:

Շատ տնտեսագետների հետազոտությունները (Ա.Աբրահամովիչ¹, Յ.Ֆագերբերգ²) ցույց են տալիս, որ գոյություն ունեն 3 հիմնական գործոններ, որոնք բացատրում են միջազգային տեխնոլոգիական առաջընթացի աստիճանը՝

1. գիտության մշակումների և հետազոտությունների վրա կատարված ծախսերը,
2. մեքենաների և սարքավորումների մեջ ներդրումները,
3. աշխատուժի բարձր կրթական մակարդակի ապահովման համար ներդրումները, որը որոշում է մեքենաների և սարքավորումների կատարելագործման ազգային կարողությունը³:

¹ Abramowitz, M., (1986). Catching up, forging ahead and falling behind. J. Economic History 46, pp. 385–406.

² Fagerberg, J., 1994. Technology and international differences in growth rates. Journal of Economic Literature, pp. 1147–1175.

³ Grigoryan Karen, "Technological progress and foreign trade: EU experience in innovation policy in comparison with non-EU developed countries", collective monograph on "Innovative kind of development": "Spdejstvie-21 vek" publishing house, 2011, pp. 26-35.

Միջազգային տարբեր զեկույցներ փաստում են ՀՀ տեխնոլոգիական ոլորտի որոշակի զարգացման որոշակի տեղաշարժի մասին, սակայն այդ փոփոխությունները ՀՀ-ում դեռևս չեն կարող բավարար ու նշանակալի համարվել: Մասնավորապես՝ 2014-2015թթ. մրցունակության համաշխարհային զեկույցում նորարարությունների ցուցանիշով Հայաստանը 144 երկրների շարքում զբաղեցրել է 104-րդ տեղը (2013-2013 թթ. զեկույցում Հայաստանը նույն ցուցանիշով զբաղեցրել է 103-րդ տեղը՝ 148 երկրների շարքում):

Ըստ ICI համաթվի 2010-2011թթ. հրապարակված ցուցանիշների՝ Հայաստանը 130 երկրների մեջ 41-րդն է՝ 56 միավորով¹: Այս համաթիվն իր մեջ պարունակում է 61 փոփոխական, ըստ որոնց տնտեսության նորարարական ներուժը գնահատվում է հինգ հիմնական ենթահնդեքսների միջոցով: Դրանք են՝ ինստիտուցիոնալ միջավայրը, մարդկային կապիտալը (training and social inclusion), իրավական կարգավորման դաշտը, ինովացիոն հետազոտությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների ներթափանցվածության մակարդակը:

Տեխնոլոգիական ոլորտի քաղաքականության արդյունավետ կազմակերպման տեսանկյունից կարևոր է ինովացիոն ռազմավարության բազմազանեցման գործընթացը: Այն հնարավորություն է տալիս ապահովել մրցակցային առավելություն: Դրա ձևերից է փնջակապերի (քլասթերների) ձևավորումը, որը տարբեր ոլորտների և լոկալ կրթության մրցունակ տնտեսավարող սուբյեկտների համախումբ է: Հայաստանում քլասթերների զարգացման մակարդակը, ըստ մրցունակության համաշխարհային զեկույցի, գնահատվում է բավականին ցածր՝ 2.93՝ 7 հնարավորից, ինչի պատճառով ՀՀ-ն 151 երկրների շարքում 108-րդն է²:

Ժամանակակից տեխնոլոգիական ենթակառուցվածքների համահարթ զարգացման ուղղությամբ 2014-ից ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում է Գյումրու տեխնոպարկի ծրագիրը, որը միտված է Գյումրի քաղաքի բարգավաճմանը՝ վերածելով այն SS զարգացած ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական գոտու: 1 տարի գործող տեխնոպարկի տարածքում արդեն իսկ գործում են «Նեյշնլ Ինստրումենթս» մեխանիկայի և էլեկտրոնիկայի ոլորտների ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաները, «Դ-Լինք» ցանցային տեխնոլոգիաների համաշխարհային առաջատար ընկերության հետ համատեղ ստեղծված՝ տարածաշրջանում դեռևս միակ հետազոտական կենտրոնը, «Եռաչափ մոդելավորողների միությունը»:

Հայաստանի, մեծությամբ 3-րդ քաղաքում՝ Վանաձորում, այժմ ընթանում են նոր տեխնոպարկի կառուցման աշխատանքները և մասնագետների մրցութային ընտրման գործընթացը: Այն նախատեսվում է բացել 2016թ.-ին և ստեղծել համապատասխան բոլոր ենթակառուցվածքները: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով «Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացում» ծրագրի համար հատկացվել է 150.0 մլն դրամ³: Ապագայում պլանավորվում է նաև հիմնել Հայաստանում թվով 4-րդ տեխնոպարկը նաև Կապան քաղաքում, որը կլինի քաղաքի բարգավաճման և SS ոլորտի զարգացման համապատասխան ենթակառուցվածքների ներդրման հրաշալի քայլ:

Հատկանշական է նաև Հայաստանում IBM ինովացիոն կենտրոնի բացման ուղղությամբ տարվող աշխատանքները, ինչպես նաև ՀՀ շարունակական ներկայացուցչական աշխատանքները ԱՄՆ-ի Սիլիկոնյան հովտում, որը հիմնադրվել է 2012թ.-ին՝ ինովացիոն ներդրումների և վաճառքի ծավալի մեծացման, ինչպես նաև Հայաստանի և ԱՄՆ-ի մասնագետների միջև կապի պահպանման համար:

Հայաստանի ինովացիոն և տեխնոլոգիական զարգացման կարևոր կողմերից է համարվում կրթությունը: Այս ուղղությամբ շարունակվում է ՏՀՏ ոլորտում «Microsoft» ինովացիոն կենտրոնի գործունեությունը հայ-հնդկական կրթական գերազանցության կենտրոնում, «mLab ECA» Mobile Solutions տարածաշրջանային լաբորատորիայի գործունեությունը, «ANEL» Հայաստանի ազգային ինժեներական լաբորատորիայի գործունեությունը:

¹ Innovation Capacity Index(<http://www.innovationfordevelopmentreport.org/ici.html>)
² <http://www.cf.am/files/news/226/7ca0682dcce8c76b.pdf>
³ «ՀՀ պետական բյուջեի մասին» 2015թ. ՀՀ օրենքը, <http://minfin.am/index.php?cat=9&lang=1>


Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը 2000թ. հայտարարվել է Հայաստանի տնտեսության գերակա ճյուղերից մեկը¹: 2001թ. Կառավարության հավանության արժանացավ «ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը», իսկ 2008թ.՝ «ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը»: 2010թ. հաստատվել է «ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգ»: Ելնելով միջազգային փորձից՝ տեխնոլոգիական զարգացում կարող են ապահովել նաև ոչ հարուստ և նոր զարգացող տնտեսությունները՝ կիրառելով առկա մտավոր ներուժը և զարգացնելով այն²:

Ներկայում Հայաստանի տնտեսությունը մուտք է գործել այնպիսի ժամանակահատված, որտեղ արտահանումը դառնում է հետագա աճի շարժիչ ուժ, ուստի տեխնոլոգիական զարգացման ցուցանիշներից Հայաստանի համար առավել նշանակալի է բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման ծավալները: ՀՀ տնտեսության համար բարձր տեխնոլոգիական արտադրանքները հետազոտման և մշակման բարձր ինտենսիվությամբ և գիտելիքի մեծ պաշար պարունակող ապրանքներն են՝ համակարգիչները, դեղորայքը և բժշկական այլ միջոցները, գիտական սարքավորումները, ծրագրային արտադրանքը, տվյալների մշակման սարքավորումները, հեռահաղորդակցության տեխնոլոգիաները և այլն:

Ներկայացնենք ՀՀ բարձր տեխնոլոգիական հիմնական ոլորտների ապրանքների արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքը:

Գծապատկեր 1

ՀՀ բարձր տեխնոլոգիական ճյուղերի ապրանքների արտահանման ապրանքային կառուցվածքը 2003-2013թթ.
(հազ. ԱՄՆ դոլար)



ՀՀ բարձր տեխնոլոգիական ճյուղերի ապրանքային կառուցվածքի գերակշիռ մասն ապահովում է «Համակարգիչներ, էլեկտրոնիկա և օպտիկական» սարքեր ենթախումբը. առավել մեծ արտահանման տեմպեր ապահովել է 2008թ. այնուհետև մինչև 2010 թվականը նկատվել է նվազման միտում և նորից աճ: Բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանման անընդհատ աճ է ապահովել միայն դեղագործական արտադրանքը: Նշված 4 գիտատար ճյուղերի արտահանումը 2013թ. կազմել է ընդհանուր արտահանման 3.3%-ը, 2012թ.՝ 5%: Ինչպես երևում է գծապատկերից, 2013թ. ընդհանուր բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանումը նվազել է նախորդ տարվա համեմատ 26 տոկոսով, ինչը պայմանավորված է վերը նշված ճյուղերի (բացի դեղագործության) արտադրության ծավալների կրճատմամբ:

Վերջին տասնամյակում ՏՏ ոլորտը Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ու խոստումնալից ճյուղերից է: Ներկայում Հայաստանում գործում են 400 ՏՀՏ ընկերություններ, որոնք միջինում ապահովում են տարեկան 20% աճ: Այս ընկերությունների մեծամասնությունը


¹ ՀՀ կառավարության 2000թ. դեկտեմբերի 28-ի նիստի «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունաբերությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը ճանաչելու մասին» N 58 արձանագրային որոշում:
² Սարգսյան Վ., Տեխնոլոգիական զարգացում, թվային տնտեսություն, «Զարգացում» ներհամալսարանական գիտաժողովի նյութեր, 2013թ.:

տեղակայված է Երևանում (գրեթե 90%-ը), այնուամենայնիվ, մարզային զարգացման ծրագրերի շրջանակում կրթական և գործարար ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ գործող ընկերությունների թիվը տարեցտարի աճում է 33 այլ մարզերում, հատկապես Շիրակի և Լոռու մարզերում: Միայն 2013 և 2014 թվականներին 34 նոր ընկերություններ են հիմնադրվել, որոնցում ստեղծվել են շուրջ 300 նոր աշխատատեղեր: Ընդհանուր առմամբ, 2014 թվականի ընթացքում մոտ 1100 նոր աշխատատեղեր են ստեղծվել: Վերջին տարիներին ոլորտում գրանցվել է նոր ընկերությունների կտրուկ աճ՝ թե՛ տեղական նորաստեղծ ձեռնարկությունների, թե՛ արտասահմանյան մասնաճյուղերի կողմից:

ՏՏ ոլորտում Հայաստանի արտաքին շուկաներ մուտք գործելու և համաշխարհային փորձին իրազեկ լինելու առումով զգալի դերակատարություն ունի հայկական սփյուռքը: ՏՀՏ ոլորտն ամենաչեզոքն է եղել վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում: Այսպես, 2009թ. այն արձանագրել է 16.8% աճ (եթե 2008թ. ՀՀ ՏՀՏ ոլորտի շրջանառությունը կազմել է 111.3 մլն ԱՄՆ-ի դոլար, ապա 2009-ին՝ 129.9), ոլորտում հիմնվել է մոտ 30 նոր ընկերություն: Սա ունի իր օբյեկտիվ պատճառները, որոնցից կարելի է առանձնացնել այն, որ ճգնաժամի պայմաններում ֆիրմաները ձգտում են կիրառել զՏԱ արդյունքները, ինչը հնարավորություն է տալիս կրճատելու արտադրական ծախսերն ու նրցակցային առավելություն ստանալու մյուսների նկատմամբ¹:

Գծապատկեր 2

ՏՏ ոլորտի արտահանման ծավալները և մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ 2003-2014թթ. ²



ՏՏ արտահանման համաշխարհային ոլորտն աճում է բավականին արագ տեմպերով: Վերջին տասնամյակում ամենաբարձր աճ (20% և ավել) արձանագրած երկրները հիմնականում զարգացող երկրներն են, այդ թվում նաև՝ Հայաստանը:

2013թ. դրությամբ Հայաստանն արտահանել է մոտ 130 մլն. ԱՄՆ դոլարի բարձր տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ապրանքներ և ծառայություններ, իսկ 2014թ. արտահանման ծավալները զգալիորեն աճել են՝ հասնելով 153.2 միլիոն ԱՄՆ դոլարի, ինչը կազմում է ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի (առանց ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերությունների) եկամտի 44%-ը: Սակայն արտահանման շուկայում շարունակում են գերիշխել օտարերկրյա ընկերությունները, որոնց բաժինը կազմում է 86%: Ծրագրային ապահովում և ծառայություններ ոլորտի խոշոր ձեռնարկություններն արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղեր են, որոնք գրեթե ամբողջությամբ արտահանում են իրենց արտադրանքը: Բացի դրանից, շատ տեղական ընկերություններ նույնպես արտահանում են իրենց արտադրանքի և ծառայությունների զգալի մասը:

¹ Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն. (Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ), Երևան, 2009թ., էջ 3:
² Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, «Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն» 2010-2014թթ., էջ 61-70:

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից SS արտադրանքի մասնաբաժինն արտահանումների ընդհանուր ծավալում աճել է 2003թ. զրանցված 3.6%-ից մինչև 2014թ. 10%, ինչը վկայում է Հայաստանի տնտեսության համար SS ոլորտի աճող նշանակության մասին, որն ուղղված է արտահանող ձեռնարկությունների զարգացմանն ու ընդլայնմանը:

Արտահանման և ներմուծման բարձր միտվածությունն ունի ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտներից դեղագործությունը: Արտահանման կշիռն իրացման մեջ 2014թ.-ին կազմել է շուրջ 57%` 9.1 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա համեմատ արտահանումն աճել է 16%-ով: Ընդհանուր առմամբ, շուկայի աճը նշանակում է, որ տեղի է ունեցել ներմուծվող դեղագործական արտադրանքի հայրենական դեղամիջոցներով փոխարինում, ինչը և փաստում է 2014թ. ներմուծման ծավալների կրճատումը, սակայն դեռևս ներմուծումը գերազանցում է արտահանմանը տասնապատիկ անգամ:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումն` իր բոլոր ենթաճյուղերով կարող է ստանձնել լոկոմոտիվի դեր` ձևավորելու տնտեսության և ՀՆԱ-ի ռացիոնալ կառուցվածք և դրանց կայուն և շարունակական աճով նպաստել երկրի պաշտպանունակության բարձրացմանը, ռազմական և տնտեսական անվտանգության ապահովմանը, մարդկային զարգացմանն ու բնակչության բարեկեցության բարձրացմանը:

Մրցունակ տնտեսության ձևավորման ճանապարհին ՀՀ տնտեսական քաղաքականության խնդիրները պետք է լինեն`

1. դիմակայումը սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական զարգացման ոլորտում գալիք տասնամյակի ռազմավարական մարտահրավերներին, այդ թվում` համաշխարհային մրցակցության ուժեղացմանը, որն ընդգրկում է ապրանքների, կապիտալի, տեխնոլոգիաների, աշխատուժի շուկաները և նոր պահանջներ է ներկայացնում մրցունակությանը, նորարարությանը և ներդրումների ներգրավման ունակությանը,
2. արհեստավարժ կադրերի հաշվին համաշխարհային տնտեսությունում մրցակցային դիրքերի պահպանումը, ինչի համար պահանջվում է աշխատանքի արտադրողականության կայուն աճ, ոլորտի արդիականացում և արագացված զարգացում,
3. գերակայող ուղղություններով բարձր տեխնոլոգիական շուկաներում համընդհանուր մասնագիտացում ապահովող գիտատեխնոլոգիական համալիրի ձևավորումը,
4. տնտեսության կառուցվածքային բազմազանության ապահովումը` վերամշակող արդյունաբերության մրցունակության մեծացման հիմքի վրա,
5. առաջնային ռեսուրսների` աշխատանքի, էներգակիրների, նյութերի օգտագործման արդյունավետության մեծացումը,
6. բնակչության կյանքի որակի բարձրացումը:

Այսպիսով` Հայաստանում, առաջին հերթին, անհրաժեշտ է բարձրացնել տնտեսության ավանդական ճյուղերի տեխնոլոգիական մակարդակը, որպեսզի դրանք ընկալունակ դառնան նորարարությունների նկատմամբ: Որպես կանոն, ըստ «առաջանցիկ զարգացման» մոդելի, դա իրականացվում է արևմտյան առաջավոր տեխնոլոգիաների, այսպես կոչված` լայնածավալ կիրառման տեխնոլոգիաների զանգվածային և արդյունավետ փոխառմամբ, որոնք արդեն իսկ գործնականում ապացուցել են իրենց արտադրողական լինելը:

**ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ԱՏՈՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ, *դ. գ. թ., դոցենտ*
ՏՊՏՏ ՏԳ և ՄՏՏ ֆակուլտետի ղեկավար

ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, *ՏՊՏՏ մագիստրանտ*
ԱՆԻ ԿՈՒՆԱՆՅԱՆ, *ՏՊՏՏ մագիստրանտ*

Համառոտագիր

Քննարկվել է տեխնոլոգիական և ինովացիոն ենթակառուցվածքների զարգացման կարևոր դերը ՀՀ տնտեսության աշխուժացման և մրցունակության բարձրացման գործում: Նշվում է այն, որ չնայած վերջին տարիներին միջազգային տարբեր զեկույցներ փաստում են ՀՀ տեխնոլոգիական ոլորտի որոշակի առաջընթացի մասին, այդուհանդերձ, այդ փոփոխությունները ՀՀ-ում դեռևս նշանակալի չեն: Հայաստանը տեխնոլոգիական ոլորտի զարգացման առումով կարող է լուրջ հնարավորություններ ունենալ, քանի որ այս ոլորտում տնօրինում է զարգացման հսկայական ներուժի: Այս առումով կարևոր է մրցունակ տնտեսության ձևավորման ճանապարհին ՀՀ տնտեսական նպատակաուղղված ու ճիշտ քաղաքականության իրականացումը:

Բանալի բառեր. տեխնոլոգիական զարգացում, մրցունակություն, բարձր տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, գիտատեխնիկական ներուժ:

**ТЕХНОЛОГИЧЕСКОЕ РАЗВИТИЕ В СИСТЕМЕ ФАКТОРОВ
ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ЭКОНОМИКИ**

АТОМ МАРГАРЯН, *к.э.н., доцент*
декан факультета РЭ и МЭО АГЭУ

АНИ АВЕТИСЯН, *магистрант АГЭУ*
АНИ УНАНЯН, *магистрант АГЭУ*

Аннотация

Рассмотрена важная роль развития технологии и инновационной инфраструктуры в повышении конкурентоспособности и активации экономики Армении. Отмечено, что несмотря на недавние международные доклады, которые отмечают небольшой прогресс в сфере технологии, до сих пор эти изменения не являются существенными. С точки зрения технологического развития Армения может иметь серьезные возможности, поскольку эта область имеет огромный потенциал для развития. На пути формирования конкурентоспособной экономики в РА очень важна реализация последовательной и целенаправленной политики.

Ключевые слова: технологическое развитие, конкурентоспособность, высокие технологии, информационные технологии, научно-технический потенциал.

TECHNOLOGICAL DEVELOPMENT AS A FACTOR IN THE SYSTEM TO IMPROVE COMPETITIVENESS

ATOM MARGARYAN, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*
Dean, Department of Economic Regulation and International Economic Relations,
Armenian State University of Economics

ANI AVETISYAN, *Graduate Student*
Department of Economic Regulation and International Economic Relations
Armenian State University of Economics

ANI HUNAYAN, *Graduate Student*
Department of Economic Regulation and International Economic Relations
Armenian State University of Economics

Abstract

The article discusses the crucial role of technology and innovation infrastructure development in boosting the economic growth in the Republic of Armenia and improving the competitiveness of the nation. The authors mention, that although various reports of last couple of years state that the technology sector of the Republic of Armenia has reported some progress, however, these changes are still not significant. From the point of view of perspectives of development of Armenia's technology sector, this sector could have serious opportunities due to the huge potential to be utilized. Therefore, in building a competitive economy the Republic of Armenia needs to implement a targeted and sound economic policy.

Keywords: Technological development, competitiveness, high technology, information technology, scientific and technological potential.

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տ. գ. թ.

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆ, տ. գ. թ.

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**ՆԵՐՂԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍՊՐԱՎԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ
ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ցանկացած երկրի տնտեսական զարգացման նախադրյալներից մեկը ներդրումային ռեսուրսներ ներգրավելու վերջինիս ունակությունն է: Ներդրումների աճի ապահովումը լուծում է մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են աշխատատեղերի ստեղծումը, նոր տեխնոլոգիաների և նոու-հաուսների ներգրավումը, նոր շուկաների բացահայտումը, նրանց հասանելիությունն ու այդ շուկաներ մուտք գործելու հնարավորությունները, և այլն: Հետևաբար Հայաստանի ներդրումների խթանումը և աջակցումը տնտեսական զարգացման առանցքային ու առաջնահերթ խնդիրներից է:

Հայաստանում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման խնդիրներն առավել արդիական դարձան անկախության հռչակումից հետո, և նոր տնտեսական համակարգի ձևավորման հետ մեկտեղ երկրի տնտեսությունը կտրուկ անկում ապրեց: 1990-ական թվականների կեսերին մասնավորեցման փորձը մեր հասարակությունում և տնտեսական կյանքում չձևավորեց այն լիարժեք պայմաններն ու նախադրյալները, որոնք անհրաժեշտ էին այդ մասնավորեցմանը հետևող ներդրումների ներգրավման և ձեռնարկատիրության խթանման համար: Ներկայումս իրենց արդիականությունը չի կորցրել ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որոնք պայմանավորված են այդ միջավայրը կարգավորող տնտեսական, օրենսդրական գործոններով և վարչական ընթացակարգերով:

Ներդրումների ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի վերլուծությունը ենթադրում է այն իրավական հենքի ուսումնասիրությունը, որը կապված է ներդրողների իրավական կարգավիճակի, ներդրումների պաշտպանության պետական երաշխիքների, ներդրումների ու դրանցից ստացվող դրամական հոսքերի հարկման և մաքսային կարգավորման, ներդրողների ու աշխատանքային ռեսուրսների ազատ տեղաշարժի և մուտքի արտոնագրերի տրամադրման, արժեթղթերի շուկայի առանձնահատկությունների, սեփականության իրավունքի, վեճերի լուծման համար գոյություն ունեցող ընթացակարգերի և բազմաթիվ այլ ոլորտների հետ, որոնք եթե ոչ ուղղակիորեն, ապա անուղղակիորեն ազդում են ներդրումային որոշումների վրա: Ներդրումների ծավալների աճի, նրա ուղղությունների և կառուցվածքի դիվերսիֆիկացման նպատակով անհրաժեշտ է մեծ թվով նախապայմանների և բաղադրիչների համակցում՝ ներդրողի համար համապատասխան միջավայր ստեղծելու համար: Ներդրումները կարգավորող օրենսդրությունը պետք է արտացոլի կառավարության վերաբերմունքը ներդրումների նկատմամբ և կարևորի վերջինիս խթանիչ դերը տնտեսական աճի և զբաղվածության մակարդակի բարձրացման գործում: Ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ներդրումներն օժանդակող և խթանող, ինչպես նաև ներդրումների ու ներդրողների պաշտպանության հարցերով զբաղվող լիովին ձևավորված և ամբողջ ծավալով գործող ենթակառուցվածքներ:

Հարկ է նշել, որ ներդրումային միջավայրի կարգավորման մոտեցումները չեն կարող ինքնանպատակ և միջազգային տնտեսական իրողություններից մեկուսացված լինել, քանի որ այժմ, ավելի քան երբեք, լայն են ներդրումային հնարավորությունների աշխարհագրական սահմանները, մեծ է կապիտալի և աշխատուժի հոսունությունը, ինչն, ի վերջո, գլոբալ մակարդակով երկարաժամկետ հատվածում հանգեցնում է ներդրումների համար առավել նպաստավոր միջավայր ունեցող երկրներում ներդրումների գերկենտրոնացման և տնտեսական աննախադեպ աճի: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն զարգացող երկրները, որոնք համակարգված ձևով

իրականացրել են հստակ ներդրումային քաղաքականություն և ձևավորել են այդ քաղաքականության իրականացմանը նպաստող համապատասխան ենթակառուցվածքներ, հասել են հաջողության և ապահովել են տնտեսության արագ աճ:

Ներդրումային կոչոտ քաղաքականություն կարող են առաջարկել միայն բացառիկ աշխարհագրական և անփոխարինելի բնական պաշարներ տիրապետող երկրները միայն, որոնց շարքին, ավաղ Հայաստանը դժվար է դասել: Ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել Հայաստանի ներդրումային միջավայրի ձևավորման օրենսդրական գործոնները, բացահայտել այն առավելությունները և թերությունները, որոնք այս կամ այն կերպով ազդում են ներդրողների ներդրումային որոշումների վրա, ինչպես նաև մշակել առկա խոչընդոտների ազդեցության վերացման և առավելությունների ամրապնդման ուղղությամբ միջոցառումների համակարգ, ինչը նախապայման կարող է դառնալ երկարաժամկետ զարգացման և բարգավաճման համար:

ՀՀ ներդրումային միջավայրի պետական կարգավորման կարևորագույն բաղադրիչներից մեկը «Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է, որն ընդունվել է 1994թ. հուլիսի 4-ին¹: Օրենքը սահմանում է ՀՀ տարածքում օտարերկրյա ներդրումների իրականացման, իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմքերը և ուղղված է օտարերկրյա ներդրողների իրավունքների, օրինական շահերի, գույքի պաշտպանության ապահովմանը, օտարերկրյա նյութական և ֆինանսական միջոցների ներգրավմանը, առաջավոր տեխնոլոգիաների, կառավարման և կազմակերպման փորձի ներդրման ու արդյունավետ օգտագործման նախադրյալների ստեղծմանը:

Ընդհանուր առմամբ, «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը կարելի է բնութագրել որպես բավականին ազատական օրենք: Օտարերկրյա ներդրումները կարող են Հայաստան մուտք գործել ազատորեն, առանց որևէ լրացուցիչ թույլտվությունների, սուբյեկտիվ կամ որոշակի ցուցանիշով քննություն անցնելու: Սակայն փորձը ցույց է տալիս, որ միայն այս օրենքի առկայությունը բավարար նախապայման չէ մեծածավալ ներդրումների ներգրավման համար, քանի որ, ինչպես նշվեց վերևում, ներդրումային որոշումների վրա ազդում են բազմաթիվ այլ գործոններ, այդ թվում նաև այլ օրենսդրական նորմեր և փաստաթղթեր:

Օտարերկրյա ներդրողների շահերի հետ առնչվող կարևորագույն հարցերից մյուսը կապված է սեփականության իրավունքը կարգավորող օրենսդրական դաշտի հետ: ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը և ազատ զարգացումը, տնտեսական գործունեության ազատությունը և ազատ մրցակցությունը: Ներդրումային գրավչության համար կարևորություն ներկայացնող սեփականության իրավունքի, երկի թե, կարևորագույն սահմանափակումն այն է, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք հողի սեփականության իրավունքից չեն օգտվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի²:

Օտարերկրյա ներդրումների տեսանկյունից կարևոր են նաև ներդրումների խրախուսման և պաշտպանության համաձայնագրերը: Ներկայումս Հայաստանը ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրեր է ստորագրել շուրջ 6 տասնյակ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ: Նշենք նաև, որ այդ համաձայնագրերից ներկայումս համապատասխան կարգով վավերացվել և ուժի մեջ են մտել միայն 37-ը:

Ներդրումների խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագրերը, ըստ էության լրացնում և վերահաստատում են «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքում ամփոփված բաց դռների քաղաքականության, ներդրումների անձեռնմխելիության և այլ դրույթներ: Դրանք լրացուցիչ երաշխիքներ են ազգային օրենսդրության փոփոխություններից տվյալ երկրի ներդրումները պաշտպանելու ուղղությամբ, քանի որ միջազգային համաձայնագրերը իրավական հիերարխիայի տեսանկյունից ավելի բարձր են և կիրառվում են առաջին հերթին:

Ներդրումային ակտիվության խրախուսման ուղղությամբ իրականացված միջոցառումների շարքում կարևոր նշանակություն ունեն նաև ազատ տնտեսական գոտիները: Ազատ տնտեսական գոտիների գործունեությունն ապահովելու համար ստեղծվել է համապատասխան իրավական

¹ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 04.07.1994թ.:

² ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունվել է 27.11.2005թ.:

դաշտ, որի առանցքում ազատ տնտեսական գոտիների մասին ՀՀ օրենքն է¹: Ազատ տնտեսական գոտին ՀՀ կառավարության սահմանած հատուկ տարածք է, որը համարվում է ՀՀ մաքսային տարածքից դուրս, և որտեղ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է ազատ տնտեսական գոտիների մասին օրենքով սահմանված առանձնահատկություններին համապատասխան:

Ազատ տնտեսական գոտում հարկային և մաքսային փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությամբ՝ հաշվի առնելով, որ ազատ տնտեսական գոտու շահագործողներին տրվել են շահութահարկի (0%), ավելացված արժեքի հարկի (0%), գույքահարկի (0%), մաքսատուրքի (0%) վճարման արտոնություններ:

Ներկայումս ՀՀ-ում գործում են 2 ազատ տնտեսական գոտիներ՝

1. «ԱԼՅԱՆՍ» ազատ տնտեսական գոտի², որն ունի բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության և արտահանման ուղղվածություն՝ էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության և ՀՀ տարածքում չարտադրվող ապրանքատեսակների արտադրության ոլորտներում:

2. «ՄԵՐԻԴԻԱՆ» ազատ տնտեսական գոտի³, որի գործառնական տեսակը սահմանված է որպես արտադրաարդյունաբերական՝ ոսկերչության, ակնագործության ու ժամագործության ոլորտներում:

Ներդրումային միջավայրի ամբողջականությունը ենթադրում է նաև արժեթղթերի շուկայի և համապատասխան օրենսդրության առկայություն: Այս առումով կարևորվում է «ՀՀ արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք⁴: Արժեթղթերի շուկայի մասին օրենքի հիմնական նպատակներից են ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, արժեթղթերի շուկայի թափանցիկության, կայուն և արդյունավետ զարգացման ապահովումը, արժեթղթերի գնագոյացման համակարգի արժանահավատության ապահովումը, արժեթղթերի շուկայում համակարգային ռիսկերի նվազեցումը և այլն:

Զնայած արժեթղթերի մասին ՀՀ օրենսդրության բավականին բարձր մակարդակին՝ հարկ է արձանագրել, որ ինքնին արժեթղթերի շուկայի զարգացումը չի կարելի բավարար համարել: ՀՀ արժեթղթերի շուկայի թերզարգացվածության խնդիրը բավականին լայնորեն քննարկված է ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ ընդհանուր բնույթի հրապարակումներում: Արժեթղթերի շուկայի զարգացման և ակտիվացման ուղղությամբ առաջադրվել են բազմաթիվ թեզեր, պաշտպանվել են ատենախոսություններ, սակայն փաստն այն է, որ այս ոլորտում սայլը տեղից չի շարժվում: Քիչ թե շատ բավարար կարելի է համարել պետական պարտատոմսերի զարգացման ներկայիս մակարդակը, ինչը, սակայն կազմում է այս ոլորտի միայն չնչին մասը, և որ ավելի կարևոր է՝ այն ըստ էության չի լուծում արժեթղթերի շուկայի ներդրումային գործառույթները:

Ազգային ներդրումային օրենսդրությամբ կառավարությունը ձևավորում է իր ներդրումային քաղաքականությունը, որի շրջանակներում էլ լուծվում են արդիական տնտեսական խնդիրները: Այս առումով հարկ է նշել, որ ցանկացած երկրում, այդ թվում նաև Հայաստանում ներդրումային քաղաքականությունը կառավարության տնտեսական քաղաքականության կարևորագույն տարրերից և ուղղություններից է: Այն նպատակաուղղված է երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավմանը և, վերջինիս հիման վրա, տնտեսական զարգացման ապահովմանը:

2005թ.-ից ՀՀ-ում կիրառության մեջ է դրվել ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը, որով սահմանվում են ՀՀ ներդրումային քաղաքականության առաջնահերթությունները, նպատակները, խնդիրները, սկզբունքներն ու առաջնահերթ լուծման կարիք ունեցող հիմնախնդիրները: Մասնավորապես, սահմանվում է, որ ՀՀ ներդրումային քաղաքականության հիմնական նպատակը տնտեսական ակտիվության բարձրացման, բարենպաստ ներդրումային միջավայրի

¹ ՀՀ օրենքը ազատ տնտեսական գոտիների մասին, ընդունված է 2011 թվականի մայիսի 25-ին:

² Ստեղծվել է ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի թիվ N785-Ա որոշմամբ, «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵՐՄԱԳԻ» ՓԲԸ տարածքներում:

³ Ստեղծվել է ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 231-Ա որոշմամբ «ԷՅ ՋԵՅ ԷՅ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ տարածքում:

⁴ ՀՀ Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, ընդունված 2007 թվականի հոկտեմբերի 11-ին:

ձևավորման և ներդրումների ծավալների մեծացման միջոցով տնտեսական կայուն աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման և շրջակա միջավայրի պահպանության ապահովումն է: Նշված միջոցառումների իրագործման ուղղությամբ ՀՀ-ում իրագործվող ներդրումային քաղաքականությունը պետք է հիմնված լինի հետևյալ հիմնական սկզբունքների վրա՝

- ներդրումները կարգավորող օրենսդրության կայունության ապահովում,
- օտարերկրյա և տեղական ներդրողների համար տնտեսավարման հավասար, ոչ խտրական պայմանների ապահովում,
- օտարերկրյա ներդրումներին և ներդրողներին ազգային և առավել բարենպաստ ռեժիմների տրամադրում,
- ներդրումային ոլորտում տնտեսավարման ազատական սկզբունքների կիրառում,
- ներդրումների և ներդրողների շահերի պաշտպանության ապահովում,
- ներդրումները կարգավորող միջազգային իրավական նորմերի և միջազգային ընդունված պրակտիկայի ընդունում և կիրառում:

Հեշտ է համոզվել, որ ներդրումային քաղաքականության հայեցակարգով ամրագրված սկզբունքներից 2-րդն ու 3-րդը ուղղակիորեն հակասում են միմյանց: Եթե երկրորդ սկզբունքը ենթադրում է տեղական և օտարերկրյա ներդրողների հավասարություն, ապա 3-րդը՝ ճիշտ հակառակը: Հետևաբար անհասկանալի է հայեցակարգում նման ձևակերպմամբ սկզբունքների ներառման տրամաբանությունը:

Հայաստանում ներդրումների խթանման և ներդրումային ակտիվության բարձրացման ուղղությամբ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել են մի շարք պետական ներդրումային ծրագրեր, որոնք միտված են իրականացվելու ինչպես վարկային և դրամաշնորհային միջոցներով, այնպես էլ մասնավոր հատվածի հետ համագործակցության եղանակով: Պետական ներդրումային ծրագրերը տեղադրված են նախարարության պաշտոնական կայքում, որպեսզի պոտենցիալ ներդրողները կարողանան տեղեկանալ համապատասխան ներդրումային հնարավորությունների մասին:

Միաժամանակ, մասնավոր ներդրումների խթանման և գործընկերության հաստատման ուղղությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից USAID «EDMC» ծրագրի աջակցությամբ մշակվել է ներդրումային ծրագրի անձնագրի օրինակելի ձև, որը նպատակ ունի մասնավոր հատվածի ներկայացուցիչներին հնարավորություն տալ հակիրճ ձևով ներկայանալու պոտենցիալ ներդրողին, ռազմավարական գործընկերոջը ներկայացնել հիմնական գործարար գաղափարը, որը պահանջում է որոշակի աջակցություն, իսկ պետությանը՝ հավաքագրել ՀՀ-ում առկա բոլոր ներդրումային ծրագրերը մեկ ընդհանուր ձևանմուշով՝ հետագայում օտարերկրյա ներդրողներին ներկայացնելու, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում տեղադրելու նպատակով: Ներկայումս քննարկման են ներկայացվել մի շարք մասնավոր ներդրումային ծրագրեր, որոնք, տեղադրված լինելով գերատեսչության պաշտոնական կայքում՝ սպասում են պոտենցիալ ներդրողի աջակցությանը:

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ ՀՀ-ում օրենսդրական մակարդակով արդեն իսկ ձևավորվել է ներդրումային միջավայրի կարգավորման որոշակի հիմք: Ներդրումների կարգավորման Հայաստանում ներդրված համակարգը կարելի է բնութագրել ազատական՝ ուղղված օտարերկրյա ներդրումների ակտիվ ներգրավմանը: Այնուամենայնիվ, եթե հաշվի առնենք ներդրումների բուն նպատակները՝ այն է կենսամակարդակի ավելացման, տնտեսական աճի և զբաղվածության ապահովման գործառնությունները և համեմատենք հայաստանյան իրողությունների հետ, պետք է արձանագրենք, որ ներդրումների ներկայիս մակարդակը բավարար չի կարող համարվել: Հետևաբար, ներդրումային ակտիվության պակասը առավելապես պայմանավորված է ոչ թե օրենսդրական բացերով, այլ ոչ պաշտոնական վարչական ընթացակարգերով, ինչպես նաև տնտեսության և շուկայի ընձեռած հնարավորություններով: Ինչ խոսք, օրենսդրական բացեր կան, և հավանաբար միշտ էլ կլինեն, որոնց լուծմամբ հնարավոր կլինի ևս մեկ քայլ առաջ գնալ ներկայիս աշխարհաքաղաքական պայմաններում ներդրումների ներգրավման դժվարին խնդիրը լուծելու գործում:

Ներդրումների ներգրավման համար պետք է իրականացվեն մի շարք առաջնահերթ քայլեր՝ դրանց նկատմամբ վարվող քաղաքականության օրենսդրական ամրագրման, ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների խթանման նպատակով: Այս առումով անհրաժեշտ է.

- Գործնական քայլերով ցույց տալ ՀՀ կառավարության վճռականությունը մրցակցային հավասար պայմանների ապահովման, ներդրումների անձեռնմխելիության, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև իշխանության և ձեռնարկատիրության տարանջատվածության ապահովման գործում:
- Շարունակել միջկառավարական ներդրումային համաձայնագրերի կնքման գործընթացը՝ ստեղծելով լրացուցիչ երաշխիքներ օտարերկրյա ներդրողների համար:
- Մշակել և կիրառության մեջ դնել էկոնոմիկայի նախարարության կողմից կիրառվող ներդրումային անձնագրերի հավելված, որը իրենից կներկայացնի բիզնես պլան, ինչն ավելի կիրառելի է ներդրողների կողմից ներդրումային ծրագրերի գնահատման ժամանակ:
- Նպաստել արտերկրում ՀՀ ներկայացուցչությունների համակարգի կայացմանը, որի հիմնական խնդիրներից պետք է լինի օտարերկրյա ներդրումների ներգրավումը:
- Էկոնոմիկայի նախարարության կողմից վարվող պետական և մասնավոր մեծածավալ ներդրումային ծրագրերի ռեեստրին զուգահեռ մարզպետարանների և քաղաքապետարանների միջոցով ներդնել ավելի փոքրածավալ ներդրումային ծրագրերի ռեեստր՝ տեղադրելով դրանք այդ գերատեսչությունների պաշտոնական կայքերում:
- Անհրաժեշտ է ակտիվացնել և ավելի ուղղորդված դարձնել սփյուռքի հետ համագործակցությունը՝ ձևավորելով երկուստեք վստահելի և շահավետ միջավայր:

**ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՆԵՐՂՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍՊՐԱՎԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ, Կ.Պ.Ք.

*Մ Գ Ա Ա Մ. Քոտանյանի անվ. արևրեսագիտություն
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱԴԿԱՍԱՐՅԱՆ, Կ.Պ.Ք.

*Մ Գ Ա Ա Մ. Քոտանյանի անվ. արևրեսագիտություն
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Համառոտագիր

Հայաստանում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման խնդիրներն առավել արդիական դարձան անկախության հռչակումից հետո: Փորձը ցույց է տալիս, որ հստակ ներդրումային քաղաքականություն իրականացրած զարգացող երկրները աննախադեպ տնտեսական աճ են ապահովել: ՀՀ-ում օրենսդրական մակարդակով արդեն իսկ ձևավորվել է ներդրումային միջավայրի կարգավորման որոշակի հիմք: Այնուամենայնիվ, եթե հաշվի առնենք ներդրումների բուժման ցուցանիշները՝ այն է կենսամակարդակի ավելացման, տնտեսական աճի և զբաղվածության ապահովման գործառույթները և համեմատենք հայաստանյան իրողությունների հետ, պետք է արձանագրենք, որ ներդրումային միջավայրի ներկայիս մակարդակը բավարար չի կարող համարվել, իսկ ներդրումների ներգրավման նպատակով պետք է իրականացվեն մի շարք առաջնահերթ քայլեր:

Բանալի բառեր. Օրսարերկրյա ներդրումներ, ներքին ներդրումներ, պետական կարգավորում, օրենսդրական դաշտ, ներդրումների խթանում, ներդրումային միջավայրի բարելավում:

**ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ОСНОВЫ И ПОДХОДЫ К ГОСУДАРСТВЕННОМУ РЕГУЛИРОВАНИЮ ВНЕШНИХ И
ВНУТРЕННИХ ИНВЕСТИЦИЙ В РА**

АЙК МАРКОСЯН, К.Э.Н.

*старший научный сотрудник Института
экономики им. М. Котаняна НАН РА*

КРИСТИНЕ БАГДАСАРЯН, К.Э.Н.

*старший научный сотрудник Института
экономики им. М. Котаняна НАН РА*

Аннотация

В Армении проблемы формирования благоприятного инвестиционного климата стали наиболее актуальными после провозглашения независимости. Практика показывает, что развивающиеся страны, осуществляющие четкую инвестиционную политику, обеспечили беспрецедентный экономический рост. В Армении на законодательном уровне уже сформирована определенная основа для регулирования инвестиционной среды. Однако, если принять во внимание конечные цели инвестиционной политики: функции повышения уровня жизни, экономического роста и обеспечения занятости, и сравнить их с действующими реалиями, то следует констатировать, что нынешний уровень инвестиционного климата нельзя считать удовлетворительным, а для привлечения инвестиций необходимо осуществить ряд первоочередных шагов.

Ключевые слова: иностранные инвестиции, внутренние инвестиции, государственное регулирование, законодательство, стимулирование инвестиций, улучшение инвестиционного климата.

**LEGISLATIVE FRAMEWORK AND STATE REGULATION APPROACHES TO FOREIGN AND
DOMESTIC INVESTMENTS IN THE REPUBLIC OF ARMENIA**

HAYK MARKOSYAN, PhD in Economics,

*Senior Research Associate M. Kotanyan Institute
of Economics National Academy of Sciences
Republic of Armenia*

KRISTINE BAGHDASARYAN, PhD in Economics,

*Senior Research Associate M. Kotanyan Institute
of Economics National Academy of Sciences
Republic of Armenia*

Abstract

Upon the independence, the issues of creating favorable business environment in Armenia became more urgent. The example of those developing countries that had implemented specific investment policies proves that they managed to ensure unprecedented economic growth rates. In Armenia, several legislative initiatives have been undertaken to regulate the business environment to some extent. However, if the ultimate purpose of investments are the improvement of standards of living, and ensuring higher economic growth and employment is taken into consideration and then it is compared with the Armenian reality, it should be noted that the current state of the business climate could not be considered as a well-functioning business environment, hence, several priorities need to be undertaken and implemented in order to attract investments.

Keywords: Foreign investments, domestic investments, state regulation, legislation, investment promotion, improvement of the investment climate.

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը գյուղատնտեսությունն է, որին բաժին է ընկնում ՀՆԱ-ի շուրջ 20%-ը: Հանրապետության գյուղատնտեսական արտադրությունում հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են, որոնք տնօրինում են վարելահողերի ավելի քան 82.0, բազմամյա տնկարկների` 75.0, խոտհարքների` 50.0 տոկոսը: Ներկայումս գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշռող մասը (ավելի քան 98 տոկոսը) ապահովվում է մասնավոր հատվածի կողմից¹:

ՀՀ վարելահողերի օգտագործման առումով նկատվում են դրական միտումներ, քանի որ վալահողերի չօգտագործման մակարդակը վերջին տարիներին դրսևորում է անկման միտում` 2014թ. կազմելով 29.8%, 2013-ին` 34,8%, 2012-ին` 37,8%, 2011-ին` 39,8%²:

Դիտարկենք 2010-2014թթ. ՀՀ գյուղատնտեսության զարգացման միտումները նկարագրող հիմնական ցուցանիշները աղյուսակ 1-ի միջոցով:

Աղյուսակ 1

ՀՀ գյուղատնտեսության զարգացման միտումները նկարագրող հիմնական ցուցանիշները 2010-2014թթ.³

Ցուցանիշները	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ընթացիկ գներով, մլրդ դրամ	636.7	795.0	841.5	919.1	993.4
Գյուղատնտեսության արտադրանքի ծավալի ինդեքսը, %	86.4	113.9	109.5	107.1	107.2
Գյուղատնտեսության համախառն ներքին արդյունքը (ավելացված արժեքը), մլրդ դրամ	588.2	767.9	764.0	826.3	872.9
Գյուղատնտեսության մասնաբաժինը երկրի համախառն ներքին արդյունքի մեջ, %	17.0	20.3	19.1	19.3	19.3

Վերջին տարիներին Հայաստանում գյուղատնտեսությունը դրսևորում է զարգացման միտումներ, ինչի մասին է վկայում այն փաստը, որ գյուղատնտեսական համախառն ներքին արդյունքը 2014թ. կազմել է 872.9 մլրդ դրամ, ինչը 2013թ., 2012թ., 2011թ. և 2010թ. համեմատ ավել է համապատասխանաբար 46.6, 108.9, 105.0, 284.7 մլրդ դրամով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքն ընթացիկ գներով 2014թ. կազմել է 993.4 մլրդ. դրամ, ինչը 2013թ., 2012թ., 2011թ. և 2010թ. համեմատ ավել է համապատասխանաբար 74.3, 151.9, 198.4, 356.7 մլրդ դրամով:

Սակայն, չնայած նշված դրական միտումներին, հարկ է նշել, որ գյուղատնտեսության ներկայիս իրավիճակի վրա դեռևս մեծ է հետխորհրդային զարգացումների ազդեցությունը, քանի որ մասնավորեցման արդյունքում հողերը բաժանվեցին ավելի քան 1.2 մլն կտորների և յուրաքանչյուր մասնավոր տնտեսությանը հասավ միջինը 1.4 հա հող, այդ թվում` 1.06հա վարելահող:

Անկախության հռչակումից հետո մասնավորեցման քաղաքականության իրագործման արդյունքում ՀՀ-ում ձևավորվեցին շուրջ 300 հազար մասնավոր գյուղացիական տնտեսություններ, որոնք իրենց գործունեությունը շարունակեցին գյուղատնտեսական սարքավորումների, ոռոգման համակարգի ու գյուղատնտեսական առաջատար փորձի և տեղեկատվության սահմանափակ հասանելիության պայմաններում: Ագրարային բարեփոխումների առաջին տարիներին տարբեր գործոնների ազդեցության հետևանքով մեծ կորուստներ կրեցին գյուղատնտեսության զարգացումը պայմանավորող` ագրոսպասարկման, ագրոբերրիության և ագրովերամշակման ենթակառուցվածքները:

Մասնավոր գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող մյուս հանգամանքն այն էր, որ

¹ Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարություն, էջ 5:
² <http://minagro.am/>
³ <http://minagro.am>

մասնավոր տնտեսություններին հատկացված հողակտորները կտրտված էին, և յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը նշված ծավալներով հողակտորներ հատկացվեցին միջինը երեք առանձին հողակտորով:

Բացի հողերի մշակման և գյուղմթերքների արտադրության հետ կապված խնդիրներից, հետխորհրդային զարգացումները առաջ բերեցին նաև գյուղմթերքի իրացվելիության հետ կապված բազմաթիվ հիմնախնդիրներ, քանի որ խորհրդային ժամանակաշրջանում գյուղատնտեսության և շուկայավարության համակարգերը հարմարեցված էին խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների և իրացման շուկաների չափանիշներին:

Զնայած նշված հանգամանքներին՝ կոլեկտիվ ու պետական գյուղատնտեսության անկումից հետո տեղի ունեցավ ոչ գյուղատնտեսական աշխատուժի զգալի տոկոսային հարաբերակցության տեղափոխություն դեպի գյուղատնտեսական գործունեություն, քանի որ շատ տնային տնտեսությունների համար դա ստեղծված բարդությունները հաղթահարելու հիմնական հնարավորությունն էր: Արդյունքում գյուղատնտեսության ոլորտում մոտ երկու անգամ մեծացավ զբաղվածությունը՝ բարեփոխումներից առաջ ընկած ժամանակահատվածի համեմատությամբ:

Ներկայում ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

2014թ. դրությամբ գյուղական բնակչության թվաքանակը կազմում է 1.103.000 մարդ, որը կազմում է ԳԳ ընդհանուր բնակչության թվաքանակի 36.6%-ը¹: 2013թ. դրությամբ գյուղական բնակչության թվաքանակի մեջ տղամարդ-կին համամասնությունը կազմում է 0.99, իսկ քաղաքային բնակչության պարագայում՝ 0.88²:

2013թ. դրությամբ գյուղատնտեսության մեջ զբաղվածների համամասնությունը ընդհանուր զբաղվածների թվաքանակի մեջ կազմում է 36.3%, ինչն ավելի պակաս է քան նախորդ տարիներին (2012թ.՝ 37,3%, 2011թ.՝ 38,9%)³:

Ներկայում գյուղատնտեսությունը հանդիսանում է Հայաստանի տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը, իսկ գյուղացիական տնտեսությունները՝ գյուղատնտեսության ներկայիս հենասյունը: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանում հողատարածությունները մասնատվել են ավելի քան 1.2 մլն հողակտորների, ինչը լրջագույն դժվարություններ է առաջացնում արդյունավետ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և գյուղատնտեսության զարգացման համար, առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների արդիականացումը, ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերացիայի, կամ համատեղ տնտեսավարման զարգացումը:

Ազատ շուկայական հարաբերությունների պարագայում ապրանքի գնային մրցունակությունը հանդիսանում է սպառման շուկաներ գրավելու և, հետևաբար, արտադրական ծավալներն ավելացնելու համար կարևորագույն նախապայման: Իսկ գյուղմթերքի գնային մրցունակությունը ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել արտադրության ծախսարդյունավետությունը, ինչը հնարավոր է իրագործել գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման և մասշտաբի էֆեկտի հաշվին:

Հարկ է նշել, որ հատկապես էական գործոն է հանդիսանում մասշտաբի էֆեկտը, քանի որ մեծ հողատարածքների մշակման դեպքում հնարավոր է կիրառել խոշոր գյուղատնտեսական սարքավորումներ, որոնք լայն ծածկույթով կցորդիչների (մատենաշարային կախովի հնձիչ, գութան, հակավորող սարք և այլն) շնորհիվ մեկ անցումով մշակում են ավելի մեծ մակերես, քան դա հնարավոր է անել ավելի թույլ և փոքր տրակտորներով: Արդյունքում ողջ հողատարածքների մշակման համար ծախսվում է թե՛ ավելի քիչ վառելիք, թե՛ ավելի քիչ ժամանակ, ինչի շնորհիվ մատչելի է դառնում նաև աշխատուժի վարձատրությունը:

¹ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2014, էջ 19:

² Հայաստանը թվերով, 2014, էջ 23:

³ Նույն տեղում, էջ 28:

Իսկ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառության շնորհիվ կարելի է հասնել հողի ավելի բարձր արտադրողականության և բերքատվության: Այս առումով բավական կարևորվում է արդյունավետ ցանքաշրջանառության իրականացումը, ինչի շնորհիվ տվյալ տարում նույն հողակտորը կարելի է օգտագործել բազմանգամյա բերքահավաքի համար: Օրինակ, երբ արևածաղկի բերքահավաքից հետո առանց բույսի ցողունները հեռացնելու ցանվում են հատիկընդեղենային բույսեր, որպեսզի արևածաղկի ցողունները դրանց համար ծառայեն որպես սյուներ: Իսկ հատիկընդեղենային բույսերն իրենց հերթին լավ նախորդողներ են համարվում այլ մշակաբույսերի համար, քանի որ դրանց արմատների վրա առաջանում են պալարիկներ, որոնց բջիջներում ապրում են օդի ազոտը յուրացնող մարմիններ, և բույսի մահանալուց հետո հողը հարստանում է ազոտ պարունակող նյութերով:

Մյուս կողմից հերթափոխային ցանքաշրջանառության շնորհիվ (երբ երկու և ավել հողակտորների նպատակային շահագործման համար սահմանվում է հերթափոխ) տվյալ հողակտորները հնարավորություն են ստանում հանգստանալու և վերականգնվելու: Իսկ բույսերի անհերթափոխ մշակությունը առաջ է բերում բերրիության անկում, որն ուղեկցվում է հողատարման երևույթների ուժեղացմամբ, նպաստավոր պայմաններ են ստեղծվում մոլախոտերի, հիվանդությունների և վնասատուների զարգացման համար:

Գյուղատնտեսության մեջ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառության մեկ այլ օրինակ է անվար ցանքի, կամ հողի զրոյական մշակման տեխնոլոգիան: Անվար ցանքը հողագործության վարման ժամանակակից համակարգ է, որի դեպքում հողը չի ենթարկվում լրացուցիչ ագրոտեխնիկական մշակման՝ վար, կուլտիվացիա: Առանց հողի վերին շերտը վարելու և կուլտիվացիայի միանգամից ցանք է կատարվում: Ընդ որում, նախորդ մշակաբույսերի մանրացված մնացորդները հողի մակերևույթին առաջացնում են ցանքը ցրտահարությունից պաշտպանող բնական շերտ, որը նաև կանաչ, կենսական պարարտանյութի դեր է խաղում: Ըստ գյուղատնտեսների իրականացրած հաշվարկների՝ մեկ հա ցանքի դեպքում ֆերմերը շահում է շուրջ 25-30 հազար դրամ¹:

Ներկայում այս տեխնոլոգիան տարածում է գտնում նաև Հայաստանում: Մասնավորապես, այն կիրառվում է հացահատիկի ցանքատարածությունների և արտադրության ծավալով հանրապետության ամենախոշոր ընկերության՝ «Բոզոյան» ՍՊԸ-ի կողմից: Վերջինս Տաշիրի տարածաշրջանում 1500-1600 հեկտար հողի վրա հիմնականում ցորենի արտադրությամբ է զբաղվում: Տվյալ դեպքում միջին բերքը կազմում է 40 ցենտներ/հա՝ անջրդի հողերի վրա, ինչը լավ ցուցանիշ է²: Որպես մեկ այլ օրինակ կարելի է բերել «Արմենիա թեքնոլոջի գրուպ հիմնադրամ» ֆերմերային տնտեսությանը, որը անվար տեխնոլոգիայով ցանք է իրականացնում ՀՀ մի քանի մարզերում³:

Սակայն, հարկ է նշել, որ գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման միտումները ոչ միանշանակորեն են բխում մանր և միջին գյուղացիական տնտեսությունների շահերից: Միջազգային փորձը վկայում է, որ տնտեսության մյուս ճյուղերի զարգացումը և գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը, որպես կանոն, հանգեցնում է տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի կրճատման, մեկ տնտեսության հաշվով հողատարածության մեծացման և, ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման՝ զբաղվածների թվի նվազեցման⁴:

Գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման, ինչպես նաև հողերի և գյուղացիական տնտեսությունների խոշորացման հեռանկարները ու հնարավոր հետևանքները բացահայտելու համար իրականացնենք SWOT վերլուծություն:

¹ <http://shirak-agro.am/>

² <http://minagro.am/>

³ <http://shirak.gov.am>

⁴ Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարություն, էջ 6:

ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Բարելավված արտադրաիրացումային շղթայի առկայություն • Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության առկայություն • Արհեստական սերմնավորման, ինչպես նաև տոհմային բարձրարժեք կենդանիներ ներկրելու շնորհիվ անասունների գլխաքանակի ավելացում և որակի բարելավում • Համեմատաբար ցածր ինքնարժեքով սերմնացուի ձեռքբերման հնարավորություն • Համեմատաբար ցածր ինքնարժեքով դիզելային վառելիքի ձեռքբերման հնարավորություն • Համեմատաբար ցածր տոկոսադրույքով գյուղատնտեսական վարկեր ստանալու հնարավորություն 	<ul style="list-style-type: none"> • Արտադրական հնարավորությունների սահմանափակություն • Վարելահողերի նպատակային նշանակությամբ չօգտագործվելու բարձր մակարդակ • Ինտենսիվացման ցածր մակարդակ ունեցող գյուղատնտեսության առկայությունը • Քիմիական պարարտանյութերի գերշահագործումը • Գործող գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների սակավությունը • Ոռոգման համակարգերի անկատարությունը և սակավությունը • Հողակտորների մասնատվածությունը • Հողերի մշակման լավագույն փորձի անտեսումը • Հետերքահավաքային պահպանության, տեղափոխման և իրացման անարդյունավետ համակարգը
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • Արտադրաիրացումային շղթայի կատարելագործում • Գյուղատնտեսության սպասարկման բնագավառի զարգացում • Իրացման շուկայի հասանելիության բարելավում • Օրգանական գյուղատնտեսության զարգացում • Աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ կոոպերատիվների մոտ մրցակցային • Առավելությունների առաջացում • Մուտքը միջազգային շուկաներ • Գյուղատնտեսության եկամտաբերության ավելացում • Գյուղմթերքի մթերման հնարավորությունների ընդլայնում 	<ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսական կոոպերատիվների և անհատ մեխանիզատորների միջև անհավասար մրցակցային պայմաններ • Միջազգային մրցակցության ուժեղացում • Տնտեսվարողների միջև հավասար մրցակցային պայմանների խախտում • Գյուղատնտեսության մեջ ներգրավվածների թվաքանակի կրճատման հետևանքով գործազրկության և աղքատության ավելացում, սոցիալական անհավասարության խորացում

Անդրադառնալով *ուժեղ կողմերին* նշենք, որ գյուղատնտեսական հումք արտադրող և վերամշակող ընկերությունների և փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների միջև աստիճանաբար ձևավորվում են պայմանագրային հարաբերություններ: Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամին և այլ միջազգային կազմակերպություններին անդամակցությունը կարևոր ազդակ է համաշխարհային զարգացումների տիրույթում գտնվելու համար, որը արտաքին ներդրումների ներգրավման և արտաքին առևտրի զարգացման կարևոր նախադրյալ է: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման» (2007-2015թթ.) ծրագիրը, որը նպատակ ունի որակապես բարելավել տավարաբուծության ուղղությամբ իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքները, աջակցել տոհմային տնտեսությունների ձևավորմանը, նպաստել գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանը և խթանել հայրենական սելեկցիայի արդյունքում ստեղծված «կովկասյան գորշ» ցեղի գենոֆոնդի պահպանման գործընթացը: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվում է «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գնով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագիր: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվում է «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագիր: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվում է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման» ծրագիր:

Հնարավորություններից կարող ենք նշել. ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրա-

յին գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացումը, գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի կրճատման հետևանքով առաջացած ավելցուկային աշխատուժի մի մասի օգտագործումը գյուղատնտեսության սպասարկման և ոչ գյուղատնտեսական գործունեության բնագավառներում՝ վերապատրաստման միջոցով, գյուղատնտեսական արտադրանքների, հատկապես՝ թարմ մրգերի և բանջարեղենների միջնորդավորված վաճառքի սահմանափակումը, կոոպերացիայի զարգացման միջոցով մանրածախ առևտրի օբյեկտներին մատակարարվող ապրանքների մեծածախ հավաքման կետերի ստեղծումը: Միջազգային շուկայում, հատկապես Եվրամիության երկրներում տարեցտարի աճում է պահանջարկը ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված օրգանական պարենամթերքների նկատմամբ: Հայաստանում առկա են որոշակի պայմաններ առավել բարձր ավելացված արժեք ապահովող օրգանական սննդամթերքի արտադրության զարգացման համար: Ժամանակի ընթացքում, ի հաշիվ մասշտաբի էֆեկտի և աշխատանքի կազմակերպման ռացիոնալացման, կոոպերատիվները կարող են ձեռք բերել մրցակցային առավելություններ: Մաքսային միությանը Հայաստանի անդամակցությունը ստեղծում է հնարավորություններ նոր միջազգային շուկաներ գրավելու համար: Հայկական բերքն իր որակական հատկանիշների շնորհիվ կարող է մեծ պահանջարկ ձեռք բերել նոր շուկաներում: Բարձր ավելացված արժեք ապահովող գյուղատնտեսական մթերքների մշակության տարածման շնորհիվ կարող է ավելանալ գյուղատնտեսության եկամտաբերության մակարդակը: Գյուղատնտեսական հումքի որոշակի մասի վերամշակումը գյուղական համայնքներում գործող փոքր ու միջին ձեռնարկատիրությունների, ինչպես նաև կոոպերատիվների զարգացման արդյունքում ձևավորված արտադրամասերում կարող է մեծացնել գյուղմթերքի մթերման հնարավորությունները:

Թույլ կողմերն են հանդիսանում. գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և գյուղատնտեսության և գյուղի սպասարկող ենթակառուցվածքների դանդաղ ձևավորումը, վարելահողերի շուրջ 33.0 տոկոսի կամ 150.0 հազ. հեկտարի նպատակային նշանակությամբ չօգտագործումը, ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և կենդանիների մթերատվությունը: Վերջին տասնամյակում ավելի քան 10 անգամ կրճատվել է հանքային, գրեթե 18 անգամ՝ օրգանական պարարտանյութերի և շուրջ 10 անգամ բույսերի պաշտպանության միջոցների օգտագործումը: Ներկայում գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ավելի քան 95 տոկոսի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր է արտադրողականությունը, հետևաբար՝ բարձր են շահագործման, մասնավորապես՝ նորոգումների և տեխնիկական սպասարկումների ծախսերը, ինչի հետևանքով բարձրանում են նաև ծառայությունների սակագները: Հանրապետության 232.9 հազ. հա ոռոգելի հողատարածքներից փաստացի ոռոգվում է շուրջ 156 հազ. հա: Ոռոգման համակարգի լավագույն մասերը Շամիրամի և Արգիշտիի ջրանցքներն են, որոնք 2000-3000 տարվա վաղեմություն ունեն և ներկայիս ոռոգման համակարգերը ջուրը փոխադրում են 50 տոկոս կորուստներով: Բացի այդ, ջրելու ընթացքում տեղի է ունենում ջրի զգալի կորուստ՝ հին տեխնոլոգիաների և վատ կառավարման համակարգի պատճառով: Փոքր հողակտորների և դրանց մասնատվածության պայմաններում մեծանում է մեքենայական ագրեգատների պարապ ընթացքը և ժամանակային կորուստները: Մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողեր, որից 1.1 հա վարելահողեր, որոնք իրենց հերթին բաժանվում են 3-4 հողակտորների: Տնտեսությունների փոքր չափերի պատճառով սեփական տեխնիկա ունենալը նպատակահարմար չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկայի սեփականատերը մեխանիզատոր է և իրականացնում է վճարովի ծառայություններ: Շատ դեպքերում մեքենայական աշխատանքների բարձր սակագների պատճառով ագրոտեխնիկական կանոններով պահանջվող մի շարք գործընթացներ չեն կատարվում կամ կատարվում են ձեռքով՝ էապես բարձրացնելով մշակման աշխատատարությունը և տևողությունը, ինչի պատճառով խախտվում են աշխատանքների կատարման լավագույն ժամկետները: Ըստ որոշ գնահատականների՝ շուտ փչացող արտադրանքի 30 տոկոսը փչանում է ընդհատվող սառնարանային շղթայի ու հետբերքահավաքային կառավարման պատճառով:

Նկարագրենք նաև **վտանգները**: Ներկայում գյուղատնտեսությունում մեքենայական աշխա-

տանքները հիմնականում իրականացվում են տեխնիկայի սեփականատեր ֆիզիկական անձանց միջոցով, որոնց գործունեությունը չի հարկվում: Սակայն արտադրատեխնիկական ծառայություններ իրականացնող գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման պարագայում առաջանալու են հարկային պարտավորություններ (օրինակ՝ գրանցված աշխատողների եկամտային հարկ), ինչի արդյունքում կոոպերատիվները կհայտնվեն ոչ շահեկան իրավիճակում: Մաքսային միությանը Հայաստանի անդամակցությունը որոշ առավելություններից բացի պարունակում նաև մի շարք մարտահրավերներ, մասնավորապես այն, որ դաշնակից երկրների գյուղատնտեսական արտադրանքը ցածր ինքնարժեքի շնորհիվ կարող է գրավել հայկական շուկան: Տնտեսությունների խոշորացման ու կոոպերացիայի խրախուսման քաղաքականության արդյունքը կարող է լինել օլիգոպոլիաների կամ անգամ մոնոպոլիաների ձևավորումն ու զարգացումը նաև այս ոլորտում: Պետական քաղաքականության որոշ փաստաթղթերը նման մտահոգությունների հիմքեր տալիս են, քանի որ նախատեսում են խոշոր ներդնողների համար արտոնյալ պայմաններով հողերի վարձակալության կամ գնման իրավունք, այսպիսով, հարվածի տակ դնելով մանր և միջին գյուղացիական տնտեսությունների մեկնարկային ու զարգացման հնարավորությունները: «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարություն» փաստաթղթում հստակ նշած է, որ պլանավորվում է գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի կրճատում և ավելցուկային աշխատուժի միայն **մի մասի** օգտագործում գյուղատնտեսության սպասարկման և ոչ գյուղատնտեսական գործունեության բնագավառներում՝ վերապատրաստման միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը, կարող ենք առաջարկել ՀՀ գյուղատնտեսության զարգացման հետևյալ ուղիները.

- գյուղատնտեսության վերազինումը նոր սարքավորումներով,
- գյուղացիական տնտեսությունների համար գյուղատնտեսական առաջատար փորձի և օգտակար տեղեկատվության հասանելիության ապահովումը,
- գյուղատնտեսական կոոպերատիվների կամ այլ տնտեսական միավորումների ստեղծումը,
- համապատասխան ենթակառուցվածքների վերականգնումը:

Այսպիսով, գյուղատնտեսությունը, լինելով ՀՀ տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը, չնայած որոշ խոչընդոտների՝ ունի զարգացման բավականին լավ հեռանկարներ: Սակայն, գյուղատնտեսության զարգացումն իր մեջ պարունակում է նաև որոշակի վտանգներ՝ պայմանավորված խոշորացման գործընթացներով և միջազգային մրցակցության ուժեղացմամբ: Նշված գործընթացների հնարավոր հետևանքներն են մանր և միջին գյուղացիական տնտեսությունների կողմից ոչ մրցակցային դիրքերում հայտնվելը և շուկայից դուրս մնալը, գյուղատնտեսության բնագավառում զբաղվածության մակարդակի կրճատումը, սոցիալական անհավասարության խորացումը և այլն: Այս առումով շատ կարևոր է, որ ՀՀ կառավարությունը, Հայաստանում գործող միջազգային բարեգործական կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինները և գյուղացիական տնտեսությունները ակտիվ մասնակցություն ունենան գյուղատնտեսական հիմնախնդիրների հաղթահարման գործընթացին:

ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՄՍԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՅԱՍՏԱՆԻ ԴԱՆՐԱԳԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ, *տ. գ. թ.*

*ՄԳԱԱ Մ. Բոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

Համառոտագիր

Սույն հոդվածում ներկայացվել են գյուղատնտեսության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Դիտարկվել են գյուղատնտեսության զարգացման միտումները բնութագրող հիմնական ցուցանիշները և այդ ոլորտի զարգացման նախապայմանները, ներկայացվել են ՀՀ-ում հողագործության բնագավառում առաջատար փորձի կիրառման օրինակները: Հոդվածում դիտարկվել են նաև մասնավորեցումից հետո գյուղատնտեսության զարգացման վրա տարբեր գործոնների ազդեցությունը, ՀՀ գյուղատնտեսության ուժեղ և թույլ կողմերը, դրա զարգացման վտանգներն ու հնարավորությունները:

Բանալի բառեր. շուկայական տնտեսություն, գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսություն, հողերի սեփականաշնորհում, մասնավորեցում, գյուղատնտեսական արտադրանք, առաջատար տեխնոլոգիաներ, զարգացման հիմնախնդիրներ:

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ТИГРАН МКРТЧЯН, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики
им. М. Котаяна НАН РА*

Аннотация

В статье представлены проблемы развития сельского хозяйства в Республике Армения. Рассмотрены основные показатели, характеризующие тенденции развития сельского хозяйства, и предпосылки развития этой сферы, приведены примеры использования передового опыта в области земледелия РА. В статье рассмотрены также влияние различных факторов на развитие сельского хозяйства после приватизации земель, сильные и слабые стороны сельского хозяйства РА, возможности и опасности его развития.

Ключевые слова: рыночное хозяйство, фермерские хозяйства, сельское хозяйство, приватизация земель, приватизация, сельскохозяйственная продукция, передовые технологии, проблемы развития

ISSUES ON DEVELOPING THE AGRICULTURE IN THE REPUBLIC OF ARMENIA

TIGRAN MKRTCHYAN, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article presents the issues on developing the agriculture in the Republic of Armenia. The author studies and analyzes the main indicators describing the development pattern of agriculture, and enabling factors (preconditions) that could ensure the development of the sector; presents how the international best practices on crop farming and land cultivation have been applied and utilized in the Republic of Armenia. The article studies the impact of various factors that the agriculture has started experiencing since the widespread land privatization, and provides the SWOT analysis on agricultural development in the Republic of Armenia.

Keywords: Market economy, farming, agriculture, land privatization, privatization, agricultural production, advanced technology, development issues.

ՏԱԹՎԻԿ ՀԱՅԻՆՅԱՆ

ՄԳԱՄ. Զոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրթութե գիտաշխատող

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂԱԿԻ ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ՌԵԳՐԵՍԻՈՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԶՅ-ՈՒՄ**

Հետխորհրդային անկախության շրջանում օտարերկրյա ուղղակի ներդրումները կարևոր գործոն են հանդիսացել Հայաստանի տնտեսության համար: Օտարերկրյա ուղղակի ներդրումների և տնտեսական զարգացման կապը, հատկապես կանոնավոր է, հաշվի առնելով¹


- այն նպաստում է տնտեսության տեխնոլոգիական մակարդակի բարձրացումանը,
- տեղի է ունենում տնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավվում,
- բարելավվում է բնակչության կենսամակարդակը:

ՀՀ-ն ներդրումային քաղաքականությունը դիտարկում է որպես իր տնտեսական զարգացման ուղու կարևորագույն ուղղություններից մեկը: Կառավարությունը խիստ կարևորում է օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավումը, որը կխթանի արդյունաբերության, ինչպես նաև տնտեսության այլ ոլորտների զարգացումը:

Ուսումնասիրելով ՕՈՒՆ-ի վերաբերյալ վիճակագրական տվյալները պարզ է դառնում, որ ամենաարդյունավետ տարին 2008թ.-ն է: Վերջին երեք տարիներին ՀՀ տնտեսությունում գրանցվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալի նվազում: 2012թ. օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը 2011թ. համեմատ նվազել են՝ պայմանավորված մակրոտնտեսական անկայունությամբ և քաղաքական անորոշությամբ: 2014թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների հոսքերը կազմել են ավելի քան 1,5 մլրդ. ԱՄՆ դոլար, որից 758 մլն. կազմել են ուղղակի ներդրումները: Գծապատկեր 1-ում ներկայացվել են 2007-2013թթ. օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները²:

Գծապատկեր

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները 2007-2013 թթ.³
(հազար ԱՄՆ դոլար)



Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացմանը:

Համաշխարհային բանկը և Միջազգային ֆինանսական կորպորացիան հրապարակում են «Doing Business» տարեկան զեկույցները: Ձեկույցներում ամփոփ ներկայացվում են աշխարհի 189 երկրներում գործարարությամբ զբաղվելու հիմնական տասը ցուցանիշները, որոնք վերա-

¹ «Российское предпринимательство» № 24 за 2012 год, стр. 21-26.
² Տվյալները՝ <http://armstat.am/am/?nid=246>
³ <http://armstat.am/file/doc/99487088.xls>

բերում են փոքր և միջին բիզնեսի կայացմանը, գործարար միջավայրին և բիզնես վարելու կանոններին:

Որպես ներդրումային դաշտի գրավչության վրա ազդող մեծ գործոններ կարելի է դիտարկել «Doing Business»-ի կողմից մշակված գործարարությամբ զբաղվելու հիմնական ցուցանիշները, որոնք սահմանում են որևէ երկրում բիզնես սկսելու և վարելու դյուրինության աստիճանը: Այդ ցուցանիշներն են¹.

- սեփականության գրանցումը,
- բիզնես սկսելու մեկնարկային պայմանները,
- ներդրողների պաշտպանվածությունը,
- շինարարության թույլտվության տրամադրումը,
- հարկերի վճարումները,
- վարկերի հասանելիությունը,
- էլեկտրականության միացումը,
- պայմանագրերի կիրառումը,
- անվճարունակության հարցերի կարգավորումը,
- միջազգային առևտուր վարելու դյուրինությունը:

Հայաստանում, ըստ Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի զեկույցի, 2012-2013 թվականներին առավել դյուրին է դարձել հարկերի վճարման գործընթացը՝ միասնական եկամտահարկի ներդրման արդյունքում, որն իր մեջ ներառում է գործատուների և աշխատողների սոցիալական վճարները և անհատների կողմից վճարվող եկամտահարկը: Այդուսակով ներկայացնենք 2007-2014թթ. «Doing Business»-ի զեկույցներում Հայաստանի Հանրապետության ցուցանիշները²:

Աղյուսակ 1

«Doing Business»-ի զեկույցներում Հայաստանի Հանրապետության ցուցանիշները 2007-2014 թթ.³

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
բիզնես սկսելու մեկնարկային պայմաններ	84,71	84,77	84,97	90,4	94,34	94,82	94,86	97,51
սեփականության գրանցում	92,89	92,95	93,17	93,25	92,8	92,85	92,96	93
հարկերի վճարումներ	41,62	40,53	40,62	40,62	40,6	53,57	71,42	74,46
շինարարության թույլտվության տրամադրում	46	59,7	63,92	65,34	64,72	73,99	73,7	73,64
վարկերի հասանելիություն	37,5	68,75	68,75	68,75	68,75	75	75	65
միջազգային առևտուր վարելու դյուրինություն	54,7	61,36	56,81	56,02	63,98	63,94	64,68	64,46
էլեկտրականության միացում	-	-	-	49,45	49,29	49,37	55,98	63,99
ներդրողների պաշտպանվածություն	50	50	50	50	50	50	63,33	60
պայմանագրերի կիրառում	58,2	58,2	59,24	59,24	59,24	51,45	51,45	53,33
անվճարունակության հարցերի կարգավորում	-	-	-	-	-	-	-	-

Կատարելով օտարերկրյա ուղղակի ներդրումների բազմագործոն ռեգրեսիոն վերլուծություն, որպես ելակետային տվյալներ կարող ենք վերցնել 2007-2013թթ. օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները, իսկ որպես ելակետային տվյալների վրա ազդող գործոններ՝ «Doing Business»-ի կողմից առաջարկվող ցուցանիշները: Առաջարկվում է հետևյալ ռեգրեսիոն հավասարումը.

$$Y = a_0 + a_1X_1 + a_2X_2 + a_3X_3 + a_4X_4 + a_5X_5 + a_6X_6 + a_7X_7 + a_8X_8$$

որտեղ՝ Y-ը օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալն է,

a_0 -ն՝ հավասարման ազատ անդամն է ,

$a_1, a_2, a_3, a_4, a_5, a_6, a_7, a_8$ -ն՝ հավասարման գործոնային ցուցանիշներն են,

¹ <http://www.doingbusiness.org/>

² <http://www.doingbusiness.org/>

³ <http://www.doingbusiness.org/custom-query>

- X₁-ն՝ բիզնես սկսելու մեկնարկային պայմաններն են,
- X₂-ն՝ սեփականության գրանցումն է,
- X₃-ն՝ հարկերի վճարումներն են,
- X₄-ն՝ շինարարության թույլտվության տրամադրումն է,
- X₅-ն՝ վարկերի հասանելիությունն է,
- X₆-ն՝ միջազգային առևտուր վարելու դյուրինությունն է,
- X₇-ն՝ ներդրողների պաշտպանվածությունն է,
- X₈-ն՝ պայմանագրերի կիրառումն է:

Այսպիսով, գնահատումից հետո R^2 -ն՝ դետերմինացիայի գործակիցը, ստացվել է հավասար 1-ի: Այն ցույց է տալիս ելակետային Y պարամետրերի փոփոխությունների կախվածությունը ուսումնասիրվող X գործոններից: Դա վկայում է մոդելի որակի մասին, և որքան այն բարձր է, այդքան մոդելն ավելի լավն է: Անցում կատարելով մոդելի գործակիցներին նշենք, որ a_0 գործակիցը ցույց է տալիս, թե ինչպիսին կլինի Y-ը, եթե մոդելի բոլոր գործոնները հավասար լինեն 0-ի: $a_1, a_2, a_3, a_4, a_5, a_6, a_7, a_8$ գործոնները ցույց են տալիս համապատասխանաբար բիզնես սկսելու մեկնարկային պայմանների, սեփականության գրանցման, հարկերի վճարումների, շինարարության թույլտվության տրամադրման, վարկերի հասանելիության, միջազգային առևտուր վարելու դյուրինության, ներդրողների պաշտպանվածության և պայմանագրերի կիրառման ազդեցությունները օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների վրա:

Գնահատումից հետո հավասարումը ստանում է հետևյալ տեսքը.

$$Y = 5213517,204 - 31500,94869X_1 + 24150,39059X_3 - 46727,91646X_4 + 31622,99997X_5 + 14829,50285X_6 - 56308,97689X_7$$

Մոդելի արդյունքներից պարզ է դառնում, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների վրա իրենց գերակշիռ ազդեցությունն են ունենում հարկերի վճարումները, վարկերի հասանելիությունը և միջազգային առևտուր վարելու դյուրինությունը: ՀՀ հարկերի դրույքաչափերը, համեմատած այլ զարգացող և զարգացած երկրների հետ, ցածր մակարդակով են բնութագրվում: Հայաստանը գիտակցում է ներդրումների և ներդրողների պաշտպանության կարևորությունը և մշակում է իրավական այնպիսի համակարգ, որը Հայաստանը գրավիչ կդարձնի օտարերկրյա ներդրումների համար:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂԱԿԻ ՆԵՐՂՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ՌԵԳՐԵՍԻՍԻՆ ԱՆԱԼԻԶԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՇԱՀԻՆՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Քոտանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Համառոտագիր

Կարևորելով օտարերկրյա ուղղակի ներդրումների դերը երկրի տնտեսության զարգացման գործում և բարենպաստ ներդրումային միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը՝ հոդվածում ուսումնասիրվել են ՕՈՒԽ-ի ծավալների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, ներկայացվել են օտարերկրյա ուղղակի ներդրումների վրա ազդող գործոնները՝ հաշվի առնելով Համաշխարհային բանկի կողմից «Գործարարությամբ զբաղվելը» տարեկան զեկույցի տվյալները: Բացի այդ, տրվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների բազմագործոն ռեգրեսիոն գնահատականը:

Բանալի բառեր. օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ներդրումային միջավայր, գործարարությամբ զբաղվելու հիմնական ցուցանիշներ, հարկերի վճարում, ներդրողների պաշտպանվածություն, ռեգրեսիոն վերլուծություն, միջազգային առևտուր, վարկերի հասանելիություն, բնակչության կենսամակարդակ:

МНОЖЕСТВЕННЫЙ РЕГРЕССИОННЫЙ АНАЛИЗ ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ В РА

TATEVIK SHAGINYAN

*младший научный сотрудник
Института экономики имени М. Котаняна НАН РА*

Аннотация

Исходя из важности роли прямых иностранных инвестиций в развитии экономики страны и необходимости создания благоприятной инвестиционной среды, в статье исследованы статистические данные относительно объемов прямых иностранных инвестиций. В работе представлены факторы, влияющие на прямые иностранные инвестиции с учетом данных ежегодного доклада Группы Всемирного банка “Ведение бизнеса”. Кроме того, дана множественная регрессионная оценка прямых иностранных инвестиций.

Ключевые слова: прямые иностранные инвестиции, инвестиционная среда, основные показатели ведения бизнеса, налогообложение, защита миноритарных инвесторов, регрессионный анализ, международная торговля, доступность кредитов, жизненный уровень населения.

MULTIVARIATE REGRESSION ANALYSIS OF THE FOREIGN DIRECT INVESTMENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

TATEVIK SHAHINYAN

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

By stressing the role of foreign direct investments (FDI) in economic development of a nation and the need for designing favorable investment climate the article studies statistical data on FDI flows and illustrates the factors that affect the inflow of FDI based on the findings and data of the annual Doing Business Report published by the World Bank. Moreover, a multivariate regression equation has been estimated to identify the factors that significantly explain the changes in FDI.

Keywords: Foreign direct investments, investment climate, major indicators of doing business, paying taxes, protecting investors, regression analysis, trading across borders, getting credit, standards of living of population.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Յուրաքանչյուր երկրի պարենային ապահովության գնահատման հիմքում կարևորվում է բնակչության կողմից սպառվող սննդի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեցող ապրանքների ինքնաբավության աստիճանը: Որքան տվյալ երկիրն ավելի լիարժեք է բավարարում բնակչության պահանջարկը սեփական արտադրության հաշվին և արտահանում պարենային ապրանքներ, այնքան բարձր է ինքնաբավության աստիճանը: Օրինակ, Եվրամիության երկրները, զբաղեցնելով երկրագնդի ողջ տարածքի 3 և բնակչության 7%-ը, 2013թ. ապահովել են հացահատիկի համաշխարհային արտադրության 11%-ը, մսինը՝ 15%, իսկ կաթինը՝ 21%¹:

Զնայած Հայաստանը սակավահող և քարքարոտ երկիր է, սակայն Խորհրդային Միության կազմում դրա բնակչությունն աճում էր միջին հաշվով միութենականի համեմատությամբ զրեթե երկու անգամ ավելի արագ տեմպերով: Պարենի ապահովման խնդիրը բարդանում էր, ամբողջովին կախման մեջ լինելով Միության գյուղատնտեսության իրավիճակից: Տարեկան ներմուծվում էր մոտ 1 մլն. տ. հացահատիկ, ինչի հիման վրա զարգանում էր նաև ինտենսիվ անասնաբուծությունը:

Անկախության տարիներին խզվեցին տնտեսական կապերը, մի կտոր հացի խնդիրը մնաց օդից կախված: Սեփականատեր դարձած գյուղացին հարկադրված էր իրեն պատկանող հողակտորում առաջին հերթին ցանել ցորեն, կարտոֆիլ, պահել 1-2 մթերատու անասուն: Շրջանառությունից դուրս մղվեցին կերային ու տեխնիկական մշակաբույսերը, անգամ խաղողի ու մրգի այգիները, և արդյունքում գյուղատնտեսությունը դարձավ բնամթերային՝ հիմնված ձեռքի աշխատանքի վրա:

Վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ վերջին 14-15 տարիներին գյուղացիական տնտեսությունները որոշակի շահագրգռվածություն են ցուցաբերել գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման, հարաբերական առավելություն ունեցող մշակաբույսերի արտադրությունն ընդլայնելու բնագավառում:

Այսպես, Արարատյան հարթավայրում (Արարատի և Արմավիրի մարզերում) ցորենի ցանքատարածությունը 2000թ. կազմել է 32.2 հազ. հա, մինչդեռ 2013թ.՝ 8.9 հազ. հա (4.1 անգամ պակաս): Նույն տարիներին (2001-2013թթ.) այդ երկու մարզերում բանջարաբուստանային մշակաբույսերի ցանքատարածությունն ավելացել է 1.5 անգամ (13.6 հազ. հա-ից մինչև 20.4 հազ. հա), իսկ խաղողի, պտղատու և հատապտղատու տնկարկների տարածությունները՝ 63%-ով (17.2 հազ. հա մինչև 27.3 հազ. հա)²:

Հացահատիկի ցանքատարածությունների կրճատումը փոխհատուցվել է բերքատվության բարձրացման հաշվին: Եթե 2001-2003թթ. միջին տարեկան կտրվածքով ՀՀ-ում արտադրվել է 330 հազ. տ հացահատիկ, ապա 2011-2013թթ.՝ 482 հազ. տ (46%-ով ավելի): Ընդհանուր առմամբ, ցորենի ինքնաբավության աստիճանը հանրապետությունում տատանվում է 33-35%-ի սահմաններում: Այսպես, 2012թ. տվյալներով, Հայաստանում արտադրվել է 243.1 հազ. տ ցորեն, ներմուծվել է 502.5 հազ. տ, իսկ պահուստները տարվա վերջում կազմել են 534 հազ. տ: Բնակչության 1 շնչի հաշվով սպառումը օրական կազմել է 409.1 գրամ (1098.2 կկալ):

Հանրապետության բնակչության գնողունակ պահանջարկը կարտոֆիլի, բանջարեղենի, մրգի, խաղողի, ձվի նկատմամբ լիովին բավարարվում է սեփական արտադրության հաշվին: Շաքարի պահանջարկը 2009թ. բավարարվել է 35.8%-ով, մինչդեռ 2012թ.՝ 96%-ով: Բացի ցորենից, ներմուծվող պարենային ապրանքների կազմում արժեքային առումով մեծ տեսակարար կշիռ ունեն մսամթերքը, բուսական յուղերը, բրինձը և կարագը:

Ուշագրավ են նաև ներմուծվող ու արտահանվող պարենային ապրանքների կառուցվածքի վերաբերյալ տվյալներն ըստ 2013թ. (տե՛ս աղյուսակ 1-ը):

¹ Статистический Комитет СНГ, Ежегодник 2013г.

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2001, 2004, 2009, 2013:

Արտահանման և ներմուծման ծավալները 2013թ.

(մլն. ԱՄՆ դոլար)

	Արտահանում	Ներմուծում	Չափվելիքը (%-ով)
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	54.5	144.8	-265.8
Բուսական ծագման արտադրանք	51.3	244.9	-380.7
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.05	60.6	---
Պատրաստի սննդի ապրանք	309.6	396.3	-128.0
Ընդամենը	415.5	846.6	-203.8

Աղբյուրը. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, 2014, էջ 125:

Եթե դիտարկենք վերջին 10-13 տարիների պարենային ապրանքների արտահանման և ներմուծման դինամիկան, ապա 2002թ. դրանց ներմուծումը գերազանցել է արտահանումը 3.0, 2008թ.՝ 3.6, իսկ 2013թ. 2 անգամ (դոլարային արտահայտությամբ):

Ստեղծված Եվրասիական տնտեսական միության մեջ, Հայաստանը կարող է իր պարենային ապրանքների արտաքին հաշվեկշիռն էլ ավելի բարելավել և անգամ դարձնել դրական: Դրա համար պահանջվում է հարաբերական առավելություն ունեցող մշակաբույսերի (բանջարեղեն, միրգ և խաղող) արտադրությունը կրկնապատկել և խրախուսել դրանց արտահանումը թարմ կամ վերամշակված տեսքով¹:

Բավական է նշել, որ կոնյակի արտադրությունը 2003թ. 709 հազ. դկլ-ից 2013թ. հասել է ավելի քան 2 մլն. դկլ-ի: Կոնյակի արտադրության և արտահանման կրկնապատկման հաշվին հանրապետությունում կարող է նաև կրկնապատկվել հացահատիկի ներմուծման ծավալը, հասցնելով այն 600-700 հազ. տոննայի, դրանով իսկ անասնաբուծության զարգացումը դնել ինտենսիվ հիմքի վրա:

Ներկայումս (2013թ. դրությամբ) հանրապետության վարելահողերի մոտ 30%-ը, իսկ արտադրանքի 50%-ը չի օգտագործվում: Խաղողի, պտղի և հատապտղի տարածքը 1985թ. կազմել է 86.1 հազ. հա, իսկ 2013թ.՝ 55.1 հազ հա: Գրեթե 2 անգամ պակասել են ոռոգվող հողատարածքները և արդյունքում մոտ 200 հազ. հա գյուղատնտեսական նշանակության հողեր բարելավման կարիք ունեն²: Այդ հիմնախնդիրները լուծելու համար պահանջվում են խոշոր կապիտալ ներդրումներ: Հրատապ է դարձել նաև գյուղացիական մանր տնտեսությունների կոոպերացման ու խոշորացման հարցը:

Պարենային ապահովությունը յուրաքանչյուր անձի ու ընտանիքի մակարդակով պահանջում է բացահայտել, թե որքանով է ռացիոնալ նորմաներով սահմանված սնունդը մատչելի տնային տնտեսությունների և բնակչության տարբեր խմբերի համար: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կառուցվածքի, դրանց ընդհանուր էներգետիկական օրական կազմում է 2412.1 կկալ, իսկ նվազագույն նորման՝ 2232 կկալ: Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով 2014թ. 2-րդ եռամսյակում կազմել է 25.2 հազ. դրամ, իսկ մեծահասակի հաշվով՝ 28.1 հազ. դրամ: Ռացիոնալ նորմայով սնվելու պարագայում այդ ցուցանիշները կավելանան մոտ 1/3-ով:

Կարևոր է որոշել նաև տարբեր տեսակի սննդամթերքների պահանջը ու մատչելիությունը սոցիալական և ընտանեկան տարբեր խմբերի համար: Ցավոք, հանրապետության բնակչությունը տարեց-տարի պակասում է, ընդ որում առավել աշխատունակ բնակչության հաշվին, և դրանով իսկ փոխվում է նաև ռացիոնալ նորմայով սնվելու պարագայում պարենի պահանջը:

Այսպես, 2001թ. մարդահամարով, Հայաստանի մշտական բնակչության թիվը կազմում է 3.2 մլն, իսկ 2011թ. մարդահամարով՝ 3 մլն մարդ: Տվյալ պարագայում պահանջվում է տարեկան

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբեր, տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, 2014թ.:

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 1986, 2001, 2003, 2004, 2009, 2013:

արտադրել կամ ներմուծել հետևյալ քանակությամբ հացահատիկ՝ 390 հազ. տ, մսամթերք՝ 110 հազ. տ. կարտոֆիլ՝ 274 հազ. տ, բանջարեղեն՝ 333 հազ. տ, միրգ՝ 220 հազ. տ, շաքար՝ 55 հազ. տ, ձու՝ 550 մլն հատ և այլն:

Իրականում նշված քանակությամբ սննդամթերք չի սպառվում, քանի որ բնակչության զգալի մասի գնողունակությունը ցածր է: Պարենի մատչելիությունը, որը բնութագրվում է բնակչության կողմից փաստացի սպառված պարենամթերքի մակարդակով, կախված է ոչ միայն առկա ռեսուրսներից, այլև մեծապես տնային տնտեսությունների դրամական եկամուտներից:

Ներկայումս պարենային շուկայում կարելի է գտնել ցանկացած սննդամթերք: Ընդ որում, առաջարկը գերազանցում է բնակչության գնողունակ պահանջարկը, որը, սակայն, չի խանգարում հայրենական ու ներմուծվող պարենային ապրանքների գների բարձրացմանը: Միաժամանակ պարենային ապրանքների գները բարձրանում են անհամաչափ:

Այսպես, վերջին 5 տարում (2009-2013թթ.) պարենային ապրանքների գներն աճել են 31.4%-ով, այդ թվում, հացահատիկինը՝ 23%-ով, մսամթերքինը՝ 48.6%-ով, կաթնամթերքինը՝ 36.8%-ով, բանջարեղենինը և կարտոֆիլինը՝ 19.6%-ով, շաքարավազինը՝ 66.2%-ով, իսկ ձվինը 25.4%-ով: Պարենային առաջին անհրաժեշտության ապրանքների գների բարձրացումը ցավազին է ընդունվում բնակչության լայն խավերի շրջանակում, դառնալով նաև քաղաքական շահարկումների առարկա: Փորձենք պարզել, թե միջին ու նվազագույն ամսական աշխատավարձով և կենսաթոշակով որքան պարենային զամբյուղ (տե՛ս աղյուսակ 2-ը) կարելի է գնել սպառման ռացիոնալ նորմայով (2412.1 կկալ):

Աղյուսակ 2

Պարենային զամբյուղի մատչելիությունը՝ ըստ 2004-2013թթ.

	2004	2006	2008	2010	2012	2013
Պարենային զամբյուղի ամսական արժեքը (տարվա IV եռամսյակի միջին ընթացիկ գներով, դրամ)	18038	20437	23395	29500	29400	31760
Որքան պարենային զամբյուղ կարելի է գնել.						
ա) միջին աշխատավարձով	2.4	3.0	3.7	3.5	3.8	3.8
բ) միջին կենսաթոշակով	0.5	0.5	0.9	0.5	1.0	0.9
գ) նվազագույն աշխատավարձով	0.7	0.7	1.1	1.0	1.1	1.4

Չափարկների աղբյուրը. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, տեղեկատվական ամսական զեկույցները 2005, 2007, 2009, 2011, 2013, 2014թթ.

Դժվար չէ նկատել, որ վերջին 5 տարիներին բնակչության լայն խավերի գնողունակությունը գրեթե չի բարձրացել: Առաջին անհրաժեշտության սննդամթերքի (հիրավի, բացառությամբ կարտոֆիլի), գները բարձրանում են առավել բարձր տեմպերով, քան միջին ամսական աշխատավարձը, առավել ևս կենսաթոշակները և գյուղատնտեսական գործունեությունից ստացած եկամուտները: Այսպես, տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) տվյալներով, գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների գյուղատնտեսական գործունեությունից ստացած դրամական և ոչ դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով 2008թ. կազմել են 10312 դրամ, իսկ 2013թ.՝ 12833 դրամ: Բայց այդ նույն ժամանակահատվածում սպառողական գներն ավելացել են 30.8%-ով¹:

Գյուղատնտեսական աշխատանքը գնալով դադարում է գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների եկամուտների հիմնական աղբյուր լինելուց (2008թ. կազմել է 38.8%, իսկ 2013թ.՝ 30.9%): Դրանով է նաև պայմանավորված գյուղական բնակչության աղքատության մակարդակի բարձրացումը (2008թ.՝ 27.5%, իսկ 2013թ.՝ 31.7%): Իրական դրամական եկամուտները նվազել են նաև քաղաքային բնակավայրերում, որոնցում աղքատության մակարդակը 2008թ. կազմել է 27.6%, իսկ 2013թ.՝ 32%²:

¹ Գները և գների ինդեքսները ՀՀ-ում, վիճակագրական ժողովածու, Եր.: 2014թ.:
² Պարենային ապահովություն և աղքատություն, 2014թ. հունվար-մարտ, Եր.: 2014թ.:

Ուշագրավ է նաև տարբեր քվինտիլային խմբերում սպառված սննդամթերքի էներգետիկայի վերաբերյալ ընտրանքային տվյալները: Մեկ շնչի հաշվով օրական 2012թ. այն կազմել է. առաջին քվինտիլային խմբում՝ 1420 կկալ, երկրորդում՝ 1865, երրորդում՝ 2229, չորրորդում՝ 2703, հինգերորդում՝ 3780 կկալ: Ընդ որում՝ քաղաքային միջավայրում՝ այդ ցուցանիշը կազմել է 2142, իսկ գյուղականում՝ 2218 կկալ: Հարկ է նշել նաև, որ գյուղական բնակավայրերում սննդի ձեռք բերման համար կատարված ծախսերի մասնաբաժինը 2013թ. կազմել է 52.8%:

Սակայն ՏՏԿԱՀ-ի արդյունքում լիովին չեն արտացոլվում բնակչության իրական եկամուտները և ծախսերը: Տնային տնտեսությունները, որպես կանոն, հակված են քաքցնել իրենց իրական եկամուտները, հետևապես նաև սպառումը, իսկ մեծահարուստները չեն մասնակցում հարցումներին:

Այնուամենայնիվ ՀՀ պարենային ապահովության հիմնախնդիրը թե՛ հանրապետական, և թե՛ ընտանեկան մակարդակով մնում է չլուծված: Հետևապես, մեր կարծիքով, ՀՀ կառավարության առաջնահերթ հիմնախնդիրը պետք է համարել՝

1. Լիարժեք օգտագործել ՀՀ գյուղատնտեսության ներուժը, որի արդյունքում այդ ոլորտի համախառն արտադրանքը գյուղատնտեսական նշանակության հողերի 1 հա-ի հաշվով 2011-2013թթ. միջին տարեկան կտրվածքով կազմել է 414 հազ. դրամ: Այդ ցուցանիշը խիստ ցածր է և պետք է առնվազն երկու անգամ բարձր լինի, ինչը հնարավորություն կտա լիովին լուծել հանրապետության պարենային անվտանգության խնդիրը (մոտ 1/3-ով բարելավել սննդի սպառումը և 2/3-ով ավելացնել տարբեր տեսակի սննդամթերքների արտահանումը):
2. Մտնելով Եվրասիական տնտեսական միության մեջ Հայաստանը կարող է հարաբերական առավելություն ունեցող գյուղատնտեսական արտադրատեսակների ավելացման հաշվին ոչ միայն լուծել պարենային անվտանգության խնդիրը, այլև էականորեն բարելավել սննդամթերքի սպառման կառուցվածքը՝ նվազագույնի հասցնելով աղքատության մակարդակը: Դրա համար պահանջվում է ՀՀ ագրարային ոլորտում իրականացնել ագրարային բարեփոխումներ, մասնավորապես նպաստավոր պայմաններ ստեղծել խիստ մասնատված հողակտորների միավորման, մանր գյուղացիական տնտեսությունների խոշորացման ու կոոպերացման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՆՆԻՐՆԵՐԸ

ՀԱՍՄԻԿ ԶԱՆԵՐՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Համառոտագիր

Հոդվածում դիտարկվում են Հայաստանի պարենային ապահովության բնագավառում վերջին տարիների միտումները: Դրական պետք է համարել հարաբերական առավելություն ունեցող մշակաբույսերի արտադրության ընդլայնումը, կարևորագույն մթերքների ինքնաբավության աստիճանի բարձրացումը, պարենային ապրանքների արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի կրճատումը (3:1-ից մինչև 2:1):

Հոդվածում կարևորագույն հիմնական խնդիր են համարվում՝ գյուղատնտեսական ներուժի լիարժեք օգտագործումը, գյուղացիական տնտեսությունների խոշորացումը և կոոպերացումը, աշխատանքի արտադրողականության կրկնապատկումը, բնակչության կենսամիճիմումի ապահովումը:

Բանալի բառեր. *պարենային ապահովություն, ինքնաբավություն, հարաբերական առավելություն, պարենամթերքի ներուժումը և արտահանում, սննդամթերքի մատչելիություն, աղքատության մակարդակ, սննդի սպառման կառուցվածք*

ПРОБЛЕМЫ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ ОБЕСПЕЧЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АСМИК ДЖАНЕРЯН, *к.э.н., доцент*
Национальный аграрный университет Армении

Аннотация

В статье рассматриваются тенденции развития продовольственного обеспечения населения РА за последние годы. Следует считать положительным расширение производства сельскохозяйственных культур, имеющих относительные преимущества, повышение уровня самообеспеченности важнейшими продуктами питания, сокращение отрицательного внешнеторгового баланса продовольственных товаров (с 3:1 до 2:1).

В статье в качестве основных задач рассматриваются полноценное использование резервов аграрного хозяйства, укрупнение и кооперирование крестьянских хозяйств, удвоение производительности сельскохозяйственного труда, обеспечение прожиточного минимума населения.

Ключевые слова: *продовольственное обеспечение, самообеспеченность, относительное преимущество, импорт и экспорт продовольствия, доступность продуктов питания, уровень бедности, структура потребления продуктов питания.*

THE ISSUES ON FOOD SECURITY IN THE REPUBLIC OF ARMENIA

HASMIK JANERYAN, *Ph.D. in Economics, Associate professor*
Armenian National Agrarian University

Abstract

The article studies the trends of the last several years reported in food security. The positive signs are the increase in the number of plants cultivated that have relative advantage, increase of the degree of self-sufficiency for key products, decrease of trade deficit in food products (ratio declined from 3:1 to 2:1).

The paper stresses the following most important issues: full potential utilization of agriculture, increase in the number of farmers in a single co-operative and form new ones, to double labor productivity, to ensure higher standards of living of the population.

Keywords: *Food security, self-sufficiency, relative advantage, imports and exports of food products, food availability, poverty rate, food consumption pattern.*

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Յուրաքանչյուր երկրի կայունության վերաբերյալ պատկերացում կարելի է ստանալ՝ դիտարկելով տնտեսական ցնցումներին դրա դիմակայելու ունակությունը:

Դիտարկելով ՀՀ տնտեսական աճի տեմպերը և համադրելով դրանք աշխարհի միջինի հետ՝ մենք նկատում ենք, որ մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանի տնտեսությունն աճել է առաջանցիկ տեմպերով¹:

Վերջին տարիների ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության արդյունքում 2009թ. ՀՀ տնտեսությունում գրանցվեց 14.1%² տնտեսական անկում, ինչը հիմք ընդունելով՝ կարելի է փաստել, որ ՀՀ տնտեսական աճի հեռանայունները ճիշտ չէին ընտրված³: Ուստի՝ իրավիճակը շտկելու և հետագայում կայուն աճ ապահովելու նպատակով տնտեսական աճի ապահովման նոր մոդելի անհրաժեշտություն էր առաջանում, որի հիմքը պետք է լիներ արտադրական ոլորտի զարգացումը:

Սակայն անպատասխան էր մնում մեկ հարց. ի՞նչ արտադրել: Հայտնի է, որ Հայաստանի ներքին շուկան շատ սահմանափակ է, հետևաբար ՀՀ տնտեսությունը չէր կարող երկարատև զարգացում ունենալ՝ բավարարելով մեծամասամբ ներքին պահանջարկը: Փոխարենը՝ արտաքին պահանջարկը Հայաստանի համար գրեթե անսահմանափակ էր և կարող է տնտեսության հետագա զարգացման շարժիչ ուժ դառնալ: Ուստի, հենց պատրաստի արտադրանքի արտահանումը կարող էր ՀՀ հետագա զարգացման գրավականը դառնալ: Հենց այս հանգամանքն էլ հիմք հանդիսացավ 2011թ. «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության» ռազմավարության մշակման համար⁴:

Սակայն, 2014թ. սկսած ՀՀ-ն որդեգրեց արտաքին տնտեսական քաղաքականության նոր ուղղություն՝ արդյունքում 2015թ. հունվարից անդամակցելով ԵՏՄ-ին:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում պարզելու, թե նախկինում մշակված արտահանման տնտեսական քաղաքականությունը որքանով է համապատասխանում ԵՏՄ անդամակցության շրջանակներում իրականացվող քայլերին, ինչպիսի փոփոխությունների անհրաժեշտություն կառաջանա և ինչ հնարավոր զարգացումներ են սպասվում ՀՀ արտահանման ոլորտում՝ ԵՏՄ անդամակցության պարագայում: Կարճաժամկետ ժամանակահատվածում դեռևս հնարավոր չի լինի իրականացնել արտահանման կառուցվածքային հիմնարար վերափոխումներ, քանի որ այն պահանջում է նոր տեխնոլոգիաների ձեռքբերում, նոր արտադրությունների հիմնում, ինչպես նաև հարակից արտադրությունների և սպասարկող ենթակառուցվածքների վիճակի բարելավում: Այդ պատճառով, կարծում ենք, կարճաժամկետ հատվածի համար առավել նպատակահարմար կլինի ԵՏՄ անդամակցության շրջանակում զարգացնել արտահանման այն ոլորտները, որոնք արդեն իսկ ունեն համեմատական առավելություններ և նշանակալի փոփոխությունների անհրաժեշտություն չեն զգում:

Այս նպատակով մենք վերլուծել ենք ՀՀ արտահանման մեջ բացահայտված համեմատական առավելություն (այսուհետ՝ ԲՀԱ) ունեցող ոլորտները՝ օգտագործելով Բելլա Բալասսայի կողմից մշակված մեթոդաբանությունը և հաշվարկելով ԲՀԱ ինդեքսը⁵ Հայաստանի համար:

¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ, ԱՄՀ և ՀԲ տվյալների հիման վրա կատարված հաշվարկներ:

² <http://armstat.am/am/?nid=126&id=01001>

³ Որպես ավածի ապացույց՝ հետադարձ հայացք ձգելով ՀՀ ԱԿԾ կողմից հրապարակված ըստ ոլորտների՝ ՀՀ տնտեսական աճի բաշխվածությունը ցուցանիշների վրա՝ մշենք, որ մինչև 2008թ. էապես աճել է շինարարության տեսակարար կշիռը՝ ի հաշիվ գյուղատնտեսության և արդյունաբերության տեսակարար կշիռների նվազման, որն ամենևին էլ զովելի երևույթ չէ: Մեծամասամբ նաև այս հանգամանքով պայմանավորված՝ 2009թ. ՀՀ տնտեսությունում գրանցվեց 14.1% անկում:

⁴ Հավելված ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրային որոշման, Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն:

⁵ Համաձայն Բելլա Բալասսայի մեթոդաբանության՝ $ԲՀԱ_i = (x_i : X) / (x_i^* : X^*)$, որտեղ՝ x_i -ն տվյալ երկրում i -րդ ապրանքի արտահանումն է,

Հաշվարկների համար հիմք է ընդունվել ապրանքախմբերի տարանջատումը՝ ըստ հարմոնիզացված համակարգի: Այս մեթոդով նախ և առաջ հաշվարկել ենք ՀՀ արտահանման մեջ համեմատական առավելություն ունեցող ոլորտները և համեմատել ենք դրանք դեպի ԵՏՄ շուկա արտահանվող ապրանքախմբերի հետ՝ որպեսզի պարզենք, թե արտահանման ոլորտում համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբերից քանիսը կարող են սպառման շուկա ունենալ ԵՏՄ տարածքում:

Համաձայն իրականացված հաշվարկների¹՝ **97 անուն ապրանքախմբերից 5-ը** («Կենդանի կենդանիներ», «Չուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր») դիտարկվող ժամանակահատվածում **մեծ մասամբ ունեցել են բացահայտված համեմատական առավելություն**, իսկ **14 անուն ապրանքախմբեր** («Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ», «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ», «Հանքաքար, խարամ և մոխիր», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից», «Ապակի և դրանից իրեր», «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ», «Սև մետաղներ», «Պղինձ և իրեր դրանից», «Ալյումին և իրեր դրանից», «Այլ, ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից», «Ժամացույցներ և դրանց մասեր») դիտարկվող **ողջ ժամանակահատվածի համար պահպանել են իրենց բացահայտված համեմատական առավելությունը**:

Ստացվում է, որ դիտարկվող ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ 19 անուն ապրանքախմբեր ՀՀ արտահանման ոլորտում ունեցել են բացահայտ համեմատական առավելություն: Ուստի, կարճաժամկետ հեռանկարում դեպի ԵՏՄ շուկա ուղղվող արտահանման զարգացման համար շեշտը պետք է դնել հենց այս ապրանքախմբերի վրա: Սակայն հարց է առաջանում՝ արդյոք ԵՏՄ շուկայում պահանջարկված են նշված 19 անուն-ապրանքախմբերը և եթե այո, ապա պետք է պարզել, թե դրանց պահանջարկը ԵՏՄ շուկայում բավարարվում է Հայաստանի՞ց, թե՞ այլ երկրներից ներմուծման հաշվին:

Համաձայն վիճակագրական տվյալների²՝ ԵՏՄ շուկայում պահանջարկված են բոլոր 19 ապրանքատեսակները, որոնց արտահանման գծով Հայաստանն ունի համեմատական առավելություն: Սակայն դիտարկվող ժամանակահատվածի համար ԵՏՄ շուկայում այդ ապրանքների պահանջարկը բավարարվել է հիմնականում այլ երկրներից ներմուծման հաշվին: Միայն 2 ապրանքախմբի («Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ») պարագայում է, որ դեպի ԵՏՄ երկրներ իրականացվող ներմուծման մեջ է Հայաստանից իրականացվող ներմուծումը կազմում 1%-ից ավելին: Առավել մտահոգիչ են այն ապրանքախմբերը, որոնց պարագայում ՀՀ-ից իրականացվող ներմուծմանը բաժին է ընկնում ԵՏՄ շուկայում տվյալ ապրանքի ներմուծման նվազ, քան 0.05%-ը: Այդ ապրանքախմբերն են՝ «Կենդանի կենդանիներ», «Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ», «Հանքաքար, խարամ և մոխիր», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Ապակի և դրանից իրեր», «Սև մետաղներ», «Պղինձ և իրեր դրանից», «Ալյումին և իրեր դրանից», «Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից», «Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր», «Ժամացույցներ և դրանց մասեր»: Եթե հաշվի առնենք, որ դրանցից 5-ը հիմնականում հանքահումքային ապրանքներ են, որոնց արտահանումը խրախուսելը մեր կարծիքով ամենևին էլ գովելի

X-ը՝ տվյալ երկրի ընդհանուր արտահանումը, x_i^w -ն՝ i-րդ ապրանքի համաշխարհային արտահանումը, իսկ X^w -ն ընդհանուր համաշխարհային արտահանումը: Ընդ որում՝ երկիրն ունի i-րդ ապրանքի արտահանման գծով բացահայտ համեմատական առավելություն, եթե $R3U > 1$: (Աղբյուրը՝ Balassa, B. (1965), Trade Liberalisation and Revealed Comparative Advantage, The Manchester School, V 33, May 1965, pp. 99-123):

¹ Տվյալների աղբյուր է հանդիսացել Համաշխարհային բանկի տվյալների բազան՝ <https://wits.worldbank.org>

² Տվյալների աղբյուր է հանդիսանում ՀԲ տվյալների բազան՝ <https://wits.worldbank.org>

երևույթ չի լինի¹, ապա մնում են 6 ապրանքախմբեր, որոնց արտահանման գծով ՀՀ-ն ունի ԲՀԱ, սակայն չմայած դրան՝ ԵՏՄ շուկայի ներմուծման մինչև 0.05%-ն է բավարարվում ՀՀ-ից ներմուծման հաշվին:

Այսպիսով, դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ արտահանման մեջ ԲՀԱ ունեցող 14 ապրանքախմբերից (ՀՀ արտահանման մեջ ԲՀԱ ունեն 19 ապրանքախմբեր, սակայն դրանցից 5-ը հանքահումքային ապրանքներ են, ուստի դրանց արտահանման խրախուսմանը չենք անդրադառնա հետագայում) **միայն 2-ն են ԵՏՄ ներմուծման մեջ կազմում 1%-ից ավելին, 6-ը՝ 0.05-1%, 6-ը՝ նվազ քան 0.05%:** Հնարավոր է, որ ԵՏՄ անդամակցության արդյունքում ներմուծման մաքսերի վերացման պարագայում այս ցուցանիշները որոշակի փոփոխություն կրեն, սակայն **դիտարկվող ժամանակահատվածի համար փաստ է, որ ՀՀ արտահանման մեջ ԲՀԱ ունեցող ապրանքները ԵՏՄ շուկայում մեծ ծավալով սպառում չեն ունենում:**

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ փորձենք պարզել դեպի ԵՏՄ շուկա ՀՀ-ի արտահանման մեջ ԲՀԱ ունեցող ապրանքախմբերը: Համաձայն իրականացված հաշվարկների՝ ՀՀ-ից դեպի ՌԴ արտահանվող ապրանքախմբերի մեջ ԲՀԱ ունեն 9 ապրանքախմբեր և ևս 3-ը վերջին տարիներին են ձեռք բերել ԲՀԱ: Այսպիսով, ՌԴ շուկան կարող է ՀՀ-ից արտահանվող ավելի քան 12 ապրանքախմբի համար հանդիսանալ սպառման լայն շուկա: Դեպի Բելառուս արտահանվող ապրանքներից ՀՀ արտահանման մեջ ԲՀԱ ունեն 2 ապրանքախումբ և ևս 4-ը այն ձեռք են բերել վերջին տարիներին: Ինչ վերաբերում է Ղազախստանի շուկա արտահանվող ապրանքներին՝ ապա դրանցից 3-ը դիտարկվող ժամանակաշրջանում մշտապես ունեցել են ԲՀԱ, իսկ ևս 3-ը՝ ԲՀԱ ունեցել են դիտարկվող ժամանակահատվածի մեծ մասում: Իսկ ՀՀ-ից դեպի Ղրղզստան արտահանվող ապրանքների շրջանակում դիտարկվող ժամանակահատվածում ԲՀԱ ունեցել է 1 ապրանքախումբ և ևս 2-ն այն ձեռք են բերել վերջին տարիներին:

Այսպիսով, ամփոփելով վերլուծությունը՝ կարող ենք նշել ՀՀ արտահանման որոշ ոլորտների թիրախային շուկաները ԵՏՄ շրջանակներում. որպես այդպիսին «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբի համար թիրախային շուկա կարող են հանդիսանալ ԵՏՄ բոլոր անդամ երկրների շուկաները, «Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ», «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ» ապրանքախմբերի համար՝ Ռուսաստանի և Բելառուսի շուկան, «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ» ապրանքախմբի համար՝ Ռուսաստանը, Բելառուսն ու Ղազախստանը, «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից» ապրանքախմբի համար՝ Ռուսաստանի և Ղազախստանի շուկան, «Դեղագործական մթերք» ապրանքախմբի համար՝ Ղազախստանի և Ղրղզստանի շուկան: Բացի այդ Ռուսաստանը կարող է թիրախային շուկա հանդիսանալ «Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Այլ կենդանական ծագման ապրանքներ», «Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Խցան և դրանից իրեր» ապրանքախմբերի համար, Բելառուսի շուկան՝ «Անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ» ապրանքախմբերի, Ղազախստանը՝ «Այլ տարբեր սննդամթերք», «Գործիքներ, դանակներ, գդալներ, պատառաքաղներ ոչ թանկարժեք մետաղներից», իսկ Ղրղզստանը՝ «Եթերային յուղեր, հարդարանքի և լոգարանային միջոցներ» ապրանքախմբերի համար: Թե ինչպիսի զարգացումներ կունենանք առավել երկարաժամկետ հատվածում, հնարավոր կլինի պարզել հետագա վերլուծությունների արդյունքում՝ մաքսադրույքների փոփոխության, ինչպես նաև պոտենցիալ ներդրումների ներգրավման հնարավոր ազդեցությունը ՀՀ արտահանման վրա բացահայտելու պարագայում:

¹ Նույնիսկ չափազանց մեծ ռեսուրսային հնարավորություններ ունեցող երկրներն իրենց թույլ չեն տալիս հումքի ուղղակի արտահանում այն պարագայում, երբ երկրում առկա է դրանց նկատմամբ պահանջարկ և իրացման լայն հնարավորություններ: Առավել ևս Հայաստանի պարագայում, հումքային ապրանքների արտահանումը չի կարող նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը:

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՅՄԱՆ ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ, *յր. գ. թ.*

ՄՀԱԱ Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվում է ԵՏՄ շրջանակներում ՀՀ արտահանման համեմատական առավելությունների իրացման հնարավորությունները: Հիմնվելով Բելա Բալասայի կողմից առաջադրված բացահայտված համեմատական առավելությունների ինդեքսի վրա՝ ներկայացվում են այն ապրանքախմբերը, որոնց համար սպառման թիրախային շուկա կարող են հանդիսանալ ԵՏՄ անդամ-երկրների շուկաները: Հոդվածի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ԱՎԾ և Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալները:

Բանալի բառեր. ԵՏՄ, բացահայտված համեմատական առավելություն, ԲՆԱ ինդեքս, արտահանում, ներմուծում, թիրախային շուկա:

ВОЗМОЖНОСТИ РЕАЛИЗАЦИИ СРАВНИТЕЛЬНЫХ ПРЕИМУЩЕСТВ ЭКСПОРТА РА В РАМКАХ ЕАЭС

ЛИЛИТ САРГСЯН, *к.э.н.*

научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА

Аннотация

В статье рассматриваются возможности реализации сравнительных преимуществ экспорта РА в рамках ЕАЭС. На основе индекса «выявленных сравнительных преимуществ», предложенного Б.Балассом, представлены группы товаров, для которых целевыми рынками сбыта могут стать рынки стран-членов ЕАЭС.

Информационной базой для статьи послужили статистические данные НСР РА и Всемирного банка.

Ключевые слова: ЕАЭС, выявленные сравнительные преимущества, индекс ВСП, экспорт, импорт, целевые рынки.

BENEFITING FROM THE REVEALED COMPARATIVE ADVANTAGES OF THE REPUBLIC OF ARMENIA UPON ACCESSION TO THE EURASIAN ECONOMIC UNION

LILIT SARGSYAN, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article presents the benefits from the revealed comparative advantage (RCA) of exports of the Republic of Armenia upon accession to the Eurasian Economic Union (EAEU). Based on the revealed comparative advantage index constructed by Bela Balassa, the article proposes those groups of products that could be sold in the EAEU member-states as target markets for these goods. The author retrieved data from the online databases of the World Bank, the National Statistical Service of Armenia and other publications released by these organizations to make various calculations, and etc.

Keywords: The EAEU, revealed comparative advantage, the RCA index, exports, imports, target market.

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԶՅ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԼՂՀ-ՈՒՄ**

Ապահովագրական շուկան պայմանավորված է ինչպես արտադրության գործընթացի անընդհատության ապահովման, այնպես էլ՝ քաղաքացիների բազմաբնույթ գույքային շահերի պաշտպանվածության անհրաժեշտությամբ:

ՀՀ ապահովագրական շուկայի ձևավորման սկզբնական փուլը կարելի է համարել կայացած, քանի որ այն պայմանավորված է ապահովագրական գործի իրավական կարգավորմամբ և պետական վերահսկողությամբ, որոնց հիմքերը դրվեցին «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ¹: Արդյունքում ապահովագրական ընկերությունների լիցենզավորման գործընթացի կանոնակարգման, վերահսկողության մեխանիզմների ներդրման և այլ միջոցառումների իրականացման շնորհիվ սկսեց որոշակիորեն կարգավորվել ապահովագրական գործունեությունը:

Հետազոտության նպատակն է առկա վիճակագրական տվյալների հիման վրա պարզել տրանսպորտային միջոցների ապահովագրման վիճակը ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում 2011-2012թթ. համար: Ուսումնասիրությունը կատարվել է «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ կողմից տրամադրված 2011-2012թթ. առանց հատուցման և հատուցված ապահովագրական պատահարների տվյալների բազայի հիման վրա (տե՛ս աղյուսակ 1): Ընդ որում՝ ստացվել են հատուցված ապահովագրական գումարների միջինները և միջնաթվերն ըստ նշված տարիների: Համեմատելով բերված թվերը, կարելի է գալ այն եզրակացության, որ 2012թ. արձանագրվել է վթարների աճ մոտ 80 տոկոս, ընդ որում զգալի աճ է արձանագրված Վայոց Ձոր և Կոտայք մարզերում: Ջգալի աճ կա նաև Շիրակում:

Աղյուսակ 1

Վթարների վիճակագրությունն ըստ 2011-2012 թթ. ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում

	2011թ.		2012թ.		2011-2012թթ.	
	ընդամենը	տես. կշիռը, %	ընդամենը	տես. կշիռը, %	ընդամենը	տես. կշիռը, %
Արագածոտն	113	6,72	208	6,88	321	6,82
Արմավիր	122	7,25	212	7,01	334	7,10
Արարատ	93	5,53	177	5,85	270	5,74
Գեղարքունիք	50	2,97	109	3,60	159	3,38
Կոտայք	212	12,60	377	12,47	589	12,52
Լոռի	102	6,06	166	5,49	268	5,69
Շիրակ	65	3,86	159	5,26	224	4,76
Սյունիք	117	6,96	153	5,06	270	5,74
Տավուշ	41	2,44	70	2,31	111	2,36
Վայոց Ձոր	577	34,30	1151	38,06	1728	36,72
ԼՂՀ	190	11,30	242	8,00	432	9,18
Ընդամենը	1682	100	3024	100	4706	100.0

Վերը բերված աղյուսակ 1-ի տվյալների վերլուծությունն, ինչպես նաև տվյալ ապահովագրական ընկերություններում ավտոճանապարհային վթարների մասնակիցների հետ անցկացված հարցումները թույլ են տալիս հանգել այն եզրակացության, որ 2012թ. 2011թ. համեմատությամբ ապահովագրական դեպքերի 79.8 տոկոս հավելման տեմպն ամենևին էլ չի պատճառաբանվում միայն ՀՀ-ում տրանսպորտային միջոցների քանակի ավելացմամբ:

Այն ավելի շուտ բնութագրվում է հանրապետությունում ապահովագրական գործի կայացմամբ, պետական հսկողության ուժեղացմամբ, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի կամ դրանք շահագործող վարորդների մոտ ապահովագրական ընկերու-

¹ «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 1996թ նոյեմբերի 19-ին:

թյունների գործունեության նկատմամբ վստահության ձևավորմամբ, պարտադիր ապահովագրման իրավական և դրանց ճիշտ օգտագործման գիտակցության բարձրացմամբ: Հետաքրքիր է ուսումնասիրել նաև հատուցումների բաշխումն ըստ մարզերի: Աղյուսակ 2-ում բերված են միայն հատուցում ստացած վթարների վիճակագրությունը, որտեղից երևում է, որ վթարների միայն 59.5 տոկոսն է հատուցվել: Տոկոսային առումով զգալի աճ կա Կոտայքի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում՝ համապատասխանաբար 1.3, 1.7 և 2.6 տոկոսով, զգալի նվազում կա Շիրակի մարզում 4.5%:

Աղյուսակ 2

Հատուցված վթարների բաշխումն ըստ մարզերի 2011-2012թթ.

	2011թ.		2012թ.		2011-2012թթ.	
	ընդամենը	տես. կշիռը , %	ընդամենը	տես. կշիռը , %	ընդամենը	տես. կշիռը , %
Արագածոտն	96	9,50	182	10,18	278	9,94
Արմավիր	110	10,89	194	10,85	304	10,86
Արարատ	82	8,12	157	8,78	239	8,54
Գեղարքունիք	42	4,16	105	5,87	147	5,25
Կոտայք	189	18,71	359	20,08	548	19,59
Լոռի	87	8,61	149	8,33	236	8,43
Շիրակ	174	17,23	228	12,75	402	14,37
Սյունիք	60	5,94	152	8,50	212	7,58
Տավուշ	101	10,00	143	8,00	244	8,72
Վայոց Ձոր	35	3,47	60	3,36	95	3,40
ԼՂՀ	34	3,37	59	3,30	93	3,32
Ընդամենը	1010	100	1788	100	2798	100,0

Ըստ մարզերի և ըստ տրանսպորտի տեսակների վթարների բաշխումը բերված է աղյուսակ 3-ում, որտեղից երևում է, որ ավտոմեքենաների 6 տեսակների վթարների մեծ մասը բաժին է ընկնում մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցներին: Պատկերը նույնն է նաև հատուցված վթարների համար՝ աղյուսակներ 4, 5, 6:

Աղյուսակ 3

Վթարների բաշխումն ըստ մարզերի և տրանսպորտի տեսակի 2012թ.

	Ավտոբուս	Մարդատար	Միկրոավտոբուս	Մոտո	Բեռնատար	Ընդամենը
Արագածոտն	1	276	0	0	44	321
Արմավիր	9	267	3	0	54	334
Արարատ	3	224	2	0	41	270
Գեղարքունիք	1	123	1	0	34	159
Կոտայք	16	464	8	0	101	589
Լոռի	16	202	7	0	41	268
Շիրակ	3	342	8	0	77	432
Սյունիք	3	180	4	1	36	224
Տավուշ	5	161	0	0	103	270
Վայոց Ձոր	31	1463	34	1	196	1728
ԼՂՀ	1	78	0	0	32	111
Ընդամենը	89	3780	67	2	759	4706

Հետաքրքիր է ուսումնասիրել հատուցման չափերի վիճակագրությունը: Աղյուսակ 4-ում բերված են երկու տարիների հատուցումների չափերը մարզերի և ԼՂՀ-ի համար: Հաշվարկված են նաև միջինները, միջնաթվերը, փոքրագույն և մեծագույն հատուցումների չափերը: Ըստ այս աղյուսակի երևում է, որ Արագածոտնի, Տավուշի մարզերում, ինչպես նաև ԼՂՀ-ում հատուցման միջին չափերը գերազանցում են 200 հազ. դրամի սահմանը, իսկ մնացած մարզերից Շիրակում հատուցման չափը փոքր է 150 հազ. դրամից: Ըստ միջնաթվի մեծության՝ Արագածոտնի, Արարատի և Տավուշի մարզերում այն գերազանցում է 140 հազ. դրամի սահմանը: Միայն Շիրակի մարզում միջնաթիվը չի գերազանցում 100 հազ. դրամի սահմանը: Այսպիսով՝ ըստ 2 տարիների

տվյալների Արագածոտնի և Տավուշի մարզերում վթարների պատկերն ըստ հատուցման չափերի մտածելու տեղիք է տալիս:

Աղյուսակ 4

2011թ.-2012թ. վթարների հատուցման չափերն ըստ մարզերի և ԼՂՀ-ի

(հազ. դրամ)

	Քանակը	Գումարը	Միջինը	Փոքրագույն	Մեծագույն
Արագածոտն	278	58112,497	209,038	10,800	971,000
Արմավիր	304	57794,513	190,114	17,515	955,000
Արարատ	239	47238,675	197,651	15,000	962,000
Գեղարքունիք	147	26195,995	178,204	5,000	914,000
Կոտայք	548	104541,081	190,768	6,000	995,990
Լոռի	236	45669,577	193,515	3,000	999,000
Շիրակ	402	58799,854	146,268	10,000	908,185
Սյունիք	212	38448,828	181,362	18,000	821,000
Տավուշ	244	50588,805	207,331	26,890	900,000
Վայոց Ձոր	95	17509,225	184,308	7,000	975,472
ԼՂՀ	93	19309,397	207,628	4,100	997,870
Ընդամենը	2798	524208,447	187,351	4,000	998,885

Ըստ առանձին տարիների պատկերն այլ է: Այսպես 2011թ. աղյուսակ 5-ի Արագածոտնի մարզի վթարների հատուցման չափի միջինը նորից բարձր է, 200 հազ. դրամի սահմանը հատվել է նաև Վայոց Ձորի, Տավուշի, Սյունիքի, Լոռու և Արարատի մարզերում: Շիրակի մարզի այս ցուցանիշը փոքր է 150 հազ. դրամից: Ըստ միջնաթվերի պատկերը փոխվում է: Առաջին քառյակի մեջ են Տավուշի, Սյունիքի, Արարատի և Արագածոտնի մարզերը:

Աղյուսակ 5

2011թ. վթարների հատուցման չափերն ըստ մարզերի և ԼՂՀ-ի

(հազ. դրամ)

	Քանակը	Գումարը	Միջինը	Միջնաթիվը	Փոքրագույն	Մեծագույն
Արագածոտն	96	23178,652	241,444	160,000	10,800	955,000
Արմավիր	110	20084,460	182,586	130,380	17,515	783,000
Արարատ	82	17461,288	212,943	167,370	42,740	938,000
Գեղարքունիք	42	6903,310	164,365	92,750	5,000	731,745
Կոտայք	189	32793,106	173,509	110,000	6,000	900,460
Լոռի	87	18077,690	207,790	143,000	30,000	871,000
Շիրակ	174	26024,676	149,567	90,500	12,180	908,185
Սյունիք	60	13175,743	219,596	170,390	20,000	821,000
Տավուշ	101	23721,685	234,868	170,500	30,000	832,200
Վայոց Ձոր	35	8256,000	235,886	131,750	38,664	975,472
ԼՂՀ	34	8987,400	264,335	165,250	30,000	997,870
Ընդամենը	1010	198664,010	196,697	131,725	5,000	997,870

Աղյուսակ 6

2012թ. վթարների հատուցման չափերն ըստ մարզերի և ԼՂՀ-ի

(հազ. դրամ)

	Քանակը	Գումարը	Միջինը	Միջնաթիվը	Փոքրագույն	Մեծագույն
Արագածոտն	182	34933,845	191,944	135,000	30,000	971,000
Արմավիր	194	37710,053	194,382	125,000	25,000	955,000
Արարատ	157	29777,387	189,665	140,000	15,000	962,000
Գեղարքունիք	105	19292,685	183,740	128,800	30,000	914,000
Կոտայք	359	71747,975	199,855	130,000	10,000	999,900
Լոռի	228	32775,178	143,751	93,900	10,000	770,000
Շիրակ	228	32775,178	143,751	93,900	10,000	770,000
Սյունիք	152	25273,085	166,270	120,000	18,000	691,000
Տավուշ	143	26867,120	187,882	129,200	26,890	900,000
Վայոց Ձոր	60	9253,225	154,220	116,380	7,000	825,000
ԼՂՀ	59	10321,997	174,949	100,000	4,100	985,800
Ընդամենը	1788	325544,437	182072	125,000	3,000	999,900

Իսկ 2012թ. տվյալների վերլուծությունից (աղյուսակ 6) հետևում է, որ ըստ միջինի մեծության առաջին եռյակում են Կոտայքը, Արմավիրը և Արագածոտնի մարզերը: Իսկ ըստ միջնաբվի մեծության Արարատի, Արագածոտնի և Կոտայքի մարզերը: Մարզերի հիմնական մասում հատուցված վթարները 2011-ի համեմատ 2012-ին գրեթե կրկնապատկվել են:

Նշենք նաև, որ ըստ բերված արդյունքների ԼՂՀ-ում հատուցված վթարների քանակը ամենափոքրն է, ինչը կարելի է բացատրել շահագործվող ավտոմեքենաների նվազ քանակով, ինչպես նաև երթևեկության ցածր ինտենսիվությամբ: Այս հոդվածում ներկայացված է բացառապես մարզերում և ԼՂՀ-ում տեղի ունեցած ապահովագրական պատահարների տվյալների վերլուծությունը: Սույն հոդվածում ներկայացված ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում տեղի ունեցած վթարների վիճակագրական վերլուծության տվյալների վրա՝ կցանկանայի հրավիրել ՀՀ մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ ճանապարհային ոստիկանության, ճանապարհաշինարարների և նախագծային մասնագիտացված կազմակերպությունների ուշադրությունը, հանրապետության ճանապարհների կառուցման ու վերակառուցման ժամանակ դրանց շինարարական անվտանգության չափորոշիչների պահպանման, ճանապարհային նշանների ու ուղեցույցերի անհրաժեշտ քանակության տեղադրման, բավարար լուսավորության ապահովման հարցերին, առկա մեծաքանակ խնդիրների ու հիմնախնդիրների լուծմանը: Այս վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ կան մարզեր որտեղ տեղի ունեցած մեծաքանակ վթարների արդյունքում ապահովագրական հատուցումների չափը բավականին շատ է և միջինը՝ բարձր: Առաջնահերթ մտածելով անվտանգության մասին, որպեսզի կանխվեն վարորդների անփույթ գործողությունները՝ պետք է զովագրային միջոցառումներ իրականացնել անվտանգ երթևեկության կանոնների պահպանման և վարորդների գիտակցության բարձրացման համար, ինչպես նաև կարելի է տվյալ մարզերում գրանցված և շահագործվող տրանսպորտային միջոցների ապահովագրությունը իրականացնել տարբեր ռիսկային գործակիցներով և միևնույն ժամանակ ավելի քիչ վթարներ տեղի ունեցած մարզերում կիրառել ավելի ցածր ռիսկային գործակից:

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԼՂՀ-ՈՒՄ**

ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՍԼՅԱՆ, *ստալիրանտ*

ԵՊՏ կառավարման և գործարարության ամբիոն

Համառոտագիր

Կատարված է 2011-2012թթ. «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում ապահովագրական պատահարների և դրանց արդյունքում հատուցված գումարների վիճակագրական վերլուծություն: Արդյունքում պարզ եմ դարձել առավել ռիսկային և ոչ ռիսկային մարզերը, ըստ վթարների քանակի և հատուցման գումարի միջին չափի, որի արդյունքում առաջարկվում է անվտանգությունից ելնելով մարզերում գործածել համապատասխան ապահովագրական գործակից ըստ ռիսկայնության մակարդակի, ինչպես նաև ելնելով անվտանգության պահպանման կարևորությունից իրականացնել գովազդային և տեղեկատվական մեծածավալ աշխատանքներ վարորդների իրազեկման և ապահովության մակարդակը բարձրացնելու համար:

Բանալի բառեր. *ապահովագրություն, ապահովագրական պարահար, ապահովագրական հատուցում, վիճակագրական վերլուծություն, հատուցում, ապահովագրական ընկերություն, վթարներ, անվտանգություն, ռիսկային գործակից, պարահարների վերլուծություն:*

АНАЛИЗ СТРАХОВАНИЯ АВТОТРАНСПОРТНЫХ СРЕДСТВ И СТРАХОВЫХ ВОЗМЕЩЕНИЙ В МАРЗАХ РА И НКР

СТЕПАН ПАЯСЛЯН, *аспирант*

кафедры менеджмента и бизнеса ЕГУ

Аннотация

В статье проведен статистический анализ произошедших в 2011-2012 гг. страховых случаев и страховых возмещений в марзах РА и НКР на базе данных страховых компаний СЗАО «ИНГО АРМЕНИЯ» и СООО «НАИРИ ИНШУРАНС». По результатам анализа стало ясно, какие марзы по количеству аварий и среднему размеру сумм страхового возмещения являются наиболее рисковыми, а какие не являются рисковыми. В целях безопасности предлагается в марзах Армении применять соответствующий коэффициент страхования в зависимости от уровня риска, а исходя из важности обеспечения безопасности дорожного движения провести масштабную рекламную-информационную кампанию для повышения уровня осведомленности и защищенности водителей.

Ключевые слова: *страхование, страховой случай, страховое возмещение, статистический анализ, компенсация, страховая компания, аварии, безопасность, коэффициент риска, анализ несчастных случаев.*

**THE ANALYSIS OF VEHICLE INSURANCE AND DAMAGE COMPENSATION
IN THE REPUBLICS OF ARMENIA AND NAGORNO KARABAKH**

STEPAN PAYASLYAN, *Ph.D. student*

Faculty of Economics and Management

Yerevan State University

Abstract

The article provides a statistical analysis of the data of "Ingo Armenia" Insurance Closed Joint-Stock Company and "Nairi Insurance" Insurance Limited Liability Company of mazes of the Republic of Armenia of car insurance claims, and amounts of compensation paid in the marzes of the Republic of Armenia and Nagorno Karabakh for the period 2011-2012. Based on the results of the analysis the author identifies the level of risk that would define a given marz based on the mean compensation paid and the average number of car insurance claims, and then for safety purposes, proposes to assign respective coefficients to a specific marz based on the level of risk; and implement aggressive advertisement campaign, and carry out public awareness campaign among drivers to ensure higher safety level.

Keywords: *Insurance, insurance, claim, insurance compensation, statistical analysis, compensation, insurance company, accidents, safety, risk coefficient, analysis of claims.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՏՄ ԱՆԴԱՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

Արտերկրից դեպի Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտներ ուղղված ներդրումների ծավալը ըստ 2013թ. տվյալների կազմել են մոտ 0.6 մլրդ դոլար, որից միայն 0.27 մլրդ դոլարն են կազմել ուղղակի ներդրումները: Արդյունքում առաջանում է մոտ 0.48 մլրդ դոլարի բաց, որը լրացվում է ՀՀ բնակչության ձեռքում ոչ բանկային համակարգի միջոցով ստացված արտարժույթի պաշարների, առկա արտարժույթային պահուստների և փոխառությունների հաշվին:

Նման իրավիճակից դուրս գալու հիմնական ուղղություններից մեկը ներդրումների ներգրավումն է, որը պետք է դիտարկվի ոչ թե որպես արտարժույթի ներհոսք, որը առաջին հերթին ուղղվելու է երկրի բնակչության կողմից ներկայացվող պահանջարկի բավարարմանը, այլ պետք է կրի առաջարկ ստեղծող բնույթ, այսինքն՝ ուղղված լինի երկրում արտադրական հզորությունների ավելացմանը, արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների ծավալների մեծացմանը, որը կհանգեցնի ոչ միայն ներքին պահանջարկի բավարարման, այլ նաև արտահանման ծավալների զգալի աճի և միևնույն ժամանակ կնպաստի արտարժույթի ներհոսքից ՀՀ տնտեսության կախման խնդրի լուծմանը:

ՀՀ տնտեսական զարգացման և մասնավորապես ներդրումների ներգրավման մեծ հնարավորություններ կարող է ստեղծել ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը: Բայց միայն այդքանով հարցը չի սահմանափակվի, և առկա խնդիրները միանգամից լուծում չեն ստանա: Դրա պատճառն այն է, որ ոչ բոլոր խնդիրներն են գտնվում կոնկրետ երկրի ազդեցության գոտում, հետևաբար, իրատեսական լուծումները որոշակի ժամանակ կարող են պահանջել: Սույն հոդվածի առաջին պարբերության մեջ թվարկված գործոններից կամ խնդիրներից երկրի ազդեցության գոտում գտնվող կարելի է համարել երկրի տնտեսական զարգացմանը և ներդրումների ներգրավմանն ուղղված գրավիչ օրենսդրության մշակումը և ներդրումը, մրցակցային դաշտի, զարգացած ֆինանսական, բանկային համակարգի ապահովումը:

Եթե դիտարկենք ՀՀ տնտեսության զրավչությունը ինչպես ԵՏՄ հիմնադիր պայմանագրի, այնպես էլ ներդրումները կարգավորող ազգային օրենսդրության շրջանակներում, ապա երկու դեպքում էլ դրանք առանձնանում են ազատականացման բավականին բարձր մակարդակով և իրականում կարող են նպաստել ներդրումների ներգրավմանը:

ԵՏՄ պայմանագրի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսվում է անդամ-երկրների միջև իրականացվող ներդրումային գործընթացների փուլային ազատականացում, ինչպես նաև միմյանց նկատմամբ մինչ այդ կիրառվող կամ առկա խտրական մոտեցման վերացում, ինչպես նաև ԵՏՄ պայմանագրի 16-րդ հավելվածի 38-43-րդ կետերով նախատեսվում է միասնական շուկայի ձևավորում և գործունեության ապահովում հնարավորինս մեծ թվով ոլորտներում¹:

ԵՏՄ մասին պայմանագրի 16-րդ հավելվածի 68-69 կետերով սահմանվում է, որ յուրաքանչյուր անդամ պետություն իր տարածքում ապահովում է արդար և իրավահավասար ռեժիմ՝ մյուս անդամ պետությունների ներդրողների կողմից իրականացվող ներդրումների հետ կապված ներդրումների և գործունեության առնչությամբ և կիրառվող ռեժիմը պետք է պակաս բարենպաստ չլինի անդամ պետության (ազգային) ներդրողի կողմից իրականացվող ներդրումներին և այդպիսի ներդրումներին առնչվող գործունեության մասով այդ անդամ պետության կողմից ապահովվող ռեժիմից²:

Հայաստանում օտարերկրյա ներդրումները կարգավորող ազգային օրենսդրությունը ամբողջովին տեղավորվում է ԵՏՄ պայմանագրի տրամաբանության մեջ և նույնպես աչքի է ընկնում ազատականացման բարձր մակարդակով և զրավչությամբ: Մասնավորապես՝ կարելի է նշել

¹ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր, հոդված 66, հավելված 16:

² Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր, հավելված 16, 68-69 կետեր:

գրավչությունն ապահովող և ներդրումների համար մեծ կարևորություն ունեցող հետևյալ բաղադրիչները՝

ա) ներդրումները կարգավորող օրենքներով նախատեսվում են ոչ միայն նվազագույնը հավասար պայմաններ երկրի ներսում գործող ընկերությունների հետ համեմատած, այլև մի շարք դեպքերում, որոնք վերաբերում են սոցիալական և տնտեսական զարգացման կարևորագույն բնագավառներին, կարող են սահմանվել լրացուցիչ արտոնություններ, բնականաբար ՀՀ-ում գործող օրենսդրությանը համապատասխան,

բ) մյուս կարևոր հանգամանքը, որի նկատմամբ օտարերկրյա ներդրումները բավականին զգայուն են, դա այս ոլորտին վերաբերող օրենսդրության և առանձին օրենքների հնարավոր փոփոխականությունն է: Այս առումով նույնպես ՀՀ օրենսդրությունը բավականին բարենպաստ է: Այսպես, Օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությանը, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը¹,

գ) այս ամենի հետ մեկտեղ կարևոր է նաև օտարերկրյա ընկերությունների կողմից իրականացված ներդրումների առավելագույն պաշտպանվածությունը հնարավոր կորուստներից, որոնք կարող են առաջանալ պետական մարմինների կողմից օրենսդրության պահանջների ոչ պատշաճ կատարման հետևանքով:

Ներդրումների ներգրավման համար գրավչության բարձրացման կարևոր ցուցանիշ է նաև այն, որ ՀՀ-ն հանդիսանում է Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության (MIGA) անդամ, որը զբաղվում է ներդրումային ռիսկերի ապահովմամբ, ինչպես նաև տնտեսական ազատության ցուցանիշներով զբաղեցնում է բավականին բարձր տեղեր աշխարհի երկրների թվում:

ՀՀ-ն նախորդ տարիներին զգալիորեն բարելավել է ներդրումային միջավայրը բնութագրող ցուցանիշները: Օրինակ, 2009-2014թթ. ընթացքում Համաաշխարհային բանկի կողմից հրապարակված «Գործարարության ինդեքս» հաշվետվություններում Հայաստանը բարձրացել է 50-րդ տեղից և 2014թ. տվյալներով զբաղեցնել 45-րդ տեղը (2010թ. ՀՀ-ն զբաղեցրել է 43-րդ տեղը):

Ունենալով բավականին ազատական և գրավիչ օրենսդրական դաշտ, ինչպես նաև կնքելով երկկողմ համաձայնագրեր «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին»² երկրների հետ Հայաստանին հաջողվել է նախորդ տարիների ընթացքում դեպի տնտեսության տարբեր ոլորտներ ներգրավել ավելի քան 8.5 մլրդ դոլար, որից 6.2 մլրդ կազմել են ուղղակի ներդրումները: Ներդրումների ներգրավմանը նպաստակաուղղված քայլերը բնականաբար այս քանով չեն սահմանափակվում և 2014թ. սկզբի դրությամբ 28 երկրների հետ գնում են բանակցություններ ներդրումների ոլորտում համագործակցության հնարավորություններն օգտագործելու համար:

Աղյուսակ 1-ից պարզ երևում է, որ ԵՏՄ անդամ երկրների կողմից ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված և՛ ընդհանուր, և՛ օտարերկրյա ներդրումները գրեթե ամբողջությամբ արտահայտված են ռուսական կապիտալի տեսքով: 1988-2013թթ. ընթացքում ռուսական ընկերությունները դեպի ՀՀ են ուղղել ավելի քան 3.3 մլրդ ԱՄՆ դոլար կապիտալ (ՀՀ իրական հատված կատարված ներդրումների մոտ 39.6%-ը), որից 2.5 մլրդ ԱՄՆ դոլարը կազմել են ուղղակի ներդրումները (ընդհանուր ուղղակի ներդրումների 41.2%-ը): Ռուսական կապիտալը ներկայացված է ավելի քան 30 ոլորտներում: ՀՀ տնտեսության մի շարք ոլորտներում, որոնք ունեն ռազմավարական նշանակություն ցանկացած երկրի համար, ռուսական ընկերությունները ամբողջովին կամ գրեթե ամբողջովին դարձել են անվիճելի առաջատար: Այդ ոլորտների թվին են պատկանում էներգետիկան, հեռահաղորդակցությունը, հանքարդյունաբերությունը, բանկային ոլորտը, տրանսպորտը և այլն:

¹ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, հոդված 7:

² Հայաստանի Հանրապետության կառավարության և այլ պետությունների կառավարությունների միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին ստորագրված համաձայնագրերի ցանկ:
<http://www.mineconomy.am/am/508/gortsaruyt.pastatuxt.html>

Ընդհանուր և ուղղակի ներդրումների հոսքերը ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներ 1988-2013թթ.
(հազար դոլար և %)

	<i>Համախառն հոսքեր</i>		<i>Տեսակարար կշիռը, %</i>	
	Ընդհանուր ներդրումներ	Այդ թվում ուղղակի ներդրումներ	Ընդհանուր ներդրումներ	Այդ թվում՝ ուղղակի ներդրումներ
Ընդամենը	8534305.4	6166462.5	100	100
Այդ թվում՝				
ՌԴ	3379061.4	2538641.3	39.6	41.2
Ֆրանսիա	1056895.9	1010927.3	12.4	16.4
Արգենտինա	506548.6	329401	5.9	5.3
Հունաստան	478787.1	301689.8	5.6	4.9
Գերմանիա	427199	401283.1	5	6.5
ԱՄՆ	402526.2	247086.6	4.7	4
Լիբանան	384047.8	173567.1	4.5	2.8
Կանադա	372968.1	145128.6	4.4	2.3
Կիպրոս	205591	118878.5	2.4	1.9
Նիդեռլանդներ	166153.6	29460.2	1.9	0.5
Ընդամենը 10 երկրներ	7379778.7	5296063.5	86.5	85.9
Բելառուս	197	197	0	0
Ղազախստան	22.8	22.8	0	0
ԵՏՄ երկրներ	3379281.2	2538861.1	39.6	41.2

Աղբյուր՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք՝
<http://www.armstat.am/en/?nid=246>

Բելառուսական ընկերությունների կողմից ՀՀ կատարված ներդրումները մոտ 3 տասնամյակների ընթացքում կազմել են 197 մլն ԱՄՆ դոլար, որն էլ իրականացվել է մեծածախ առևտրի ոլորտում, իսկ ինչ վերաբերում է ղազախական ներդրումներին, ապա դրանք նույն ժամանակահատվածում կազմել են 22.8 մլն դոլար, որոնք ուղղվել են ծրագրային ապահովման մշակման, խորհրդատվությունների և հարակից գործունեության համակարգչային տեխնոլոգիաների բնագավառ:

Ելնելով ներկայացված իրավիճակից և Բելառուսի ու Ղազախստանի ՀՆԱ-ի հարաբերակցությունից Ռուսաստանի ՀՆԱ-ի նկատմամբ ներդրումների զգալի ընդլայնում այս երկրներից, կարծում են, պետք չէ սպասել: Բայց այնուամենայնիվ չպետք է բացառել կամ անտեսել համագործակցության մեծ պոտենցիալը, որը կարող է իրացվել և ապահովվել զգալի օգուտներ բոլոր կողմերի համար:

Ներդրումների ներգրավման տեսանկյունից ՀՀ տնտեսության գրավչությունը զգալիորեն տուժում է մեր երկրի ազդեցության գոտուց մասամբ կամ ամբողջությամբ դուրս գտնվող խնդիրների պատճառով: Խոսքը գնում է տրանսպորտային խնդիրների, ավելի ճիշտ արտաքին աշխարհի դուրս գալու այլընտրանքների սահմանափակության մասին:

Շարունակում է մեծ մնալ Հայաստանի կախվածությունը Վրաստանի և Իրանի տրանսպորտային հնարավորություններից: Եթե Թուրքիայի և Ադրբեջանի պարագայում առկա խնդիրները կրում են քաղաքական բնույթ և անմիջապես կապված են Հայաստանի հետ, ապա Վրաստանի և Իրանի դեպքում Հայաստանի հետ հարաբերությունների վրա ազդող գործոնները կրում են այլ բնույթ և պայմանավորված են երրորդ կողմի հետ: Օրինակ, Վրաստանն ունի մինչ այժմ չլուծված խնդիրներ ՌԴ հետ, որոնք էականորեն ազդում են ՀՀ արտաքին տնտեսական հարաբերությունների ընդլայնման հնարավորությունների վրա, քանի որ ՀՀ-ն ընդհանուր սահ-

ման չունի մյուս ԵՏՍ անդամ-պետությունների հետ և ամենահարմար և արդյունավետ տարբերակն այդ տեսանկյունից կարող էր դառնալ արխագական երկաթուղին:

Ինչ վերաբերում է Իրանին և նրա հետ հարաբերություններին, ապա վերջին զարգացումները թույլ են տալիս ենթադրել, որ առաջիկա տարիներին Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները կարող են չեղյալ համարվել, ինչը կնպաստի տարածաշրջանում Իրանի դերի մեծացմանը, որն էլ իր հերթին կարող է նպաստել նաև ՀՀ տնտեսական զարգացման հեռանկարների և հնարավորությունների մեծացմանը:

Նոր իրականության մեջ ՀՀ-ն կարող է բավականին մեծ ծավալի ներդրումներ ներգրավել, եթե ճիշտ ներկայացնի ներդրողներին Հայաստանի միջոցով ԵՏՍ շուկա դուրս գալու առավելությունները:

Հայաստանը, լինելով թե՛ շուկայի, թե՛ տարածքի և թե՛ ՀՆԱ-ի ծավալներով բավականին փոքր երկիր, կարող է միջնորդ դեր ստանձնել ավելի մեծ՝ 170 միլիոնամոց շուկայի պահանջարկի բավարարման գործում: Ակնկալվող ներդրումների ծավալները բնականաբար դժվար է գնահատել, թեև որոշակի ներդրումային ծրագրեր արդեն հայտնի են: Մասնավորապես խոսքը գնում է ՌԴ կողմից ՀՀ մի շարք ոլորտներում պլանավորվող ներդրումների մասին, որը ներկայացված է աղյուսակ 2-ում: Ըստ աղյուսակ 2-ի տվյալների 2014-2020թթ. ՌԴ-ն Հայաստանում նախատեսում է իրականացնել ավելի քան 1.1 մլրդ դոլարի ներդրում:

Աղյուսակ 2

ՀՀ-ում ռուսական կապիտալի մասնակցությամբ ակնկալվող ներդրումները 2014-2020թթ.

<i>Նախագծի անվանումը</i>	<i>Նախագծի մասնակիցները</i>	<i>Իրականացման ժամկետները և ֆինանսավորման ծավալները</i>
Էլեկտրացանցերը աշխատունակ վիճակում պահելուն ուղղված ներդրումներ	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (ռուսական կապիտալ 100%, բաժնետեր «Ինտեր ՌԱՕ ԵՆՍ» ԲԲԸ)	Նախատեսվում է 220 մլն ԱՄՆ դոլարի ներդրում 2014-2018 թթ.
Սևան-Ֆրազդան կասկադ ԳԷՍ-ի վերանորոգում	«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ (ռուսական կապիտալ –100%, բաժնետեր «ՌուսՀիդրո» ԲԲԸ)	Նախատեսվում է 52 մլն ԱՄՆ դոլարի ներդրում 2014-2018 թթ.
Գազի տեղափոխման և բաշխման ենթակառուցվածքների կառուցում և վերանորոգում	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (ռուսական կապիտալ – 100%, բաժնետեր «Գազպրոմ» ԲԲԸ)	Նախատեսվում է 60 մլն ԱՄՆ դոլար ներդրում 2014-2019թթ.
Փայլաթիթեղի արտադրության ծավալների մեծացմանն ուղղված ներդրումներ	«Ռուսալ-Արմենալ» ՓԲԸ (ռուսական կապիտալ – 100%, բաժնետեր «Ռուսալ»)	Նախատեսվում է 20 մլն ԱՄՆ դոլար ներդրում 2013-2020թթ.
Երկու հանքահարստացման գործարանների կառուցում Սյունիքի մարզում՝ «Սուլիբդեմի աշխարհ» ՍՊԸ և «Էլվի Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	«Սադամար» ՓԲԸ (ռուսական կապիտալ – 100%, բաժնետեր «Նևա-Ռուս» ԲԲԸ)	Նախատեսվում է 300 մլն ԱՄՆ դոլար ներդրում 2013-2015թթ.
Կաուչուկի գործարանի կառուցում	Ռոսնեֆտ	Նախատեսվում է մոտ 500 մլն ԱՄՆ դոլարի ներդրում 2014-2016թթ.

Աղբյուր՝ www.ved.gov.ru/exportcountries/am/am_ru_relations/am_rus_projects/

Հայաստանի խնդիրն է ոչ միայն պատշաճ կերպով ներկայացնել ԵՏՍ տարածք դուրս գալու առավելությունները, այլ նաև արտոնյալ պայմաններով Հայաստանի տարածքով եվրոպական շուկա դուրս գալու հնարավորությունները: Սա կարող է նպաստել. 1) տնտեսական առումով մեծ կշիռ ունեցող երկրներից ներդրումների ներգրավմանը (մասնավորապես Չինաստանից, որի հետ Հայաստանը վերջին ժամանակներս սկսել է ավելի ակտիվ համագործակցել), ինչը կարող է հանգեցնել առկա տրանսպորտային խնդիրների վերանայմանը և լուծմանը, 2) առավել մեծ թվով ոլորտներում ներդրումների ներգրավմանը, 3) մեկ կամ մի քանի երկրներից ՀՀ տնտեսության կախվածության նվազմանը:

Այսպիսով, ակնհայտ է, որ գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք կարող են ինչպես խթանել, այնպես էլ արգելակել ՀՀ տնտեսության իրական հատված ներդրումների ներգրավման գործընթացներին: Չնայած այս պահին արգելակող գործոնները բավականին ծանրակշիռ են, բայց, կարծում են, որ ժամանակի ընթացքում ԵՏՍ անդամ-երկրները, հատկապես Ռուսաստանը, այդ խնդիրները կպահեն իրենց ուշադրության կենտրոնում և հետևողական կաջակցեն լուծում տալ դրանց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՏՄ ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

ԱՐՄԱՆ ԶԵՐՈԲՅԱՆ, *պ. գ. թ.*

*Մ Գ Ա Ա Մ. Բոթանյանի անվան փնտրելաագիտության
ինստիտուտի կրթական գիտաշխատող*

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ԵՏՄ շրջանակներում դեպի ՀՀ տնտեսություն ուղղվող ներդրումների հնարավորությունների վրա դրականորեն և բացասականորեն ազդող մի քանի գործոնների վերլուծությանը: Անդրադարձ է կատարվում ԵՏՄ պայմանագրի և ՀՀ ներդրումները կարգավորող օրենքի մի շարք դրույթների, որոնք դրականորեն են անդրադարձել և կարող են անդրադառնալ դեպի ՀՀ ներդրումներ ներգրավելու գործընթացների վրա, նաև ներկայացվում են այն գործոնները, որոնք կարող են բացասական անդրադարձ ունենալ ՀՀ ներդրումային միջավայրի վրա:

Բանալի բառեր. ԵՏՄ պայմանագիր, օրենսդրական դաշտ, ուղղակի ներդրումներ, ներդրումային ծրագրեր, ներդրումային միջավայր, փնտրելաական ազատության ցուցանիշներ, գործարարության ինդեքս, ռուսական կապիտալ, ռուսական ընկերություններ, հարևանների հետ փոխհարաբերություններ:

ВОЗМОЖНОСТИ ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИЙ В РЕСПУБЛИКУ АРМЕНИЯ В УСЛОВИЯХ ПРИСОЕДИНЕНИЯ К ЕАЭС

АРМАН КЕРОБЯН, *к. э. н.*

*младший научный сотрудник Института
экономики им. М. Котаяна НАН РА*

Аннотация

Статья посвящена анализу некоторых факторов, положительно и отрицательно влияющих на возможности привлечения инвестиций в экономику РА в рамках ЕАЭС. В рамках статьи акцентируются некоторые положения договора о ЕАЭС и закона, регулирующего инвестиции в РА, которые оказали положительное влияние и могут повлиять на процессы привлечения инвестиций в РА. В работе представлены также факторы, которые могут отрицательно повлиять на инвестиционный климат РА.

Ключевые слова: договор о ЕАЭС, законодательное поле, прямые инвестиции, инвестиционные программы, инвестиционный климат, показатели экономической свободы, индекс ведения бизнеса, российский капитал, российские компании, взаимоотношения с соседями.

THE POSSIBILITIES OF ATTRACTING INVESTMENTS INTO THE REPUBLIC OF ARMENIA UPON ACCESSION TO THE EURASIAN ECONOMIC UNION

ARMAN KERBYAN, *Ph.D. in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article analyzes several factors that positively and negatively affect the possibility of attracting investments into the economy of the Republic of Armenia upon its accession to the Eurasian Economic Union (EAEU). The author refers to some terms and concepts stated both in the Treaty on the Eurasian Economic Union and the Law on Foreign Investments that positively affected and would continue having positive impact on the processes of attracting investments into the Republic of Armenia. The article addresses those factors that would have negative impact on the investment climate in the Republic of Armenia as well.

Keywords: The Treaty on the EAEU, legislative framework, direct investments, investment projects, investment climate, economic freedom indicators, the ease of doing business index, Russian capital, Russian companies, relations with the bordering nations.

ЭБА БАБАЯН, к.э.н., профессор

*ведущий научный сотрудник Института
экономики им М.Котаняна НАН РА*

БЕЛЛА ГАБРИЕЛЯН, к.э.н.

*старший научный сотрудник
Института экономики им М.Котаняна НАН РА*

РОЛЬ КОНКУРЕНЦИИ В ДЕЛЕ ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ОРГАНИЗАЦИИ

Конкуренция – один из факторов, стимулирующих повышение эффективности экономики. В современных условиях требуется глубокое научное осмысление категории конкурентоспособности, существующих методов и инструментов управления.

Конкуренция является основным базовым элементом рыночной экономики. Не вызывает сомнения, что именно конкуренция заставляет субъектов любого рынка стремиться занять ведущие позиции в целях достижения лидерства, позволяющего получать большую прибыль, которая в свою очередь составляет цель любого бизнеса. В традиционном смысле конкуренцию понимают как соперничество, но каждый из исследовавших это явление дает свое понимание этого рыночного явления. Одни считают конкуренцию особой ситуацией на рынке, другие придают ей только функции обмена.

Конкуренция - не новое явление в экономике. Достаточно широко ее исследовали и дореволюционные отечественные экономисты, считавшие ее необходимым структурным элементом любого рынка. Но в советское время о конкуренции умалчивали, считая ее признаком капитализма, поэтому при социализме особого места ей не уделяли. В то время отрицалась частная собственность, а значит и конкуренция. Но в настоящее время все эти рассуждения не получили подтверждения. Конкуренция существует и с ней надо считаться.

В рамках этой проблемы проводятся многочисленные исследования с целью выявления стандарта, именуемого конкурентоспособность. Однако методология изучения конкурентоспособности окончательно не сложилась, что делает необходимым обоснование конкурентоспособности, как интегрированной экономической категории и определение специфических подходов к формированию конкурентоспособности различных объектов и инструментов, позволяющих реализовать задуманное на практике. В настоящее время термин «конкурентоспособность» стал одним из наиболее употребляемых в научной литературе. Политики, экономисты, представители бизнеса, журналисты также ее используют, когда речь идет о необходимости интеграции экономики страны в систему мирового хозяйства. Среди зарубежных авторов, исследующих различные стороны конкурентоспособности, можно отметить таких ученых, как И. Ансофф, П. Баласса, А. Маршалл, М. Портер Д. Риккардо, А. Смит, Й. Шумпетер, Ф. Хайек и другие. В современной экономической литературе конкурентоспособность связывается с выигрышем, надежностью, качеством, компетентностью и эффективностью организации. Существует множество трактовок этого понятия. В частности, конкурентоспособность можно определить как «комплекс управленческих и маркетинговых действий, используемых для эффективного достижения целей и задач организации, позволяющих ему занять прочные позиции в борьбе с конкурентами».

Конкурентоспособность – многогранная категория в экономике, которая рассматривается на определенных уровнях: конкурентоспособность товара, производителя товара (товаро-производителя), организации, отраслей и даже стран. Среди данных уровней присутствует довольно тесная внутренняя и внешняя взаимозависимость.

Конкурентоспособность - это обусловленные экономическими, политическими и социа-

льными факторами положения страны или производителя товара на внешнем и внутреннем рынках. В открытой экономической среде ее можно определить и как умение страны противостоять международной конкуренции на рынке своей страны, а также на рынках других стран.

Конкурентоспособность - способность определённого объекта или субъекта превзойти конкурентов в заданных условиях.

Под конкурентоспособностью предприятия *организации* подразумевают возможность выгодной, полезной хозяйственной деятельности и ее прибыльного использования в условиях рынка конкуренции.

Обычно конкурентоспособным можно назвать предприятие, которое долгое время может быть прибыльным в среде открытой экономики.

Традиционные приоритеты прошлого века в мировой экономике – так называемые преимущества, в настоящее время перестали быть эффективными. Мировая тенденция глобализации расставила иные приоритеты – это конкурентные преимущества.

Мир с одной стороны стремится к универсальности, а с другой стороны к инновационности. Это, так называемое противоречие, возможно разрешить с помощью конкуренции. Именно наличие своеобразных, называемых конкурентными преимуществами, отличий и позволяет в нашем сообществе любому предприятию достичь эффективной деятельности, получая прибыль и, следовательно, сохранить интерес к развитию.

Главная цель экономических субъектов – это достижение прибыли за счет удовлетворения выявленной потребности. Цель диктует основной способ действий: обойти механизм конкуренции. Этот способ действий предельно прост и вместе с тем удивительно сложен. Предприятие должно реализовать стратегический алгоритм предпринимательской деятельности, которая состоит в том, что: сделал первым, сделал лучше, значит «обошел» конкурентов и получил монопольную прибыль. Если объем прибыли предприятия начинает снижаться, то этот факт может свидетельствовать о возникновении конкуренции. В этом случае, как это советовал еще Федцов В.Г., следует изымать экономические ресурсы из данного дела и переходить к другому занятию¹.

Государство, в свою очередь, заинтересовано в правовом существовании конкуренции, поэтому достаточно жестко регулирует проявление монополизма и недобросовестной конкуренции. В этих целях принято достаточно законов и постановлений, регулирующих конкурентную среду в стране.

Основопологающими, исходными мерами, направленными на образование так называемого механизма добросовестного соперничества, является создание равноценных условий для экономического соперничества вообще, что осуществляется посредством законов и иных нормативных актов, закладывающих правовую основу предпринимательства и конкуренции².

Как доказательство того, что конкуренция получила свой легитивный статус, в настоящее время при определении ключевого термина «конкуренция» родовое понятие «сопоставительность» заменено словом «сопериничество», исключен сложно определяемый на практике критерий эффективности самостоятельных действий хозяйствующих субъектов, ограничивающих возможность одностороннего воздействия на общие условия обращения товаров³.

Конкуренция свойственна как мировому рынку, так и рынку отдельного государства, и отраслевым рынкам стран, и каждому субъекту определенной отрасли, и потому считаем необходимым рассмотрение такого качества конкурентности, как конкурентоспособность организации.

¹ Федцов В.Г. Предпринимательство – сфера сервиса. -М.: «Дашков и К^о», 2010. -210с.

² Тикин В.С. О критерии недобросовестной конкуренции. «Право и экономика», 2009, N 5.

³ Шайхутдинов Е.М., Комментарий закона «О защите конкуренции». Закон, 2009, N 4. Тотьев К.Ю., Конкурентное право (правовое регулирование конкуренции): Учеб. -М.: «Юристъ», 2010. -295с.

Следовательно, необходимо рассмотреть такое качество конкурентности как конкурентоспособность организации. Конкурентоспособность организации – это наличие таких факторов, которые делают эту организацию способной выстоять в совершенно непредсказуемых ситуациях внешней среды¹.

Организация, считающаяся конкурентоспособной, обладает, возможно, целым набором определенных конкурентных преимуществ, а может и одним, которым успешно пользуется и постоянно его развивает.

Конкурентные преимущества могут проявляться через разные критерии. Это могут быть такие преимущества, которые отличаются качеством, инновационностью, технологией, персоналом. Во всяком случае – это тот потенциал организации, что делает его успешным, защищенным в постоянно меняющейся конкурентной среде, благодаря чему организация имеет возможность производить свою продукцию с более низкими затратами, чем на основном рынке, с возможно удачным использованием сбалансированных показателей, и возможно эффективно варьирует портфельными стратегиями. Все это и делает организацию конкурентоспособной. Но каждая организация в свою очередь производит определенный продукт или услугу. Поэтому здесь проявляется прямая зависимость между конкурентоспособностью самой организации и конкурентоспособностью своего товара. Чем выше конкурентоспособность товара, тем выше конкурентоспособность организации. Естественно, наблюдается обратное, если товар станет терять свои конкурентные преимущества.

Конкурентные преимущества товара могут выражаться в цене, качестве, продвижении. Поэтому такие маркетинговые элементы как ценообразование, продвижение, сбыт всегда должны быть под строгим контролем руководства любой организации. От качества анализа оценки этих процессов в значительной степени зависят перспективы развития организации.

Таким образом, позиция организации, имеющей возможность производить и реализовывать свой товар дешевле, чем конкуренты и является показателем конкурентоспособности и самого товара, и самой организации. Для каждой организации важным являются определения ключевых факторов успеха (КФУ), которые являются главными определителями для формирования стратегии-конкурентоспособности².

Назовем основные виды конкурентных (ключевых) факторов успеха:

- инновационность технологий (инновации в наше время – это тот резерв, который можно использовать практически в каждой отрасли. В каждой сфере экономики, сегодня наука и техника использует достижения взаимнообразно, поэтому результаты не заставляют себя ждать, и организации должны быть готовы к применению этих новшеств);
- низкая затратность производства (опыт Японии и США в применении многообразных способов снижения себестоимости, затрат – это и сбалансированность показателей, и расчеты от прибыли, бюджетирование затрат и многое другое);
- развитая система продвижения (маркетинговые стратегии с каждым годом совершенствуются, создаются целые отделы профессиональных специалистов, их потенциал огромен, его использование на предприятиях всегда окупится сторицей);
- стратегический маркетинг (эти направления полностью основываются на тщательном анализе имеющихся ситуаций; методах математических моделей, экспертных методов, сочетание которых и даст реальную оценку для прогноза);
- профессионализм персонала (кадровый потенциал – это базовый резерв организации, эффективная кадровая политика может принести организации баснословные привилегии, которые должны подкрепляться оптимальной социальной политикой);
- современное информационное обеспечение (в наше время важность информации сомнений уже ни у кого не вызывает. Чем современнее информационное обеспечение, чем

¹ Тотьев К.Ю. Конкурентное право (правовое регулирование конкуренции): Учеб. -М.: Юристъ, 2010. -295с.

² Володькина М.В. Стратегический менеджмент. -Киев.: "Знания". 2008. стр. 104.

выше профессиональный в этом отношении уровень персонала, тем выше и производительность, качество и скорость изменения, адаптации организации ко всем неожиданным изменениям рынка;

- рейтинг, имидж, бренд, марка и многое другое.

Рейтинг способен как поднять уровень конкурентоспособности, так и снизить его, поэтому надо очень жестко контролировать этот критерий.

Конкурентоспособность предприятия проявляется через конкурентоспособность продукции, так как сообщает ей определенные потребительские свойства.

Нужно отметить, что конкурентоспособность организации не ограничивается теми факторами, которые были перечислены выше. Конкурентоспособность организации проявляется и в возможности захвата большей доли рынка. Но это уже вытекает из наличия перечисленных выше конкурентных преимуществ.

Следует отметить, что основные типы конкурентных факторов успеха следующие: факторы, связанные с технологией, с производством, с распределением, с маркетингом, с квалификацией, с возможностями организации.

Итак, конкурентоспособность организации является залогом успешной деятельности. Это важный фактор для самой организации, партнеров по бизнесу, государства, кредитных организаций, и, конечно же, для самих конкурентов.

В развитии конкуренции заинтересовано государство - доход устойчивых и платежеспособных предприятий является основным источником наполнения государственного бюджета.

К тому же, кредитные организации, в первую очередь, обслуживают стабильных и доходных участников рынка.

Престиж и имидж конкурентного предприятия позволяет формировать профессиональный персонал, который лично заинтересован в процветании организации.

Таким образом, конкуренция, как критерий надежности предприятия и как фактор его перспективного развития - важный элемент рыночной экономики.

На основании всего вышеизложенного можно заключить следующее: а именно, что конкуренцию нужно рассматривать двояко - как ситуацию и как процесс.

Как ситуация - конкуренция характеризуется наличием на рынке множества производителей (потребителей), которые имеют примерно равные условия для производства, реализации (потребления) товаров, работ и услуг.

Как процесс-конкуренция характеризуется противостоянием, состязательностью, столкновением интересов предпринимателей в процессе деятельности по производству и продаже товаров, выполнению работ, оказанию услуг, направленных на систематическое извлечение и осуществление основной цели-достижение прибыли.

ՄՐՅԱԿՅՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԷԲԱ ԲԱԲԱՅԱՆ, *ա.գ.թ., պրոֆեսոր*

*Մ Գ Ա Ա Մ. Քոտանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

ԲԵԼԼԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ, *պ.գ.թ., դոցենտ*

*Մ Գ Ա Ա Մ. Քոտանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Համառոտագիր

Մրցակցությունը՝ շուկայական տնտեսության հիմնական տարրն է: Կասկած չի հարուցում այն փաստը, որ հենց մրցակցությունն է պարտադրում գրավել առաջատար դիրքեր՝ առավել շահույթ ստանալու նպատակով, որը ցանկացած բիզնեսի հիմնական նպատակն է:

Մրցակցունակությունը՝ որոշակի օբյեկտի և սուբյեկտի հնարավորությունն է տրված պայմաններում գերազանցելու մրցակիցներին: Տնտեսական սուբյեկտների գլխավոր նպատակը շահույթի ստացումն է շուկայում առաջացած պահանջարկի բավարարման հաշվին: Մրցակցությունը բնորոշ է ինչպես համաշխարհային, այնպես էլ առանձին երկրների, ոլորտային և առանձին ոլորտի սուբյեկտներին:

Բանալի բառեր. մրցակցություն, մրցունակություն, առաջնորդություն, բարձր շահույթ, մրցակից, տնտեսական սուբյեկտ, համաշխարհային շուկա, ձյուդային շուկա

РОЛЬ КОНКУРЕНЦИИ В ДЕЛЕ ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ОРГАНИЗАЦИИ

ЭБА БАБАЯН, *к.э.н., профессор*

*ведущий научный сотрудник Института
экономики им М.Котаяна НАН РА*

БЕЛЛА ГАБРИЕЛЯН, *к.э.н., доцент*

*старший научный сотрудник Института
экономики им М.Котаяна НАН РА*

Аннотация

Конкуренция является основным базовым элементом рыночной экономики. Не вызывает сомнения, что именно конкуренция заставляет субъектов любого рынка стремиться занять ведущие позиции в целях достижения лидерства, позволяющего получать большую прибыль, которая в свою очередь составляет цель любого бизнеса.

Конкурентоспособность - способность определённого объекта или субъекта превзойти конкурентов в заданных условиях. Главная цель экономических субъектов – это достижение прибыли за счет удовлетворения выявленной потребности. Конкуренция свойственна как мировому рынку, так и рынку отдельного государства, и отраслевым рынкам стран, и каждому субъекту определенной отрасли.

Ключевые слова: конкуренция, конкурентоспособность, лидерство, большая прибыль, соперничество, экономический субъект, мировой рынок, отраслевой рынок.

THE ROLE OF COMPETITION IN IMPROVING THE COMPETITIVENESS OF ENTERPRISES

EBA BABAYAN, *Candidate of Sciences (Geography), Professor*
Leading Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

BELA GABRIELYAN, *Candidate of Sciences (Economics),*
Associate Professor
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Competition is the main element of a market economy. Without doubt, a competition forces companies to increase market share to make higher profits, which is the main objective of any business is.

Competitiveness is the opportunity of any entity to have advantages over competitors under the given circumstances. The main objective of legal entities in a given market is to make a profit by meeting the demand in a given market. Competitiveness refers to the global market, a single nation, sectors of economy and individual companies.

Keywords: Competition, competitiveness, leadership, higher profit, competitor, legal entity, global market, industry market.

ЭБА БАБАЯН, к.г.н., профессор

ведущий научный сотрудник Института
экономики им М.Котаняна НАН РА

НЕКОТОРЫЕ НАПРАВЛЕНИЯ РЕШЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКИХ ПРОБЛЕМ В РА

Исторические судьбы цивилизации самым непосредственным образом зависели от того, как развивалось взаимодействие людей с природой. Современный период человеческой деятельности характеризуется увеличением использования природных ресурсов. Это может привести к появлению в природе необратимых процессов, в результате которых окружающая среда станет непригодной для жизни. И это заставляет уже сейчас задумываться о состоянии биосферы в ближайшем будущем.

Главной движущей силой процессов взаимодействия человека и природы является общество. Обмен же веществ между обществом и природой происходит в процессе производства и развивается в силу того, что возникают внутренние противоречия, основное из которых – противоречие между безграничным стремлением в развитии производства и ограниченностью природных ресурсов¹.

Развитие человечества невозможно повернуть вспять, и человек уже не вернется к копыто и топору. Но сейчас, осознав экологическую опасность, современное общество поставлено в условия, когда необходимо изменить модель потребления. Изменение модели потребления является одним из направлений решения экологических проблем. Суть его состоит в том, что следует наращивать производственные мощности не за счет увеличения ресурсов, а за счет рационального их использования².

Осознание необходимости коренного изменения экологических воззрений в направлении учета экологического фактора пришло только в последнее время. Такое осознание во многом обусловлено глубокой дестабилизацией состояния окружающей среды в результате гигантского развития производительных сил, роста населения, что привело к качественным изменениям в отношениях природы и общества, и ограниченному росту нагрузки на экологические системы³.

Территория Армении богата разнообразными ресурсами, среди которых определенное место занимают гидроминеральные ресурсы, в частности, минеральные воды. Будучи горной страной с территорией менее 30тыс.км² Армения располагает 800 источниками минеральных вод, часть из которых на земную поверхность выходят самотеком, а другая часть посредством буровых скважин.

В рассматриваемом варианте объем промышленного производства достигнет 943,1 трлн. руб. к 2020г. При этом удельный вес добавленной стоимости по промышленности в целом составит 41,1%. Согласно Программе развития промышленного комплекса Республики Беларусь до 2020г., общий объем инвестиций за период 2012-2020гг. составит 872,8 трлн. руб. Программой предусмотрены мероприятия структурного характера, позволяющие модернизировать не только предприятия, но и производственные отношения и используемые технологии. В то же время общий анализ темпов роста объемов производства и достигнутого уровня финансирования производственного процесса позволяют рассматривать необходимость вложения значительно меньшего объема средств. Если, согласно Программе, требуемый объем инвестиций увеличится в 11,8 раз по сравнению с 2012г., то для изменения структуры промышленного производства страны с учетом выполнения программных показателей необходимо увеличить объем инвестиций только в 3,8 раза (таблица 3).

Таблица 3

Оценка требуемого объема инвестиций для достижения прогнозных показателей промышленности РБ²

<i>Сфера производства</i>	<i>Горнодобывающая промышленность</i>	<i>Обрабатывающая промышленность</i>	<i>В целом по промышленности</i>
Требуемый объем инвестиций в 2020 г. для достижения уровня показателя, млрд руб.			
• роста добавленной стоимости	10 444,4	93 319,7	103 182,1
• снижения материалоемкости	12 969,4	105 561,6	116 980,5
Темп роста инвестиций для достижения уровня показателя, раз			
• роста добавленной стоимости	3,6	3,3	3,3
• снижения материалоемкости	4,4	3,7	3,8

В результате выполнения Программы развития промышленного комплекса в стране

¹ Там же, стр. 22-23.

² Концепция Программы развития промышленного комплекса Республики Беларусь на период до 2020 г. Минск, 2012, стр. 21-22.

будут сформированы новые предприятия и выполнены структурные преобразования для модернизации промышленности.

Начиная с 1990гг. в странах бывшего СССР институциональная, промышленная или структурная адаптация экономики к рыночным условиям происходила в рамках не управляемых процессов, а хаотичного распада. По этой причине сформированная в результате осуществленных процессов структура экономики оказалась крайне уязвимой по отношению к внешним и внутренним ценовым и неценовым колебаниям. Мировой финансово-экономический кризис 2008-2009 гг. еще раз выявил и подчеркнул эти реалии. Неожиданный глубокий спад, последовавший за длительным экономическим ростом, бюджетный кризис, ухудшение других макроэкономических параметров заставляют пересмотреть, казалось бы, считающиеся неоспоримой истиной, подходы к экономической политике.

В условиях посткризисных реалий становится очевидным, что свободная игра рыночных сил не в состоянии обеспечить долгосрочную структурно-технологическую модернизацию экономики и формирование на этой основе конкурентоспособной инфраструктуры. Исходя из этого, правительства многих стран, осуществляющих преобразования, в своей политике стали отдавать предпочтение определенным селективным инструментам стимулирования экономического роста или их определенному набору.

Правительство Республики Армения с этой точки зрения не является исключением. Оно разработало и ввело в действие концепцию «Стратегия экспортоориентированной промышленной политики Республики Армения»¹. Согласно документу, в основе проводимой промышленной политики лежит расширение экспортного сегмента экономики посредством поддержки развития перспективных отраслей, имеющих экспортный потенциал. «Промышленная политика РА, нацеленная на экспорт, представляет собой совокупность сбалансированных и поэтапных мероприятий, направленных на повышение международной конкурентоспособности отраслей, имеющих потенциал развития, с целью роста и диверсификации экспорта. В концепции акцент поставлен на необходимость повышения уровня конкурентоспособности экономики посредством промышленной политики, расширения экспортного сегмента экономики с помощью поддержки развития перспективных отраслей, имеющих экспортный потенциал»².

По сути, промышленная политика – это отраслевая, структурная политика с целью оказания государственной поддержки развитию определенных отраслей, компаний или их групп (кластеров), которые являются основными элементами Национальной инновационной системы. Тем не менее, основными барьерами формирования национальной инновационной системы являются не рыночные, а системные провалы. Они в первую очередь связаны с недостаточным уровнем развития сотрудничества между участниками экономической системы, отсутствием связей (сотрудничества) особенно между фундаментальной наукой и бизнес-сегментом экономики, слабостью функционирующих институтов в системе трансфера технологий, неэффективным функционированием информационной системы.

8 ноября 2012 года правительство Армении приняло решение о переименовании Фонда развития Гюмри в Фонд развития промышленности, расширив спектр задач и функций новой структуры. Фонд станет главным оператором при осуществлении мероприятий по программам государственного содействия, предусмотренным стратегией экспортоориентированной промышленной политики. Его цель – осуществление и координация шагов, направленных на реализацию инновационных программ и развитие промышленности, помощь в повышении конкурентоспособности промышленных предприятий, стимулирование диалога и сотрудничества между государством и частным сектором³.

¹ «Стратегия экспорто-ориентированной промышленной политики Республики Армения». Протокольное решение правительства РА № 49 от 15 декабря 2011 .

² Там же, стр.2.

³ http://arka.am/ru/news/economy/fond_razvitiya_promyshlennosti_sozdan_v_armenii/#sthash.NoXsGAIY.dpuf

Динамика показателей инноваций и уровня технологического развития в Республике Армения свидетельствуют об ориентированности промышленной политики к технологической модернизации экономической системы. В частности, за 2006-2013гг. серьезно улучшились показатели состояния развития промышленных кластеров (0,5 пункта), уровня технологического развития производственных процессов (0,4 пункта), степени маркетинга (0,8 пункта) (таблица 4).

Любая промышленная политика при решении вышеуказанных задач предполагает строго определенное избирательное вмешательство в экономику с целью обеспечения наиболее конкурентоспособной структуры, а, следовательно, и наиболее эффективных перспектив экономического роста. Предполагается, что промышленная политика может сделать то, чего невозможно достичь в условиях свободной игры рыночных сил, а в еще более узком смысле, рыночного равновесия.

Таблица 4

Динамика показателей инноваций и уровня технологического развития в Республике Армения в 2006-2013гг.¹

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Инновации и уровень технологического развития	3,2	3,1	3,0	3,0	3,0	3,1	3,3	3,4
<i>А. Уровень технологического развития бизнеса</i>	3,4	3,3	3,3	3,3	3,3	3,4	3,7	3,8
Качество отечественных поставщиков	3,5	3,5	3,8	3,8	3,8	3,9	4,1	4,2
Состояние развития кластеров	2,9	2,7	2,4	2,6	2,6	2,9	3,6	3,6
Характер конкурентного преимущества	3,5	3,5	3,6	3,7	3,9	3,6	3,7	3,8
Ширина цепочек формирования стоимости	3,6	3,3	3,1	3,0	2,9	2,9	3,4	3,6
Уровень технологического развития производственных процессов	3,1	3,0	2,9	2,9	3,1	3,3	3,5	3,5
Степень маркетинга	3,0	2,9	3,0	3,1	3,1	3,3	3,5	3,8
<i>В. Инновации</i>	3,0	2,9	2,8	2,7	2,6	2,7	2,9	3,0
Инновационный потенциал	3,2	3,0	3,1	3,0	3,0	3,1	3,2	3,4
Качество научно-исследовательских институтов	3,7	3,5	3,4	3,2	3,0	3,0	3,0	3,1
Расходы компаний на НИОКР	2,6	2,6	2,7	2,5	2,4	2,6	2,7	2,8
Взаимодействие университетов и производства в области НИОКР	2,6	2,5	2,5	2,8	2,8	2,7	2,9	3,2

В Армении развиты не только промышленная и сельскохозяйственная отрасли, но имеется значительный задел в научной сфере. В связи с этим эффективное использование потенциала белорусских и армянских предприятий возможно на основе двухсторонних соглашений. Республика Беларусь имеет существенный опыт реализации подобных проектов. Среди них особого внимания заслуживает опыт реализации белорусско-китайских договоренностей в области электронных технологий, согласно которым, например, в Китае сформировано подразделение белорусских предприятий по выполнению отдельных функций маркетинга и сбытовой стратегии, в частности, внедрению технологий радиочастотной идентификации. Это касается также и предприятий общего машиностроения. Показательным примером является создание филиала ОАО «МАЗ» в Венесуэле, функционирование которого на внутреннем рынке Венесуэлы фактически является экспортом отечественных технологических решений. По нашему мнению, аналогичный подход может быть использован и в двухсторонних отношениях с Республикой Армения. Так, в Армении для белорусской

¹ Платформа данных ВЭФ по индексу глобальной конкурентоспособности. Электронный ресурс по адресу: www.weforum.org/issues/competitiveness-0/gci2012-data-platform/

продукции потенциальными рынками сбыта могут быть рынки сельхозмашиностроения.

Вхождение на внутренний рынок другой страны предполагает проведение мероприятий по формированию спроса и стимулированию сбыта продукции. В то же время целесообразным является привлечение армянских предприятий к реализации этого проекта. В данном случае основу сотрудничества могут составлять совместные исследования и разработки новых технологий с учетом спроса на внутреннем рынке Армении. Экономика Республики Армения является транзитивной и, как следствие этого, ее структура и используемые факторы производства перманентно изменяются как в количественном, так и в качественном соотношении. Сотрудничество непосредственно с армянскими предприятиями позволит выявить спрос на внутреннем рынке Армении на отечественные технологии и реализовать маркетинговый подход, предполагающий определение отраслей, в которых существует наибольшая необходимость в обновлении производственной базы и технологий. Участие белорусских предприятий и организаций в данном случае обусловлено научным потенциалом, тогда как непосредственным внедрением на внутренний рынок Армении, т.е. проведением мероприятий по адаптации и фактическому применению технологий, будет заниматься армянская сторона.

Формирование спроса на белорусские технологии на рынке Армении возможно за счет селективного применения двухсторонних соглашений между профильными предприятиями. В качестве иных подходов целесообразно рассматривать создание на территории Армении венчурных предприятий с участием армянского капитала, которые будут привлекать технологии Республики Беларусь в экономику Армении.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՐՈՒՍԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՊԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

ԱՏՈՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ, *դ.գ.թ., դոցենտ*
ՆՊՏՏ ՏԿ և ՄՏՏ ֆակուլտետի դեկան

ԱԶԱ ՄԻՀՐԱՆՅԱՆ, *դ.գ.դ., պրոֆեսոր*
*ԱՊՏ երկրների ինտերպրուսի էկոնոմիկայի
բաժնի վարիչ (ք.Մոսկվա)*

ԱԼԵՔՍԵՅ ՍՎԵՐԼՈՎ, *դ.գ.թ., դոցենտ*
ԲՊՏՏ(Մինսկ)

Համառոտագիր

Հոդվածում քննարկվել են Հայաստանում և Բելառուսում վարվող արդյունաբերական քաղաքականության հիմնախնդիրները եվրասիական տնտեսական միության ձևավորած կանոնների համատեքստում: Դիտարկվել են երկու երկրներում վարվող արդյունաբերական քաղաքականության ազդեցությունները տնտեսության ճյուղային կառուցվածքի, զբաղվածության, տեխնոլոգիական համակարգերի փոփոխությունների վրա: Հիմնավորվել է ԵԱՏՄ շրջանակներում անդամ-երկրների միջև արդյունաբերական քաղաքականությունների կոորդինացման անհրաժեշտությունը: Մասնավորապես, քննարկվել են արդյունաբերական քաղաքականության ոլորտում իրավաօրենսդրական, ինստիտուցիոնալ, հարկային, մաքսային և դրամավարկային լծակների ու գործիքակազմերի համարժեք կիրառման հնարավորությունները:

Բանալի բառեր. արդյունաբերական քաղաքականություն, տնտեսական կառուցվածք, նոր տեխնոլոգիաներ, ավելացված արժեք, նորարարական համակարգ:

**ПРОМЫШЛЕННАЯ ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И РЕСПУБЛИКИ БЕЛАРУСЬ В РАМКАХ
ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА**

АТОМ МАРГАРЯН, *к.э.н., доцент*
декан факультета РЭ и МЭО АГЭУ(г.Ереван)

АЗА МИГРАНЯН, *д.э.н., профессор*
завотделом экономики Института стран СНГ(г.Москва)

АЛЕКСЕЙ СВЕРЛОВ, *к.э.н., доцент*
БГЭУ (г.Минск)

Аннотация

В статье обсуждаются проблемы промышленной политики, проводимой в Армении и Беларусь в рамках правил Евразийского экономического союза. Рассмотрены воздействия промышленной политики обеих республик на структуру экономики, занятости, на изменения технологических систем. Обоснована необходимость координации в рамках ЕАЭС национальных промышленных политик. В частности, рассмотрены вопросы адекватного применения законодательных, институциональных, финансовых, таможенных и денежно-кредитных рычагов и инструментов промышленной политики в рамках ЕАЭС.

Ключевые слова: промышленная политика, структура экономики, новые технологии, добавленная стоимость, инновационная система.

**INDUSTRIAL POLICIES OF THE REPUBLIC OF ARMENIA AND BELARUS
IN THE FRAMEWORK OF THE EURASIAN ECONOMIC UNION**

ATOM MARGARYAN, *Candidate of Sciences (Economics)*
*Dean, Associate Professor, Department of Economic Regulation
and International Economic Relations
Armenian State University of Economics*

AZA MIHRANYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
*Head, Economics Department
Institute of CIS countries, Russian Academy of Sciences (Moscow)*

ALEKSEY SVERLOV, *Candidate of Sciences (Economics)*
State Economics University of Belarus (Minsk)

Abstract

The article discusses the issues of industrial policies implemented both in Armenia and Belarus in the context of the rules and regulations of the Eurasian Economic Union (EAEU). The authors study the impact of industrial policies implemented by both nations on the changes in the structure of economy, employment, and technology systems. The article justifies the need for coordinating industrial policies of the EAEU member-states. Namely, the authors discuss the possibility of properly utilizing the respective legislative, institutional, fiscal, customs and monetary policy toolkits and mechanisms.

Keywords: Industrial policy, structure of economy, new technology, value-added, innovation system.

APPLICATION OF THEORIES OF COMPETITIVE AND COMPARATIVE ADVANTAGES IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN

Ricardo's Theory of Comparative Advantage and Porter's Theory of Competitive Advantage have not lost their relevance today, as well.

Among the most significant developments of this century are the economic integration, the changes in the physical quantity of and quality of exported goods and services, and economic growth of countries. In low-income countries, openness to international trade is indispensable for a rapid economic growth. Indeed, only a few developing nations have grown rapidly over the time without both increasing exports and imports at the same time, and virtually all developing countries that have grown rapidly have done so by implementing open trade policies or reducing trade protection. India and China are the best examples of the last decade that started with relatively closed trade policy regimes in the 1980s but subsequently have started reporting accelerating growth, while making national economies more open.

Since ancient times, international trade has allowed consumers to purchase products not produced domestically. The explanation is provided by the famous English economist of the 18th century, David Ricardo on Portuguese wine being traded for English cloth. "*Countries did not need to grow grapes to enjoy wine, he noted. Thanks to trade, they could "transform" the cloth they produced into wine*"¹.


In recent decades, one of the main features of the world economy has been the excess of supply over the demand of goods and services. The consumers of foreign goods and patterns of the global demand have played a dominant and determining role in booming international trade. It seems that this process will continue in the future. In case of developing countries (like Iran is) that are currently in the industrialization stage of economic development, the potential competitive advantage originates from the inherent competitive advantage. The trading sector is affected by industrial raw materials factor (such as oil, natural gas and gas condensate are) considered the most significant one in creating the inherent competitive advantage. For Iran, the income received by relying on inherent and natural competitive advantage compensates the foreign trade imbalance (foreign currency to import).

It is worth noting that insufficient international demand, and depletion of oil reserves as well will limit our country's capacity to import in the years to come and this issue threatens the sustainable economic growth. Hence, the country's future development depends on the upgrade of the quality and changes in the non-oil exports. In order to achieve that goal it would require knowledge of the effective factors for competitive advantage, and initiation and implementation of specific policies to upgrade acquired competitive advantage to promote knowledge-based activities, and to create sources of sustainable competitive advantage (knowledge-based). Figure 1 presents the changes in foreign trade of Iran.

The current state of Iran's competitive or comparative advantage and its expected effects on the economy makes fundamental changes in the economic structure and reforms inevitable.

Doing a regional research can identify problems and dilemmas of competitive advantage for non-oil exports. Designing general policies for this sector are discussed based on the results of the research that would be a logical measure to take.

¹ https://www.wto.org/english/res_e/booksp_e/stat_tradepat_globvalchains_e.pdf



Iran's export to Armenia exceeds the exports to African countries. Armenia has a population of three million people and more than 9 million Armenians live outside the country. In 2013, the gross domestic product (GDP) of Armenia was 10.4 billion USD², 21.9% of the gross value added comprises agriculture³, 31.5%⁴ and 46.6%⁵ respectively account for industry and services. Among important export industries are food processing and manufacturing of electrical products.

Armenia lacks own fuel and it is dependent on Russia for supplying gas and oil⁶.

Armenia has an investment capacity. There are many unfinished and closed factories in this country. Armenia was one of the industrial republics of the former Soviet Union. Currently, most industrial plants operate at a fraction of their capacity or are idle.

Armenia is rich in mineral resources such as copper, molybdenum, aluminum, gold and construction and decoration stones, and variety of mineral water springs.

Armenia is a mountainous country and has a dry climate. There is limited potential for Agricultural growth in this country. Armenia's total arable land accounts for 20 percent of its land. Given the climate of Armenia, the country's main agricultural activities are concentrated on horticulture, fruit production, vegetables, forage. Moreover, extensive activities in flower production for export are in progress⁷.

Vast pasture has made good possibilities for raising livestock, so that last year about 10 million USD live sheep were exported from this country to Iran⁸.

According to the World Bank statistics, the country's net foreign direct investment was about 653.2 million dollars in 2011, 488.8 million dollars in 2012, and 370.2 million dollars in the previous year⁹. One of the most important factors in improving the economic situation in Armenia is the growth of foreign investment in the country. Establishment of foreign banks, bank payment to investors and commercial activists, perennial tax exemption for investment in productive sectors are other effective factors in such progress.

Another important aspect of the economic and investment situation in Armenia is the organization of tax system reforms in tax and customs laws and combating corruption.

Armenia's tariff rates are zero and 10% before its membership in EAEU. A 20% value-added tax (VAT) is imposed on all imported goods. Among the most important imported items from Armenia are gas, diamonds, crude oil, household appliances, automobiles, vehicles, wheat, electronic devices, food, electrical appliances, tobacco leaf, and drugs. Among the most important imported items from Armenia are gas, diamonds, crude oil, household appliances, automobiles, vehicles, wheat, electronic devices, food, electrical appliances, tobacco leaf, and drugs. Among the most

¹ <http://www.amar.org.ir/Portals/1/yearbook/1391/10.pdf>

² <http://data.worldbank.org/country/armenia>

³ <http://data.worldbank.org/indicator/NV.AGR.TOTL.ZS>

⁴ <http://data.worldbank.org/indicator/NV.IND.TOTL.ZS>

⁵ <http://data.worldbank.org/indicator/NV.SRV.TETC.ZS>

⁶ http://www.noravank.am/upload/pdf/340_en.pdf

⁷ http://www.agricistrade.eu/wp-content/uploads/2015/05/Agricistrade_Armenia.pdf

⁸ http://www.agricistrade.eu/wp-content/uploads/2015/05/Agricistrade_Armenia.pdf

⁹ <http://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.CD.WD>

important items exported to Armenia are copper and copper ore, aluminum, iron alloys, electrical power, molybdenum, live animals, cut diamonds, fruit and vegetable, gold and alcohol¹.

Among the most important exported items from Iran to Armenia are Gas, ceramic tiles, oil, plastic items, tar, alloy steels, sulfur, glass, fertilizers, metal tubes, detergents, metal structures, polyethylene polymers, eggs, and day old chicks, polymers of vinyl chloride, fruit and vegetable, vegetable and animal oils, and masonry. The major products that are imported to Iran from Armenia are: live animals, machinery, electronic software, copper scrap, electric power, aluminum scrap, circuit boards, metal scrap, paper, cardboard, battery waste and medical equipment².

Good diplomatic relations between two countries, shared border are some positive points regarding economic relations of two countries. Ease of travel for commercial and marketing staff, manufactured goods with the advantages and potential of being exported, and Aras Free Trade Industrial zone near the border are among other advantages of cross-border trade. Iranian Merchants Union as well as Chamber of Commerce in Armenia are among other positive signs.

Among difficulties that merchants face is the poor competitiveness of most Iranian goods with regard to quality and price.

*"As highlighted by the Armenian ministry of foreign affairs, the two countries have established close ties in all spheres and promoted "effective cooperation" in the fields of energy, sport, nature protection, health care, agriculture, education, science, culture as well as in the interprovincial relations"*³.

*"In 2009, Iran and Armenia have signed 8 memorandums of understanding concerning various joint economic projects, including the construction of a hydropower station on the Arax River, a new trans-border power line and an oil pipeline"*⁴. Iran remains one of Armenia's biggest economic partners, although the latter has diversified economic opportunities after its accession to the WTO on February 5, 2003.

We conducted a survey to find out the competitive advantages of Iran. To study and determine the factors affecting the competitive advantages of trade with Armenia, the views of all legal entities who were engaged in import-export business with Armenia were considered.

Therefore, workers and experts (totally 250 respondents) engaged in the exporting and importing business between Iran and Armenia were interviewed using a questionnaire that was designed for this purpose. Questionnaires were completed via phone calls. Finally, collected data were analyzed and the final report was prepared and presented.

The findings of our survey are the followings:

- The most important factor for differentiation segment is "the role of customer satisfaction in achieving competitive advantage by Iranian companies operating in Armenia" and the least important factor in this segment was "Changing management to achieve a competitive advantage by companies operating in Armenia," which means that customer satisfaction is the most important factor in this segment.
- The most important factor in cost leadership segment was "the role of the quality of goods and services to achieve competitive advantage by companies operating in Armenia" and the least important factor was "lower cost of production to achieve competitive advantage by companies operating in Armenia," which means that that quality of goods is more important than price.
- The most important factor in focus sector was "existence of an industrial town near the border" and the least important factor was "impact of changes exchange rates on terms of trade," which means that "existence of an industrial town near the border" is the most important factor in this sector.
- The best factor of current state was: "The agreement between two countries for the welfare of entrepreneurs and businessmen in Armenia," however, all participants believe that current situation doesn't promote strengthening economic ties between Iran and Armenia.

¹ <http://wits.worldbank.org/WITS/WITS/Results/Queryview/QueryView.aspx?Page=DownloadandViewResults&Download=true>

² <http://wits.worldbank.org/WITS/WITS/Results/Queryview/QueryView.aspx?Page=DownloadandViewResults&Download=true>

³ http://old.iran-daily.com/1389/12/25/MainPaper/3919/Page/7/MainPaper_3919_7.pdf

⁴ <http://www.payvand.com/news/09/apr/1154.html>

ՄՐՅԱԿՑԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԱԶԻԴ ԱՖՐԱ, *ստալիստ*

Նալապուրանի ազգային ագրարային համալսարան

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվում են մրցակցային և համեմատական առավելությունների տեսությունների դրսևորման հնարավորություններն ու հավանականությունները Իրանի Իսլամական Հանրապետությունում: Պատահական ընտրանքով ընտրված 250 ռեսպոնդենտի շրջանում անցկացված հարցման արդյունքների հիման վրա հիմնավորվել և ցույց են տրվել Իրանի Իսլամական Հանրապետության մրցակցային առավելությունները: Հոդվածի համար տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են հանդիսանում մասնագիտական գրականությունում առկա տեսական և մեթոդական ցուցումներն ու վերլուծությունները:

Բանալի բառեր. Նալապուրան, Իրան, մրցակցային առավելություններ, համեմատական առավելություններ, արդարքին առևտուր, արդարահանում, ներմուծում

ПРОЯВЛЕНИЯ ТЕОРИЙ КОНКУРЕНТНОЙ И СРАВНИТЕЛЬНЫХ ПРЕИМУЩЕСТВ В ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКЕ ИРАН

МАДЖИД АФРА, *аспирант*

Национального аграрного университета Армении

Аннотация

В статье рассматриваются проявления теорий конкурентной и сравнительных преимуществ в Иране. На основе случайной выборки, которая была проведена среди 250 респондентов, показаны конкурентные преимущества Исламской Республики Иран. Информационной базой для статьи служили теоретико-методические анализы, существующие в экономическом литературе.

Ключевые слова: Армения, Иран, конкурентные преимущества, сравнительные преимущества, внешняя торговля, экспорт, импорт.

APPLICATION OF THEORIES OF COMPETITIVE AND COMPARATIVE ADVANTAGES IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN

MAJID AFRA, *Ph.D. student*

National Agrarian University of Armenia

Abstract

The article presents the application of theories of competitive and comparative advantages in Iran. Based on the survey results (descriptive statistics) conducted among randomly selected 250 respondents, the author identifies the competitive advantages of the Islamic Republic of Iran. In analyzing the data and presenting findings the author relies on various techniques, empirical studies, various theories, literature review done by various scholars.

Keywords: Armenia, Iran, competitive advantage, comparative advantage, foreign trade, export, import.

ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ստալիզմ

ՄԳԱԱ Մ. Բոթանյանի անվան
 Կրթության և գիտության հիմնադրամ


ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ ու բնակչության թվաքանակով երրորդն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7%-ը): Լոռու մարզն ընդգրկում է Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի և Գուգարքի տարածաշրջանները՝ 113 համայնքներով (8՝ քաղաքային և 105՝ գյուղական): Մարզն ունի 282.2 հազար բնակչություն, որից 165.3 հազարը քաղաքաբնակ (58.6%), 116.9 հազարը՝ գյուղաբնակ (41.4%)¹: Մարզի տարածքով է անցնում Թբիլիսի-Երևան երկաթուղու մի հատվածը:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում առաջնահերթ և կարևորագույն խնդիր է համարվում աղքատության դեմ պայքարը: Խորհրդային Միության նախկին սոցիալիստական երկրները, այդ թվում՝ Հայաստանը, շուկայական տնտեսությանն անցման սկզբնական փուլից սկսած լուրջ ցնցումներ կրեցին ոչ միայն նյութական, այլև մարդկային ռեսուրսների վերատադրության և սոցիալական զարգացման բնագավառներում²: Տնտեսական անկումն անխուսափելիորեն առաջացրեց բնակչության զանգվածային աղքատացում: Վերը նշված գործոնի, ինչպես նաև 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով ՀՀ Լոռու մարզում աղքատության խնդիրներն ավելի սրված են, որտեղից հետևում է մարզի աղքատության հաղթահարման նպատակային ծրագրի մշակման և իրականացման անհրաժեշտությունը: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որը սկսվեց 2008թ., լքջորեն վտանգեց մարզում ճգնաժամին նախորդող տարիներին ձեռք բերված տնտեսական աճը և աղքատության կրճատումը: Նախ և առաջ անհրաժեշտ է զնահատել մարզում աղքատության մակարդակը (Լոռու մարզի աղքատության հիմնական ցուցանիշների դինամիկան 2009-2013թթ. ներկայացված է գծապատկեր 1-ում), վերլուծել աղքատությունը ծնող ինչպես համընդհանուր, հայաստանյան, այնպես էլ Լոռու մարզին բնորոշ առանձնահատուկ պատճառները:

Գծապատկեր 1

Լոռու մարզի աղքատության հիմնական ցուցանիշների դինամիկան 2009-2013 թթ. (տոկոսներով)³



¹ <http://lori.gov.am/description/>

² Социально-экономическое развитие постсоветских стран: итоги двадцатилетия. –М.: ИЭ РАН, 2012.

³ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2014թ»: ՀՀ ԱՎԾ:


Գծապատկերից երևում է, որ թեպետ վերջին տարիներին գրանցվել է աղքատության կրճատում, սակայն դեռևս մարզի աղքատության ցուցանիշները բարձր են աղքատության հանրապետական միջին ցուցանիշներից (ԱՎԾ տվյալներով՝ 2013թ. աղքատությունը Հայաստանում կազմել է 32 տոկոս): Աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին՝ ընդհանուր գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից:

Մարզում աղքատածին հիմնական գործոն է հանդիսանում աշխատատեղերի բացակայությունը, որը, այսպես ասած, հետին պլան է մղել աղետի գոտու գործոնը: Լոռու մարզում աղքատածին հիմնական գործոններից են նաև գյուղատնտեսական նշանակության անմշակ հողերի բարձր տոկոսը՝ դրանց որակական ցածր հատկությունների պատճառով մշակման տնտեսապես ցածր արդյունավետությունը, գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունները, մարզի գյուղական համայնքներում և հատկապես մինչև 500 բնակիչ ունեցող համայնքներում ենթակառուցվածքների թերզարգացվածությունը, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների զգալի քանակը, մարզի քաղաքային համայնքների կենսագործունեության խիստ կախվածությունը արդյունաբերական խոշոր ընկերություններից: Մարզում աղքատության հաղթահարման համար առաջնահերթ խնդիրներն են գյուղատնտեսական նշանակության հողերի պիտանելիության, արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում, ոռոգման համակարգերի վերակառուցում, ինչպես նաև փոքր և միջին ձեռներեցության զարգացման՝ փոքր արտադրական ու սպասարկման ոլորտի ձեռնարկությունների բացման միջոցով քաղաքային համայնքներում զբաղվածության խնդրի լուծում և խոշոր արտադրական ձեռնարկություններից քաղաքների կենսագործունեության բարձր կախվածության թուլացում:

Գործազրկությունը Լոռու մարզի ամենալուրջ հիմնախնդիրներից է իր բացասական հետևանքներով՝ աղքատություն, արտագաղթ, հոգեբանական խնդիրներ և այլն¹: Մարզի աշխատանքի շուկայում առկա են մի շարք խնդիրներ, այդ թվում՝ բարձր գործազրկություն (մարզի գործազուրկների թիվը 2005-2014թթ. ներկայացված է գծապատկեր 2-ում), ցածր աշխատավարձ, թաքնված զբաղվածություն և աշխատաշուկայի ենթակառուցվածքների թույլ զարգացում:

Գծապատկեր 2

Լոռու մարզի գործազուրկների թիվն ըստ տարիների²



2014թ. ընթացքում գրանցվել են 8503 աշխատանք փնտրողներ (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 7334, աճը՝ 15.2 տոկոս), գործազուրկներ են 8329 (նախկինում՝ 6.822, աճը՝ 22.1 տոկոս): Տարվա ընթացքում մարզում աշխատանքի են տեղավորվել 1153 աշխատանք

¹ ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

² ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. աշխատանքային գործունեության հաշվետվություն:


փնտրողներ, որոնցից՝ 738 կանայք (2013թ.՝ 994, որից՝ 594 կին): 2014թ. զբաղվածության ամենամյա պետական ծրագրերում ընդգրկվել է 467 մարդ, որից՝ 346 կին: Նրանցից աշխատանքի են տեղավորվել 110 աշխատանք փնտրող, որից՝ 85 կին: Մարզում գործազրկության մակարդակը շարունակում է բարձր մնալ գործազրկության հանրապետական մակարդակից. 2013 թվականին մարզում գործազրկության մակարդակը կազմել է 19.2%, իսկ գործազրկության հանրապետական մակարդակը՝ 16.2%: Սա հիմնականում պայմանավորված է ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությամբ: Տնտեսական զարգացումը կենտրոնացել է Երևանում և, սահմանափակ թվով մարզերում (հիմնականում՝ Սյունիք, Կոտայք), արդյունքում երկրի տարածքներում առաջացել է բնակչության կենսամակարդակի ու մարդկային զարգացման բնութագրիչների խիստ արտահայտված տարբերություններ: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է տարածքային զարգացման նպատակային քաղաքականության իրականացում, որը պետք է ուղղված լինի Երևանից դուրս, տարածքներում տնտեսական աճի խրախուսմանը և սոցիալական զարգացմանը: Այն պետք է ապահովի առավել ցածր զարգացում ունեցող տարածքների տնտեսական առաջանցիկ զարգացման տեմպեր և միջնաժամկետ հեռանկարում դրանց զարգացման մակարդակների աստիճանական մոտեցում միջին հանրապետական մակարդակին:

Խորհրդային տարիներին ներկայիս Լոռու մարզն ընդգրկող քաղաքներում, շրջաններում առկա էր արդյունաբերական հզոր համալիր՝ որն ընդգրկում էր արդյունաբերության բոլոր ճյուղերը: Արդյունաբերական արտադրանքի ծավալը հասնում էր 1.1 միլիարդ ռուբլու: Արդյունաբերական համալիրում աշխատում էր ավելի քան 53 հազար մարդ, որից միայն 30 հազարից ավելին՝ Վանաձոր քաղաքում: Արդյունաբերական ձեռնարկություններն իրենց արտադրանքն արտահանում էին ավելի քան 45 երկրներ:

Անկախության տարիների ընթացքում մարզի արդյունաբերությունը ենթարկվել է կառուցվածքային փոփոխությունների: Ներկայումս առաջատար են քիմիական և մետալուրգիական ճյուղերը, սակայն արտադրության ընդհանուր ծավալում իրենց առաջատար դիրքերը զիջել են մեքենաշինությունն ու սարքաշինությունը, թեթև արդյունաբերությունը: Զգալիորեն բարձրացել է սննդի արդյունաբերության տեսակարար կշիռը: Չնայած վերջին չորս տարիներին արտադրության և արտահանման ծավալները մարզում աճել են, այնուամենայնիվ արտադրանքի արտահանման ծավալների տեսակարար կշիռը հանրապետական ցուցանիշի նկատմամբ նվազել է (ներկայացված է գծապատկեր 3-ում)¹:

Գծապատկեր 3

Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալների դինամիկան ընթացիկ գներով 2 (մլն դրամ)



Այժմ մարզի արդյունաբերական համալիրում ըստ արտադրության ծավալի արդյունաբերական ներուժը կենտրոնացված է Թումանյանի տարածաշրջանում, Վանաձորում գործում է

¹ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2013թ, վիճակագրական տեղեկագիրք, Երևան 2014թ.:
² ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. աշխատանքային գործունեության հաշվետվություն:


մոտ 50 ձեռնարկություն՝ շուրջ 2500 աշխատողներով: Գործող ձեռնարկություններից խոշոր են 6, մնացած 120 ձեռնարկություններն իրենցից ներկայացնում են փոքր ու միջին արտադրություններ, որտեղ ընդգրկված են արդյունաբերությունում աշխատողների միայն 30%-ը: Մարզի փոքր և միջին արտադրությունների մոտ 40%-ը դրանք գյուղմթերքներ վերամշակող ու սննդի արտադրության ձեռնարկություններ են: Զգալի թիվ են կազմում նաև քարամշակող արտադրամասերը, կան փայտամշակման, էներգետիկայի և այլ տիպի ձեռնարկություններ: Սրանց արտադրանքի բացարձակ մեծամասնությունը իրացվում է հանրապետությունում, շատ քիչ են ժամանակակից տեխնոլոգիաներով, սարքավորումներով արտադրությունները, ուստի և արտաքին շուկայում մրցունակ արտադրանքը:

2014 թվականին մարզի արդյունաբերական ձեռնարկությունները ընթացիկ գներով թողարկել են 69,938.1311 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք՝ 2013 թվականի 72,419.306 մլն դրամի դիմաց: Աճի տեմպը կազմել է 96.57%, բացարձակ թվով նվազումը կազմել է՝ 2,481.175 մլն դրամ: 2014թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում (ընթացիկ գներով) տարեկան արդյունքներով կազմել է 5.4%:

2013թ. տարեկան ցուցանիշներով մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները ունեն այսպիսի տեսք՝ մշակող արդյունաբերություն 43,880.19 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 86.3% և տեսակարար կշիռը՝ 68.73%, հանքարդյունահանումը՝ համապատասխանաբար՝ 8,760.733 մլն դրամ, 89.6% և 13.72%, էլ.էներգիայի արտադրությունը՝ 10,261.87 մլն դրամ, 126.1% և 16.07% (գծապատկեր 4):

Գծապատկեր 4

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները 2013թ.¹



2013թ. մարզի տնտեսության արդյունաբերության ոլորտում արձանագրվել է մշակող արդյունաբերության և հանքարդյունաբերության տեսակարար կշռի նվազում: Տվյալ տարում մարզում շահագործման են հանձնվել 3 փոքր ՇԷԿ: Չնայած այս փաստին, որ մարզի էլեկտրաէներգիա արտադրող ձեռնարկությունների թիվը հասել է 20-ի (էլ.էներգիա արտադրող կայանների թիվը՝ 24), տարվա արդյունքներով մարզում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը բնեղեն արտահայտությամբ աճել է 19.6%-ով: Մտահոգիչ է այն փաստը, որ 2013թ. ևս որոշ ՓՇԷԿ-ներում (նախորդ տարվա համեմատությամբ) էլեկտրաէներգիայի արտադրության ծավալի ինդեքսի նվազում է արձանագրվել: Անհրաժեշտություն է զգացվում ճշտել նոր նախագծվող ՓՇԷԿ-ների ջրային պաշարների ելակետային տվյալները:

Քիմիական արդյունաբերության ճյուղում տարեկան ցուցանիշներով արձանագրվել է արտադրության ծավալի նվազում: 2013թ. տարեկան տվյալներով, նախորդ տարվա նկատմամբ, առկա է, արտադրության ծավալի կտրուկ նվազում՝ բացարձակ թվով 325.206 մլն դրամի

¹ ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. աշխատանքային գործունեության հաշվետվություն:


չափով: Չնայած միջազգային շուկաներում գունավոր մետաղների գների նվազմանը, տարվա կտրվածքով մարզի առաջատար՝ «Մետալուրգիա»-ի ցուցանիշների նվազում չի արձանագրվել, քանի որ մարզի առաջատար «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն, բնեղեն արտահայտությամբ, տվել է արտադրության ծավալի աճ՝ արտադրվել է 10770.8 տոննա ավելի կոնվերտորային պղինձ: Միջազգային շուկայում պղնձի գների նվազումն էլ հանդիսանում է մարզի արդյունաբերության ընդհանուր ցուցանիշի փոքր աճի հիմնական պատճառ:

Լոռու մարզի արդյունաբերության առանձնահատկություններից մեկն այն է, որ ունի արտահանման ուղղվածություն (արտահանման ծավալների դինամիկան ներկայացված է գծապատկեր 5-ում):

Արտահանման ծավալներով Լոռու մարզը երրորդն է Երևանից և Սյունիքի մարզից հետո: Չնայած վերջին չորս տարիներին արտադրության և արտահանման ծավալները մարզում աճել են, այնուամենայնիվ արտադրանքի արտահանման ծավալների տեսակարար կշիռը հանրապետական ցուցանիշի դեռևս ցածր է (2009թ.՝ 1,1%, 2010թ.՝ 1,6%, 2011թ.՝ 2,2%, 2012թ.՝ 2%, 2013թ.՝ 2%):

Գծապատկեր 5

Լոռու մարզի արտահանման ծավալների դինամիկան 2009-2013թթ.¹
(մլն դրամ)



2010-2013 թվականներին մարզի արդյունաբերության ոլորտում կատարվել են խոշոր ներդրումներ 151 միլիարդ դրամ: Արդյունաբերության ոլորտում կապիտալ ներդրումների մեծ մասն իրականացվել է «Վալլեքս» ընկերությունների խմբի մեջ ընդգրկված «Թեղուտ» ՓԲԸ-ում՝ մոտ 300.0 մլն ԱՄՆ դոլարի չափով (Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի և կից հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման համար) և «Սագամար» ՓԲ ընկերության կողմից՝ շուրջ 12.0 մլն ԱՄՆ դոլարի չափով (Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ու վերամշակող կոմբինատի կառուցման նպատակով): Արդյունքում շահագործման է հանձնվել Արմանիսի հանքավայրն ու կից կոմբինատը, բացվել է մոտ 400 նոր աշխատատեղ²:

¹ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2013թ, վիճակագրական տեղեկագիրք, Երևան, 2014թ.:

² ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ասպիրանտ

*Մ. Գ. Ա. Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ*

Համառոտագիր

Աշխատանքում ներկայացված է Լոռու մարզի սոցիալական արդի հիմնախնդիրները, ինչպես նաև մարզի տնտեսության ներքին կառուցվածքի ընդհանուր բնութագիրը և զարգացման հեռանկարները: Լոռու մարզն իր տնտեսական ներուժով ու զարգացման միտումներով Հայաստանի Հանրապետության կարևոր տարածաշրջաններից է, մարզն ունի արդյունաբերական հզոր անցյալ և մեծ պոտենցիալ: Մարզում գործում են արդյունաբերության բոլոր ճյուղերը ներկայացնող ձեռնարկություններ: Հողվածում մանրամասն ներկայացված են Լոռու արդյունաբերության և էներգետիկայի ոլորտների վերաբերյալ վերլուծությունները:

Բանալի բառեր. Լոռու մարզ, տնտեսություն, արդյունաբերություն, Վանաձոր, արտահանում, ներդրումներ, աղքատություն, գործազրկություն, էներգետիկա, ԴԷԿ:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ЛОРИЙСКОЙ ОБЛАСТИ РА

АРУТЮН АРУТЮНЯН, аспирант

Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

В работе представлены основные социальные задачи Лорийской области, а также общее описание структуры областной экономики и перспективы ее развития. Лорийская область - одна из важных регионов Армении по своему экономическому потенциалу и тенденции развития. Область имеет богатую промышленную историю и большой потенциал: в ней действуют предприятия, представляющие все отрасли промышленности. Автором дан подробный анализ сфер промышленности и энергетики Лорийской области.

Ключевые слова: Лорийская область, экономика, промышленность, Ванadzor, экспорт, инвестиции, бедность, безработица, энергетика, ГЭС.

SOCIO-ECONOMIC DEVELOPMENT ISSUES OF LORI MARZ

HARUTYUN HARUTYUNYAN, Ph.D. student

*M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article addresses the contemporary social issues of Lori Marz, and provides the overview of the structure of economy and development perspectives of the Marz. Lori Marz is one of the important regions of the Republic of Armenia by its economic potential: strong industrial past and great potential. The Marz is the home of enterprises representing all sectors of the national industry of economy. The article provides a detailed analysis of industry and energy sector of the economy of Lori.

Keywords: Lori marz, economy, industry, Vanadzor, exports, investments, poverty, unemployment, energy sector, hydroelectric power station

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՐԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

20-րդ դարի սկզբին Լոռու մարզի Ալավերդի և Ախթալա քաղաքներում ձևավորվեցին արդյունաբերական կենտրոններ, որոնց բազմամյա գործունեությունը հանգեցրեց բազմաթիվ էկոլոգիական խնդիրների:

Մի շարք պատճառներով՝ Լոռու մարզում լեռնահանքային կոմբինատների աշխատանքն իրականացվում է առանց որևէ մաքրող սարքավորման, հոսքաջրերի մուտքը դեպի մակերևութային ջրահոսքեր, պոչամբարների բացի թողությունը, ինչը շարունակում է վատթարացնել էկոլոգիական իրավիճակը Լոռու մարզում¹:

Տարածաշրջանի հիմնական խնդիրն է շրջակա միջավայրի աղտոտումը ծանր մետաղներով: Հատկապես վտանգավոր են ոչ միայն տիպոնորֆ տարրերը՝ պղինձը (Cu), ցինկը (Zn), կապարը (Pb), այլ նաև ուրիշ թունավոր մետաղներ՝ սնդիկը(Hg), կադմիումը (Cd), արսենը (As) և այլն: Վերջիններիս բաղադրությունները հանքաքարում մեծ չեն, սակայն ընդերքից հանքաքարի կորզման և վերամշակման գործընթացում դրանք ընկնում են շրջակա միջավայրի բաղադրիչների մեջ՝ դառնալով էկոլոգիական ռիսկի հիմնական գործոն:

2013 թվականին Հայաստանի Ամերիկյան համալսարանը երեխաների արյան մեջ կապարի պարունակության բացահայտման վերաբերյալ հետազոտություններ է անցկացրել Լոռու մարզի երկու հանքարդյունաբերական քաղաքներում՝ Ախթալայում և Ալավերդում: Համեմատության համար ուսումնասիրություններ են անցկացվել նաև Երևան քաղաքի երեքուրեք համայնքում: Ընդհանուր հետազոտվել է 4-6 տարեկան 169 երեխա. 39՝ Ախթալայում, 69՝ Ալավերդում, 54՝ Երևանում: Արդյունքները ցույց տվեցին, որ Ախթալայում և Ալավերդում երեխաների արյան մեջ կապարի պարունակությունը միևնույն մակարդակի վրա է և էականորեն ավելին է, քան Երևանի երեխաների արյան մեջ (արդյունակ 1-ում ներկայացված է երեխաների արյան մեջ կապարի մակարդակի ամփոփ արդյունքները՝ ըստ միկրոգրամը դեցիլիտրում (մկգ/դլ) չափման միավորի):

Աղյուսակ 1

Երեխաների արյան մեջ կապարի մակարդակի ամփոփ արդյունքները ²

(ըստ միկրոգրամը դեցիլիտրում (մկգ/դլ) չափման միավորի)

Համայնքը	Հետազոտված երեխաների թիվը	Երկրաչափական միջինը նվազագույն - առավելագույն արժեքները	Ռեֆերենսային մակարդակը գերազանցող արյան մուշների %-ը ³
Ախթալա	39	6.8 3.6-15.5	84.6
Ալավերդի	69	6.4 3.5-24.0	75.4
Երևան	54	5.2 0.1-11.7 (52.8)	57.4

Ախթալայի և Երևանի երեխաների արյան մեջ կապարի մակարդակի երկրաչափական միջինները վիճակագրորեն հավաստիորեն տարբեր են ($p=0.035$), տարբեր են նաև Ալավերդու և Երևանի միջին արժեքները ($p=0.031$): Ալավերդու և Ախթալայի միջև վիճակագրորեն հավաստի

¹ <http://www.ecolur.org/hy/news/air/vecological-disasterv-term-entirelt-proper-for-alaverti-town/435/>

² <http://aarhus.am/images/Alaverdi/hetazotutyun%20amerikyan%20hamalsaran.pdf>

³ Արյան մեջ կապարի ամվման քանակություն չկա. կապարի ցանկացած, թեկուզ աննշան քականություն, վնասակար է առողջության համար: Այնուամենայնիվ, համեմատության համար օգտագործվում է ռեֆերենսային մակարդակ հասկացությունը, որը հաշվարկվել է ԱՄՆ-ում և հավասար է 5մկգ/դլ-ի: Սա նշանակում է, որ 1-5 տարեկան երեխաների 2.5%-ի մոտ կապարի մակարդակը արյան մեջ գերազանցել է 5մկգ/դլ-ը:

տարբերություն չի հայտնաբերվել: Սա նշանակում է, որ Ախթալա և Ալավերդի համայնքներում ապրող երեխաների մոտ արյան մեջ կապարի առկայությամբ պայմանավորված առողջական ռիսկերը զգալիորեն բարձր են, քան՝ Երևանի Էրեբունի համայնքում ապրող երեխաներին:

Ախթալայում ռեֆերենսային մակարդակը գերազանցող արյան մուշների տոկոսը վիճակագրորեն հավաստիորեն և զգալիորեն գերազանցում է նույն ցուցանիշը Երևանի համար ($p=0.005$): Այս ցուցանիշը բարձր է նաև Ալավերդու համար ($p=0.035$): Ախթալայի և Ալավերդու միջև վիճակագրորեն հավաստի տարբերություն չի հայտնաբերվել: Սա նշանակում է, որ Ախթալա և Ալավերդի համայնքներում ապրող երեխաների մոտ արյան մեջ կապարի առկայությամբ պայմանավորված առողջական ռիսկերը զգալիորեն բարձր են, քան՝ Երևանի Էրեբունի համայնքում ապրող երեխաներին:

Որպես շրջակա միջավայրի աղտոտիչներ՝ ծանր մետաղները ունեն մի շարք յուրահատկություններ: Դրանք չեն ներգրավվում ինքնամաքման գործընթացների մեջ. միզարահայի ընթացքում փոփոխվում են միայն կոնցենտրացիաները և պարունակության ձևերը: Ներառվելով միզարահայի բոլոր տեսակներում և կենսաբանական շրջապատույթի մեջ՝ ծանր մետաղները հանգեցնում են բոլոր կենսաապահովող բնական միջավայրերի՝ ջրի, օդի, հողի աղտոտմանը և թափանցում սնման շղթա¹:

Կենդանի օրգանիզմներում կուտակվելու հատկությունը հանգեցնում է ինչպես յուրահատուկ հիվանդությունների առաջացման, այնպես էլ իմունային համակարգի թուլացմանը և ընդհանուր հիվանդացության մակարդակի աճին: Բացի ուղղակի թունավոր ազդեցությունից, ծանր մետաղներին հատուկ են, այսպես կոչված, երկարատև էֆեկտները, որոնք խախտում են օրգանիզմի հիմնարար ֆունկցիաները՝ վերարտադրությունը և ժառանգականությունը: Վերջին հաշվով ծանր մետաղների վնասակարության աստիճանը մեծ է, քանի որ վտանգը առաջանում է ոչ թե առանձին օրգանիզմների, այլ ամբողջ սերունդների համար:

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում²: 2003թ. սկսած օգտակար հանածոների արդյունահանող և երկրաբանական ուսումնասիրություններ կատարող կազմակերպությունների կողմից դիտվում է ընդերքի նոր և նախկինում թերի ուսումնասիրված տեղամասերի երկրաբանահետախուզական աշխատանքների ակտիվացում:

Երկրաբանահետախուզական և արդյունահանման ծավալների աճը անխուսափելիորեն բերում են տարածաշրջանի բնապահպանական և էկոլոգիական հավասարակշռության խախտման: Տվյալ պարագան ստիպում է, որպեսզի հաշվի առնվեն բոլոր բացասական հետևանքները և հիմնովին կշռադատելուց հետո նոր տրվեն համապատասխան ընդերք օգտագործման թույլտվություններ, լիցենզիաներ և այլն:

Չնայած ընդերքարդյունահանման, վերամշակման և արտադրական ցուցանիշների աճին, ոլորտը դեռևս հեռու է բավարար լինելուց: Ներկայիս ընդերքարդյունահանման ցուցանիշները կազմում են նախկին ԽՍՀՄ-ի ցուցանիշների 7-8 %-ը: Տվյալ հանգամանքը պայմանավորված է հիմնականում միջպետական երկաթուղու շրջափակմամբ: Միջպետական երկաթուղու վերաբացմամբ և ճգնաժամի ավարտով ոլորտի ցուցանիշները կբազմապատկվեն մի քանի անգամ:

Մարզի լեռնաքիմիական հումքը ներկայացված է՝ հանքային պիզմենտների (հանքային ներկերի), կվարցիտների և Պետրովկայի բարձր կալիումական տուֆերի հանքատեսակներով: Պիզմենտները և կվարցիտները չնայած, որ ունեն օգտագործման բավականին լայն ասպարեզ և շուկա, ներկայումս չահագործվում են աննշան հզորություններով: Տվյալ հանգամանքը հիմնականում պայմանավորված է արտահանման երկաթուղային մեծ ծախսերի հետ: Մարզում առկա են նաև տորֆի բազմաթիվ հանքավայրեր և կուտակումներ, որոնք նույնպես համապատասխան վերամշակումից հետո կարող են ծառայել որպես էկոլոգիապես մաքուր և բարձրորակ պարարտանյութ:

¹ https://ru.wikipedia.org/wiki/Тяжёлые_металлы

² «Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2012թ.», վիճակագրական տեղեկագիրք, ՀՀ ԱՎԾ, 2013թ.:

Ընդերքօգտագործման (հետախուզում, արդյունահանում) ներկայիս վիճակը կապված տնտեսական ճգնաժամի և բնապահպանության հետ ունի լուծում պահանջող բավականին շատ հիմնախնդիրներ, որոնցից առավել կարևորվում են. ընդերքի ոչ համալիր և անխնա օգտագործումը, ընդերքի շահագործումից առաջացող բնապահպանական հիմնախնդիրների բացահայտման, մեղմացման և կանխարգելման միջոցառումների պակասը, համապատասխան ոլորտներում՝ արդյունահանման, վերամշակման և բնապահպանական մասնագետների սակավությունը, հանքավայրերի, լեռնահարստացման ֆաբրիկաների, մետաղածուլակայան գործարանի և վերամշակման արտադրամասերի փակ համակարգի, երկրորդային հումքի վերամշակման և անթափոն արտադրությունների ցածր մակարդակը, բնապահպանական հարցերով հասարակության մասնակցության ցածր մակարդակը:

1991-2000թթ. ընթացքում, էներգետիկ ճգնաժամի և տնտեսական շրջափակման հետևանքով, հանրապետության անտառները ինտենսիվ շահագործման հետևանքով կրեցին զգալի տարածքային և որակական կորուստներ: Չհամակարգված ծառահատումների հետևանքով հազարավոր հեկտարների վրա խաթարվել է անտառի ինքնակարգավորման և ինքնավերականգնման ունակությունը, ինչպես նաև բնապահպանական հատկությունները: Ըստ միջազգային կազմակերպությունների դիտորդների տվյալների, էներգետիկ ճգնաժամի տարիներին հանրապետության անտառներում յուրաքանչյուր տարի հատվել է մոտ 700 000-ից մինչև 1 000 000 խոր.մ անտառանյութ, որի 70%-ը բաժին է ընկել ապօրինի հատումների: Անտառային տարածքներում վերջնական գույքագրման (անտառաշինություն) բացակայության պատճառով վերը նշված տվյալները պաշտոնապես հաստատված չեն¹:

ՀՀ Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101835հա, որից անտառածածկ է 80867 հա-ը: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 26%-ը²: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ:

Մարզի անտառների հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակներն են՝ դաժին, լորենին, կեչին, թեղին, հացենին:

Անտառների ոչնչացմանը հաջորդեց կտրված ծառերի արմատային համակարգի փտումը՝ արմատները հող դարձան, որի հետևանքով ակտիվացան էռոզիոն և սողանքային երևույթները: Կախված լանջի թեքությունից ու բնակլիմայական պայմաններից, ինչպես նաև սեյսմիկ իրավիճակից՝ հողը սկսում է սահել: Սահելով գետն է թափվում սևահողը, որի վերարտադրությունը լեռնային պայմաններում շատ երկար ժամանակ է պահանջում: Բնական աղբյուրների զգալի մասը դարձել է սակավաջուր:

Ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ եթե տվյալ տարածաշրջանում անտառները 25%-ից պակաս են, ապա կորցնում են իրենց կլիմայակարգավորիչ, հակաէրոզիոն, ջրակարգավորիչ նշանակությունը և արդյունաբերական նպատակներով օգտագործվել չեն կարող: Եթե հաշվի առնենք, որ մինչև մասսայական անտառահատումները Հայաստանում անտառները զբաղեցնում էին հանրապետության տարածքի մոտավորապես 11%-ը, ապա պարզ է, թե էներգետիկ ճգնաժամի հետևանքով ստեղծված իրավիճակը ինչպես է վտանգում հետագա սերունդների ապագան:

Մարզի մշակովի հողատարածքների մեծ մասը տարիներ շարունակ անմշակ մնալու հետևանքով առաջ է եկել գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի դեգրադացիա և խոպանացում: Վարելահողերում մեխանիկական և քիմիական համապատասխան գործողություններ չկատարելու հետևանքով նախկինում բերրի հողերը կորցնում են իրենց բուն նպատակային նշանակությունը: Հողատեսքերում ակտիվ կերպով զարգանում են մկնանման կրծողները, որոնք ոչ միայն խիստ կերպով ազդում են բերքատվության վրա, այլև առաջացնում են հողաթմբեր և դրանով իսկ լուրջ խոչընդոտ են հանդիսանում բուսաբուծության և անասնա-

¹ http://www.armeniatree.org/thethreat/facts_figures.pdf

² ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

պահության համար¹: Տվյալ հանգամանքները նպաստում են գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մոլախոտերի և կիսաանապատային բույսերի բուռն զարգացմանը, որը տանում է դեպի հողերի աստիճանաբար անապատացման:

Նպատակային և արդյունավետ չեն իրականացվում նաև շինարարական, օգտակար հանածոների արդյունահանման ու հողերի խախտման հետ կապված հանված հողի բերրի շերտի պահպանությունն ու օգտագործումը:

Հողի բերրի շերտի արտադրության և պահպանության գործում կարևոր դեր են խաղում մարզի անտառածածկ տարածքները, որոնք վերջին 20 տարիների ընթացքում ենթարկվել են անտրոպոգեն և բնական (հիմնականում քամատապալ) խաթարման: Անտառների ինտենսիվ հատումների հետևանքով ի հայտ են եկել մի շարք բացասական երևույթներ, մասնավորապես խիստ ակտիվացել են սելավասողանքային և էռոզիոն երևույթները, որոնք առանց այն էլ սևահողով աղքատ սարավանջերից քշում են դեպի գետերը դարերի ընթացքում գոյացած սևահողը:

Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերին մեծ վնաս են պատճառում նաև անկանոն և տարերային ձևով առաջացող աղբավայրերը, որոնք բացի կենցաղային աղբից պարունակում են նաև ժամկետանց թունաքիմիկատներ, մարտկոցներ, նավթամթերքների արգասիքներ, ազբեստ պարունակող շինարարական թափոններ և այլ թունավոր ու կոնցենտրացիոն նյութեր: Վերը նշված հանգամանքը ոչ միայն վտանգավոր է դարձնում տվյալ հողատարածքի օգտագործումը, այլև աղբավայրի թունավոր նյութերը տարրալուծվելով մակերեսային և ստորերկրյա ջրերի մեջ սպառնալիք են առաջացնում մոտակա ջրային ռեսուրսներից օգտվող ազգաբնակչության և կենդանական աշխարհի համար:

Հողի վերին շերտի համար լուրջ սպառնալիք է հանդիսանում աղբավայրերից և ազգաբնակչության կողմից դեպի շրջակա միջավայր թափանցող պոլիէթիլենային և պլաստմասե թափոնները, որոնք հողում չեն քայքայվում և տարիների ընթացքում առաջացնում են մեկուսացնող շերտ, դրանով իսկ փոխելով հողի բնականոն ռեժիմը²:

Հողերի պահպանության համար գործնականում պետք է հասնել նրան, որ ոչ մետաղական օգտակար հանածոների շահագործման ժամանակ չառաջանան թափոններ, որը ներկայումս ջարդող-տեսակավորող ագրեգատների բացակայության պատճառով աղտոտում և անպիտան են դարձնում ահռելի տարածքներ: Միաժամանակ պետք է խրախուսվեն այն կազմակերպությունները, որոնք լեռնահարստացման ֆաբրիկաների թափոնները վեր կածեն լայն օգտագործման արտադրատեսակների և բարիքի:

Մարզի հիմնական ջրային զարկերակը Դեբեդ գետն է՝ Ձորագետ, Փամբակ, Մարցիգետ վտակներով: Հատելով Գուգարաց լեռները այդ գետերը առաջացրել են ձորեր ու կիրճեր, որոնցից ամենախոշորը Դեբեդի կիրճն է: Դեբեդ գետի ընդհանուր երկարությունը 178 կմ է, ավազանի ընդհանուր մակերեսը՝ 4080 քառ. կմ³: Դեբեդ գետի վրա կառուցված են մի շարք ջրհան և կենսաբանական մաքրման կայաններ: Գետը ունի հիդրոէներգետիկ նշանակալի պաշարներ: Ձուրն հիմնականում օգտագործվում է ոռոգման և արդյունաբերական նպատակներով:

Դեռևս 2002թ. «Ձինջ» ջրաինժեներական ընկերությունը և Լոռու մարզպետարանի աշխատակազմը պատրաստել են Դեբեդի գետավազանի համապարփակ կառավարման պլան, որի մեջ ընդգրկվել են 85 պիլոտային ծրագրեր: Տվյալ ծրագրերը իրենց մեջ ամփոփում են գետավազանի հիմնախնդիրները և դրանց լուծման տարբերակները: Ծրագրի իրականացման նախնական գնահատումը կազմել է մոտ 120 մլն ԱՄՆ դոլար, ինչը ներկայումս միայն Հայաստանի Հանրապետության ուժերով իրականացնելը դժվար խնդիր է: Սույն ծրագրային փաթեթը ներկայացվել է տարբեր միջազգային բնապահպանական հիմնադրամներին՝ հնարավոր ֆինանսավորման ակնկալիքով:

¹ «Հողի բերրիության անկման պատճառները և հետևանքները», հոդված, աղբյուրը, lori.agro.am

² https://ru.wikipedia.org/wiki/Полиэтиленовый_пакет

³ <http://hy.wikipedia.org/wiki/Դեբեդ>

Դեբեդ գետի խոշոր աղտոտողներից է նաև Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատը¹: Դա պայմանավորված է հիմնականում լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի մոտակայքում գտնվող պոչամբարի լցվելու հետ, որը առանց կապիտալ վերանորոգման աշխատանքների (հենապատի բարձրացում բետոնով) թերևս ընդունակ չէ ամբարելու հանքաքարի մշակումից առաջացած թափոնները:

Մարզում գոյություն ունեցող ջրամաքրման կայանները (Սպիտակի, Վանաձորի, Ալավերդու, Թունանյանի) հայտնվել են խիստ անմխիթար վիճակում և գործնականորեն չեն գործում: Անմխիթար վիճակում են գտնվում նաև կեղտաջրերի հեռացման խողովակաշարերը²:

Դեբեդի գետավազանի կոյուղու մաքրման կայանների անգործության և ջրահեռացման ցանցի մաշվածությունը հետևանքով արտադրական և կենցաղային կեղտաջրերը անմիջապես լցվում են բնակավայրերի տարածքները և գետերը՝ աղտոտելով շրջակա միջավայրը, խախտելով էկոհամակարգերի կայունությունը, ստեղծելով հակասանիտարական վիճակ և աղբյուր հանդիսանալով համաճարակային բռնկումների սպառնալիքի:

Լոռու մարզում արդյունաբերական և բնապահպանական հիմնախնդիրները սերտորեն փոխկապակցված են: Տվյալ հիմնախնդիրների հիմնավորված վերլուծությունը և համապատասխան միասնական համալիր ծրագրի ընդունումը և իրականացումը կհանգեցնի մարզի տնտեսական ու բնապահպանական ոլորտների ներդաշնակությանը: Կարևոր նախապայմաններից է լեռնարդյունաբերության, հոսքաջրերի, աղբավայրերի և մաքրման կայանների վերազինումը ժամանակակից տեխնոլոգիաներով, որոնք կնվազեցնեն մարզի շրջակա միջավայրի աղտոտումը: Հաշվի առնելով անտառածածկ տարածքների անմխիթար վիճակը, անհրաժեշտ է միանշանակ արգելել տվյալ տարածքներում երկրաբանահետախուզական և հանքարդյունահանման աշխատանքները:

Բնապահպանական ռիսկերը մեղմացնելու և վերացնելու նպատակով անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները.

1. Բարձրացնել բնապահպանական խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկությունը և մասնակցությունը, նպաստել մարզի բնապահպանական հիմնախնդիրների լուծման մեջ համայնքների մասնակցության ուժեղացմանը:
2. Զբոսաշրջության և էկոտուրիզմի զարգացումը կաջակցի մարզի էկոհամակարգերի պահպանությանը:
3. Էկոլոգիական կրթության մեջ ակտիվորեն ներգրավել մարզի կրթական հիմնարկները, հանրակրթական դպրոցները, մարզի բնապահպանական ՀԿ-ները:
4. Անհրաժեշտ է խթանել բնապահպանական տեսակետից անվտանգ, անթափոն և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրումը:
5. Հրատապ խնդիր է պոչամբարների և տարբեր պատճառներով լքված և չշահագործվող հանքավայրերի ռեկուլտիվացիայի ծրագրերի իրականացումը, որն անհրաժեշտ է շրջակա միջավայրի աղտոտումը կանխարգելելու, բնական էկոհամակարգերը վերականգնելու և ազգաբնակչության առողջական վիճակը չվտանգելու համար:

¹ <http://www.ecolur.org/hy/news/mining/tails-of-nahatak-tailing-dump-owned-by-akhtala-ore-dressing-combine-dumped-into-debed-photos/7027/>

² Տեղեկանք «Մակերևութային ջրերի վիճակի մասին, 2008թ.», «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2009թ.:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՐԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *սաայիրուհի*

*ՄԿԳԱՄ Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ*

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Լոռու մարզի էկոլոգիական հիմնախնդիրներին: Ներկայացված է մարզի բնապահպանական իրավիճակը, ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները: Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները մեծ չափով առկա են նաև ՀՀ Լոռու մարզում: Դրանք են՝ անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, արդյունաբերական վնասակար թափոնների կառավարման խնդիրները, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը և օգտագործումը, հողերի դեգրադացիայի կանխումը:

Բանալի բառեր. Լոռու մարզ, Արավերդի, էկոլոգիա, անտառային ռեսուրսներ, ջրային ռեսուրսներ, մթնոլորտ, թափոններ, հողի դեգրադացիա, բնական ռեսուրսներ:

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ И ИЗМЕНЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОГО КАЧЕСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ ЛОРИЙСКОЙ ОБЛАСТИ

ԱՐՄԵՆԻԱ ԱՐՄԵՆԻԱՆ, *ասպիրանտ*

Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Статья посвящена основным экологическим проблемам Лорийской области. Представлены экологическое состояние Лорийской области, мероприятия, направленные на решение проблем этой сферы. Проблемы охраны и контроля окружающей среды и природных ресурсов Республики Армения в большой степени присутствуют и в Лорийской области. К ним относятся: рациональный контроль над лесными ресурсами, задача контролирования вредных промышленных отходов, рациональный контроль над использованием водных ресурсов, предотвращение деградации земли.

Ключевые слова: Лорийская область, Алаверди, экология, лесные ресурсы, водные ресурсы, атмосфера, отходы, природные ресурсы, деградация земель.

THE CURRENT TRENDS ON ECONOMIC DEVELOPMENT AND CHANGES IN ENVIRONMENTAL QUALITY IN LORI MARZ

HARUTYUN HARUTYUNYAN, *Ph.D. student*

*M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article addresses environmental issues in Lori Marz. The author presents the state of environment of the Marz, the issues of the sector, and proposes specific measures to address them. Lori Marz faces the majority of issues that Armenia faces: environmental and natural resources preservation and management issues. These issues are: effective management of forest resources, management issues of toxic industrial waste, efficient management and use of water resources, prevention of soil erosion.

Keywords: Lori Marz, Alaverdi, environment, forest resources, water resources, atmosphere, wastes, soil erosion, natural resources

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) սոցիալական վիճակագրության ցուցանիշների համակարգը ներառում է հետևյալ բաժինները՝ բնակչություն, հասարակության սոցիալական կառուցվածք, ընտանիք և ժամանց, եկամուտներ և ընտանեկան խնայողություններ, կենսամակարդակ, առողջապահություն, սննդամթերքի սպառում, բնակալայնմաններ, կրթություն և մշակույթ, աշխատանքի և զբաղվածության պայմաններ, գյուղական բնակչության կենսապայմաններ, սոցիալական ապահովություն, երեխաների խնամք և դաստիարակություն, հաշմանդամներ, զառանյալներ և կենսաթոշակառուներ, բարոյական վիճակագրություն, հասարակական հիմնադրամներ¹:

Վերոնշյալ ցուցանիշների համակարգը հիմք է հանդիսանում պետության սոցիալական քաղաքականության իրականացման համար, որը պարտադիր կարգով առկա է ժամանակակից յուրաքանչյուր պետության մեջ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (ԼՂՀ), որի կառավարության կողմից պարբերաբար իրականացվում են սոցիալական աջակցության անհրաժեշտ ծրագրեր, որոնք ուղղված են սակավ ապահովված բնակչության և հատկապես հաշմանդամների ու տարեցների կենսապայմանների, առողջական վիճակի բարելավմանը: Այդուհանդերձ հանրապետությունում սոցիալապես անապահով վիճակում հայտնված անձանց թիվը քիչ չէ, իսկ ԼՂՀ պետությունում նախատեսվող սոցիալական հատկացումների չափերն էլ հիմնականում բավարար չեն վերոհիշյալ անձանց կենսամվազագույնն ապահովելու համար: ԼՂՀ-ում նվազագույն սպառողական բյուջեն դեռևս պաշտոնապես հաստատված չէ, իսկ ԼՂՀ ԱՎԾ-ն էլ տեղեկատվություն է տալիս նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի մասին, որի համաձայն զամբյուղի ամսական արժեքը 2013թ. կազմել է 52.718,4 դրամ: Վիճակագրությունը փաստում է, որ 2014թ. ամսական սոցիալական կենսաթոշակի միջին չափը 2013թ. համեմատ երկրում աճել է 6.3%-ով: Սակայն այն ընդամենը կազմում է 18300 դրամ, որը ոչ միայն բավարար չէ նվազագույն սպառողական զամբյուղով նախատեսված ապրանքներ ձեռք բերելու, այլ նաև հույժ անհրաժեշտ կարիքները հոգալու համար:

Միևնույն ժամանակ հանրապետությունում դիտվում է բնակչության ծերացում՝ այսինքն. դրա կազմի կառուցվածքում տեղի է ունեցել տարեց մարդկանց (60-ից բարձր) տեսակարար կշռի աճ, որը կազմում է 16.1%², ինչը երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցությունում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև մասամբ՝ միգրացիայի հետևանք է: Դիտարկումները ցույց են տալիս, որ երկրում տարեց մարդկանց թիվը ավելանում է նաև ծերանոցներում, որի հիմնական պատճառը նյութական գործոնն է՝ ընտանիքների ծանր սոցիալական վիճակն ու բնակարանային սուղ պայմանները:

Ընդգծենք, որ առաջիկա տարիներին ևս սպասվում է բնակչության կազմի կառուցվածքում տարեցների թվաքանակի աճ, քանի որ կենսաթոշակային տարիք կսկսեն մուտք գործել 1955-1960թթ. ծնված՝ գրեթե կրկնակի անգամ ավելի մեծ թվով անձինք: Եթե մինչև կենսաթոշակային տարիքի բնակչության ծավալում ներհոսք կամ ծնելիության կտրուկ աճ տեղի չունենա, ապա ԼՂՀ բնակչության ծերացման երևույթը ահագնացող թափ կհավաքի, ու երկիրը կհայտնվի կարևորագույն լուծում պահանջող ծանրակշիռ սոցիալ-տնտեսական հիմնախնդրի առջև:

Բնակչության ծերացման գործընթացը ուժեղացնում է ճնշումը պետությունից ծախսային մասի վրա՝ սրվում են կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանվածության ֆինանսավորման պահանջումները:

¹ http://www.mlsa.am/home/links.php?id_link=467

² Հաշվարկները կատարված են ԼՂՀ ԱՎԾ 2014թ. պաշտոնական տվյալների հիման վրա:

ժողովրդագրական ծերացման մարտահրավերը որոշակի խնդիրներ է ստեղծում նաև առողջապահության համակարգի համար: Վերջին տարիներին հիվանդությունների և մահացությունների բարձր ինտենսիվություն է դիտվել հենց բարձր տարիքային խմբերի բնակչության շրջանում:

Վերոնշյալ խնդիրների լուծման համար առաջարկում ենք.

1. Կենսաթոշակի անցած անձանց համար զբաղվածության ճկուն համակարգերի ներդրում առանց աշխատաշուկայում անհամաչափությունների և սերունդների միջև վիճահարույց իրավիճակների ստեղծման:
2. Միջազգայնորեն ընդունված ժողովրդագրական նորմերին համապատասխան ծերաբանության և ծերաբուժության ծառայությունների համակարգի ձևավորում, ինչը կնպաստի տարեց մարդկանց կյանքի որակի բարելավմանը:
3. Լիարժեք պայմանների ստեղծում երկրի սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացման գործընթացում՝ տարեցների ակտիվ մասնակցության ապահովման համար:
4. Բնակչության բոլոր տարիքային խմբերի առողջության, հատկապես վերարտադրական առողջության վերաբերյալ տեղեկատվական բազայի բարելավում, քանի որ մեծահասակների առողջության մակարդակը առաջին հերթին պայմանավորված է ոչ միայն երիտասարդ տարիքի կյանքի բարելավման պայմաններով, այլև թե ժամանակին ինչպիսի մակարդակի բժշկական ծառայություններ է մատուցվել նրանց:
5. Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրի մշակում՝ միջնաժամկետ կտրվածքով: Պետք է հատուկ ընդգծել, որ ՀՀ-ում այդպիսի ծրագիր գործում է 2012թ.-ից:

ԼՂՀ բնակչության կազմում հաշմանդամների տեսակարար կշիռը 6.4%¹ է, որը, կարծում ենք, որքան՝ քիչ, այնքան լավ: Սակայն հանրապետությունում նպաստառու մեկ ընտանիքի հաշվով նշանակված նպաստի միջին ամսական չափը 2012-2014թթ. ընթացքում փոփոխության չի ենթարկվել և կազմում է 30000 դրամ: Տեսանելի է, որ նպաստի մակարդակը չի համապատասխանում կենսաապահովման արժեքին:


Միաժամանակ հարկ ենք համարում ընդգծել նաև, որ հանրապետությունում սկսած 1997թ.-ից կոմունալ վարձի և ծախսերի վճարման համար տարբեր խմբի հաշմանդամներին կենսաթոշակի հետ տրվել են ամենամսյա դրամական փոխհատուցումներ: Ներկայումս դրանք տրվում են միայն Քաշաթաղի և Շահունյանի շրջանի բնակիչներին, իսկ Հայրենական պատերազմի վետերաններին տրվում են պատվովճարներ, ԼՂՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած և զոհված զինծառայողների ընտանիքներին՝ միանվագ ապահովագրական գումարներ: Ստեփանակերտում գործում է պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով ապահովման կենտրոն, որը երկրում բնակվող բոլոր հաշմանդամներին անվճար ապահովում է համապատասխան պարագաներով ու պրոթեզներով: Հանրապետությունում պետական բյուջեի հաշվին Երևանում կատարվում է աչքի վնասվածքով հաշմանդամների պրոթեզավորում:

Պետբյուջեի ծախսերի և դրանց կազմում սոցիալական պաշտպանության ծախսերի փոփոխությունների վերաբերյալ համեմատական վերլուծությունն ըստ 2009-2014թթ. ընթացքում ներկայացված է գծապատկերում²:

¹ Հաշվարկները կատարված են ԼՂՀ ԱԿԾ 2013-2014թթ. պաշտոնական տվյալների հիման վրա:

² <http://mss.nkr.am/>

Պետբյուջեի ծախսերի և դրանց կազմում սոցիալական պաշտպանության ծախսերի փոփոխությունն ըստ 2009-2014թթ.
(մլն դրամ)



Գծապատկերից տեսանելի է, որ 2014թ. ընդհանուր առմամբ դիտվել է պետական ծախսերի աճ՝ 13.5%-ի չափով 2009թ. նկատմամբ: Չնայած արձանագրվել է նաև սոցիալական պաշտպանության ծախսերի աճ, սակայն այդուհանդերձ, դիտարկվող ժամանակահատվածում դրանց չափը բյուջետային ծախսերի կառուցվածքում ուներ նվազման միտում. այդ թվում՝ 2009թ. դրանք կազմել են 27.2%, 2010թ.՝ 26%, 2011թ.՝ 25.5%, 2012թ.՝ 25.7%, 2013թ.՝ 25.4%, 2014թ.՝ 24.4%: Դիտարկումից պարզ է, որ ԼՂՀ-ում սոցիալական լարվածության շոշափելի մեղմացման դժվարությունը պայմանավորված է հիմնականում բյուջետային սուղ միջոցներով:

ԼՂՀ-ում բյուջետային միջոցառումներից զատ սոցիալապես անապահով խմբերին տրվում է նաև մարդասիրական օգնություն, որը ֆինանսավորում են միջազգային բարեգործական և հասարակական կազմակերպությունները: 1995թ.-ից ի վեր «Հայաստան» համահայկական հիմնադրամը ամենամայա մարդասիրական նպաստներ է տրամադրում ԼՂՀ պաշտպանության ժամանակ առաջին կարգի հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաներին: 2001թ. հանրապետությունում գործում է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներ» հիմնադրամը, որը դրամական օգնություն է հատկացնում պատերազմի առաջին խմբի հաշմանդամներին: Բազմազավակ ընտանիքների բարեկեցության բարձրացմանը նպաստել է «Ծնելիության և բազմազավակության խթանման» ծրագիրը:

Կարծում ենք, որ սոցիալապես խոցելի խավերի բարեկեցության բարելավմանը կնպաստեն նաև ներքոհիշյալ առաջարկությունները.

1. բազմազավակ ընտանիքների երեխաներին արհեստների ուսուցման նպատակային ծրագրերի ձեռնարկումը և իրականացումը,
2. սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով նվազագույն սպառողական զանբյուղի կազմի, կառուցվածքի և դրամական արտահայտությամբ դրա չափի պաշտոնապես հաստատումը,
3. կենսաթոշակի, կրթաթոշակի, նպաստների և այլ սոցիալական վճարումների նվազագույն չափերի որոշման համար՝ կենսամվազագույնի արժեքի հիմք ընդունելը:

Զարգացող տնտեսություն ապահովելու համար կարևորվում է տնտեսական աճի միջին տեմպի ցուցանիշը, որը 2010-2013թթ. երկրում արձանագրվել է 8.45%¹: Սակայն հանրապետությունում տնտեսական աճի համեմատաբար բարձր տեմպերը դեռևս չեն վկայում երկրի տնտեսական զարգացման նույնպիսի տեմպերի մասին: Այն էականորեն չի նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ու շերտավորման կրճատմանը: Այսպես, պարզաբանման համար նշենք, որ ԼՂՀ-ում 2013թ. բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1138.1 հազար

¹ Հաշվարկները կատարված են ԼՂՀ ԱԿԾ 2011-2014թթ. պաշտոնական տվյալների հիման վրա:

դրամ (2759\$), որը 2012թ. համեմատ աճել է 11.25%-ով¹: Չնայած այդ ցուցանիշի աճի տեմպին, դրա մակարդակը բավարար չէ բարեկեցիկ կյանք ապահովելու համար, և համեմատության համար նշենք, որ զարգացած երկրների խմբին դասվող պետություններում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում է տարեկան 15000 ԱՄՆ դոլար:

Բնակչության կենսամակարդակը գնահատելու համար համաշխարհային պրակտիկայում ավելի լայն կիրառություն ունի «Մարդկային զարգացման համաթվի» (ՄԶՀ) ցուցանիշը, որն իր մեջ արտացոլում է ոչ միայն մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը, այլև բնակչության կյանքի միջին տևողությունը և կրթության մակարդակը երկրում: ՄԶՀ-ն գտնվում է 0-1 միջակայքում և որքան մոտենում է 1-ի, այնքան տվյալ երկրում բնակչության կենսամակարդակը բարձր է: ՄԶՀ-ն տարբեր երկրների համար պարբերաբար հրապարակվում է ՄԱԿ-ի կողմից:

Համաթիվը հաշվարկվում է որպես երեք ցուցանիշների՝ կյանքի սպասվող տևողության, կրթական մակարդակի և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին թվաբանական:

ՄԶՀ-ի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշների հաստատագրված նվազագույն և առավելագույն մեծությունները բերված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ

ՄԶՀ-ի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշների ընդունված նվազագույն և առավելագույն մեծությունները²

Ցուցանիշներ	Նվազագույն	Առավելագույն
Կյանքի սպասվելիք միջին տևողությունը (տարի)	25	85
Չափահասների գրագիտության մակարդակը (%)	0	100
Կրթական հաստատություններում ընդգրկվածությունը (%)	0	100
Մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ (դոլար)	100	40000

Ընդ որում՝ յուրաքանչյուր ցուցանիշի համար կատարվում է առանձին հաշվարկ հետևյալ բանաձևով.

$$h = \frac{S_{\phi} - S_{\text{նվ}}}{S_{\text{առ}} - S_{\text{նվ}}}$$

որտեղ՝

S_{ϕ} -ն՝ տվյալ տեսակի ինդեքսն է (օրինակ՝ կյանքի սպասվող տևողության),

$S_{\text{նվ}}$ -ն՝ ցուցանիշի փաստացի ձեռքբերված մակարդակն է,

$S_{\text{առ}}$ -ը՝ ցուցանիշի ընդունված նվազագույն մակարդակն է,

$S_{\text{նվ}}$ -ը՝ ցուցանիշի ընդունված առավելագույն մակարդակն է:

2012թ. ԼՂՀ-ում կյանքի միջին սպասվող տևողությունը ($h_{\text{կստ}}$) եղել է 74.6 տարի: Հետևաբար, կյանքի սպասվող տևողության ինդեքսը ԼՂՀ-ում կլինի.

$$h_{\text{կստ}} = \frac{74.6 - 25}{85 - 25} = 0.826$$

Կրթական մակարդակի ինդեքսը ($h_{\text{կրթ}}$) հաշվարկվում է նույն մեթոդիկայով, սակայն արդեն որպես երկու տարբեր ինդեքսների միջին կշռված մեծություն, որոնցից առաջին ինդեքսը ցույց է տալիս չափահաս բնակչության (15 և բարձր տարիքի) գրագիտության մակարդակը ($h_{\text{գր}}$), որը վերցվում է 2/3-ով, իսկ մյուսը՝ առաջին, երկրորդ և երրորդ մակարդակի կրթական համակարգերում ընդգրկվածությունն է, որը ԼՂՀ-ում ներառում է 6-23 տարիքի բնակչությանը ($h_{\text{ընդ}}$)՝ վերցվում է 1/3-ով: Չափահաս բնակչության գրագիտության մակարդակը ԼՂՀ-ում կազմել է 93.5% (երկրում 7-ից բարձր տարիքի 122051 մարդուց 7949 մարդ չունեին տարրական կրթություն)³, իսկ կրթական համակարգերում ընդգրկվածությունը՝ 20.5%: Հետևաբար, կրթական մակարդակի ինդեքսը ԼՂՀ-ում կլինի.

¹ Նույն տեղում:

² www. Human Development report 2003 էջ 341:

³ Հաշվարկված է ԼՂՀ 2005թ. մարդահամարի արդյունքներով:

$$r_{կրթ} = 0.935 \times 2/3 + 0.205 \times 1/3 = 0.691:$$

$r_{ՀԱԱ}$ -ի հաշվարկման համար հիմք ընդունվում լրգարիթմական մեծությունները.

$$r_{ՀԱԱ} = \frac{\lg 2483 - \lg 100}{\lg 400000 - \lg 100} = 0.535$$

Ստացված ինդեքսների հիման վրա $L_{ԴՀ}$ -ում $U_{ԶՀ}$ -ն կլինի.

$$r_{U_{ԶՀ}} = (0.826 + 0.691 + 0.535)/3 = 0.684:$$

$ՀՀ$ -ում այդ ցուցանիշը կազմում է 0.729 և աշխարհի երկրների շարքում զբաղեցնում է 100-րդ տեղը: Ընդգծենք, որ ինչքան բարձր է այդ ցուցանիշը, այնքան տվյալ երկիրն իր եկամուտները խելամտորեն է ուղղում ժողովրդի բարեկեցության բարձրացմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնակչության սոցիալական անապահովության հիմնական պատճառների շարքում առաջնային են համարվում աշխատատեղերի պակասը և ցածր կամ անբավարար աշխատավարձը: $L_{ԴՀ}$ կառավարությունը լուրջ աշխատանքներ է տանում փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության, տնտեսությանը նորարական ուղղվածություն և ճկունություն հաղորդելու ուղղությամբ, ինչը իր նշանակալի ազդեցությունն է թողել աշխատատեղերի ստեղծման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: Երկրում ձեռնարկատիրությունը ընդլայնվում է հատկապես թեթև և սննդի արդյունաբերության ոլորտներում: Այսպես, «Մետաքս» կոմբինատը պետական ներդրումներով գործող թեթև արդյունաբերական ՍՊԸ-ների միավորում է, որում ներգրավված են ոլորտի մի շարք կազմակերպություններ: Կազմակերպությունը արտադրում է արցախյան գորգերի վերականգնված տեսակներ և ըստ որոնց էլ, կարծում ենք, որ այդ արտադրատեսակներով Արցախը կարող ենք ներկայացնել նաև ամբողջ աշխարհին:

Հանրապետության ձեռնարկատիրության ոլորտում իր ուրույն տեղն ունի նաև «Արցախ ֆրուտը», որը մասնագիտացված է մրգերի և բանջարեղենի պահածոների արտադրության մեջ: Բնակչությանը որակյալ արտադրանքով մատակարարման գործում կարևորվում է նաև սեփական բուսական յուղի արտադրության առկայությունը: Գործող կազմակերպությունները նպաստում են ոչ միայն երկրի տնտեսության զարգացմանը, այլ նաև հարյուրավոր նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչը հնարավորություն է տալիս կարգավորել զբաղվածության հիմնախնդիրը $L_{ԴՀ}$ -ում:

$L_{ԴՀ}$ կառավարության կողմից իրագործման փուլում է գտնվում Արցախի տնտեսության զարգացմանը նպաստող մեծածավալ նախագծերից մեկը՝ սև խավիարի սեփական արտադրության հիմնումը: Ըստ այդ նախագծի՝ առաջիկա տարիներին Արցախը կարող է դառնալ սննդամթերքի խոշոր արտահանող, իսկ վերջին տարիներին էլ հանրապետության էներգետիկ անկախությանը զգալիորեն նպաստել է «Արցախ ՀէԿ» ԲԲԸ-ն:

Արդի պայմաններում հանրապետության տնտեսության շարժիչ ուժը հանքարդյունաբերությունն է: Արցախում կա 15 մետաղական և 51 ոչ մետաղական հանքավայր (ավազ, կրաքար և այլն), որոնցից 48-ը շահագործման լիցենզիա ունի: Մետաղականներից տասներեքն ուսումնասիրվում է, երկուսը՝ արդեն շահագործվում: Դրանք են՝ «Վալեքս» խմբի անդամ «Բեյզ Մեթրլս» ՓԲԸ-ի կողմից շահագործվող Դրմբոնի հանքավայրը և «Գոլդ Սթար» ՓԲԸ-ի կողմից շահագործվող Քաշաթաղի շրջանի Թոնդիրգետի ոսկու հանքավայրը: «Բեյզ Մեթրլս» ՓԲԸ-ն հանրապետության ամենախոշոր հարկատուն է: Այսպես, կազմակերպությունը 2011թ. վճարել է 4,8 միլիարդ դրամի, իսկ 2012թ.՝ 3,25 միլիարդ դրամի հարկեր և սոցվճարներ, որը կազմում է $L_{ԴՀ}$ պետբյուջեի հարկերի և սոցվճարների 13 տոկոսը: Ներկայումս «Բեյզ Մեթրլս»-ի կողմից ուսումնասիրության աշխատանքներ են կատարվում Դրմբոն-Մեհմանա հանքային շրջանում (515 քառակուսի կիլոմետր), որտեղ տեղակայված է Արցախում տնտեսական խոշոր իրադարձություն համարվող Կաշենի պղինձ-պարֆերային հանքավայրը: Նախատեսվում է, որ Կաշենի ապագա կոմբինատը տարեկան կմշակի մոտ 1 միլիոն 600 հազար տոննա հանքաքար (Դրմբոնի կոմբի-

նատը մշակում էր 350 հազար տոննա): Կազմակերպության կողմից արտահանվող արտադրանքը կազմում է հանրապետության արտահանումների 55 տոկոսը ¹:

Սակայն, չնայած վերոնշյալի, աշխատատեղերի պակասի հիմնահարցի լուծումը լիարժեք չէ, եթե այն չի համադրվում աշխատավարձի մեծությանն այնպիսի չափով, որը հնարավորություն է տալիս անհատի և տնային տնտեսության վերարտադրողական կարողությունների մակարդակը հետընթացից պաշտպանելու և պարզ վերարտադրողականությունից բարձրացնելու՝ հասցնելով ընդլայնված վերարտադրողական մակարդակի:

Հանրապետությունում կարևորվում է նաև բնակչության բնակարանային պայմանների բարելավման հիմնախնդրի լուծումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած պետական աջակցությանը, հիփոթեքային վարկավորման ծրագիրը բնակչության լայն շրջանակի համար մատչելի չէ: Հիփոթեքը հասանելի է դառնում միայն վճարունակ սպառողներին: Թեև հանրապետության հիփոթեքային վարկ ցանկացողների թիվն աստիճանաբար ավելանում է, այնուամենայնիվ, 129700 հազար դրամ անվանական միջին աշխատավարձի պայմաններում դա հնարավոր չէ ձեռք բերել, քանի որ ընտանիքները հիփոթեքային վարկի գծով պետք է կատարեն միջին հաշվով ամսական 150 հազար դրամի վճարումներ (մայր գումար և տոկոսավճար): Այս պարագայում անհրաժեշտ է մշակել և իրագործել հիփոթեքային վարկավորման խթանիչ նոր ծրագրեր:

Վերջին ժամանակներս ԼՂՀ-ում տիրող սոցիալական լարվածությունը պայմանավորված է նաև համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական զարգացումներով, և ներկայումս համաշխարհային տնտեսությունը թևակոխել է զարգացման որակապես այլ փուլ: Գլոբալ անկայունության մի շարք գործոններ դեռևս պահպանվում են՝ թույլ չտալով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի սկզբից նույնիսկ վեց տարի անց վստահ արձանագրել ճգնաժամի հաղթահարումը: 2014թ. գնաճային ճնշումները բարձր են եղել զարգացած և զարգացող երկրներում: Եվրոպական երկրներում բյուջետային և պարտքային հիմնախնդիրները վերջնական լուծում չեն ստացել, բանկային համակարգի կայունությունը բավարար մակարդակ չի ապահովել, իսկ տարեվերջին ԱՄՆ-ի՝ ծավալային խթանման ծրագրի կրճատման մասին որոշման ընդունումը լրացուցիչ ռիսկեր է ստեղծել համաշխարհային ընդգրկմամբ՝ հիմնականում ֆինանսավորման արգելափակման և այլ արժույթների արժեզրկման տեսքով²:

Վերոնշյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ ԼՂՀ-ում պետական ֆինանսները գերզգայուն կլինեն էներգակիրների միջազգային գների և արժույթային կուրսերի տատանումների նկատմամբ: Այդ պարագայում հրատապ է տնտեսական քաղաքականության օրակարգում մարտավարական նոր շեշտադրումներ մտցնելը, այդ թվում՝ երկրի կարողությունների հստակ գնահատումը, ռեսուրսների նպատակային ուղղորդումը ու արդյունքին կողմնորոշված կառավարումը, արտաքին ցնցումներին դիմակայելու կայուն երաշխիքների ձևավորումը:

¹ <http://theanalyticon.com/?p=3726>

² http://armef.com/news/category/analysis/article/article_1398189003

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԿՎՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐԸ ԼՂՅ-ՈՒՄ

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ, *դ.գ.թ., դոցենտ*

*ԱրՊՏ տնտեսագիտության տնտեսական
և կառավարման ամբիոն*

Համառոտագիր

Սույն հոդվածում դիտարկվել են պետության սոցիալական քաղաքականության հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները, երկրում իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերը: Հանրապետությունում սոցիալապես անապահով վիճակում հայտնված անձանց բարեկեցության բարելավման նպատակով առաջարկվել է բազմազավակ ընտանիքների երեխաներին արհեստների ուսուցման նպատակային ծրագրերի ձեռնարկում և իրականացում, սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով նվազագույն սպառողական զանրյուղի կազմի, կառուցվածքի և դրամական արտահայտությամբ դրա չափի պաշտոնապես հաստատում: Բնակչության կենսամակարդակը գնահատելու համար հաշվարկվել է «մարդկային զարգացման համաթվի» (ՄԶՀ) ցուցանիշը ԼՂՅ-ում: Առաջարկվել է աշխատատեղերի պակասի հիմնահարցի լուծումը համադրել աշխատավարձի մեծությանը այնպիսի չափով, որը հնարավորություն է տալիս անհատի և տնային տնտեսության վերարտադրողական կարողությունների մակարդակը պարզից բարձրացնելու և հասցնելու ընդլայնված վերարտադրողական մակարդակի: Համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական զարգացումներով պայմանավորված հիմնավորվել է տնտեսական քաղաքականության օրակարգում մարտավարական նոր շեշտադրումներ մտցնելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. *սոցիալական, ծրագիր, աջակցություն, կարգավորում, բարեկեցություն, կենսամակարդակ, բարելավում, հիփոթեկ, տնտեսություն, զարգացում, նախագիծ:*

ОСНОВНЫЕ ЗАДАЧИ СОЦИАЛЬНОЙ ПОДДЕРЖКИ В НКР

РУЗАННА МАНГАСАРЯН, *к.э.н., доцент*

*кафедры теории экономики
и управления АргУ*

Аннотация

В статье рассмотрены ключевые задачи и особенности социальной политики государства, а также проводимые в стране программы социальной поддержки. С целью повышения уровня благосостояния людей, находящихся в социально неблагоприятных условиях, предложено разработать и реализовать целевые программы обучения ремеслам детей из многодетных семей, а также официально утвердить состав, структуру и стоимость минимальной потребительской корзины для основных социально-демографических групп и в расчете на душу населения. Для оценки уровня жизни в НКР рассчитан «индекс человеческого развития» (ИЧР). Предложено решение вопроса нехватки рабочих мест сопоставить с таким размером зарплаты, который позволит повысить уровень воспроизводства способностей индивида и домашнего хозяйства от простого до расширенного. Обсуждена необходимость внедрения новых тактических приоритетов в экономической политике, обусловленная развитием мировой и региональной экономики.

Ключевые слова: *социальная, программа, поддержка, регулирование, благосостояние, улучшение, ипотека, экономика, развитие, проект.*

THE ISSUES ON SCOCIAL ASSISTANCE IN THE NAGORNO KARABAKH REPUBLIC

RUZANNA MANGASARYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*

*Economic Theory and Management Department
Artsakh State University*

Abstract

The article discusses the issues and peculiarities of the social policy, and the social assistance programs implemented by the government. In order to improve the well-being of socially unprotected, vulnerable people the author proposes to design and implement targeted craft training programs for children from large families; to define the composition of the minimum consumers basket and calculate the monetary value of the basket based on the items and their respective quantities included in the minimum consumer basket for various social and demographic groups and per capita. In order to measure the well-being of population Human Development Index of the Nagorno Karabakh Republic (NKR) has been calculated. The author proposes to compensate the lack of jobs available with the increase in wages that would enable to report higher reproduction of labor power (own and household level), and ensure more sophisticated productive activities. By taking into account the global and regional developments the author justifies the need for new strategic priorities to be pursued by the economic policy.

Keywords: *Social, program, support, regulation, well-being, living standards, improvement, mortgage, economy, development, project*

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հայաստանում կրթությունն ունի բազմադարյան պատմություն և ավանդույթներ: Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը:

Շուկայական տնտեսության ներկայիս փուլում, երբ տեղի է ունենում հասարակարգերի փոփոխություններ, երբ տնտեսության ավանդական մոտեցումներին փոխարինելու են գալիս նոր մոտեցումներ կարևորվում է կրթության ու գիտության դերը: Այսօր նկատվում է անցում դեպի գիտելիքահենք տնտեսություն, տնտեսություն որտեղ կարևորվում է գիտելիքը և կրթությունը, և այն դիտարկվում որպես կարևոր գործոն տնտեսությունը զարգացնելու համար:

Հարկ է նշել, որ Հայաստանը ևս ունի հնարավորություն դառնալու գիտելիքահենք տնտեսություն ունեցող երկիր: Սակայն նախքան այդ հարկավոր է զարգացնել կրթությունը և գիտությունը, որոնք զգալի դեր են խաղում գիտելիքահենք տնտեսության զարգացման համար:

ՀՀ կրթական համակարգը կարելի է դիտարկել երեք հիմնական փուլերով անցումային (1990-1994թթ.), կայունացման (1995-1999թթ.) և կայացման (2000թ-ից)¹:

Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի վերափոխումների գործընթացը սկսվել էր 1990 թվականի հուլիսին՝ կրթության նախարարության «Ազգային միասնական հանրակրթական դպրոցի մասին» որոշմամբ²:

Հաջորդ շրջափուլը կարելի է բնորոշել որպես կայունացման ժամանակաշրջան (1995-1999): Երկրի տնտեսական զարգացմանը զուգընթաց, սկսվել էր հանրակրթության ոլորտի բարեփոխումը:

Արդեն 1995 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրության 35-րդ հոդվածում ամրագրվում էր, որ «ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք, միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է, յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք»³:

Այսուհետ Հայաստանում կրթությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Հայաստանի կրթական համակարգում լուրջ առաջընթաց քայլերից է ԱԺ-ի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը⁴:

Սրանք այն հիմնական կետերն են, որոնց շնորհիվ ՀՀ կրթական համակարգը, այդ թվում նաև բարձրագույն կրթական համակարգը հասել է որոշակի հաջողությունների:

Բացի օրենսդրական փոփոխություններից, հարկ է նշել, որ կրթության զարգացմանը նպաստում են նաև մի շարք այլ գործոնները, ինչպիսիք են ֆինանսական միջոցները, ժողովրդական գործոնները, մարդկային ռեսուրսները և այլն:

¹ <http://armscoop.com/2013>

² Հովհաննիսյան Ս., Ազգային ինքնությունը համաշխարհայնացման հոլովությունում. առկա մարտահրավերները, ինքնությունը և փոփոխվող աշխարհը (Միջազգային գիտաժողովի նյութեր), -Եր.: «Լինգվա» հրատարակչություն, 2008, էջ 62:

³ ՀՀ Սահմանադրություն:

⁴ Կրթության զարգացման պետական ծրագիր, 2001-2005 թթ., Ե., 2000:


Ինչպես արդեն նշել էինք, բարձրագույն կրթական համակարգը հանդիսանում է գիտելիքահենք տնտեսության կարևորագույն հիմնասյուներից մեկը, որի զարգացման մակարդակով է պայմանավորված գիտելիքահենք տնտեսության կայունությունը և զարգացման հեռանկարները:

Այսօր ՀՀ-ում շարունակվում է կայուն կերպով զարգանալ բարձրագույն կրթական համակարգը, սակայն զարգացման ներկայիս տեմպերը և արդյունքները բավարար չեն մրցունակ տնտեսություն ստեղծելու համար:

ՀՀ բնակչության թվաքանակի նվազման զուգահեռ, նվազել է նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակը¹:

Գծապատկեր 1

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակ



Նշված գծապատկեր 1-ից երևում է, որ զգալիորեն կրճատվել է ուսանողների թվաքանակը, ինչը գիտելիքահենք տնտեսության պայմաններում նշանակում է, որ մենք կորցնում ենք մեր կարողությունը կամ, այլ կերպ ասած, «ռեսուրսները»:


Այս ցավալի փաստի պայմաններում առաջ է գալիս նաև երկրորդ հիմնական խնդիրը՝ ֆինանսական միջոցներ:

Այսօր բուհերի եկամուտների մեծ մասը ձևավորվում է ուսման վարձավճարներից: Սակայն ուսանողների թվաքանակի անընդհատ կրճատումը լուրջ խնդիրներ է առաջացնում նաև այստեղ:

Զնայած այն հանգամանքին, որ պետությունը ևս ֆինանսական միջոցներ է հատկացնում գիտակրթական համակարգի զարգացմանը, սակայն այնուհանդերձ պետք է արձանագրել, որ այս փուլում, միջոցները բավարար չեն մրցունակ կրթություն մատուցելու համար:

Գծապատկեր 2

ՀՆԱ-ն և կրթական ծախսերն ըստ տարիների²



¹ *Աղբյուր*՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014:

² *Աղբյուր*՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014:

Կրթության բոլոր մակարդակների գծով ծախսերը (տե՛ս գծապատկեր 2) մոտավորապես կազմում են ՀՆԱ-ի 3.0 տոկոսը՝ ՏՀՁԿ երկրների միջին ցուցանիշի մոտ կեսը: Բարձրագույն կրթության ոլորտի ընդամենը ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 0.9 տոկոսը, իսկ ՏՀՁԿ երկրներում՝ 1.5 տոկոսը: Հայաստանում բարձրագույն կրթությանն ուղղվող պետական միջոցները ՀՆԱ-ի 0.3 տոկոսին չեն հասնում, որը էապես զիջում է ՏՀՁԿ-ի միջին 1.0 տոկոսին ֆինանսավորման ցածր տեմպերի պարագայում դասախոսապրոֆեսորական անձնակազմի մոտ առաջ են գալիս սոցիալական խնդիրներ, որոնց լուծման ճանապարհին վերջիններս ստիպված են աշխատել գերծանրաբեռնված և զբաղվել նաև կողմնակի աշխատանքով: Այս պարագայում գիտական գործունեությունը մղվում է ետին պլան և նոր զարգացումներ չի արձանագրում:

Վերոնշյալ գործոնների առկայությամբ դժվար է պատկերացնել կրթական կայուն զարգացում, այնպիսի համակարգի, որը կնպաստի գիտելիքահենք տնտեսության զարգացմանը ՀՀ-ում: Սակայն, եթե մշակվի հստակ ռազմավարություն, ապա պատկերը բոլորովին այլ կարող է լինել:

Ստորև փորձ ենք արել ներկայացնել ՀՀ բարձրագույն կրթական համակարգի զարգացման միտումները և գործոնները, որոնք կարող են ազդել կրթական համակարգի կայունացման և զարգացման վրա:

- Օգտագործելով ՀՀ-ում առկա գիտակրթական ներուժը, հնարավոր է Հայաստանը դարձնել գրավիչ միջազգային հանրության համար:
- Արտասահմանյան ուսանողների ներհոսքով պայմանավորված կրթական հաստատությունները կստանան լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ինչը կարող են օգտագործել մի շարք խնդիրներ լուծելու համար:
- Օգտագործել արտասահմանում վերապատրաստված մասնագետների, ուսանողների գիտական ներուժը ՀՀ կրթական համակարգում:
- Հիմնել տարածաշրջանային գիտահետազոտական կենտրոններ, որոնք հնարավորություն կտան տեղում կատարել հետազոտություններ և գիտական աշխատանքներ, օրինակ՝ Բյուրականի աստղադիտարան (հնարավոր տարբերակներ Քաջարան, Ջերմուկ, Արմավիր-Արարատ և այլն):
- Ջարգացնել հեռավար կրթական համակարգը:

Այս և մի շարք այլ գործոններ կարող են ուղղակիորեն նպաստել կրթական համակարգի զարգացմանն ու կայունացմանը:

Հատկանշական է այն փաստը, որ Հայաստանը, չունենալով ռեսուրսների բավարար չափով պաշար, արդյունքում արդյունաբերական բնույթի մրցունակ գործարաններ, զիջում է մի շարք առաջատար երկրներին տնտեսական բազում ցուցանիշներով: Սակայն անցում կատարելով գիտելիքահենք տնտեսության, որտեղ կարևորվում է նորամուծությունը, գիտելիքը և տեխնոլոգիաները կարող են բավականին մրցունակ դիրք զբաղեցնել համաշխարհային շուկայում:

Պատահական չէ, որ հեղինակավոր *Times Higher Education* վերլուծական կայքը համալսարանները դասակարգելիս հաշվի է առնում, կատարված հետազոտությունները, կրթական ձևը, նորարարությունները և այլն:

Ցավալի է, բայց Հայաստանյան ոչ մի ԲՈՒՀ ներառված չէ հեղինակավոր բուհերի շարքում:

Հեղինակավոր բուհերի վարկանիշային աղյուսակի առաջատարներն են ԱՄՆ-ն ու Միացյալ Թագավորությունները (տե՛ս աղյուսակ 1-ը):

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ-ի ներկա կրթական իրավիճակը և զարգացման հնարավորությունները, կարող ենք վստահորեն ասել, որ ՀՀ-ն ի զորու է հաղթահարել բոլոր խոչընդոտները, և գիտակրթական քաղաքականության զարգացման շնորհիվ տնտեսությունը զարգացնել բոլորովին այլ ուղղությամբ:

Համալսարանների միջազգային վարկանիշային աղյուսակ 2014-2015թթ.¹

<i>h/h</i>	<i>Անվանումները</i>	<i>Երկրները</i>	<i>Վարկանիշը</i>
1	California Institute of Technology (Caltech)	United States	94.3
2	Harvard University	United States	93.3
3	University of Oxford	United Kingdom	93.2
4	Stanford University	United States	92.9
5	University of Cambridge	United Kingdom	92.0
6	Massachusetts Institute of Technology (MIT)	United States	91.9
7	Princeton University	United States	90.9
8	University of California, Berkeley	United States	89.5
9	Imperial College London	United Kingdom	87.5
10	Yale University	United States	87.5
11	University of Chicago	United States	87.1

¹ <http://www.timeshighereducation.co.uk/world-university-rankings/2014-15/world-ranking>

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՆԱՐԵԿ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ, *հայցորդ*

*ՄԿԱԱՄՍՏՅԱՆ Մ. ԲՆԱԿԱՆՆԻ ԱՆՈՒՄԻ
ԻՆՎԵՍՏԱԿԻՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ*

Համառոտագիր

Հայաստանում կրթությունն ունի բազմադարյան պատմություն և ավանդույթներ: Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը:

Այսօր էլ պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում կրթության համակարգի պահպանումը և զարգացումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը: Միաժամանակ ՀՀ-ում կրթական համակարգը, մասնավորապես բարձրագույն կրթական համակարգը, ունի իր զարգացման առանձնահատկությունները, որոնք գերօ չեն բացթողումներից և թերություններից:

Ներկայումս, երբ նկատվում է անցում դեպի գիտելիքահենք տնտեսություն, ավելի քան երբևիցե կարևորվում է կրթական համակարգի զարգացման գործընթացը: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի բարձրագույն կրթական համակարգը:

Բանալի բառեր. կրթություն, փոփոխություն, զարգացում, գիտելիքահենք, սոցիալ-փոփոխական, կրթական համակարգ, մասնող, գիտական ներուժ, հետևելար:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В РА

НАРЕК САРАТИКЯН, *соискатель*

Института экономики им. М. Котаяна НАН РА

Аннотация

В Армении образование имеет вековую историю и обычаи. С момента своего возникновения армянская школа была оплотом политического и национального существования нашего народа и залогом его процветания.

Сегодня важнейшим государственным и национальным вопросом является поддержка и развитие системы образования, обеспечение ее конкурентоспособности на международной арене.

Следует отметить, что система образования в РА и, в частности, высшее образование имеют свои особенности развития, которые не лишены упущений и недостатков. Тем не менее, имеются некоторые предпосылки развития образования в Армении.

В настоящее время, когда очевиден переход к наукоемкой экономике, больше, чем когда-либо, становится актуальным процесс развития системы образования. В этом контексте важное значение имеет система высшего образования.

Ключевые слова: образование, экономика, развитие, наукоемкая, социально-экономический, образовательная система, студент, научный потенциал, перспектива.

TRENDS OF THE HIGHER EDUCATION SYSTEM DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

NAREK SARATIKYAN, *Ph.D. Student*

*M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The education in Armenia has a centuries-long history and traditions. Since its establishment the Armenian school has been the reinforcement of the political and national survivor of the nation and the guarantee of success.

And today maintaining and developing the education system, ensuring its competitiveness in the international arena is an important national issue to be addressed by the state.

Currently, along with the transition to a knowledge-based economy the process of developing the education system is stressed more than ever.

It should be noted that the education system in the Republic of Armenia, particularly the higher education, has the specifications of its development, which are not free from pitfalls and shortcomings. In this context, the higher education system is of great importance.

Keywords: Education, economy, development, knowledge-based, socio-economic, education system, student, scientific potential, perspective.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրասիական միգրացիոն համակարգը

Հայաստանը հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության անդամ (ԵՏՄ), ներառված է կայուն միգրացիոն համակարգի գոտում, որի կազմի մեջ մտնում են Ռուսաստանը, Ղազախստանը և Կենտրոնական Ասիայի երկրները: Այն բնութագրվում է լայնածավալ միգրացիոն հոսքերով և կայուն աշխարհագրական կողմնորոշմամբ: Հենց այդ պետություններից է տեղի ունեցել վերջին ժամանակներում, մշտական բնակության նպատակով միգրանտների հիմնական հոսքը, և հիմա նրանք ապահովում են Ռուսաստանի և Ղազախստանի տարբեր ճյուղերը աշխատանքային միգրանտներով և Ռուսաստանի բուհերը՝ ուսուցման միգրանտներով:

Որպես միգրացիոն համակարգ ենթադրվում է մի խումբ պետություններ, փոխկապակցված համեմատաբար լայնածավալ և կայուն միգրացիոն հոսքերով, որոնք պատմական, մշակութային, տնտեսական, ժողովրդագրական և քաղաքական գործոնների արդյունք են: Միգրացիոն համակարգը հանգեցնում է կառուցվածքային ձևափոխությունների՝ միգրանտների մուտքի և ելքի պետություններում՝ վերարտադրելով միգրացիոն հոսքերի ուղղությունը և տալով այդ հոսքերին կայունություն: «Եվրասիական միգրացիոն համակարգ» տերմինը առանձնացնում է այն հատկանիշները, որոնք թույլ են տալիս բնութագրել հետխորհրդային Եվրասիան որպես միասնական միգրացիոն համակարգ¹: Դա նախկին ԽՍՀՄ երկրների միջև կայուն միգրացիոն հոսքերի առկայությունն է, ընդհանուր պատմական անցյալը և երկարատև գոյությունը մեկ պետության շրջանակներում, ձևավորված միգրացիայի համակարգի կենտրոնը (Ռուսաստան) և միգրացիայի համակարգի ձևավորվող ուղղությունը (Ղազախստան), ռուսաց լեզուն՝ որպես միգրացիայի հնարավորություն:

Հայաստանի ազգաբնակչությունը և նրա միգրացիոն հոսքերը

Հայաստանը ունի միգրացիայի երկար պատմություն: Կանոնավոր և, հիմնականում, անկանոն արտագաղթը շարունակվում է մնալ կարևոր երևույթ, որը ազդում է երկրի բոլոր կողմերի վրա: Խորհրդային Միության փլուզման և շուկայական հարաբերությունների ձևավորման սկզբից (*անցումային շրջան*) Հայաստանում եղել են մի քանի արտագաղթի հոսքեր՝ պայմանավորված տարբեր պատճառներով:

Հայաստանի մարդահամարի արդյունքները, որոնք իրականացվել են տարբեր տարիներ, թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանի բնակչության աճը զգալի էր հենց Խորհրդային Միության կազմի մեջ: Եթե ամբողջ ԽՍՀՄ մասշտաբով 1987 թվականին բնակչությունը համեմատ 1940 թվականի հետ աճել էր 45%-ով, ապա Հայաստանում՝ 2.6 անգամ (աղյուսակ 1 և գծապատկեր 1): Խորհրդային Հայաստանը առանձնանում էր բարձր ծնելիությամբ և ամենացածր մահացության մակարդակով: Նրա բնակչությունը ավելացել էր նաև արտասահմանյան հայրենակիցների հայրենադարձության և հարևան երկու հանրապետություններից ներհոսքի շնորհիվ: Եթե, համաձայն 1926 մարդահամարի, ԽՍՀՄ-ում ապրող բոլոր հայերից Հայաստանում ապրում էր 47.7%, ապա 1979 թվականի մարդահամարի համաձայն՝ գրեթե 66%:

Բնորոշ էր այն փաստը, որ չնայած նման մեծ թվով աշխատանքային ռեսուրսների մուտքի, գործազրկությունը գրեթե բացառվում էր: Այսպես, եթե ԽՍՀՄ 1987 թվականին, համեմատ 1940 թվականի հետ աշխատողների (*բանվոր և ծառայող*) թվաքանակը ավելացել էր 3.5 անգամ, ապա Հայաստանում՝ 9.3 անգամ: Հայաստանը առանձնանում էր արդյունաբերության զարգաց-

¹ Ивахнюк И.В. «Интеграция временных трудовых мигрантов в принимающих странах: методологические подходы, стратегии, акторы». Миграционные мосты в Евразии: Сборник материалов VI международной научно-практической конференции «Роль миграции в социально-экономическом и демографическом развитии посылающих и принимающих стран Евразии» / Под ред. чл.-корр. РАН, д-р экон. наук, профессора С.В. Рязанцева. – М.: Изд-во «Экон-Информ», 2014. – 594 с.

ման ամենաբարձր ցուցանիշներով, քաղաքային բնակչության աճով: Ստեղծվում էին նոր արդյունաբերական կենտրոններ, և գրեթե բոլոր շրջկենտրոնները վերածվեցին քաղաքների: Կարևոր առանձնահատկություններից էր, որ Հայաստանում առաջնային զարգանում էին արդյունաբերության այն ճյուղերը, որոնք որոշում էին գիտատեխնիկական առաջընթացը:

Սակայն, բոլոր այդ աննախադեպ ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և արդյունաբերական ձեռքբերումները հիմնականում կորցվեցին անկախության հենց առաջին տարիներին, ինչը վկայում է քաղաքային բնակչության կտրուկ անկումը: Առավել տուժեցին աղետի գոտու քաղաքները և նոր արդյունաբերական կենտրոնները: Եթե մենք բացառենք Երևանը, որտեղ բնակչությունը մնում է 1-1.1 մլն մարդու սահմաններում, ապա այլ քաղաքներում բնակչությունը գրեթե երկու անգամ կրճատվել է (աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Հայաստանի ազգաբնակչության թվաքանակի դինամիկան 1926-2014 թթ.¹

Մշտական բնակչության թվաքանակը 1000 մարդ և % հարաբերությունը				
Տարիներ	Անբողջ բնակչություն		Քաղաքային	Գյուղական
1926	881.3	այդ թվում՝	167.1	714.2
			19.0	81.0
1939	1282.3		366.4	915.9
			28.6	71.4
1959	1763		881.8	881.2
			50.0	50.0
1970	2491.9		1481.5	1010.4
			59.5	40.5
1979	3030.7		1992.5	1038.2
			65.7	34.3
1989	3448.6		2368.5	1080.1
			68.7	31.3
2001	3213.0		2066.1	1146.9
		64.3	35.7	
2011	3018.9	1911.3	1107.6	
		63.3	36.7	
2012	3026.9	1917.5	1109.4	
		63.3	36.7	
2013	3017.1	1914.1	1103.0	
		63.4	36.6	
2014	3010.6	1913.0	<u>1097.6</u>	
		63.5	36.5	


Ընդհանուր առմամբ, ժողովրդագրական իրավիճակը բնութագրող հիմնական գործոններից են բնական վերարտադրության գործընթացները և միգրացիոն հաշվեկշռը (*սալդո*): Երկու դեպքերումն անտների և դրանց միտումների տեսակետից էլ Հայաստանում ներկայումս իրավիճակը բարվոք չէ: Արտագաղթը հասել է վտանգավոր աստիճանի (գծապատկեր 1):

Ըստ Պետական միգրացիոն ծառայության փորձագիտական գնահատականների² և համաձայն սոցիոլոգիական ուսումնասիրությունների, 1988-2001 թվականների ժամանակաշրջանում Հայաստանից մեկնել է մոտ 1.1 մլն մարդ: Իսկ 2002-2007 թվականների ժամանակաշրջանում երկրից հեռանում էին տարեկան մոտավորապես 25 հազ. մարդ, ինչպես նաև մոտ 60 հազ. սեզոնային միգրանտներ:

¹ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:

² <http://smsmta.am/> ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգում ստեղծված «Միգրացիոն պետական ծառայությունը»:


Բնակչության փոփոխության դինամիկան¹



Այլ գնահատականներով².

- Վերջին չորս տարիներին՝ 2010-2013թթ., Հայաստան ժամանածների և Հայաստանից մեկնածների բացասական սալդոն տարեկան միջինում կազմել է ավելի քան 41 հազար մարդ (գծապատկեր 2), որը կազմում է 2011թ. փաստացի բնակչության 1%-1.6%-ը.
- Այդ չորս տարիների ընթացքում մեկնածների և ժամանածների տարբերության գումարային թիվը կազմել է 164.5 հազար մարդ (2011թ. փաստացի բնակչության 5.7%-ը), իսկ 2000-2013թթ. ընթացքում՝ 310 հազար մարդ (2011թ. փաստացի բնակչության 10.8%-ը):

ՀՀ միգրացիոն սալդոն և գումարային սալդոն, ՀՆԱ տարեկան աճը և գործազրկության մակարդակը, 2000-2013 թթ.³



Հայաստանում աշխատուժի սեզոնային միգրացիան սկսվել է 1960-ն թվականներից, որի պատճառը Հայաստանի տարբեր վարչական միավորների սոցիալ-տնտեսական զարգացման միջև տարբերություններն են:

1990-ական թվականներին արտագաղթը ունեցել է մեծ ազդեցություն Հայաստանի աշխատուժի առաջարկի վրա. արտագաղթը ընդգրկել է ավելի կրթված, ավելի հմուտ աշխատող-

¹ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:

² ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ. «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող գործոնների ուսումնասիրություն (հետազոտական ծրագիր)»: Երկրորդ հետազոտական ենթախումբ («ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ), Երևան, 2014:

³ ՀՀ ԱՎԾ, <http://www.armstat.am/am/?nid=126&id=08010> (գործազրկության մակարդակը)

ներին՝ լուրջ ազդեցություն ունենալով աշխատուժի մասնագիտական կառուցվածքի վրա:

Հայ միգրանտների մոտ 85%-ը մեկնում է Ռուսաստան: Նյութապես ապահով մարդիկ (ընտանիքներ) և նրանք, ովքեր ունեն արևմուտքում ձևավորված խորը արմատներով ազգականներ, մեկնում են Եվրամիության և Հյուսիսային Ամերիկայի երկրները:

Հայաստանի ազգաբնակչության միգրացիոն պատճառներից պետք է առանձնացնել տնտեսական, քաղաքական, հոգեբանական և մշակութային:

Միգրացիոն հոսքերի պատճառները¹

«Հայաստանում կյանքի որակի հետազոտություն 2013թ.» տվյալներով ընդմիջտ արտագաղթելու դիրքորոշում ունեցող Հայաստանի քաղաքացիների շրջանում առավել տարածված են եղել «տնտեսական պատճառները», 2012թ.՝ այդպիսի պատճառ է նշել արտագաղթի դիրքորոշում ունեցողների 82.4%-ը, իսկ 2013թ. նրանց թվաքանակն աճել է՝ հասնելով 88.1%-ի (զծապատկեր 3):


Հայաստանում ժողովրդագրական իրավիճակի վատթարացման վրա այս արդյունքի վտանգավորության աստիճանն առավել ակնառու է այն առումով, որ՝

- 2012թ. և 2013թ. Հայաստանի չափահաս բնակչության 50%-ը, հնարավորության դեպքում, ընդմիջտ կմեկնեն Հայաստանից դուրս բնակվելու,
- 2013թ. Հայաստանի չափահաս բնակչության 11.6%-ն այդ ուղղությամբ ինչ-որ բան էր ձեռնարկում:

Այսպիսին է տնտեսական քաղաքականության բնույթի և բովանդակության ազդեցությունը Հայաստանում ժողովրդագրական վիճակի և դրա միտումների վրա: Մենք գործ ունենք մի բարդ գլոբալ խնդրի հետ, որը պայմանավորված է աշխարհի տարբեր երկրների և տարածաշրջանների ծնելիության մակարդակի և եկամուտների միջև առաջացած ճեղքվածքով:

Գծապատկեր 3

Արտագաղթի դիրքորոշումների և դրանց պատճառների տարածվածությունը Հայաստանում 2012-2013թթ.²



¹ Հոդվածի այս մասում օգտագործված առանձին տվյալները և հարցումների արդյունքները հիմնված են հետևյալ ուսումնասիրությունների վրա:
 1) Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 2009 թվականին Երևանում հրապարակված «Միգրացիան և զարգացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն»
 2) ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2011 թվականին առաջարկված «ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրություն և դրա կանխարգելման նպատակով առաջարկությունների ներկայացում»:
 3) Հարությունյան Գ., Ժողովրդագրությունը որպես կրիտիկական ոլորտ և տեխնոլոգիաներ (հայեցակարգային մոտեցումներ), «21-րդ դար», 2015, N 1:
 4) Միգրացիա և հմտություններ. Հայաստանի ազգային զեկույց 2011/2012թթ. Հայաստանում հմտությունների, միգրացիայի և զարգացման միջև եղած կապերի հետազոտության արդյունքները Եվրոպական կրթական հիմնադրամ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012թ., հունիս:
 5) «Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ», ՀՊՏՀ, 2014թ.:
 6) Մանուկյան Ս.Ա., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2013, - IPSC «Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ», 2013թ., էջ 174
² Մանուկյան Ս.Ա., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2013, -IPSC «Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ», 2013թ., էջ 174:

Միգրացիայի որոշման հիմնական պատճառները կապված են Հայաստանում զբաղվածության հիմնախնդիրների հետ, ներառյալ թե՛ աշխատատեղերի պակասը, թե՛ արժանապատիվ ապրուստ ապահովող բավարար աշխատավարձով աշխատատեղերի պակասը, թե՛ որոշակի մասնագիտությունների հատուկ աշխատատեղերի բացակայությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջին տարիքի միգրանտներն առավել կարևորել են վարձատրության խնդիրը, մինչդեռ 21-30 տարեկան և 51 տարեկան ու բարձր տարիքի միգրանտների մեծամասնությունը որոշել է մեկնել՝ Հայաստանում աշխատանք գտնել չկարողանալու պատճառով:

Մեկնելու պատճառներից են նաև Հայաստանում զարգացման հեռանկարների բացակայությունը, բիզնեսով զբաղվելու խոչընդոտները, բարոյահոգեբանական մթնոլորտը և անկայուն աշխարհաքաղաքական իրավիճակը: Այլ հանգամանքներից նշենք՝ «խուպան գնալու» ավանդույթը: Որոշ գյուղերում, որոնցից բազմաթիվ տղամարդիկ տարիներ շարունակ մեկնում են արտերկիր, աշխատանքային միգրացիան վերածվել է ընտանիքների կենսապահովման ավանդական միջոցի:

Աշխատանքային միգրացիայի հաջորդ շարժառիթն այն է, երբ երիտասարդ տղաները ցանկանում են մեկնել հայրենի գյուղից և ապրել մշակութային ու սոցիալական ավելի աշխույժ կյանք ունեցող միջավայրում (*հնչախսին քաղաքն է*): Հայաստանից մեկնելու և արտերկրում աշխատելու որոշումը պայմանավորող հաջորդ գործոնը ներդրումներ կատարելու կամ լրացուցիչ ծախսեր կրելու անհրաժեշտությունն է (*կրթության ծախսերը, հարսանիքի ծախսերը, բնակարանի (տան) ձեռքբերումը կամ վերանորոգումը, սեփական բիզնես սկսելու ծախսերը և այլն*):

Սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները

2001-2007թթ. միջազգային տնտեսության արագ աճի ժամանակ տեղի է ունեցել արտասահմանից (*հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից*) դեպի Հայաստան ֆինանսական միջոցների ներհոսքի նշանակալի աճ: Այդ ֆինանսական հոսքերն ուղղվել են հիմնականում սպառման ոլորտ, մասամբ՝ շինարարության ոլորտ, և արդյունքում, շինարարության ծավալների աճի հետևանքով այդ տարիներին Հայաստանի ՀՆԱ տարեկան աճը բարձր է եղել 10%-ից: Տնտեսական աճի այդ տեմպերն անմիջապես իր ազդեցությունն են ունեցել գործազրկության մակարդակի վրա, որը 2001-2007թթ. ընթացքում նվազել է մոտ 10%-ով՝ 38.4%-ից մինչև 28.7%: Սակայն, այդ տարիներին տնտեսության կառուցվածքի էական արդիականացում տեղի չի ունեցել:

Նման տնտեսական զարգացումները, իրենց հերթին ուղղակի ազդեցությունն են թողել միգրացիոն գործընթացների վրա, մասնավորապես այդ տարիներին նվազել է Հայաստանից արտագաղթը: 2004-2006 թվականների ընթացքում Հայաստան ժամանածների և մեկնածների սալդոն նույնիսկ դարձել է դրական, այսինքն՝ արտագաղթը փոխարինվել է թեկուզ փոքր, սակայն ներգաղթով: Հետևաբար, արտագաղթի նվազեցման տեսակետից տնտեսության զարգացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, արժանապատիվ վարձատրությունը ունի հանգուցային նշանակություն:

Ակնհայտ է, որ ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակում, որ ձևավորվել է Հայաստանում, կարևոր նշանակություն են ստանում այն զարգացման ծրագրերը, որոնք ՀՀ կառավարությունը¹ նախատեսում է իրականացնել: Անշուշտ, դրանց արդյունավետ իրականացումը էական դրական ազդեցություն կարող է ունենալ Հայաստանի ազգաբնակչության բարոյահոգեբանական վիճակի, նրա կենսամակարդակի վրա, դրանով իսկ նպաստի ներգաղթին:

Դիտարկենք որոշ ծրագրեր: Առաջնային կարևոր է «Արդյունաբերության պետական աջակցություն ծրագիր»-ը², որի հիմնական փաստաթուղթն է «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը»: Ելնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի ապահովման հրամայականներից՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացում, որը միտված է լինելու տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը՝ արտահանման ներուժի բացահայտման և արդյունավետ իրագործման ճանապարհով: Ընդհանուր առմամբ նախատեսվում էր հետևյալ ոլորտային ռազմավարությունը՝

¹ <http://www.mineconomy.am/>

² ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրային որոշման Հավելված 1 «Արդյունաբերության պետական աջակցություն ծրագիր»:

«Կոշիկի արտադրություն», «Տեքստիլ և տրիկոտաժ», «Ադամանդագործություն», «Ոսկերչու-թյուն», «Ժամագործություն», «Կոնյակագործություն», «Գինեգործություն» և «Պեղագործություն և բիոտեխնոլոգիաներ»:

ՀՀ կառավարությունը հայտարարել է նաև գիտելիքահենք տնտեսություն կառուցելու իր երկարաժամկետ ռազմավարական նպատակի վերաբերյալ: Հիմք ընդունելով դա՝ արդյունաբերական քաղաքականության ուղղորդող տեսլականը կլինի Հայաստանը դարձնել բարձրարժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների արտադրության երկիր, որի առանցքը ստեղծագործ մարդկային կապիտալն է:

Հաջորդ ծրագիրը «ՓՄՁ զարգացման ծրագիր»-ն է, համաձայն որի «Հայաստանում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտի զարգացումը կոչված է ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ հաղորդելով տնտեսությանը նորարարական ուղղվածություն և ճկունություն»: Ինչպես նշվում է էկոնոմիկայի նախարարության կայքում, «ՓՄՁ ոլորտն իր առանձնահատկություններով և զարգացման հնարավորություններով այն անկյունաքարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա և ապահովում է զգալի սոցիալ-տնտեսական արդյունք, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացում»: Պետք է նշել, որ ՀՀ գործադիր մարմինների կողմից ընդունվել են բազմաթիվ փաստաթղթեր, ուղղված նպաստելու ՓՄՁ-ների գործունեությանը:

Այլ ծրագրերից կարելի է առանձնացնել.

- Ազատ տնտեսական գոտիներ:
- Զբոսաշրջության զարգացման ծրագիր:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ծրագիր:
- Գործարար միջավայրի բարելավման ծրագիր:

Զնայած, նշված և ՀՀ Կառավարության կողմից ընդունված այլ զարգացման ծրագրերի, Հայաստանից արտագաղթելու հիմնախնդիրը մնում է առանձնակի արդիական: Սոցիալական ոլորտի և զբաղվածության ցուցանիշները, որոնք ուղղակի կապված են Հայաստանից միգրացիոն հոսքերի հետ, մնում են մտահոգիչ (աղյուսակ 2, գծապատկեր 4):


Աղյուսակ 2

ԱՊՀ պետությունների միջին աշխատավարձը, թոշակը և գործազրկության մակարդակը

ԱՊՀ պետություններ	Միջին աշխատավարձ (ԱՄՆ դոլար)	Թոշակ (ԱՄՆ դոլար)	Գործազրկության մակարդակը տնտեսապես ակտիվ բնակչությանը, %-ով (2013)
Բելառուս	573	232.1	6.1 (2009թ.)
Ղազախստան	714	217.1	5.0- (2015թ.)
Ղրղըզստան	236	131.7	8.4
Ռուսաստան	940	306.7	5.8 (2015թ.)
Տաջիկստան	148	47.8	2.6 (2012թ.)
Ուկրաինա	409 (144 <i>նոր փոխարժեքով</i>)	186.1 (38 <i>նոր փոխարժեքով</i>)	7.0
Հայաստան	369	71.8	17.1 (2015թ.)
Վրաստան	503	94	16.7 (2013թ.)
Ադրբեջան	539	217.3	5.0
Ուզբեկստան	353	150.2	4.9
Մոլդովա	299	78.2	5.1
Թուրքմենստան	288 (2012թ.)	74	3.5 (2012թ.)

Ջբաղվածությունը և գործազրկությունը (ըստ եռամսյակների)

%-ով նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ



Սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները

Շնորհիվ տնտեսական զարգացման, 2004 և 2008 թվականների ժամանակաշրջանում ավելի քան 350 հազար մարդ կարողացան դուրս գալ աղքատությունից: Աղքատների տեսակարար կշիռը նվազեց 34.6%-ից 2004թ. մինչև 23.5%-ը 2008թ.: Ծայրահեղ աղքատությունը նվազեց ավելի արագ, 6.4%-ից 2004 թ. մինչև 3.1%-ը 2008թ.: Ինչ վերաբերում է եկամուտների անհավասարության¹, որը չափվում է Ջինիի գործակցով, այն նվազել է փոքր չափով՝ 0.395 2004 թ. մինչև 0.389 2008թ.:

Սակայն, տնտեսական ճգնաժամը խիստ բացասական ազդեց Զայաստանի տնտեսական աճի և աղքատության մակարդակի վրա: Աղքատության մակարդակը 2014 թվականին կազմեց 32%: Ըստ «Սոցիալական պատկերը Զայաստանում և աղքատությունը» զեկույցի, որը պատրաստել է ԶԶ ազգային վիճակագրական ծառայությունը, աղքատների քանակը կազմել է մոտ 967 հազ. մարդ: 2013 թվականին հանրապետության մոտավորապես ամեն երրորդ բնակիչը աղքատ էր: Նրանցից 13.3%-ը համարվում էին շատ աղքատ (402 հազ. մարդ), իսկ 2.7% (82 հազ. մարդ) ծայրահեղ աղքատ: Այդ ամենը բերում է բազմաթիվ բացասական երևույթների: Նշենք դրանցից մեկը:

Տնային տնտեսությունների եկամուտների անհավասար բաշխումը և, համապատասխանաբար, կրթության վրա մասնավոր ծախսերի անհավասար հնարավորությունները վտանգեցին կրթության համընդհանուր հասանելիության ավանդույթը, կրթության որակը: Որակյալ կրթության հասանելիության տարբերությունները հարուստների և աղքատների, գյուղական և քաղաքային վայրերի միջև զգալի են:

Բարդ սոցիալ-տնտեսական վիճակը բերում է նրան, որ միգրացիան Զայաստանից չի նվազում, և դրա հետ կապված հեռանկարները մնում են անորոշ: Դա սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների անորոշությունն է:

Տրանսֆերտներ.

Աշխատանքային միգրացիայի ուղղակի հետևանքներից պետք է նաև նշել դրամական փոխանցումներն արտերկրից, որոնք կարևոր սոցիալական և տնտեսական նշանակություն ունեն Զայաստանի համար: Մասնավորապես, մասնավոր դրամական փոխանցումները արտերկրից կարևոր են աղքատության կրճատման համար:


Համաշխարհային բանկի «Միգրացիա և դրամական փոխանցումներ» զեկույցում նշվում է, որ դրամական փոխանցումների հոսքերը դարձել են զարգացող երկրների համար արտաքին ֆինանսավորման հիմնական աղբյուրը: Ըստ նրա, Զայաստանը մտնում է առավել կախված արտաքին մասնավոր դրամական փոխանցումներից տասնյակ երկրների ցանկը: 2013 թվականի արդյունքներով Զայաստան ուղարկվող մասնավոր դրամական փոխանցումների ծավալը

¹ 1990-ական թվականների սկզբից Զայաստանում ձևավորվել և պահպանվում է մինչ այսօր եկամտային անհավասարությանը ամենաբարձր մակարդակը, որը գրանցվել է անցումային երկրներում նմանատիպ մեկ շնչի եկամուտով:

կազմել է ՀՆԱ-ի 21%-ը, դա 9-րդ ցուցանիշն է: Այդ ցանկում, առաջին տեղում է Արևելյան Տիմորը, որի ցուցանիշը երկու անգամ գերազանցում է ՀՆԱ-ն: Այդ ցուցակում Հայաստանից առջև են Ղրղզստանը (31.5% ՀՆԱ-ի), Մոլդովան (24,9%), Լեսոտոն (24.4%), Սամոան (23.8%) և Հաիթի (21.1%): Հայաստանից հետո ցուցակում են Գամբիան (19.8%), Լիբերիան (18.5%) և Լիբանանը (17%)¹ (գծապատկեր 5):

Գծապատկեր 5

Առավել կախված փոխանցումներից պետություններ



Ի թիվս այլ երկրների, դրամական միջոցների հոսքերի ծավալը Ռուսաստանից դեպի Հայաստան ամենամեծն է: Ռուսաստանից տրանսֆերտների ծավալի բաժինը մասնավոր տրանսֆերտների ընդհանուր ծավալում 2014թ. կազմել է 82.9%: Ռուսական ռուբլու կտրուկ արժեզրկման արդյունքում փոխանցումների արժեքային ծավալը 2014 թվականի վերջում զգալիորեն նվազել է, որը նաև ազդել է ազգային արժույթի փոխարժեքի վրա: Այսպես, մասնավոր փոխանցումների ծավալը 2014թ., որոնք գալիս են Ռուսաստանից Հայաստան այդ երկրի բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով ոչ առևտրային նպատակներով նվազել է, 10.7%-ով կամ 172,4 մլն ԱՄՆ դոլար, կազմելով մոտ 1,434.2 մլն ԱՄՆ դոլար: Ռուսաստանից դեպի Հայաստան մասնավոր տրանսֆերտների առաջին էական անկումն արձանագրվեց 2009 թվականին: Հայաստանի տնտեսությունը կրճատվեց 14%-ով՝ Ռուսաստանից դեպի հանրապետություն տրանսֆերտների 34% և համախառն տրանսֆերտների 31.3% նվազման պայմաններում:

Միգրացիոն հոսքերի նման ուսումնասիրությունը կարևոր է այն տեսակետից, որ թույլ է տալիս ձևավորել տնտեսամաթեմատիկական մոդելավորման ժամանակ օգտագործվող փոփոխականները և հստակ ներկայացնել նրանց կապերը:

¹ <http://iori.hse.ru/news/135072718.html>
<http://www.worldbank.org/en/news/press-release/2014/10/06/remittances-developing-countries-five-percent-conflict-related-migration-all-time-high-wb-report>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻԳՐԱՅԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌՈՐԵՐՏ ԶԱՄԱԼՅԱՆ, *ասպիրանտ*

*Նալյասարանի պետական
տնտեսագիտական համալսարան*

Համառոտագիր

Աշխատուժի և բնակչության միգրացիան, ոչ միայն տնտեսական, այլ նաև բարդ քաղաքական և սոցիալ-տնտեսական երևույթ է: Այն էապես ազդում է աշխատուժի կառուցվածքի վրա ինչպես այն երկրների, որտեղից արտագաղթում են միգրանտները, այնպես էլ ընդունող երկրների համար: Այն ստեղծում է նոր իրավիճակ աշխատաշուկայում, բերում է էական փոփոխությունների հասարակական և քաղաքական կյանքում: Այս տեսանկյունից, հողվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետության միգրացիոն հոսքերը և նրա սոցիալ-տնտեսական բնութագրերը և որոշակի առանձնահատկությունները:

Բանալի բառեր. միգրացիա, տնտեսական աճ, տրանսֆերտներ, սոցիալ-տնտեսական քաղաքականություն, գործազրկություն, ֆինանսատնտեսական ճգնաժամ, արտագաղթ, մրցունակություն, գործարար միջավայր

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ РА

РОБЕРТ КАМАЛЯН, *аспирант*

*Армянский государственный
экономический университет*

Аннотация

Миграция рабочей силы и населения – это не только экономическое, но и сложное политическое и социально-экономическое явление, оказывающее значительное влияние на состав трудовых ресурсов как стран, откуда эмигрируют мигранты, так и для принимающих стран. Миграция создает новую ситуацию на рынках труда, привносит немало изменений в социальную и политическую жизнь многих стран. С этой точки зрения в статье изучаются миграционные потоки населения Республики Армения, а также его социально-экономические характеристики и некоторые особенности.

Ключевые слова: миграция, экономический рост, трансферты, социально-экономическая политика, безработица, финансово-экономический кризис, эмиграция, конкурентоспособность, деловая среда.

SOCIO-ECONOMIC CHARACTERISTICS OF MIGRATION PROCESSES OF THE REPUBLIC OF ARMENIA

ROBERT KAMALYAN, *Ph.D. Student*

Armenian State University of Economics

Abstract

Labor and population migration is not only an economic, but also a complex political and social-economic phenomenon. It significantly affects the labor force structure of both labor exporter and migrant recipient nations. It creates new reality in the labor market, entailing significant shifts in the social and political arena. From this point of view, the article discusses the migration flows of the Republic of Armenia and their respective socio-economic characteristics and some peculiarities.

Keywords: Migration, economic growth, remittances, socio-economic policy, unemployment, financial and economic crisis, emigration, competitiveness, business climate.

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՌՈՔԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ, *պ. գ. դ., պրոֆեսոր*

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող*

ԱՐՏԱՎԱԶԴ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, *պ. գ. թ., դոցենտ*,

*Մ Գ Ա Մ տնտեսագիտության և կառավարման
անբիռնի վարիչ*

ԲԱԽՇԻ ԻՇԽԱՆՅԱՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ

XX դարասկզբի հայ միտքը նշանավորվում է նոր շահեկան ուսումնասիրություններով: Ժամանակի տնտեսագիտական մտքի հետ ունեցած առնչությունների մեջ ընդլայնվում են տնտեսական կյանքի ճանաչողության տեսապատմական սահմանները, դրանք հարստացնելով նոր հասկացություններով, նպաստելով տնտեսագիտության պրոֆեսիոնալ մտավոր մակարդակի բարձրացմանը: Այդ սերնդի հիշարժան անուններից է Բախճի Իշխանյանը: Խորհրդային հասարակագիտությունը նրա աշխատություններն, ըստ էության, դուրս է թողել ժամանակաշրջանի հայ մտավոր պատմությունից, լավագույն դեպքում նրա հայացքները ենթարկելով հակադրականության սկզբունքին:

* *
*

1912-ին Բեռլինում լույս է տեսնում Բ. Իշխանյանի «Օտարերկրացիների գործունեության նշանակությունը և պատմությունը Ռուսաստանում» մենագրությունը, որի համար նա ստացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան¹: Հարցի դրվածքը ինքնին արժանի է ուշադրության, կապված XIX դարում ռուսական իրականության մեջ տեղ գտած հասարակահայեցության հետ, թե արևմտյան տնտեսական հարաբերություններն արմատավորվում են արհեստականորեն և անհեռանկար են, ուստի Ռուսաստանին անհրաժեշտ է տնտեսության այնպիսի ուղի, որը շրջանցում է Արևմուտքի սոցիալական հետագիծը: Մինչ «օտարերկրացիների գործունեության նշանակության փաստացի հիմնավորմանը», Իշխանյանը մի ընդհանուր պատկեր է ուրվագծում օտարերկրացիների հոսքերի պատճառների և հետևանքների վերաբերյալ: Բնակչության հոսքերը օտար երկրների համար ունեցած նշանակության առումներով ենթակա են չափանիշների հետևյալ նստվածքներին. ակտիվ, որի դրդապատճառները «գործնական-նյութական» են և հետամտում են որոշակի արդյունքների արտադրությամբ զբաղվելը, շահույթ ստանալը և առևտրային գործունեությունը, ու պասիվ, երբ նպատակը նոր գիտելիքների յուրացումն է հետագայում իրենց հայրենիքում կիրառելու համար: Այսինքն, մեկն առաքելություն ունի տնտեսապես հետամնաց երկրում արմատավորելու նորը, մյուսն՝ այն ընդօրինակելու: Այս իմաստով «Հնագույն մշակույթի բնօրրանը՝ Արևմտյան Եվրոպան, մշտապես եղել է ակտիվ տարրի անսպառ աղբյուր, որը հնագույն ժամանակներից ի վեր երկրագնդով մեկ տարածել ու սերմանել է իր արժեքները: Մղվելով տնտեսական և քաղաքական շահերով՝ աշխարհագրորեն փոքրիկ Եվրոպան հազարամյակներ շարունակ տարված է եղել աշխարհին իշխելու քաղաքականությամբ: Անդրովկիանոսյան գաղութային գոյացությունները կապիտալիստական տնտեսության և արտադրության ձևի էքսպանսիայի անխուսափելի հետևանքն են: Մի կողմից արդյունաբերական

¹ Աշխատության բովանդակությունն ընդհանուր գծերի մեջ առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

մասսայական ապրանքների լճացումը, մյուս կողմից մարդկային կադրերի (առևտրի, տեխնիկական և այլ ոլորտների) մատակարարման հագեցած շուկան, ստիպեցին ամենայն վճռակա-նությամբ փնտրել ապահով իրացման շուկաներ՝ պահանջարկի նոր հնարավորություններ Յին աշխարհի սահմաններից դուրս»¹: Պատճառների ու պայմանավորող գործոնների հենց այդ դրսևորումներն ենք տեսնում եվրոպական մայրցամաքից անգլոսաքսոնական, գերմանական, ռոմանական տարրերի մասսայական արտագաղթն Ամերիկա, իբրև հետևանք ունենալով երկրի «սրընթաց վերելքը. «կապիտալիզմի զավթողական քաղաքականությունը որպես բնական անհրաժեշտություն, իր հետ բերում է նաև կապիտալիզմի բարձր մշակույթի պտուղները»: Ինչպես հայտնի է, եվրոպական երկրներն իրենց զարգացման ընթացքում հաճախ միմյանցից ընդօրինակել կամ փոխառել են տնտեսական կազմակերպման ձևերը: Օրինակ, XVII դարի անգլիական մերկանտիլիստները նախանձախնդիր էին Յոլանդիայի ծովային հզորության նկատմամբ, որը լինելով առևտրի ընդլայնման կարևոր պայման, դարձել էր երկրի հարստացման հիմնական միջոցներից մեկը, Յոլանդիան օգտագործում էր Իսպանիայի և Իտալիայի փորձը, Ֆրանսիան՝ Անգլիայի և Յոլանդիայի և այլն: Յարքը Ռուսաստանի դեպքում Բ.Իշխանյանը պատկերացնում է հետևյալ կերպ. «Պատմական զարգացման ձևով Ռուսական կայսրությունը եվրոպական պետությունների շրջանակում իր ուրույն տեղն է զբաղեցնում: Ոչ մի այլ միապետություն եվրոպայում տնտեսական ուժերին ժամանակին այդքան չի պաշտպանել և ամեն տեսակի արհեստական միջոցներով չի խրախուսել ու խթանել, ինչպես որ դա Ռուսաստանում է եղել: Արևմտաեվրոպական երկրները, փոքր-ինչ պակաս կամ ավելի տարբերությամբ, գտնվում են զարգացման միևնույն մակարդակի վրա: Նրանք բոլորն էլ հաստատական քայլերով առաջ էին շարժվում միևնույն մշակութային ուղիով, և քիչ թե շատ տարբերությամբ, իրենց ներսում ունեին տնտեսական շրջանառության համար անհրաժեշտ սեփական արտադրողական ուժերը: Այդ իսկ պատճառով նրանք կառավարության կողմից տնտեսական առաջընթացը խթանող միջոցառումների կարիքն այնքան էլ չունեին:

Պատկերն այլ էր Ռուսաստանում: Այն բոլոր առումներով հետ էր մնացել և մոնոլոլների երկարատև տիրապետության պատճառով վերածվել էր ասիական ստրկատիրական պետու-թյան: Եվ հիմա, այդ տիրապետությունից ազատագրվելուց հետո, ցարական տիրապետությունը կանգնած էր վճռորոշ ընտրության առաջ՝ կամ չինական պարսպով իրեն պատել, որ արևմուտ-քից ոչ մի Ադամսոն ոտք չդնի ռուսական «սուրբ» հողի վրա, կամ էլ դռներն ու դարպասները լայն բացել օտարների՝ թարմ և ստեղծարար ուժերի առաջ:

Ցարական կառավարությունն ընտրեց երկրորդ ուղին:

...Ռուսական կայսրության եվրոպականացման անհրաժեշտությունը ցարերի աչքում ոչ թե ժամանակի համապարփակ և բովանդակալից մշակութային հարց էր, այլև զուտ իշխանությունը պահելու խնդիր ...ռազմական հզորության պահպանումը և դրանով պայմանավորված քաղաքա-կան դիրքի հաստատումը եվրոպական տերությունների շարքում»²: Այս հայացքը Բ. Իշխանյանին ներկայանում է որպես միակ իրողությունը, որով առաջնորդվում էին ռուսական իշխանությունները՝ կապված երկրի եվրոպականացման ձեռնարկումների հետ: Իսկ հովանավորչական միջոցա-ռումներն առաջին հերթին ուղղված էին իրականացնելու պետության կարիքների ու պատվեր-ների կատարմանը, այլ ոչ թե բխում էին բնակչության գնողունակության ու կենսամակարդակի բարձրացման դրդիչներից: Արդյունքում ռուսական բանակն ավելի արագ եվրոպականացվեց, իսկ երկիրը տեղ զբաղեցրեց եվրոպական տերությունների առաջին շարքերում: Բ.Իշխանյանը բազմաթիվ հեղինակներից վկայակոչումներ է կատարում, համաձայն որոնց դեռևս XIV դարից սկսած գերմանական հանգալական միությունը առևտրական ակտիվ կապերի մեջ էր Նովգորոդի և Կիևի առևտրականների հետ: Իսկ մոնոլոլական տիրապետությունից Ռուսաստանի ազատ-վելուց հետո՝ Իվան III ցարի և, հատկապես, Իվան Ահեղի գահակալության ժամանակաշրջանում ակտիվ միջոցառումներ էին իրականացվում տարբեր եվրոպական երկրներից առաջին հերթին զինագործների և արհեստավորների, քաղաքացիական մասնագիտությունների մասնագետներին «հավաքագրելու» և Ռուսաստանում արտոնյալ պայմաններով գործունեություն իրականացնելու

¹ B.Ischanian, Wesen und Geschichte des Ausländerturns in Rubiand, Berlin, 1912, էջ 8.

² B.Ischanian, Wesen und Geschichte ..., էջ 12.

համար: Եվրոպական տարրերի «ներմուծման» այդ ցանկությունը, որը կայսրության եվրոպականացման թույլ սկիզբն էր, Ռուսաստանում շարունակվել է նաև հաջորդ դարերի ընթացքում և, հատկապես, Պետրոս Առաջինի գահակալության ժամանակ:

Բ.Իշխանյանը նրա նորոգողական քաղաքականությունը բնութագրում է ամենաբարձր ներբողներով՝ որպես «Ռուսաստանի մեծն բարեփոխիչի», երկրի «պատմության մեջ պետական մակարդակով «սուրբ» Ռուսաստանի եվրոպականացման ձգտումների աննախադեպ մարմնավորողի», մի գործչի, որը «Արևելքում սկիզբ դրեց մի նոր դարաշրջանի՝ երիտասարդ ազգային պետության վերածննդի դարաշրջանի», գիտակցելով, որ տնտեսական վերելքի իրականացման առաջին պայմանը կարելի է «միայն Արևմուտքից սպասել» և այլն: Արևմտյան գրեթե բոլոր երկրներից և, հատկապես, Գերմանիայից հրավիրվեցին մասնագետներ, որոնք ոչ միայն կոչված էին նպաստելու երկրի տնտեսական ու ռազմական հզորությանը, այլ նաև «իր ժողովրդին ավելի «հղկված» դարձնելու համար: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում օտարերկրյա ձեռնարկատերերին և մասնագետներին տրվող արտոնությունները.

- ազատ մուտք ու ելք Ռուսաստան և Ռուսաստանից՝ վերջինս առանց հարկային պահումների,
- իրենց ֆաբրիկաներում արտադրված ապրանքների անմաքս վաճառք որոշակի ժամանակահատվածի ընթացքում,
- անհրաժեշտ հումքի և աշխատանքային գործիքների ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտասահմանից անմաքս գնելու իրավունք,
- նրանք ազատվում են բոլոր տեսակի տուրքերից, ծառայությունների և տան վարձերից, և ոչ ոքի չեն ենթարկվում, բացի Արտադրական խորհրդից, որը կոչված է հարկ եղած դեպքում նրանց օգնել և պաշտպանել,
- Ռուսաստան ժամանելուն պես նրանց պետք է տրամադրեն արդեն իսկ պատրաստի բնակարաններ,
- Մի քանի տարի շարունակ պետությունից ստանում էին դրամական փոխատվություններ:

Ռուսաստան գալու պատրաստակամություն հայտնած օտարերկրացիներին նույնիսկ խոսք տրվեց սեփական դատարան՝ հռոմեական և եվրոպական իրավունքի համաձայն:

Ըստ էության դա մեծ ձեռնարկատիրության փայլուն դարաշրջանի սկիզբն էր Ռուսաստանում փոքր և էժան միջոցներով¹: Յենց այս իմաստով է Տուգան Բարանովսկին նկատում, թե. «Այսպիսով, առևտրական կապիտալը շատ մեծ դեր ուներ արդեն Մոսկովյան Ռուսիայում: Ընդհակառակը, արդյունաբերության մեջ ամենուրեք իշխում էր մանր արտադրությունը: Եթե հաշվի չառնենք օտարերկրացիների կողմից և հազվադեպ հարուստ բոյարների կողմից կառավարության աջակցությամբ գործարաններ հիմնելու առանձին փորձերը XVI և XVII դարերում, ապա կարելի է ասել, որ մինչայոտրյան Ռուսաստանը բոլորովին չի ունեցել գործարանային արտադրություն: Մեզ մոտ, ինչպես և մյուս երկրներում, առևտրական կապիտալիզմը նախորդել է արդյունաբերական կապիտալիզմին»²: Այն զբաղված էր շրջանառության ոլորտում և նրա գլխավոր գործառույթն էր մանր արտադրողների արտադրած արդյունքների իրացումը, որն ապահովում էր մեծ եկամուտներ և շահագրգռված չէր փոխելու իր կացութեանը՝ փոխակերպվելու արդյունաբերականի: Իսկ այն, որ կառավարության անմիջական մասնակցությամբ հիմնվում էին խոշոր արտադրություններ «միանգամայն հակադիր էր ժողովրդական բոլոր սովորույթներին և կյանքի ձևերին», ծայր տալով այն հայեցողությանը, թե Պետրոս Առաջինը երկրի արդյունաբերության զարգացումը տարավ կեղծ ուղիով, նրան տալով «արհեստական» բնույթ (Կորսակ): Չի կարելի ասել, թե Բ.Իշխանյանն ամբողջությամբ հակված էր «ներմուծվող» կապիտալիզմի տեսակետին, սակայն նրա հայացքներում այդպիսի շերտի առկայությունը տեսանելի է: Ուստի հարցի այդպիսի դրվածքի վերաբերյալ տեղին է վկայակոչել Տ.Բարանովսկու տեսակետը ելակետային որոշակի դրույթների վերաբերյալ: Տնտեսագետը փաստարկի էության բացահայտման համար գրում է, թե բնական կարգի հակադրումը արհեստական կարգին իր թելերով կապվում է XVIII դարի ֆիզիոկրատների ուսմունքի հետ: Վերջիններիս կարծիքով գոյություն ունի իրերի

¹ B. Ischanian, Wesen und Geschichte ..., էջ 24:

² М.Туган-Барановский, Русская фабрика в прошлом и настоящем, т.1, Историческое развитие русской фабрики, М.: 1938, с.8.

բնական կարգ, որին կարելի է հասնել այն ժամանակ, եթե պետությունը հրաժարվի քաղաքացիների մասնավոր կյանքը ղեկավարելուց, ընձեռելով լրիվ ազատություն նրանց մասնավոր գործունեության մեջ: Դա այն կարգն է, որը համապատասխանում է «laisser faire, laisser passer» սկզբունքին և նպատակ ունի կապիտալիզմի զարգացումն ազատել միջնադարյան հաստատությունների կապանքներից: Այստեղ իսկ նա վկայակոչում է Կ.Մարքսի այն միտքը, թե տնտեսագետները հույժ յուրահատուկ դատողություններ են անում: Նրանց մոտ առկա է երկու կարգի հաստատություններ՝ արհեստական և բնական: Ֆեոդալիզմի հաստատությունները էությամբ արհեստական հասկացություններ են, բուրժուազիայի հաստատությունները՝ բնական: Երբ տնտեսագետներն ասում են, թե գոյություն ունեցող հարաբերությունները՝ բուրժուական արտադրության հարաբերությունները բնական են, ապա դրանով ասում են, թե դրանք այնպիսի հարաբերություններ են, որոնց ժամանակ հարստության արտադրությունը և արտադրողական ուժերի զարգացումը տեղի է ունենում բնական օրենքների համաձայն: Դրանք մշտնջենական են բոլոր ժամանակների համար, որոնք պետք է կառավարեն հասարակությունը: Այլ խոսքերով՝ նախկինում պատմություն կար, իսկ այժմ՝ ոչ¹: Յեղիմակի կարծիքով և՛ հայրենական, և՛ արևմտյան տնտեսագետները տուրք են տալիս հասարակական հաստատությունների սահմանազատման վերաբերյալ վերը նշված նախապաշարմունքին, երբ համայնքը, արտելը, տնայնագործական արտադրությունը Ռուսաստանի համար համարում են բնական, իսկ կապիտալիստական հաստատությունները արհեստական: Այսինքն, այն ինչ «Արևմուտքի հետամնաց տնտեսագետները կոչում են արհեստական, Արևելքի հետամնաց տնտեսագետները համարում են բնական և ընդհակառակը»: Մինչդեռ ամբողջ հարցը նրանում է, որ երևույթները ճիշտ մեկնաբանություն չեն ստանում ոչ առաջին և ոչ էլ երկրորդ հայեցողյան մեջ: Եվ դա ամենայն հավանականությամբ այն փաստարկով պայմանավորված, որպես թե արդյունաբերության զարգացումը Ռուսաստանում ընթացել է պետության աջակցությամբ և հնարավորությամբ: Եվ իսկապես, կապիտալիզմի զարգացման համաշխարհային գործընթացը բոլոր երկրներում տեղի է ունեցել հենց այդ ճանապարհով: Դա մերկանտիլիզմի տնտեսական քաղաքականության բնորոշ գծերից է և Պետրոս Առաջինի արդյունաբերության զարգացման աջակցությունը ենթակա է տեղակայելու այդ ուղղության սահմաններում: Ինչպես նշվում է ռուս տնտեսագիտական մտքի բազմահատորյակում, ռուս ժողովուրդը ի դեմս Պետրոս Առաջինի, ունեցել է ականավոր տնտեսագետի, որի բազմաշերտ գործունեությունն ուղղված էր Ռուսաստանի տնտեսական հետամնացության հաղթահարմանը, առևտրի, գյուղատնտեսության, ջրային տրանսպորտի զարգացմանն ու ֆինանսական համակարգի ամրապնդմանը²: Բ.Իշխանյանը նրա պատմական առաքելությունը տեսնում էր հենց դրանում. Եվրոպական Արևելքի մեծն ռեֆորմատորը բնավ էլ ռուսատյաց չէր կամ կուրորեն նվիրված «եվրոպացիների ընկերը»: Ընդհակառակը, նա ռուսական իշխանական տան առաջին, լիովին գիտակից, եվրոպական իմաստով լուսավորյալ ազգայնականն էր: Նա մեծ խնամքով պետության իշխանության ռուսական ազգային առանձնահատկությունն ամրագրեց ռուսների ձեռքում: Ռուսաստանում արևմտաեվրոպացի օտարերկրացիների մեջ նա տեսնում էր գիտական լուսավորության սոսկ ժամանակավոր, զորեղ կողմների, դա մշակութային դաստիարակության և ուսուցման արդյունավետ առաքելություն էր: Շեշտելով Պետրոս Առաջինի պատմական անհատականության դերը, Բ.Իշխանյանը վկայակոչում է նրա խոսքերը, թե «պատմությունը բոլոր գիտությունների բնօրրան է համարում Յուրաստանը, այնտեղից դրանք անցել են Իտալիա, Իտալիայից տարածվեցին մնացած Եվրոպայով մեկ, սակայն մեր նախնիների անտեղյակության պատճառով դրանք մինչև մեզ չհասան: Այժմ արդեն մեր հերթն է գալիս: Ինձ թվում է, որ ժամանակի հետ գիտությունները կլքեն իրենց կեցավայրերը Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, կգան մեզ մոտ և, վերջապես, կվերադառնան իրենց երբեմնի հայրենիք Յուրաստան: Յուրասանք, որ գուցե մեկ դարում մենք ամոթով կթողնենք մյուս կրթված երկրներին և վեր կհանենք ռուսական անունը փառքի բարձրագույն աստիճանի վրա»³:

¹ М.Туган-Барановский, *Ազվ.աշխ.*, էջ 10:
² История русской экономической мысли, т. 1, ч. I, М., 1955, с. 303.
³ В.Исchanian, *Wesen und Geschichte ...*, էջ 24:

Պետրոս Առաջինի մահից հետո երկիրը տնօրինում էր նրա ջանքերով ստեղծված ավելի քան 230 պետական և մասնավոր գործարանների: Օտարերկրացիները բարձր պաշտոններ էին զբաղեցնում ռուսական արքունիքում, «կառավարման մեխանիզմը կամ ռուսական կայսրության ղեկավարները եվրոպականացվում էր», ինչը հաճախ դժգոհությունների և հակասությունների պատճառ էր դառնում ցարի և ազգայնական զգացմունքներով տոգորված ազնվականության միջև: Վերջիններս փորձում էին անխախտ պահել ավանդականը, բայց երկակի էր նաև Պետրոս Առաջինի նորոգողական գործունեությունը: Ռուս հայտնի բանաստեղծ Ա.Ս.Պուշկինը, որը լավատեղյակ էր արևմտյան հասարակագիտական ուսմունքներին, հենց այդ էր շեշտում Պետրոս Առաջինի գործունեության մեջ և մի մասով ուղղված ապագային, մի այլ մասով ճորտատիրության պահպանման հետահայաց բնույթը. «Առաջինները ընդարձակ, բարյացակամության և իմաստության խելքի արդյունքների էությունն են, երկրորդները՝ ոչ սակավ դաժան են, ինքնահաճ և թվում է գրված են մտրակով: Առաջինները հավերժության, կամ ծայրագույն դեպքում ապագայի համար են, երկրորդները դուրս են եկել անհնազանդ, ինքնակալ կալվածատիրոջից»¹:

Եվ բնավ նրա պատմական դերը չի կարելի գնահատել Ռուսաստանում կապիտալիստական արտադրություն սերմանողի տեսանկյունից: Վերջինիս համար Ռուսաստանում բացակայում էր գլխավոր պայմանը՝ ազատ բանվորական դասակարգի առկայությունը, գյուղական ամբողջ բնակչությունը գտնվում էր ճորտային կախվածության մեջ՝ մի մասը պետության, մյուսը՝ ազնվականության, իսկ քաղաքային բնակչությունը սակավ էր և նշանակալից չափով նույն ճորտային վիճակում²:

Բ.Իշխանյանը մի ընդհանրություն է գծում Պետրոս Առաջինի տիրակալության և Եկատերինա Երկրորդի տիրակալության ժամանակների միջև նորաբնակեցման քաղաքականության առումով: Նրանք երկուսն էլ երկրի «ժամանակային օբյեկտիվ կարիքների սուբյեկտիվ մարմնացումներն էին», եվրոպական ոգու պետական ու տնտեսական քաղաքականության երկրպագուները՝ Պետրոս Առաջինը խորհրդական ունենալով Լայբնիցին, Եկատերինա Երկրորդը՝ էնցիկլոպեդիստներին:

Մի ճեղքվածք առկա էր զարգացող արդյունաբերության ու մեծածախ առևտրի և գյուղատնտեսության միջև, որը փորձ էր արվում լուծելու ներգաղթի՝ ռուս գյուղացիական համայնքներում Արևմուտքից ջանասեր ու արդյունավետ տարրերի ներգաղթի միջոցով, որոնք ֆունկցիա ունեին նոր գյուղատնտեսական գիտելիքների ու արդյունաբերության տարածումն իրենց ենթակայների շրջանում: Ահա թե ինչ պայմաններ ու արտոնություններ էր խոստանում 1763թ. հուլիսի 22-ի Եկատերինա Երկրորդ կայսրուհու հրամանագիրը Ռուսաստան եկող օտարերկրացիների համար.

- դավանանքի ազատություն և պետության կողմից նրանց եկեղեցիների սուբսիդավորում,
- ընդմիջտ ազատում զինվորական ծառայությունից և հասարակական աշխատանքների կատարումից,
- որոշակի տարիների ընթացքում բոլոր տեսակի հարկերից ազատում, որից հետո, սակայն նրանք պետք է վճարեն այն ստանդարտ հարկերը, որոնք վճարում էին ռուս գյուղացիները,
- ինքնավարության ադմինիստրատիվ և ոստիկանական կառավարման հարցերում հատուկ ստեղծված ատյանի ենթակայություն: Այդ ինքնավարություններին նույնիսկ իրավունք էր վերապահվում որոշակի սահմանափակումներով և վերը նշված ատյանի թույլտվությամբ ընդհանուր վարկեր վերցնել, որոնք պետք է ծառայեին գաղութի զարգացմանը,
- սեփական դատական իրավասությունները միմյանց միջև վիճելի հարցերի դեպքում³ և այլն:

Բ.Իշխանյանը պատմագիտական տարբեր աղբյուրներից տվյալներ է բերում տարբեր տարիների օտարերկրացիների ներհոսքի և Ռուսաստանում դրանց տարբեր տարածքներում գաղութների ստեղծման մասին:

Սակայն Եկատերինա II-ի տնտեսական քաղաքականությունն ուղղված էր ոչ միայն ագրարային ոլորտի զարգացմանը, ագրոկոլտուրայի նոր մշակույթի ձևավորմանը, այլ նաև քաղաքային

¹ Стів А.Н. Толстой, Петр Первый, М, 1985 с. 19.

² М.Туган-Барановский, Եզվ.աշխ., էջ 21:

³ В.Исchanian, Wesen und Geschichte ..., էջ 31:

արիեստագործական արդյունաբերության առաջընթացին: Ավելին, Բ.Իշխանյանը համաձայնում է Տուգան-Բարանովսկու այն մտքին, որ ռուսական «խոշոր արտադրությունը ընդհուպ մինչև Եկատերինյան զարգանում էր ծայրաստիճան դանդաղ, և միայն այդ ժամանակից սկսած զարգացումը սկսեց արագ ընթանալ: Եկատերինյայի գահ բարձրանալու ժամանակ (1762-ին) հաշվվում էր 984 ֆաբրիկաներ և գործարաններ (չհաշված լեռնային), նրա մահվան տարում՝ 3161: Այսինքն 34 տարվա գահակալության արդյունքում ավելացել են ավելի քան 2000 ֆաբրիկաներ և գործարաններ:

Բ.Իշխանյանը ամենատարբեր հեղինակներից (Յաքոբուսկո, Բ.Բրանտ, Ա.Ֆեյսներ, Ֆ.Շուլցե-Գեվերնից, Դ.Վալաս, Ա.Վելիցին, Գ.Շնոլեր, Ռ. Լյուքսեմբուրգ և ուրիշներ) կատարում է վկայակոչումներ, ցույց տալով, որ ռուս տիրակալների նորաբնակեցման քաղաքականությունը շարունակվել է նաև ամբողջ հետագա ժամանակաշրջանում:

Օտարերկրացիների երկրի եվրոպականացման առաքելության ակնկալիքները պետրոսյան ժամանակներից սկսած միանշանակ չէր ընդունվում հասարակության տարբեր շերտերի կողմից. «Յուրաքանչյուր պատմական ժամանակահատվածում... հատկապես 18-րդ դարի 30-50-ական թվականներին, երբ ամբողջ կառավարման մեխանիզմի բարձր պաշտոնները օտարերկրացիներն էին զբաղեցնում, «իսկական ռուս» ազնվականները «իսկական ուղղափառ» հոգևորականների հետ միասին, որպես իրենց «վտանգված կարգավիճակի շահերի ներկայացուցիչների, կազմել էին թշնամական ճամբար իշխող օտարերկրացիների դեմ: Գաղութացման հաջորդ փուլում՝ 18-րդ դարի երկրորդ կեսից մինչև 19-րդ դարի վերջերը, որպես իրենց վտանգված շահերի ներկայացուցիչների հանդես եկան «պոմեշչիկները» (կալվածատերերը)՝ իրենց գաղափարական կողմնակիցներով: Դրա պատճառները և՛ տնտեսական էին, և՛ քաղաքական: Եթե ռուսական մտայնության ազատական թևը դրական վերաբերմունք ուներ օտարերկրացիների և, հատկապես, գերմանացիների նկատմամբ, որոնց մուտքը բերում էր ռացիոնալ հողագործության և արիեստագործության սկզբունքների՝ տնտեսական նոր մշակույթի արմատավորման, ապա պահպանողականությունը գտնում էր, թե Ռուսաստանը նրանց համար լուրջ հոլմքի աղբյուր է, որ դա «Ռուսաստանի եվրոպականացում է առանց ռուսների», որ դրանով միայն վտանգվում է երկրի պետական ամբողջականությունը, որ անհրաժեշտ է սահմանափակել նրանց մուտքը և արգելել հողերի ձեռքբերման տրված արտոնությունները և այլն: Անդրադառնալով այս կարգի քննադատական հողվածների արժարժումներին Բ.Իշխանյանը կատարում է մի էական հարցադրում, թե արդյո՞ք նրանք ի վիճակի էին ռուսական կառավարության սկզբնական հույսերն արդարացնել. «Այս հարցի պատասխանը սերտ տրամաբանական կապի մեջ է մեկ այլ հարցի հետ՝ արդյո՞ք ստեղծված էին այն անհրաժեշտ օբյեկտիվ պայմանները, որոնք պետք է նպաստեին ներգաղթյալների ստեղծարար գործունեությանը՝ նրանց արտադրողական ուժերը ի շահ հանրության օգտագործելու համար: Այստեղ է, որ Բ.Իշխանյանը շեշտելով ռուս գյուղացիների վրա գերմանացի ներգաղթյալների «քաղաքակրթող ազդեցությունը», նեղ սուբյեկտիվիստական գնահատումների փոխարեն, երևույթը դիտում է խոր կապակցությունների մեջ: Ներգաղթյալների տնտեսամշակութային առաքելությունը սպասվածի չափով հնարավոր չէրավ իրականացնել, և «Այս բացթողման մեղավորությունը, սակայն ներգաղթողներին չէ, այլ երկրում իշխող համակարգին, այն ժամանակվա սոցիալական կառուցվածքին, կարճ ասած երկրի օբյեկտիվ պայմաններին: 1764-1861թթ. ամբողջ մի դար, այսինքն նորաբնակեցման սկզբից մինչև ճորտատիրության վերացումը, Ռուսաստանում օտարերկրյա գաղութացման տենդագին փուլն էր: Ինչպե՞ս կարող էր ազատ ու արտոնյալ ներգաղթյալը այս հարյուր տարվա ընթացքում ամբողջությամբ տրվել իր ռուս հարևաններին, եթե վերջիններս անազատ ճորտեր էին: Ինչպե՞ս կարող էին կարիք ունեցող ռուս գյուղացիները հնուտ գերմանացի ներգաղթյալների մոտ սովորել և նրանց կրկնօրինակել, եթե նրանք իրավունք չունեին սեփական նախաձեռնությամբ որևէ բան անել, եթե նրանք չէին իրենց մշակած հողի տերը, այլ միայն իրավազուրկ հարկադիր աշխատողներ էին՝ գտնվելով ագրարային արիստոկրատիայի ճնշման տակ:

Նույնիսկ գյուղացիների ազատագրումից հետո այս առումով էական փոփոխություններ չեղան»¹:

Չենց վերը նշված հակասությամբ պիտի բացատրել, որ նորաբնակեցումը Ռուսաստանում չունեցավ այնպիսի համընդհանուր հասարակական արդյունավետություն, ինչպես օրինակ ներգաղթյալների դեպքում Ամերիկայում: Եվ այս իմաստով նա մի պատկերավոր վկայակոչում է կատարում Պարվուսի «Ռուսաստանի գյուղատնտեսության թշվառությունը» գրքից. «Ինչո՞ւ, սակայն նրանք Վոլգայի տարածաշրջանում մինևույն արդյունքը չտվեցին, ինչը անգլիացի և գերմանացի ներգաղթյալները Ամերիկայում: Պատասխանը հստակ է. Ամերիկա մեկնած եվրոպացի ներգաղթյալների և նրանց կապիտալիստական հայրենիքի միջև օվկիանոս կար, որը սակայն հնարավոր էր նավով հաղթահարել և այդ պատճառով այն չէր կարող խաթարել մշակութային կապը, իսկ Ռուսաստանի գերմանացի ներգաղթյալների և նրանց հայրենիքի միջև ընկած էր տնտեսական ու քաղաքական հարաբերությունների մի ամբողջ աշխարհ՝ Ռուսական կայսրությունը»²:

Օտարերկրացիների գործունեությունը Ռուսաստանի առանձին բնակավայրեր վերածվեցին «ծաղկուն օազիսների»: Առանց վերը նշված հակասության վերացման այն չէր կարող ունենալ «համընդհանուր հասարակական արդյունավետություն», իսկ կառավարության մտադրությունները «այդպես էլ մնացին ընդամենը բարի մտադրություններ»:

¹ B.Ischanian, Wesen und Geschichte ..., էջ 57:

² Նույն տեղում, էջ 58:

ԲԱԽՇԻ ԻՇԽԱՆՅԱՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ

ՈՌԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ, *դ.գ.դ., պրոֆեսոր*

*ՄԱԳԱՍՏ.Քոտանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող*

ԱՐՏԱՎԱԶԴ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, *դ.գ.թ., դոցենտ*

*ՄՊՃՄ տնտեսագիտության և կառավարման
սանթրոնի վարիչ*

Համառոտագիր

Հոդվածում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում անցյալ դարասկզբի հայ տնտեսագիտական մտքի հիշարժան անուններից մեկի՝ Բախշի Իշխանյանի «Օտարերկրացիների գործունեության նշանակությունը և պատմությունը Ռուսաստանում» (գերմաներեն լեզվով) մենագրությունը: Ցույց է տրվում Բ.Իշխանյանի հայացքներում երևույթների երկակիությունը՝ մի կողմից օտարերկրացիների մուտքը դիտելով որպես տնտեսական զարգացման առաքելություն, մյուս կողմից առկա տնտեսական հարաբերությունների այդ առաքելությանն արգելակող խոչընդոտները:

Բանալի բառեր. եվրոպականացում, արհեստական և բնական կապիտալիզմ, հովանավորչական օրենքներ, զարգացման առաքելություն:

БАХШИ ИШХАНЯН: НА ПЕРЕПУТЬЕ ЭКОНОМИЧЕСКОЙ ИСТОРИИ

РОБЕРТ САРИНЯН, *д.э.н., проф.*

*завотделением, главный научный сотрудник
института экономики им. М. Котаняна НАН РА*

АРТАШЕС ТАДЕВОСЯН, *к.э.н., доцент*

*завкафедры экономики и управления
Национального политехнического
университета Армении (НПУА)*

Аннотация

В статье впервые вводится в научный оборот монография одного из видных представителей армянской экономической мысли начала прошлого столетия Бахши Ишханяна «Значение и история деятельности иностранцев в России» (на немецком языке). Показывается двойственность взглядов Б.Ишханяна на явления: с одной стороны, приход иностранцев рассматривается в качестве стимула экономического развития, с другой стороны, указывается на барьеры в существующих экономических отношениях, препятствующие реализации этого потенциала.

Ключевые слова: европеизация, искусственный и естественный капитализм, протекционистские законы, миссия развития.

BAKSHI ISHKHANIAN: IN THE KNOTS OF ECONOMIC HISTORY

ROBERT SARINYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

ARTAVAZD TADEVOSYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*,
Head, Economics and Management Department
Armenian National Polytechnic University

Abstract

The article is the first attempt to circulate among the scholars the book of Bakshi Ishkhanian, one of the prominent scholars of the Armenian economic thought in the beginning of the 20th century, titled “The Nature and History of Alienage in Russia” (Wesen und Geschichte des Ausländertums in Russland in German). The article illustrates the double approach to various phenomena in the views of Bakshi Ishkhanian. On the one hand, Ishkhanian considered the entry of aliens a mission to economic development, and, on the other hand, he discussed obstacles and barriers to accomplish that mission in the light of the existing economic relations.

Keywords: Europeanization, artificial and natural capitalism, sponsoring laws, development mission.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԵԼՔԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Քիչ չեն տնտեսագիտական հրապարակումները, որոնցում առկա է նկատելի անհամապատասխանություն աշխատության բովանդակության և նրա հավակնոտ վերնագրի միջև: Ինչ խոսք, առավել հաճելի են դրանց ներդաշնակությունն է, իսկ, եթե վերնագիրը պարզապես միջոց է թաքցնելու այդ ներհակությունը, ապա խնդիրն այդպես էլ մնում է չլուսաբանված, տեսությամբ չհիմնավորված և գործնական մակարդակում տեղ գտած առաջարկությունների թվարկումով, որպես թե բավական է դրանք իրականացնել և խնդիրն ամբողջապես կլուծվի:

«Ձանգակ-97» հրատարակչությունը լույս է ընծայել Հայկ Սարգսյանի և Աշոտ Մարկոսյանի «Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները» (2014) մենագրությունը: Աշխատության անվանումը վկայում է, որ ազգային տնտեսությունը տակավին շարունակում է մնալ վերափոխումների բազմաթիվ չլուծված կնճիռների տիրույթում, որն ավելի քան քառորդ դար զբաղեցնում է տնտեսագիտական միտքը, փորձելով ժամանակակից տեսությունների մեջ ուրվագծել կատարվող տեղաշարժերի հեռանկարի միտումները: Հեղինակների մտորումների շրջագծերը հանգում են հետևյալին. «... հնարավորինս համարժեք արտացոլել Հայաստանի և ԼՂՀ տնտեսության գրեթե քառորդդարյա զարգացման ընթացքը: Ելակետային այս հիմնադրույթով էլ պայմանավորված՝ մենք առանձնացրել ենք այն հիմնահարցերի շրջանակը, որն էլ, ի վերջո, կանխորոշեց ներկա աշխատության կառուցվածքը՝ հասարակական ընտրությունից ու դրանում պետության դերաբաշխումից մինչև վերջիններիս անդրադարձը աշխարհաքաղաքական, էթնոմշակութային, անվտանգության ներկայիս մարտահրավերների և սոցիալ-տնտեսական իրողությունների վրա»:¹

Ելակետ ունենալով, որ գլոբալացումը դարձել է աշխարհի ճակատագիրը, հեղինակներն ուսումնասիրությունը սկսում են «այդ գործընթացում Հայաստանի մասնակցության» ու պահվածքի հարցից: Որքան փաստարկներ կարելի է բերել գլոբալացման օգտին, նույնքան էլ նրա բացասական կողմերի մասին և այս իմաստով, աշխատության մեջ չի անտեսվել երևույթի ինչ-ինչ տեսանկյունները: «Այժմ շատ է խոսվում այն մասին,- նկատում է Վ.Սադովնիչին,- որ էգոիզմը, կեղծիքը, անբարոյականությունը և այլն ձեռք են բերել տիեզերական մասշտաբներ: Հեռավոր անցյալում, իբր, այս չափի բարոյական աղետալի «ախտերով» հիվանդ էին քչերը, իսկ այժմ՝ մարդկանց մեծամասնությունը: Բայց, եթե գործերը դասավորվել են հենց այդպես, եթե այն, ինչ եղել է արատ, դարձել է էթիկական նորմ, պետք չէ՞ ընդունել, որ այդպիսին է այսօր սոցիալական կենցաղի չափանիշը»:² Դրանում է դրսևորվում ժամանակակից հասարակական շարժման պարադոքսը: Եվ ահա վկայակոչվող գործակիցները տեղադրվում են կոնկրետ կապակցությունների մեջ նշված ճեղքվածքի մարդկային գոյության փոփոխվող կացության պայմաններում՝ առաջարկելով ակտիվ պահվածք ուղղված «ժամանակի նշանին»: Սակայն, երբ խոսք է գնում գլոբալիստների և հակագլոբալիստների միջև գաղափարական տարածայնությունների մասին, խնդիրը հարկ է դիտել ազգային միավորումների ապագա ճակատագրի, ազգային սովորությունների և աղարտվող մարդկային հարաբերությունների կտրվածքով, այն հանգեցնելով կողմ և դեմ փաստարկների թվաբանական թվարկմանը, որպես թե «մերժելով գլոբալ զարգացման հայեցակարգը, իրենց այդ հակառակորդներն այլընտրանք չեն առաջադրում»:³:

Ի դեպ, հասարակական մտայնության նման մի կացություն հայ իրականության մեջ ստեղծվել է XIX դարավերջին: Ազգային պահպանողական հոսանքի օրգանը, ընդդիմանալով ազատամտական հոսանքին, որը նրանց մեղադրում էր հետահայացության մեջ, կշտամբելով, թե

¹ Հայկ Սարգսյան, Աշոտ Մարկոսյան, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Ե., 2014, էջ 3:

² Տե՛ս, В мире науки, 2006, № 1, с. 67.

³ Հայկ Սարգսյան, Աշոտ Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 22:

«քիչ է մնում քիմիական գիտության նշանակության մասին մեր ազգի համար՝ նոքա դիմեն խորհուրդի Մովսես Խորենացուն ու Եղիշեին»¹, և երկյուղով նայելով երկրամասի կապիտալիստական վերածնությանը, դրա մեջ գուշակելով ազգային միասնության տրոհումը, գրում է, թե «պետք է տգետ լինել, չհասկանալու համար, այն, որ պահպանողականը չի կարող ժողովրդի լուսավորության գործին (ընդարձակ առումով –Ռ.Ս.) հակառակ լինել»²: Եվ, երբ խոսք է գնում գլոբալացման մասին, «ազգային պետություն-արտաքին աշխարհ» կապը հակազդերալիստները լոկ չեն հանգեցնում ապրանքների և ծառայությունների ավանդական շրջանառության, վճարային հաշվեկշռի ու արժուքավարկային մեխանիզմների վերաբերյալ գլոբալացման առաքելության գաղափարին: Մ.Դեյվագինը «Мировой кризис. общая теория глобализации» աշխատության մեջ, հանգամանորեն անդրադառնալով գլոբալացման գործընթացի ամենատարբեր շերտերին, նկատում է, թե հակազդերալիստները ընդդիմանալով գլոբալացման հետևանքներին, հետևողականորեն մերժում են լիբերալ-արմատականների կողմից ժամանակակից մարդկությանը փաթաթվող արժեքները, որոնք, ըստ էության, քայքայիչ են մրցակցության մասնակիցների համար: Եվ, անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ նրանք, ովքեր մերժում են գլոբալացումը չի «կարող փաստարկ ծառայեցնել նրանց մեղադրելու հայացքների հնացածություն և հետադիմականության մեջ, քանի որ հումանիստական արժեքները, ինչպես ցույց է տվել մարդկության երկարատև պատմությունը, եթե նույնիսկ ունիվերսալ չեն, ապա, համենայն դեպս, առավել լրիվ են համապատասխանում նրա ներքին էությանը, կոլեկտիվ արտահայտությամբ նրա օբյեկտիվ պահանջներին»³: Այսինքն, հակազդերալիստներին չի կարելի ներկայացնել որպես նեղմիտ մտածողների, որոնց հասարակական կյանքի իմացության ըմբռնումները հաճախ ավելի խորքային են իրենց չափումների մեջ: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է «պահպանելու մեր տեսակը համաշխարհայինի մեջ»:

Հաճախ, կոնկրետ տնտեսական այս կամ այն խնդրի վերլուծությունը սկսում է որոշակի տեսական էքսկուրսով, կարծես ընթերցողներին նախապատրաստելով հարցի ընկալմանը: Այդպիսի մի նպատակ են հետամտում նաև Հ.Սարգսյանի և Ա.Մարկոսյանի աշխատության «Հասարակական ընտրության հիմնախնդիրները և դրանց տեսական մեկնաբանությունները», «Պետության տնտեսական գործառույթները և դրանց էվոլյուցիան» բաժինները:

Շատ է գրվել տնտեսական գործառույթներում պետության դերի մասին: Հարցի ըմբռնումը կոնկրետ իմաստ է ստանում այն հարցադրումներում, թե հանրապետությունում անցման շրջանում, որքան է մեծացել արտադրողի տնտեսական ինքնուրույնությունը և թե որքանով է կանխորոշող եղել պետական կարգավորումը: Եթե ռեֆորմների սկզբնական շրջանում հանրապետությանը բնորոշ էր արմատական վերափոխությունների ուղին, ապա հետագայում «կառավարության բնորոշ գիծը դարձավ ինքնանպատակ իրավիճակային գործելակերպը՝ ենթակա ազատականացման ուղու վերաբերյալ մոտակա և հեռավոր արտասահմանի հանձնարարականների պարզունակ տեղայնացմանը և զուտ քաղաքական նպատակներ հետապնդող մոտեցումների ներդրմանը»:

Մի կողմ թողնելով հարցի վերաբերյալ այլ մտորումները, աշխատությունում հակադրվում են անցած ուղու այսօրվա իրողություններն ու առանձնահատկությունները.

- հաստատվել է տնտեսական ինքնիշխանություն,
- մասնավորեցվել և ապապետականացվել է պետական սեփականությունն ավելի, քան երեք քառորդի չափով,
- շարունակվում է անդամակցությունը միջազգային կառույցներին և խորացվում է տնտեսության ինտեգրումը արտերկրների հետ,
- շարունակվում է տնտեսվարող սուբյեկտներում շուկայական կարգապահության հաստատումը...»:

Միաժամանակ

¹ «Սուրճ», 1889, № 4, էջ 561-562:

² «Նոր-Պար», 1892, №209:

³ М.К.Делягин, “Мировой кризис. общая теория глобализации”, М., 2003, с. 208:

- «• դեռևս պահպանվում է ներքին պահանջարկի ցածր մակարդակը, իսկ մոնետար լծակներով պահանջարկի վրա էապես ազդելու մեխանիզմներն էլ անարդյունավետ են: ԴՅ ներքին պահանջարկը զգալիորեն ձևավորվում է արտաքին աղբյուրներից...»
- արտաքին պահանջարկով պայմանավորված կապիտալ ու բնակչինարարության աննախադեպ աճ, որը բնորոշվում է ՀՆԱ-ի աճի կախվածության բարձր աստիճանը ընդամենը մեկ ճյուղից՝ շինարարությունից,
- Հայաստանի տնտեսությունում իր պահանջարկն է գտնում արտերկրի նյութական և ֆինանսական ռեսուրսներով ձևավորված առաջարկը: Արտաքին աղբյուրներով պայմանավորված պահանջարկը բավարարվում է ներմուծման հաշվին ձևավորված առաջարկով: Ներմուծումը երեք և ավելի անգամ գերազանցում է արտահանումը: ... տնտեսության զարգացման կարևորագույն գործոն է դառնում փոխանակային կուրսը,
- Տնտեսությունում փոքր է պետական միջամտության չափը թե՛ հավաքագրվող հարկերի, թե՛ պետական ծախսերի իմաստով»¹:

Տնտեսության բոլոր հատվածներում էլ առկա են լուծումներ պահանջող խնդիրներ, սակայն առաջնահերթության առումով հիմնականն է գյուղատնտեսության և գյուղի համալիր խնդիրների ուսումնասիրությունը: Թվերի լեզուն ոչ միշտ է տրամադրում ընթերցանության, սակայն այն փաստը, որ ԴՅ ամբողջ բնակչության մոտ 36 տոկոսը ապրում է գյուղական բնակավայրերում, իսկ հանրապետության ագրարային հատվածում զբաղված է ընդհանուր զբաղվածների 46 տոկոսը՝ 1990-ի 17,7 տոկոսի դիմաց, թողնելով այն տպավորությունը, ինչպես ասում է գրքի հեղինակներից Յ.Սարգսյանը, որ «եթե տատիկը կռանում է, քաղհան է անում, մենք նրան համարում ենք զբաղված» (տե՛ս, «Հրապարակ», 9, V, 15թ.), ապա դա ապագայի կտրվածքով որոշակի մտորումներ է պարտադրում:

Մի նկատելի իրողություն գրանցվեց 1990-ական թվականներին, որը որոշ առումով տեղադրվում էր նախորդ տասնամյակների հասարակական նորմերում, երբ ղեկավար էր նշանակվում տվյալ ոլորտի հետ մասնագիտական առումով կապ չունեցող: Այժմ գյուղացիական տնտեսություններում զբաղվածների շուրջ 1/3-ը ագրարային հատվածում չաշխատած, համապատասխան հմտություններ և փորձ չունեցող քաղաքացիներ են: Այստեղից էլ սկիզբ է առնում խզումը գյուղացու հանրահայտ «տիրոջ զգացումի» և ավանդներ չունեցող «ֆերմեր քաղաքաբնակների» միջև, որոնց նպատակի հիմքում՝ հնարավորինս շատ հողատարածքներ վերցնելու, գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ ձեռք բերելու միջոցով արկածախնդրության միտումով արագ հարստանալու գաղափարն էր: Մինչդեռ զարգացած շատ երկրներում առանց ագրուկուլտուրայի մասին որոշակի գիտելիքների չեն կարող դառնալ հողի սեփականատեր:

Հողի սեփականաշնորհումն ուղեկցվեց մի այլ իրողությամբ, ձևավորվեցին ավելի, քան 340 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին բաժին էր ընկնում 1,4 հա, հաճախ նպատակին չօգտագործվող, հողատեսքեր և այլն: Ստեղծվել է մի կացություն, երբ «գրեթե անհնարին են գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացումը, առաջավոր տեխնոլոգիաների կիրառումը, աշխատանքների մեքենայացումը, գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցումն ու շահութաբերության մակարդակի բարձրացումը, որտեղ գերակշռում է ցածր արտադրողականությամբ աչքի ընկնող ձեռքի աշխատանքը»²:

Վերը նշված հարցերն աշխատության մեջ քննության են ենթարկվում շատ ավելի հանգամանակից ձևով, և թող այն տպավորությունը չստեղծվի, թե հեղինակները լոկ առաջնորդվել են թերությունները գրանցելու նախասիրություններով, այլ վերլուծական հոսքի մեջ առաջադրում են հիմնախնդիրներ, դրանք դիտելով որպես ագրարային հատվածի զարգացման նախադրյալներ.

- գյուղացիական տնտեսությունների արտադրատնտեսական ցածր կարողությունների և եկամուտների հիմնախնդիրը,
- աշխատանքի արտադրողականության աճի խոչընդոտները և հաղթահարման ուղիները,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնահարցերը,

¹ Հայկ Սարգսյան, Աշոտ Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 193-196:

² Հայկ Սարգսյան, Աշոտ Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 352-355:

- գյուղացիական տնտեսությունների համագործակցության՝ կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը¹:

Լայն է աշխատության արժարժույթների շրջանակները՝ համաշխարհային տնտեսության գերիշխող միտումներ, հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման առանձին ոլորտների, տնտեսական մրցակցության, վճարային հաշվեկշռի, արտաքին տնտեսական գործունեության և այլ հիմնախնդիրներ:

Հեղինակները միտում չեն ունեցել ՀՀ նորագույն շրջանի տնտեսական պատմությունը ենթարկել «ավարտուն քննական վերլուծության» և մեկնությունները ենթարկել բացարձակության հանգեցված անվերապահության: Այն որոշակի ներդրում կարող է ծառայել երկրի սոցիալ-տնտեսական վերելքի հեռապատկերի առումով, «որի հասանելիությունը պայմանավորված է բացառապես մեր կազմակերպվածությամբ»:

Ժամանակ առաջ հունգար գրականագետ Պ.Ֆեխերը մի առիթով նկատել է, թե «Ի դեպ, չգիտեմ իրողությունն ինչպիսին է այլ երկրներում, բայց մեզ մոտ՝ Հունգարիայում, դեռ չի եղել մի դեպք, որ որևէ գրող խոստովանի, թե ահա իմ այս գիրքը չի ստացվել»²: «Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները» մենագրության հեղինակներ Հայկ Սարգսյանը և Աշոտ Մարկոսյանն իրավամբ իրավունք ունեն այդպես կարծելու:

¹ Հայկ Սարգսյան, Աշոտ Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 354-367:

² Մեջբերումը կատարված է Ս.Սարինյանի «Հայոց գրականության երկու դարը» մենագրությունից, հատոր 2, Ե., 1989, էջ 303:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԵԼՔԻ Հեռանկարները

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ, *դ.գ.դ., պրոֆեսոր*

*ՄԱԳՍՏՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆԱԳԻՐՈՒԹՅԱՆ
ԻՆՎԵՍՏԻՐՈՒՄԻ ԳԻՒՄԱՎՈՐ ԳԻՐԱՇԽԱՐՀ*

Համառոտագիր

Հայաստանի Հանրապետության վերջին երկուսուկես տասնամյա տնտեսական պատմությունը թույլ է տալիս վերլուծել անցած ուղին, կատարել ընդհանրացումներ, վերհանել վրիպումներն ու ձեռքբերումները: Եթե առանձին մենագրություններում անդրադարձ է կատարվում տնտեսության առանձին հատվածներին, ապա Հայկ Սարգսյանի և Աշոտ Մարկոսյանի «Հայաստանի տնտեսական վերափոխումները և վերելքի հեռանկարները» աշխատությունն ընդգրկում է հանրապետության տնտեսությունն ամբողջությամբ: Այն լայն է իր ընդգրկումների մեջ: Կիսելով հեղինակների այն կարծիքը, որ աշխատությունը չի հետամտում ՀՀ նորագույն շրջանի տնտեսական պատմությունը ենթարկել «ավարտուն քննական վերլուծության» և մեկնությունները ենթարկել բացարձակության հանգեցված անվերապահության, հողվածում նշվում է, որ այն կարող է նպաստել երկրի սոցիալ-տնտեսական վերելքին:

Բանալի բառեր. գլոբալիզացիա, ազատամրավակություն, ազգային պահպանողականություն, անցման շրջան, սեփականաշնորհում, պետության դերը, ագրարային ոլորտ, տնտեսության ոլորտներ:

ЭКОНОМИЧЕСКИЕ РЕФОРМЫ И ПЕРСПЕКТИВЫ ПОДЪЕМА В АРМЕНИИ

РОБЕРТ САРИНЯН, *д.э.н., проф.*

*завотделением, главный научный сотрудник
Института экономики им. М. Котаяна НАН РА*

Аннотация

Экономическая история Армении последних двух с половиной десятилетий позволяет проанализировать пройденный ею путь, обобщить и выявить ошибки и достижения. Если в отдельных монографиях рассматривались конкретные сферы экономики, то исследование Гайка Саргсяна и Ашота Маркосяна “Трансформация и перспективы подъема экономики Армении” охватывает экономику в целом, освещая широкий круг вопросов.

Соглашаясь с мнением авторов, что работа не претендует на завершенность и абсолютную приемлемость анализа новейшего периода экономической истории РА, автор статьи констатирует, что она может способствовать социально-экономическому подъему республики.

Ключевые слова: глобализация, либерализм, национальный консерватизм, переходный этап, приватизация, роль государства, аграрная сфера, сектора экономики.

TRANSFORMATION OF THE ARMENIAN ECONOMY AND GROWTH PERSPECTIVES

ROBERT SARINYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*

*Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The two and a half decade long economic history enables various scholars and researchers to analyze the development path, make generalizations, identify the pitfalls and stress the achievements. If various authors in their books address only specific sectors of the economy, Hayk Sargsyan and Ashot Markosyan in their book titled *Transformation of the Armenian Economy and Growth Perspectives* (in Armenian) cover the whole economy. The study is deep in terms of coverage. By sharing the views of the authors on the fact that the study does not attempted to provide a “comprehensive quantitative analysis” of economic history of the modern period, force the readers to consider the interpretations as absolute ones and without objections, in the article, the author states that the reviewed study could assist to the socio-economic development and growth of the nation.

Keywords: Globalization, liberalization, national conservatism, transition period, privatization, the role of the state, agrarian sector, the industries of economy.

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՍՏԵՂՃՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԶՃԱՆԱԶԿԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Հասարակական հարաբերությունների ժամանակակից պայմաններում կան բազմաթիվ պետություններ, որոնց համար բնութագրական է տնտեսական, իրավական, սոցիալական և քաղաքական անցումային այնպիսի կարգավիճակը, որը ձևավորվել է բռնությունների կամ պատերազմների արդյունքում՝ սակայն առկա եմ ժողովրդավարական զարգացման նախանշաններ: Համաշխարհային պրակտիկայում այդ կարգավիճակը ստացել է Transitional Justice՝ անցումային արդարադատություն կամ իրավասություն անվանումը (այսուհետ՝ անցումային կարգավիճակ): Այդ հասկացությունը ձևավորվել է 1980-ական թվականներին, երբ Հարավային Ամերիկայի մի շարք երկրներում իշխող ռեժիմների կողմից տեղի էին ունենում զանգվածային բռնություններ և մարդու իրավունքների ոտնահարում, սակայն որպես սահմանում այն շրջանառության մեջ է դրվել 1995թ. հրատարակված «Անցումային արդարադատություն. այսինքն՝ ըստ որի ինչպես են զարգացող ժողովրդավարությունները հաշվի նստում նախկին ռեժիմների հետ» աշխատության մեջ¹: Հատկանշական է, որ աշխատությունը գրվել է հետխորհրդային ժամանակաշրջանում, երբ այդպիսի կարգավիճակ ունեցող ճանաչված և չճանաչված պետությունները բավականին շատ էին:

Նմանատիպ ձևով բնորոշվող անցումային կարգավիճակը բնութագրվել է նաև Միավորված ազգերի կազմակերպության կողմից, այսինքն դա «գործընթացների և մեխանիզմների այնպիսի մի ամբողջություն է, որի դեպքում հասարակությունները փորձում են հաշտվել նախկինում կատարված մեծամասշտաբ չարաշահումների ժառանգության հետ՝ պատասխանատվության պահպանման, արդարադատության ապահովման և հաշտության հասնելու նպատակով»²: Հինք ընդունելով վերոնշյալը, անհրաժեշտ է նշել, որ անցումային այդպիսի կարգավիճակում բոլոր տիպի հանրային հարաբերությունները գտնվում են կարգավորման փուլում: Դա նշանակում է, որ եթե անցումային ժամանակահատվածը ձգձգվում է, և պետություններն այդ կարգավիճակում գտնվում են երկար, ապա անհրաժեշտ է փնտրել մեխանիզմներ այդ ժամանակահատվածում տնտեսական առաջընթաց ապահովելու համար, որովհետև տվյալ պետության մեջ ապրող բնակչությունը պետք է օգտվի բարեկեցիկ ապրելու իր իրավունքից: Այս խնդիրն արդիական է հատկապես չճանաչված պետությունների դեպքում, քանի որ միջազգային հարաբերություններում նրանք իրավունքի լիիրավ սուբյեկտներ չեն և համաշխարհային հանրության հետ չեն կարող լիարժեք ինտերգրվել: Այդպիսի պետությունները շատ են հատկապես հետխորհրդային տարածքում, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ի դեմս իր տնտեսական, իրավական, սոցիալական և քաղաքական համակարգերի, տիպային օրինակ է:

Անցումային կարգավիճակ ունեցող չճանաչված պետությունների հետ հարաբերություններ չհաստատելը չի նպաստում վիճահարույց գործընթացների հաղթահարմանը: Ավելին, այդ դեպքում որևէ պետության ներսում կարող է սպառվել զարգացման ռեսուրսները, սրվել սոցիալ-տնտեսական իրավիճակը՝ հանգեցնելով ինչպես տվյալ պետության, այնպես էլ տարածաշրջանի համար լարվածության մեծացման: Հետևաբար, նմանատիպ պետություններում անհրաժեշտ է իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի միջազգային ինտեգրացիոն, միաժամանակ նաև տնտեսական զարգացման գործընթացներին: Ներկա պայմաններում՝ հատկապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեպքում, գիտակրթական համակարգի տարրերը

¹ Kritz, N. (ed.) (1995) Transitional Justice: How Emerging Democracies Reckon With Former Regimes, Washington DC: United States Institute for Peace Press

² Annan, K., UN Secretary-General (2004), The Rule of Law in Conflict and Post-Conflict Societies, NY: United Nations

և կլաստերային մոտեցումները կարող են դիտարկվել որպես այդպիսի քաղաքականության իրականացման մարտավարական ուղղություններ:

Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության ու մշակույթի կառույցի (UNESCO) կողմից կրթությունը համարվում է մարդու հիմնարար իրավունքը և էական՝ այլ իրավունքների իրականացման համար¹: Նույն կազմակերպության «Կրթության խտրականության դեմ համաժողովի» հողվածներով՝ որը միջազգային իրավական փաստաթուղթ է, արձանագրված են դրույթներ, որոնք իրավունք են տալիս ձեռք բերել կրթություն յուրաքանչյուր անձի կամ անձանց խմբի՝ առանց սահմանափակումների²: Գիտակրթական համակարգի կարևոր մաս կազմող կրթական ծրագրերն ու հետազոտություններն այսօր հասանելի են առցանց համակարգով, և վարչական սահմանները կամ տարածքների կարգավիճակն այդ առումով խոչընդոտող գործոններ չեն հանդիսանում: Ինտեգրացիոն գործընթացները և գիտակրթական համակարգի համաշխարհային հեղինակավոր կենտրոնների հետ հարաբերությունների հաստատումն այս ոլորտում ամբողջությամբ իրատեսական է: Եթե այս համատեքստում դիտարկենք նաև կրթության և գիտության առևտրայնացման հնարավորությունները, որի դեպքում կարող է ստացվել տնտեսական արդյունք, ապա միանշանակ կարելի է պնդել, որ անցումային կարգավիճակ ունեցող չճանաչված պետությունները կարող են ունենալ միջազգային հարաբերությունների հաստատման և տնտեսական զարգացման ներուժ գիտակրթական համակարգերի միջոցով: Առևտրայնացման դեպքում կարևոր է գիտակրթական համակարգի և գործարար ոլորտի փոխհամագործակցությունը, որը հնարավոր է ապահովել կլաստերային սկզբունքների կիրառման միջոցով:

Կլաստերային մոտեցումների նկատմամբ ներկայիս հետաքրքրությունը մեծապես պայմանավորված է Մայքլ Պորտերի աշխատանքով, որտեղ կլաստերը ներկայացվում է որպես միմյանց հետ փոխկապված կազմակերպությունների այնպիսի խումբ, որի մասնակիցներն ունեն գործունեության որոշակի ոլորտում ընդհանրություններ և փոխադարձաբար լրացնում են միմյանց³: Որպես այդպիսի կազմակերպությունների խումբ կարող են հանդես գալ գործարար հանրույթի և գիտակրթական համակարգի ներկայացուցիչները: Այս դեպքում կարևոր է, որ գործարար միջավայրը լինի առավելապես նորարարական մոտեցումներով առաջնորդվող և գիտելիքահենք ապրանք արտադրող կամ ծառայություն մատուցող: Կլաստերային մոտեցումների կիրառման պարագայում գործարար ոլորտի և գիտակրթական համակարգի միջև հարաբերությունների հաստատմամբ տնտեսական զարգացման հասնելու հեռանկարներ կարելի է ապահովել հետևյալ քայլերի միջոցով՝

1. Միջնակարգ և բարձրագույն կրթական համակարգերում միջազգային չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան ուսումնական և կրթական ծրագրերի ներդրում՝ հետևողականություն ցուցաբերելով այդ ծրագրերը գործարար միջավայրի կարիքներին համապատասխան տեղայնացնելու հարցում:
2. Հետազոտական կենտրոնների ստեղծում, դրանց համահունչ հմտությունների և կարողությունների զարգացում, քաղաքականություն մշակող համաշխարհային կենտրոնների (think tank) հետ համագործակցության հաստատում՝ որը կրթական ու գիտական համապատասխան մակարդակ ապահովելու դեպքում իրատեսական է:
3. Միջազգային պրակտիկայում լայնորեն օգտագործվող կրթական ծրագրերի և հետազոտական մեթոդների կիրառմամբ տարբեր երկրների գիտակրթական համակարգերի հետ առցանց հետազոտությունների իրականացում ու հրապարակում:
4. Նպաստավոր պայմանների ապահովում համաշխարհային շուկայում մեծ պահանջարկ ունեցող գիտելիքահենք ապրանքների արտադրման ու ծառայությունների մատուցման գծով՝ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների, նորարարական մոտեցումների, ծրագրային մշակումների արտադրության և սպասարկման համար:

¹ <http://www.unesco.org/new/en/right2education>

² Convention against Discrimination in Education, Adopted by the General Conference at UNESCO eleventh session, Paris, 14 December 1960

³ Портер М. Конкуренция. Пер. с англ. М.: Издательский дом «Вильямс», 2005. 608 с.

5. Հետազոտությունները դարձնել այնպիսի տարբեր գործընթացների հիմք, ինչպիսիք են արտադրության կազմակերպումը, կրթության իրականացումը, քաղաքականության մշակումը և այլն:

Նշված քայլերի իրականացման արդյունքում անցումային կարգավիճակ ունեցող չճանաչված պետությունները կարող են ունենալ ինտեգրացիայի բավականին մեծ աստիճան համաշխարհային գիտակրթական կենտրոնների հետ, իսկ քանի որ այդպիսի կենտրոնների դերը միջազգային ոլորտում բավականին մեծ է տնտեսական և քաղաքական ծրագրերի նախագծման ու մշակման առումով, ապա չճանաչված պետությունների գիտակրթական կենտրոնները կարող են էական կշիռ ունենալ ոչ ֆորմալ հարաբերությունների հաստատման ու զարգացման համատեքստում: Միաժամանակ տվյալ պետության ներսում նույն ռեսուրսները կարելի է օգտագործել գործարար ոլորտի հետ կլաստերային մոտեցման սկզբունքներով համագործակցության զարգացման համար: Արդյունքում կարող են ստեղծվել նպատակային տնտեսական միավորումներ՝ որպես արտադրանք թողարկելով գիտատար և բարձրարժեք ապրանքներ ու ծառայություններ:

Այսպիսով՝ անցումային կարգավիճակ ունեցող չճանաչված պետությունների համար ինտեգրացիան և տնտեսական աճը կարող են ապահովել գիտակրթական համակարգերը՝ արտաքին կենտրոնների և ներքին սուբյեկտների հետ իրականացնելով արդյունավետ համագործակցություն:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՍՏԵՂՃՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԶՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ՍՈՍ ԽԱՉԻԿՅԱՆ, *պ. գ. թ., դոցենտ*,

ՆՊՏԿ Եղեգնաձորի մասնաճյուղ

Համառոտագիր

Մեր ժամանակներում գոյություն ունեն բազմաթիվ ճանաչված և չճանաչված պետություններ, որոնք գտնվում են անցումային փուլում ու միջազգային լիիրավ հարաբերություններ չեն կարողանում հաստատել: Այդպիսի պետությունների տնտեսական զարգացման հնարավորությունները բավականին սահմանափակ են, որը կարող է առաջացնել սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի լարվածություն՝ հանգեցնելով տարածաշրջանային անկայունության: Հետևաբար, անհրաժեշտ է ինչ-որ ձևով ապահովել այդպիսի պետությունների լիարժեք ինտեգրացիան միջազգային հանրության հետ և նպաստել տնտեսական զարգացմանը: Գիտակրթական համակարգի միջազգայնացումը և գործարար միջավայրի հետ կլաստերային մոտեցումների կիրառմամբ համագործակցության հաստատումը կարող է որոշակի լուծում տալ այդ խնդիրին:

Բանալի բառեր. անցումային կարգավիճակ, չճանաչված պետություն, գիտակրթական համակարգ, տնտեսական զարգացում, կլաստեր:

СОЗДАНИЕ НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ КЛАСТЕРОВ, КАК СРЕДСТВО ИНТЕГРАЦИИ И ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВАХ, ИМЕЮЩИХ ПЕРЕХОДНЫЙ СТАТУС

СОС ХАЧИКЯН, *к.э.н., доцент*

АЭГУ Егегнадзорский филиал

Аннотация

В наши времена существует множество признанных и непризнанных стран, которые находятся в переходном этапе развития и не могут устанавливать полноценных международных отношений. Возможности экономического развития таких стран довольно ограничены. Это может привести к напряженной социально-экономической и политической обстановке, что в свою очередь приведет к региональной нестабильности. Следовательно, нужно каким-то способом обеспечить полную интеграцию таких государств с международным сообществом и содействовать экономическому развитию. Интернационализация научно-исследовательской системы и установление сотрудничества с бизнес средой, применяя кластерные подходы, может дать некоторые решения этой проблемы.

Ключевые слова: переходный статус, непризнанные страны, научно-исследовательская система, экономическое развитие, кластер.

BUILDING SCIENCE AND EDUCATION CLUSTERS AS AN APPROACH TO INTEGRATION AND ECONOMIC DEVELOPMENT AMONG UNRECOGNIZED STATES WITH TRANSITIONAL STATUS

SOS KHACHIKYAN, *Ph.D. in Economics*

Associate Professor, Yeghegnadzor Branch

Armenian State University of Economics

Abstract

Currently there are many economies in the world that are either recognized or unrecognized states that are in transition and couldn't build strong relations with other nations. The opportunities for economic development for such states are very limited, thus creating socioeconomic and political tensions, resulting in regional instability. Therefore, it is required to ensure complete integration of these states into the global economy and promote economic development of these states. The internationalization of science and education system and cluster approach to business initiatives to establish cooperation could partially address this issue.

Keywords: Transitional status, unrecognized state, science and education system, economic development, cluster

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարձրորակ մարդկային կապիտալի առկայությունը ժամանակակից տնտեսական զարգացման հիմնական նախապայմանն է և առանց դրա անհնար է երկարաժամկետ հեռանկարում ապահովել կայուն տնտեսական զարգացում:

Տարբեր երկրների կրթական համակարգերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ համաշխարհային գլոբալացման հետ կապված վերանայվում են կրթության ընդհանուր նպատակները, փոխվում է դրանց էությունը, ձևերն ու մեթոդները, և յուրաքանչյուր երկրում այս գործընթացներն ընթանում են հաշվի առնելով ազգային կրթական համակարգի ավանդույթներն ու առանձնահատկությունները: Տարբեր երկրների կրթական համակարգերն ունեն որոշակի տարբերություններ և առանձնահատկություններ, իսկ այդ տարբերությունները բխում են յուրաքանչյուր երկրի պետական և կրթական քաղաքականությունից, զարգացման աստիճանից, ազգային և մշակութային առանձնահատկություններից, տնտեսական զարգացվածությունից և բազմաթիվ այլ գործոններից: Դրանք իրենց հերթին բերում են կրթության տևողության, որակի, դրա էության, կրթական համակարգի կառուցվածքի, կրթական տարբեր աստիճաններին ներկայացվող պահանջների ու պայմանների բազմազանությանը, գնահատման չափանիշների, կրթական չափորոշիչների, մեթոդների խայտաբղետությանը՝ հանգեցնելով նրանց համեմատելիության և համարժեքության որոշման կանոնակարգման ու միասնական մեթոդաբանության անհրաժեշտությանը¹:

Հայաստանի կրթական համակարգը բազմադարյան պատմություն է ունեցել և բոլոր ժամանակներում անգնահատելի դեր է խաղացել մեր երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային և գիտական առաջընթացի մեջ: Վերջին տարիների ընթացքում իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին լուծել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում առկա շատ խնդիրներ և նախադրյալներ ստեղծել ոլորտի զարգացման համար: Այդուհանդերձ, կրթության համակարգում դեռևս առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության հետագա զարգացումը: Կրթության բնագավառի գերխնդիրն է դրա որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Կրթության համակարգի զարգացման ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, անհրաժեշտ է արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կբարձրացնեն կրթության և գիտական գործընթացի վարկանիշը:

Կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է էականորեն բարձրացնել կրթության կառավարման համակարգի արդյունավետությունը, զարգացնել կառավարման օղակների և մանկավարժների մասնագիտական ներուժը, արդիականացնել կրթության դերն ու նշանակությունը՝ ապահովելով դրա համապատասխանությունը արդի պահանջներին: Միաժամանակ, հաջողության կարևոր նախապայման են միջոցների օգտագործման նպատակայնության բարձրացումը և նոր ռեսուրսների բացահայտումն ու ներգրավումը:

Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ զարգացման ռազմավարության, մասնավորապես՝ կայուն զարգացման ծրագրերի կարևոր գերակայություններից է բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումը և զարգացումը: Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջումներին բավարարումը:

¹ Տե՛ս՝ “Болонский процесс и качество образования, часть 3. Опыт вузов”, Н. Новгород, нзд. ННГУ, 2005г. С 71.

Կրթության և ուսուցման էությունը, դա որակյալ մասնագետների պատրաստման գործընթացի ամենակարևոր բաղադրիչն է, որը պայմանավորված է պետության ու հասարակության առջև դրված նպատակներով և պահանջներով՝ նպատակաուղղված շրջանավարտների գիտելիքների, կարողությունների, հմտությունների համակարգին, նրանց աշխարհայացքային, քաղաքական և մասնագիտական որակավորումներին, զարգացվածությանը, անձի ունակություններին ու պահանջներին: Նպատակահարմար է ունենալ բարձր մասնագիտացված զարգացվածությամբ անձնավորություն, որը փոփոխվող իրադրության պայմաններում, դեռևս չկայունացած տնտեսության շրջանակներում կարողանա հարմարվել աշխատանքի շուկայի պահանջներին: Այդ նպատակով էլ անհրաժեշտ է որոշակիորեն սահմանել սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ծավալն ու մակարդակը, այնպես, որ կրթության ու ուսուցման սպասվող բովանդակային բարեփոխումների, ինչպես նաև աշխարհում կատարվող նոր միտումների, գիտության հայտնագործությունների արագընթաց նորանվթությունների պայմաններում շրջանավարտ մասնագետը լինի դրանց տիրապետողն ու կրողը:

Այսպիսով՝ կրթության էությունն ու որակի բարելավմանն ուղղված ռազմավարական առաջնահերթ խնդիրն է համարվում կրթական չափորոշիչների մշակումն՝ ըստ պատրաստվող մասնագիտությունների և ներդրումների իրականացումն ուսումնական գործընթացում: Չափորոշիչներն են երաշխավորում կրթության համակարգի իրավահավասարությունը, որը հնարավորություն է տալիս որոշելու կրթության մակարդակի ու շնորհած վկայականների համարժեքությունը:

Կրթության համակարգի որակի ապահովումն ունի երկու չափում՝ ներքին և արտաքին¹ (տե՛ս գծապատկերը) :

Որակի արտաքին ապահովումը կրթության որակի համապատասխանությունն է ժամանակակից աշխարհի մարտահրավերներին, կրթական տարածաշրջանի պահանջներին, ինչպես նաև կրթության ոլորտում Հայաստանի քաղաքականությանը և պետական կրթական չափորոշիչներին: Որակի արտաքին ապահովման շրջանակներում ինստիտուցիոնալ փորձաքննությունը պարտադիր գործընթաց է ուսումնական հաստատությունների համար, որի նպատակն է՝ որակի բարելավումը, բարձրագույն կրթության բարեփոխումների խթանումը, որակի ապահովմանը դրանց ներգրավման երաշխավորումը: Միաժամանակ պարտադիր է նաև ունենալ մասնագիտական կրթական ծրագրի հավատարմագրումը, որակավորումների ճանաչումն ազգային ու միջազգային մակարդակներում և աշխատաշուկայում որակավորումների առավելություն:

Որակի ներքին ապահովումը կախված է բուհի կառավարման համակարգի կատարելությունից և ճկունությունից, բուհի առաքելությունից, նպատակների ու խնդիրների հստակեցումից, մասնագիտական կրթական ծրագրերի որակից, պրոֆեսորադասախոսական կազմի գիտական և կրթական ռեսուրսից, նյութատեխնիկական պայմաններից, ուսանողության կրթական մակարդակից, ֆինանսական դրության վիճակից:


Պարզաբանման առումով ներկայացնենք կրթության որակի վերահսկողության գործընթացը (տե՛ս գծապատկերը):

Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է արտացոլի մասնագիտական ուսումնական հաստատությունների առաքելությունն ու որդեգրած արժեքները և սերտորեն կապված լինի թե՛ կառավարման ռազմավարական պլանի, և թե՛ իրականացվող գործունեության հետ: Որակի ներքին ապահովման քաղաքականությունը կոչված է կազմակերպության տարբեր գործառնությունների ու մակարդակների համար սահմանել դրան համահունչ պարզ ու չափելի խնդիրներ:

Որակի ապահովման քաղաքականությունը պետք է տարածվի մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող այդ տեսակի գործընթացների վրա, այդ թվում դասավանդում, հետազոտական աշխատանքներ, ուսումնառությանն աջակցելու ծառայություններ, կառույցներ, կացարաններ, կահավորում ու սարքավորումներ և համագործակցություն տվյալ մասնագիտության պահանջ ունեցող տնտեսավարողների հետ:

¹ Стів` Карпенко М.П., "Качество высшего образования", Москва, изд. СГУ, 2012г., стр. 9.

Կրթության որակի վերահսկողության տեսակները¹



Առանձնացնում են կրթության որակի ներքին վերահսկողության երեք տեսակներ՝ ինքնավերահսկողություն, ուսանողների գիտելիքների որակի և կրթական ծրագրերի վերահսկողություն:

Արտաքին վերահսկողությունն իրականացվում է պետության և հասարակության, մասնավորապես՝ գործատուների կողմից: Կրթության ոլորտի պետական վերահսկողության հիմնական նպատակներն են՝ ֆինանսական, նյութական, աշխատանքային և այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, քաղաքացիների սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև կրթական շուկայի համապատասխան պահանջմունքների բավարարումը:

Կրթական համակարգի հիմնախնդիրները շոշափում են երկրի քաղաքացիների մեծ մասի շահերը, ուստի հենց դրանով է պայմանավորված կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների նկատմամբ մարդկանց ցուցաբերած հետաքրքրությունը: Այդ իսկ պատճառով էլ կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները պետք է լինեն բովանդակային, որպեսզի Հայաստանի կրթական համակարգը լինի ավելի ուժեղ և հեղինակավոր, համապատասխանի ժամանակակից համաշխարհային կրթական մարտահրավերներին, կրթի ու դաստիարակի հասարակության համար պիտան քաղաքացու և դառնա ավելի ընդունելի ու հարգված սեփական երկրի քաղաքացիների աչքերում: Ընդ որում՝ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ մեր հանրապետությունը տիրապետում է վերջինիս իրականացման համար անհրաժեշտ ներուժին:

¹ Стів` Кириенко В. П., "Концепция системы обеспечения качества образования", Н. Новгород, 2006г., стр. 7.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՈՒՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՓԻՆԵ ՅՈՎԱԿԻՄՅԱՆ, *դ. գ. թ.*

ՆՊՏՆ Եղեգնաձորի մասնաճյուղի ասիստենտ

Համառոտագիր

Կրթության որակ հասկացությունը չունի համընդհանուր բնորոշում: Դա բնական է, եթե հաշվի առնենք, որ սպառողների տարբեր խմբեր այդ հասկացության մեջ դնում են տարբեր իմաստներ, իսկ հետազոտողներն էլ կրթության որակը պայմանավորում են հետազոտվող խնդիրներով: Այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել կրթության որակի բնորոշման երկու մոտեցում: Առաջին դեպքում դիտարկվում է որպես որակական արդյունք, ստանդարտներին համապատասխանեցման և ուսումնական գործընթացի պայմանների առումներով: Երկրորդ դեպքում կրթության որակը բնորոշվում է որպես արտաքին սպառողների պահանջների և կարիքների համապատասխանեցում:

Բանալի բառեր. կրթության որակ, բարձրագույն կրթություն, մարդկային կապիտալ, կրթական չափորոշիչներ, կրթական համակարգի կառուցվածք, որակի համապատասխանություն, գործալացում, կրթական ծրագրեր:

ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ КАЧЕСТВОМ ОБРАЗОВАНИЯ

АРПИНЕ ОВАКИМЯН, *к.э.н.*

ассистент АГЭУ Егегнадзорский филиал

Аннотация

Качество образования не имеет общепринятого определения. Это вполне естественно, если учесть, что различные группы потребителей вкладывают в это понятие свой смысл, а исследователи трактуют качество образования в зависимости от задачи исследования. Тем не менее, можно выделить два основных подхода к понятию качества. В первом случае рассматривается качество результата, в смысле соответствия стандарту, и качество условий процесса обучения. Во втором случае качество образования трактуется как соответствие требованиям и ожиданиям внешних заказчиков и потребителей.

Ключевые слова: качество образования, высшее образование, человеческий капитал, образовательные стандарты, структура образовательной системы, соответствие качества, глобализация, образовательные программы.

FEATURES OF QUALITY MANAGEMENT IN EDUCATION

ARPINE HOVAKIMYAN, *Ph.D. in Economics*

Assistant Professor, Yeghegnadzor branch

Armenian State University of Economics

Abstract

The concept of “quality of education” lacks a single and comprehensive definition. It is natural, if we consider so, that various groups of service receivers or consumers put a special meaning to the concept, and researchers explain the quality of education based on the topic and objectives of study. However, two definitions or approaches to the quality of education could be distinguished. In the first case, the researchers consider it as a qualitative outcome in compliance with the standards and educational processes (conditions). In the second case the quality of education is considered as meeting or complying with the requirements and needs of external service receivers or consumers.

Keywords: Quality of education, higher education, human capital, educational standards, structure of educational system, compliance with the quality, globalization, educational programs.

ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱԼ


ԿԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
 արևարևազգիությունների հետազոտության կենտրոնի տնօրենի պաշտոնակատ

**ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ
 ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԵՎ ՀՀ-ՈՒՄ**

Երկրի մակրոտնտեսական խոցելիությունը գնահատելու ժամանակ պետք է հաշվի առնել տվյալ երկիր ճգնաժամը փոխանցող գործոնները, ինչպես նաև մակրոտնտեսական հիմքերը: Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրների համար մշակել է անալիտիկ հայեցակարգային մոդել, այդ երկրների խոցելիությունը տարբեր եղանակներով գնահատելու նպատակով (տե՛ս գծապատկերը): Անդրադառնա՞նք ԱՄՀ-ի կողմից առաջարկված ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրների մակրոտնտեսական խոցելիության գնահատման եղանակներին:

Գծապատկեր

Խոցելիության անալիտիկ հայեցակարգային մոդելի բաղադրիչները¹



Ճգնաժամի ռիսկի մոդել²: Այս տիպի մոդելները կիրառվում են տնտեսական անկման հանդեպ երկրի խոցելիության քանակական գնահատականը տալու համար, երբ տեղի ունենան արտաքին շոկեր: Այսպիսի մոդելների հիմքում սովորաբար նախորդ ճգնաժամի դեպքերի և մակրոտնտեսական հիմքերը նկարագրող տարբեր փոփոխականների միջև փոխկապվածություններն են:

Աղյուսակ

Ընդհանուր խոցելիության ինդեքս³

Ոլորտի ինդեքս	Ցուցանիշի նկարագիր
Պետական հատվածի ինդեքս կշիռ՝ 0.31 կամ 31%	Պետական բյուջեի պակասուրդ (% , ՀՆԱ-ի նկատմամբ) Սահմանային շեմ՝ -4.21%, կշիռ՝ 0.33 (33%)
	Պետական պարտք (% , ՀՆԱ-ի նկատմամբ) Սահմանային շեմ՝ -65.00%, կշիռ՝ 0.19 (19%)
	Կառավարության իրական եկամուտներ (% , նախորդ տարվա համեմատ) Սահմանային շեմ՝ 1.73%, կշիռ՝ 0.48 (48%)

¹ IMF (2011). "Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries," IMF, Washington, D.C.: USA, p.12 Available at: www.imf.org/external/np/pp/eng/2011/030911.pdf, accessed: March 17, 2015.
² IMF (2011). "Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries," IMF, Washington, D.C.: USA, pp.13-16 Available at: www.imf.org/external/np/pp/eng/2011/030911.pdf, accessed: 03/17/2015.
³ Նույն տեղում, էջ 16:

Ոլորտի ինդեքս	Ցուցանիշի նկարագիր
Արտաքին հատվածի ինդեքս կշիռ՝ 0.25 կամ 25%	Պահուստների ծածկույթ (համախառն միջազգային պահուստներ/ներմուծում հարաբերակցություն) <i>Սահմանային շեմ՝ 2.38, կշիռ՝ 0.58 (58%)</i>
	Ապրանքների և ծառայությունների իրական աճ (% , նախորդ տարվա համեմատ) <i>Սահմանային շեմ՝ 1.77, կշիռ՝ 0.42 (42%)</i>
Ընդհանուր տնտեսության ինդեքս կշիռ՝ 0.44 կամ 44%	Իրական ՀՆԱ-ի աճ (% , նախորդ տարվա համեմատ) <i>Սահմանային շեմ՝ 2.96, կշիռ՝ 0.64 (64%)</i>
	Երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ գնահատականի ինդեքս <i>Սահմանային շեմ՝ 3.00, կշիռ՝ 0.36 (36%)</i>

Այս նպատակով ԱՄՅ-ն մշակել է հատուկ խոցելիության ինդեքս (տե՛ս աղյուսակը), որ կառուցման ժամանակ դիտարկվել են բազմաթիվ փոփոխականներ՝ տնտեսության ընդհանուր «առողջական վիճակը» (նախորդ տարվա ՀՆԱ-ի աճի տեմպը և գնաճը), արտաքին հատվածը (արտահանման աճի տեմպը, միջազգային պահուստները, ընթացիկ հաշվի պակասուրդը կամ ավելցուկը, արտաքին պարտքը), ինչպես նաև պետական հատվածի գործունեությունը (պետական ծախսերը, պետական բյուջեի պակասուրդ կամ ավելցուկ և պետական պարտք) նկարագրող ցուցանիշները վերջիններս ինդեքսում ներառելու համար՝ հիմք ընդունելով տնտեսական անկումների դեպքերը արտաքին շուկերի ժամանակ (արտաքին պահանջարկ, առևտրի պայմաններ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ), օգնություն, տրանսֆերտներ): ԱՄՅ-ն նաև ինդեքսի մեջ ներառել է ՀԲ-ի կողմից մշակած երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ գնահատականի ինդեքսը (CPIA) որպես դրա որակի ցուցանիշ: Իսկ վիճակագրական վերլուծության արդյունքների հիման վրա բացահայտվել է յուրաքանչյուր հնարավոր ցուցանիշի այն սահմանային շեմը, որն գերազանցելու դեպքում դա մեկնաբանվում է որպես արտաքին շուկերով պայմանավորված ճգնաժամի տեղի ունենալու ավելի մեծ հավանականության ազդանշան, իսկ ընտրված ցուցանիշները խմբավորվել են ոլորտային ինդեքսների մեջ (համապատասխան կշիռ տալով նրանցից յուրաքանչյուրին), որոնք հանդես են եկել որպես ընդհանուր խոցելիության ինդեքսի բաղադրիչներ:

Տարածման և սցենարային վերլուծություն¹: Այս վերլուծության հիմքում ընկած է համապատասխան փոխանցման ուղղու համապարփակ և համակարգային վերլուծություն՝ տարբեր շուկերի հանդեպ երկրի տնտեսության զգայունությունը ներկայացնելու նպատակով: Թեմատիկ վերլուծությունը կարող է ներառել առևտրային քաղաքականությանն առնչվող անսպասելի, համաշխարհային տոկոսադրույքների փոփոխությունները, իսկ որպես հիմնական փոխանցման ուղիներ պետք է դիտարկել առևտրային կապերը, ՕՈՒՆ-ը, օգնությունը և տրանսֆերտները: Տարբեր զարգացած և միջին եկամտի մակարդակ ունեցող երկրների ազդեցությունը ներկայացնելու նպատակով վերլուծության հիմքում ընկած է լինելու դեպի ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրներ ՕՈՒՆ-ին, տրանսֆերտների հոսքերին, օգնությանը, ինչպես նաև երկկողմանի առևտրին վերաբերող տվյալները: Ջարգացած և միջին եկամտի մակարդակ ունեցող երկրներում տնտեսական աճի տեմպի փոփոխության հետևանքով՝ դեպի ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրների առևտրային, ֆինանսական հոսքերի վրա ազդեցությունը քանակապես գնահատելու համար պանելային ռեգրեսիայի արդյունքում ստացված առածականության գործակիցները կիրառվում են փոխանցման ուղիների փոփոխությունների քանակական գնահատականը տալու համար: Միևնույն ժամանակ վերջիններիս գնահատականների հիման վրա էլ տրվում է ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրի վրա այլ երկրներից տնտեսական զարգացումների բացասական ազդեցության ակնկալվող չափը (առևտրային, ֆինանսական հոսքերի): Երկրներին բնորոշ օրինաչափություններն օգտագործվում են ներկայացնելու մետաղների, հանածոների, գյուղմթերքի գների փոփոխությունը տվյալ երկրի առևտրի պայմանների փոփոխության վրա: Սցենարային վերլուծության հիմքում տարբեր երկրներին վերաբերող կանխատե-

¹ Այս գնահատման մեթոդի հիմքում հետևյալ աղբյուրն է՝ International Monetary Fund (2011). “Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries.” The International Monetary Fund, Washington, D.C.: United States, pp.17-19, available at: www.imf.org/external/np/pp/eng/2011/030911.pdf (last accessed: March 17, 2015):

տումներն են, իսկ սցենարների պարամետրերի հիմքում անալիտիկ գործիքակազմն է: Միաժամանակ սինուլյացիաների հիման վրա ստացվում են արտաքին շուկերի ազդեցությունն այլ հատվածների կամ ոլորտների վրա (արտաքին, հարկաբյուջետային):

Ինչ վերաբերում է ընդհանուր խոցելիության ինդեքսին, և թեև ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով ՀՀ-ն ԱՄՆ-ի կողմից դասակարգված է որպես ցածր եկամտի մակարդակ ունեցող երկիր, սակայն գնողունակության պարիտետով արտահայտված ՀՆԱ-ի չափը գերազանցել է շեմային արժեքին, ինչպես նաև չի բավարարել այլ լրացուցիչ չափանիշի, որի հետևանքով Հայաստանը, ինչպես նաև Վրաստանը չեն ներառվել այն երկրների ցանկում, որոնց հիման վրա հաշվարկվել են կշիռները և սահմանային շեմերը¹: Հետևաբար, այս ինդեքսի միջոցով հնարավոր չէ ՀՀ-ի պարագայում հաշվարկել արտաքին շուկերի հանդեպ երկրի մակրոտնտեսական խոցելիության աստիճանը: Ինչ վերաբերում է սցենարային կամ տարածման վերլուծությանը, ապա այստեղ նկարագրված մոտեցումները կիրառելի են ՀՀ-ի պարագայում: Բայց այս դեպքում կարելի է համապատասխան ժամանակային շարքերի հիման վրա գնահատել ԱՄՆ-ի կողմից նշված փոխանցման ուղիներից յուրաքանչյուրի (ինչպես կոնկրետ երկրին վերաբերող այնպես էլ ընդհանուր) ազդեցության չափը ՀՆԱ-ի վրա: Իսկ այլ կառույցների կողմից հրապարկվող ՀՀ-ի, միջին եկամտի մակարդակ ունեցող տարածաշրջանային առաջատարի (ՀՀ-ի պարագայում՝ ՌԴ) և այլ երկրների տնտեսություններին, ինչպես նաև մետաղների, հանածոների, գյուղմթերքի գների փոփոխությանը վերաբերող կանխատեսումների հիման վրա կարելի է Հայաստանի համար սցենարային վերլուծություններ կատարել ՀՀ իրական ՀՆԱ-ի վրա արտաքին շուկերի ազդեցության գնահատականը տալու համար (գնահատված ազդեցության չափերի հիման վրա):

Ինչ վերաբերում է միջին եկամտի մակարդակ ունեցող երկրներին, ապա 1998թ.-ից սկսվեցին կիրառվել «վաղաժամ ազդանշանային համակարգ»-ի մոդելները, որոնց հիմքում մակրոտնտեսական անկայունությունն էր, և սկզբնական շրջանում դրանց հիմնական նպատակն էր կանխատեսել բանկային ու արժույթային ճգնաժամերի տեղի ունենալը²: Անդրադառնանք այդ գնահատման արդյունքներից որոշներին: Այսպես, Կամինսկին և այլոք (1998թ.)³ ուսումնասիրելով զարգացող երկրներում (հիմնականում միջին եկամտի մակարդակ ունեցող) արժույթային ճգնաժամերը կանխատեսող փոփոխականները (միջինում 61 ճգնաժամ յուրաքանչյուր ցուցանիշի գծով) առաջարկել են յուրահատուկ «վաղաժամ ազդանշանային համակարգ»: Վերջինիս իմաստը կայանում է նրանում, որ անհրաժեշտ է մոնիթորինգի ենթարկել որոշակի ցուցանիշների փոփոխությունները նախքան ճգնաժամն ընկած ժամանակահատվածը, իսկ իրենց կողմից առաջարկված մոտեցման հիման վրա էլ պարզել են, թե որ մակրոտնտեսական փոփոխականների (արտահանում, փոխարժեքի տատանումը տրենդից, M2/միջազգային պահուստ, ՀՆԱ-ի ինդեքս և արժեթղթերի գների ինդեքս) սահմանային արժեքների գերազանցումն է լավագույնս հանդես գալիս որպես արժույթային ճգնաժամի ազդանշան, կապված այն իրողության հետ, որ հետագա 24 ամսվա ընթացքում կարող է արժույթային ճգնաժամ արձանագրվել: Սակայն ըստ ԱՄՆ-ի (1998թ.) գրեթե անհնար է բացահայտել որևէ ցուցանիշ համակարգ, որի միջոցով հնարավոր լինի նախօրոք (բավականին վաղ ժամկետում) պարզել ապագա ճգնաժամերի առաջացումը: Իսկ, այն մակրոտնտեսական փոփոխականները, որոնք սխտեմատիկորեն առնչվել են ճգնաժամի հանդեպ տնտեսության խոցելիության հետ կարող են «կիրառվել բացահայտելու այն իրավիճակները, որի դեպքում տնտեսությունը կանգնած է ֆինանսական ճգնաժամի ռիսկի առջև»⁴: ԱՄՆ-ն 3 ցուցանիշ է ներառել (իրական փոխարժեքի արժևորում, ներքին իրական վարկերի աճը և M2/միջազգային պահուստ) իր կողմից մշակված մակրոտնտեսական խոցելիության ինդեքսի մեջ 6 ասիական և 4 Լատինական Ամերիկայի երկրների արժույթային ճգնաժամի նկատմամբ մակրոտնտեսական խոցելիությունը գնահատելու համար, ինչը զգալիորեն բարձրացնում է

¹ International Monetary Fund, (2011) "Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries." The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.30.

² Claessens, Stijn and Kose, Ayhan M. (2013). "Financial Crises: Explanations, Types, and Implications" IMF Working Paper No. 13/28, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.33.

³ Kaminsky, Graciela, Lizondo, Saul and Reinhart, Carmen (1998). "Leading Indicators of Currency Crises", IMF Staff Papers, Palgrave Macmillan, Vol. 45, No. 1, pp.1-24.

⁴ IMF (1998). "Financial Crises: Characteristics and Indicators of Vulnerability," Chapter IV, in IMF (ed.), *World Economic Outlook. Financial Crises: Causes and Indicators*. The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.88.

ճգնաժամի ռիսկը, սակայն չի կանխատեսում դրա առաջացումը, քանի որ ճգնաժամ կարող է տեղի չունենալ կախված կառավարության կողմից որդեգրված քաղաքականության կամ տնտեսական պայմանների փոփոխությունից¹: ԱՄՆ-ն նաև նշում է, որ թեպետ այս մոտեցումը, եթե նույնիսկ չի բացահայտում, որ տնտեսությունը համարվում է խոցելի, տվյալ երկրում կարող է ճգնաժամ գրանցվել փոխանցվող ճգնաժամների պատճառով: Հերբերան և Գարսիան (1999թ.) մակրոտնտեսական խոցելիության համար ևս մշակել են «վաղաժամ ազդանշանային համակարգ» Լատինական Ամերիկայի մի քանի երկրի համար (Արգենտինա, Բրազիլիա, Չիլի, Կոլումբիա, Եկվադոր, Մեքսիկա, Պերու և Վենեսուելա)²: Հեղինակները մշակել են ամփոփ մի ցուցանիշ (ինդեքս), որը որոշակիորեն տարբերվում էր ԱՄՆ-ի մոտեցումից: Այս մակրոտնտեսական խոցելիության ինդեքսի հաշվարկի ժամանակ օգտագործել են հետևյալ ցուցանիշները՝ M2/միջազգային պահուստ, տեղական վարկերի իրական աճը, իրական արդյունավետ փոխարժեքը և գնաճը, իսկ ցուցանիշը հնարավորություն է տվել կանխատեսելու ընտրված երկրների մակրոտնտեսական խոցելիությունը ճգնաժամի հանդեպ:

Գոլդսթեյնը և այլոք (2000թ.)³ նշում են, որ երկրի արժույթային ճգնաժամի նկատմամբ մակրոտնտեսական խոցելիությունը կանխատեսող երկու լավագույն տարեկան ցուցանիշները մեծ չափերի հասնող ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ և ընթացիկ հաշվի պակասուրդ/ներդրումներ հարաբերակցություններն են: Իսկ վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ներկայիս գրականության ակնարկի հիման վրա Քլասսենսը և Քոզը (2013թ.)⁴ նշում են, որ ճգնաժամներին սովորաբար նախորդում է այդ տարիների միջինի նկատմամբ համեմատաբար մեծ չափերի հասնող ընթացիկ հաշվի պակասուրդը, թեպետ արտաքին անհավասարակշռությունների համեմատ վարկերի աճի միտումը համարվում է ճգնաժամ կանխատեսող առավել արդյունավետ ցուցանիշ:

Ինչ վերաբերում է Հայաստանում արժույթային ճգնաժամների կանխատեսման վաղաժամ ազդանշանային համակարգերի մշակմանը, ապա այդ հարցերով զբաղվել է ՀՀ ԿԲ տնտեսագետ Հայկ Ավետիսյանը⁵: Հեղինակը նշում է, որ ինքը համակարծիք է տնտեսագետների շրջանում գոյություն ունեցող այն կարծիքի հետ, որ անկախ բարդության աստիճանից, վաղաժամ ազդանշանային համակարգերը չեն կարող կանխատեսել արժույթային ճգնաժամները բացարձակ ճշգրտությամբ, ինչպես նաև այն, որ իր կողմից մշակված մոդելները չեն կարող փոխարինել տնտեսության մանրամասն վերլուծությանը՝ ճգնաժամների նկատմամբ հակվածությունը գնահատելու նպատակով: Այդ մոդելները ունեն կանխատեսումներ անելու բարձր կարողություն և կարող են օգտագործվել ոչ միայն արժույթային, այլ նաև այլ տեսակի ֆինանսական ճգնաժամների առաջացումը կանխատեսելու նպատակով և որպես լավագույն տարբերակ նշում է Դասակարգումների և ռեգրեսիոն ծառերի (CART) մեթոդաբանությամբ կառուցած մոդելը՝ հիմք ընդունելով վերջինիս կանխատեսումային որակները: Վաղաժամ ազդանշանային համակարգի մեթոդաբանությամբ հեղինակը հաշվարկել է առաջանցիկ համարվող ցուցանիշների կարևորությունը, բացարձակ և հարաբերական շեները, պայմանական հավանականությունները: Միևնույն ժամանակ նույն հեղինակը պարզել է, որ իր կողմից դիտարկված 24 փոփոխականներից 9-ը ապագայում ճգնաժամների առաջացման վերաբերյալ ազդանշան են արձանագրում առնվազ 3 եռամսյակ առաջ (CART-ի փոփոխականների կարևորության և զգայունության LOVO թեստի արդյունքների հիման վրա): Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի տվյալներով Դասակարգումների և ռեգրեսիոն ծառերի մեթոդաբանությամբ կառուցած վերջնական մոդելին, ապա հեղինակը նշում է, որ «Հայաստանում դիտարկված ճգնաժամային երևույթների բացատրության արտաքին գործոններից

¹ IMF (1998). "Financial Crises: Characteristics and Indicators of Vulnerability," Chapter IV, in IMF (ed.), *World Economic Outlook. Financial Crises: Causes and Indicators*. The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.95:

² Herrera, Santiago and Garcia, Conrado (1999) "User's Guide to an Early Warning System for Macroeconomic Vulnerability in Latin American Countries", Policy Research Working Paper. No. 2233, Economic Policy Sector Unit, Latin America and the Caribbean Region, The World Bank, Washington, D.C.: United States, pp.1-15.

³ Goldstein, M., C. Reinhart, and G. Kaminsky, 2000, *Assessing Financial Vulnerability: An Early Warning System for Emerging Markets*, Institute for International Economics, Washington, DC:United States, p.96.

⁴ Claessens, Stijn and Kose, Ayhan M. (2013) "Financial Crises: Explanations, Types, and Implications" IMF Working Paper No. 13/28, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.33.

⁵ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2012»: Երևան, 2013, էջ 63-151:

բարձր նշանակալիությունն է ստանում վարակի էֆեկտի¹ ցուցանիշը և ոչ թե համաշխարհային տնտեսական աճի և նավթի համաշխարհային գների ցուցանիշները», ինչպես նաև հավելում է, որ «արձանագրված արժուրային ճգնաժամերի կանխատեսման գործում կարևորվում է ներքին տնտեսական զարգացման առնչվող գործոնների քննարկումը՝ որպես հիմնարար առաջանցիկ ցուցանիշներ»²: Իսկ ինչ վերաբերում է արժուրային ճգնաժամը կանխատեսող ըստ կարևորության գործոններին, ապա այստեղ առաջատարները վարկավորում/ավանդներ և բանկերի արտաքին ակտիվներ/պարտավորություններ հարաբերակցություններն են եղել:

Այս մեթոդաբանությամբ ստացված արդյունքները փաստում են այն մասին, որ երկրում արժուրային ճգնաժամի առաջացման գործում կարևոր դեր է խաղացել ճգնաժամի փոխանցումը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ՌԴ-ում ճգնաժամի առաջացումը բացատրում է ՀՀ-ում արժուրային ճգնաժամի առաջացումը: Ինչ վերաբերում է համաշխարհային տնտեսության աճի տեմպին, ապա դա կարող է անդրադառնալ է ՀՀ տնտեսության վրա՝ հիմնականում կապված այլ երկրներից ուղարկվող տրասֆերտների, արտահանման (հատկապես մետաղների և հանածոների), ինչպես նաև ՕՈՒՆ-ի ծավալների հետ: Ներքին տնտեսական զարգացման առնչվող գործոնների տեսանկյունից կարևորվում են վարկավորման ծավալների, անշարժ գույքի գների փոփոխությունները, որոնք ներքին շուկերը կամ ռեցեսիաները պայմանավորող գործոններն են, ինչպես նաև կարող են նախորդել տվյալ երկրում ֆինանսական ճգնաժամերին կամ դրա հետևանքը լինել (արտաքին գործոններով պայմանավորված), երբ բանկերի կողմից վերցված օտարերկրյա վարկերն են երկրում վարկավորման ծավալների աճի պատճառը: Պետք է նշել, որ միայն տնտեսության մանրամասն վերլուծությունը հնարավորություն կտա պարզելու այն գործոնները (հատկապես արտաքին), որոնց հանդեպ էլ խոցելի է տվյալ երկիրը, և որոնք էլ կարող են պայմանավորել արժուրային ճգնաժամի առաջացումը տվյալ երկրում (ներքին շուկերի առկայության պարագայում ևս): Մանրամասն վերլուծության արդյունքները հնարավորություն կտան կառավարությանը հակաճգնաժամային միջոցառումների ճիշտ գործիքակազմը ընտրել, ինչպես նաև իրականացման ավելի բարձր արդյունավետությունն ապահովել:

Մակրոտնտեսական խոցելիության ուսումնասիրության մեկ այլ մեթոդ է համարվում դրա որոշումը՝ կախված յուրահատուկ, կառուցվածքային պայմաններից, որոնք երկրում տնտեսական կամ ֆինանսական ճգնաժամերի պատճառ են հանդիսանում: Եվ հաշվի առնելով երկրի շուկերը հաղթահարելու սահմանափակ կարողությունը (ինչն էլ հավանաբար ավելի խորը ազդեցություն է թողնում տնտեսության վրա), որոշ հեղինակներ դիտարկում են երկրի մակրոտնտեսական խոցելիությունը երկրի շուկերի հանդեպ հակվածության և դրանց նկատմամբ ճկունության համատեքստում³:

Իրենց հերթին Բրիգուգլիոն և այլոք (2009թ.) իրենց կողմից առաջարկած հայեցակարգային մոդելի հիման վրա կառուցել են ճկունության ինդեքս, որի 4 բաղադրիչների՝ մակրոտնտեսական կայունության, շուկայի արդյունավետության, պետական կառավարման որակի և սոցիալական զարգացման մակարդակի արժեքների միջինն է, իսկ յուրաքանչյուրի արժեքը համարվում է դրանցում ներառված ցուցանիշների արժեքների միջինը, որոնք նորմալացվում են տվյալների համադրելիությունը պահպանելու նպատակով՝ ստանդարտացումը կատարելով ըստ հետևյալ բանաձևի⁴՝

$$XS_{ij} = (X_{ij} - \min X_j) / (\max X_j - \min X_j) \quad j=1, 2, \dots, 4, \quad i=1, 2, \dots, N: \quad (1)$$

Որտեղ՝

XS_{ij} -ն i -րդ երկրի j -րդ բաղադրիչի ստանդարտացված, նորմալացված արժեքն է:

X_{ij} -ն տվյալ ցուցանիշի փաստացի արժեքն է:

$\min X_j$ -ն j -րդ բաղադրիչի նվազագույն արժեքն է:

¹ Վարակի էֆեկտը նույն փոխանցվող ճգնաժամն է (contagion):

² Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2012»: Երևան, 2013, էջ 97:

³ Seth, Anuradha and Ragab, Amr (2012) "Macroeconomic Vulnerability in Developing Countries: Approaches and Issues," Working Paper number 94, International Policy Centre for Inclusive Growth (IPC - IG), Poverty Practice, Bureau for Development Policy, UNDP, Brasilia: DF - Brazil, p.2.

⁴ Briguglio, Lino, Cordina, Gordon, Farrugia, Nadia, and Vella, Stephanie (2009) "Economic Vulnerability and Resilience: Concepts and Measurements", *Oxford Development Studies*, Vol. 37, No. 3, pp.234-329

max X_j -ն j -րդ բաղադրիչի առավելագույն արժեքն է:

N -ն երկրների քանակն է:

Իսկ նորմալացված փոփոխականը ընկած է 0-ից 1 միջակայքում: Յեղիմակները բաղադրիչների հաշվարկի ժամանակ ներառել են 86 երկիր, սակայն Յայաստանը դրանց շարքում չի եղել:

Գվիլլամոնթը (2009թ.) առաջարկել էր զարգացող երկրների տնտեսական խոցելիությունը գնահատելու համար իր մոտեցումը՝ կառուցելով մակրոտնտեսական խոցելիության ինդեքս (EVI)¹: Յեղիմակը ինդեքսի մեջ ներառել է երկու՝ անպաշտպանության և շոկի ինդեքսները, որոնց և տրվել են հավասար կշիռներ: Իսկ ինդեքսի հաշվարկի ժամանակ յուրքանջուր բաղադրիչում ներառված ցուցանիշները բերվել են նույն չափողականության՝ առավելագույն և նվազագույն արժեքների հիման վրա, իսկ ինդեքսի հաշվարկի համար առաջարկվել էր կիրառել հետևյալ բանաձևը՝

$$EVI = \sqrt{(1 - EXP)(1 - SH)} \quad (2)$$

Որտեղ՝

EVI-ն տնտեսական խոցելիության ինդեքսն է:

EXP-ն անպաշտպանության ինդեքսն է:

SH-ն շոկերի ինդեքսն է:

Որոշ հեղիմակներ իրենց աշխատություններում ևս զբաղվել են մակրոտնտեսական խոցելիության ինդեքսի կառուցմամբ²: Այդպիսի ինդեքսները չափում են կոնկրետ պահին տվյալ երկրի դիրքը այլոց համեմատ, ինչը նշանակում է, որ այդ նույն երկրների արդյունքների համեմատությունը հաջորդ տարի նպատակահարմար չէ, քանի որ նորմալացման ժամանակ տվյալ ցուցանիշի առավելագույն և նվազագույն արժեքներն են կարևոր: Յաջորդ տարվա առավելագույն և նվազագույն արժեքներից կախված որոշվում է տվյալ երկրի ցուցանիշի արժեքը և այն կարող է չարտացոլել այն բարելավումը, որը տվյալ երկիրը կարող է արձանագրել նախորդ տարվա համեմատ:

Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա Էմիլ Ջալիմյանը³ իր մոտեցման հիման վրա առաջարկել է տնտեսական խոցելիության ինդեքսի համար օգտագործել հետևյալ ցուցանիշները և 71 երկրի համար հաշվարկել է խոցելիության ինդեքսը՝

- տնտեսության բացվածություն,
- արտահանման կենտրոնացվածություն,
- էներգառեսուրսների ներմուծման մակարդակ,
- երկրի տարածք,
- արտաքին պարտքի մակարդակ,
- դրամական փոխանցումների բաժինը համախառն ազգային եկամտում,
- ֆինանսական բացվածության մակարդակ՝ որպես ներդրումների և խնայողությունների տարբերության հարաբերություն ՀՆԱ-ին:

Յեղիմակի հաշվարկների արդյունքում ՀՀ ինդեքսի արժեքը կազմել էր 0.44, ինչը նշանակում է որ, տնտեսության խոցելիության մակարդակը բավականին բարձր է և 71 երկրի մեջ զբաղեցրել է 14-րդ տեղը: Է. Ջալիմյանի այս մոտեցումը չի տարանջատում արտաքին գործոնները մակրոտնտեսական հիմքերից, և այդ ինդեքսի մեջ նա ներառել է ինչպես կառուցվածքային, այնպես էլ քաղաքականությամբ պայմանավորված մակրոտնտեսական խոցելիության ցուցանիշները, ինչն առնվազն պահանջում է երկու բաղադրիչ, որոնց հետ կապված այդ ինդեքսում կշռի որոշման հարց է առաջացնում:

¹ Guillaumont, Patrick (2009). "An Economic Vulnerability Index: Its Design and Use for International Development Policy" *Oxford Development Studies*, Vol. 37, No. 3, p.204-205:

² Briguglio, Lino (1995). "Small Island Developing States and Their Economic Vulnerabilities," *World Development*, Vol. 23, No. 9, pp.1615-1632, և այլն:

³ Ջալիմյան Էմիլ, Տնտեսական խոցելիությունը և դրա բաղադրիչները // Յայաստան. «Էկոնոմիկա և ֆինանսներ», Երևան, 2011. թիվ 2 (128), էջ 10-11:

Կարևոր դեր է խաղում այլ երկրներում տնտեսական և ֆինանսական ճգնաժամերի հետևանքով բացասական ազդեցության տվյալ երկիր փոխանցելու ուղիների կամ գործոնների ուսումնասիրությունը, քանի որ վերջիններիս ծավալների փոփոխությամբ է որոշվելու իրական ՀՆԱ-ի վերջնական մեծությունը: Այս գործոնների փոփոխությունների գնահատված արժեքները հնարավորություն կտան ՀՀ կառավարությանը պարզելու ՀՆԱ-ի փոփոխության ակնկալվող վիճակագրորեն նշանակալի չափը, ինչն էլ իր հերթին թույլ կտա ընտրելու երկրի ճկունության մակարդակի բարձրացման, ինչպես նաև հակաճգնաժամային միջոցառումներին ուղղված համապատասխան գործիքակազմ:

**ՄԱԿՐՈՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԵՎ ՀՀ-ՈՒՄ**

ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

*Մ.Գ.Ա.Ս.Քոտանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

Համառոտագիր

Հոդվածում համառոտ կերպով ներկայացված են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից առաջարկված ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրների մակրոտնտեսական խոցելիության գնահատման հայեցակարգային հիմքերը և արժույթային ճգնաժամերի հետ կապված ցուցանիշները: Հեղինակը միաժամանակ առաջարկում է արտաքին գործոնների գնահատված փոփոխության չափերը համալրելով այլ՝ զարգացած և միջին եկամտի մակարդակ ունեցող և հատկապես Ռուսաստանի Դաշնության տնտեսական վիճակին, մետաղների, հանածոների գների վերաբերող կանխատեսումների հետ հաշվարկել իրական ՀՆԱ-ի կրճատման ակնկալվող չափը Հայաստանի Հանրապետությունում:

Բանալի բառեր. մակրոտնտեսական խոցելիություն, վաղաժամ ազդանշանային համակարգ, առաջանցիկ ցուցանիշ, արժույթային ճգնաժամ, ճգնաժամի փոխանցում, արտաքին շոկ, ազդեցություն, կանխատեսում:

ПОДХОДЫ К ОЦЕНКЕ МАКРОЭКОНОМИЧЕСКОЙ УЯЗВИМОСТИ ЗА РУБЕЖОМ И В РА

АННА МАКАРЯН

*аспирант Института экономики
им. М.Котаяна НАН РА*

АННОТАЦИЯ

В статье в краткой форме представлены предложенные со стороны Международного валютного фонда концептуальные основы оценки макроэкономической уязвимости стран с низким уровнем доходов и показатели, связанные с валютными кризисами. Одновременно автор предлагает путем сопоставления размеров оцененных изменений внешних факторов с экономическим состоянием других стран – развитых и имеющих средний уровень доходов, в особенности Российской Федерации, наряду с прогнозами, касающимися цен на металлы, полезные ископаемые, рассчитывать ожидаемый размер сокращения реального ВВП в Республике Армения.

Ключевые слова: макроэкономическая уязвимость, преждевременная сигнальная система, опережающий показатель, валютный кризис, передача кризиса, внешний шок, воздействие, прогноз.

**APPROACHES TO THE ASSESSMENT OF MACROECONOMIC VULNERABILITY
IN OTHER COUNTRIES AND THE REPUBLIC OF ARMENIA**

ANNA MAKARYAN

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article briefly describes the operational framework for vulnerability assessment of low-income countries proposed by the International Monetary Fund, and other indicators related with currency crises. The author proposes to use the estimated changes in external sources of vulnerability combined with the various forecasts on changes in commodity prices, economic developments in advanced nations and EM markets, especially in the Russian Federation to provide the predicted estimates of real GDP decline in the Republic Armenia.

Keywords: Macroeconomic vulnerability, early warning system, lead indicator, currency crisis, contagion, external shock, impact, forecast

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՐԱ ԶԵՎԵՐԻ ՀՈՒՐՋ

Տնտեսագիտական դպրոցների հայեցողություններում կայուն զարգացման հիմնախնդրի վերաբերյալ առկա են սկզբունքային տարբերություններ: Տնտեսական աճի ժամանակակից դասական տեսությունը նախկինի պես բնական ռեսուրսները չի դիտում որպես արտադրության գործոն, որի արդյունքում որոշ հետազոտություններում, որոնք կապված են բնական ռեսուրսների լրիվ հյուծման հետ, ենթադրվում է բնական ռեսուրսը արհեստական կապիտալով փոխարինման անվերջ էլաստիկություն (Ռ.Բարրոու, Խ.Սալաի-Մարտին)¹: Տնտեսական աճի նեոդասական տեսության ներկայացուցիչները անդրադարձել են բնական ռեսուրսների շուկայական գնահատականի, շրջակա միջավայրի որակի վատթարացման տնտեսական փոխհատուցման հիմնախնդիրներին: Նեոհիստիտուցիալիզմի ուղղությունը սոցիալ-բնապահպանատնտեսական հիմնախնդիրների լուծումը տեսնում է այնպիսի կառույցների ստեղծման մեջ, որոնք կկարգավորեն առկա խնդիրները պետական լծակներով և բնակչության շրջանում արմատացած կարծրատիպերի փոփոխությամբ: Նեոքեյնսյան ներկայացուցիչները մշակում են պետական կարգավորման գործիքներ՝ ուղղված տնտեսական բնույթի հարցերի լուծման էկոլոգիզացմանը:

Տնտեսական աճի նեոդասական տեսությունում հիմնական ուժերից մեկը, որն ապահովում է տնտեսական աճ սահմանափակ ռեսուրսների դեպքում, տեխնոլոգիական առաջընթացն է աշխատանքի արտադրողականության աճի հաշվին: Տնտեսական աճի նեոդասական տեսությունը ենթադրում է ռեսուրսների փոխարինման բարձր մակարդակ, հատկապես տեխնոլոգիական զարգացման և գնային մեխանիզմի միջոցով: Սակայն այդպիսի մոտեցումը դժվար կիրառելի է բնական ռեսուրսների նկատմամբ, որոնք կարող են ունենալ շուկայի կողմից չգնահատվող սպառողական արժեքներ: Բնական կապիտալի փոխարինման հնարավորությունը արհեստականով հիմնախնդիրը առաջացրել է կրիտիկական բնական կապիտալի հայեցակարգը, ըստ որի՝ կրիտիկական կապիտալը կյանքի համար անհրաժեշտ այն բնական բարիքներն են, որոնք չի կարելի փոխարինել արհեստական կապիտալով, օրինակ՝ գլոբալ կլիման, օզոնային շերտը, լանդշաֆտները, կենսաբանական բազմազանությունը և այլն: Կրիտիկական բնական կապիտալը անհրաժեշտ է պահպանել՝ անկախ զարգացման ձևից:

1993 թվականին Ռ.Կ.Տերները դասակարգել է կայուն զարգացման ձևերը ըստ կայունության մակարդակների՝ շատ թույլ, թույլ, ուժեղ, շատ ուժեղ²:

Հայեցակարգը, որը ենթադրում է բնական կապիտալի փոխարինման հնարավորությունը արհեստականով (մարդու կողմից ստեղծված), կոչվում է կայուն զարգացման թույլ ձև կամ թույլ կայունություն (weak sustainability):

Ամենաթույլ կայունությունը ներկայացնում է Հարտվիկի նախնական կանոնը: Ջոն Հարտվիկը 1977թ. առաջին անգամ տվել է չվերականգնվող ռեսուրսներից զգալի չափով կախված տնտեսության կայունության պայմանը, ըստ որի՝ կայուն զարգացումը կարելի է ապահովել՝ բնական ռեսուրսների հյուծման դիմաց ստացված ողջ ռենտան ներդնելով վերարտադրվող կապիտալում³: Ըստ Հարտվիկի կանոնի՝ չվերականգնվող ռեսուրսներից ստացված ռենտային եկամուտները չպետք է սպառվեն ներկա սերնդի կողմից: Հարտվիկի կանոնի թերությունն այն է, որ նրանում հաշվի չէր առնվում գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված արտադրողականու-

¹ Barro R.J., Sala-i-Martin X. Economic Growth. Cambridge: MIT Press, 2003.

² Turner, R.K. Sustainability: principles and practice. In: R. Kerry Turner (ed.). Sustainable environmental economics and management: principles and practice. – London: Belhaven Press. – 1993. – P. 37–69.

³ Hartwick J.M. Intergenerational Equity and the Investing of Rents from Exhaustible Resources // American Econ. Rev. – Vol. 67 (5). – 1977. – P. 972–974.

թյան աճը, քանի որ ըստ հեղինակի՝ տեխնիկական առաջընթացի աճի տեմպերը գերազանցում են բնակչության աճի տեմպերը:

Սուլոուն հաստատեց, որ Հարստվիկի կանոնը ենթադրում է ամբողջական կապիտալի պահպանումը, ինչն էլ ապահովում է կայունություն ռեսուրսների օգտագործման մեջ¹:

Տ.Փեյջը նշել է, որ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է փոխհատուցել ապագա սերունդներին ռեսուրսների ցանկացած անվերադարձ կրճատում, ինչը բխում է Հարստվիկի կանոնից²: Դրա էությունն այն է, որ տնտեսության մեջ գումարային խնայողություններից հանած ամբողջական կապիտալի մաշվածությունը պետք է կազմի ոչ բացասական մեծություն: Դա սկզբունքորեն կարևոր է արդյունահանող ճյուղերի թուլատրելի մասշտաբների որոշման, այդ թվում՝ հանքարդյունաբերության համար: Ենթադրվում է, որ արհեստական, մարդկային և բնական կապիտալները փոխադարձ փոխարինելի են և չափակցելի: Կայուն զարգացումը ապահովվում է տնտեսական կապիտալում բնական ռենտայի ներդրմամբ, որն անհրաժեշտ է փոխանցել հաջորդ սերունդներին այնպիսի համամասնությամբ, որ պահպանվի սպառման հաստատուն մակարդակ: Սերունդների միջև փոխհատուցումը պետք է իրականացնել՝ ներկա սերունդների վրա հարկեր դնելով և ռեսուրսների մեջ ներդրումներ կատարելով:

Թույլ կայունության տեսակը ներկայացնում են լոնդոնյան դպրոցի ներկայացուցիչները՝ Դ.Պիրսը³, Գ.Ատկինսոնը⁴ և այլն: Վերջիններիս կարծիքով՝ բնական կապիտալի փոխարինումը արհեստականով թուլատրելի է մինչև որոշակի կրիտիկական միջ:

Տ. Տիտենբերգի մոտեցմամբ կայունության հասկացությունը համապատասխանում է Ռ.Տերների թույլ կայունության հասկացությանը: Տիտենբերգը ապացուցել է, որ ֆիզիկական (արտադրված) և բնական կապիտալի փոխարինման հնարավորությունը էականորեն սահմանափակ է. գումարային բնական կապիտալի արժեքը չպետք է կրճատվի ժամանակի ընթացքում, բայց բնական ռեսուրսի մի տեսակը կարող է փոքրացվել այլ տեսակով փոխհատուցման պայմանով և բնական ռեսուրսների կրիտիկական սահմանային արժեքը անհրաժեշտ է պահպանել՝ շեշտելով, որ այդ մակարդակը դեռ որոշված չէ: Ավելին, բնական համակարգերով մանիպուլյացիան, որոնց էկոլոգիական գործառնությունները բավարար չափով ուսումնասիրված չեն, զգալիորեն բարձրացնում են էկոլոգիական աղետների ռիսկերը: Իրոք, վերարտադրվող կապիտալը կարող է լինել փոխարինող ռեսուրս, բայց միայն որոշակի սահմաններում⁵:

Լոնդոնյան դպրոցի ներկայացուցիչները ինչ-որ չափով համամիտ են նաև ուժեղ կայունության դրույթներին՝ բնական կապիտալի սպառված մասի փոխարինումը թուլատրելի է միայն այլ բնական ռեսուրսով, բայց ոչ տեխնածին կապիտալով:

Շատ ուժեղ կայունության կողմնակիցները, որոնք ներկայացնում են թերմոդինամիկ դպրոցը՝ Ն.Գեորգեսկու-Ռոզենը Հ.Դեյլին⁶, Ռ.Կոստանցան, գտնում են, որ բնական կապիտալի փոխարինումը արհեստական և այլ տեսակի բնական կապիտալով սկզբունքորեն անթուլատրելի է: Նրանք պնդում են, որ բնական ռեսուրսները և կապիտալը կարող են իրար փոխարինել միայն արտադրության գործընթացում, այսինքն՝ փոխարինման էլաստիկությունը հավասար է զրոյի: Թերմոդինամիկ դպրոցի հիմնադիր Ն.Գեորգեսկու-Ռոզենը գիտական շրջանառության մեջ է մտցրել թերմոդինամիկայի օրենքների վրա հիմնված անընդհատ տնտեսական աճի անհնարինության պարադոքսը՝ բնական ռեսուրսների անխուսափելի սակավության պատճառով: Նա պնդում է, որ ըստ թերմոդինամիկայի երկրորդ օրենքի՝ (էնտրոպիայի օրենք) փակ համակարգում նյութի շրջանառության լրիվ կրկնվող ցիկլը անհնար է, և այդ պատճառով բնական ռեսուրսների սակավությունը ժամանակի ընթացքում աճելու է⁷:

¹ Solow R.M. On the intergenerational allocation of natural resources // Scandinavian Journal of Economics. № 88 (1), 1986.

² Page T. Intergenerational equity and the social rate of discount. In: V. Kerry Smith (ed.). Environmental resources and applied welfare economics. Resources for the Future. –Washington DC. – 1988.

³ Пирс Д. Экономика природных ресурсов и окружающей среды. – М: Диалог-МГУ. – 1992. – 21 с.

⁴ Hamilton, K., Atkinson, G. Wealth, Welfare and Sustainability: Advances in Measuring Sustainable Development. – Northampton, MA: Edward Elgar. – 2006.

⁵ Tietenberg, T. Environmental and Natural Resource Economics / 4th ed. Harper Collins College Publishers. – New York, 1996.

⁶ Daly H., Prugh T., Costanza R. The Local Politics of Global Sustainability. – Island Press. – 2000.

⁷ Georgescu-Roegen N. Energy and economics myths: institutional and analytical economic essays. Pergamon Press. – New York., 1976.

Ամերիկյան հետազոտող Ռ.Կոստանցան գտնում է, որ, քանի որ բնական և մարդու կողմից արտադրված կապիտալը, ընդհանուր առմամբ, իրար լրացնող և ոչ թե իրար փոխարինող գործոններ են, ապա ուժեղ կայունությունը առավել ճիշտ է և գերադասելի¹:

Գոյություն ունեն կայուն զարգացման նաև միջանկյալ հայեցակարգեր, որոնք ենթադրում են, որ չվերականգնվող ռեսուրսի պաշարի մի մասը պետք է մնա անձեռնմխելի, իսկ վերականգնվող ռեսուրսի պաշարը պետք է պահպանվի բնակչության մեկ շնչին ընկնողի հաշվարկով հաստատուն մակարդակի վրա:

Տնտեսության անցման փուլում գտնվող երկրներին, այդ թվում Հայաստանին, հատկանշական է կայունության թույլ ձևի կողմնորոշումը: Դա պայմանավորված է ՀՀ տնտեսության զարգացման անցման փուլում հունքային տնտեսությունից աստիճանաբար հրաժարվելու նպատակահարմարությամբ: Հարկ է նկատել, որ Հայաստանի դեպքում տնտեսական աճի 30%-ից և արտահանման կեսից ավելին ապահովող մետաղական հունքի արտադրության ծավալների կտրուկ կրճատումը (ուժեղ կայունություն) կհանգեցնի տնտեսական կաթվածի: Չվերականգնվող մետաղական ռեսուրսների հյուժվածության հիմնախնդրի լուծումը Հայաստանի տնտեսության արդի պայմաններում իրատեսական է կայուն զարգացման առնչությամբ տնտեսական աճի նեոդասական տեսության շրջանակներում, ըստ որի՝ հյուժված բնական կապիտալը հնարավոր է փոխարինել կապիտալի այլ ձևերով խելամիտ սահմաններում (թույլ կայունություն): Հարկ է շեշտել, որ վերականգնվող բնական ռեսուրսների կտրվածքով Հայաստանի համար նպատակահարմար է ուժեղ կայունության մոդելի կիրառումը:

¹ Costanza R. Three General Policies to Achieve Sustainability. University of Maryland. – 2001. <http://www.dieoff.com/page87.htm>.

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՅԱՅԷՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՐԱ ՁԵՎԵՐԻ ՇՈՒՋ

ՍԱՌԱ ՄԿՐՏՉՅԱՆ, *դ. գ. թ.*

*Նախաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարանի (ՆԱՊՏ) տնտեսագիտության
և կառավարման ամբիոնի դոցենտ*

Համառոտագիր

Տնտեսագիտական դպրոցների ներկայացուցիչների հայացքներում կայուն զարգացման հիմնախնդրի նկատմամբ առկա են սկզբունքային տարբերություններ, որոնք էլ պայմանավորում են նրա լուծման և դասակարգման տարբեր մեկնությունները: Ուսումնասիրելով հիմնական տնտեսագիտական դպրոցների մոտեցումները, հեղինակը Հայաստանի ժամանակակից տնտեսության համար իրատեսական է գտնում թույլ կայունության ձևը տնտեսական աճի նեոդասական տեսության շրջանակներում:

***Բանալի բառեր.** կայուն զարգացում, թույլ կայունություն, ուժեղ կայունություն, հյուծված բնական կապիտալ, տեխնոլոգիական կապիտալ, չվերականգնվող ռեսուրս, տնտեսական աճի նեոդասական տեսություն:*

ВЗГЛЯДЫ ЭКОНОМИЧЕСКИХ ШКОЛ НА УСТОЙЧИВОЕ РАЗВИТИЕ И ЕГО ТИПЫ

ՏԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ, *կ. թ. թ.*

*доцент кафедры экономики и управления
Национального политехнического
университета Армении (НПУА)*

Аннотация

Во взглядах представителей экономических школ по отношению к проблеме устойчивого развития существуют принципиальные разногласия, которыми обусловлены различные интерпретации ее решения и классификации. Изучая подходы основных экономических школ, для современной экономики Армении, автор считает реалистичной форму слабой устойчивости в рамках неоклассической теории экономического роста.

***Ключевые слова:** устойчивое развитие, слабая устойчивость, сильная устойчивость, истощаемый природный капитал, техногенный капитал, невозобновимый ресурс, неоклассическая теория экономического роста.*

THE VIEWS OF ECONOMIC SCHOOLS ON THE SUSTAINABLE DEVELOPMENT AND ITS FORMS

SARA MKRTCHYAN, *Ph.D. in Economics*

*Associate Professor, Economic and Management Department
Armenian National Polytechnic University*

Abstract

The views of the representatives of different economic schools on the sustainable development issue vary fundamentally from each other. These differences in views determine the approaches to address this issue and how to interpret various classifications. By studying the approaches of the main economic schools, the author thinks that the weak sustainability paradigm that originated as an extension of the neoclassical theory of economic growth is realistic for the modern economy of Armenia.

***Keywords:** Sustainable development, weak sustainability, strong sustainability, natural capital depletion, produced capital, non-renewable resources, neoclassical theory of economic growth.*

БЕЛЛА ГАБРИЕЛЯН, к.э.н.

старший научный сотрудник

института экономики им М.Котаняна НАН РА

ПРОБЛЕМЫ ЭФФЕКТИВНОСТИ КАДРОВОЙ СТРАТЕГИИ В ОРГАНИЗАЦИЯХ

Современная система управления кадрами организации претерпевает радикальные преобразования. Необходимость таких преобразований вызвана тем, что административно-командная система, идеология, лежащая в ее основе, пришли в очевидное противоречие с требованиями развития производительных сил и трудовых ресурсов организации. Данная ситуация привела к тому, что в настоящее время становится актуальной проблема поиска новых подходов и принципов к управлению персоналом организации, а в частности к системе ее кадрового обеспечения.

Стратегия предприятия направлена на поддержку его долгосрочной конкурентной позиции, а поскольку персонал является главным элементом этой социальной системы, то именно кадровая составляющая общей политики развития предприятия приобретает особое значение.

В современном управленческом процессе кадровая политика стала ключевой в стратегическом управлении предприятием. Перед руководителями организаций встает задача максимально эффективного использования всех ресурсов, и, прежде всего, человеческих. Эффективное использование кадрового ресурса является основополагающей успешной деятельности всего предприятия. В этой связи обращение к вопросам формирования кадровой политики и организации системы управления персоналом любой организации становится особо актуальным.

Для преодоления экономического кризиса необходимо решить ряд проблем, связанных с изменением в системе управления персоналом организации. Особую важность и практическую значимость приобретает эффективное управление персоналом.

Само существование компании на рынке, не говоря уже о ее росте и обогащении, в решающей степени определяется тем, как она использует человеческий ресурс. Взаимосвязь перечисленных факторов и привела к появлению кадровых стратегий управления персоналом, которые означают:

- внедрение на практике стратегического управления деятельностью фирм;
- изменение парадигмы управления и признание персонала основным ресурсом организации¹.

При этом стоит отметить, что кадровая политика находится в тесной взаимосвязи с общей политикой управления организацией.

Концепция кадровой политики была впервые предложена Фомбруном, который утверждал, что эффективное функционирование компании основывается на трех ключевых моментах: **миссия и стратегия; организационная структура, управление человеческими ресурсами**. По его определению, стратегией, с одной стороны, является процесс, в ходе которого формулируется миссия компании и определяются ее цели, а с другой - процесс, благодаря которому компания использует свои ресурсы для достижения поставленных целей. Фомбрун и другие исследователи пришли к важному выводу в том, что управление системами человеческих ресурсов должно быть связано с бизнес-стратегией. То есть, они подчеркивали важность стратегического соответствия.

¹ Бурганова Л.А. Теория управления. Учебное пособие. М. Инфра-М, 2009. стр. 56.

Исходя из вышеизложенного, кадровая политика - это совокупность целенаправленных действий долгосрочного характера, которые направлены на формирование и развитие производственных способностей персонала, их эффективное использование, что обеспечивает предприятию достижение преимуществ в конкурентной борьбе.

Кадровая политика позволяет связать многочисленные аспекты управления персоналом с целью оптимизации их влияния на персонал предприятия, в первую очередь на трудовую мотивацию работников и их образовательно-профессиональные характеристики.

Основными характеристиками кадровой политики являются:

- долгосрочный характер, что объясняется ее направленностью на разработку и изменение психологических установок, мотивации, структуры персонала, всей системы управления персоналом или ее отдельных элементов;
- цели кадровой политики должны соответствовать общей политике развития предприятия, они должны быть направлены на достижение целей экономического развития предприятия, а не противоречить им;
- кадровая политика должна учитывать действие факторов внешней и внутренней среды предприятия, что может потребовать корректировки общей политики развития предприятия, а соответственно и изменений структуры и численности персонала, его навыков и квалификации, стиля и методов управления персоналом¹.

Понятие кадровой политики предприятия основывается на концептуальных основах стратегического управления предприятием в целом. Основные цели и пути реализации кадровой политики приведены в схеме 1.

Схема 1

Основные цели и пути реализации кадровой политики



Цели персонал-стратегий (как функциональной подсистемы предприятия), рыночно ориентированной организации в общем могут быть определены следующим образом:

- определение места и роли подсистемы управления персоналом как неотъемлемой части общей системы управления, которая должна обеспечивать предприятие квалифицированными кадрами в необходимом количестве;

¹ Румянцева З.П. Общее управление организацией. Теория и практика / З.П. Румянцева. М. ИНФРА-М, 2007. стр 287.

- формирование кадровой политики, персонал-политики, отдельных «карьерных стратегий», которые должны учитывать природу «человеческого ресурса», меняющуюся не только профессионально, но и в стиле жизни и труда, влияя на развитие всего предприятия;
- формирование системы подготовки специалистов, ориентированных на специфику деятельности и направления развития предприятия;
- управления персоналом в сочетании стратегической и текущей деятельности, индивидуального и коллективного воздействия, комплексного решения проблем оплаты и дисциплины труда, защиты, безопасности и гигиены труда и т.п.;
- формирование эффективных коммуникаций, основанных на позитивных отношениях как внутри предприятия, так и за его пределами;
- соблюдения действующего законодательства по регулированию трудовых отношений;
- оформление необходимых документов, отражающих наем, продвижения, увольнения кадров, в соответствии с требованиями государственной отчетности;
- формирование системы планов и программ развития персонала предприятия, которые способствуют успешному решению текущих проблем¹.

Кадровая политика обеспечивает эффективность работы организации, человеческих ресурсов и устранение недостатков по следующим критериям:

- долгосрочное отсутствие на рабочем месте; прогулы; текучесть; количество конфликтов; количество жалоб; количество несчастных случаев; стабильность².

Кадровая политика предусматривает:

- помощь организации в достижении ее целей; эффективное использование мастерства и возможностей работников; обеспечение организации высококвалифицированными и заинтересованными работниками; стремление к наиболее полному удовлетворению работников своей работой, к их наиболее полному самовыражению; развитие и поддержание на высоком уровне качества жизни, которое делает желанной работу в этой организации; связь управления персоналом со всеми работниками; помощь в формировании и сохранении морально-психологического климата в коллективе; управление движением к взаимной пользе личностей, организации и общества на основе экономических интересов³.

Объектом кадровой политики предприятия является совокупность физических лиц, имеющих трудовые отношения с предприятием, которое является работодателем и называет их сотрудниками. Последние имеют определенные количественные и качественные характеристики, определяющие их способность к деятельности в интересах предприятия. Субъектом кадровой политики предприятия является система управленческих органов, состоящая из служб управления персоналом, структурных самостоятельных подразделений предприятия, объединенных по принципу функционального и методического подчинения и линейных руководителей на всех уровнях управления.

Эффективность управления персоналом должна обеспечиваться выполнением таких следующих составляющих кадровой политики как:

- планирование потребности в работниках; отбор персонала; рациональное использование персонала (обучение, адаптация и развитие работников); применение моральных и материальных стимулов⁴.

¹ Менеджмент (Современный Российский Менеджмент). Под ред. Русинова Ф.М и Разу М.Л. - М.: ИД ФБК-ПРЕСС, 2009. стр.145.

² Новичков Н.В. Теория организации. Учебник. Н.В. Новичков. - М.: ГУУ, 2007. стр. 158.

³ Магура М., Курбатова М. Кадровый менеджмент. Управление персоналом. 2007. №13-14. стр. 26.

⁴ Сенина Н.А. Повышение качества обслуживания покупателей – важнейшее направление деятельности персонала в розничной торговле. Управление персоналом. 2007. №8. стр. 25.

Для построения эффективной системы управления персоналом и последовательной реализации вышеприведенных этапов необходимо обеспечить обратную связь менеджеров и работников предприятия.

Несмотря на незначительный опыт по внедрению кадровых стратегий, следует отметить, что создание и поддержание устойчивых конкурентных преимуществ конкретного предприятия возможно только при условии внедрения эффективной политики управления персоналом, в рамках которой сочетаются такие мероприятия:

- использование индивидуальных способностей работников в соответствии со стратегическими целями организации;
- направленность на подготовку и обучение, адаптацию кадров к изменяющимся условиям рынка с учетом введения новых технологий;
- согласование интересов организации с потребностями работников;
- тщательный отбор работников на основе четких систем оценки;
- культивирование индивидуальной единой культуры организации.

Эффективное решение любых проблем производства и управления невозможно без стратегического видения последствий принимаемых решений. В полной мере это утверждение касается и проблем управления персоналом. Оптимизация занятости, обеспечение важными человеческими ресурсами потребностей производства возможны только при условии разработки организациями эффективных кадровых стратегий.

Поэтому системное, взаимосогласованное управление персоналом возможно только при наличии концепции, принципов, политики и работы с ним:

- концепция управления персоналом является комплексом соответствующих теоретико-методологических взглядов на понимание сущности, содержания, целей, задач, принципов, критериев и организационно-практических методов, а также подходов к формированию механизма их реализации в конкретных условиях функционирования производственных и управленческих подразделений организации;
- принципы управления являются определенной совокупностью правил и норм, принятых в организации, которыми руководствуются линейные и функциональные руководители в процессе решения кадровых вопросов. Правила и нормы поведения становятся принципами, если они общепризнанные и зафиксированы в определенных нормативно-правовых документах, обязательных для выполнения всеми звеньями системы (организации);
- кадровая политика охватывает основные направления, формы, методы и критерии работы с персоналом, направленные на повышение эффективности его использования и деятельности организации.

Она не требует непосредственных действий, формируется для того, чтобы линейные и функциональные руководители руководствовались ею, анализировали возможные последствия решений по кадровым вопросам до их принятия. Основными ее составными частями являются: стратегия набора, отбора и расстановки кадров; стратегия профориентации, адаптации и повышения квалификации кадров; стратегия занятости; стратегия управления служебным ростом; стратегия стимулирования, социальная стратегия.

После проведения исследования и анализа деятельности некоторых организаций в сфере реализации кадровой политики были выявлены следующие замечания и проблемы, препятствующие повышению эффективности кадровой стратегии:

1. Неэффективная система мотивации трудовой деятельности персонала.

На некоторых предприятиях используется только материальная мотивация в виде премий и доплат, но в тоже время активно применяется практика взыскания дисциплинарных штрафов и вычислений из заработной платы. При этом для получения премии персоналу предъявляется большой объем требований, который иногда просто невозможно

осуществить. Такая стратегия руководства снижает желание персонала работать на данном предприятии вообще.

2. Отсутствие на предприятии системы введения в должность вновь принятых сотрудников.

По причине недостатка свободного времени для работников часто не проводятся мероприятия по адаптации сотрудника на новом рабочем месте. В таком случае человеку сложнее вникнуть в рабочий процесс, адаптироваться к специфике работы организации, что влечет за собой снижение трудоспособности персонала.

3. Отсутствие кадрового резерва персонала. То есть имеющиеся специалисты в организации не рассматриваются в перспективе в качестве руководящих работников. Такое положение дел не мотивирует сотрудников к профессиональному росту и снижает эффективность стратегического управления персоналом.

4. На предприятии отсутствует система профессионального обучения и повышения квалификации персонала.

Как было отмечено выше, на предприятии проводится систематическое обучение персонала, характеризующееся стабильными статистическими показателями. Однако, в нынешних рыночных условиях этого недостаточно, то есть количество работников, которые повышают свой профессиональный уровень, должно быть значительно больше, а программа осуществления обучения кадров направлена на поддержку качественного фактора подготовки последних.

Кадровая политика позволяет связать многочисленные аспекты управления персоналом с целью оптимизации их влияния на персонал предприятия, в первую очередь на трудовую мотивацию работников и их образовательно-профессиональные характеристики.

На формирование политики управления персоналом влияет организационная структура служб управления персоналом: внутреннее устройство этих служб, служебно-профессиональный состав работников, степень централизации кадровых служб, взаимоотношения организации с внешней средой.

Таким образом, можно с уверенностью заключить, что кадровая политика предприятия является неотъемлемой частью общей политики организации, а ее основной целью является повышение эффективности кадровой стратегии.

ԿԱՂՐԱՅԻՆ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԲԵԼԼԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ, *տ. գ. թ., դոցենտ*
Մ Գ Ա Ա Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Կազմակերպության կադրերի կառավարման ժամանակակից համակարգը ենթարկվում է զգալի վերափոխումների: Արդի կառավարման գործընթացում կադրային քաղաքականությունն ի հայտ է գալիս որպես կազմակերպության ռազմավարական կառավարման հիմնական ուղղություն: Կազմակերպության ղեկավարների խնդիրն է ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ այդ թվում նաև մարդկային: Կադրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը հիմք է հանդիսանում կազմակերպության բարեկեցիկ աշխատանքի արդյունավետության բարձրացման համար: Այս առումով կադրային քաղաքականության ձևավորման հարցին անդրադարձը և անձնակազմի կառավարման համակարգի արդյունավետ կազմակերպումը յուրաքանչյուր ձեռնարկությունում դառնում է խիստ արդիական:

Բանալի բառեր. ռազմավարություն, մարդկային ռեսուրս, կադրային քաղաքականություն, ռեզերվ, որակավորում, շահադրդում, արդյունավետություն, հարմարավետություն, անձնակազմի կառավարում:

ПРОБЛЕМЫ ЭФФЕКТИВНОСТИ КАДРОВОЙ СТРАТЕГИИ В ОРГАНИЗАЦИЯХ

БЕЛЛА ГАБРИЕЛЯН, *к.э.н.*
старший научный сотрудник
Института экономики им М.Котаяна НАН РА

Аннотация

Современная система управления кадрами организации претерпевает радикальные преобразования. В управленческом процессе кадровая политика стала ключевой в стратегическом управлении предприятием. Перед руководителями организаций встает задача максимально эффективного использования всех ресурсов, и, прежде всего, - человеческих. Эффективное использование кадрового ресурса является основополагающей успешной деятельностью всего предприятия. В этой связи обращение к вопросам формирования кадровой политики и организации системы управления персоналом любой организации становится особо актуальным.

Ключевые слова: Стратегия, кадровый ресурс, кадровая политика, резерв, квалификация, мотивация, эффективность, адаптация, управление персоналом.

ISSUES ON EFFECTIVENESS OF HR STRATEGY IN ENTERPRISES

BELA GABRIELIAN, *Candidate of Sciences (Economics)*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The contemporary HR management system requires substantial transformations. In the contemporary management process the HR policy is one of the main directions of the strategic management of a company. Executives face the issue of efficient utilization of all resources available; including HR. Reliance on HR enables a company to increase the efficiency of decent jobs. Hence, the issues of HR policy and HR management system design are very urgent in every company.

Keywords: Strategy, HR, HR policy, reserve, qualification, motivation, efficiency, convenience, staff.

MOHAMMAD ALIASHRAFIPOUR

*Ph.D. Student in Economics, Department of Economic Theory
Faculty of Economics and Management, Yerevan State University*

COMPETITIVENESS AND ITS DEVELOPMENT PROBLEMS: A THEORETICAL REVIEW

1. Introduction

Currently economists have use the term “competitiveness” in different meanings and aspects. On one hand, at the macro level, analysts consider the lack of power of competitiveness is due to problem of determining the real exchange rate. In this sense, competitiveness is measured by the price indices or relative costs. Also, it is assumed that the main structural elements are fixed, and are focused only on the short-term macroeconomic policies that affect the relative prices of goods and services compared to other countries. In contrast, many analysts use a broader concept of competitiveness that in this sense, the main focus is on the structural factors that affect the long-term economic performance, and much of their attention has been focused on issues such as productivity, skills and innovation. In addition to these two views, we can be referred to the third glance, in this perspective; the concept of competitiveness is analyzed based on both sets of short-term non-structural variables and long-term structural variables. The recent view is closer to the reality of the external sector, analysts believe that there's a relationship and interaction between economic factors -structural and non-structural variables both over the short-and long-run, so the debate about competitiveness is related to problems to be considered as a function of both structural and non-structural factors and to achieve greater competitive power that requires attention to all of the variables over time.

On the other hand, researchers have used the term “competitiveness” at the micro and macro level. At the micro level, firms compete with each other over resources to produce goods and allocate a portion of their goods to the market. In this view, competitiveness is calculated by the respective market share, innovation and growth. Firms are trying to improve their overall performance in the market by using competitive strategies. The situation is similar at the national level and countries that are competing in foreign markets can easily measure their level of competitiveness and plan to increase it. Although the concept of competitiveness is important in all meanings and aspects, but today the role of competitiveness is more important than other dimensions and meanings at the macro-level (national competition), with regard to issues such as intensive privatization, the high rate of technical and technological changes, increase in production and reproduction of knowledge, market penetration and the phenomenon of globalization. Therefore, economic policy makers in different countries are trying to provide framework to increase the efficiency of markets, improve the business environment, enhance the capabilities to increase competitiveness of produced products in their countries and help to maintain or increase their share on the international markets by changes in relative prices, structural and technological changes; promote the production and spread of knowledge; use creativity and innovation in productive activities, to diversify production and exports, modify and facilitate rules and regulations to increase production and facilitate trade. Therefore, understanding the factors influencing the competitiveness of national economies to achieve sustained and stable growth is an undeniable necessity.

